



Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

### **Правила пользования**


Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.


### **О программе**

Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу <http://books.google.com>.



# Awetaranakan k'arozner

William Goodell



Dr. Goodell's Sermons

Med. Armenian

Goodell  
- 1851














Engd. by A.H. Ritchie.

*W. Goodell*





Goodell, William.

ԱՆՏԵՐՆԵԿԱՆ ԻՆՏՈՂՆԵՐ:



ՆՈՐ ԵՕՐԻ

Ի ՏՊԵՐԵՆԻ

ԱՄԵՐԻԿԵՅԻ ՏԵՏՐԵԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1870

THE NEW YORK  
PUBLIC LIBRARY  
605771A  
ASTOR, LENOX AND  
TILDEN FOUNDATIONS  
R 1932 L

## ՅԵՆԿ :

Նամակ ուղղեալ Տաճկաստանի աւետարանական եկեղեցեաց	• 5
Ենոպէին պատմութիւնը	• • • • • 17
Սամարիացի կնիկը	• • • • • 30
Եբրահիմին զոհը	• • • • • 42
Եբրահիմին հաւատքը	• • • • • 60
Սիդոնի Սարեփթացի կնիկը	• • • • • 75
Եգգաւ Փիւնիկ Բարբի յօր մը ջեռմեռանդ աղօթքին ազգեցու- թիւնը	• • • • • 90
Վրիստոսի ազգական սեպուածները	• • • • • 103
Սուրբ Գիորգերը քննելը մեր պարտքն է	• • • • • 113
Գեւորուն վրայ	• • • • • 127
Չար ոգիներուն վրայ	• • • • • 139
Չար ոգիներուն ազգեցութեան տակ եղողները Վրիստոսը չեն ուզեր	• • • • • 152
Սուրբ Հրեշտակներուն վրայ	• • • • • 163
Հրեշտակները ամենուրեք և ամենակարող չեն	• • • • • 178
Յայրոսին աղջիկը	• • • • • 193
Սաքրող Յիսուսը, և մարբուող բորոտը	• • • • • 206
Գաննեսարեթցոց խելացի վարմունքը	• • • • • 216
Սերասին ծնունդը	• • • • • 230
Գերութեան մէջ եղող աղջիկը	• • • • • 242
Փրկութեան շնորհքները առատ են	• • • • • 253
Որո՞նք են հրաւիրեալները	• • • • • 264
Ընդդէմսին խիստ վայելուչ վարմունքը	• • • • • 275
Եռանձին աղօթք	• • • • • 289
Չոր ոսկորներուն դաշտը	• • • • • 301

ՀԵՆԿ  
ՅԵՆԿ  
ԳՕԳ

Հոգիին արժէքը . . . . .	313
Պետրոսին մեղքը . . . . .	324
Պետրոսին ապաշխարանքը . . . . .	340
Մատուած կրակին ու երկրաշարժին մէջը չէ . . . . .	352
Սեփփորձութիւն . . . . .	363
Վու թագաւորութիւնդ գայ . . . . .	372
զՄատուած կողպտողներ . . . . .	386
Իարաբբան արձակուեցաւ—Վրիստոս մերժուեցաւ . . . . .	398
Իարաբբան արձակուեցաւ—Վրիստոս մերժուեցաւ . . . . .	413
Մտկայ ըրէք զիս յիշելու համար . . . . .	426
Թողմասին յիմարութիւնը . . . . .	441
Մատուած հոգի է . . . . .	453
Մպաշխարող աւագակը . . . . .	469
Մպաշխարող աւագակը . . . . .	483
Վրիստոսի՝ իր խաչը կրելուն տկար ըլլալը . . . . .	497
Վրիստոսի գերեզմանը կանուխ եկող կնիկները . . . . .	509
Իանը մարմին եղաւ . . . . .	523
Մէն անունէ բարձր եւ պատուական անունը . . . . .	536
Մնդամալոյծին Վրիստոսի տարուիլը . . . . .	549
Վրիստոսի հրաւերը . . . . .	562
Մն սիրելի անձին քարկոծուիլը . . . . .	579
Ի ոլոր օգնութիւննիս Մատուածէ է . . . . .	591
Սուրբ Հոգիին կարօտ ըլլանիս և Մատուոյ զանիկայ մեզի շնորհելու պատրաստ ըլլալը . . . . .	601

# Ն Ե Մ Ե Կ

ՈՒՂՂԵԼ

## ՏԵՂԿԵՍԵՆԻ ԵՒԵՏԵՐԵՆԵ- ԿԵՆ ԵԿԵՂԵՑՆԵՑ :

ԲԲԻՍՏՈՍՈՎ, ՍԻՐԵԼԻ ԵՂԿԵՐԵՆԵՐ ԵՒ ԲՈՅՐԵՐ :

Իմ հայրենիքս ձգելով՝ Տաճկաստան գալս քառասուն տարիէն աւելի է, և կոստանդնուպօլիս ինձի բնակարան ընելս երեսունիրեք տարիէն աւելի է : Ե՛հա ծերացայ, և մեռնելու օրս չեմ գիտեր : Նաև տկար եմ, և իմ վիճակիս նայելով՝ շատ ապրելու յոյս չունիմ. մարմնոյս և մտքիս բոլոր կարողութիւնները օրէ օր կը պակսին, և ես բոլոր մարտնչերուն համար որոշուած տունը երթալու վրայ եմ : Ձեր մէջը բնակած օրէս մինչև հիմա թէ ինձի՝ և թէ իմիններուս ձեր ցուցուցած մարդասիրութեանցը



Համար իմ զգացած շնորհակալութիւնս կը յայտնեմ, և ձեր թէ ժամանակաւոր և թէ յաւիտենական երջանկութեանը համար ջերմեռանդութեամբ աղօթելս ձեզի կիմացունեմ:

Հին և նոր Ատակարանը ձեր քովը կը ձգեմ, որոնք՝ ձեզմէ մէկ քանիներուն մեծ օգնութեամբը Հայերէն գրով Տաճկերէն լեզուի թարգմանեցի, ձեզմէ միայն կամ գլխաւորապէս ան լեզուին հմուտ եղողներուն օգուտին համար: Աս Սուրբ Գրքերուն հետ Մատթէոս Աւետարանին նոյն լեզուով տպուած մէկնութեանը ծանօթ էք որ՝ ան ալ ձեր օգնութիւնովը պատրաստեցի: Աւահա՛ հիմա քառասունէն աւելի քարոզներ տպել կուտամ որ ձեզմէ ոմանք կը յիշէք զանոնք ձեզի քարոզելս, որպէսզի ծակաւին ձեր մէջը եղած ժամանակս ձեզի խօսածներս աւելի աղէկ միտքերնիդ պահէք: Երդեօք աս խօսքերը ճշմարտութիւն և կատարեալ խելքի խօսքերօ

են , արդեօք Աստուծոյ Սուրբ Խօսքին համաձայն խօսքեր են դուք ձեզմէ . քննելու և գիտնալու պարտաւոր էք : Գոհութիւն Աստուծոյ դուք հիմա բուն ձեր լեզուովը ամբողջ Աստուածաշունչը ունիք , և անոր կրթութիւններուն և խրատներուն տգէտ մնալու ստիպուած չէք , և մնալու ալ չէք : Երբոր նոր եկանք ձեր մէջը՝ դուք զատ ժողովուրդ մը չէիք , և զատուելնիդ ալ երբէք չէինք յուսար . քանզի մեր կարգադրութիւնը Եկեղեցական գործերու բնաւ չըխառնուիլ ըլլալով՝ ձեր մէջը եկած ատեննիս կրօնական երկպառակութիւն հանելու գիտաւորութիւն չունէինք , այլ միայն մեր փափաքն էր Խաչեալ Բրիստոսը քարոզել : Մեր գիտաւորութիւնը ճիշտ Պարսկաստանի շին Եկեղեցոյն մէջ աշխատող Միսիօնարներուն պէս ընել էր . անոնց աշխատութիւնը ան եկեղեցոյն մէջ բաժանման պատճառ չեղաւ , հապա՛ անոնց արտօնութիւն տրուեցաւ որ Եպիսկոպոսաց և քա-

Հանայից Հետ մէկտեղ ամէն եկեղեցոյ մէջ քարոզեն՝ դպրոցներուն հոգ տանին՝ ծախքերուն օգնեն՝ և ամէն պարագայի տակ բոլոր ժողովուրդը լուսաւորելով՝ բարձրացունելու աշխատին :

Սակայն եթէ ան Միսիօնարներուն բարեկամութիւն և սէր ցուցունելնուն տեղը՝ ճշմարտութիւնը սիրող և Մատուածապաշտ ու առաքինի կեանք անցունել ուղղոյններուն դէմ նշովքներ և սաստիկ հալածանքներ ընէին՝ Հետևութիւնը աս պիտի ըլլար որ ան նեղութիւնը և հալածանքը կրողները պաշտպանութեան համար Տէրութեան բողոքելու ստիպուած պիտի ըլլային, ինտոր որ դուք ստիպուելով ըրիք . և Տէրութիւնը աս պաշտպանութիւնը հարկաւոր տեսնելով անոնց առնչութենէն զատուելնուն պէս՝ Տէրութիւնը միւս ժողովրդոցը պէս պաշտպանութեան արժան զատ ժողովուրդ մը պիտի ճանչնա՞ր : Աս երկրին մէջ գործը ասանկ ըլլալուն տեղեակ էք : Տէ-

րութիւնն ալ ձեզ ազատելու համար  
 Նուսաւորչական Նկեղեցիէն զատե-  
 լու ստիպուեցաւ : Ձեր հիմակուան  
 վիճակը աս է , և աս վիճակը ամե-  
 նայն շնորհակալութեամբ ընդունե-  
 լու էք , և թէ ձեր՝ ու թէ ձեր որդ-  
 ւոցը օգուտին համար գործածելու  
 էք :

Եւ Նղբայրներս , թէ որ դուք  
 բարի՝ երջանիկ՝ և միաբան ժողո-  
 վուրդ մը չէք , և թէ որ շուտ մը  
 անանկ չըլլաք , և ձեր բոլորտիքը ե-  
 ղողներուն հաւատարմութեանը պր-  
 ժանանալով՝ ձեր պատիւը չաւելց-  
 նէք , չէ թէ ուրիշը՝ այլ դուք ձեզ  
 մեղատրելու էք , քանզի երկրիս վրայ  
 բնաւ ժողովուրդ մը չկայ՝ որ ձեզմէ  
 աւելի բարի ըլլալու և բարիք ընելու  
 շնորհքներ և արտօնութիւններ ըն-  
 դունած ըլլայ :

Ձեզի իմ վերջին խրատական խօս-  
 քերուս մէջ կըսեմ . մէկզմէկու տկա-  
 րութեանցը համբերեցէք , և իրա-  
 րու ներեցէք՝ ինտոր որ Աստուած  
 Քրիստոսով ներեց ձեզի :

Աշխարհքին և մէկզմէկու հետ  
 ունեցած առուտուրնիդ արդարու-  
 թեամբ թո՛ղ ըլլայ . ձեր հաշիւները  
 մաքուր պահեցէք՝ մինչև անգամ ձեր  
 ազգականաց և քրիստոնեայ եղբարց  
 հետ առուտուր ունեցած ատեննիդ  
 ալ, քանզի մարդուն միտքը կատար-  
 եալ չէ և անոր յիշողութեանը միշտ  
 չենք կրնար ապաւինիլ . աս պակսու-  
 թեամբ լեցուն աշխարհքիս մէջ բո-  
 լոր ստակի վերաբերեալ գործերուն  
 ճիշտ հաշիւը պահելը ամէնէն ապա-  
 հով ճամբան է : Ձեր տղաքները  
 ճամբան սկսած ատեննին կրթեցէք :  
 Միտքերնիդ պահեցէք թէ՛ ինչպէս  
 որ անոնք մարմին ունին անանկ ալ  
 հոգի ունին , և ինտոր որ անոնց  
 մարմնոյն համար կերակուր ու հան-  
 դերձ պատրաստելը ձեր պարտքն է՝  
 անանկ ալ անոնց անմահ մտքերուն  
 համար կրթութիւն պատրաստելը  
 ձեր պարտքն է : Հոգ տարէք որ  
 յարմար վարժապետներ ու յարմար  
 գրքեր ունենան : Նաև դուք գլխա-  
 ւորապէս կիրակի օրերը սորվեցու-

ցէք անոնց , և զանոնք ձեղի հետ  
 եկեղեցի տարէք՝ որ Աստուծոյ փա-  
 ռաբանութիւն երգուած ատենը օգ-  
 նութիւն ընեն , ու Յակոբին Աստու-  
 ծոյն օրհնութիւնները ընդունին :

Ջանք ըրէք որ կարելի եղածին  
 չափ շուտով ձեր աշխարհային կր-  
 թութեան և կրօնական գործերուն  
 ծախքերը դուք հոգաք , և ձեզմէ  
 աւելի կարօտ եղողներուն օգնելու  
 պատրաստ եղիք :

Աղքատներուն և հիւանդներուն  
 վրայ գութ ունեցէք : Տրտմալից  
 աղքատ և սգաւոր ընտանիքներուն  
 այցելութիւն ըրէք . ասանկ բաներու  
 մէջ թէ էրիկ մարդիկ և թէ կնիկ  
 մարդիկ Քրիստոսի նմանող եղիք ,  
 այսինքն ինչ որ կրկարծէք թէ՛ ան  
 պիտի ընէր , թէ որ ձեր քովը ըլլար՝  
 դուք ալ ճիշտ անանկ ըրէք . թշուառ-  
 ներուն օգնութեան հասէք : Ակե-  
 ղեցի երթալու կարող չեղողներուն  
 թաղերը աղօթքի ժողովքներ ըրէք .  
 նաև փոքր տղաքներու , զԱստուած  
 փնտռել նոր սկսողներու և անոր

Ճամբաները գիտնալ ուզողներու համար աղօթքի ժողովքներ ըրէք : Թէ որ Աստուած ձեզ օրհնելով՝ ձեզի երէց մը տայ , անոր պատիւ ըրէք , զանիկայ սիրեցէք , և անոր համար աղօթք ըրէք : Անոր օգնելու՝ անոր ձեռքերը ուժովցնելու և ձեր աղէկութեանը համար աշխատած ժամանակը անոր սիրտը զօրացունելու ջանք ըրէք : Միսիօնարաց ձեր հետ ունեցած առնչութիւնը հաստատուն բան մը չէ , և հարկաւոր եղածէն աւելի չեպիտի տուէ , և քանի որ կը տուէ երկու կողմանէ ալ քաղցրութիւն , համբերութիւն , և գթութիւն կը պահանջէ . սակայն կարողութիւն ունեցածնուդ պէս երբ հովուական պաշտօնը սկսի , աս առնչութիւնը պիտի կտրի , իսկ ան հաստատուն պիտի մնայ : Չձանք ըրէք որ ասանկ ըլլայ , և ձեր հովիւին պիտոյիցը հարկաւոր եղածը տալէն իզատ՝ թէ որ երբեմն պզտիկ ընծայ մը տաք իրեն իբրև նշան ձեր սիրոյն և իր աշխատութեանցը յարդը ճանչ-

նախնուդ, թէ և տուածնիդ աղքատութեան պատճառաւ պզտիկ խնճորէ մըն ալ աւելի չըլլայ՝ տակաւին ատ ձեր գործը իր սէրը պիտի աւելցնէ ձեր վրայ և ձեզի համար ըրած աղօթքները պիտի աւելցնէ :

Ժողովարանը օտար մէկը եկած ատենը անոր յարմար և աղէկ տեղ մը ցուցուցէք, կամ ձեր տեղը անոր տուէք. օտարներուն տեղ ցուցունելը ժամկոչին գործը սեպուիլը աղէկ է : Աս թէ և ինքնին պզտիկ բան մըն է, սակայն Քրիստոնէական մարդասիրութիւնն ու մարդկութիւնն ալ կը պահանջէ : Արբոր օտարականի մը երկու կամ իրեք անգամ գալը կը տեսնէք՝ գիտցէք որ անիկայ կենաց ճամբաները գիտնալու կը փափաքի, անոր հետ բարեկամութիւն հաստատելէն մի՛ ձանձրանաք. ձեր բարեկամութիւնը անոր կրօնքին և Ակեղեցիին արարողութիւններուն և պակսութիւններուն վրայ վիճելու համար չըլլայ, հապազանիկայ կենաց ճշմարիտ աղբիւրին



Սուրբ Գիրքերուն առաջնորդելու համար ըլլայ : Քսանուհինգ կամ երեսուն տարի առաջ ասանկ անծանօթ մէկը տեսած ատեննիդ առանց քննութեան անոր ձեռքէն բռնելով զանիկայ բոլոր եղբայրութեան կը ճանչցնէիք , և անոր անմահ հոգին շատ սիրելով՝ անոր համար ջերմեռանդութեամբ կաղօթէիք : Ձեր առջի աշխատութիւնը պաղութեան ու անհոգութեան թող չըփոխուի :

Խօսքս վերջացնելու եմ : “Ուստի իմ սիրելի և բաղձալի եղբայրներս իմ ուրախութիւնս ու պսակս, ասանկ հաստատուն կեցէք Տէրոջմով սիրելիներս” : Փիլ . Գ . 1 : “Ուստի թէ որ Քրիստոսով մխիթարութիւն մը կայ , թէ սիրոյ սփոփանք մը , թէ հոգիի հաղորդութիւն մը , թէ գրթութիւն ու ողորմութիւն մը , իմ ուրախութիւնս գո՛ւք լեցուցէք , նոյն խորհո՛ւրդը ունեցէք , միևնոյն սէրը մէջերնիդ ունենալով , մէկ շունչ , մէկ մտածմունք : Բան մը գրգռութիւնով կամ սնապարծութիւնով

մի՛ ընէք . հապա խոնարհութիւնով  
մէկգմէկ ձեր անձերէն լա՛ւ սեպե-  
ցէք” : Փիլ . Բ . 1-3 : Եւ հիմա որ  
ձեզմէ կըզատուիմ Պօղոս առաքեա-  
լին բ Աորնթացւոց ժգ . 11 երորդ  
համարին մէջ գործածած լեզուէն  
իզատ ինչ՞ լեզուով կրնամ իմ վերջին  
խօսքերս և սրտիս վերջին փափաք-  
ները ձեզի յայտնել : “Այսուհետև  
եղբայրներ՝ ողջ եղէք , հաստա՛տ կե-  
ցէք , մխիթարուեցէ՛ք , միաբա՛ն  
եղէք , խաղաղութի՛ւն ըրէք , և սի-  
րոյ ու խաղաղութեան Աստուածը  
ձեր հետը ըլլայ” : Ամէն :

Քրիստոսով ձեր սիրելի եղբայրը ,

ՈՒՒԼԵՄ ԿՈՒՏԵԼ :

Աստուանդնուպօլիս • Մարտ 15 • 1864 •



## ԵՆՈՎՔԻՆ ՊԵՏԱՄՈՒԹԻՒՒՆԸ :

“ Ենովք վաթսունուհինգ տարի ապրեցաւ ու ծնաւ Մաթուսա-  
զան , և Ենովք Մաթուսազան ծնանելէն ետքը իրեք հարիւր տարի  
Նստուծոյ հետ քալեց , և տղաքներ ու աղջիկներ ծնաւ : Եւ Ենովքին  
բոլոր օրերը իրեքհարիւր վաթսունուհինգ տարի եղաւ , և Ենովք Նս-  
տուծոյ հետ քալեց , և չէր գտնուեր . քանզի Նստուած առաւ զանի-  
կայ ” : Դանդ . Ե . 21-24 :

Սուրբ գրոց մէջ Ենովքին պատ-  
մութիւնը խիստ կարճ է , սակայն  
անոր վրայով քանի մը բաներ կրնանք  
սորվել :

### 1. Ենովք ընտանիք ունէր :

Ընիկայ շուտ ամուսնացաւ . վաթ-  
սունուհիւզ տարեկան եղած ատենը  
անոր տղայ մը եղաւ : Սէթ հարրւ-  
հինգ տարեկան էր երբոր իր տղան  
ծնաւ : Ենովս իննսուն տարեկան էր  
և Յարեգ Ենովքին հայրը հարիւր  
վաթսունուերկու տարեկան էր . բայց  
Ենովք միայն վաթսունհինգ տարե-  
կան էր երբոր Մաթուսազայ ծնաւ :  
Ես Մաթուսազան շատ ապրեցաւ .

կը կարդանք որ իր բոլոր օրերը ինը հարիւր վաթսուներկնը տարի էր : Մաթուսաղայ Ննովքին մէկհատիկ որդին չէր . քանզի գրուած է թէ՛ Ննովքին տղաքներ և աղջիկներ ծնաւ : Ընոր տղաքներուն քանի հատ ըլլալը չենք գիտեր . կարելի է 150 կամ 200 ի չափ եղաւ , քանզի 300 տարիէ 'ի վեր՝ ընտանիքը աւելնալու վրայ էր : Ննովք Մատուծոյ հետ քալելու համար՝ իր ընտանիքը չըձգեց , լեռները՝ անտառները՝ ժայռերու և այրերու մէջ չըզնաց , մարդոցմէ չըպահուեցաւ : Ոմանք՝ սխալ հաւատքով , փորձութենէ և հրապուրանքէ ազատելու՝ և Մատուծոյ մօտ ըլլալու համար՝ անապատները կամ վանքերը կը քաշուին : Սակայն Ննովք ասանկ չըրաւ , հապա իր ընտանեացը հետ ապրեցաւ , դրացիներուն՝ ազգականներուն և բարեկամներուն հետ խօսեցաւ , մարդոց հետ ընկերութիւն ըրաւ , անոնց քարոզեց , զանոնք խրատեց , զանոնք մխիթարեց , անոնց բարի օրինակ եղաւ , անոնց

գիտցուց Մատուծոյ յայտնած օրէնքները և դատաստանները, անոնց բարիքին և օգուտին համար աշխատեցաւ : Աշխարհքին մէջն էր, բայց աշխարհքէն չէր : Աշխարհիս մէջ պտտեցաւ, գործեց և աշխատեցաւ, բայց աշխարհային մարդոց պէս չապրելով՝ սուրբ կեանք մը անցուց : Պօղոս առաքեալ կը հաստատէ թէ՛ « Մատուծոյ հաճոյ էր » :

## 2. Ենովք սուրբ էր :

Ար կարդանք թէ՛ « Մատուծոյ հետքալեց » : Իր սրտովը միշտ Մատուծոյ խիստ մօտ էր : Եռանց Մատուծոյ ոչ կընստէր և ոչ կելլէր, և առանց Մատուծոյ ոչ դուրս կերթար և ոչ ներս կուգար : Միշտ Մատուծ իր աջ կողմն էր, և Ենովք բնաւ չըմոռցաւ զանիկայ . անոր ներկայութենէն բնաւ չըհեռացաւ . այլ միշտ զանիկայ տեսածի պէս կապրէր : Եմէն ատեն իր սիրտը անոր կը վերցունէր, անոր հետ հազորդակցութիւն կընէր : Իր գործին գացած ատենը՝

Մատուցոյ հետ կերթար . երկրագործութիւն ըրած ատենը , հովուութիւն ըրած ատենը , կամ առուտուր ըրած ատենը՝ անանկ կրնէր իբրև թէ Մատուած ներկայ էր , և ամէն ատեն անոր պատիւը աւելցունելու կաշխատէր : Աղքատութիւն՝ հիւանդութիւն կամ զրկանք կրած ատենը , Մատուցոյ խրատին և յանդիմանութեանը շողփուարեցաւ , չըբարկացաւ , և անոր սուրբ անունը չըհայհոյեց . այլ անոր խրատին և յանդիմանութեանը մտիկ ընելով՝ « Չէ թէ իմ կամքս , այլ քուկդ թող ըլլայ » ըսելու միշտ պատրաստ էր :

Մատուցոյ հետ բարեկամութիւն ունենալով՝ միշտ սիրով լեցուած էր : Թէ որ Մատուցոյ բարեկամը չըլլար , և թէ որ իր վարքը անոր հաճոյ չըլլար , անոր հետ չիպիտի կրնար քալել . այլ ուրիշներուն պէս անկէ հեռու պիտի ըլլար : Ան ժամանակի մարդիկը շատ չար ու անիրաւ էին . բայց Անովք խիստ բարեպաշտ և առաքինի մարդ էր : Անոնք Մատուծմէ շատ

Հեռացան . բայց Ենովք անոր հետ  
 կը քալէր : Այսին անհաւատ սե-  
 րունդը և Սեթին հաւատացեալ սե-  
 րունդը մէկգմէկու հետ խնամութիւն  
 ընելով՝ իրար խառնուելնուն համար՝  
 աշխարհքը խիստ ամբարիշտ եղաւ .  
 Սակայն Ենովք Աստուծմէ կը վախ-  
 նար , անոր երկրպագութիւն կընէր  
 և անոր հետ կը քալէր : Ենոր ազգա-  
 կանները և դրացիները որչափ որ  
 անիրաւ՝ գող՝ անհաւատ՝ լիբբ և ծա-  
 դրածու ալ էին , տակաւին անիկայ  
 շիտակ ճամբայէն չըշեղեցաւ . Աս-  
 տուծոյ հպատակելէն ետ չըկեցաւ :  
 “ Ենովք Աստուծոյ հետ քալեց ” :  
 Բայց մարգարէին ըսածին համե-  
 մատ՝ “ երկու մարդ թէ որ միաբա-  
 նութիւն չունենան , մէկտեղ կընան  
 քալել ” : Ոչ . չե կընար ըլլալ : Ու-  
 րեմն յայտնի է թէ՛ Ենովքին ընտա-  
 նութիւնը՝ հաղորդակցութիւնը՝ ըն-  
 կերութիւնը և մտերմութիւնը չէ  
 թէ աշխարհքին հետ էր այլ Աստու-  
 ծոյ : Արանի՛ անոր :



### 3. Ենովք մարգարէ էր :

Աերևնայ թէ Ենովք իր թոռանը Նոյին պէս արդարութեան քարոզիչ էր, և շատ խրատատու էր : Մարգարէական հոգիով Եստուծոյ դատաստանները կրխօսէր իր անիրաւ սերունդին : Քա՛նի անգամ մարգարէութիւն ըրաւ, և որ՛չափ ատեն աս գործին մէջ էր չենք գիտեր . սակայն անոր մէկ նշանաւոր մարգարէութիւնը Յուդա Եռաքեալ կը յիշէ : “ Ենոնց վրայ մարգարէացաւ ”, այսինքն Այէնին Ճամբայէն գացողներուն վրայ, “ Ենովք ալ՝ որ եօթներորդ էր Եդամէն, ու ըսաւ. Եհա Տէրը իր բիւրաւոր սուրբերովը եկաւ, ամէնուն դատաստան ընելու ու բոլոր ամբարիշտները յանդիմանելու իրենց ըրած ամբարշտութեանը բոլոր գործքերուն համար, և բոլոր խիստ խօսքերուն համար՝ որ ամբարիշտները անոր դէմ խօսեցան ” : Յուդա. 14, 15 : Ենովքին հոս գործածած խօսքերը շատ զօրաւոր և ազ-

դու խօսքեր էին , որ ան ժամանակի մարդոց որչափ անօրէնութեան մէջ ըլլալնին կը ցուցունէ : Աս ժամանակէն 700 տարի առաջ Հաբէլ սպանուելով թաղուեցաւ , Ադամ ալ 57 տարի առաջ մեռնելով թաղուեցաւ , և կասկած չկայ թէ առջի մարդիկը բոլորն ալ կամ մեռան և կամ սպանուեցան : Բանի մը հարիւր տարի առաջ Այէնին թողը Ղաւմէք մարդ մը մեռցուցած ըլլալը իր կնիկներուն կը խոստովանի , Ծննդ . Գ . 23 : Բանի մը տարի ետքը կը կարդանք թէ՛ “ երկիրը չարութեամբ լեցուեցաւ ” : Գող՝ մարդասպան՝ կողոպտիչ՝ բռնաւոր ամէնն ալ աճեցան , արդէն շատերը յաւիտենականութեան զացած էին , երկիրը երկրին՝ հողը հողին՝ և փոշին փոշին դարձաւ : Բայց անոնցմէ մէկը չըկենդանացաւ . անշուշտ շատերը ասկէց համարձակելով կըսէին թէ՛ հողի չկայ , յարութիւն չկայ , հանդերձեալ աշխարհ չկայ , մահը՝ յաւիտենական քուն մըն է : Ակէք դինի

խմենք , ուրախութիւն ընենք , մեր  
 հանգիստը փնտռենք , և ուզածնուս  
 պէս ապրինք առանց վախնալու  
 քանզի հաշիւ տալու օր չկայ : Աերև-  
 նայ թէ աշխարհքը օրէ օր խիստ  
 կ'ապականէր, ամբարտաւան՝ անիրաւ՝  
 անհաւատ՝ և անաստուած կրլւային .  
 ասանկ մարդիկ կարելի՞ քան է որ  
 Ենովքը սիրէին : Ենչուչտ զանիկայ  
 կընախատէին , անկէ ոխ կըպահէին ,  
 անկէ կըզզուէին , զանիկայ կընե-  
 դէին , և կարելի է զանիկայ բան-  
 տարկելով մեռցունել կուզէին : Սա-  
 կայն՝

#### 4 . Ենովք առնուեցաւ :

Ենովք Եղիա մարգարէին պէս՝  
 մահ չըտեսաւ , հապա առանց մեռ-  
 նելու երկինք ելաւ : Ուրիշ մարդոց  
 պէս փոշին փոշիի և հողը հողին չը-  
 դարձաւ , հապա իր մարմինովը՝ ա-  
 ռանց մեռնելու , դալու աշխարհքը՝  
 երկինքը գնաց : Եղիա մարգարէն իր  
 փոխուիլը և երբ փոխուիլը առաջուց  
 գիտցաւ , նաև իր աշակերտը Եղի-

սէին և բոլոր մարգարէից որդոցը  
 յայտնուեցաւ : Արդեօք Անովք իր  
 փոխուիլը առաջուց հասկցա՞ւ եթէ  
 ո՛չ չենք գիտեր : Արդեօք անոր ազ-  
 գականները և բարեկամները գի-  
 տէ՞ին թէ չէ՞ տեղեակ չենք : Անոր  
 տղան Մաթուսաղա հիմա 300 տա-  
 րեկան ըլլալով՝ մեծ ընտանիքի մը  
 տէր ըլլալու էր : Մաթուսաղային  
 անդրանիկը Ամէք որ Նոյին հայրն  
 եղաւ 120 տարեկան էր : Մեր նա-  
 խահօրը Ադամին որդին Սեթ տա-  
 կաւին մեռած չէր . Անովս՝ Այնան՝  
 Մաղաղիէլ և Անովքին հայրը Յա-  
 րեղ տակաւին կենդանի էին : Ար-  
 դեօք ասոնք բոլորը ներկայացա՞ն  
 և Անովքին վեր ելելը գիտեցի՞ն  
 եթէ ոչ՝ տեղեակ չենք : Գուցէ իր  
 թշնամիները ժողովուեցան որ՝ զա-  
 նիկայ ծովը ձրգելով խզդեն , կամ  
 փարատող գազաններու առջև նետեն ,  
 կամ քարերով քարկոծեն , կամ անոր  
 գլուխը կտրեն եւ կամ սոսկալի տան-  
 ջանքներով սպաննեն : Եւ դիցուք  
 թէ անոնք իրենց չար բաղձանքը կա-

տարելու համար ամէն բան պատ-  
րաստածնուն պէս, յանկարծ Ննովք  
անոնց աչքին առջևը Մստուծոյ  
կառքը հեծաւ և պահապաններուն  
ու զինւորներուն ձեռքէն ազատելով  
շիփ շիտակ երկինքը ելաւ :

Ինչևիցէ, անշուշտ աս բանը գիտ-  
ցուեցաւ, հռչակուեցաւ. ասանկ զար-  
մանալի լուր մը խիստ շատ տարա-  
ծուելու էր : Մնոր միջոցովը Մստու-  
ծոյ ժողովուրդը զօրանալու էր, ա-  
նոնց հաւատարմութիւնը և ջանքը  
աւելնալու էր, սրտերնին մխիթա-  
րուելով՝ Մստուծոյ փառք ու շնոր-  
հակալութիւն տալու էին : Եւ ան-  
հաւատները՝ ծաղրաբանները և հա-  
լածիչները անշուշտ ամչցան, վախ-  
ցան, և քանի մը տարի կանկ առին  
լուեցին : Եւ շատերը համարձակելով  
Մշուշտ գալու աշխարհք մը կայ  
ըսին, Մստուած կայ, և անոր երկր-  
պագութիւն ընելը պարապ բան չէ :  
Ուրեմն Ննովքին առնուիլը՝ շատե-  
րուն օգտակար եղաւ :

Ննովք ալ աշխարհիս վրայ չէր

գտնուէր , բայց անոր մարգարէութիւնները կը գտնուէին , բնաւ չէին մոռցուեր : Անոր մարմինը՝ ոսկորները և անդամները հոս չէին , քանզի մարմինով՝ ոտքով՝ բազուկով և աչքով երկինքը գնաց . և քանի որ վեր կելլէր , անշուշտ անոր մարմինը ու անդամները փոխուելով՝ հոգևոր մարմին մը եղաւ երկինքին յարմար , Քրիստոսի փառաւոր մարմինին պէս , և յարութենէն ետքը մեր մարմիններուն պէս փառաւոր մարմին մը եղաւ :

Սիրելիներս , ինչ՞ կը խորհիք , հիմա Անովքին կինն ու զակրները՝ քուրճ հազած հողին վրայ նստելով և մազերնին փետելով կաղաղակէ՞ին թէ՛ աս ինչ՞ էր որ գլխընուս եկաւ , ըսելով կուլային և կողբա՞յին առանց մխիթարուելու : Ա՛չ , անշուշտ մեծ ուրախութեամբ ուրախացան :

Աւրեմն մեր Քրիստոնեայ բարեկամները մեռած ատեննին՝ սրտերնիս քարացնելով բնաւ չըտրտմի՞նք : Ա՛չ , անանկ չէ , մեր անոնցմէ զրկու-

էնուս համար լալը շատ վայելուչ է . բայց կուսակաշտներուն պէս յիմարութիւն ընելը՝ մեղք է . յոյս մը չունեցողներուն պէս յուսահատութեամբ տրտմիլը՝ մեծ մեղք է :

Եղբայրներս , թէ որ մեղքը աշխարհք չըմտնէրնէ՝ ամէնս ալ ասանկ առանց մեռնելու պիտի երթայինք : Մարդկային ցեղէն բնաւ մէկը չէր մեռներ , այլ երկնային քաղաքը երթալու համար Աստուած իր կառքը պիտի խրկէր , և ամէն մէկը՝ աս կառքը տեսածին պէս , ուրախութեամբ անոր մէջը պիտի նստէր և երթար :

Ենովք հիմա հինգ հազար տարիէ հետէ երկնից երկինքն է . արդեօք որո՞չափ շատ բաներ տեսած և սորված ըլլալու է : Պատիւէ պատիւ և աստիճանէ աստիճան բարձրացած ըլլալու է : Ամէն ճշմարիտ քրիստոնեայ հոն պիտի երթայ , և յարութեան օրը անոր մարմինը կենդանացած՝ հոգւոյն հետ մէկտեղ հոն պիտի գտնուի :

Պօղոս առաքեալ կրսէ թէ՛ « Հաւատքով Անովք երկրէս փոխադրուեցաւ, որ մահ չըտեսնէ. ու մէկ տեղ մը չէր գտնուէր, ինչու որ Աստուած փոխադրեց զանիկայ. քանզի անոր փոխադրուելէն առաջ՝ վկայուեցաւ թէ՛ Աստուծոյ հաճելի էր: Բայց առանց հաւատքի անհնար է Աստուծոյ հաճոյ ըլլալ. վասն զի ան որ Աստուծոյ կրմօտենայ, պէտք է որ հաւատայ՝ թէ Աստուած կայ, և թէ վարձահատոյց կըլլայ ան ամէնուն որ զինքը կըփնտռեն »: Եբր. Ժ.Ե. 5, 6:

Երանի՛ Անովքին և Երանի՛ անոնց որ անոր պէս կը հաւատան: Անքալ թող անոնց հետ համրուինք. անոնց հետ գտնուինք, և անոնց յաւիտենական բաժինը՝ մեր բաժինն ալ թող ըլլայ: Ամէն:



## ՍԵՄԵՐԻՆՑՑԻ ԿՆԻԿՐ :

“ Եւ ատենը կնիկը ձգեց իր սափորը , ու քաղաքը գնաց , ու ըստ մարդիկներուն . եկէք տեսէք մէկ մարդ մը՝ որ ըսաւ ինծի ամէն ինչ որ գործեր եմ . արդեօք անիկա՞յ է Վրիստոսը ” : Յով . Գ . 28 , 29 :

**Ես կնիկը ո՞վ էր :**

**Վրիստոսը ինչ՞պէս ճանչցաւ :**

**Սափորը ինչո՞ւ ձգեց :**

**Ես իրեք քաններուն վրայ խորհրդածութիւն ընենք :**

### 1 . Ես կնիկը ո՞վ էր .

Ես կնիկը Սամարիացի էր : Դ . Թագ . Ժ . 12 . 27-29 , 32 , 33երորդ համարներէն կըսորվինք թէ՛ Սամարիացիները՝ Խորայելի տասը ցեղերէն մէկ քանիններուն հետ խառնուած օտարական կռապաշտներէ բաղկացեալ ամբոխ մըն էին : Խորայելի տասը ցեղերը խիստ չար ըլլալով իրենց անօրէնութեանը համար գերի տարուեցան և երկրին մէջ խիստ քիչ

Խորայելացի մնաց : Արդ զանոնք  
 գերի տանող Ասորեստանի թագա-  
 ւորը հրաման ըրաւ որ երկիրը բոլո-  
 րովին աւերակ չըլլալու համար կռա-  
 պաշտ երկիրներէն բնակիչներ տա-  
 րուին և հոն բնակին : Ասոնք առաջ  
 իրենց կուռքերը կրպաշտէին : Բայց  
 վերջը վախի պատճառաւ Սուրբ Աս-  
 տուծոյ անունն ալ իրենց կուռքերուն  
 կարգը դասեցին . և իրենց կողմ  
 կրպագութեանը ստիպուելով աւել-  
 ցուցին նաև տասը ցեղերուն այսինքն  
 Բէթէլին անընդունելի արարողու-  
 թիւններէն ոմանք ալ : Անոնցմէ ո-  
 մանք կրգտնուին տակաւին Նափլուս  
 կոչուած քաղաք մը : Աւ իրենց նա-  
 խահարցը ըրածին պէս Մովսէսին  
 հինգ գիրքը միայն կընդունին , իսկ  
 հին Ատակարանին միւս կտորները  
 կըմերժեն : Քանզի չեն ուզեր որ մէ-  
 կը իրենց սկզբնաւորութիւնը ինչ-  
 պէս ըլլալը սորվի : Անոնց և Հրէից  
 մէջ տեղը բնաւ հաղորդակցութիւն  
 չկար , և անոնց անունը անգամ  
 Հրէայի մը խիստ ղզուելի էր :

Քրիստոսի ժամանակը անոնք կռապաշտ չէին, բայց խիստ տգէտ և անկիրթ ու բնութեամբ բիրտ էին. տգէտ և չնչին սնապաշտութեանց կողմանէ հռչակաւոր էին, և իրենց վարքը խիստ չար էր: Հրէաստանի մէջ թէ որ մէկը ժողովուրդէն դուրս ձգուէր, Սամարիա փախչելով՝ հոն կրբնակէր. մարդասպան՝ գող՝ և ամէն տեսակ եղեռնագործութիւն ընողը հոն փախչելով կազատէր:

Արդ աս կնիկը՝ Սամարիացի ըլլալով, խիստ տգէտ ըլլալու էր. մեծ մթութեան մէջ էր. փրկութեան ճամբան չէր գիտեր: Աերևնայ թէ հարուստ չէր, քանզի ջուր քաշելու համար սպասաւոր մը չըխրկելով՝ ինքը եկաւ: Հինգ անգամ ամուսնացած էր: Արիկներուն բոլորը մեռա՞ն արդեօք՝ թէ ոմանք ողջ էին՝ զանիկայ արձակա՞ծ էին թէ ինքը զանոնք ձգած էր, աս բաներուն վրայ տեղեկութիւն չունինք. միայն աս գիտենք թէ՛ ան ժամանակը իր քովը եղողը՝ իր էրիկը չէր: Արդ շնութե-

ամբ ապրելով՝ չար վարք ունեցող  
կնիկ մըն էր : Սակայն աս խեղճ՝  
տգէտ՝ և մեղաւոր կնիկը Քրիստո-  
նեայ եղաւ . աս ին՞չպէս եղաւ : Ես  
մեր երկրորդ հարցումն է :

## 2. Ես կնիկը Քրիստոսը ի՞նչպէս ճանչցաւ :

Մեր Տէրը Հրէաստանէն Վալիլեայ  
դացած ատենը , երկար ատեն ճամ-  
բան չը մնալու համար՝ ստիպուեցաւ  
Սամարիոյ մէջէն անցնիլ : Աէս օրին  
ատենը յոգնած ըլլալով՝ Սուքարի  
մօտ հորի մը քով նստաւ , և աշա-  
կերտները քաղաքը դացին ուտելիք  
ծախու առնելու : Ես կնիկը չէ թէ  
Քրիստոսը գտնելու՝ այլ ջուր քաշե-  
լու համար աղբիւրը եկաւ : Հոն  
զՔրիստոս տեսաւ . և Քրիստոս ալ  
զինքը տեսաւ . կնիկը Քրիստոսի  
խստութեամբ նայեցաւ . իսկ Քրիս-  
տոս սիրով և ողորմութեամբ լեց-  
ուած նայեցաւ անոր . կնիկը անոր  
բարեւ չըտուաւ , հետը չըխօսեցաւ :  
Մեր Տէրը սկսեց . բայց ին՞չ ըսէր :

Եթէ հտւատքի վրայ խօսի, կամ  
 հոգիի՝ մահուան՝ յաւիտենականու-  
 թեան՝ մարգարէութեան՝ ճշմար-  
 տութեան՝ Աստուծոյ վրայով, կնիկը  
 մտիկ պիտի չընէր, կարելի է պիտի  
 հայհոյէր զինքը: Ուրեմն մուրաց-  
 կանի մը պէս իրմէ ջուր կուզէ: Մեր  
 Տէրը անոր յաւիտենական օրհնու-  
 թիւններ տալ ուզեց, բայց ան չըն-  
 դունեց: Արդ Տէրը իրմէ ջուր մը  
 ընդունելու պատրաստ ըլլալը ցու-  
 ցուց: Ողորմութիւն տալը՝ բոլոր հե-  
 թանոսաց մէջ բարիք կրսեպուէր: Բայց  
 կնիկը անոր ջուր տալուն տեղը՝  
 անոր վրայ յանցանք գտնելով երե-  
 սին զարկաւ և զանիկայ նախատել  
 սկսեց: Ինչ և իցէ, խօսակցութիւ-  
 նը բացուեցաւ, և մեր Տէրը աշխա-  
 տեցաւ խօսակցութիւնը հոգևորի  
 դարձունելու, և կնկանը միտքը ար-  
 թնցունելու և անոր խաւար սիրտը  
 լուսաւորելու: Բայց կնիկը բան մը  
 չէր հասկնար, հոգևոր միտք մը չու-  
 նէր, սակայն վերջապէս կնիկը տես-  
 նելով խոստովանեցաւ թէ Քրիս-

տոս մարգարէ ըլլալու է , քանզի Վրիստոս գիտցաւ թէ ինչ տեսակ կեանք մը անցուցած էր, և անոր յանցանքները յայտնեց : Արդ կնիկը իր մեղքերը տեսնել չուզելով և խօսակցութիւնը իր վրայէն դարձունելու նպատակաւ անոր վիճաբանութեան նիւթ մը առաջարկեց , այսինքն երկրպագութիւնը Աստուծոյ հաճելի ըլլալու համար Երուսաղէմ քաղաքը ըլլալու է թէ Սամարիոյ հռչակաւոր լեռը : Բայց Տէրը անանկ օգտակար և կարևոր դաս մը հանեց որ կնիկը չըկրցաւ պատահան տալ . միայն որոշեց սպասել մինչև որ Վրիստոս գայ և աս բաներուն համար կարդադրութիւններ ընէ . “ Կնիկը ըսաւ անոր , գիտեմ որ Մեսիան կուգայ (Վրիստոս ըսուածը) . երբոր ինքը գայ , ամէն բան մեղի պիտի պատմէ” : Հմր 25 : 2է թէ միայն Հրէաները՝ հապա Սամարացիք և բոլոր աղգերն ալ ան մօտ օրերը Վրիստոսի գալուն կսպասէին : Եւ կնիկը խոստովանեցաւ թէ անոր պիտի

Հպատակի և իր կանոններուն պիտի  
 հնազանդի : Արդ Տէրը ըսաւ անոր՝  
 “Ես ան եմ որ քու հետդ կրխօսիմ” :  
 Հմր 26 : Ես ան եմ որ պիտի գար :  
 Ես մեծ ճշմարտութիւնը՝ բնաւ ու-  
 ըրիշի մը խօսած չէր ասկէ առաջ :  
 Անիկը անոր հրաշքները տեսած չէր ,  
 մարգարէութիւնները կարդացած  
 չէր , բայց անոր սպասելը և հնազան-  
 դիլը խոստովանեցաւ : Մեր Տէրն  
 ալ ինքզինքը հպարտ Փարիսեցիներ-  
 ուն չը յայտնեց , այլ աս խեղճ՝ գիրք  
 չունեցող՝ և կարդալ չըզիտցող կն-  
 կանը յայտնեց : Անիկը զանիկայ ըն-  
 դունելու պատրաստ էր , արդէն ա-  
 նոր կ'սպասէր , և զանիկայ գիտնա-  
 լուն պէս՝ ուրախութեամբ ընդունեց :  
 Ես կնիկը անմիջապէս նոր մարդ ե-  
 ղաւ , Քրիստոնեայ եղաւ : Արանի  
 իրեն :

3. Իր սափորը ինչո՞ւ ձգեց :

Ես կնիկը դալիք Քրիստոսը աչ-  
 քովը տեսաւ . անոր երեսը նայե-  
 ցաւ , անոր խօսքերը լսեց , անոր

Հետ խօսեցաւ , անկէ սորվեցաւ , և Քրիստոս ինքզինքը անոր ճանչցուց : Ուստի կնիկը Քրիստոսով լեցուեցաւ : Են շատոնցմէ մեր սպասած Արդապետը , մեր մեծ Փրկիչը՝ մեծ Թագաւորը և աշխարհին փափաքած ազնիւ Լակը երևցած է . ես զանիկայ տեսայ . անոր ձա՛յնը ի՛նչ ատիճան փափուկ և քաղցր է . իմ ընթացքիս և իմ մեղքերուս տեղեակ ըլլալով՝ մինչև անգամ անունս և կեանքս ու սիրտս ալ գիտէ . ամէն բան տեսնողը և գիտցողը հոս է . և զիս չը յանդիմանելով՝ միտքս լուսաւորելու համար ինտո՛ր ողորմած ճամբայ մը գործածեց . իմ յիմարութեանս և անօրէնութեանս չբարկանալով՝ ի՛նչ մեծ համբերութեամբ և զթուլթեամբ վարուեցաւ իմ հետս :

Արդ կնիկը ամէն ուրիշ բան մոռցաւ . ջուրը՝ հորը՝ սափորը և ամէն բան ձգեց : Գրուած է թէ (հմր 28-30)՝ « Են ատենը կնիկը ձգեց սափորը ու քաղաքը գնաց , և ըսաւ մարդիկ-



ներուն . “ Եկէ՛ք տեսէ՛ք մէկ մարդ մը՝ որ ըսաւ ինձի ամէն ինչ որ գործեր եմ . արդեօք անիկա՞յ է Քրիստոսը ” . անշուշտ կնիկը շատ արտօրաց , արտորալով գնաց : Արելի է Քրիստոս հոն շատ չըմնար , քանի մը ժամէն իր ճամբան պիտի երթայ : Ուստի շուտով գնաց քաղաքը . և փողոցները ամէն տեսածը և գտածը հրաւիրեց : Քրիստոս ըսաւ անոր “ Լրիկդ կանչէ ” . բայց ան՝ ամէն մարդ կանչեց : “ Եկէ՛ք տեսէ՛ք մէկ մարդ մը որ պատմեց ինձի ամէն իմ ըրածներս ” ըսաւ : Մեղքերըս ինձի յիշեցնողը՝ իմ գաղտնիքներս յայտնողը՝ ամէն բան գիտցող ան մեծ էակը տեսէ՛ք , իր իմաստութիւնը իրմէ լսեցէ՛ք ձեր ականջովը . և անոր զարմանալի յարգը և քաղցրութիւնը դուք ինքնիդ տեսէ՛ք :

Աս կնիկը թէ և տունէն շատ տգէտ ելաւ , բայց տուն դարձաւ շատ իմաստուն . աշխարհային կնիկ մը գնաց , բայց հոգևոր ետ դարձաւ . մեղքի ծառայ գնաց , Քրիստոսը

քարոզելով ետ եկաւ : Խեղճ՝ անկիրթ՝ և անօրէն կնիկ մըն էր . բայց Վրիստոնեայ եղաւ , և իր քաղաքակիցներուն մեծ օրհնութեան միջոց մը եղաւ : Շատերուն Վրիստոսի գալուն և հաւատալուն պատճառ եղաւ : Ընոնք մեր Տէրոջը աղաչեցին որ իրենց քովը մնայ , ու երկու օր մնաց : Ար կարդանք որ « անոր խօսքին համար աւելի շատերը հաւատացին » : Ըմբ 41 , 42 : Ընշուշտ շատ ուրախութիւն ըրին , երկնից հրեշտակներուն մէջն ալ մեծ ուրախութիւն և ցնծութիւն եղաւ :

Սիրելիներս՝ դուք Վրիստոսը կը ճանչնա՞ք : Չանիկայ գտա՞ք , անոր յարգը կը ճանչնա՞ք , անոր փրկութիւնը գործածեցի՞ք , անոր փրկութեան զօրութիւնը փորձառութեամբ սորվեցա՞ք : Ես կնկան ըրածին պէս քաղաքը գացէք , ձեր դրացիներուն գացէք , և աս աւետիսը տուէք . ձեր աղգականները և բարեկամները Վրիստոսի հրաւիրեցէք : Ընոնց ըսէք՝ Եկէք , զիս միսիթարողը

տեսէք , իմ հոգւոյս կեանք տուող Սուրբ Գիրքը ընդունեցէք և կարդացէք :

Երդ՝ եղբայրներս , ամէն մարդ ազէկութիւն չի կրնար ընել . այո՛ , թէ շատ և թէ քիչ կրնայ : Մինչև անգամ՝ կնիկները և կարդալ չըզիտցող կնիկները օգտակար քրիստոնեաներ կրնան ըլլալ : Ե՛հա աս Սամարիացի կնիկը կարդալ չէր գիտեր , տգէտ էր , և իր կեանքը առաջ անօրէնութեամբ կ'անցունէր . բայց Քրիստոսի համար և իր բարեկամները Քրիստոսի բերելու համար շատ աշխատեցաւ : Իր գործը ջուրի սափորը՝ լուացարարութիւնը՝ սպասաւորութիւնը՝ ամէն բան ձգելով քաղաքը վաղեց որ՝ քաղաքացիք Քրիստոսի հրաւիրէ . և աս՝ առանց ստակի՝ առանց ստիպուելու ըրաւ : Եւ աս ընելով՝ ինքզինքը Քրիստոսի բարեկամ և դրացիներէն աղէկ կամ իմաստուն չցուցուց . այլ անոնց սա յարմար հարցումը ըրաւ՝ « Չըլլայ թէ աս ըլլայ Քրիստոսը , դուք եկէք

տեսէք, դուք որ մարդ էք, դուք որ խելացի և իմաստուն էք, դուք որ ինձմէ աղէկ գիտէք” : Մեր Տէրը աս կնիկը շահելու համար՝ խիստ քաղցր և խելացի կերպ մը գործածելուն համեմատ, աս կնիկն ալ նոյն կերպովը շահեցաւ իր քաղաքացիները :

Միրելիներս՝ դուք ալ ճիշտ աս կերպը գործածեցէք :

Աս կնիկը շատերը ապաշխարութեան տանելուն համար, յաւիտեանս աստղերու պէս պիտի փայլի . դուք ալ չէ՞ք ուզեր աս պատուոյն արժանի ըլլալ : Նրանի՛ ան կնկանը . և երանի՛ ձեզի, թէ որ անոր պէս շատերը՝ Քրիստոսի բերելու աշխատիք : Աստուած ձեզի իր Սուրբ Հոգին խրկելով՝ օգնէ : Ամէն :

## ԵՐԲԱՆՄԱՆ ԳՈՒՂ :

“ Եւ եղաւ որ աս բաներէն ետքը՝ Աստուած փորձեց Աբրահամը և ըսաւ անոր • Ո՛վ Աբրահամ • և անիկայ ըսաւ , Եհնա ես հոս եմ : Եւ անիկայ ըսաւ՝ Հիմնաքու սիրած մէկ հատիկ որդիդ Խասակը առ , ու Սորիայի երկիրը գնան , և հոն զանիկայ ողջակեզ ըրէ՛ լեռներուն մէկուն վրայ՝ որն որ ես քեզի պիտի ըսեմ ” : Ծնն • իբ • 1, 2 :

Աստուած Աբրահամին խօսք տուաւ որ՝ իր ցեղը անհամար պիտի ըլլայ • Բայց զիտէք որ Աբրահամ առանց որդիի մնաց երկար ատեն : Աստուած խօսք տուաւ որ՝ Քանանու երկիրը իր սերունդին ըլլայ , բայց անիկայ բնաւ սերունդ չունէր : Աստուած անոր ուխտ ըրաւ թէ՛ իր սերունդովը բոլոր ազգերը պիտի օրհնուին , բայց տարուէ տարի առանց սերունդի կ'ապրէր : Բայց Աբրահամ Աստուծոյ խօսքին հաւատալով իր ծերութեան ատենը հայրենիքը ձգելով Քանանու երկիրը եկաւ : Հոն Աստուծոյ սեղան շինեց , հոն հիւր մըն էր , վրանի մէջ կը բնակէր : Հոն Քանանացիք օրէ որ

կը շատնային , բայց իրեն զաւակ չեղաւ , և ըլլալու ալ մարդկօրէն խորհելով բնաւ յոյս մը չունէր :

Սակայն Աբրահամ` 25 տարի սպասելէն վերջը , իր 100 տարեկան հասակին մէջ որդի մը ունեցաւ : Արդեօք ո՞րչափ մեծ եղաւ անոր ու Սարային ուրախութիւնը և շնորհակալութիւնը : “Ան ատենը անոնց բերանները ցնծութեամբ և լեզունին օրհնութեամբ լեցուեցաւ” : Իսահակ՝ երկար ատենէ ՚ի վեր սպասածնին՝ ծնաւ : Իսահակ՝ որ անոնց ծերութեանը մխիթարութիւն , և ստացուածքնուն ժառանգ պիտի ըլլար , ծնաւ : Իսահակ՝ որ ան դեղեցիկ երկիրը բոլորը իր սերունդին պիտի ըլլար , և որուն սերունդէն աշխարհքին Փրկիչը պիտի գար , ահա՛ աշխարհք եկաւ . և կասկած չկայ որ իր ծնողքը շատ երկրպագութիւն ըրին , շատ աղօթք ըրին , շատ գոհեր մատուցին , և շատ գոհութիւն տուին : Անոնց հոգին տղուն հոգիին հետ կապուեցաւ : Օւանի-

կայ իրենցմէ աւելի սիրեցին : Տղան անոնց սէրը կ'ընդունի , զանոնք կը յարգէ և կը պատուէ , և անոնց հրամանը ուրախութեամբ կը կատարէ : Աստիճան կտրուեցաւ , մեծցաւ . և անոր բարքն ու վարքը ամէն կերպով ընդունելի կ'երևայ : Արանի՛ անոր ծնողքներուն որ կրնան Սիմէօնին պէս Աստուծոյ շնորհակալութիւն և երկրպագութիւն ընելով ըսել՝ « Հիմա ո՛վ Տէր արձակէ քու ծառաներդ խաղաղութեամբ » որ երթանք :

« Աւ եղաւ որ աս բաներէն ետքը Աստուած ըսաւ Աբրահամին զանկայ փորձելով , Ո՛վ Աբրահամ » : Աբրահամ իր Աստուծոյն ձայնը կը ճանչնայ , քանզի աս առաջին լսելը չէր , առաջ ալ լսած էր . շատ անգամ լսած էր , դիշերուան հանդարտութեանը մէջ շատ անգամ լսած էր , և միշտ իր սրտին ուրախութիւն և խաղաղութիւն կուտար : Հիմա կուան լսած ձայնն ալ՝ ճիշտ ան ձայնն էր : Ճիշտ ան ձայնն էր՝ որ ԾԾ տարի

առաջ իրեն ըսաւ՝ “Նչիր քու երկրէդ  
 և գնա՛ ան երկիրը որ քեզի պիտի  
 ցուցունեմ, և քեզ մեծ ազգ մը պի-  
 տի ընեմ” : Գլ. ԺԻ. 42 : Ճիշտ ան  
 ձայնն էր որ 40 տարի առաջ ըսաւ՝  
 “Նայէ երկինքը, աստղերը համրէ՛,  
 թէ որ կրնաս, քու սերունդդ ալ  
 այնպէս պիտի ըլլայ” : Գլ. ԺԵ. 5 :  
 Ճիշտ ան ձայնն էր՝ որ 30 տարի ա-  
 ռաջ անոր ըսաւ, “Քու կնիկդ Սա-  
 րան քեզի որդի պիտի ծնանի, և ա-  
 նոր անունը Իսահակ դնես, և իրեն  
 հետ ու իրմէ ետքը իր սերունդին  
 հետ իմ ուխտս պիտի հաստատեմ  
 յաւիտենական ուխտ մը ըլլալու հա-  
 մար” : Գլ. ԺԷ. 17 : Եբրահամին  
 հիմակուան լսած ձայնը՝ ճիշտ ան  
 ձայնն էր : Եւ իր Եստուծոյն ձայնը  
 լսածին պէս, արթուն կեցաւ՝ և  
 “Ե՛հա ես հոս եմ” ըսաւ, որ ըսել  
 է, “Խօսէ՛ Տէր, քանզի քու հրա-  
 մանդ կատարելկ՛ուզեմ” : “Եւ անոր  
 ըսաւ՝ Հիմա քու սիրած մէկ հատիկ  
 որդիդ Իսահակը ա՛ն” : Եւ Եբրա-  
 համ իր որդւոյն՝ սիրելի որդւոյն՝ մէկ



Հատիկ որդւոյն Խասակին վրայ լսելով կ'ուրախանայ . անոր անունը՝ աս սիրելի կերպովը յիշուիլը շատ հաճելի է իրեն : Եւ որդին հիմա չափահաս ըլլալով, տարակոյս չկայոր հայրը կը յուսար թէ նոր օրհնութիւններ պիտի շնորհուէին : Սակայն որչափ որ առաջին խօսքերը իր յոյսը արթնցուցին ալ նէ, վերջին խօսքերուն ամէնմէկը՝ նետի պէս իր սրտին մէջը մխուեցաւ : “ Բու սիրած մէկ հատիկ որդիդ Խասակը ա՛ռ , և զանիկայ ողջակէզ ըրէ՛ ” : Չանիկայ մորթէ՛ , անոր արիւնը թափէ՛ , քու ձեռքովդ թափէ , մարմինը այրէ՛ , մինչև որ մոխիր ըլլայ :

Եբրահամ շատ բան կրնար ըսել , բայց բնաւ բան չըսաւ : Ընոր աղախինը Հագար՝ երբոր տղուն հետ իր քովէն հանեց , Մտուած բաւական պատճառ ցուցուց . բայց Խասակինչո՞ւ աս կերպովը պիտի մորթուէր , և զանիկայ մորթողը ինչո՞ւ Եբրահամ ինքը պիտի ըլլար , աս բանին Մտուած բնաւ պատճառ մը չըցու-

ցուց ո՛չ հօրը և ոչ որդիին : Չարու-  
թեամբ լեցուած Սողոմին կորսուե-  
լու ժամանակը , շատ աղաչանք՝ և  
միջնորդութիւն ըրաւ , բայց հիմա  
իրեն համար չը խօսիր , բերանը չը  
բանար : Նոյնպէս ալ մեծ Միջնորդը  
Յիսուս , դառնուկի պէս մորթուելու  
դացած ժամանակը իր բերանը չը  
բացաւ :

Եբրահամ կրնար ըսել թէ՛ Ո՛վ  
արդար Եստուած , դուն հրաման չը-  
րի՞ր որ՝ ո՛վ որ մարդու արիւն թափէ  
իր արիւնն ալ մարդէ պիտի թա-  
փուի : Ծանն . Թ . 6 : \* Ուրեմն քա՛ւ  
լիցի որ ես մարդասպան և մարդաս-  
պաններուն ամենէն մեծը ըլլամ . չէ  
թէ բարկութեամբ իմ թշնամիս  
կամ դրացիիս կամ ծառայիս արիւ-  
նը՝ այլ իմ որդւոյս՝ մէկ հատիկ որ-  
դւոյս՝ սիրելի որդւոյս՝ հոգիէս աւելի  
արժէքաւոր խսահակիս արիւնը . .  
քա՛ւ լիցի որ թափեմ :

Արնար ըսել թէ՛ Քանանացիք և  
աս երկրիս հեթանոս ազգերը ինծմէ  
չե՞ն զզուիր , և իմ պաշտած Եստու-

ածս չե՞ն հայհոյեր : Չի՞ պիտի ըսեն թէ՛ երկինք և երկիր Ստեղծողին իր ծառաներէն պահանջած ծառայութիւնը և երկրպագութիւնը աւուրեմն Աբրահամին Աստուծոյն երկրպագութիւն ընելէն՝ հազար անգամ աւելի լաւ է մեզի մեր կուռքերուն երկրպագութիւն ընել , և կուսպաշտ մնալ :

Արնար ըսել թէ Ո՛վ Տէր Աստուած՝ իմ հետս ուխտ և դաշինք չըրիր՞ . ուրեմն քու ինծի ըրած դաշինքներդ՝ կրկին և կրկին ըրած ուխտերդ՝ քու կին արդարութիւնդ և ճշմարտութիւնդ ինչ՞ պիտի ըլլայ : Թէ որ քու խոստացած որդիդ՝ որուն սերունդէն բոլոր ազգերը պիտի օրհնուէին , ասանկ մորթուի , քու խօսքերդ ՚ի դերև չե՞լլեր : Ասկէ ետքը՝ քեզի ո՞վ պիտի ապաւինի , քու խօսքերուդ ո՞վ պիտի հաւատայ :

Արնար ըսել թէ՛ թէ որ տղան յանցանք մը ունի , ձեռքէս զո՛հ մը թող ընդունուի : Նոխազներէս հազարաւորներ՝ հօտերէս բոլոր խոյերը՝

անասուններէս ամէնմէկ ցուլը՝ և բո-  
լոր մէկ տարեկան որթերս իբրև զո՛հ  
թող մատուցուին . և լեռներէն բո-  
լոր կենդանիները թող փնտռուին՝  
որ ողջակէզ ըլլայ , և զանոնք վառե-  
լու համար \ իբանան անտառին ամէն  
մէկ ծառը թող կտրուի : Բայց աս  
իմ որդիս՝ մէկ հատիկ որդիս՝ իմ ա-  
մենասիրելի որդիս Խահակը թող  
խնայուի :

Բայց թէ որ անշուշտ մեռնելու է ,  
(ահա՛ ես որ հող ու մոխիր եմ իմ  
Տէրոջս հետ խօսիլ սկսեցի ,) եթէ  
անշուշտ մեռնելու է , չե՞ կրնար ըլ-  
լալ որ ան՝ ամէն մարդոց մեռնելուն  
պէս մեռնի . որպէս զի մենք անոր  
ծառայութիւն ընենք , անոր մեր  
սէրը ցուցնենք , անոր մեր վերջին  
պարտքը կատարենք և իր դերեզմա-  
նին վրայ արցունք թափելով՝ բոլոր  
սրտով ըսենք “ Տէրը տուաւ , Տէրը  
առաւ , օրհնեալ ըլլայ Տէրոջը անու-  
նը ” :

Բայց թէ որ աս ալ չըլլար , հապա  
անպատճառ սիրելի որդւոյս արիւնը

գետինը թափելու է , և իր պատու-  
ական մարմինը սեզանիդ վրայ այրե-  
լու է , (ո՛հ Տէրս չբարկանայ , միայն  
աս անգամ ալ խօսիմ) , աս խիստ  
սոսկալի գործողութիւնը թող իմ  
ձեռքերս չկատարեն , այլ թող ուրիշ  
մը՝ օտարական մը ընէ , և իմ աչ-  
քերս թող չտեսնեն , ու ականջներս  
յաւիտեանս չլսեն :

Սակայն Աբրահամ ասանկ բաներ  
չխօսեցաւ բնաւ : Գիտենք որ՝ անոր  
բերնէն բնաւ ասանկ խօսք մը չելաւ :  
Ընոր Աստուածային հրաման եղաւ ,  
Աստուծմէ գալը գիտցաւ . և անոր  
համեմատ արդեօք ընէ՞ թէ չէ բնաւ  
չկասկածեցաւ : Իր ամուսնոյն՝ զաւ-  
կին և ծառաներուն բան մը չըսաւ ,  
ոչ ալ ինքը ուշացաւ : Ար կարդանք  
թէ առտուանց կանուխ ելաւ՝ իշուն  
համետը դրաւ , և դուռը պատրաստ  
կեցած է . ողջակէզի համար չոր փայ-  
տերը ճեղքեց , ու իր հետը երկու  
մանչ և իր որդին Խահակը առնե-  
լով , Աստուծոյ ցուցունելիք տեղը  
երթալու համար ճամբայ ելաւ :

Հմր. 3: Երկու օրուան ճամբայ գացին, երկու գիշեր երկնից հաստատութեանը տակը մնացին: Եբրահամին հաւատքը՝ մինչև երրորդ օրը փորձուեցաւ որ՝ իր ըրածը յանկարծ՝ անխելքութեամբ՝ և առանց մտածութեան չերևնայ. անիկայ ժամանակ ունէր որ՝ բոլոր բաները խորհի, գալիքին նայի, և ընելիքը աղէկ կշռելով՝ հասկնայ:

“Ու երրորդ օրը՝ Եբրահամ իր աչքերը վեր վերցուց ու տեսաւ անտեղը”: Հմր. 4: Աստուած հոն կ'երևայ, և Եբրահամին զոհը ընդունելու պատրաստ կ'սպասէ: Մորիայի լեռներէն մէկն էր և կասկած չկայ որ Գողգոթա լեռն էր՝ որուն վրայ 2000 տարի ետքը Աստուծոյ սիրելի որդին՝ աշխարհքիս մեղքին համար զոհ եղաւ:

Եբրահամին սիրտը ամուր կեցաւ: Բայց որպէսզի իր հետը եղող տղաքները չը խառնուին՝ “Դուք հոս նստեցէք էշերուն հետ, և ես տղուն հետ մինչև հոն երթանք, երկրպա-

գուլթիւն ընենք , և նորէն ձեզի դառնանք” ըսաւ : Հմր . 5 : “Ետքը Եբրահամ ողջակէզին փայտը առաւ և իր որդւոյն Իսահակին վրայ դրաւ” : Հմր . 6 : Երդ՝ Իսահակին վրայ ողջակէզին փայտերը բեռցուած , հեծելով և շունչը կտրելով լեռը կ’ելէ : Ասանկ ալ Աստուծոյ սիրելի որդին՝ խաչը իր վրայ առած . շնչասպառ և մարելով կը տանէր : Եւ Եբրահամ՝ մէկ ձեռքը կրակ և միւս ձեռքը դառնակ առած կ’ելէ դէպ ’ի լեռը :

Սեպենք թէ Եբրահամ ան երկու օրուան ճամբան շատ չխօսեցաւ , և հիմա ալ բնաւ չի խօսիր : Բայց շատ կը խորհի , և քանի որ կը խօսի , կարելի է որ անոր հոգւոյն հանգստութիւնը և խաղաղութիւնը զարմանալի կերպով իր երեսին վրայ կը յայտնուի : Վարելի է որ՝ Իսահակ ալ իր հօրը խորհրդածութիւնը չկտրելու համար՝ երկուքն ալ լռութեամբ կ’երթան :

Բայց վերջապէս լռութիւնը խափանեցաւ :

Մէկ ծառի մը տակ շունչ առնելու համար կը կայնին . ծառին ճիւղերուն վրայ թռչունները կ'երգեն , և խիտ տերեւներուն հետ արևուն ճառագայթները կը խաղան : Եւ Իսահակ Աբրահամին հետ խօսելով՝ Հայր , ըսաւ . և ան ըսաւ՝ Ահա՛ հոս եմ որդեակ իմ : Ահա՛ կրակ և փայտ , ողջակէզ ըլլալու համար գառնուկ ուր է : Հմր . 7 :

Ասանկ հարցման մը ո՞վ կրնայ պատասխանել : Բոլոր աշխարհքին մէջը հայր մը կա՞յ՝ որ կրակը և դանակը ձեռքէն չի պիտի նետէր , և իր որդւոյն վեղը իյնալով՝ չափէ դուրս արցունք չի պիտի թափէր : Աս հարցմանը պատասխան տալու կարող եղող հայրը՝ Աբրահամն է : Բաջ Աբրահամ , ձայնը չը դողալով և լեզուն չը բռնուելով՝ յարմար և մարգարէական պատասխան մը կուտայ : «Եւ Աբրահամ ըսաւ՝ Աստուած իրեն ողջակէզ ըլլալու գառը պիտի պատրաստէ , որ՛դեակ իմ” : Հմր . 8 :



Դարձեալ Իսահակ իր բեռը առնելով երկուքը մէկտեղ կ'երթան : Արջապէս տեղը հասան . լեռան գագաթը, մարդիկներէ հեռու : Արելի է որ՝ տակաւին ծառ կտրուած չէ ; և մարդոց ոտքերու նշաններ չի տեսնուիր : Եբրահամ առանց սպասելու իր դործին կ'սկսի : Օռհին տեղը պատրաստեց . սեղան շէնեց . Իսահակին բերած փայտերը սեղանին վրայ կարգով շարեց : Հիմա ամէն բան պատրաստ է , “ Բայց ողջակէզի համար գառը՝ ուր է ” :

Իիցուք թէ Իսահակ ծառի մը տակ հանգչելով՝ իր յարգելի հօրը բրածները կը դիտէ , և կը զարմանայ թէ՛ ինչ՞ է Եստուծոյ պատրաստած գառը : Ո՞վ անոր լուր պիտի տայ , քանզի ժամանակը հասած է , և պէտք է որ Իսահակ ամէն բան գիտնայ : Եղելութիւնը Եբրահամ հասկցունէ անոր . այո՛ , Եբրահամ կրնայ հասկցունել . քանզի Եռաբեալը կ'ըսէ , “ Եբրահամ հաւատքով զօրացած Եստուծոյ փառք տուաւ ” :

Հռով. Գ . 20 : Հիմա իր սիրելի որդւոյն գալով՝ քովը կը նստի , և գուցէ (քանզի չենք գիտեր) ասանկ կ'ըսէ , “Ինծի հարցուցիր թէ՛ գառնուկը ու՞ր է : Գառնուկս՝ սիրելի գաւակս Իսահակ , Աստուծոյ պատրաստած գառնուկը դուն ես : Արդ որդեակ իմ , մի վախնար և սիրտդ թող չը դողայ , այլ բոլոր սրտով Աստուծոյ ապաւինէ : Գուն իմս չես , այլ անորն ես . և անոր թէ՛ քեզի և թէ՛ ինծի ըրած խոստմունքները խիստ շատ են , և կասկած չկայ որ բոլորը պիտի կատարէ : Ուրեմն անոր սուրբ հրամանին հնազանդինք , և թէ՛ և մեղ մեռցունէ ալ նէ՛ իրեն ապաւինինք” :

Շատ ժամանակ չկար որ Իսահակ խորհի : Իայց չերևնար թէ իր կենացը համար միջնորդութիւն ըրաւ , կամ փախչելու աշխատեցաւ . այլ Աստուծոյ կամքին և հօրը հրամանին հնազանդելով՝ ինքզինքը զոհ ըլլալու յանձնեց , Աստուծոյ սիրելի որդւոյն պէս ըսելով՝ “Ահա՛ կուգամ

ես, ո՛վ Աստուած, քու կամքդ ընե-  
լու” : Սաղմ. Խ . 7 , 8 :

Ինչպէս որ Դաւիթ կ’ըսէ, “ Օռ-  
հի անասունները չուաններով կա-  
պեցէ՛ք և սեղանին եղջիւրներուն  
մօտեցուցէ՛ք” : (Սաղմ. ՆժԻ . 27 , )  
անանկ ալ Աբրահամ իր որդւոյն  
ձեռքերը՝ և թևերը՝ ան ձեռքերը որ  
զինքը գրկելու համար շատ անգամ  
երկնցած էր, չուանով կապեց որ չե-  
շարժի, և դանակին բերնէն չը փա-  
խչի : Ար կարդանք թէ՛ “ իր որդին  
Խասահը կապեց, և սեղանին փայ-  
տերուն վրայ դրաւ” : Հմբ . 9 : Ահա՛  
Խասահկ՝ հնազանդ Խասահկ՝ իր հօրը  
և մօրը սիրելին՝ աշխարհքին յոյսը՝  
ահա սեղանին վրայ կապուած կը  
պառկի, և Քրիստոսի պէս մինչև ի  
մահ հնազանդ է :

Դիցուք թէ՛ Աբրահամ իր որդին  
ծնկան վրայ բերաւ, և ձախ ձեռքովը  
գլուխը բռնելով՝ գուցէ մէկ բոպէ մը  
կեցաւ որ զանիկայ համբուրելով իր  
սիրոյն վերջին նշանը տայ և անկէ  
առնէ, և հատ մըն ալ իր մօրը Սա-

րային համար : Աբրահամ ալ հայր  
 չէ , մարդ ալ չէ , թէ՛ իր հայրու-  
 թիւնը և թէ մարդկութիւնը մէկդի  
 ձգելով՝ զո՛հ ընողի սրտոտութիւնը  
 առաւ իր վրան : Ետքը իր աչքը և  
 սիրտը դէպ ՚ի երկինք վերցունելով՝  
 աջ ձեռքովը քանի որ ճիշդ զարնելու  
 վրայ էր . . . հրեշտակը բռնեց ձեռքը .  
 անոր ձեռքը յաւիտենական ուխտին  
 հրեշտակը՝ Աստուծոյ հրամանովը  
 բռնեց :

“Եւ Տէրոջը հրեշտակը երկինքէն  
 անոր կանչելով ըսաւ , Աբրահամ՝  
 Աբրահամ՝ տղուն ձեռք մի՛ դպցու-  
 ներ և անոր բան մը մի՛ ըներ” : Հմր .  
 12 : Կերևայ թէ՛ Աբրահամ մացառ-  
 ներուն մէջ շարժելու ձայն մը լսեց .  
 քանզի գրուած է “ իր աչքերը վեր  
 վերցուց ու նայեցաւ , և ահա իր ետ-  
 ևը խիտ մացառներուն մէջ եղջիւր-  
 ներէն բռնուած խոյ մը կար . և Աբ-  
 րահամ գնաց ու խոյը առաւ և զա-  
 նիկայ իր որդւոյն տեղը ողջակէզ մա-  
 տուց” : Հմր . 13 :

Աբրահամին աս խոյը ինչ՞ հոգիով

և որչափ շնորհակալութեամբ մատուցանելը՝ ո՞վ կրնայ հասկնալ : Չարմանք՝ շնորհակալութիւն՝ զուարթութիւն՝ հաւատք՝ վախ՝ յոյս՝ սէր՝ փափաք՝ ուրախութիւն և երկրպագութիւն բոլորը մէկտեղ եկան : Եբրահամ նոյն բոպէին դարձեալ մարդ ալ եղաւ՝ և հայր ալ . և կասկած չկայ որ ուրախութենէն կը խնդար ու կուլար , և Խասակը գրկելով՝ կը սիրէ , կը գգուէ , և կը համբուրէ : Խասակը կապող չուանը կը քակէ , և խոյը կը կապէ անով : Ո՛հ , ան բաղդաւոր խոյը՝ Եստուծոյ պատրաստած գառը : Ո՛հ , ան չուանը , ան կրակը , ան դանակը , ան փայտը , ան մահը , ան կեանքը , ան երջանկութիւնը : Եւ Եբրահամ՝ ու սիրելին Խասակ՝ սեղանին քովը կայնած լուծեամբ կը խորհէին , մինչև որ Եստուծոյ գառին չորս կողմը վառելով փոշի եղաւ և սեղանին կրակը մարեցաւ : Երանի՛ Եբրահամին :

Եղբայրներս՝ աս ինչ՞ օր էր . ինչ՞

զոհ , ինչ մահ , ինչ արիւն էր : Ասան արեանը օրինակն էր՝ որ 2000 տարի ետքը անհամար մեղքերու փոխարէն թափուեցաւ : Արանի՛ հաւատացողներուն :

Աս նիւթին վրայ հետեւեալ քարոզին նորէն պիտի խօսինք :

## ԵՐԲԱՆՍԻՆ ԵՄԻՆ ԿՆԻՍՏՅԱՆ :

“ Հաւատքով Աբրահամ իր փորձուած ատենը Իսահակը պատա-  
 ըազ մատուց , և ան որ խոստմունքները առած էր, իր մէկ հատիկ որ-  
 դին կր մատուցանէր . որուն ըսուեցաւ թէ՛ Իսահակով քեզի սերունդ  
 պիտի կոչուի . քանզի կը մտածէր , թէ՛ Աստուած մեռելներէն ալ կա-  
 ըող էյարուցանել . ուսկից օրինակով մը ընդունեց զանիկայ” : Աբր .  
 Ժն . 17-19 :

Իրաւ Աբրահամ իր որդին չմոր-  
 թեց , անոր դըլուխը կտրելով արիւ-  
 նը չթափեց : Իայց աս բանը ընելու  
 պատրաստ ըլլալուն համար , իբրև  
 Աստուծոյ կամքը կատարած ընդու-  
 նուեցաւ : Աբրահամ թէ որ իր որդ-  
 ւոյն արիւնը թափէր , յանցաւոր և  
 մարդասպան չէր ըլլար : Իսահակ  
 Աստուծոյն էր . և Աստուած իրա-  
 ւունք ունէր՝ որ զանիկայ աշխարհ-  
 քէն վերցունէ , ինչ կերպով որ իրեն  
 հաճելի ըլլար , հիւանդութեամբ՝  
 կրակով՝ սուբով կամ կայծակով կը-  
 նար զանիկայ վերցունել : Իրաւունք  
 ունէր աս գործին համար մէկ սուրբ  
 հրեշտակ մը գործածել , ինչպէս որ  
 մէկ գիշեր մը 185,000 գօրք մեռցնե-

լու համար գործածեց : Գ Թագ .  
 ԺԹ . 35 : Ես գործին համար Եստ-  
 ուած սուրբ հրեշտակ մը գործածեց ,  
 և սուրբ մարդ մը չի՞ կրնար գործա-  
 ծել : Թէ՛ հրեշտակ մը և թէ՛ մարդ  
 մը՝ միայն Եստուծոյ հրամանին հնա-  
 զանդելու են , և անկէ ուրիշ բան  
 պէտք չէ : Գ Թագ . Ի . 35 , 36 եր-  
 րորդ համարները կը կարդանք թէ՛  
 Մարգարէից որդիներէն մէկը Տե-  
 րոջը անունովը իր ընկերին ըսաւ՝  
 Շնորհք ըրէ զես՝ զա՛րկ . և անիկայ  
 դարնել չուզեց : Եւ անիկայ ըսաւ  
 անոր՝ Տերոջը խօսքին հնազանդու-  
 թիւն չընելուդ համար՝ ահա իմ քո-  
 վէս գացածիդ պէս , քեզ մէկ առիւծ  
 մը պիտի մեռցունէ . և անանկ եղաւ :  
 Են մարգարէն անոր աղաղակեց ,  
 Եստուծոյ հրամանովը խօսեցաւ ,  
 վախցուց , բայց ան չուզեց . և զա-  
 նիկայ մէկ առիւծ մը գտնելով մեռ-  
 ցուց : Եհա՛ Սուրբ Գրքին ըսածին  
 պէս ( Ե Թագ . ԺԵ . 22 ) “ հնազան-  
 դութիւնը զոհէն՝ և խօսքի մտիկ ը-  
 նելը խոյերուն ճարպէն ազէկ է ” :



Անցեալ քարոզին մէջ Աբրահամին փորձութեանը վրայ մէկիկ մէկիկ պատմեցինք . անիկայ դարձեալ կրկնել հարկ չէ : Բայց Աբրահամին օրինակէն քանի մը օգտակար բաներ կրնանք սորվել :

1 . Ար սորվինք թէ ի՛նչ է ճշմարիտ հաւատքը :

Աբրահամ թէ որ անհաւատութեան զօրութեանը և իշխանութեանը տակն ըլլար , իր որդին չէր մատուցանէր : Թէ որ միայն երեցած և ժամանակաւոր բաներուն նայէր , իր որդին չէր զոհեր : Թէ որ Աստուած մը ըլլալուն՝ անոր ստորոգելիքներուն՝ անոր զօրութեանը՝ իմաստութեանը՝ ճշմարտութեանը՝ խօսքին՝ ուխտերուն և գալիք փրկչին վրայ հաստատուն հաւատք չունենար , իր որդին բնաւ չէր զոհեր : Պօղոս առաքեալ կ'ըսէ , “ Հաւատքով Աբրահամ փորձուած ատենը Խահակը պատարագ մատուց ” : Չանիկայ ան մեծ փորձութենէն՝ ան վառած փու-

ուէն ողջ առողջ անցունողը՝ իր հա-  
ւատքն էր :

Մարկոսի՝ Ժ Գլուխ , 17-22 հա-  
մարը , դրուած է թէ՛ Մէկ երիտա-  
սարդ մը Տէր Յիսուսին գալով հար-  
ցուց , “ Ինչ՞ ընեմ որ յաւիտենական  
կեանք ժառանգեմ ” : Մեր Տէրը ա-  
նոր ըսաւ թէ՛ “ Ինչ որ ունիս ծախէ ,  
և աղքատներուն տուր , և երկինքը  
զանձ պիտի ունենաս ” : Աս հրա-  
մանը լսելուն պէս՝ տրտմութեամբ  
գնաց : Բայց Աբրահամ ասանկ չը-  
րաւ . քանզի ինքը հաւատք ունէր ,  
բայց ան երիտասարդը հաւատք բնաւ  
չունէր : Աբրահամ սէր ունէր , բայց  
ան երիտասարդը բնաւ սէր չունէր :  
Աս երիտասարդը՝ աշխարհային ան-  
հաւատութեան թագաւորութեանը  
մէջն էր , իսկ Աբրահամ երկնից թա-  
գաւորութենէն էր : Մէկը աշխար-  
հային բաներ՝ իսկ միւսը հոգևոր բա-  
նէր կը խորհէր . մէկը աս աշխարհիս  
համար կ'ապրէր , իսկ միւսը գալի-  
քին համար , յաւիտենականութեան  
համար , Աստուծոյ համար կ'ապրէր :

Մէկը տրտմութեամբ գնաց , միւսը առտուն կանուխ ելաւ՝ սուրբ հրամանը կատարելու : Մէկէն պահանջուածը՝ միայն ստացուածք էր , բայց միւսինը՝ իր ստացուածքէն հազարաւոր անգամ աւելի արժէքաւոր էր : Մէկին վարքն ու բարքը ուրիշ էր , իսկ միւսինը ուրիշ :

Եղբայրներս՝ մենք հաւատացեալ Աբրահամին՝ պէս ենք , թէ անհաւատ երիտասարդին պէս : Ղշմարիտ հաւատքին ինչ ըլլալը տեսանք . սիրով գործող՝ սիրտը մաքրող՝ և աշխարհին յաղթող հաւատքին ինչ ըլլալը տեսանք : Երդ՝ հաւատք ունի՞նք, եղբայրներս . Աբրահամին հաւատքի՞ն ազդեցութեանը տակն ենք , թէ երիտասարդին պէս անհաւատութեան ազդեցութեանը տակն ենք :

2. Ար սորվինք թէ՛ ի՞նչէ ամէն բան Աստուծոյ յանձնելը :

Աբրահամ ամէն ատեն՝ ամէն տեղ և ամէն պարագայի տակ՝ ինքզինքը

Աստուծոյ կամքին յանձնեց : Աստուծո՛ւ  
 ճշմարտութեան ըրածին պէս՝ իր ազգականները  
 ձգելով՝ հեռու երկիր մը գնաց . և հոն առանց տուն շինելու՝  
 վրանի մէջ կը բնակէր . և հոն գերեզմաննոցէն՝  
 ի զատ բնաւ երկիր չունէր . Աստուծոյ ուզածին  
 պէս ամէն բան ձգելը՝ իրեն դժուար չէր : Աբրահամին  
 ըրածին պէս՝ մենք ալ ընելու ենք . այսինքն  
 ամէն ինչ որ Աստուծոյ ծառայութիւնը՝  
 կամ կամքը մեղմէ կը պահանջէ, սրտանց  
 տալու ենք, ղոհելու ենք . ինքզինքնիս՝  
 ղօրութիւննիս՝ ստացուածքնիս՝  
 ղաւակնիս և բոլոր մեր կեանքը  
 անոր մատուցանելու ենք : Ամէն  
 բան անորն է, մերը չէ . և ամէն  
 բան անոր և անոր ծառայութեանը  
 մատուցանելու ենք : Աս բանը հաւատացեալ  
 Աբրահամը ըրաւ . անհաւատ երիտասարդը  
 ասանկ չըրաւ : Մենք աս երկուքին որո՞ւն  
 կը նմանինք :

### 3. Կը սորվինք թէ՛ զՄատուած բոլոր սրտով սիրելը ի՛նչ է :

Մատուծոյ հրամանին համեմատ Աբրահամ իր հայրենիքը ձգելով՝, յայտնի ցուցուց թէ՛ զՄատուած իր ազգականներէն աւելի կը սիրէր . և իր որդին զոհելով հաստատեց թէ՛ զՄատուած իր սիրելի որդիէն աւելի կը սիրէր . և զՄատուած իր որդիէն աւելի սիրելով՝ զանիկայ իր հողիէն և ամէն բանէ աւելի սիրած կ'ըլլայ : Մեր Տէրը կ'ըսէ (Մատթ . Ժ . 39), “Են որ իր հայրը կամ մայրը ինծմէ աւելի կը սիրէ՛ ինծի արժանի չէ . ու ան որ տղան կամ աղջիկը ինծմէ աւելի կը սիրէ ինծի արժանի չէ” : Նաև (Ղուկ . ԺԴ . 26) կ'ըսէ , “Ո՛վ որ ինծի կուգայ՝ ու չատէր իր հայրը ու մայրը կամ կիներ ու զաւակները՝ նաև իր կեանքն ալ , չի կրնար իմ աշակերտս ըլլալ” : Այսինքն Մատուծոյ համար ամէն բան ձգելու պատրաստ ըլլալու ենք : Մասնկ ըրաւ հաւատացեալ Աբրահամը , բայց անհա-

Լատ երիտասարդը ասանկ չըրաւ :  
 Աշխարհօրէն խորհելով Աբրահամ  
 իր ազգականները բնաւ չէր սիրեր ,  
 քանզի զանոնք ձգեց : Նաև իր որ-  
 դին անշուշտ կ'ատէր ( աշխարհօրէն  
 խորհելով ) . եթէ ոչ զանիկայ ողջա-  
 կէզ չեպիտի ընէր : Նաև ան վկա-  
 ները՝ որ իրենց կեանքը Քրիստոսի  
 համար մահուան մատնեցին , աշ-  
 խարհքին առջևը ինքզինքնին ատող  
 երևցան : Պօղոս առաքեալ՝ “ Նս իմ  
 անձս պատուական չեմ սեպեր ” ը-  
 սաւ : Գործ . Ի . 24 : Պօղոս՝ Քրիս-  
 տոսի անունը՝ գործը՝ պատիւը՝ թա-  
 դաւորութիւնը՝ ժողովուրդը և եկե-  
 ղեցին շատ պատուական կը սեպեր .  
 բայց ինքզինքը՝ իր կեանքը պատու-  
 ական չէր սեպեր . ամէն բան Քրիս-  
 տոսի համար կը վատնէր : Սիրելի-  
 ներս՝ աս բանին մէջ Պօղոսին՝ Աբրա-  
 համին՝ կը նմանինք , թէ ան երիտա-  
 սարդին որ սէր չունէր :

4. Ար սորվինք թէ՛ ցաւի և տրտմութեան ատեն Աստուծոյ կամքին հնազանդիլն ի՛նչ է :

Աբրահամ շատ ծանր վեշտ կրեց , բայց բնաւ չը գանգատեցաւ , յիմարութիւն չըրաւ , տհաճութիւն չը ցուցուց : Ամէն բան Աստուծոյ իմաստութեանը և ճշմարտութեանը յանձնեց : Աբրահամին ձեռքը Սուրբ Գիրք չկար . Հին և Նոր Ատակարան չկար : Գաւիթին՝ Յոբին և Պողոսին օրհնեալ՝ հաճելի և մխիթարեցուցիչ խօսքերը կարդացած չէր երբէք : Ուրեմն մեր հնազանդութիւնը՝ Աբրահամէն աւելի ըլլալու է . եթէ ոչ՝ մեր յանցանքը աւելի մեծ կ'ըլլայ : Ո՛վ վեշտ և տառապանք քաշող եղբայրներ՝ և Աստուծոյ ըրածին վրայ տրտնջացողներ՝ Աբրահամին նայեցէք , և արդար Աստուծոյ սուրբ հրամանին հնազանդիլ սորվեցէք :

Յ. Խասհակին օրինակէն տղաքները  
աղէկ դաս մը թող սորվին :

Տղաքը կը մեռնին . գերեզմանա-  
տունը շատ կարճ գերեզմաններ կան :  
Արեւի է որ ձեզմէ ոմանք Խասհա-  
կին պէս տունէն հեռու՝ առանց մայր  
կամ ազգական մը քովերնիդ ունե-  
նալու մեռնիք : Արեւի է որ Խաս-  
հակին պէս , ժամանակ չպիտի ու-  
նենաք որ՝ աղօթք ընէք , կամ բարե-  
կամաց նամակ գրէք , կամ կարելի  
է յաւիտենականութեան համար  
պատրաստ չպիտի գտնուիք : Արդ  
ամէն տղայ Խասհակին պէս պատ-  
րաստ ըլլալու է որ՝ Աստուծոյ կամ-  
քին համեմատ մեռնի , և խաղաղու-  
թեամբ երթայ : Մահը ինչ կերպով  
որ ըլլայ՝ որչափ յանկարծ . որ ըլլայ՝  
որչափ սոսկալի կերպով որ գայ , ա-  
մէն տղայ՝ Խասհակին օրինակին հա-  
մեմատ , բոլոր սրտով՝ ուրախութե-  
ամբ՝ համբերութեամբ՝ մինչև ՚ի մահ  
հնազանդ ըլլալու է : Տղաքներ՝ պատ-  
աստ եղիք որ՝ Աստուծոյ ուղածին



պէս մեռնիք : Ո՛վ Քրիստոսի անու-  
նովը մկրտուած տղաքներ՝ պատ-  
րաստ եղեք որ իր քովը երթաք , և  
անոր պալատին մէջ՝ իր թագաւոր-  
ութեանը մէջ Իսահակին հետ բնա-  
կիք :

6 . Աբրահամին փորձութիւնը մեծ  
օրհնութեան միջոց եղաւ :

Աստուած անոր փորձութենէն  
շատ բարիք յառաջ բերաւ : Ամենա-  
տես Աստուածը՝ Աբրահամին սիրտը՝  
հաւատքը՝ հնազանդութիւնը ասկից  
առաջ գիտէր , բայց Աբրահամ ինքը  
չէր գիտեր . և Աստուած աս փոր-  
ձութիւնովը իր հաւատքին զօրու-  
թիւնը իրեն գիտցուց , և անոր հնա-  
զանդութիւնը բոլոր աշխարհքին օ-  
րինակ ըլլալու համար ցուցուց : Եւ  
կասկած չկայ որ Աբրահամ աս փոր-  
ձութեանը համար Աստուծոյ հաղա-  
րաւոր անգամ շնորհակալ եղաւ , և  
յաւիտեանս փառք պիտի տայ : Գի-  
տե՛ք որ Աստուած ան ժամանակը իր  
ուխտերը նորոգելով աւելի ընդար-

ձակեց և երդումով հաստատեց :  
 Հմր . 15-18 : Եբրահամ ան լերանը  
 վրայ առաջ նայելով՝ Բրիստոսի օրը  
 տեսաւ և ուրախացաւ : Են ատենը  
 հասկցաւ թէ՛ Եստուծոյ պատրաս-  
 տած գառը՝ աշխարհքին մեղքերը  
 վերցունող գառը՝ Եստուծոյ Արդին  
 ըլլալու է : Եւ կը կարդանք թէ  
 “հաւատաց և իրեն արդարութիւն  
 սեպուեցաւ” : Ասկած չկայ որ՝ ան-  
 համար անձինք , ամէն ազգէ և լեզ-  
 ուէ ու ժողովուրդէ փրկուած՝ յաւի-  
 տեանս փառք պիտի տան Եստուծոյ  
 Եբրահամը ասանկ փորձելուն հա-  
 մար , քանզի իրենց հոգիներուն օգ-  
 տակար եղած է : Մեր հոգիներուն  
 ալ օգտակար թող ըլլայ :

Սիրելիներս՝ մեր փորձութիւններ-  
 րը՝ նեղութիւնները՝ վիշտերը՝ և տա-  
 ուապանքները թէ՛ մեզի և թէ ուրիշ-  
 ներուն օգտակար թող ըլլայ : Արչափ  
 շատերը փորձութիւններու՝ տրտ-  
 մութիւններու՝ և վիշտերու համար  
 Եստուծոյ շնորհակալութիւն տուին .  
 չէ թէ առողջութեան համար՝ այլ

հիւանդութեան , չէ թէ հարստութեան համար՝ այլ աղքատութեան համար փառք տուին : Շատերը կրնան ըսել , Աս զիս որ՛չափ հարստացնող աղքատութիւն էր , աս որ՛չափ ուրախալի տրտմութիւն էր , և աս ինչ՛ օրհնեալ հիւանդութիւն էր :

7 . Աս բաներէն օրինակ առնելով՝ մենք ալ սրտերնուս մէջ զո՛հ ընենք :

Այսինքն սրտերնիս սեղան թող ըլլայ , մեր սէրը թող ըլլայ կրակ , և Աստուծոյ հրամանին դէմ եղած մեր բոլոր բաղձանքները՝ զո՛հ թող ըլլան : Բանգի աս տեսակ բաղձանքները սրտէն հանելը՝ հազարաւոր խոյեր զոհելէն աւելի ընդունելի է : Պօղոս առաքեալ (Աող . Գ . 5) կըսէ . “ Ուստի ձեր երկրաւոր անդամները սպաննեցէ՛ք . պոռնկութիւնը , պղծութիւնը , անսանձ կիրքը , չար ցանկութիւնը , ու ազահութիւնը որ կուսպաշտութիւն է ” : Օ՛անոնք խաչեցէ՛ք , զո՛հ ըրէ՛ք : Բարձր հրաման ելած է մեզի՛ որ զանոնք մեռցունենք :

8. Եբրահիմին օրինակէն Աստուծոյ  
անպատմելի սէրը կը տեսնենք :

Եբրահիմին Աստուծոյ վրայ ունեցած սէրը՝ ա՛յնչափ մեծ էր՝ որ իր որդին, մէկհատիկ որդին չը խնայեց, այլ Աստուծոյ սուրբ հրամանին համեմատ տուաւ : Երդ Աստուծոյ մեր վրայ ունեցած սէրը որչափ զարմանալի էր՝ որ իր որդին, սիրական որդին, մէկհատիկը, աննմանը, բոլոր երկնից սիրելին, տիեզերքին ամենիմաստը, ամենասուրբը, և ամենապատուականը չը խնայեց, հապա՛ ամենուս համար տուաւ : Մենք ողորմելի՛ յանցաւոր՝ անմաքուր և անարժան մեղաւորներ ըլլալով, Աստուած մեզ ան աստիճան սիրեց որ՝ իր որդին ծեծելով ցաւերու մատնեց. բոլոր մեր անօրէնութիւնները անոր վրայ դրաւ : Աս բանին մէջ չ՛կայանար սէրը : Յովհաննէս առաքեալ (Ա Յովհ . Դ . 9, 10) կըսէ, «Աս բանիս մէջն է սէրը, որ չէ թէ մենք սիրեցինք զԱստուած (չէ թէ

Աբրահամ սիրեց զՆստուած , քանզի ան ամէն բանէ աւելի սիրուելու արժանի է) հապա որ անիկայ մեզ սիրեց , ու իր որդին խրկեց մեր մեղքերուն քաւութիւն ըլլալու” :

“Նս բանիս մէջն է սէրը” : և անանկ սէր է՝ որ խելքէ դուրս է , աննման սէր մըն է : Արկիւնքը երկրէս որչափ բարձր է նէ՝ այնչափ ալ Նստուծոյ սէրը Աբրահամին սէրէն աւելի է : Մտոր բարձրութեանը ո՞վ կրնայ հասնիլ . յաւիտեանս յաւիտենից մէկը չը կրնար :

Ուրեմն եղբայրներս ալ Աբրահամին մի՛ նմանիք , անոր օրինակին՝ անոր սիրոյն մի՛ նայիք : Մտոր սէրը բան մը չէ Նստուծոյ անհուն՝ և աննման սիրոյն հետ բաղդատելով . “Նստուծոյ նման եղի՛ք սիրելի զաւակներու պէս” : “Աստարեալ եղի՛ք ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է” :

## ՍԻՒՈՆԻ ՍՆՐԵՓԹՆՅՈՒ ԿՆԻԿԸ :

“ Եւ կնիկը գնաց , ու Եղիային ըսածին պէս ըրաւ ” : Գ թագ . 34 . 15 :

Եղիա մարգարէն իր հայրենիքէն փախաւ : Իսրայէլի թագաւորը Եփրաթ ան ամբարիշտ Սիդոնացի Յեզաբելը իրեն կնիկ առաւ . աս կնիկը Սիդոնացւոց Բահաղ կուռքին երկրպագութիւն ըրաւ , և ընել տուաւ : Ըն ժամանակը ճշմարիտ Եստուծոյ երկրպագութիւն ընողները շատ նեղութիւն քաշեցին՝ հալածուեցան՝ և սպաննուեցան : Ասկած չկայ որ՝ զանազան կերպերով սպաննուեցան . օրինակի համար՝ քարկոծուեցան , սղոցուեցան , սուրի բերնէ անցան , ծառէ կախուեցան , բորբոքած հնոցը ձգուեցան , փարատող գազաններու առջև նետուեցան : Ընթութենէ մեռան , բանտերը՝ մեռան , այրերը պահուեցան , տուներնին՝ ստացու-

ածքնին՝ և բարեկամներ ձգելով իրենց հայրենիքէն փախան :

Ար կարդանք թէ՛ (Գ Թագ . ԺԲ . 4) Աստուծմէ վախցող ազնուական Աբդիան “ Հարիւր մարգարէ առաւ , և զանոնք յիսուն յիսուն՝ քարայրներու մէջ պահեց , և զանոնք հացով ու ջրով կերակրեց ” : Ադիա մարգարէն Աստուած ինքը պահեց . զանիկայ Քէրիթ հեղեղատին քովը պահեց , և ազուաներուն հրամայեց որ առտու և իրիկուն անոր հաց ու միս տանին : Սովը խիստ սաստիկ էր . եղները՝ և հօտերը անօթութենէ՛ և ծարաւէ մեռան , անշուշտ շատ մարդիկ ալ մեռան , և խիստ շատերը՝ շաքաթներով ու ամիսներով բնաւ մէկ տեսակ մը միս չը տեսան : Բայց Ադիա մարգարէն ամէն առտու և ամէն իրիկուն միս կուտէր :

Ա. քաաբ թագաւորը զանիկայ շատ կը փնտուէր որ՝ եթէ սովը վերցնելով , անձրև չըբէրէ , զանիկայ մեռցունէ . իր տէրութեանը՝ մէջ և շուրջի տէրութիւններուն մէջ զանիկայ շատ

փնտուեց , բայց չը կրցաւ գտնել :  
 Աստուծմէ և ազուաներէն 'ի զատ  
 մէկը չէր գիտեր անոր ուր ըլլալը :  
 Արջը՝ հեղեղատն ալ չորցաւ , քան-  
 զի անձրև չէր գար : Իրեք տարի և  
 վեց ամիս ո՛չ անձրև եկաւ և ոչ ցօղ :  
 Չէ թէ իրեք ամիս՝ ո՛չ ալ ինը ամիս ,  
 այլ քառասուն ու երկու ամիս՝  
 այսինքն իրեք տարի և վեց ամիս  
 բնաւ անձրև և ցօղ չեկաւ : Եւ կերև-  
 նայ թէ հօտերէն և անասուններէն  
 շատ քիչ ողջ մնացած էր : Աքաաբ  
 թագաւորը շատ աշխատեցաւ որ՝  
 ձիերէն և ջորիներէն ոմանք պահե-  
 լով՝ բոլոր անասունները չկորսնցու-  
 նէ :

Հիմա Աստուած Եղիան Սիդոնի  
 Սարեփթա քաղաքը խրկեց , և անոր  
 ըսաւ ( Հմր . 8 ) “ Ահա՛ որբեարի կն-  
 կան մը պատուիրած եմ որ քեզ կե-  
 րակրէ ” :

Աս կնիկը ո՞վ էր . աս մարգարէն  
 կերակրող կնիկը ո՞վ էր :



## 1. Որբեւարի կնիկ մըն էր :

Ենոր էրիկը մեռած էր : Ինչ<sup>օ</sup> ա-  
տեն մեռաւ , ինչ<sup>օ</sup> հիւանդութեամբ  
մեռաւ , և ինչ<sup>օ</sup> տեսակ մարդ էր չենք  
գիտեր : Են ժամանակը որբեւարի  
կնիկները շատ նեղութիւն և երբեմն  
շատ զրկանք կը կրէին : Եւ իրենց  
կռնակ՝ պաշտպան՝ և վրէժխնդիր  
չունենալնուն համար , Եստուած  
խոստացաւ որ՝ անոնց պաշտպան և  
ազատարար ինքը ըլլայ : Ինքն է  
որբեւարիներուն Եստուածը , քանզի  
իրմէ ՚ի զատ յոյս մը չունին :

## 2. Ես որբեւարին՝ մայր էր :

Ենոր անունը՝ ընտանիքը՝ և ազ-  
գականներուն ով ըլլալը յայտի չէ :  
Սակայն անիկայ մէկ որդի մը ունէր ,  
խեղճ տղայ՝ որբ էր : Ինչպէս որ ան  
օրերը որբեւարիները մարդոց առջև  
ողորմութիւն չէին գտներ , անանկ  
ալ՝ որբերը ամէն տեսակ անիրաւու-  
թեան ենթակայ էին : Բայց օրհ-  
նեալ Եստուածը՝ որբեւարիներուն

Մտտուածը և թագաւորը՝ նաև որբերուն հայրը կոչուեցաւ :

3. Ես որբեարին շատ աղքատ էր :

Եղիա մարգարէն Աիդոնի հարուստ վաճառականներէն մէկին՝ կամ պատուաւոր մեծամեծներուն չը խրկուեցաւ, այլ խիստ աղքատ որբեարիի մը խրկուեցաւ. գուցէ ան քաղաքին մէջ անկէ աղքատ չկար : Երդեօք առաջ ստացուածք ունէ՞ր թէ չէ չենք գիտեր, սակայն հիմա մեծ նեղութեան մէջ էր : Հօտեր՝ անասուններ՝ ծառաներ չունէր. կով՝ ոչխար՝ հաւ՝ հաւկիթ՝ ձուկ՝ պանիր չունէր, հաց՝ միս՝ պտուղ չունէր, ածուխ՝ փայտ չունէր : Ես խեղճ կնիկը Եղիային ըսաւ (Հմբ. 12). Քու Տէր Մտտուածդ կենդանի է որ՝ նկանակ չունիմ, բայց միայն կարասին մէջը մէկ բռան չափ ալիւր կայ, ու կուժին մէջն ալ քիչ մը իւղ կայ. և ահա՛ երկու կտոր փայտ կը թողվեմ որ երթամ զանիկայ ինծի ու իմ տղուս համար եփեմ, ու ուտենք և

ետքը մեռնինք : Ղար չկայ , ահա՛  
ամէն կողմէ յոյսը կտրած՝ խիստ  
կարօտ վիճակի մէջ էր :

4. Ես որբեւարին Իսրայէլացի չէր :

Ինքը օտարազգի էր , Եստուծոյ  
Ժողովուրդէն՝ Եբրահամին սերուն-  
դէն չէր : Հեթանոսներէն՝ անի-  
ծեալ կուսպաշտներէն էր , ան անի-  
րաւ կուսպաշտ Յեզաբելին քաղաքա-  
ցին էր : Բահաղ կուռքը անկէ եկած  
էր , և Եղիա մարգարէն հոն խրկու-  
եցաւ : Եղիային հոգին փնտռող Յե-  
զաբելը անկէ եկած էր , և Եղիա  
մարգարէն Յեզաբելին ձեռքէն ազա-  
տելու համար հոն խրկուեցաւ : Ընոր  
ամենամեծ թշնամին՝ Յեզաբելն էր ,  
բայց իր ապաստանած երկիրը Յե-  
զաբելին հայրենիքն էր : Յեզաբել՝  
Բահաղին կուսպաշտութիւնը ան  
երկրէն Իսրայէլի երկիրը բերելուն  
համար՝ Եստուած այցելութիւն ըրաւ  
Իսրայէլի երկրին աս մեծ սովովը :  
Բայց Եստուած Եղիա մարգարէն  
բուն աս կուռքերուն երկիրը խրկեց ,

քանզի որչափ որ աս երկիրը Աստուծոյ ատելի էր, Իսրայէլի երկրին չափ ատելի չէր: Մեր Տէրը կըսէ՝ (Ղուկ. Դ. 25, 26:) «Շատ որբեւարիներ կային Իսրայէլի մէջ, բայց Նդիա անոնցմէ մէկին չխրկուեցաւ, հապա մինակ Սիդոնացւոց Սարեփթա քաղաքին մէջ որբեւարի կնկան մը»:

Նդբայրներս վա՛յ ան երկրին ուրկէ Աստուած իր բարեկամները և մարգարէները կըհանէ՝ ուրիշ տեղ կըխրկէ: Ա՛ւա՛յ ան Նկեղեցիին որուն մէջ հոգևոր և աշխատաւոր Քրիստոնեայներ չիմնար: Նրբոր անոնք բոլորը մեռնին՝ կամ անկէ ուրիշ երկիր փոխադրուին, ալ ան երկիրը կամ եկեղեցին Աստուծոյ ողորմութենէն և օրհնութենէն կը զրկուի, և ալ բարիք չի տեսներ:

Յ. Աս որբեւարին Աստուծմէ կըվախնար:

Իր կռապաշտութիւնը եր՞բ և ինչ՞ու համար ձգեց՝ չենք գիտեր: Կարելի է իր քաշած նեղութիւնները

և տառապանքները իր հոգւոյն օգտակար եղաւ, այսինքն իր միտքը Աստուծոյ դարձուց : Բայց ինչպէս որ ըլլայ, Յեզարէլ Աստուծոյ երկրպագողները մեռցուցած ատենը, աս որբեւարին պատրաստ էր զանոնք ընդունելու և պաշտպանելու : Աստուած Եղիային ըսաւ . “ Ելիւ Սիդոնին Սարեփիթան գնա՛ , և հոն բնակէ , և ահա մէկ որբեւարի կնկան մը պատուիրեր եմ որ քեզ կերակրէ ” : Հմր . 9 : “ Պատուիրեր եմ ” ըսաւ : Գուցէ քանի որ կնիկը Եղիային հետ կրիսուէր՝ Աստուած հրամայեց անոր որ իր խրկած մարգարէն ընդունի . կամ կարելի է Աստուած ըսել ուզեց որ՝ իր նախախնամութեամբը Եղիան ընդունիլ պիտի տայ : Ինչևիցէ՝ յայտնի է որ աս կնիկը Աստուծմէ կրվախնար , և անոր կամքը կատարելու պատրաստ էր : “ Եւ Եղիա ելլելով Սարեփիթայ գնաց , և քաղաքին դուռը հասնելով՝ ահա՛ մէկ կնիկ մը փայտ կրժողուէր ” : Աստուծոյ նախախնամութեամբը՝ Եղիա մարգա-

րէն և որբեարի կնիկը իրարու հան-  
 դիպեցան : “Ու Եղիա զանիկայ կան-  
 չեց՝ ու ըսաւ , Ինձի ամանով քիչ մը  
 ջուր բեր որ խմեմ : Հմր . 10 : Ու  
 երբոր անիկայ բերելու կերթար” —  
 Հմր . 11 : Եհա աս կնիկը որչա՛փ  
 մարդասէր էր : Ենիկայ մեծ նեղու-  
 թիւն ունէր , անօթութենէ խիստ  
 տկար էր , մեռնելու մօտ էր : Բայց  
 Եստուծոյ նախախնամութեանը դէմ  
 չըզանգատեցաւ , և աս օտար մու-  
 րացկանին դէմ ալ չմոմրուաց , անոր  
 բան չըսաւ , չըհայհոյեց , չաղաղա-  
 կեց ըսելով՝ “Դուն ո՞վ ես որ ինձմէ  
 ջուր կըմուրաս , հիմա ջուր ու՞ր կը  
 գտնուի որ քեզի տամ . ես քու ծա-  
 ուա՞դ եմ որ իմ գործս ձգելով քեզի  
 ծառայեմ . գնա , ես ալ մեռնելու  
 վրայ եմ , և զիս ինչո՞ւ կըծաղօես” :  
 Թէ և անոր սիրտը վշտացած էր ,  
 բայց բան մը չըսաւ , խոնարհ սրտով  
 մարդասիրաբար կերթար ջուր բե-  
 րելու : Ես ջուրը գտնելու համար՝  
 կարելի է իրեք կամ չորս մղոն հեռու  
 գնաց : Մեր Տէրը ըսաւ՝ “Ով որ

գաւաթ մը պաղ ջուր տայ իր վարձքը պիտի չըկորսնցունէ” :

6. Ես որբեարին Եստուծոյ խօսքին հնազանդութիւն և հաւատարմութիւն ըրաւ :

Երբոր կնիկը կերթար ջուր բերելու՝ “Եղիա անոր կանչելով ըսաւ , ձեռքդ պատառ մըն ալ հաց առ , ու ինծի բեր : Եւ կնիկը անոր ըսաւ” . Քու Տէր Եստուածդ կենդանի է՝ որ նկանակ չունիմ , բայց միայն կարասին մէջը մէկ բռան չափ ալիւր կայ , և կուժին մէջն ալ քիչ մը եղ կայ , և ահա՛ երկու կտոր փայտ կըժողվեմ , որ երթամ զանիկայ ինծի ու իմ տղուս համար եփեմ , և ուտենք , ու ետքը մեռնինք” , ճար չկայ : Եւ Եղիա անոր ըսաւ . Մի վախնար , գնա՛ ըսածիդ պէս ըրէ . բայց անկէ նախ ինծի համար մէկ պղտիկ շօթ մը շինէ՛ , ու ինծի բեր , և քեզի ու քու տղուդ համար ետքը շինէ : Քանզի Իսրայէլին Տէր Եստուածը այսպէս կըսէ , “Աարասէն ալիւրը

պիտի չհատնի , ու կուժէն եղը պիտի չըպակսի՝ մինչև ան օրը որ Տէրը երկրի վրայ անձրև տայ” : Անիկը գնաց ու Եղիային ըսածին պէս ըրաւ . “ Ու անիկայ՝ և ինքը՝ ու իր ընտանիքը խել մը ատեն կերան” : Ըմբ . 11-15 :

Այլերը՝ մինչև անգամ իրեն համար քիչ էր , բնաւ չէր բաւականանար : Բայց Եղիա անոր ըսաւ՝ “ Եւ ուաջ ինձի համար շինէ , և քեզի ու քու տղուդ համար ետքը շինէ” : Ես որչա՛փ խիստ խօսք մըն էր , կարելի եղածին չափ խիստ չէ՞ր :

Մեր Տէրը երիտասարդի մըն ալ ըսաւ թէ՛ “ Ինչ որ ունիս ծախէ , և աղքատներուն տուր , ու երկինքը գանձ պիտի ունենաս” : Բայց անիկայ հաւատք՝ սէր՝ և հնազանդութիւն բնաւ չունէր , և Քրիստոսը ձգելով իր գործին գնաց :

Եստուած Եբրահիմին ըսաւ , Քու սիրելի որդիդ Իսահակը առ , և այսինչ լեռը գնա , և հոն զանիկայ ողջակէզ ըրէ : Եւ Եբրահիմ առ-



տուն կանուխ ելելով գնաց որ՝ Եստ-  
ուծոյ սուրբ հրամանը կատարէ : Ե-  
նիկայ հաւատք ունէր :

Եղիա մարգարէն աս կնկանը  
Եստուծոյ անունովը հրամայեց թէ՛  
“Նախ ինձի համար շինէ , և ետքը  
քեզի ու քու տղուդ համար” : Անիկը՝  
Աբրահամին պէս , Եստուծոյ հրա-  
մանին հնազանդեցաւ : “Եւ կնիկը  
երթալով Եղիային խօսքին պէս ը-  
րաւ” : Ու թէ և ինքը կուպաշտ  
հեթանոսներէն էր , բայց Աբրա-  
համի աղջիկ չեղա՞ւ : Աբրահամին  
հաւատքին բաժանորդ չեղա՞ւ :

Անիկը չուշանալով արտորնօք  
գնաց՝ որ Տէր Եստուծոյ բարեկամին  
աս օտարականին համար հաց շինէ :  
Մարգարէն անոր ըսաւ՝ “Նախ ինձի  
համար մէկ պզտիկ շօթ մը շինէ” :  
Գուցէ անիկայ մեծ շինեց , գուցէ  
շատ արտասուքներով շինեց , բայց  
չէ թէ տրտմութենէն՝ այլ ուրախու-  
թենէն՝ հաւատքէն՝ և շնորհակալու-  
թեան աղօթքներէն : Արանի՛ աս  
հաւատացեալ որբւարիին :

Սիրելիներս՝ Հաւատքը ամէն ատեն ուրախութիւն և ազատութիւն կրբերէ : Հաւատքը աս որբեւարիին սիրտը ուրախացուց , և թէ զինքը ու թէ իր ընտանիքը մահուանէ ազատեց : Ինքզինքը ուրացաւ , և Մատուծոյ խօսքին ապաւինեցաւ , իր տունը մոռցաւ , և Մատուծոյ անօթի մարգարէն հոգաց . և Մատուծոյ բարեկամին մէկ շօթ մը տալուն համար՝ Մատուած իրեն հազարապատիկը տուաւ : Սուրբ գիրքը կրսէ , “Աղքատին ողորմութիւն ընողը՝ Տէրոջը փոխ կուտայ , և անիկայ անոր հատուցում պիտի ընէ” : Եռակ . ԺԹ . 17 : Եբրահամ իր մէկ հատիկ որդին Մատուծոյ տալուն համար , Մատուած անոր երդումով խոստացաւ որ՝ իր սերունդը երկնից աստղերուն չափ անհամար ընէ : Ուրեմն Եբրահամ իր որդին տալով բան մը կորսնցուց , փնաս մը ըրա՞ւ : Նմանապէս աս կնիկը ամէն բան Մատուծոյ տալով , բան մը կորսնցուց . ո՛չ . ընդհակառակն ամէն բան շահեցաւ :

Բայց թէ որ ամէն բան Աստուծոյ չիտար , ամէն բան պիտի կորսնցնէր թէ աս աշխարհիս մէջ և թէ գայիքին : “Ան որ մարգարէ մը կընդունի՝ մարգարէի անունով , մարգարէի վարձք պիտի առնէ” : Մատ . Ժ . 41 . Միդոնացի որբեւարին աս վարձքը առաւ :

Միրելիներս թէ որ դուք Աստուծոյ օրհնութիւնը առնել կդուգէք՝ ինքզինքնիդ Քրիստոսի՝ և իր եկեղեցիին համար ուրանալու էք : Ամէն օր ինքզինքնիդ Քրիստոսի գործին համար ուրանալու էք , և ձեր անձնական օգուտը ամէն բանէ աւելի՝ և ամէն բանէ առաջ փնտռելու չէք : Հաւատքը՝ ձեր սիրտը մաքրելով , մեծ ուրախութեամբ պիտի լեցունէ , և ձեզ յաւիտենական թշուառութենէ պիտի ազատէ : Ուրեմն՝ մի՛ ըլլաք անհաւատ՝ այլ հաւատացեալ , և Աստուծոյ ու իր ծառաներուն և մարգարէներուն ինչ որ պէտք է բնաւ մի խնայէք : Գուցէ ան երկրին կնիկներուն մէջ ատ կնիկէն՝ ի զատ հա-

ւատացեալ կնիկ չկար : Ես երկրիս  
 մէջ՝ աս քաղաքին մէջ՝ մէկ կնիկ մը  
 կա՞յ որ , ինքը և իր տղաքները մեռ-  
 նելու վտանգի մէջ ըլլալով՝ և միայն  
 մէկ բուռ մը ալիւր ունենալով՝ առաջ  
 անկէ Քրիստոսի և իր ծառային հա-  
 մար շինէ՝ և իրեն ու իր զաւակներուն  
 համար ետքը : Ձեր մէջը՝ դրացի-  
 ներնուդ՝ ազգականներնուդ՝ և Եկե-  
 ղեցիներնուդ մէջը ասանկ օրհնեալ կնիկ  
 մը կա՞յ : Եթէ կայ , ամէնդ ելէք ,  
 և անոր երթալով՝ Երանի քեզի , օրհ-  
 նեալ ես դուն՝ ըսէք : Եստուած մեր  
 տկար հաւատքը զօրացնէ : Եստու-  
 ած մեր քիչ հաւատքը աւելցնէ : Ե-  
 կեղեցիին բոլոր անդամները աս Սի-  
 դոնացի կնկանը պէս հաւատացեալ  
 թող ըլլան : Ենոր ձեռքը շին կտա-  
 կարան՝ Սաղմոս՝ և Եւետարան չկար ,  
 բայց՝ սրտին մէջ շատ զօրաւոր հա-  
 վատք կար : Եկեղեցիին բոլոր ան-  
 դամները՝ որոնք աս կնկանը պէս  
 հաւատացեալ չգտնուին , անոր դա-  
 ցած տեղին և անոր օրհնութեանը  
 արժանի պիտի չըլլան :

## ԱՉԳԵՒ ՓԻՒՆԻՎ ԵՍՈՐԻ ՄՕՐ ՄԸ ԲՆՈՄՆՈՒՆԵՐԻ ԵՂՕԹՎՈՒՆ ՎԻՆ ԱՉԳԵՑՈՒԹԻՒՆԸ :

“ Եւ Յիսուս անկէ ելլելով՝ Տիւրոսի և Սիդոնի կողմերը գնաց : Եւ ահա Վանանացի կնիկ մը ան սահմաններէն ելած՝ կաղաղակեր անոր ու կըսէր , Ողորմէ ինձի Տէր՝ որդի Դաւթի , աղջիկս դէէն սաստիկ կը շարձարուի : Եւ ինքը բնաւ պատասխան մը չէր տար անոր . ու իր աշակերտները մօտենալով՝ կաղաչէին իրեն՝ ու կըսէին , Երձակէ ատիկայ , վասնզի մեր ետեւէն կաղաղակէ : Եւ ինքը պատասխան տուաւ՝ ու ըսաւ , Ես ուրիշ մը չերկուեցայ՝ բայց միայն Իսրայէլի կորուսած ոչխարներուն : Եւ անիկայ եկաւ երկրպագութիւն կընէր անոր՝ ու կըսէր , Տէր օգնէ ինձի : Են ալ պատասխան տուաւ՝ ու ըսաւ , Եղէկ չէ տղոց հացը առնել , և շուներուն ձգել : Եւ անիկայ ըսաւ , Ե՛յո Տէր . ինչու որ շուներն ալ իրենց տիրոջը սեղանէն թափած փշրանքներէն կը կերակրուին : Են ատենը Յիսուս պատասխան տուաւ անոր՝ ու ըսաւ , Ո՛վ կին՝ քու հաւատքդ մեծ է , քու ուղածիդ պէս ըլլայ քեզի . և նոյն ժամէն անոր աղջիկը բժշկուեցաւ ” : Մատթ . ԺԵ . 21-28 :

**Հպարտ Փարիսեցիները և Դպիրները Քրիստոսի հետ վիճաբանութիւն ըրած ատեննին , մեր Տէրը զանոնք ձգելով՝ Տիւրոսի և Սիդոնի սահմանները գնաց : Հոս՝ մարգարէին ըսածին պէս , հեթանոսներուն լոյս եղաւ : Հոս՝ աս խաւար**

երկրին անկիւնի մը մէջ՝ խեղճ կնիկ մը կար, որ Քրիստոսի վրայ լսած և անոր հաւատացած էր : Եւ անոր քովը գալով՝ պատեհութիւն տուաւ որ մեծ հրաշք մը ընելով՝ իր զօրութիւնը յայտնէ : Քրիստոս ալ պատեհութիւն տուաւ, որ իր հաւատքին զարմանալի զօրութիւնը յայտնուի : Արդ խորհինք .

1 . Ես կնկանը ցեղը՝

2 . Օանիկայ Քրիստոսի բերող պատճառը՝

3 . Ենոր հաւատքին փորձուիլը և յաղթող գտնուիլը :

1 . Ես կնիկը ո՞վ էր :

Ես կնիկը Հրէից ազգէն Աբրահամին ցեղէն չէր, այլ Եստուծոյ ժողովուրդէն օտար՝ Բանանացի մըն էր : Եւ Սարկոսէն (Լ . 26) կըսորվինք թէ՛ հեթանոս էր ազգաւ Փիւնիկ Եսորի : Ես անունները կըցուցունեն թէ աս կնիկը ազգէ ազդ ամէն կողմանէ կռապաշտ հեթանոսներէն

ըլլալու էր : Ան նզովեալ ցեղէն ըլլալու էր՝ որոնց վրայ Նոյ Աստուծոյ անէծքը կարգաց : Նոյին թողանը ժամանակէն մինչև աս կնիկը ու թսուն ցեղ անցած ըլլալու էր . արդեօք գլխէ գլուխ անոնք բոլորը կարգաւ կռապա՞շտ էին՝ թէ չէ , տեղեկութիւն չունինք : Բայց հազար տարի առաջ աս կողմերը խեղճ որբեւորի կնիկ մը կար որ՝ Նղիա մարգարէն ընդունելով՝ մարգարէի վարձք առաւ : Աս կնիկը՝ ան երևելի կնկանը ցեղէ՞ն էր թէ չէ՝ ո՞վ գիտէ :

## 2 . Աս կնիկը ինչո՞ւ Քրիստոսի եկաւ :

Ձանիկայ մեր Տէրոջը Քրիստոսի բերող պատճառը աս էր որ՝ իր աղջիկը դէէն բռնուած էր : Մայրը ըսաւ Քրիստոսին , “Աղջիկս դէէն սաստիկ կըտանջուի” : Իր աղջկան թէ մարմինը և թէ հոգին սատանան նուաճած էր . և թէ որ շուտ անոր ձեռքէն չազատէր , յաւիտեանս խեղճ ու թշուառ պիտի մնար : Արդ





մէ ինծի , և իմ սիրելիներս դրացիներս սատանային ձեռքէն ազատէ” :

3. Ես կնկան հաւատքը շատ փորձուեցաւ , բայց յաղթող ելաւ :

Մեր Տէրը հոս իր բնութեանը հակառակ ընթացք մը ցուցուց : Արկարդանք թէ՛ (Հմր . 23) աս կնկանը “բնաւ պատասխան մը չըտուաւ” : Մեր Տէրը՝ իրեն մօտենալ ուզողներուն բոլորը միշտ չէ՞ր ընդունէր : Աննչեղնէն առաջ՝ պատասխան տալու , և խնդրելնէն առաջ՝ պարզւելու միշտ պատրաստ չէ՞ր : Սակայն հիմա աս ցաւալից կնկանը բնաւ արտօնութիւն և համարձակութիւն չի տար . անոր ցաւը չըտեսած և աղաղակը չը լսածի պէս կերևնայ : Անոր բնաւ մարդասիրութիւն չի ցուցուներ , և արտօնութիւն չի տար : Անոր աչքերը՝ որ միշտ թշուառներու համար բաց էր , հիմա գոցուած կերևնայ : Անոր սիրտը՝ որ միշտ բարիք ընելու տաք էր , հիմա պաղած կերևնայ : Ինչ՞ու ասանկ եղաւ : Ար-

կու պատճառ կրնանք տալ : (1) Տէրն մեր Քրիստոս աս կնկանը հաւատքը փորձել ուզեց : Աստուած Աբրահամը փորձեց , ուրիշները չի փորձեր : Ասանկ փորձութեանց միջոցաւ անոնց հաւատքը կըյայտնուի և միանգամայն կըզօրանայ : (2) Մեր Տէրը՝ հարկ չեղած տեղք , շրէից գայթակղութեան քար ըլլալ չուզեց : Աս կնիկը՝ շրէից ազգէն , ճշմարիտ Աստուծոյ երկրպագութիւն ընողներէն չըլլալով՝ շատ հարկ էր որ՝ իր տասուերկու աշակերտները և ներկայ եղող շրէաները տեսնային թէ՛ աս կնիկը հաւատքով արժանի էր Աբրահամի աղջիկ կոչուելու . ու թէև օտարաղգի էր , բայց Մեսիային թագաւորութեան շնորհքներէն և օրհնութիւններէն զուրկ մնալը՝ վայելուչ չէր : Արդ Տէրը անոր միջոց տուաւ որ՝ իր հաւատքը անոնց ցուցունէ :

Աւերջապէս՝ աշակերտները անոր նեղութենէն ձանձրանալով , անոր կողմէն խօսելու համար յառաջ գալով՝ իրեն համար բարեխօսութիւն

ըրին : Ասակած չկայ որ՝ կնիկը իր փափաքին պիտի հասնի յուսալով՝ ուրախութեամբ յառաջ եկաւ . և աչքերը Քրիստոսի երեսը տնկելով՝ մեծ լուութեամբ անոր պատասխանին կսպասէ :

Տէրը ըսաւ անոնց, « Ես ուրիշի մը չխրկուեցայ, այլ Խորայէլի տանը կորսուած ոչխարներուն » : Հմր. 24 : Եյսինքն՝ աս կնիկը Եստուծոյ հարադատ ժողովուրդէն չըլլալով՝ ան ժողովուրդին յատուկ եղած օրհնութիւններուն մասնակից ըլլալ ինտո՞ր կրնայ յուսալ : Ես պատասխանը անոնց բերանը գոցեց, ալ խօսք չմընաց որ խօսին . աղէկ որ աշակերտներէն և սուրբերէն աւելի աղէկ բարեխօս ունինք :

Բայց կնկանը բերանը չգոցուեցաւ : Ենոր յոյսը՝ անոր համարձակութիւնը չըկտրեցաւ . անոր հաւատքը՝ փորձութենէն ետքը աւելի զօրացած կերեայ : « Եւ ան գալով երկրպագութիւն կրնէր անոր ու կրսէր, Տէր օգնէ ինձի : (Հմր. 25 :) »

Արնիկը աւելի մօտեցաւ , անոր ոտքը  
ինկաւ , անոր երկրպագութիւնը  
ըրաւ , և իր բոլոր սիրտը աս իրէք  
խօսքերովը յայտնեց , “ Տէր օգնէ  
ինձի ” :

Յաւիտեանս օրհնեալ Յիսուս՝ հի-  
մա անոր ի՞նչ ըսաւ : Արհաւտացուի՞  
որ հիմակուան պատասխանը առա-  
ջինէն աւելի խիստ էր , անոր սիրտը  
կոտրելիք խօսք մըն էր : Մտիկը ը-  
րէ՛ք ( Հմր . 26 ) . “ Ան ալ պատասխան  
տուաւ՝ ու ըսաւ , ‘ աղէկ չէ տղոցը  
հացը առնել , ու շուներուն ձգել ” :  
Դուն որ ընտանեաց անդամ չես ,  
Յղ՝ իրաւունք ունիս տղոցը հացին  
բաժանորդ ըլլալու : Շուները հո-  
գալու համար՝ տղաքը իրենց հացէ՞ն  
ղրկենք : Դուն գարշելի կռապաշտ-  
ներէն չե՞ս : Աստուած օտար ազ-  
գերը չըմերժե՞ց . և Հրէաները չըն-  
տրե՞ց իբրև իր հարազատ ժողովուր-  
դը : Դուք Հրէից առջևը շան պէս  
էք , և ես ան ազգէն եմ որ զձեզ շուն  
կըկոչեն : Իուն ան ազգէն եմ՝ որոնց  
տրուած է Աստուծոյ պատուիրանք-

ները՝ դատաստանները, և մարգարէները անոնց խրկուած են, և Մեսիային համար եղած խոստմունքները անոնց ձեռքը յանձնուած են : Երդ գուն մերժուած պիղծ ազգէ մը ըլլալով՝ ի՞նչ իրաւունքով աս հարազատ օրհնութիւններէն բաժին առնելու համար՝ ինծի կուզաս :

Բայց աս Քանանացի կնիկը խիստ խոնարհ սիրտ մը չունենար նէ, աս խօսքերուն մէկ հարիւրերորդ մասին անգամ չէր գիմանար . այլ շատ բարկանալով հայհոյութիւն պիտի ընէր : Պիտի ըսէր, Ես ինտո՞րմարդ է : Ես ասնկ խիստ մարդ, ասանկ անքաղաքավար մարդ բոլոր կենացս մէջ տեսած չեմ : Եթէ ինծի բարիք մը ընել չէր ուզեր, շատ բարի, թո՛ղ չընէր : Բայց ի՞նչ հարկ կար որ իմ ազգս՝ ցեղս երեսիս զարնելով ինծի շուն ըսէր : Ես, փառք Եստուծոյ, Հրէայի մը չափ ազգէ կեմ, և թէ որ չեմ ալ նէ, օտար ազգէ մը ծնած ըլլալուս համար յանցաւոր եմ :

Սակայն աս կնիկը աշխարհասէր՝

հպարտ՝ և անհաւատ չէր : Հապա  
 անոր սիրտը կոտորած՝ վերստին ծը-  
 նած՝ Աստուծոյ զաւակ եղած էր :  
 Ինքզինքը խիստ անարժան սեպեց :  
 Քրիստոսի իրեն ըսածներուն բոլո-  
 րին ճշմարիտ ըլլալը խոստովանեցաւ՝  
 և ըսաւ, « Այո, Տէր, քանզի շուներն  
 ալ իրենց տէրոջը սեղանէն ինկած  
 փշրանքներէն կը կերակրուին » : Ար  
 ըսած կըլլայ թէ՛ Այո ով Տէր՝ ես օ-  
 տարազգի անպիտան մեղաւոր մըն  
 եմ, և քու զաւակդ ըսուելու արժանի  
 չեմ : Իրաւ է որ՝ ես քու առջիդ կեն-  
 դանիի պէս ըլլալով՝ քու ժողովուր-  
 դիդ օրհնութիւնները վայելու իրա-  
 ւունք չունիմ : Ձեմ ուրանար թէ՛  
 շուները հողալու համար տղոց հացը  
 առնել արժան չէ . բայց սեղանէն  
 թափած փշրանքները շուներուն բա-  
 ժինը չէ՞ : Անոնց՝ յատուկ տեղ կը-  
 տրուի սեղանին տակը՝ որ թափած  
 փշրանքները ժողվեն և ուտեն : Տղոց  
 հայրը շուներուն ալ տէրը ըլլալով  
 շուներն ալ իրենց կերակուրը անկէ  
 չէ՞ն ալնկալեր, չէ թէ որդիի կերա-

կուր՝ հապա շան կերակուր : Արդ ես  
ամբողջ հաց մը՝ մէկ կտոր մըն ալ  
չեմ ուզեր , հապա սեղանէն ինկած  
փշրանք մը : Տղաքները իրենց հա-  
ցէն չըզրկուելով՝ շուները միշտ ին-  
կած փշրանքները կուտեն : Քու զօ-  
րութիւնդ և ողորմութիւնդ ան աս-  
տիճան մեծ են , և քու շնորհքներդ  
ու օրհնութիւններդ այնչափ շատ  
են՝ որ քու սեփհական ժողովուրդդ  
Խարայելը մէկ շնորհքէ մը և օրհ-  
նութենէ մը չըզրկելով՝ խեղճ աղջիկս  
կրնաս ազատել : Թող անանկ ըլլայ  
որ՝ կերակուրին ամէնալաւը տղաք-  
ներուն տրուի . անանկ ըլլայ որ՝ Սե-  
սիային թաղաւորութեան գլխաւոր  
օրհնութիւնները շրէից տրուի , թող  
ըլլայ որ ես շուն մը՝ օտարազգի՝ պիղծ  
կուապաշտ՝ և աս մեծ օրհնութիւն-  
ներուն անարժան ըլլամ . սակայն  
ինձի այսչափ արտօնութիւն թող  
տրուի՝ որ սեղանին տակը պառկելով  
մէկ փշրանք մը միայն առնեմ : Եւ  
աս անարգելի կուապաշտ մօրը աղջի-  
կը ապրելով՝ երկուքս միատեղ Սե-

սիային անուանը յաւիտեանս փառք  
ու պատիւ պիտի տանք :

Եղբայրներս , չեմ գիտեր ի՞նչ կը-  
խորհիք , սակայն իրաւ է որ հոս  
կնիկ մը կայ՝ որ չէ թէ երևոյթով  
կապրի , հապա հաւատքով : Հոս  
կնիկ մը կըտեսնենք՝ որ ամէն գժու-  
արութեանց յաղթելով՝ ինքն իրեն  
ճամբայ կըբանայ , և մօտ գալով յա-  
ւիտենական զօրութիւնը կըբռնէ ,  
ու Յակոբին պէս կըսէ . “ Մինչև որ  
զիս չօրհնես քեզ չեմ թողուր ” :  
Ծանոդ . ԼԻ . 26-28 :

“ Են ատենը Յիսուս պատաս-  
խան տուաւ անոր՝ ու ըսաւ , Ո՛վ կին՝  
քու հաւատքդ մեծ է , քու ուզածիդ  
պէս ըլլայ քեզի ” : Հմր . 28 :

Դուն թագուհիի մը պէս Եստ-  
ուծոյ հետ մարտնչեցար և յաղթող  
ելար . քեզմէ բան մը չեմ խնայեր ,  
ինչ որ կուզես խնդրէ , և պիտի  
տրուի քեզի :

“ Եւ նոյն ժամէն անոր աղջիկը  
բժշկուեցաւ ” : Հմր . 28 : Եթէ մենք  
երկինք երթալու արժանի ըլլանք նէ ,



Հոն աս աղջիկը և իր մայրը պիտի տեսնենք :

Հիմա ինձի մտիկ ընող մայրեր , ձեր զաւակներուն համար աղօթք չէ՞ք ըներ : Աղօթք ընող մայր մը՝ իր զաւակին ո՞րչափ անպատմելի օրհնութեան պատճառ կրնայ ըլլալ : Ուրեմն ձեր զաւակներուն համար աղօթք ըրէք , մինչև որ անոնց աս մօրը պէս , փրկութեան պատճառ ըլլաք :

## ՔՐԻՍՏՈՍԻ Ե.Չ.Գ.ԵԿԸՆ ՍՆՊՈՒԵՆՆԵՐԸ :

« Եւ անիկայ պատասխան տուաւ անոնց՝ ու ըսաւ , Ո՞վ է իմ մայրս՝ կամ եղբայրներս : Ու իր բոլորտիքը նստողներուն նայելով՝ ըսաւ . Եհա իմ մայրս ու եղբայրներս . վանդի ո՞վ որ Եստուծոյ կամօքը կըկատարէ , անիկայ է իմ եղբայրս և քոյրս ու մայրս : Մարկ . Գ . 33-35 :

Ես խօսքերը զարմանալի են : Եւ ասոնք Մեր Տէրոջը Քրիստոսին խօսքերը ըլլալուն համար՝ մեր դիտողութեանը արժանի է : Հոս կը սորվինք թէ՛ Քրիստոսի շատ մօտ և սիրելի ազգականներ կան , և անոնց ո՞վ ըլլալը յայտնուած է , այսինքն ով որ Եստուծոյ կամօքը կատարէ աս սուրբ ազգակցութենէն կը սեպուի :  
Ուրեմն հարցունենք թէ՛

1 . Ի՞նչ է Եստուծոյ կամօքը :

Եստուծոյ հրամանը և կամօքը աս է՝ որ Յիսուս Քրիստոսի հաւատանք , և մէկզմէկ սիրենք : Ենոր կամօքը աս է որ Քրիստոսը ընդու-

նինք . զանիկայ մեր տունը՝ մեր խանութը՝ և մեր սրտին մէջ ուրախութեամբ ընդունինք . անոր իշխանութիւնը՝ օրէնքները՝ դատաստանները և բոլոր իր սուրբ ժողովուրդը ընդունինք : Օ՛անիկայ այնչափ սիրենք՝ և պատուենք որ՝ մեր բոլոր ունեցածը իրեն համար ձգելով՝ մինչև անգամ մեր կեանքն ալ իրեն յանձնել մեզի դժուար չերևնալով՝ շատ սիրելի և քաղցր գայ :

Աստուծոյ կամքն է որ՝ ինքզինքն իս ուրանալով՝ իր փառքը փնտուենք , մեր անձին համար չապրինք , այլ Քրիստոսի համար և անոր գործին յառաջադիմութեանը համար ապրինք . և մեր ժամանակը՝ զօրութիւնը՝ և ստացուածքը չէ թէ աս աշխարհիս համար՝ այլ Աստուծոյ և Քրիստոսի թագաւորութեանը համար վատնենք :

Պօղոս առաքեալ կրսէ՝ “ Աստուծոյ կամքը աս է՝ «յօն» ձեր սուրբ ըլլալը ” : Ա թեա . Դ . 3 : Աս ըսել է որ սուրբ ըլլանք , սուրբ կեանք մը

անցունենք , ձեռքերնիս և սրտերնիս մաքուր ըլլան : Աստուած չուզեր որ պիղծ և անմաքուր մնանք , այլ կը հրամայէ որ՝ լուացուինք , և ամէն գէշութենէ ետ քաշուինք , և բնաւ անմաքուր բանի մը չըդպչինք :

Աստուծոյ կամքն է որ՝ մեր գործքերուն չապաւինելով՝ Քրիստոսի արժանաւորութեանը ապաւինինք , և ասանկով փրկութիւն գտնենք , սատանայէն ազատինք , գալու բարկութենէն փախչինք , ու յաւիտենական կենաց արժանի ըլլանք :

Աստուծոյ կամքը աս է որ՝ անոր բոլոր օրէնքները նկատելով՝ պահպանենք , մեր գանձերը չէ թէ երկրի վրայ՝ այլ երկինքը դիզենք , մնայուն ժառանգութենէն մեզի բաժին ստանանք , յաւիտենականութեան համար պատրաստութիւն տեսնենք , և յաւիտենաս օրհնեալ՝ երջանիկ և հարուստ ըլլանք :

Ահա՛ Աստուծոյ կամքը աս և ասոր նման բաներ են : Հիմա հարցունենք թէ՛

## 2. Աստուծոյ կամքը ընել՝ ի՞նչ ըսել է :

Աստուծոյ կամքը կատարել ըսել է՞ : Միայն գիտնալը օգուտ չըներ : Յիրաւի իր կամքը դիտնալու ենք , եթէ ո՛չ չենք կրնար կատարել : Սակայն Աստուծոյ կամքը գիտցողներ շատ կան՝ որք չեն կատարեր : Անիկայ լսել կամ լսել տալ , զանիկայ կարդալ կամ կարդացնել , զանիկայ դիտնալ կամ դիտցնել , անոր վրայ խորհիլ՝ խօսիլ՝ զանիկայ թարգմանել կամ քարոզել օգուտ չըներ : Տէրն մեր Քրիստոս չըսաւ թէ՛ Աստուծոյ կամքը դիտցողները՝ կարդացողները՝ քարոզողները ընդունելի են , այլ զանիկայ կարդացողները ընդունելի են : Իրաւ է որ Աստուծոյ կամքը կատարելու համար , զանիկայ դիտնալու ենք՝ սորվելու ենք . և զանիկայ սորվելու համար , կարդալու՝ լսելու՝ քննելու՝ և խելք բանեցնելու ենք : Բայց սորվելէն վերջը՝ կատարելու ենք . եթէ ո՛չ ինչո՞ւ սորվինք : Մեր Տէրը

ըսաւ իր աշակերտներուն , “ Ն[թէ  
 դուք աս բաները դիտէք , երանելի  
 էք՝ թէ որ ասոնք կատարէք ” : Յովհ.  
 Ժ.Գ. 17 : Նաև ուրիշներուն խօսած  
 ատենը ըսաւ , “ Ան ծառան՝ որ իր  
 Տէրոջը կամքը գիտէ ու չը պատրաս-  
 տուիր , ոչ ալ անոր կամքը ՚ի գործ  
 կըդնէ , շատ ծեծ պիտի ուտէ ” :  
 Ղուկ . Ժ.Բ . 47 : Նաև ուրիշ տեղ  
 մը կըսէ , “ Ոչ թէ ամէն մէկը որ  
 ինծի Տէ՛ր Տէ՛ր կըսէ , պիտի մտնէ  
 երկնից թագաւորութիւնը , հապա  
 անիկայ որ իմ երկնաւոր հօրս կամքը  
 կըկատարէ ” : Մատ . Է . 21 : Չէ թէ  
 միայն գիտնալու ենք անոր կամքը ;  
 այլ նաև կատարելու ենք : Տէրն մեր  
 կըսէ , “ Ով որ աս իմ խօսքերս կըլսէ  
 ու չըկատարեր ասոնք , կընմանի ան-  
 խելք մարդու մը՝ որ իր տունը աւազի  
 վրայ շինեց . և անձրևները իջան , ու  
 գետերը վազեցին , ու հովերը փչե-  
 ցին , և զարկին ան տանը , ու փլաւ ,  
 և մեծ էր անոր կործանումը ” :  
 Մատ . Է . 26 , 27 :

Սիրելիներս՝ գուք Քրիստոսի

խօսքերը լսեցիք , շատոնց լսած էք .  
 զանոնք կրկատարէ՞ք թէ չէք կա-  
 տարեր : Եկեղեցի ինչո՞ւ կերթաք .  
 Քրիստոսի խօսքերը լսելո՞ւ համար  
 միայն : Արևելի է որ զանոնք կատա-  
 րելու միտքով բնաւ գացած չէք և  
 չէք երթար : Թէ որ զանոնք չըկա-  
 տարէք , աւազի վրայ տուն շինող  
 յիմարը դուք էք , և ձեր շինած  
 տունը՝ անշուշտ պիտի փլի :

Բայց զանոնք կատարողը՝ խելացի  
 է , և իր տունը վէմի վրայ շինող  
 մարդուն կը նմանի . և անիկայ

3. Քրիստոսի սիրելի բարեկամն է :

Քրիստոսի ազգականներուն ա-  
 մենէն մօտը կը սեպուի . անոր խիստ  
 մօտ ազգականն է : Բուն ինքն կ'ը-  
 սէ , “ Ո՛վ որ Աստուծոյ կամքը կ'ընէ ,  
 անիկայ է իմ եղբայրս և քոյրս ու  
 մայրս ” : Ուրեմն Քրիստոսի աշա-  
 կերտները ո՞րչափ մօտ են իրեն . ա-  
 նոր սրտին ո՞րչափ արժէքաւոր են :  
 Օ՛իները իր մօրը կապող կապերը որ-  
 չափ սուրբ և արժէքաւոր ըլլալու

էին, և ո՛րչափ սիրալի ըլլալու էին : Բայց ինքզինքը իր աշակերտներուն կապող կապերը ո՛րչափ աւելի սուրբ և սիրով լեցուած են : Աւ աս զարմանալի յարգն ու պատիւը՝ բոլոր սուրբերուն է, բոլոր քրիստոնեաներուն՝ այսինքն բոլոր հաւատացեալ քրիստոնեաներուն է, Աստուծոյ կամքը կատարողներուն է : Բոլորը Յիսուս Քրիստոսի աս կերպով մօտ են : Անոնք անոր անունը կը կրեն, անոր կերպարանքին փոխուեցան, անոր բնութիւնը ստացեր են, անոր սուրբ ընտանեացը անդամներն են, անոր խիստ սիրելիներն են, անոնք ամէն ատեն անոր հետ ամենէն մօտ առնչութիւն և հաղորդակցութիւն ընելու արտօնութիւն ունին, անոր սուրբ սեղանին դալու հրաման և հրաւեր ունին, և ան՝ անոնց համար թէ՛ աշխարհային և թէ՛ յաւիտենական պատրաստութիւններ տեսած է :

Անոնք Քրիստոսինն են, և Քրիստոս անոնցն է : Քանի մը տարի առաջ՝ Անդղիոյ թագուհոյն



Ալեքթորիային մէկ ազգականը Աոստանդնուպօլիս եկաւ . և Օսմանեան Տէրութիւնը անոր շատ պատիւ ըրաւ , անոր արքունի պալատ տուաւ , և Թագաւորը յանձամբ անոր տեսութեան դնաց : Սակայն Քրիստոնեայ եղբայր , քեզի աւելի մեծ պատիւ պիտի տրուի :

Սողոմոն թագաւորը իր մօրը շատ սէր և յարգանք ցոյց տուաւ : Արկարդանք թէ՛ թագաւորը զանիկայ դիմաւորելու համար ոտք ելաւ , ու անոր երկրպագութիւն ըրաւ , ու երբոր իր աթոռը նստաւ՝ թագաւորին մօրը համար ալ աթոռ դնել տուաւ , և անիկայ՝ անոր աջ կողմը նստաւ : Գ. Թագ . Բ . 19 : Ա՛րչափ յարգ ու պատիւ և սէր ցուցուց անոր Սողոմոն : Բայց թէ որ մէկ եկեղեցիի կամ ժողովուրդի մը մէջ՝ Աստուծոյ կամքը կատարող կայ նէ , անոր աւելի շատ պատիւ և սէր պիտի ցուցուի : Ա՛ն՝ Քրիստոսի հետ մէկտեղ իր աթոռը պիտի նստի , ուր որ հրեշտակ մը նսաած չէ երբէք :

Երդ ձեր մէջը Քրիստոսի ազգականներ կա՞ն . ձեր ժողովքներուն մէջ Քրիստոսի եղբայր՝ քոյր կամ մայր կա՞յ : Թէ որ կայ , դուք որչափ որ խեղճ և անարգուած ըլլաք , և հարուստներուն ու զօրաւորներուն անձանօթ , բայց Յիսուսի Քրիստոսի՝ մօրմէ ու քրոջմէ , եղբօրմէ և ամէն կերպ ազգականէ աւելի մօտ և պատուական էք :

Սակայն որո՞ն եղբայրներն էք : Մէկ աղնուականի մը չէ՝ արքայագունի մը չէ՝ ոչ ալ Ա իքթորիայ թագուհւոյն , այլ բոլոր երկրին Թագաւորին եղբայրներն էք . տէրերուն Տէրոջը՝ թագաւորաց Թագաւորին ազգականներն էք . անոր՝ որուն ձեռքն է զօրութիւնը . անոր՝ որ իր ձեռքին մէջ կը բռնէ հիւսիսային և հարաւային հովերը . անոր՝ որ իր ափովը ովկիանոսին ջուրերը կը չափէ , և կշիռքովը մեծ ալիքները կը կշռէ , և իր բոլոր ուզածը կը կատարէ թէ՛ երկնից մէջ թէ՛ երկրի վրայ : Ահա՛ դուք անոր եղբայրներն էք . և

ձեզի դպչողը՝ անոր աչքին բիրերուն կը դպչի : Խեղճ աշակերտ՝ քու եղբայրդ շատ հարուստ է , քեզ շատ կը սիրէ . դուն որչափ որ ինքզինքդ կը սիրես՝ ան քեզ աւելի կը սիրէ . մի՛ վախնար խեղճ եղբայր : Սակայն ո՞վ կրնայ անոր եղբայրն ըլլալ : “Ով որ” — ո՞վ կ’ըլլայ թո՞ղ ըլլայ , թէ հարուստ , թէ աղքատ , թէ արու , թէ էգ , թէ ծեր , թէ տղայ , թէ տղէտ , թէ իմաստուն , ամէն ո՞վ որ Աստուծոյ կամքը կատարէ , Քրիստոսի ազգական կ’ըլլայ : Աստուած մեզի իր Սուրբ Հոգին տայ որ՝ մեզ Քրիստոսի հետ աս ազգականութեան կապովը կապէ :

Եղբայրներ , թէ որ Քրիստոսի ազգականները չէք , Սատանային ազգականներն էք . ձեր հայրը Սատանան է , դուք անոր ընտանիքէն էք . անոր զաւակներն էք . անոր հետ մէկ էք . անոր հետ մէկտեղ յաւիտենական տանջանք քաշելու մեծ վտանգին մէջն էք . և վերջին օրը Քրիստոս ձեզի պիտի ըսէ՝ “Ձեզ չեմ ճանչնար , մէկդի գացէք ինձմէ անիծեալներ” :

## ՍՈՒՐԻ ԳԻՐԻՔԵՐԸ ՔՆՆԵԼԸ ՄԵՐ ՊԵՐՏԻՔՆ Է :

“Գիրքերը քննեցէք • ինչու որ դուք անոնցմով կը սեպէք յաւիտենական կեանք ունենալ • և բուն անոնք են որ ինծի համար կը վկայեն” : Յովհ . Է . 39 :

Հոս յիշուած գիրքերը՝ շին Կտակարանին՝ այսինքն Մովսէսի հինգ գիրքերը՝ Սաղմոսը և Մարգարէութեանց գիրքերն են : Ես գրքին նաև կ'ըսենք՝ շին Կտակարան՝ Եստուածաշունչ՝ Սուրբ Գիրք : Են ժամանակը Նոր Կտակարան կամ Եւետարան չկար : Բայց հիմա երկուքն ալ՝ այսինքն թէ՛ շին և թէ՛ Նոր Կտակարանը ձեռքերնիս է : Երկուքն ալ կարդալու և քննելու ենք : Եսանկընելու քանի մը պատճառ ցուցունենք :

1. Բրիստոսի հրամանն է :
2. Ես գիրքը՝ ամէն կողմանէ մտազրութեան արժան է :

3. Քրիստոսի համար կը վկայէ :

4. Մէջը յաւիտենական կեանք  
կը գտնուի :

1. Տէրն մեր Քրիստոս կը հրամայէ  
որ գրքերը քննենք :

Հրէաները կ'ըսեն՝ ո՛չ թէ Աստուծոյ գրքերը՝ հապա թալմուտ գրքերը քննելու է . քանզի անոնք աս ոչինչ գրքերը՝ Մովսէսէն և մարգարէնէրէն աւելի կարևոր կը սեպեն : Բայց մենք քրիստոնէաներս՝ Հրէից պէս չըլանք . անոնց ըսածին պէս չըսենք . անոնց հրամայածին պէս՝ այսինքն ոչ թէ Աստուծոյ գիրքը՝ այլ հայրերուն (հայրապետներուն) գրածները քննեցէք չը հրամայենք : Մարդկային ազգին ըսել թէ՛ դուք Աստուծոյ խօսքը չէք հասկնար , յիմարու թիւն է , խենդու թիւն է . քանզի ո՞վ ստեղծեց մարդուն միտքը . իր խօսքը մարդոց տուող Աստուածը չէ՞ : Թէ որ մարդիկ Աստուծոյ խօսքը չեն կրնար հասկնալ , հապա մարդոց գրածները ինտո՞ր պիտի հասկնան :

Աստուած մարդկային մտքին հասողութիւնը ամբողջապէս գիտէ, բայց մարդիկ ամբողջապէս չեն գիտեր : Անանկ է նէ, թէ որ մեզ ստեղծող Աստուածը իր կամքը մեզի չը կրնար հասկցուներ, մարդիկ ինտո՞ր պիտի հասկցունեն :

Տէրն մեր Բրիստոս Հրէից հրամայեց՝ որ գրքերը քննեն : Իրաւ է որ շատերը չը հասկցան Սուրբ Գիրքը, բայց չը հասկցողները որո՞նք էին : Մարդիկ չէին՝ ռամիկ ժողովուրդները չէին, քանզի անոնք աղէկ հասկցան . նաւաւար՝ ձկնորս՝ կօշկակար՝ հովիւներ՝ կնիկներ՝ տղաքներ և ՚ի մօրէ կոյր ծնածներ, ասոնք աղէկ հասկցան : Բայց չը հասկցողներն էին, փարիսեցիներ՝ դպիրներ՝ կարդացողներ՝ քահանայապետներ՝ և եկեղեցւոյն մէջ խիստ պատուաւոր անձինքներ, ասոնք Աստուծոյ խօսքը չը հասկցան : Մարկ . 12 . 14, 16երորդ համարներուն մէջ կը կարդանք որ՝ օրինականները՝ և աղգին գիտունները բան մը չը հասկնախուն

Համար Տէրը “ ժողովուրդը իրեն կանչեց և ըսաւ՝ դուք ամէնքդ ինծի մտիկ ըրէք և հասկցէք ” — “ ո՛վ որ լսելու ականջ ունի , թո՛ղ լսէ ” և հասկնայ : Թէև փարիսեցիները բան մը չէին հասկնար , բայց յայտնի է որ մեր Փրկիչը՝ գիտէր որ ինքը կրնայ ռամիկ ժողովուրդին հասկցունել : քանզի ամէն տգէտ և յիմար էրիկ մարգիկ և կնիկները կանչեց , և հրամայեց որ իր խօսքերը հասկնան : Ուրեմն յայտնի է որ անոնք հասկնալու կարող էին . և չը հասկնային նէ՝ յանցաւոր պիտի ըլլային : Եւ թէ որ անոնք հասկնալու կարող էին , մենք ալ կարող ենք :

Իրաւ Քրիստոսի աշակերտները մինչև անգամ իր խօսքերը երբեմն չը հասկցան , սակայն պատճառը ան էր որ՝ իրենք դպիրներուն օրինակին և փարիսեցւոց ըսածներուն կրնայէին , և ասոր համար երբեմն Քրիստոսի պարզ խօսքերն անգամ չը հասկցան :

Կարելի է որ Թալմուտը՝ կամ աւանդութեանց գրքերը , այսինքն

**Հայրերուն** ( **Հայրապետներուն** )  
 գրածները **չըհասկնանք** . և **Տէրը**  
 մեզի **չըպատուիրեց** որ **ղանոնք**  
**հասկնանք** , սակայն **հրամայեց** որ  
 իր սուրբ խօսքերը **հասկնանք** :

**Յովհաննէս առաքեալ Աստուծոյ**  
**հրամանովը ասանկ կըգրէ** . ( **Ա. Յովհ.**  
**Բ. 12, 13** ) “ **Արգրեմ՝ ձեզի տղաք-**  
**ներ** ” — “ **կըգրեմ՝ ձեզի հայրեր** ” — “ **կը-**  
**գրեմ՝ ձեզի երիտասարդներ** ” , ո՛չ **թէ**  
**եպիսկոպոսներ՝ քահանայ ապետներ՝**  
**կարդացողներ** : **Ուրեմն հայրերը՝**  
**երիտասարդները՝ և տղաքները՝ ի-**  
**րենց գրուածները թող կարդան** ,  
**քննեն** , **հասկնան** , և **մէկը թող**  
**չարգիլէ զանոնք կարդալէն** :

**Պօղոս առաքեալ ասանկ կըգրէ**  
**Տիմոթէոսին** , “ **Դուն մանկութե-**  
**նէդ ՚ի վեր Սուրբ Գրքերը գիտես** .  
**որոնք կրնան իմաստուն ընել քեզ**  
**փրկուելու Յիսուս Բրիստոսի վրայ**  
**եղած հաւատքովը** ” : **Բ. Տիմ. Գ. 15** :  
**Եթէ Տիմոթէոս մանկութենէն ՚ի**  
**վեր չին Ատակարանը հասկցաւ** ,  
**քրիստոնէայ տղայ մը Աւետարանը**



չե՞կրնար հասկնալ որ աւելի պարզ է :  
 Այ այ ան տղին՝ որ չի հասկնար , իր  
 երկրաւոր հօրը խօսքերը հասկցող՝  
 բայց երկնաւոր հօրը խօսքերը չը-  
 հասկցող տղին—Այ իրեն :

2. Սուրբ գիրքը ամէն կողմանէ  
 մտադրութեան արժան է :

Ես գիրքը շատ զարմանալի գիրք  
 մըն է . և անոր նմանը բնաւ չկայ :  
 Ենոր հեղինակը մէկ մարդ մը չէր . և  
 ոչ ալ մէկ մարդու մը կենացը տե-  
 ւողութեանը չափ ժամանակի մէջ  
 գրուեցաւ : Եւ Նստուած զանազան  
 մարդիկ գործածեց , աս գործին հա-  
 մար յիսուն անձինք գործածուեցան :  
 Նստուած աս գործին համար հո-  
 վիւններ՝ թաղաւորներ՝ մարգարէներ՝  
 բանաստեղծներ՝ կնիկներ՝ մաքսա-  
 պետներ՝ ձկնորսներ՝ երկրագործներ՝  
 ընդ ամէնը յիսուն հոգի գործածեց :  
 Ես յիսուն անձինքը միւսնոյն ժամա-  
 նակը չապրեցան : Միւսնոյն դարը  
 չապրեցան . մէկզմէկու քաղաքացի  
 չէին . միւսնոյն լեզուն չէին խօսիր :

Մէկը մէկալէն 100 տարի առաջ, կամ 500—1000 տարի ետքը աս աշխարհքը եկան : Ուրեմն աս սուրբ գիրքը մէկ տարուան կամ 500 տարուանմէջ կատարելապէս չըլմնցաւ . այլ սկիզբէն մինչև վերջը 1500 տարի տևեց : Այսինքն առաջին հեղինակ առաջին մատենագիր եղող Մովսէսէն մինչև վերջին մատենագիր եղող Յովհաննէսը 1500 տարի տևեց : Ասպատճառաւ Հին և Նոր Ատակարանը շատ զարմանալի գիրք մըն է և անոր նմանը աշխարհիս մէջ բնաւ չկայ :

Հին և Նոր Ատակարանը ունի 66 կտոր գիրք , որոնք բաժնուեցան 1189 դիուխներու և 31,718 համարներու : Աս 66 գրքերէն Հրէայները միայն 39 ընդունելով՝ Աւետարանին 27 գրքերը կըմերժեն : Հեղինակներէն ոմանք Նբրայեցերէն լեզուն գործածեցին՝ ոմանք Քաղզիէրէն՝ և ոմանք ալ Հելլենարէն : Հիմա ամէնը մէկ հատոր գիրք ըլլալով՝ 180 կամ աւելի շատ լեզուներու թարգ-

մանուած է : Բոլոր աշխարհքին մէջ ուրիշ գիրք մը կա՞յ՝ որ 25 կամ 30 լեզուներու թարգմանուած ըլլայ . չեմ կարծեր : Ոմանք շատ անուանի ըլլալով՝ քանի մը լեզուներու՝ այսինքն 6, 10, կամ 15 լեզուներուն թարգմանուեցան : Բայց աս գիրքը չէ թէ միայն 15, կամ 40, և կամ 140 լեզուներու թարգմանուած է՝ հապա շատ աւելի : Աշխարհիս մէջ գտնուած բոլոր գրքերը անգամ մէկտեղ առնուի այսչափ շատ լեզուներու թարգմանուած չէ : Ուրեմն աս գիրքը մեր մտադրութեանը արժանի չէ՞ . զանիկայ չըքննե՞նք :

1800 թուականին՝ Աստուծոյ գիրքը միայն 40 լեզուի թարգմանուած և տպուած ըլլալով՝ 4 միլիոնի չափ տարածուած էր : Սակայն անկէ մինչև հիմա՝ այսինքն 64 տարուան մէջ 180 կամ աւելի լեզուներու թարգմանուելով՝ տպուեցաւ, և 50 միլիոնէն աւելի՝ 60 միլիոն հատորի չափ տարածուեցաւ : Աս՞յ ուրիշ գիրք մը որ անկէ կէս միլիոն հատոր տարա-

ծուած է . Ո՛չ . չեմ կարծեր : Բայց  
 աս գրքէն շատ հարիւր հազար՝ շատ  
 միլիօն հատորներ տարածուած է . և  
 ինչ՞ու համար , պատճառն ի՞նչ էր :  
 Պատճառը աս է որ՝ անշուշտ աս  
 գիրքը բոլոր ուրիշ գրքերէն շատ  
 տարբեր է . շատ զարմանալի գիրք  
 մըն է . և ամէն մարդոց մտադրու-  
 թեանը արժան է :

### 3 . Ես գիրքը Բրիտոսոսի համար կըվկայէ :

Եւետարանը Բրիտոսոսով լեցու-  
 ած ըլլալը դիտէք : Ենոր խրատնե-  
 րովը՝ առակներովը՝ հրաշքներովը՝  
 օրինակովն ու վարմունքովը լեցուն  
 է : Ենոր կեանքովը ու նեղութիւ-  
 նովը՝ և անոր զարմանալի մահուանը՝  
 փրկութեանը՝ և թագաւորութեանը  
 նիւթերովը լեցուն է : Սակայն չին  
 կտակարանն ալ լեցուած չէ՞ Բրիտ-  
 տոսի վրայով : Եբրահամ՝ Իսահակ՝  
 Յակոբ՝ Մովսէս և Դաւիթ թագա-  
 ւոր ամենն ալ ան գալիք Մեսիային՝  
 Բրիտոսոսի կընայէին , անոր կըհա-

լատային , անոր կրցանկային , և անոնց ըրած զոհերը անոր օրինակը ըլլալով՝ զանիկայ կրցուցունէին , և անոր նշանակը՝ նմանութիւնը՝ և շուքն էին : Բոլոր մարգարէները Քրիստոսի համար կրխօսէին . անոր գալը՝ ընելիքները՝ տառապանքները՝ յաղթութիւնները՝ բոլորը առաջուց իմացուցին :

Պետրոս առաքեալ կրսէ թէ՛ : « Բոլոր մարգարէները անոր համար կրվկայեն » : Գործ . Ժ . 43 : Եւ Տէրօջը հրեշտակը Յովհաննէսին ըսաւ թէ՛ Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հոգին է : Յայտ . ԺԹ . 10 : Եյսինքն բոլոր մարգարէներուն միտքն ու դիտաւորութիւնը Քրիստոսի համար վկայել է . և Յիսուսի համար վկայեցին : Ընոնց դիտաւոր նպատակը աս էր : Ես գիրքը Քրիստոսով լեցուած է : Ուրեմն եթէ Քրիստոսը դտնել կուղէք , եթէ Եստուծոյ Մեսիան աշխարքին փրկիչը ճանչնալ կուղէք՝ աս գիրքը կարդալու և քննելու էք : Եղբայր-

ներս՝ Բրիստոս հոս կրգտնուի , և ուրիշ տեղ չիգտնուիր :

4. Ես գրքին մէջ յաւիտենական կեանք կայ :

Յաւիտենական կեանք—ի՞նչ քաղցր յայտնութիւն մըն է : Ես մահկանացու աշխարհքին մէջ յաւիտենական կենաց յայտնութիւնը որչափ բերկրարար յայտնութիւն մըն է : Սակայն ինտո՞ր գիտցար՝ որ յաւիտենական կեանք կայ : Սուրբ գիրքը իմաց չըտուա՞ւ : Բեզի ձուկերը՝ թռչունները՝ անասունները՝ ծառերը՝ ասոնց ո՛չ մէկը և ո՛չ ալ բոլորը միատեղ իմացուցին : Բու խելքդ ալ աս մեծ ճշմարտութիւնը չըգտաւ : Ե՛հա կուսպաշտները գնա անոնց հարցուր : Ե՛նոնք գիտե՞ն որ յաւիտենական կեանք կայ . Ոչ . ամէնէն իմաստուն փիլիսոփաներն ալ ասոր վրայով բան մը չեն գիտեր : Ես լուրը Եստուծոյ սորվեցուցած և գիտցուցած բանն է : Դուն ասիկայ Եստուծոյ խօսքէն սորվեցար : Ինտո՞ր

գիտցար թէ՛ յաւիտենական կենաց տանող ճամբայ մը կայ : Ես ալ սուրբ գիրքը քեզի իմացուց : Ես սուրբ գիրքը յաւիտենական կենաց խօսք է : Տէրն մեր իր աշակերտներուն ըսաւ , “ Են խօսքերը որ ես ձեզի խօսեցայ՝ հոգի ու կեանք են ” : Յովհ. Օ. 64 : Եյսինքն աս խօսքերը՝ աշխարհասէր եղողները հոգևոր կընէ , և անոնց մեռած հոգիները առողջացունելով՝ կեանք կուտայ : Եւ Քրիստոսի խօսած աս խօսքերը՝ ահա՛ հոս են , մեր տունները և մեր ձեռքը ըլլալով՝ մենք ալ կարդալով յաւիտենական կեանք գտնենք :

Երդ աս կեանք տուող գիրքը չըկարդա՞նք . մտքերնիս արթնցնող՝ հոգինիս զօրացնող և ապրեցնող Սուրբ Գիրքը չըկարդա՞նք : Յովհաննէս առաքեալ՝ Քրիստոսի համար կըսէ , “ Եսիկայ է ճշմարիտ Եստուած ու յաւիտենական կեանք ” : Ե Յովհ. Ի. 20 : Երդ մեր յաւիտենական կեանքին — Քրիստոսի տանող Սուրբ Գիրքը չըկարդա՞նք : Ե-

Նիկայ մտադրութեամբ չըքննե՞նք  
որ յաւիտենական կեանք գտնենք :  
Քրիստոսը գտնողը՝ յաւիտենական  
կեանք կը գտնէ :

Եթէ Հրէաները իրենց Մեսիան՝  
Քրիստոսը որն որ շատոնց կսպա-  
սեն , գտնել կուզեն , չէ թէ Թալ-  
մուտը՝ այլ Սուրբ Գիրքը թող կար-  
դան , և քննեն . քանզի Մեսիան՝  
այսինքն Քրիստոս՝ Թալմուտին մէջ  
չի գտնուիր : Թէ որ մէկը թալմուտը  
քննէ 100 տարի՝ հազար տարի՝ մի-  
լիօնաւոր տարիներ , բնաւ Քրիստո-  
սը պիտի չը գտնէ . զանիկայ բնաւ  
մէկը ան գրքին մէջը գտած չէ և չի-  
պիտի գտնէ :

Եւ դուք՝ սիրելիներս , թէ որ  
կուզէք Քրիստոսը գտնել՝ գիտնալ՝  
Ճանչնալ՝ հասկնալ՝ գործածել , անոր  
սուրբ խօսքը կարդացէք , անոր  
մտադրութիւն ըրէք , և անոր վրա-  
յով մտածեցէք :

Թագաւորաց Թագաւորէն ձեզի  
համար հրովարտակ մը ելաւ , զա-  
նիկայ չէք կարդար : Չեր երկնաւոր



Հօրմէն սիրոյ նամակ մը եկաւ, զանիկայ չէ՞ք կարդար : Քեզի համար մուրհակ մը՝ երկնային նամակ մը եկած է, և չէ՞ս քններ հասկնար՝ եղբայր : Երանի՛ անոնց որ Սուրբ Գիւրքը իրենց սիրելի Աստուծոյն Խօսքն է : Աս երանութիւնը թող ձեզի ըլլայ՝ եղբայրներս . իմս ալ թող ըլլայ : Ամէն :

## ԴԵԻՆՈՒՆ ԱՐՄՅ :

“Աւ անոր հարցուց թէ՛ Անունդ թնչ է . ու ըսաւ անոր . ի՞նչ անունս լէգէոն է . ինչու որ մենք շատոր ենք” : Մարկ . Է . 9 :

Սուրբ հրեշտակներ կան , և չար ու պիղծ հրեշտակներ ալ կան : Պիղծ և անզգամ հրեշտակները ե՞րբ մեղանչելով դրախտէն վըճատուեցան՝ չենք գիտեր : Գործած մեղքերնուն ինչ ըլլալը՝ այսինքն ինչ տեսակ մեղք գործելնին՝ չենք գիտեր : Եւ ինչո՞ւ Աստուած մեզի համար Փրկիչ մը պատրաստեց՝ և անոնց համար չը պատրաստեց , մեզի յայտնուած չէ : Սակայն աս չար ոգիներուն վրայով մէկ քանի բան գիտենք : Սուրբ դրքէն կը սորվինք թէ՛

1. Անոնք ժամանակ մը սուրբ և երանեալ էին :

Յուդա Առաքեալ կ'ըսէ թէ՛ (Յուդ. 6) “Իրենց իշխանութիւնը չը պա-

հեցին , հապա իրենց բնակութիւնը ձգեցին” : Ենոնց առջի վիճակը՝ բոլորովին աղէկ և հաճելի ըլլալու էր : Բայց մեր նախահօրը Եդամին պէս իրենց առջի վիճակը չը պահեցին , մեղանշեցին . և Եստուած անոնց փորձութեան ժամանակ կամ փրկութեան օր չը պարգևեց . ոչ ալ օրհնեալ Փրկիչ մը խրկեց : Ենոնց ապաշխարութեան և փրկութեան պատեհութիւն բնաւ եղած չէ , և պիտի չըլլայ : Գոհութիւն Տէրօջը որ մենք պատեհութիւն ունինք . յաւիտեանս գոհութիւն՝ որ անոնց պէս յուսահատութեան մէջ չըմնացինք :

2. Ենոնց վիճակը՝ որչափ որ հիմա գէշ է , դատաստանին օրէն ետքը աւելի գէշ պիտի ըլլայ :

Ենոնք Տէրօջը ըսին՝ (Մատ . Բ . 29) “ Ետենէն առաջ մեզ տանջելով համար հոս եկար ” : “ Ետենէն առաջ ” ըսին : Հոս յիշուած “ ատենը ” վերջին դատաստանին օրը ըլլալու է : Ենոնք միշտ կը դողան աս

օրը յիշելով : Յուդա Առաքեալ կ'ըսէ՝ (Յուդ . 6) Աստուած զանոնք « մշտնջենաւոր կապերով խաւարի մէջ պահեց՝ մեծ օրուան դատաստանին » : Եւ Պետրոս Առաքեալ կ'ըսէ (Բ Պետ . Բ . 4) « Աստուած՝ մեղք գործող հրեշտակներուն չը խնայեց , հապա խաւարի կապերով տարտարոսը ձգած դատաստանի պահել տուաւ » : Սակայն թէև կապուեցան , բայց հիմա շատ ամուր կապուած չեն . այսինքն՝ իրենց շղթաները հիմակու հիմա այնչափ երկայն է որ՝ կրնան մարդիկ փորձութեան մէջ ձգել , և չարութիւն ընելու թոյլտուութիւն ունին : Բայց Սուրբ Գրքէն կըսորվինք թէ՛ Աստուած զանոնք՝ « մեծ շղթայով կապելով՝ անդունդը պիտի ձգէ , և անոնց վրայէն գոցելով պիտի կնքէ » : Յայտ . Ի . 2 :

### 3. Անոնք իշխան ունին :

Չար ոգիներուն գլխաւորը Սատանան է . բայց անիկայ շատ անուն-

ներ ունի : Ենոր կ'ըսուի Բէեղզե-  
բուղ , Դե՛ մեծ Ա իշապ՝ առջի՛ Օձը՝  
Փորձիչ՝ աս աշխարհիս Իշխանը՝ բո-  
լոր աշխարհը մոլորցնող , ( Մատ .  
ԺԲ . 24 : ԻԵ . 41 : Յովհ . ԺԴ . 30 :  
Յայտ . ԺԲ . 7-9 : Ի . 2 ) աս է անոնց  
գլխաւորը : Ար կարդանք թէ՛ ( Մատ .  
ԻԵ . 41 )՝ Եստուծոյ պատրաստած  
յաւիտենական կրակը՝ « Սատանային  
և իր հրեշտակներուն համար պատ-  
րաստուած է » : Եսե կը կարդանք  
թէ՛ ( Յայտ . ԺԲ . 7-12 : ) Սատանան  
ու իր հրեշտակները պատերազմելով  
երկինքէն վար ձգուեցան :

Ուրեմն աս դժոխքին ոգիներուն  
առաջնորդը և գլուխը՝ աս զանազան  
տիտղոսներուն տէր եղող անձն է :  
Ես անձը՝ Եստուծոյ դէմ դրօշակ  
վերցուցած ժամանակը՝ շատ զօրա-  
ւոր կամ իմաստուն ըլլալուն համար ,  
միւսներն ալ Եստուծոյ բարեկամու-  
թենէն և հպատակութենէն ապս-  
տամբեցուց . իր ետեւէն շատ հրեշ-  
տակներ քաշեց , և թէ՛ իրեն թէ ա-  
նոնց ու թէ մարդոցմէ իր գործերը

կատարողներուն յաւիտենական կործանմանը պատճառ եղաւ :

4. Ենոնց համբանքը խիստ շատ է :

Տէրն մեր՝ բնաբանին մէջ յիշուած դէին հարցուց թէ՛ “ Ենունըդ ի՞նչ է : Են ալ պատասխան տալով ըսաւ , “ Լէգէոն է , քանզի շատուր ենք ” : Լէգէոն՝ Հռովմայեցւոց զօրքերուն մէջ գործածուած խօսք մըն էր , վեց հազարէ բաղկացած զունդ մըն էր : Ուրեմն աս խեղճ մարդուն ներսը հինգ վեց հազար հատ պիղծ ոգի կար : Եւ ան երկրին՝ Գաղարային մէջ ալ չկա՞ր : Ասակած չկայ որ ան երկրին՝ ու բուն ան քաղաքին մէջ աս վեց հազարէն ուրիշ շատ կար : Հրէաստանի մէջ շատ ըլլալը գիտենք . քանզի Տէրն մեր ուր որ գնաց , անոնց հանդիպեցաւ , և շատերը անոնց ձեռքէն ազատեց : Ար կարդանք թէ՛ Տէրը բոլոր Գալիլիայի մէջ դէեր հանեց (Մարկ . Ե . 39) . նաև Աափառնայումի մէջ շատ դէեր հանեց : Մարկ . Ե . 34 : Եօթը հատ

Մարիամ Մագդաղենացիէն հան-  
եց :

Ես յիշեալ մարդոց բոլորին՝ թէ՛  
մարմինին և թէ՛ մտքին Սատանան  
բոլորովին տիրած էր : Եւ աս կեր-  
պովը բռնուած և տանջուած ան-  
ձինքներէն՝ ի զատ, շատ ուրիշներ  
ալ կային որ Սատանային ազդեցու-  
թեանը տակն ըլլալով՝ անոր բազ-  
ձանքը կը կատարէին. այսինքն փա-  
րիսեցիները՝ քահանայապետները՝  
ղպիրները և Հռէաներէն շատերը՝  
Սատանային ազդեցութեանը տակն  
ըլլալով՝ անոր գործքերը կը գործէին :  
Ես չար ոգիներէն մէկը կամ եօթը,  
կարելի է հինգ վեց հազարը ամէն  
մէկուն քովը գտնուելով՝ զանիկայ  
կը փորձէին և կը հրապուրէին : Ե-  
սոնց բոլորը՝ Հռէից քովը կը գտնու-  
էր : Են ժամանակը Սամարացոց և  
հեթանոսաց քով ալ չար ոգիներ  
չկա՞ր : Բերիա՞ Պօլիս չկա՞ր : Եւրո-  
պա չկա՞ր երբէք : Եփրիկէ՞ Եսիա՞  
Պարսկաստան՝ Երաբիա՞ Հնդկաս-  
տան՝ Չինաստան չկա՞ր : Ասկած

չկայ որ ամէն ցամաք և ծով՝ ամէն քաղաք՝ կարելի է ամէն տուն և գրէթէ ամէն սիրտ ալ թէ՛ քիչ և թէ շատ չար ոգիներ կը գտնուէր : Ուրեմն անոնց համրանքը կը գիտցուէ՞ր :

Ծ . Ենոնք՝ տանջելը և կորսնցնելը կը սիրեն :

Եռանց Եստուծոյ հրամանին՝ բան մը չեն կրնար ընել : Միշտ չարութիւն ընել կ'ուզեն , բայց Եստուծոյ թոյլտուութենէն աւելի չեն կրնար ընել : Ինտոր որ Եստուած չար մարդոց թոյլ կուտայ որ գողութիւն կամ աւազակութիւն ընեն , քաղաք մը կրակի տան , կամ աս տեսակ գործեր գործեն , և ինտոր որ շրէից թողուց որ Քրիստոսը խաչը հանեն , անանկ ալ չար ոգիներուն թող կուտայ որ փնաս ու զրկանք ընեն և չարութիւն գործեն : Սատանան՝ մեր նախահայրը Ադամ և իր բոլոր սերունդը թունաւորեց , և անոնց վրայ սոսկալի ազդեցութիւն բերաւ . Սա-



տանան՝ Դաւիթ թագաւորը փորձութեան մէջ ձգեց որ Խորայէլի որդիքը համրէ, և ան պատճառաւ մեծ կոտորած եղաւ : Սատանան՝ Յորին շատ մնասներ չըբերա՞ւ, և զանիկայ շատ տանջանքներու մէջ չըձգե՞ց : Ընոր բոլոր տղաքները և ծառաները մեռցուց, անոր ստացուածքը և առողջութիւնը իրմէ առաւ, ու զանիկայ իր պատիւէն՝ հանգիստէն և խաղաղութենէն զրկեց :

Ես բնաբանին մէջ յիշուած դիւահարը՝ շատ անհանգիստ չէ՞ր, շատ ցաւ ու տանջանք չըքաշե՞ց : Դուկասէն կը սորվինք թէ (Բ. 27) « Հանդերձ չէր հագներ, և տուն չէր կենար » : Եւ Սարկոսէն կը սորվինք թէ (Ե. 3-5) « Ընոր բնակած տեղն ալ գերեզմաններուն մէջն էր, ու շղթայով ալ մէկը չէր կրնար զանիկայ կապել : Որովհետեւ շատ անգամ ոտնակապերով և շղթաներով կապուեր էր, բայց անիկայ շղթաները կտրեր, ու ոտնակապերը կոտրտեր էր, և մէկը չէր կրնար զանիկայ նուա-

ճել : Եւ միշտ գիշեր ու ցորեկ գերեզմաններուն մէջ ու լեռներուն մէջ կը կանչուըռտէր , ու իր մարմինը քարերով կը ճեղքուտէր” :

Ես Աէգէոն՝ չար ոգիները զանիկայ կորսնցնել ուզեցին , բայց Եսաուած հրաման չը տուաւ : Ենոնց հրաման տուաւ որ խողերը կորսնցընեն . և ինչպէս որ դիւրութեամբ կորսնցուցին խողերը , անանկ ալ կրնային ան մարդը կորսնցնել թէ որ Բրիստոս հրաման տար :

Եմէն դե ունեցողներ՝ շատ ցաւ ու տանջանք կը քաշեն : Անիկ մը Բրիստոսի գալով ըսաւ , “Եղջիկս դեէն սաստիկ կը տանջուի” : Մատ. Ժ. 22 : Մարդ մը իր որդին Բրիստոսի բերելով՝ ըսաւ , “Իմ որդւոյս ողորմէ , քանզի չարաչար կը տանջուի , և շատ անգամ կրակի մէջ կ'իյնայ և շատ անգամ ջուրի մէջ” : Մատ . Ժ. 14 : Սատանան՝ աս տղուն կեանքը կ'ուղէր առնել , և հիւանդութիւնը գործիք ընելով՝ զանիկայ կրակի կամ ջուրի քով կը

պտըտցնէր որ մէջը իյնալով կամ  
ձգուելով կորսուի :

Անանկ ալ աս չար ոգիները կ'ու-  
զէին որ գերեզմաննոցը բնակող դի-  
ւահարը ինքզինքը մեռցունէ . աշ-  
խատեցան որ կամ անօթութենէ  
կամ ցուրտէ և կամ ինքզինքը քա-  
րերով ծեծելէն մեռնի : Եւ թէ որ  
Տէրը զանոնք զօրաւոր ձեռքով չը  
բռնէր , ինչպէս որ ան երկու հաղար  
խոզերը կորսնցուցին՝ անանկ ալ պի-  
տի կորսնցնէին զանիկայ ալ՝ խոզե-  
րուն տէրերն ալ և ան երկրին կոպիտ  
բնակիչներն ալ :

Անոնք Քրիստոսի աղաչեցին՝ որ  
“ ատենէն առաջ գիրենք չը տանջէ ” :  
Մատ . Բ . 29 : Սակայն իրենք ատե-  
նէն առաջ կը տանջէին բոլոր իրենց  
ձեռքը անցնողները : Ահա բնաբա-  
նին մէջ յիշուած դիւահարը՝ ո՛րչափ  
ցաւ ու ո՛րչափ տանջանք քաշեց :  
Չանիկայ ո՛չ կապերը և ոչ շղթա-  
ները կրնային բռնել : Այնչափ կատ-  
ղած էր որ ան երկրին բոլոր բնակիչ-  
ները իրմէ կը վախնային : Մատ-

Թէոս կ'ըսէ՝ «Մն ճամբայէն մէկը չէր կրնար անցնիլ» : Մատ . Բ . 28 : Ոչ թէ միայն կնիկները և տղաքը, այլ զօրաւոր մարդիկն անգամ ան ճամբայէն չէին կրնար անցնիլ : Աս խեղճը՝ թէ՛ ուրիշներուն և թէ՛ իր անձին շատ նեղութիւն կուտար : Գիշեր և ցորեկ աղաղակելով՝ և իր մարմինը քարերով ճեղկուտելով՝ ո՛րչափ սաստիկ տանջանք կուտար ինքնիրեն : Աս մարդը շատ խեղճ ու թշուառ էր, և ձեռքէն եկածին չափ ալ ուրիշները խեղճ և թշուառ ընելու աշխատեցաւ :

Սերելիներս՝ Սատանային թագաւորութեանը մէջ միշտ ասանկ կ'ըլլայ, և յաւիտեանս պիտի ըլլայ : Անոր իշխանութեան տակն եղողները՝ ինքզինքնին և ուրիշները թշուառ կ'ընեն, և յաւիտեանս յաւիտենից թշուառ պիտի ըլլան ու պիտի ընեն : Աստուած սէր է . և մեր խաղաղութիւնը կ'ուզէ, և անով կ'ուրախանայ : Բայց Սատանան մեզ կ'ատէ, և մեզ նեղութեան ու տանջանաց մէջ ձգելով կ'ուրախանայ :

Ուրեմն Սատանային իշխանութեանը տակը մնալ յաւիտեան՝ ո՛րչափ սոսկալի բան է : Եղբայրներ , դուք մինչև հիմա անոր թագաւորութեանը մէջն էք , թէ աղատեցաք : Խաւարին՝ ստութեան՝ գինովութեան՝ աշխարհասիրութեան իշխանութենէն ազատելով՝ Քրիստոսի թագաւորութեանը մէջ մտա՞ք , թէ մինչև հիմա Սատանային իշխանութեանը տակն էք : Ձեզ դարձի բերելու՝ և Սատանային ձեռքէն ազատելու կարող՝ միայն մէկ անձ մը կայ : Եւ թէ որ անոր օրհնեալ փրկութիւնը չընդունիք , յաւիտեանս յաւիտենից թշուառութեան՝ խաւարի՝ անյուսութեան՝ պղծութեան՝ Սատանային ձեռքը և անոր կրած տանջանացը տակը պիտի մնաք : Եստուած մեզի ողորմի . Տէրը մեզ Սատանային ազդեցութենէն ազատէ՛ :

## ՉԵՐ ՈՒՒՆԵՐՈՒՄ ՎՐԵՅ :

“Քանզէ կըսէր անոր . «Պիղծ ոգի՛ ելի՛ր ատ մարդէն : Եւ անոր հարցուց թէ՛ Կնունդ ինչ՞ է , ու ըսաւ անոր , Իմ անունս Լէզէոն է , ինչու որ մենք շատուոր ենք : Եւ շատ կաղաչէին անոր՝ որ զիւրենք ան երկրէն դուրս չխրկէ” : Մարկ . Է . 8-10 :

**Եսկէ առաջ եղած քարոզին մէջ չար ոգիներուն վրայ խօսելով ըսինք թէ՛**

1. Կնոնք ժամանակ մը սուրբ և երանեալ էին :

2. Կնոնց վեճակը որչափ որ հիմա գէշ է , դատաստանին օրէն ետքը աւելի գէշ պիտի ըլլայ :

3. Կնոնք իշխան ունին :

4. Կնոնց համրանքը խիստ շատ է :

5. Կնոնք տանջելով կորսնցնելը կըսիրեն :

**Հիմա միտք ունինք անոնց վրայով քիչ մը աւելի բաներ խօսիլ :**

6. Քրիստոսի ժամանակը անոնց զօրութիւնը խիստ շատ էր :

Սատանան ան ատենը արտաքոյ կարգի զօրութիւն ունէր : Աերենայ թէ ան ժամանակը Սատանային արտօնութիւն տրուեցաւ որ մարդոց թէ մարմիններուն և թէ հոգիներուն իշխէ : Ընիկայ իր իշխանութեանը տակն եղողներուն բոլոր զօրութիւնը և շարժումները ուղածին պէս կը գործածէր : Ընոնց լեզուն՝ ու բոլոր անդամները՝ անոնց խելքն ու բոլոր կարողութիւնները՝ ուղածին պէս կը գործածէր . և շատ անգամ անոնց սելամաղձոտութեան՝ խենդութեան՝ և լուսնոտութեան պէս հիւանդութիւններ կը պատճառէր : Աերենայ թէ՛ ան ժամանակը աս արտաքոյ կարգի զօրութիւնը տրուեցաւ Սատանային՝ որ Քրիստոսի աւելի մեծ զօրութիւնը յայտնուի , և անոր փրկութիւնը աւելի փափաքելի ըլլայ : Յայտնի ըլլայ բոլոր աշխարհին որ՝ մեր Տէրը եկաւ Սատանային գործը

քակելու . և անոր զօրութենէն՝ ան սոսկալի զօրութենէն մարդկային ազգը բոլորովին ազատելու կարող է : Ես չար ոգիները Քրիստոսի զօրութիւնն ու իշխանութիւնը դիտցան . անոր ներկայութենէն պահուեցան . անոր զօրութիւնը իրենց զօրութենէն աւելի քլլալը խոստովանեցան , և անոր խօսքովը փախան :

Հիմա Սատանային իշխանութիւնը ան ժամանակին չափ մեծ չէ :  
Սակայն

7. Հիմա ալ անոր ազդեցութիւնը աս աշխարհիս մէջ մեծ է :

Սատանան հիմա ալ մարդիկ փորձութեան մէջ կրճդէ : Եռաջուան պէս՝ հիմա մարդոց բերանը բռնութեամբ չեկրնար բանալ , և դինի խմցուներ՝ որ գինովնան : Ձեռքերնին չի վերցնել որ իրենց դրացիներ ծեծեն : Հիմա չեկրնար ստիպմամբ քայել տար անոնց՝ որ դինետունը և անօրէնութեան ճամբան անշուշտ երթան : Հիմա լեզուները չեկրնար



ատիպել որ սուտ խօսին կամ հայհոյեն : Սակայն հիմա Սատանան շարունկերի մը պէս մարդիկ կը փորձէ և կը հրապուրէ . անոր ազդեցութիւնը խիստ ահարկու է : Ընոնք որ Քրիստոսինը չեն Սատանան մեծ իշխանութիւն կը քշէ վրանին : Տէրն մեր շրէաներուն ըսաւ , “ Դուք ձեր հօրմէն Սատանայէն էք , և ձեր հօրը բաղձանքը կուղէք կատարել ” : Չարերը Սատանային որոգայթին մէջն ըլլալով՝ անոր կամքին համեմատ դերի բռնուած են : Իրենց սիրտը . անորն է , դուռը բաց է , և Սատանան ուզածին պէս կը մտնէ՝ կելլէ՝ կը պղծէ և կը թունաւորէ : Մեր օրերն ալ Սատանան շատ զօրաւոր է մարդիկ փորձելու :

8 . Ընոնք որ Սատանային ազդեցութեանը տակն են՝ զՔրիստոսը չեն ուղեր :

Գաղարացիք չուղեցին որ Քրիստոս իրենց կողմերը մնայ՝ այլ ուղեցին որ իրենց սահմաններէն երթայ :

Բոլորը միանալով՝ աղաչեցին որ իրենց երկրէն ելէ, հոն չմնայ : Շատերը կային հոն որ կոյր էին, կաղ էին, մահուան աստիճան հիւանդ էին. բայց մէկը չբերին Քրիստոսի որ բժշկէ : Անոր չաղաչեցին որ բոլոր սատանաները գուրս վռնտէ. այլ աղաչեցին որ ինքը անկէ երթայ : Աստուծոյ թագաւորութիւնը իրենց քովն եկաւ, սակայն անոր հաստատուիլը չուզելով՝ Սատանային իշխելէն կ'ախորժէին : Բնաւ մէկը Քրիստոս իր տունը չըհրաւիրեց, որ հրամէ իր տունը կամ ան քաղաքը բնակի, այլ բոլորն ալ աղաչեցին որ անկէ երթայ. նմանապէս սատանաները աղաչեցին որ թողու զիրենք հոն մնալ : Եղբայրներ՝ ամէն ուր որ ժողովուրդը կուզէ որ Քրիստոս անկէ երթայ՝ հոն Սատանան մնալ կուզէ. քանզի ան տեղին թագաւորը ինքն է, և ամէնուն խելքին վրայ մեծ ազդեցութիւն ունի, խաւար շատ կայ, յիմարութիւն շատ կայ, Աստուծոյ վախը չկայ, Աստուծոյ սէրը

չկայ . հոն Սատանան կը թագա-  
ւորէ :

Չար մարդիկ և չար ոգիները միշտ  
Քրիստոսի և անոր ծառաներուն ի-  
րենցմէ հեռի ըլլալը կուզեն : Մարդ-  
կային սեռը ընդհանրապէս ամենա-  
ցած դործերը՝ ամենագէշ մեղքերը  
ամենազգուելի անառակութիւնները՝  
ամէնէն կատաղի ընկերները՝ և ամենապիղծ վիճակները՝ Քրիստոսի  
հաճելի դէմքէն՝ և անոր փրկութեան  
օրհնութիւններէն աւելի ընդունելի  
կըսեպէն : Եւմէն աշխարհային բան  
կուզեն , բայց մէկ հողևոր բան մը  
չեն ուզեր . Քրիստոսի ճշմարտու-  
թիւնը՝ իշխանութիւնը՝ դատաստա-  
նը՝ և բարեկամները չեն ուզեր : Ա՛ր-  
ցուր ասիկայ , և Բարաբբան արձա-  
կէ . թող աս անձը մեր երկրէն հե-  
ռու ըլլայ , և թող մեզի մնայ հիւան-  
դութիւն՝ աղքատութիւն՝ գինովու-  
թիւն՝ պղծութիւն՝ խոզեր՝ պիղծ  
կենդանիներ՝ և ամէն սատանայա-  
կան դործ : Եղբայրներս՝ Քրիստոս  
կըսիրէ՞ք : Աուզէ՞ք որ Քրիստոս ձեր

երկիրը՝ խանութը՝ տունը՝ և ձեր սրտին մէջը ըլլայ, թէ՛ կուզէք որ Սատանային սիրածներովը սրտերնիդ լեցուի :

9. Քրիստոս ինչո՞ւ հրաման տուաւ դէերուն որ խոզերը կորսնցնեն :

Հատ ստացուածք կորսուեցաւ . սակայն ամէն օր աշխարհիս ամէն կողմերը շատ ստացուածք չե՞ կորսուիր : Եւ բոլորը Քրիստոսի հրամանովը չէ՞ . աշխարհիս դէշուութիւնները բոլոր Քրիստոսի թոյլտուութեամբն է : Չար մարդու մը թոյլտուութիւն կուտայ՝ որ ուրիշի մը անձին կամ ստացուածքին փնասէ : Ամէն օր աշխարհիս չորս կողմը ասանկ թոյլտուութիւններ կընէ : Երբէք սուտ խօսած չէ՞ք, կամ ձեր դրացինը բնաւ խաբած չէ՞ք : Քրիստոս ձեզի հրաման չը տուաւ որ ասանկ ընէք, բայց թոյլ տուաւ որ ձեր սրտինը ՚ի գործ դնէք : Տէրը հրաման ըրա՞ւ որ խոզերուն մէջը մտնեն . ո՛չ : Քրիստոս հրաման ը-

րաւ որ ան մարդէն ելլեն , բայց խոզերուն մտնելու հրաման չըրաւ՝ այլ թոյլ տուաւ :

Արդէն Քրիստոս ամէն բանի վրայ իշխանութիւն չունի՞ : Աւ իրաւունք չունի՞ ամէն բան իր կամքին համեմատ գործածելու : Ան խոզերը չէ՞ր կրնար կորսնցներ հիւանդութեամբ՝ երկրաշարժով՝ կայծակով՝ և կատղած գազաններով : Արբեմն ասկէ հազար անգամ աւելի ստացուածք կրկորսնցունէ՝ և իրաւունք ալ ունի : Մաղձայոյզ՝ (գոլէրայ) երկրաշարժ՝ մրրիկ՝ ջրհեղեղ՝ կրակ՝ Սատանայ՝ հրեշտակ ամէն մէկը՝ և ամէն բան ու ամէն անձ իր ձեռքն է . և ամէն մէկը ու բոլորը ամէն օր ուզածին պէս կըգործածէ . և իրաւունք ալ ունի որ գործածէ : Աւ ասկէց ՚ի զատ Տէրը ան երկրին ժողովուրդին հասկցունել ուզեց՝ որ իրենք և իրենց տղաքները սատանաներուն մէջն ըլլալով՝ մեծ վտանգի մէջ էին : Աթէ Սատանան հոն մնար , կարելի է որ բոլորն ալ պիտի կորսնցներ . ու-

ըեմն կրնային Քրիստոսի ձեռքովը ազատիլ : Տէրը անոնց աս ալ հասկցունել ուզեց որ՝ անհաւատ Սաղուկեցիները որչափ որ կըսորվեցունէին թէ՛ հոգի չկայ, ասկէ ետեւ չէին կրնար ուրանալ :

10. Ո՛րչափ ահարկու բան է յաւիտեանս Սատանային ձեռքը մնալ :

Սատանան կըտանջէ : Բնաբանին մէջ յիշուած անձը ո՞րչափ շատ տանջուեցաւ : Գիշեր ցորեկ՝ ամէն ժամ՝ և ամէն րոպէ՝ բնաւ հանգստութիւն չունէր, այլ շատ խեղճ ու թշուառ էր : Նաև Մարկոսին մէջ յիշուած տղան (Թ. 16-19)՝ շատ սոսկալի վեճակի մէջ էր . շատ գէշ կըտանջուէր, համր և խուլ էր . մարմինը կըմաշէր . վերքերով լեցուն էր . բերանը կըփրփրէր, ակռաները կը կճռտացներ, գետինը կըզարնուէր, ջուրի և կրակի մէջ կիչնար, սոսկալի կերպով ջիղերը քաշուեցան, փրփրելով գետինը կըզլտորէր : Ուրեմն Սա-

տանային իշխանութեանը և զօրութեանը տակը յաւիտեանս մնալ ո՛րչափ սոսկալի բան է : Սակայն՝ բոլոր անապաշխարներուն և աշխարհասէրներուն բաժինը աս է . անոնք Սատանային որդիներն են , օրէ օր անոր կամքը կրկատարեն , և վերջապէս անոր հետ յաւիտենական կրակին մէջ պիտի վռնտուին : Հեռու երկինքէն՝ հանգստութենէ՝ խաղաղութենէ՝ յոյսէ յաւիտեանս հեռու պիտի մնան . խոր խաւարի մէջ պիտի փակուին , յուսահատ տրտմութեամբ պիտի լան , Աստուծոյ դէմ աւուանին պիտի կճռտեցունեն , Աստուծոյ արդարութեանը դէմ պիտի գանդատեն , և տանջանաց տեղը տանջող սատանաներուն հետ յաւիտեանս պիտի պառկին : Աստուած մեզի ողորմի՛ :

11. Քրիստոս կրնայ ազատել մեզ Սատանային ձեռքէն :

Մենք զմեզ՝ կամ մէկզմէկ՝ չենք

կրնար ազատել : Սատանան մեզմէ  
 շատ զօրաւոր է : Մէկ չար ոգի մը  
 աւելի զօրաւոր է , քան թէ ամբողջ  
 մարդկային ազգը : Բոլոր մարդկա-  
 յին ազգը մէկտեղ աշխատին՝ չեն  
 կրնար մէկ հոգի մը Սատանային  
 ձեռքէն ազատել : Սակայն դոհու-  
 թիւն Տէրոջը որ՝ Քրիստոս կրնայ  
 մեզ ազատել : Սատանային գործ-  
 քերը քակելու համար եկաւ , ու իր  
 մէկ խօսքովը բոլորը կը փախին :

Արդ բոլոր աշխարհք թող գիտ-  
 նայ որ՝ մեզ չար ոգիներուն զօրու-  
 թենէն՝ ազդեցութենէն՝ և տան-  
 ջանքէն ազատելու կարող՝ Յիսուս  
 Քրիստոս է , և իրմէ՝ ի զատ փրկիչ  
 չկայ : Անոր չ՛հաւտացողը՝ անոր  
 թագաւորութիւնը չընդունողը՝ ա-  
 նոր լուծը իր վրայ չառնողը՝ անոր  
 սուրբ հրամանին չըհնազանդողը՝ և  
 իր աշակերտներուն հետ չըմիացողը՝  
 Սատանային ձեռքէն ազատուած չէ :  
 Ո՛չ . ան անձը Քրիստոսի որդին չէ .  
 Սատանային որդին է . Քրիստոսի  
 հպատակ չէ . Սատանային հպատակ



է . Սատանային բաղձանքը կրկատարէ , Բրիստոսի բաղձանքը չեկատարեր :

Եւ դուք եղբայրներս՝ դուք ուր էք : Որո՞նք թագաւորութեանը մէջն էք . որո՞նք իշխանութեանը տակն էք . Բրիստոսի՞ թէ՛ Սատանային . դիտեմ որ Բրիստոսի անունովը մկրտուած էք , սակայն Բրիստոսի լուծին տակը մտա՞ք : Ձեր ամեն օրուան վարքն ու բարքը որու՞նք ընդունելի է . Բրիստոսի՞ թէ՛ Սատանային : Ձեր բոլորտիքը շատ մը փորձիչ չար ոգիներ կան . և թէ որ Բրիստոսի գիրկը չեյնաք , անոնց նենգութենէն՝ հրապուրանքէն՝ պղծութենէն՝ և յաւիտենական տանջանքէն չէք կրնար ազատիլ :

Բայց Բրիստոսի հաւատացողը՝ թող չըվախնայ : Հաւատացեալներուն ամենատկարն ալ թող չըվախնայ . քանզի անոր վիճակը ապահով է : Ենոր հոգին Բրիստոսի ձեռքը յանձնուելէն ետքը՝ Սատանան զանիկայ չիկրնար յափշտակել : Եթէ

բոլոր սատանաները միանան՝ անոր  
 հոգին Քրիստոսի ձեռքէն չեն կր-  
 նար յափշտակել : Արեւի բան չէ :  
 Երանի՛ անոնց որ Քրիստոսի կը-  
 հաւատան . Եստուած մեզի աս  
 ճշմարիտ հաւատքը տայ :

## ՉԵՐ ՈՒՒՆԵՐՈՒՆ Ե.Չ.ԳԵՑՈՒ- ԹԵԼՆՆ՝ ՏԵԿ ԵՂՈՂՆԵՐԸ ՎՐԻՍՏՈՍԸ ՉԵՆ ՈՒ.Չ.ԵՐ :

“ Եւ ահա բոլոր քաղաքը Յիսուսին դէմը ելաւ , ու երբոր տե-  
սան զանիկայ , աղաչեցին որ իրենց սահմաններէն երթայ ” : Մատ .  
Ը . 34 :

“ Եւ Վաղարացւոց շրջակայ տեղուանքը գտնուող բոլոր բազմու-  
թիւնը կաղաչէր անոր , որ իրենցմէ երթայ ” : Ղուկ . Ը . 37 :

Հոս յիշուած քաղաքը ուր էր :  
Ես դիտուն 28 երորդ համարէն կը-  
սորվինք թէ՛ աս քաղաքը Գերդե-  
սացւոց երկրին մէջն էր . և Մար-  
կոսէն ու Ղուկասէն կըսորվինք որ՝  
անոր Վաղարացւոց երկիր կըսուէր :  
Քանզի Վաղարա Տիբերիայի ծովուն  
հարաւային արևելեան կողմը եղած  
տասը քաղաքներէն մէկն է . ինչպէս  
որ Գերգեսա ալ անոնցմէ է :

Մեր Տէրոջը հրաշքը Վաղարայի  
քով գործագրուեցաւ : Բայց ին  
կտակարանէն կըսորվինք որ՝ ան  
տասը քաղաքներուն բոլորն ալ Գեր-  
գեսացւոց երկրին մէջն էր :

Հիմա հարցնենք թէ՛ ան քաղաքին բնակիչները ի՞նչ վիճակի մէջ էին :

Աս երկիրը սահմանագլուխ ըլլալով՝ հաւանական է որ հրէաները կռապաշտից հետ խառնուած էին : Սակայն ինչպէս որ է անոնք իշխանութեան գլխաւոր քողաքէն՝ աթոռանիստ Արուսաղէմէն հեռու էին . և տաճարէն՝ ու հոն կատարուած ծառայութենէն՝ և երկրպագութեան օրէնքներէն՝ և կրօնքին շնորհքներէն հեռու էին : Աւ կերենայ թէ անոնք շատ յիմար՝ անկիրթ՝ ու ամբարիշտ մարդիկ էին : Անոնք յիմարութեան՝ և տգիտութեան խոր խաւարին մէջն էին : Անոնք մահուան շուքին երկիրը կրնատէին : Աւ անոնց վիճակը ասանկ ըլլալը ասիրէք բաներէն կըյայտնուի :

1 . Հոն շատ չար ոգիներ կար :

Մարկոսէն կըսորվինք թէ՛ անոնց անունը Աէգէոն էր , այսինքն հինգ

վեց հաղարի չափ էին : Սակայն անոնք հինգ հազարէն աւելի ըլլալու էին , քանզի յիշեալ հինգ հազարը՝ միայն մէկ տեղ մը մէկ մարդու մը մէջ դտնուեցաւ . և կասկած չկայ՝ որ ան երկրին ամէն կողմը կը գտնուէին , կարելի է որ ամէն տունն՝ ու ամէն սիրտ քիչ կամ շատ չար ոգի կը գտնուէր : Եւ աս պիղծ ոգիները հոն մնալ կ'ուզէին : Անոնք միշտ խաւարը՝ յիմարութիւնը և չարութիւնը կը սիրեն : Եւ աս երկիրը խաւար՝ յիմար՝ անառակ և վայրենի երկիր մը ըլլալով , անոնք հոն բնակիլը կը սիրէին : Ար կարդանք (Մարկ. Ե . 10) որ՝ Յիսուսին “ շատ աղաչեցին որ զերենք ան երկրէն դուրս չընէ ” : Իրենց շատ հաւնած և սիրած երկիրն էր : Եւ Սատանային սիրած և հաւնած երկիրը՝ անշուշտ շատ չար երկիր մը ըլլալու է : Աոյս չկայ , գիտութիւն չկայ , ճշմարտութիւն՝ սէր՝ մարդասիրութիւն՝ խաղաղութիւն և Աստուծոյ վախը չկայ . սակայն սուտ շատ կայ , շնութիւն՝ կռիւ՝ գինովու-

Թիւն՝ հպարտութիւն՝ գողութիւն՝ աշխարհասիրութիւն՝ աղքատութիւն՝ խեղճութիւն՝ անիրաւութիւն և զրկանք շատ կայ : Արդ՝ ան երկրին մարդիկը շատ գէշ վիճակի մէջ չէի՞ն . չար ոգիներուն բնակարանն էր :

2. Անոնք շահն ու վաստակը՝ ապօրինաւոր կերպով ձեռք ձգած էին :

Անոնք շատ խոզ ունէին . 2000 ի չափ ունէին : Բայց խոզերը՝ չրէից անմաքուր կենդանի կը սեպուէր : Անոնց միսն ուտելը՝ չրէից դատաստանին հակառակ կուգար . և անոնց դիերուն դպչողը՝ պիղծ կը սեպուէր : Խոզերը պահել և զանոնք արածելը՝ իրենց դատաստանովը արգելուած էր , և անոր շահն անգամ արգելուած էր : Ուրեմն անոնք դատաստանի դէմ գործած էին . խիստ աշխարհային՝ անխիղճ՝ անհաւատ՝ ցածազգի և իրենց կեանքը անառակութեամբ անցուցած մարդիկ էին . ասանկով

Սատանային հաճելի մարդիկ ըլլալու էին . և անոր ծառաներն էին :

Աարելի է անոնք խորհեցան թէ՛ խողերուն միսը մենք չենք ուտեր , այլ հեթանոսներուն կը ծախենք : Սակայն ասանկ բան կ'ըլլայ , կը վայելէ՞ որ մէկը իր շահուն համար թոյն ծախէ : Թէև ինքը չխմեր , բայց ծախու առնողները կը խմեն և կըմեռնին : Մեր դործը՝ և մեր արհեստը Սատանային հաճելի թող չըլլայ , այլ Վրիստոսի հաճելի արհեստ մը թող ըլլայ :

Եւրոպա՛ Եսիա՛ Եփրիկէ և Եմբրիդա պատկերներ կը գծեն երկրպագութեան համար : Աարելի է որ իրենք երկրպագութիւն չեն ըներ . բայց արհեստը իրենց շատ շահ կը բերէ . աս գործովը կ'ապրին . և կը հարստանան : Բայց անոնց արհեստը Սատանային հաճած արհեստն է , Վրիստոսի հաճածը չէ : Եւ եթէ Տէրը ան կողմը անցնի , այսինքն՝ թէ որ Եւետարանը հոն քարոզուի , աս արհեստաւորները բոլորը անոր դէմ

կրկենան . ինչպէս որ Նփեսոսի մէջ  
պատահեցաւ : Գործ . ԺԹ . 24-27 :

Ամէն երկրի մէջ շատ քահանաներ  
կան որ՝ ճիշտ աս պատճառաւ ճշ-  
մարտութիւնը չեն ուզեր , այլ ստու-  
թիւն և խաւարը կը սիրեն . քանզի  
իրենց շահն ու վաստակը անկէ կու-  
գայ :

Արեմն մեր շահը ասանկ բաներէ  
թող չըլլայ . քանզի՝ կամ Աւետա-  
րանը վերցնելու է , կամ աս տեսակ  
արհեստը և անկէ եկած շահը . քան-  
զի երկուքը մէկտեղ չըլլար : Նթէ  
մէկը գինետուն մը բանալով՝ ոգելից  
ըմպելիքներ ծախէ , խոզեր արածող-  
ներուն պէս պիտի ըլլայ . Բաղամին  
պէս որ անիրաւութեան վարձքը սի-  
րեց : Նւ երբ Բրիստոս գայ , անոր  
արհեստը պիտի կորսնցնէ՝ ինչպէս  
որ խոզերը կորսնցուց . քանզի Սա-  
տանային հաճելի արհեստ մըն է . և  
Բրիստոսի թագաւորութեան գա-  
լստեանը արգելք ըլլալով՝ երկուքը  
մէկտեղ չեն կրնար կենալ : Բաղա-  
րայի մէջ խող շատ կար . չէ թէ քա-



նի մը հատ , այլ միայն մէկ երամակի մը մէջ 2000 ի չափ կար : Ուրեմն ան երկիրը բոլորովին պղծուած ըլլալու էր . և անոր բնակիչները կառավար՝ քահանայ՝ հարուստ՝ աղքատ՝ բոլորը պիղծ էին . անոնց բոլոր գործածը՝ խօսածը և ուղածը պիղծ էր . սրտերնուն մէջ պիղծ և պղծող ողիներ կը բնակէին . և անոնց մէջ Մատուծոյ վախը չկար : Ուրեմն անոնց վիճակը շատ գէշ չէր : Այո՛ . և շատ գէշ ըլլալը ասկէց ալ յայտնի է որ՝

### 3. Անոնք Քրիստոսը չուզեցին :

Ար կարդանք թէ անոնք Յիսուսին “ աղաչեցին որ իրենց սահմաններէն երթայ ” : Բնաւ մէկը չուզեց որ Յիսուս իր տունը հրամէ . բնաւ մէկը զանիկայ իր տունը չը հրաւիրեց : Բնաւ մէկը փափաք մը չը ցուցուց որ Յիսուս հոն մնայ , և բոլոր հիւանդները բժշկէ , և զանոնք Սատանային գերութենէն և իշխանութենէն ազատէ : Հոն տղաքներ

կային , բայց մէկը չըբերին որ ձեռքը անոնց գլխուն դնելով ազօթք ընէ : Այսին նաև կոյրեր՝ կաղեր՝ անդամալոյծներ՝ ցաւագարներ և մահուանաստիճան հիւանդներ. բայց բնաւ մէկը չը բերին Վրիստոսի որ առողջացնէ : Ենոնք չէ թէ Վրիստոսի կողմէն էին և Սատանային հակառակ՝ այլ Սատանային կողմն ըլլալով Վրիստոսի դէմ կը կենային : Չաղաղեցին որ՝ բոլոր սատանաները երկրէն դուրս վռնտէ , այլ աղաչեցին որ ինքը ան երկրէն դուրս երթայ : Ենոր աղաչեցին որ հոն չը կենայ , այլ շուտով անկէ երթայ . և սատանաները աղաչեցին որ զիրենք հոն թողու : Եւ աս զարմանալի չէ . քանզի ուր որ ժողովուրդը Վրիստոսի երթալը կ'ուզէ՝ հոն Սատանան միշտ մնալ կ'ուզէ : Ենիկայ հոն թագաւորութիւն ունի , ծառաներ ունի , և ամենուն մտքին վրայ մեծ ազդեցութիւն ունի : Աշխարհասէր մարդիկ Վրիստոսի իշխանութիւնը չեն ուզեր՝ այլ Սատանային իշխելը կը սի-

րեն : Խոզարածներուն պէս՝ իրենց վաստակը Վրիստոսի շնորհքներէն և օրհնութիւններէն աւելի կը սեպեն . և Վրիստոսէն ու անոր ծառաներէն հեռու ըլլալ կ'ուզեն . քանզի կը սեպեն թէ՛ անոնք իրենց հանգստութիւնը կը խափանեն , և իրենց վաստակին արգելք կըլլան :

Սիրելիներս՝ ձեր վիճակը ի՞նչպէս է : Վրիստոսը կ'ուզէ՞ք . կ'ուզէ՞ք որ ձեր տունը գայ . և կ'ուզէ՞ք որ ձեր քովը մնայ , ձեզ կառավարէ , և հոգինիդ փրկէ : Սակայն թէ որ ձեր քովը մնայ անոր ապրուստը պիտի չը տա՞ք . ամէն օր զանիկայ պիտի չը կերակրէ՞ք . աս բանը ձեր քսակին կըղպչի : Շատերը կան որ Վրիստոսի համար կամ իրենց հոգիներուն օգուտին համար բնաւ ծախք մը ընել չեն ուզեր : Ան խոզարածներուն պէս՝ իրենց վաստակը յաւիտենական օրհնութիւններէ աւելի լաւ կըսեպեն : Անոնց վիճակը շատ ահուելի է :

Ար կարգանք թէ՛ Գաղարացիք

Քրիստոսի անկէ երթալը ուղեւնուն պէս “նաւը մտաւ միւս կողմը անցաւ” : Մեր Տէրը զանոնք իրենց խօսքովը բռնեց . իր երթալը ուղեցին , և զանոնք ձգեց ու գնաց : Անոնք իր երթալը տեսնելով՝ չողբացին , այլ ուրախացան , կարելի է գինովցան : Տէրն մեր Քրիստոս գնաց . և սատանաները ու չար ոգիները մնացին :

Միրելի Եղբայրներս , եթէ դուք Քրիստոսի երթալը ուղեք , եթէ զանիկայ չընդունիք , ան ալ ձեզ ձգելով պիտի երթայ . իր հոգին ձեզմէ առնելով պիտի երթայ : Ձեզ ձեր հպարտութեանը՝ անհաւատութեանը և ամէն չար փափաքներուն յանձնելով պիտի երթայ : Ուղաճնուդ պէս՝ ձեզ պիտի թողու որ խոզերու պէս ցելխին մէջ թապալտրկիք : Եւ ո՞վ գիտէ արդեօք նորէն պիտի տեսնէք ղինքը՝ եթէ ոչ : Ա՛րեւնայ թէ՛ Գաղարացիք ա՛լ Տէրը չը տեսան . քանզի չենք գիտեր թէ նորէն հոն դարձաւ : Սակայն թէ

որ Տէրը նորէն ձեզի չը դառնայ ,  
անշուշտ դուք մեղաց մէջ պիտի ա-  
պրիք , և մեղաց մէջ պիտի մեռնիք :  
Եւ յաւիտեանս մեղքի տակ մնալով՝  
պիղծ ոգիներուն պղծութիւններուն  
և տանջանքներուն մէջ պիտի մնաք  
յաւիտեանս յաւիտենից :

Եստուած ամենուս ողորմի՛ : Ե-  
մէն :

## ՍՈՒՐԻ ՀՐԵՇՏԵԱՆԵՐՈՒՆ ՎՐԵՅ :

“Չգոյշ կեցէք՝ որ շնարգէք աս պղտիկներէն մէկը . քանզի կ'ըսեմ ձեզի որ երկնից մէջ անոնց հրեշտակները միշտ կը տեսնեն իմ Հօրս երեսը՝ որ երկինքն է” : Մատ . ԺԸ . 10 :

Ասկէց առաջ եղած քարոզները չար ոգիներուն այսինքն սատանաներուն վրայ էր . հիմա աս քարոզը սուրբ հոգիներուն այսինքն հրեշտակներուն վրայ պիտի ըլլայ :

1. Հրեշտակները Աստուծոյ պէս 'ի յաւիտենից չեն :

Անոնք ստեղծող չեն՝ այլ ստեղծուած են . արարիչ չեն՝ այլ արարած են : Դամանակ մը անոնք չկային . անոնք սկիզբ ունին . անոնք առաջին օր՝ առաջին ժամ և առաջին րոպէ ունեցան . և ան րոպէէն առաջ՝ բնաւ չկային : Աստուած ե՞րբ ստեղծեց զանոնք մենք չենք գիտեր :

Երդեօք վե՞ց հազար տարի առաջ ստեղծուեցան , վեց հարիւր հազար տարի առաջ , վեց միլիօն կամ վեց հազար միլիօն տարի առաջ բնաւ մէկը չի գիտեր : Երդեօք Եստուած բոլորը մէկտե՞ղ ստեղծեց , թէ՛ ոմանք միւսներէն՝ շատ կամ քիչ առաջ ստեղծեց ո՞վ կրնայ գիտնալ : Բայց գիտնալ որ բոլորը Տէրն մեր Քրիստոս ստեղծեց . քանզի կրկարդանք թէ՛ (Սող . Ե . 16 , 17 :) “ Ինչու որ անով ամէն բան ստեղծուեցաւ , ինչ որ երկինքը ու ինչ որ երկրի վրայ , անոնք որ կերևնան՝ և անոնք որ չեն երևնար , թէ՛ աթոռները՝ թէ տերութիւնները՝ թէ պետութիւնները՝ թէ իշխանութիւնները , բոլոր բաները անով՝ ու անոր համար ստեղծուեցան . ու անիկայ ամէն բանէն առաջ է , և ամէն բան անով հաստատ կրկենայ ” : Ուրեմն հրեշտակները ստեղծուած ըլլալով՝ ՚ի յաւիտենից չեն :

## 2 . Հրեշտակները՝ ամէն բան չեն գիտեր Աստուծոյ պէս :

Անոնք գոյութիւն ունենալնէն առաջ բան մը չէին գիտեր : Եւ ստեղծուած ատեննին՝ հիմակուան չափ իմաստուն չէին : Շատ բան ան ատենը չէին գիտեր՝ որ հիմա գիտեն . և շատ բան կայ որ հիմա չեն գիտեր՝ ու ետքը պիտի գիտնան : Բայց բնաւ Աստուծոյ պէս ամէն բան չիպիտի գիտնան : Շատ բան սորված են , և յաւիտեանս յաւիտենից պիտի սորվին օրէ օր : Տէրն մեր ըսաւ , (Մատ . ԻԴ . 36 :) “ Իսկ ան օրուան ու ան ժամուն համար՝ մէկը չի գիտեր , ո՛չ ալ երկնից հրեշտակները , հապա միայն Հայրը ” : Երդ հրեշտակաց գիտութիւնը անսահման չէ : Եթէ Աստուած յարմար չըտեսնէ անոնց յայտնել , իր ընելիքը բնաւ չեն գիտնար : Անոնք ալ մարդոց պէս ապառնիին համար Աստուծոյ ապաւինելու են : Ու թէ և մեզմէ շատ բան գիտեն , բայց Աստուծոյ չափ իմաստուն չեն :



### 3. Հրեշտակները շատ զօրաւոր են :

Ամէն բանի կարող չեն Աստուծոյ պէս՝ բայց շատ զօրաւոր են : Սաղմոս ԸՊ. 20 երորդ համարը ատանկ գրուած է, “Օրհնեցէք Տէրը՝ ո՛վ անոր հրեշտակները, որ ուժով զօրաւոր էք” : Արկարդանք թէ՛ հրեշտատանի մէջ հրեշտակ մը քանի մը ժամու մէջ 70,000 մարդ կորսնցուց : Արկարդանք թէ՛ հրեշտակ մը գիշեր մը Ասորուց բանակէն 185,000 պատերազմող մարդիկ զարկաւ, և առտուանց ելլելով բոլորը մեռած գտան : Յովհաննէս առաքեալը կըսէ թէ՛ (Յայտ. 1. 1) : “Տեսայ չորս հրեշտակներ՝ որոնք երկրի չորս անկիւնը կեցեր էին, ու երկրի չորս հովերը բռներ էին, որ երկրի վրայ հով չ'փչէ, ու ո՛չ ծովու վրայ, ո՛չ ալ մէկ ծառի մը վրայ” : Նաև՝ (Յայտ. 1. 1-3) կըսէ, “Նւ հրեշտակ մը տեսայ որ երկինքէն կիջներ, ու անդունդին բանալին և մեծ շղթայ մը ունէր իր ձեռքը. ու բռնեց վիշապը

«յսինքն առջի օձը՝ որ բանսարկուն ու Սատանան է, և կապեց զանիկայ հաղար տարի, ու անդունդը ձգեց զանիկայ՝ և գոցեց ու վրայէն կնքեց” :

Ե՛հա՛ ասիկայ մէկ հրեշտակ մը ըրաւ . արդ հրեշտակները շատ զօրաւոր չե՞ն : Բայց Եստուծոյ պէս ամէն բանի կարող չեն . զօրութիւննին անսահման չէ . Եստուած տուած է իրենց զօրութիւնը . և իրենց զօրութեանը համար անոր պարտաւոր են :

4. Հրեշտակաց թիւը շատ է :

Եսկէց առաջ սորվեցանք թէ՛ ինչպէս հրեշտակներուն թիւը շատ է, քանզի մէկ մարդէ մը 5000 (Ղէգէոն) հատ ելաւ : Եւ կասկած չկայ որ չ’ինչպէս հրեշտակները աւելի շատ են : Դաւիթ թագաւորը կըսէ՝ (Սաղ . ԱԲ . 17) “ Եստուծոյ կառքերը երկու անգամ տասը հազար են , հազարք հազարաց (հրեշտակներ) են ” : Արկարդանք թէ՛ Բեթլէհեմին դաշտին հո-

վիճները՝ «Նրկնային զօրքերու բազմութիւն մը տեսան» : Տէրը Պետրոսին ըսաւ , «Ար կարծե՞ս թէ չեմ կրնար հիմա իմ Հօրս աղաչել , և ինծի հասցնէ տասուերկու գունդէն աւելի հրեշտակներ» : Մատ . Ի . Օ . 53) Հռովմայեցւոց զօրաց գունդը հինք հազար հոգիէ կըբաղկանար : Դանիէլ մարգարէն կըսէ , (Դան . Ի . 10 : Աստուծոյ «հազարք հազարաց՝ ծառայութիւն կրնէին , եւ բիւրք բիւրոց՝ անոր առջևը կըկայնէին» : Յովհաննէս առաքեալ կըսէ թէ՛ (Յայտ . Ե . 11) Շատ հրեշտակներու ձայն լսեցի , ու անոնց թիւն էր բիւրք բիւրոց՝ և հազարք հազարաց» : Պողոս առաքեալ Նբրայեցւոց կըգրէ՛ (Նբր . ԺԻ . 22) «Իիւրաւոր հրեշտակներուն մօտեցած էք» : Ասո՞ճը այսինքն բիւրք բիւրոց և հազարք հազարաց կըցուցունէ թէ՛ հաշիւէ դուրս է . քանզի ան ժամանակի մարդիկը ասկէ աւելի մեծ հաշիւ չէին գիտեր . և իրենց թուանշանները ասկէ վեր չէին ելեր : Ու

րեմն հրեշտակներուն թիւը շատ մեծ  
ըլլալու չէ՞ : Որչափ շատ ըլլալնին  
միայն Աստուած գիտէ :

5. Հրեշտակները զանազան պաշ-  
տօններ ունին :

Անոնց մէջը պատուաւորներ կան :  
Կրկարդանք թէ Միքայէլ՝ հրեշտա-  
կապետ է : Յուդ . 9 : Նաև կրկար-  
դանք թէ՛ Աստուծոյ առջևը կայնո-  
ղը՝ Գաբրիէլ է : Դուկ . Ա . 19 : Նև  
կրկարդանք թէ՛ “Նրկինքը աթոռ-  
ներ՝ տէրութիւններ՝ պետութիւններ  
և իշխանութիւններ կան” : Կող . Ա .  
16 : Ուրեմն հրեշտակներուն բոլորը  
միևնոյն աստիճանը չունին , այլ զա-  
նազան պաշտօններ՝ և պատիւներ  
ունին , ոմանք միւսներէն աւելի զօ-  
րութիւն կամ իմաստութիւն ունին :

6. Հրեշտակները սուրբ են :

Անոնք ծոյլ չեն՝ հպարտ չեն՝ անա-  
ռակ դարանակալ չեն՝ զրպարտիչ  
չեն : Անոնք կեղծաւորութիւն չեն  
գիտեր՝ չեն սրդողիւր՝ չեն նախանձիր՝

չեն վիճիր՝ բամբասանք չեն ըներ՝  
 սուտ չեն խօսիր : Ենոնց մէջ կռիւ՝  
 վէճ՝ անիրաւութիւն բնաւ չկայ :  
 Մէկզմէկ չեն խաբեր , մէկմէկէ չեն  
 գողնար , մէկզմէկու փնաս չեն հասց-  
 ներ , մէկմէկու հետ չեն կռուիր՝ չեն  
 ծեծուիր չեն պատերազմիր : Հրեշ-  
 տակները Եստուծոյ սուրբ անունը  
 պարապ տեղը բերաննին չեն առներ ,  
 հայհոյութիւն չեն ըներ : Իրենց  
 զօրութիւնը անձերնուն համար չը  
 գործածելով և անձնական շահ չը  
 փնտռելով՝ ամենայն զօրութեամբ  
 Եստուծոյ փառքին և պատիւին հա-  
 մար կ'աշխատին : Բրիստոսի հնա-  
 զանդելով անոր բոլոր հրամանը 'ի  
 գործ կը դնեն : Սուրբ Հոգին չը  
 տրամեցնելով՝ միշտ անոր օրհնեալ  
 աղոթեցութեանը տակն են : Ա երջա-  
 պէս բոլորը խոնարհ՝ հեզ՝ մաքուր՝  
 սուրբ սրտով՝ բարերար և բոլորովն  
 անմեզ են : Արանի՛ անոնց որ հրեշ-  
 տակի պէս սուրբ պիտի ըլլան :

7. Հրեշտակները Քրիստոսինն են ,  
և ան զանոնք չարերը կորսնցնե-  
լու համար կը գործածէ :

Արկարդանք թէ՛ (Գործ . ԺԲ . 23)  
“Տէրօջը հրեշտակը” ան հալածիչ  
Հերովդէսը “զարկաւ , և որգնալից  
ըլլալով մեռաւ” : Յովհաննէս Ա-  
ռաքեալը եօթը հրեշտակ տեսաւ որ՝  
վերջին եօթը հարուածները բռնելով՝  
Աստուծոյ բարկութեան եօթը սկա-  
ւառակները չարերուն վրայ թափե-  
ցին : Յայտ . ԺԵ . 1 : Ժ.Օ . 1 : Եւ  
Տէրն մեր Քրիստոս կըսէ՛ (Մատ .  
ԺԳ . 40-42) “Աշխարհիս վերջը Որ-  
դին մարդոյ իր հրեշտակները պիտի  
խրկէ , ու պիտի ժողվեն անոր թա-  
գաւորութենէն բոլոր գայթակղու-  
թիւնները՝ և անոնք որ անօրէնու-  
թիւն կըգործեն : Ու կրակի հնոցին  
մէջ պիտի ձգեն զանոնք . հոն պիտի  
ըլլայ լալ՝ ու ակռաներ կըճռցնել :

8. Քրիստոս իր հրեշտակները Աստուծոյ ծառաներուն մխիթարութիւն և օգնութիւն ըլլալու համար կը գործածէ :

Տէրը մեր բնաբանին մէջ կըսէ ,  
 “Օգոյշ եղիք որ չանարգէք աս պատիկներէն մէկը . քանզի կըսեմ ձեզի որ Արկնից մէջ անոնց հրեշտակները միշտ կը տեսնեն իմ Հօրս երեսը որ երկինքն է” :

Ոմանք կը կարծեն որ բոլոր սուրբերուն քով մէյմէկ հրեշտակ կայ զանոնք կը պահպանէ : Սակայն ասանկ կարծիքի մը՝ բնաւ հարկաւորութիւն չկայ , քանզի գիտենք որ սուրբերը պահպանելու համար՝ հարկաւոր եղածին չափ հրեշտակներ կան : Արկարգանք թէ՛ (Օննդ . 1Ի . 1, 2) Աստուծոյ երկու բանակները Յակոբին պատահեցան՝ որ զանիկայ պահպանեն , և անոր վախերը փարատեն : Արկարգանք թէ՛ (Դ . Թազ . Օ . 16 , 17) Աղիսէ մարգարէին բոլորտիքը՝ հրեղէն կառքերով և ձիերով այսինքն

հրեշտակներով լեցուն էին , որ զանիկայ Ասորոց զօրքերէն պահեն : Արկարդանք թէ՛ հրեշտակները խեղճ Ղազարոսը երկինքը տարին , չէ թէ մէկ հրեշտակ մը՝ այլ հրեշտակներ զանիկայ տարին : Անցեալ քարոզներէն մէկէն սորվեցանք թէ՛ չարերը պղծելու համար՝ շատ պիղծ ոգիներ կ'աշխատին : Մարիամ Մագդաղենացիիններսը եօթը դե կար : Գերեզմաննոցը բնակող մարդուն ներսը լէգէոն մը՝ այսինքն հինգ՝ վեց հազար դե կար : Ասանկ ալ բարի մարդոց բոլորտիքը՝ զանոնք պահելու և ազատելու համար՝ թէ շատ և թէ քիչ հրեշտակներ կը գտնուին : Աստուած երկու հրեշտակ խրկեց որ Ղովտը Սողոմէն հանեն : Աստուած երկու գունդ հրեշտակ գործածեց որ Յակոբը Եսաւէն ազատեն : Աստուած հրեշտակներ գործածեց որ՝ Եբրահամին՝ Յետուին՝ Գէգէոնին՝ Դաւիթին՝ Եղեային՝ Դանիէլին՝ Պօղոս առաքեալին և ուրիշներուն օգնութիւն և մխիթարութիւն տան :



Յովսէփին քանի մը անգամ հրեշտակ երևցաւ , բայց չենք գիտեր ամէն անգամին միւս նոյն հրեշտակներ , թէ՛ տարբեր հրեշտակներ էին : Սակայն Պօղոս կը հարցունէ՝ (Աբբ . Ե . 14) « Ենոնք սպասաւորող հոգիներ չե՞ն անոնց՝ որ փրկութիւն պիտի ժառանգեն » : Երդ բոլորը աս գործին համար խրկուած էակներ են , և Քրիստոս աս գործին համար՝ չէ թէ հասարակ հրեշտակներ կը գործածէ՝ այլ

9 . Ես գործին համար ամենամեծ և իմաստուն հրեշտակները կը գործածէ :

Մեր բնաբանէն կը սորվինք թէ՛ աս պղտիկներուն հրեշտակները երկնաւոր շօրը երեսը կը տեսնեն : Թագաւորի մը առջև կայնիլ՝ և միշտ անոր երեսը տեսնել՝ շնորհքներուն ամենամեծը կըսեպուի : Ուրեմն յայտնի ըլլայ ձեզի եզբայրներս , որ ձեզի ծառայելու համար Քրիստոս ամէնէն զօրաւոր և ամէնէն աղէկ հրեշ-

տակները կրխրկէ : Աստուծոյ առջևը կայնողներուն մէկն ալ Վաբրիէլն է : Արդեօք քանի՞ քանի անգամ Վաբրիէլ խրկուած է, հարի՞ւր՝ հազար՞ միլիօ՞ն անգամ մենք չենք գիտեր : Բայց չորս անգամ խրկուելը գիտենք, այսինքն՝ երկու անգամ Վանիէլ մարգարէին և մէյմէկ անգամ Չաքարիաին ու կոյս Մարիամին : Սիրելիներս, ձեզի օգնութեան, մխիթարութեան և պաշտպանութեան համար՝ թէ որ հարկաւորի, Քրիստոս Վաբրիէլի հետ տասը հազար կամ հարիւր հազար զօրաւոր հրեշտակներ պիտի խրկէ :

10 . Արկնից հրեշտակներուն երկրպագութիւն ընելու չենք :

Տէրոջը հրեշտակը Պետրոսը Հերովդէսին ձեռքէն ազատած ատենը՝ և Աստուծոյ հրեշտակը առաքեալները բանտէն հանած ատենը, իրենց աղօթքը և շնորհակալութիւնը հրեշտակներուն Աստուծոյն մատուցին, սակայն հրեշտակներուն չըմա-

տուցին : Յովհաննէս առաքեալ երկու անգամ սկսեց երկրպագութիւն ընել . և երկուքին ալ արգիլուեցաւ . հրեշտակները մեզի պէս ծառայ են . զանոնք սիրելու ենք . և ինտոր որ անոնք պատրաստ են մեզի սպասաւորելու՝ անանկ ալ մենք պատրաստ ըլլալու ենք մէկզմէկու . օգնելու : Բայց Աստուծոյ յատուկ եղած յարգն ու պատիւը՝ հրեշտակներուն տալու չենք : Անոնք ամենուրեք չըլլալնուն համար՝ գուցէ մեր երկրպագութիւնը պիտի չըտեսնեն . և եթէ տեսնեն ալ , չիպիտի ընդունին , և եթէ ընդունին , ան ատենը Սատանային պէս ինկած՝ հպարտ՝ պիղծ՝ չար՝ Աստուծոյ հակառակ և յաւիտեանս անոր թշնամի կրլան : Սատանան ուզեց որ Բրիստոս անոր երկրպագութիւն ընէ , և մեզմէ ամենէս ալ կուզէ . բայց սուրբ հրեշտակ մը բնաւ ասանկ բան մը չուզեր մեզմէ : Աւ մենք սուրբ հրեշտակներուն պէս մեր երկրպագութիւնը՝ սէրը և սիրտը Աստուծոյ՝ հրեշտակաց Տէրօջը նու-

իրելու ենք : Մենք հրեշտակաց պէս  
 ըլլալու ենք , որպէսզի յաւիտեանս  
 յաւիտենից անոնց հետ մէկտեղ ըլ-  
 լանք : Աթէ ո՛չ , այսինքն թէ որ  
 հրեշտակներուն չընմանինք , սատա-  
 նայից նմանելով՝ յաւիտեանս յաւի-  
 տենից անոնց հետ պիտի տանջու-  
 ինք : Աղբայրներս , որո՞նք կընըմա-  
 նիք . որո՞նք կուզէք նմանիլ . որո՞նք  
 նմանելու կըջանաք :

## ՀՐԵՇՏԵԿՆԵՐԸ ԵՄԵՆՈՒՐՆԻՅԻ ՆԻ ԵՄԵՆԵԿԵՐՈՂ ՉԵՆ :

“ Եւ ինծի ըսաւ . Մի վահնար , ո՛վ Դանիէլ . քանզի ան առջի օրէն 'ի վեր' որ քու սիրտդ տուիր հասկնալու , և քու Եստուծոյդ առջեւ քու անձդ խոնարհեցնելու , քու խօսքերդ լսուեցան . ու ես քու խօսքերուդ համար եկայ : Ի այց Պարսից Թագաւորութեանը իշխանը քանուձեկ օր իմ երեսիս դէմ կեցաւ . սակայն ահա Միքայէլ առաջին իշխաններէն մէկը՝ ինծի օգնութեան եկաւ . ու ես՝ հոն Պարսից Թագաւորներուն քովը մնացի ” : Դան . Ժ . 12 , 13

**Ես գլխուն և աս մարգարէութեան մէջէն ալ քանի մը բաներ կըսորվինք հրեշտակներուն վրայ :**

**1 . Արսորվինք թէ՛ հրեշտակները ամենուրեք չեն :**

Դանիէլ մարգարէն՝ իր ժողովուրդին համար սուգ ընելով աղօթք ըրաւ . և օրէ օր իրեք շաբաթ շարունակեց իր աղօթքները : Եստուած իր աղօթքները ընդունած ըլլալը իմացնելու համար՝ հրեշտակ մը խրկեց Դանիէլին : Հրեշտակը շուտ ելաւ ճամբայ . բայց մինչև Դանիէլ-

լին հասնիլը քսանումէկ օր տևեց . ճամբան արգելքներ ունեցաւ : Հրեշտակը ըսաւ Դանիէլին , “ Ըն առջի օրէն 'ի վեր' որ քու սիրտդ տուիր հասկնալու , և քու անձդ Աստուծոյ առջևը խոնարհեցնելու , քու խօսքերդ լսուեցան , ու ես՝ խօսքերուդ համար եկայ : Բայց Պարսից թագաւորութեանը իշխանը իմ երեսիս դէմ կեցաւ . Սակայն ահա՛ Միքայէլ՝ առաջին իշխաններէն մէկը՝ ինձի օգնութեան եկաւ ” : Դան . Ժ . 12 , 13 : Արեւի է պիտի ըսէք՝ Պարսկաստանի մէջ եղած գործը՝ հրեշտակն արգիլեց , և չկրցաւ Դանիէլին շուտ գալ : Շատ աղէկ , կրնայ ասանկ ըլլալ , և իրաւ ալ անանկ է : Բայց աս հրեշտակը ամէնուրեք չէր , և Դանիէլին քովը չէր : Եւ իններորդ գլուխ երրորդ համարին մէջ կրկարդանք թէ՛ Դանիէլ ասկէց առաջ օր մը որոշեց , և ծոմապահութեամբ՝ քուրճով ու մոխիրով աղօթք ըրաւ Տէր Աստուծոյ դառնալու համար : Եւ 21 , 22 , 23 երորդ համարներէն

կըսորվինք թէ՛ անոր աղօթքին ըսկիզբէն Վաբրիէլ հրեշտակը ելաւ որ անոր աղօթքին աղէկ պաասսխան մը բերէ , և արագութեամբ կըթռչէր : Բայց որչափ որ արագ կըթռչէր , տակաւին Վանիէլին չըհասաւ մինչև իրիկուան զոհին ատենը . այսինքն ճամբան վեց ժամ տևեց :

Ուրեմն հրեշտակներուն աղօթե՞նք : Ո՛չ . կարելի է մեզմէ քանի մը օրուան ճամբայ հեռու են , և մեզի չեն լսեր : Եւ եթէ լսեն ալ նէ , կարելի է ուրիշ գործ ունենալով՝ մեզի համար բան մը չեն կրնար ընել : Իրենք իրենցմէ բան մը չեն կրնար ընել : անոնք բոլորը սպասաւոր են : Աստուծոյ գործածած ծառաներն են , և Աստուծոյ հրամանին տակն ըլլալով՝ միշտ անոր ծառայութեանը զբաղած են :

2. Հրեշտակները ամենագէտ չեն , և մէկզմէկու լուր կուտան :

Անոնց դիտութիւնը անհուն չէ : Աստուծոյ դիտաւորութիւնը՝ իրենց

յայտնուածէն աւելի չեն գիտեր :  
 Երուսաղէմի կործանմանը վրայով  
 Տէրը ըսաւ (Մատ. ԻԴ. 36) « Են օ-  
 րուան և ան ժամուն համար մէկը  
 չի գիտեր , ոչ ալ երկնից հրեշտակ-  
 ները , հապա միայն իմ հայրս » : Հը-  
 րեշտակներն ալ մարդոց պէս բոլոր  
 ապառնիին մէջ ըլլալիքներուն հա-  
 մար Եստուծոյ ապաւինելու են :

Դանիէլի ԺԻ. 5-8 երորդ համարը  
 ասանկ գրուած է . « Ու ես Դանիէլս  
 տեսայ որ՝ ահա՛ ուրիշ երկու մարդիկ  
 կայներ էին . մէկը գետին մէկ եզեր-  
 քը , ու մէկալը գետին մէկալ եզերքը :  
 Ու մէկը ըսաւ ան կտաւ հագած մար-  
 դուն՝ որ գետին ջուրերուն վրայ կայ-  
 նած էր . Ես սքանչելի բաներուն  
 վերջը մինչև ե՞րբ պիտի ըլլայ : Եւ  
 լսեցի որ՝ ան կտաւ հագած մարդը  
 որ գետին ջուրերուն վրայ կայնած  
 էր , որ իր աջ ու ձախ ձեռքերը եր-  
 կինքը վերցնելով՝ յաւիտեան կեն-  
 դանի եղողին վրայ երդում ըրաւ , որ  
 ժամանակ մը , ժամանակներ , ու  
 կէս ժամանակ պիտի ըլլայ . ու երբոր



սուրբ ժողովուրդին զօրութիւնը բո-  
լորովին ցրուի , ասոնց ամէնը պիտի  
կատարուի” :

Դանիէլին հետ խօսող անձը դե-  
տին ջուրերուն վրայ կրկայնի : Եւ  
ան Դանիէլին հետ խօսքը լմնցունե-  
լուն պէս Դանիէլ տեսաւ որ՝ ահա՛  
ուրիշ երկու անձինք կայնած՝ ուշա-  
դրութեամբ մտիկ կընէին , իբրև  
թէ իրենք ալ աս բաները կուզէին  
սորվիլ : Անոնցմէ մէկը սորվելու հա-  
մար Գաբրիէլին հարցում ըրաւ :  
Գաբրիէլ հրեշտակ անոր պատաս-  
խան տուաւ և եղելութիւնը անոր  
հասկցուց : Դանիէլ անոր խօսած-  
ները թէև գրեց՝ բայց միտքը չը  
հասկնալով ինքն ալ անոր հարցուց :  
Իայց Գաբրիէլ Դանիէլին հարցնելը  
աղէկ շօտեպելով՝ ըսաւ ( Հմր . 9 )  
“ Գնա ո՛վ Դանիէլ . քանզի աս խօս-  
քերը մինչև վերջին ժամանակը գոց-  
ուած ու կնքուած են” :

Ան երկու մտիկ ընող հրեշտակ-  
ները անշուշտ հասկցան , և Գաբրի-  
էլէն քիչ կամ շատ բան սորվեցան :

Նւ ասկէց յայտնի է որ՝ մէկ հրեշտակ մը ուրիշէն իմաստուն կրնայ ըլլալ և թէ մէկզմէկու բան կ'իմացունեն :

Ուրեմն հրեշտակներուն աղօթք ու երկրպագութիւն ընելու չենք : Նթէ հրեշտակէ մը բան մը խնդրենք ան հրեշտակը պիտի լսէ՞ եթէ ո՛չ ո՞վ գիտէ : Աարելի է ան բնաւ չի գիտեր և չիպիտի գիտնայ , թէ որ ուրիշ հրեշտակ մը լսելով՝ քանի մը ժամ կամ քանի մը օր և կամ քանի մը տարի ետքը չիմացունէ : Նւ ինչպէս որ չիվայելեր հրեշտակներուն աղօթք ընել՝ անանկ ալ սուրբերուն ընելը չիվայելեր : Սուրբերը հրեշտակներէն աւելի՞ բան գիտեն . ո՛չ , անշուշտ աւելի քիչ գիտեն :

3. Հրեշտակները ամենակարող չեն , ու մէկզմէկու կօզնեն :

Դանիէլին եկող հրեշտակը՝ 21 օր ճամբան մնաց , քանզի շատ դժուարութեանց հանդիպեցաւ : Տասուի-

րեքերորդ համարը ասանկ գրուած է  
 “Բայց Պարսից Թագաւորութեան  
 իշխանը քսանումէկ օր երեսիս դէմ  
 կեցաւ, սակայն ահա Միքայէլ առա-  
 ջին իշխաններէն մէկը՝ ինծի օգնու-  
 թեան եկաւ” : Աթէ Միքայէլ անոր  
 օգնութիւն չըներ՝ 21 օրէն ալ չէր  
 կրնար գալ, և կարելի է բնաւ չէր  
 գար : Աերևնայ Թէ Գանիէլին եկող  
 աս հրեշտակը Գաբրիէլ էր, որ ասկէ  
 առաջ երկու անգամ ալ եկած էր :  
 Գլ. Բ. 16 : Թ. 21 : Գաբրիէլ շատ  
 մեծ հրեշտակ մը ըլլալու էր, քանզի  
 ինքը Չաքարիային ըսաւ “Այս եմ  
 Գաբրիէլը որ Աստուծոյ առջևը կը-  
 կայնիմ” : Գլ. Ե. 19 : Թագաւո-  
 րաց առջևը կայնողները միշտ մեծ  
 ու ընտիր անձինքներ կրլան : Բայց  
 Գաբրիէլ հրեշտակը խոստովանեցաւ  
 որ ինքը Միքայէլ հրեշտակապետին  
 օգնութեանը կը կարօտէր : Աթէ  
 Գանիէլ հրեշտակին աղօթք ընէր,  
 Միքայէլ հրեշտակապետը անոր օգ-  
 նութեան կուգա՞ր . Ա՛չ, անշուշտ չէր  
 գար : Սակայն Գանիէլ իր աղօթքը

Մատուծոյ ըրաւ, և աղօթք լսող  
 Մատուածը՝ անոր խնդիրքը կատա-  
 րելու համար՝ առաջ Գարրիէլը և  
 ետքը անոր օգնութեան Միքայէլ  
 հրեշտակապետը խրկեց : Արդ Եղ-  
 քայրներս, թէ որ աղօթքի պատաս-  
 խան առնել կուզէք՝ Դանիէլին ըրա-  
 ծին պէս՝ կենդանի Մատուծոյ աղօ-  
 թելու էք :

4. Հրեշտակները Քրիստոսի թա-  
 զաւորութեան գալստեանը հա-  
 մար կաշխատին :

Ես աշխարհիս մէջ շատ գործեր  
 ունին : Մատուած զանոնք շատ գոր-  
 ծածեր է և կը գործածէ : Զանոնք  
 կը գործածէ Քրիստոսի թշնամիները  
 կորսնցնելու՝ և բարեկամները պաշտ-  
 պանելու և անոնց օգնելու համար :  
 Պօղոս առաքեալ կըսէ թէ՝ անոնք  
 ամէնը քրիստոնեաներուն կ'սպա-  
 սաւորեն : « Չէ՞ որ անոնք ամէնը  
 սպասաւորող հոգիներ են, որոնք  
 սպասաւորութեան կըխրկուին ա-

նոնց համար՝ որ փրկութիւն պիտի ժառանգեն” : Եբր . Ը . 14 :

Գաբրիէլ Դանիէլին ըսաւ , (Ժ . Ը . 1) “Մարաց Դարեհ թագաւորին առջի տարին՝ ես կայնեցայ որ զանկայ ուժովցնեմ ու զօրացնեմ” : Եւ իններորդ գլուխէն կըսորվինք թէ՛ աս ճիշտ ան տարին էր որ Դանիէլ մարգարէութեան գրքէն հասկըցեր էր թէ՛ շրէից գերութենէ դառնալու ժամանակը խիստ մօտ ըլլալու է . և Դանիէլ օր մը որոշեց որ՝ աս նպատակին համար ջերմեռանգութեամբ աղօթք ընէ : Բայց շրէից թշնամիներ կար . թագաւորին բոլորտիքը՝ և պալատը կային մարդիկ՝ որ շրէից բարիք չէին կամենար : Բնաւ չէին ուզեր որ թագաւորէն հրովարտակ ելլէ , և շրէայք գերութենէ դառնան , և Երուսաղէմը ու տաճարը դարձեալ շինուի :

Նէեմիա կըգրէ թէ՛ (Դ . 7 , 8) թշնամիները երբ “Նսեցին որ Երուսաղէմի պարիսպներուն նորոգութիւնը յառաջ կերթայ , ու փլած

տեղուանքը սկսեր են շինուիլ , շատ սրդողեցան : Եւ ամէնքը մէկտեղ խօսք ըրին , որ գան Երուսազէմին դէմ պատերազմ ընեն , ու անոր փնաստան” :

Եւ Եզրասայ չորրորդ գլուխէն կը սորվինք թէ՛ թշնամիները՝ չրէից դէմ վարձքով խորհրդականներ բռնեցին որ՝ անոնց խորհուրդը խափանեն , և հրովարտակը ոչնչացնեն : Ես թշնամիները Աիւրոս թագաւորին բոլոր օրերը , և անկէ ետքը եկող թագաւորին օրերը չրէից վրայով շատ մը ամբաստանութեան գրեր գրեցին : Ընոնց խրկած նամակներուն մէկ օրինակը Եզրասայ գրքին մէջ գրուած է : Եւ աս նամակին ամբաստանութեանը պատճառաւ հրովարտակ ելաւ որ՝ գործը բռնութեամբ արգիլուի : Ուստի Եստուծոյ տաճարը քանի մը տարի շինուելէն արգիլուեցաւ : Ես գործին մէջը Սատանային մատը չկա՞ր . անշուշտ կար : Եւ հրեշտակները գործ մը չըրի՞ն . այո՛ , անշուշտ ըրին : “Սա-

րաց Դարեհ թագաւորին առջի տա-  
րին ես կայնեցայ որ զանիկայ ու-  
ժովցնեմ, և զօրացնեմ” : Դան .  
ԺԸ . 1 : Գաբրիէլ հրեշտակը աս  
թագաւորին օգնեց և զանիկայ զօ-  
րացուց : Բայց ի՛նչ կերպով ըրաւ ,  
չենք գիտեր մենք :

ԵՄ՛նացորգաց ԽԸ . 1 կրկարդանք  
թէ՛ “ Սատանան Խարայելին դէմ ե-  
լաւ , ու Դաւիթը դրդեց որ Խարա-  
յելը համրէ” : Սատանան ինտո՞ր  
գրդեց զանիկայ , և ի՛նչ կերպով  
փորձեց , մենք տեղեկութիւն չու-  
նինք : Սակայն եթէ Սատանան  
կրնայ մեզ տկարացընել , հրեշտակնե-  
րը չե՞ն կրնար մեզ տկարացընել : Եւ  
եթէ Սատանան մեզ կրնայ գրգռել ,  
հրեշտակները չե՞ն կրնար : Պօղոս  
Եռաքեալ մէկ եկեղեցւոյ մը ասանկ  
կը գրէ , “ Ենոր համար ես Պօղոսս  
մէկ երկու անգամ ուղեցի ձեզի գալ ,  
բայց Սատանան մեզ արգիլեց” : Ե  
Թեա . Բ . 18 : Ո՞վ գիտէ թէ՛ Սա-  
տանան զանիկայ ի՛նչպէս արգիլեց :  
Սակայն եթէ Սատանան կրնայ մեր

գործը արգիլել, հրեշտակները չե՞ն կրնար յառաջ տանիլ : Աս աշխարհիս վրայ չար ոգիներ կան և սուրբ ոգիներ ալ կան : Անոնք մեր աչքին չեն երևար, բայց մէկը կ'ուզէ Քրիստոսի գործին արգելք ըլլալ, իսկ միւսը կ'ուզէ օգնել :

Ծ. Աստուած մեր աղօթքներուն պատասխանելու համար, թէ՛ մարդիկ և թէ՛ հրեշտակներ կը գործածէ :

Դանիէլին խնդիրքը Աստուծոյ հաճելի եղաւ . բայց Դանիէլ պատասխանը շուտ չառաւ . պատասխանը բերելու համար հրեշտակ մը արտորնօք ճամբայ ելած էր . բայց Դանիէլ անոր գալը և արդէն ճամբայ ելած ըլլալը չէր գիտեր : Թէ որ գիտնար, անշուշտ անոր սիրտը աւելի զօրացած և ուրախ պիտի ըլլար, և աւելի ջերմեռանդութեամբ պիտի աղօթէր : Դանիէլ իր աղգին համար աղօթքով մեծ բաներ խնդրեց .



և իր բոլոր խնդրուածքը կատարուելու համար թագաւորին մտերիմները՝ խորհրդականները՝ և ծառաները փոխուելու էին , շատ մեծամեծներ աքսորուելու էին , շատ երկիրներ տակն ու վրայ ըլլալով՝ շատ թագաւորներ իյնալու էին : Աստուած չէ թէ միայն հրեշտակներ գործածեց , այլ նաև շատ մը մարդիկ գործածեց . թագաւորին մատակարարը Նէեմիա՝ Եզրաս քահանան և դպիրը գործածեց . Մնգէ և Օւաքարիա մարգարէները , ու շատ թագաւորներ՝ ու թագուհիներ գործածեց :

Եւ դուք Եղբայրներս , թէ որ ձեր զաւակներուն և դրացիներուն համար , ձեր քաղաքին և երկրին բնակիչներուն համար աղօթք ընէք որ անոնք ճշմարիտ քրիստոնէայ ըլլան , եթէ աղօթքնիդ սրտանց է , անշուշտ ընդունելի պիտի ըլլայ . բայց պատասխանը առնելէն առաջ՝ դուք ալ աշխատելու էք , ձեռքերնէդ եկածին չափ աշխատելու էք որ՝ ամէն արգելք վերցնէք , ձեռքերնիդ և լե-

գունիդ գործածելու էք , սուրբ գիրք տպելով տարածելու էք :

Եղբայրներ , մի' թուլնաք , այլ զօրացէք . յոյսերնիդ շուտ թող չը կտրի , ձեր խնդրած օրհնութիւնները շատ մեծ են . և կարելի է ձեր աղօթքին պատասխանը բերող հրեշտակը հիմա ճամբան է , և կ'աշխատի :

Դուք ալ Եղբայրներս , դուք ալ հրեշտակներուն հետ աշխատելու էք . Սուրբ Հոգւոյն հետ՝ Քրիստոսի հետ աշխատելու էք . Պօղոս Եռաքեալին ըսածին պէս՝ “ Եստուծոյ գործակից ” ըլլալու էք : Եմենամեծն Եստուած ձեր աղօթքներուն պատասխանելու համար զանազան միջոցներ կը գործածէ . հրեշտակներու մարդիկ կը գործածէ . և ձեզ ալ կ'ուզէ գործածել : Եւ եթէ դուք չուզէք աշխատիլ , յայտնի է որ ձեր աղօթքը ընդունելի չեղաւ , այլ մերժուեցաւ : Յայտնի է որ՝ դուք երկնից մէջ և երկրիս վրայ եղող սուրբերուն հետ մէկ չէք : Երդ աղօթքը

շարունակեցէք , և համբերութեամբ  
 սպասեցէք . նաև աշխատեցէք՝ որ  
 ձեր խնդրածը կատարուի : Թէ որ  
 հրեշտակները ձեզի համար կ'աշխա-  
 տին , գուք անոնց հետ աշխատիլ  
 չէ՞ք ուզեր : Հարկ է . և պարտքեր-  
 նիդ է որ աշխատիք :

## ՅԵՅՐՈՍԻՆ ԵՂՋԻԿԸ :

“ Երբոր ինքը դեռ կըխօսէր , ժողովրդապետին տունէն ոմանք եկան՝ ու ըսին թէ , Եղջիկը մեռաւ , ալ ինչո՞ւ վարդապետը կըյոգնեցնես : Իսկ Յիսուս ըսուած խօսքը լսածին պէս՝ ժողովրդապետին ըսաւ , Մի՛ վախնար , միայն թէ հաւատա : Եւ մէկը թող չը տուաւ իր հետը երթալու , բայց միայն Պետրոսը ու Յակոբոսը և Յակոբոսին եղբայրը Յովհաննէսը : Ու ժողովրդապետին տունը դալով՝ տեսաւ աղմուկ և սաստիկ լացողներ ու աղաղակողներ : Եւ ներս մտնելով՝ ըսաւ անոնց . Ինչո՞ւ խռովեր էք՝ ու կուլաք . մանուկը մեռած չէ՛ , հապա կը քնանայ : Ետադը կ'ընէին անիկայ . բայց ինքը ամէնը դուրս հանելով՝ իր հետը առաւ մանուկին հայրը ու մայրը՝ և անոնք որ իր հետն էին , ու մտաւ հոն՝ ուր որ մանուկը պառկած էր : Եւ մանուկին ձեռքէն բռնելով ըսաւ անոր . Տալիթա՛ կումի , որ կը թարգմանուի , Ե՛ղջիկ՝ (քեզի կ'ըսեմ ,) ելէ՛ր : Եւ իսկոյն աղջիկը ոտք ելաւ , ու կըքալէր , ինչու որ տասուերկու տարեկան էր . ու մեծ ապշութեամբ ապչեցան : Եւ սաստիկ պատուէր տուաւ անոնց՝ որ մէկը չգիտնայ աս բանը , ու ըսաւ որ անոր ուտելիք տան՝ : Մարկ . Է . 35-43 :

Ես աղջիկը տասուերկու տարեկան էր : Ենոր հայրը ժողովրդապետ ըլլալով՝ շրէից ժողովարանին իշխաններէն մէկն էր : Ենոր անունը Յայրոս էր . աս աղջիկը՝ անոր մէկ հաստիկ զաւակն էր , անկէ՛ ի զատ զաւակ չունէր : Հոս յիշուած դիպուածէն քանի մը բան կը սորվինք :

1 . Սուգի ատեն հեթանոսներուն  
պէս չընենք :

Արկարդանք թէ՛ (Մատ . Թ . 23)  
Տէրը ան ժողովրդապետին տունը  
գալով՝ փողահարներ և լացողներ  
գտաւ որ լալով կ'աղաղակէին : Էոս  
ալ մեր օրերը շատերը կան որ՝ ազ-  
գական մը մեռնի նէ , մեծ ձայնով  
կուլան և կը պոռան : Մանաւանդ  
կնիկներուն ձայնը երբեմն շատ հե-  
ռուէն կը լսուի . անոնց ձայնը հեռու  
տեղեր կ'երթայ : Բայց աս սովորու-  
թիւնը հեթանոսներէն առնուած է ,  
ու Բրիստոնէից արգելուած է : Աս  
տեսակ աղաղակը՝ տրտմութիւն չը-  
ցուցնէր . տրտմութեան նշան չէ , և  
բոլորովին անօգուտ ըլլալով՝ ամէն  
կերպով մեղք է :

Ասանկ ժամանակ շատ օգտակար  
և յարմար է որ լուռ ու հանդարտ  
կենալով՝ ան դիպուածին վրայ մտա-  
ծենք . Աստուծոյ հրամանին հպա-  
տակինք և ինքզինքնիս անոր կամ-  
քին յանձնենք : Պօղոս Առաքեալ

Թեաաղոնիկէի քրիստոնէից գրեց թէ “Չը տրտմիք ինչպէս ուրիշները որոնք յոյս չունին” : Ե Թեա . Դ . 13 : Դաւիթ թագաւորը ըսաւ թէ՛ “Մունճ եղայ ու բերանս չը բացի , վասն զի դուն ըրիր” : Սաղմ . 130 . 9 : Յոր ըսաւ , (գիտէք թէ Յոր շատ տեսակ փորձանքներու պատահեցաւ և անոր տանջանքները շատ մեծ ու սոսկալի էին) “Տէրը տուաւ , և Տէրը առաւ . օրհնեալ ըլլայ անոր անունը” : Յոր . Ե . 21 : Յորին ձեռքը Սուրբ գիրք չկար , սակայն կրկարդանք թէ՛ “Ես բոլոր բաներուն մէջ՝ այսինքն ստացուածքը և տղաքները կորսնցնելով՝ “Յոր չը մեղանչեց” : Հմբ . 22 : Հեթանոսաց պէս յիմարութիւն չըրաւ :

Սուգի տունները երբեմն այնչափ աղաղակ կը լսուի որ՝ մէկը զարմանալով պիտի ըսէ թէ արդեօք աս տանը մէջ Եստուծոյ վախը չը կա՞յ : Եստուած կրխօսի , և անոր ներկայութեանը բոլոր տիեզերքը թող յուռ կենայ : Եսանկ աղաղակները

Թող վերնան . ամօթ է . Տէրը ըսաւ  
Գուրս ելէք . ինքը եկաւ . ամէն աչք  
անոր թող նայի , և ամէն ականջ  
մտադրութիւն թող ընէ , ու ամէն  
մէկը անկէ թող սորվի :

2. Տէրը շատ քաղցր անուն մը տու-  
աւ մահուան :

“Մանուկը մեռած չէ , այլ կը  
քնանայ” ըսաւ : Արշափ որ մեզի  
դիւրին է մէկը քունէն արթնցնել ,  
նոյնչափ դիւրին է Քրիստոսի մե-  
ռելները յարուցանել : Աւ այսչափ  
զօրութեան տէր եղող Յիսուսը՝ չե-  
ղած բաները՝ եղածի պէս կրնայ կո-  
չել : Բայց չեմ կարծեր թէ Տէրը աս  
պատճառաւ մահը քուն կոչեց : Այլ  
շատ հաւանական է որ Յայրոս կամ  
իր բարեկամները Սաղուկեցիներէն  
ըլալով կը հաւատային թէ հոգին  
մարմինին հետ կը կորսուի , և մե-  
ռելներուն յարութիւն չկայ : Աւ ա-  
նոր համար Տէրը մահուան հակա-  
ռակ իօսք մը՝ այսինքն “կը քնանայ”  
ըսաւ : Ասկէց՝ ի գատ Սուրբ Գիւրքը

շատ անգամ մեռելներուն վրայ քնացողի պէս կը խօսի : Գ. Թագ . Բ . 10 երորդ համարը կը կարդանք թէ “ Դաւիթ թագաւոր իր հայրերուն հետ քնանալով՝ Դաւիթին քաղաքին մէջ թաղուեցաւ ” : Չըսուիք մեռաւ, կամ վախճանեցաւ, կամ յաւիտենականութեան գնաց, այլ քնացաւ : “ Իր հայրերուն հետ քնացաւ ” որ անոնց ալ քնացած ըլլալը կը յայտնէ : Մատթէոս ԻԼ . 52 կը կարդանք թէ՛ Յիսուս խաչին վրայ իր հոգին աւանդածատենը “ գերեզմանները բացուեցան, ու շատ սուրբ ննջեցեալներու մարմիններ յարութիւն առին, և գերեզմաններէն ելան ” : Չէ թէ մեռած՝ այլ քնացած սուրբերուն մարմինները յարութիւն առին : Գործոյ Լ . 59 կը կարդանք թէ առաջին վկան Ստեփաննոս քարկոծուած ժամանակը, “ ծունկի վրայ գալով բարձրաձայն աղաղակեց, “ Տէ՛ր՝ աս մեղքը մի՛ սեպեր ատոնց . և աս ըսելով ննջեց ” : Չը մեռաւ . “ քնացաւ ” : Պօղոս Առաքեալ Աորնթացւոց կը գրէ



(Ա կոր . ԺԵ . 6) Յիսուսը տեսնողներէն “ շատերը մինչև հիմա կան , և ոմանք ալ ննջեցին ” : Աւ 18 երորդ համարին մէջ կ'ըսէ , “ Թէ որ Վրիստոս յարութիւն առած չէ , նոյնպէս ալ Վրիստոսով ննջողները կորսուած են : Բայց հիմա Վրիստոս մեռելներէն յարութիւն առած է ննջեցելոց առջի պտուղը ” : Աւ . Պողոս Առաքեալ Թեսաղոնիկեցւոց եկեղեցիին կըզրէ , ( Ա Թես . Դ . 12-14 ) “ Ձեռք ուղեր եղբայրներ , որ չը գիտցող ըլլաք ննջեցեալներուն վրայով . որ չը տրտմիք ինչպէս ուրիշները՝ որոնք յոյս չունին : Քանզի թէ որ կը հաւատանք թէ Յիսուսը մեռաւ ու յարութիւն առաւ , անանկ ալ Աստուած ննջեցեալները Յիսուսով պիտի բերէ անոր հետ ” : Նաև կըզրէ թէ վերջին օրը ողջ մնացողները “ բնաւ ննջեցեալներէն առաջ պիտի չանցնին ” : Աւ Պետրոս Առաքեալ “ հայրերուն քնանալուն ” վրայով կըխօսի :  
 Երդ կը տեսնենք թէ Մուրբ Գիրքը գրողները՝ շատ անգամ մեռնելուն

տեղը քնանալ բառը գործածեցին ,  
 մանաւանդ աս քաղցր բառը սուր-  
 բերուն համար գործածուեցաւ : Եւ  
 յիրաւի քունը՝ կարճ մահուան կը  
 նմանի , և մահը՝ երկայն քունի կը  
 նմանի : Տէրը ըսաւ “Մեր բարեկա-  
 մը Ղազարոս կը քնանայ . բայց կ'եր-  
 թամ զանիկայ արթնցնելու” : Ար-  
 ջին օրը Բրիստոս պիտի գայ , և հո-  
 ղին մէջ քնացողներուն բոլորը պիտի  
 արթնցնէ : Մենք ալ անոր ձայնը  
 լսելով՝ մեր անկողինէն պիտի ելլենք :

3. Հոս յիշուած հրաշքը միայն հինգ  
 հոգի տեսաւ :

Տէրը արտօնութիւն չտուաւ՝ որ  
 ետեւէն գացող ժողովուրդը տունը  
 մտնելով աս հրաշքը տեսնեն : Թոյլ-  
 տուութիւն չըրաւ որ տունը եղած  
 բազմութիւնը աս հրաշքը տեսնեն ,  
 այլ ամէնքը դուրս հանեց : Իր աշա-  
 կերտներն ալ բոլորը հետը չառաւ ,  
 այլ միայն իրէք հատ ընտրեց . մա-  
 նուկին հօրն ու մօրը հետ անոր  
 պառկած սենեակը մտաւ : Հինգ

Հոգի էին , և եթէ սենեակի մը մէջ  
 ասկէց աւելի ըլլային , շատ ձայն և  
 խառնակութիւն ըլլալով՝ բնաւ մէկը  
 ի՛նչ ըլլալը չպիտի տեսներ , և ի՛նչ  
 ըսելը չպիտի լսէր : Հինգ վկայ կար .  
 և անոնք մեռած մանուկին բոլոր-  
 տիքը կայնելով՝ ամէն բան կրնային  
 տեսնել , և ամէն խօսք լսել : Հինգ  
 խելքերնին գլուխնին եղած վկաներ՝  
 աւելի աղէկ է , քան թէ խառնիճա-  
 դանճ բազմութիւն մը :

4. Յիսուսի վրայէն մեր յոյսը չը  
 կտորի :

Մեր վիճակը որչափ որ անյոյս ալ  
 երևնայ , տակաւին Քրիստոսի զօ-  
 րութեանը և ողորմութեանը ապա-  
 ւինելու ենք : Ե՛ն մեզ ամէն վիշտէ և  
 տառապանքէ՝ ամէն սկարութենէ և  
 մեղքէ կրնայ ազատել . մեր յոգնած  
 Հոգիին հանգստութիւն կրնայ տալ :  
 Բոլոր մեր զաւակներուն՝ և դրացի-  
 ներուն կեանք (մարմնաւոր և հոգևոր)  
 կրնայ տալ : Բոլորը կրնայ ապրեց-  
 ընել : Ուրեմն աչքերնիս անոր վերց-

ընելու ենք , և յոյսերնիս բնաւ կտրելու չենք : Աղէկ է որ մեր յոյսը կտրենք մեր զօրութենէն , բայց Քրիստոսի զօրութենէն բնաւ յոյս կտրելու չենք : Տէրը ժողովրդապետին ըսաւ , “Մի՛ վախնար , միայն հաւատա՛” .

5 . Ես կենդանացած մանուկին պարտքն ի՞նչ էր :

Ես աղջիկը յաւիտենականութեան գնաց . երթալու պատրաստ էր եթէ ո՛չ , չենք գիտեր : Բայց Տէրը զանիկայ ետ բերաւ , և անոր նորէն փորձութեան ժամանակ տրուեցաւ , և աղջիկը՝ դարձեալ կենդանանալով ապրեցաւ : Անոր կենդանութիւնը անմիջապէս կատարեալ եղաւ : Անիկայ անկողինէն ելլելով՝ պտտեցաւ , կերաւ , և ամէն գործ կրցաւ ընել : Եւ իր աչքերը աս աշխարհիս վրայ բացածին պէս՝ առաջին տեսած մարդը անշուշտ Քրիստոս էր , քանզի ա՛ն իր քովն էր . առաջին տեսած աչքը անորն էր . առաջին երեսը՝

անոր մարդասէր երեսն էր , առաջին լսած ձայնը՝ Վրիստոսի քաղցր ձայնն էր , և առաջին բռնած ձեռքը՝ Վրիստոսի ձեռքն էր : Ուրեմն աս ազջիկը զՎրիստոս և անոր ողորմութիւնը միշտ միտքը պահելու չէ՞ր : Օւնիկայ սիրելով՝ անոր հաւատալով՝ հնազանդելով միշտ հպատակելու չէ՞ր , և աշխատելու չէ՞ր որ զանիկայ ուրիշներուն ճանչցրնէ :

Երդեօք ետքը աս ազջիկը Պրիսկիզային պէս՝ կամ եկեղեցւոյն սպասաւոր Փիրէին պէս՝ կամ Տէրոջը համար շատ նեղութիւն քաշող սիրելի Պէրսիդէին պէս ջանացող և դործունեայ քրիստոնեայ մը եղա՞ւ թէ՛ չէ՛ , հիմա չնչք գիտեր , ետքը պիտի գիտնանք :

Արելի է որ աս ազջիկը միայն աս աշխարհիս համար ապրեցաւ , կարելի է Վրիստոս և անոր ողորմութիւնը մոռցաւ , և իր մեղքերուն մէջ մեռնելով՝ յաւիտենականութեան գնաց յանպատրաստից . և ինչքզինքը Վրիստոսէն հեռու՝ յաւիտե-

Նական խեղճութեան՝ և դժոխքի մէջ  
 գտաւ : Թէ որ անանկ ըլլար , Ափ-  
 սոս . Ափսո՛ս . բայց կըյուսանք թէ  
 ասանկ չեղաւ : Սակայն ձեր մէջը  
 տասուերկու տարեկան տղաքներ  
 չկա՞ն որ՝ Քրիստոս զանոնք ամէն  
 առտու իրենց քունէն այսինքն կարճ  
 մահէ մը կարթնցնէ , և տակաւին  
 անոնք զանիկայ չեն տեսներ , անոր  
 երեսը չեն նայիր , անոր ձայնին մտիկ  
 չեն ըներ , անոր ձեռքը չեն բռներ ,  
 սրտանց բան մը չեն ըսեր անոր , և  
 անոր փառքին համար չեն ապրիր ,  
 այլ զանիկայ կըմոռնան . և չեն ըն-  
 դունիր :

Սիրելիներս , աս վիճակը ձերն ալ  
 չէ՞ : Տէրը ամէն օր ձեզ կարթնցը-  
 նէ , կարճ մահէ մը կարթնցընէ :  
 Դուք անոր երեսը նայելու չէ՞ք , ձեր  
 սէրը անոր տալու չէ՞ք : Պարտքեր-  
 նիդ չէ՞ որ անոր զաւակը ըլլաք , և  
 անոր կամքը կատարէք :

Նկեղեցիներուն խօսք մը ունիմ .  
 մէկ ժամանակ մը՝ դուք ամէնդ մեղ-  
 քի մէջ մեռած էիք , և եթէ Քրիս-

տոս ձեզ արթնցրնելով ապրեցուց ,  
 և հոգիներնուդ կեանք տուաւ . դուք  
 ելելու էք , պտրտելու էք , և ձեր  
 առողջ ու կենդանի ըլլալը աշխարհին  
 ցուցունելու էք : Աշխարհը ձեզ մե-  
 ռածի պէս պաղ՝ անկենդան թող չը-  
 տեննէ , այլ ձեզ կենդանի՝ զօրաւոր՝  
 աշխատասէր և ջերմեռանդ քրիս-  
 տոնեաներ թող տեննէ :

Եթէ աս աղջկան ազգականները  
 զանիկայ պառկած՝ անշունչ՝ և մար-  
 մինը պաղ տեննէին , չի՞ պիտի ը-  
 սէին՝ թէ աղջիկը կենդանի չէ : Պի-  
 տի չըսէի՞ն թէ՝ Քրիստոս անոր կե-  
 անք տուած չէ , ամէնը սուտ է , ի՞նչ  
 տարբերութիւն կայ ասոր և մեռել-  
 ներուն մէջ : Մնանկ ալ Եզրայրներս,  
 թէ որ աշխարհք ձեզ ուրիշ մարդոց  
 պէս տեննէ պիտի հաւատա՞յ թէ  
 դուք կենդանացած էք , մահէն դէ-  
 պի կեանք փոխուած էք : Արհաւա-  
 տա՞յ թէ նոր մարդ եղաք . ոչ . չի-  
 հաւատար . ինտո՞ր կրնայ հաւա-  
 տալ : Արեմն կեանք ունեցողներուն  
 պէս եզիք . անոնց վարքն ու բարքը

ունեցէք : Աեանք ունենալնիդ յայտ-  
 նի թող ըլլայ . Քրիստոս ամենուղ  
 “Տալիթա կումի” կըսէ , որ թարգ-  
 մանուկով՝ ելի՛ր ըսել է : Ես մեռած  
 աղջիկը անոր հրամանին հնազան-  
 դեցաւ , ու դուք չէ՞ք հնազանդիր :  
 “Արթնցի՛ր դուն որ կըքնանաս , և  
 կանգնէ՛ մեռելներէն , և Քրիստոս  
 քեզի լոյս պիտի տայ” :



## ՄԵՔՐՈՂ, ՅԻՍՈՒՍԸ, ԵՒ ՄԵՔՐ- ՐՈՒՈՂ, ԲՈՐՈՏԸ :

“ Առաջին, մարտի 4 ” : Մարկ . Կ . 41 :

Ես երկու խօսքը՝ Քրիստոս բորոտին ըսաւ . աս երկու խօսքը անոր սրտին ի՛նչ մեծ մխիթարութիւն տալու էր : Բորոտութեան ախտը՝ շատ մեծ ախտ մըն էր . խիստ պիղծ և զգուելի հիւանդութիւն մըն էր : Ես ախտը՝ տարափոխիկ ախտ մը ըլլալով՝ շատ դիւրութեամբ մէկէն ուրիշին փոխուելով շուտ մը կը տարածուէր : Մէկէն ուրիշին սաստկութեամբ կը փակչէր : Ենոր համար բորոտը միշտ Եստուծոյ ժողովուրդէն զատուելու էր, երկրպագութեան տեղը չէր կրնար երթալ , իրեն արգիլուած էր . մարդոց հետ չէր կրնար խօսակցիլ , իր ընտանեացը հետ չէր կրնար բնակիլ , անոնց հետ չէր կրնար ուտել , չէր կրնար նստիլ , այլ

բոլորովին զատ՝ քաղաքէն դուրս  
դաշտին մէջ բնակելու էր : Աւ եթէ  
տեսնէր որ մէկը իր քովը կուգար ,  
աղաղակելու էր «Իղծ եմ՝ պիղծ ,  
որպէս զի մէկը իր քովը չը գայ , իրեն  
չը մօտենայ՝ չը դպչի :

Աս ախտը՝ Աստուծոյ բարկութե-  
ան նշանը կը սեպուէր : Անոր բնաւ  
դեղ չէր տրուեր . և վերցունելու հա-  
մար ճամբայ չէր փնտռուեր . բժիշկ  
չէին կանչեր : Թէ որ Աստուած իր  
ողորմութեամբը չը վերցունէր , կա-  
մաց կամաց մարմինը կը փճացու-  
նէր : Չեռքերուն և ոտքերուն յօ-  
դուածները մէկգմէկէ կը զատուէին ,  
մատուրները և ուրիշ անդամները  
փտտելով կը թափէին : Աւ աս ախ-  
տէն բռնուողը՝ իր մարմնոյն կտոր  
կտոր ըլլալով մեռնիլը իր աչքովը կը  
տեսնէր : Աւ աս խեղճ վիճակին մէջ  
եղողին ականջին ո՛րչափ քաղցր  
կուգայ՝ « Աուզեմ մաքրուէ » խօսքը :

Բնաբանին մէջ յիշուած բորոտը՝  
անշուշտ Բրիստոսի հրաշքները  
լսած էր . անոր մարդասիրութիւնը՝

զարմանալի գործքերը և Աստուծոյ յաստուկ եղած զօրութիւնը լսած էր : Եւ անոր գալով՝ անոր առջևը ինկաւ և երկրպագութիւն ընելով ըսաւ .  
 “Տէ՛ր թէ որ ուզես , կրնաս զիս մաքրել” : Տէրն մեր Յիսուս անկէ չը քաշուեցաւ , չը հեռացաւ ու երեսը չը դարձուց . այլ աս զգուելի պիղծին մօտենալով՝ և “ձեռքը երկնցնելով՝ “Ա՛ուզեմ , մաքրուէ” ըսելով՝ անոր դպաւ . և անմիջապէս անոր բորոտութիւնը մաքրուեցաւ” : Եւ աս խեղճ՝ անօգնական բորոտը՝ “Աուզեմ մաքրուէ” խօսքը լսած ժամանակը ո՛րչափ զուարթութիւն զգաց իր սիրտը :

Հիմա մաքրող Յիսուսը և մաքրուողը մեկտեղ են : Ա՛էկը ըսած էր՝ “Թէ որ ուզես” . և միւսը ըսաւ՝ “Ա՛ուզեմ” . այսինքն թէ որ դուն կ’ուզես , ես ալ աւելի կ’ուզեմ . թէ որ դուն մաքրուելու պատրաստ ես , ես աւելի պատրաստ եմ մաքրելու : “Ա՛ուզեմ , մաքրուէ” ըսաւ Տէրը , “և անմիջապէս անոր բորոտութիւնը

նը մաքրուեցաւ” : Աստուած ըսաւ  
 “Թող լոյս ըլլայ, և լոյս եղաւ” :  
 Սիրելիներս, մեզքը՝ բորոտութեան  
 ախտէն աւելի պիղծ և զգուելի ախտ  
 մըն է : Այլ մեր բոլոր ցեզը աս ախ-  
 տէն բռնուած է : Անոնց սրտերուն  
 մէջ շատ խորունկ բոյն դրած է . և  
 դուրս զարնելով՝ կեանքերնուն՝ վար-  
 քերնուն և խօսակցութիւններնուն  
 մէջ կ'երևնայ . պարկեշտութեան և  
 համեստութեան բոլոր յօդուածները  
 կը քակէ . բոլոր ջիղերը կը փտտեց-  
 նէ . մարդը՝ Աստուծոյ ժողովուրդէն  
 դուրս կ'ընէ . և զանիկայ երկնից բո-  
 լոր սուրբերուն և մաքուրներուն ըն-  
 կերակցութենէն կը հեռացնէ : Այլ  
 բոլոր հոգին յափշտակելով՝ յաւի-  
 տենական մահուան կը մատնէ : Այլ  
 մէկը՝ որուն հոգին Վառնուկին ա-  
 թիւնովը լուացուած և մաքրուած չէ,  
 չի կրնար երկինքը մտնել : Ազբայր-  
 ներս, բոլոր աս վիճակիս մէջն ենք .  
 մեղաւոր ենք . և աս պիղծ ախտովը  
 մեռնելու վտանգին մէջն ենք . ու-  
 րեմն ի՞նչ ընելու ենք որ՝ մեզքէն մա-

քրուինք և փրկուինք : Մեր բնաբանին մէջ յիշուած բորոտը ի՞նչ ըրաւ . ան խեղճ մարդը ազատելու համար՝

### 1. Քրիստոսի գնաց :

Անոր առաջին ըրած բանը՝ աս էր . անոր բոլոր յոյսը՝ Քրիստոսի վրայ էր . իր սիրտը անոր ապաւինած էր . և իր աչքերն ալ անոր վերցուց : Քրիստոսի մօրը կամ անոր աշակերտներուն չը գնաց , այլ շիտակ Քրիստոսի գնաց : Թէ որ անոնց մօտենար , անոնք իրմէ պիտի փախչէին . անոր բնաւ չը պիտի օգնէին : Քրիստոսէն ՚ի զատ մէկը չէր կրնար անոր օգնել :

Եւ մենք ալ՝ մեղքէ և յաւիտենական պղծութենէ ազատելու համար Քրիստոսի երթալու ենք , անոր նայելու ենք , անոր աղաղակելու ենք : Մեր յոյսը անկէ է . բոլոր օգնութիւննիս անկէ է . անկէ ՚ի զատ փրկիչ չունինք : Մեր աղօթքները և ծովերը մեզ չեն մաքրեր . եկեղեցւոյ ծէսերն ու արարողութիւնները կա-

տարեւնիս մեղ չի մաքրեր . սուրբերը և հրեշտակները անդամ՝ մեղ չեն կրնար մաքրել : Մենք որչափ որ լուացուինք ալ , մեղքին անմաքրութեանը և պղծութեանը մէջ պիտի մեռնինք : Քրիստոսի արիւնէն ՚ի գատ բան մը մեզքէ չը կրնար մաքրել : Բայց հազար անգամ հազար գոհութիւն ըլլայ Տէրոջը՝ որ Յիսուսի արիւնը ամէն մեզքէ կրնայ մաքրել . և հոգւոյն ամէն բիծերը կրնայ սրբել :  
 Աս բորտը՝ չէ թէ միայն Քրիստոսի եկաւ , այլ

2 . Հոն անոր երկրպագութիւն ըրաւ :

Քրիստոսի եղած տեղը եկած ատենը , ծունկի վրայ գալով՝ անոր երկրպագութիւն ըրաւ : Արեսը մինչև գետինը խոնարհեցնելով՝ Ավ Տէր աղաղակեց ու երկրպագութիւն ըրաւ : Չէ թէ միայն մարմինով՝ այլ հոգիով երկրպագութիւն ըրաւ : Շատերը Քրիստոսի եղած տեղը կուզան , անոր քարոզուած տեղը կը

ժողովուն , բայց Վրիստոսի երկրպագութիւն չեն ըներ , ինքզինքնին անոր չեն տար , սիրտերնին ծունկ չը չոքեր : Անոր երկրպագութիւն ընողներուն հետ կը գտնուին , անոնց հետ կ'ելեն կը նստին . բայց իրենք հոգիով և ճշմարտութիւնով երկրպագութիւն չեն ըներ : Ուրեմն անոնց հոգւոյն օգտակա՞ր կ'ըլլայ . անոնք կը փրկուի՞ն : Ա՛չ . եկածնուն պէս կ'երթան , այսինքն չը մաքրուած՝ չը սրբուած՝ և չը ներուած կ'երթան :

### 3. Աս բորոտը Վրիստոսի աղօթքըրաւ :

Վրիստոսի մօտեցած ժամանակը , աչքը անոր վրայ տնկեց , անոր խօսեցաւ , իր վիճակը անոր յայտնեց , և անոր աղաչելով ըսաւ , “ Թէ որ ուզես , կրնաս զիս մաքրել ” : Աթէ աս բորոտը Վրիստոսի չընայէր , թէ որ անոր բան մը չըսէր , թէ որ անոր օգնութիւնը չըխնդրէր , և ինքզինքը անոր ոգորմութեանը և կամ-

քին չըձգէր, կը մաքրուէ՞ի, կ'ա-  
րողջանա՞ր : Ո՛չ. անշուշտ չէր մաք-  
րուեր : Եւ դուք Եղբայրներս, որ-  
չափ որ Քրիստոսի մօտենաք, թէ  
որ անոր բան մը չըսէք, ձեր վիճակը  
անոր չը յայտնէք, և անկէ օգնու-  
թիւն չը խնդրէք, փրկութիւն չը  
գտնելով ձեր մեղքերուն մէջ պիտի  
մեռնիք : Սրտանց աղօթելու էք ա-  
նոր . հիմա քանի որ անոր առջևն  
էք՝ անոր խօսեցէք . իր ներկայու-  
թենէն չըզացած՝ անոր օգնութիւնը  
խնդրեցէք և ընդունեցէք :

#### 4. Ես բորտը Քրիստոսի բերողը՝ հաւատքն էր :

Թէ որ հաւատք չունենար, Քրիս-  
տոսի չէր երթար և անոր չէր աղա-  
ղակէր, ու մարմնոյն առողջութիւն  
չէր գտներ : Իր հաւատքը՝ չը մաք-  
րեց զանիկայ, բայց մաքրող Քրիս-  
տոսի բերաւ զինքը : “Թէ որ ուզես,  
կրնաս” ըսաւ : Ես՝ իր մեծ հաւատ-  
քին նշանն էր : Ենանկ հաւատք էր՝  
որ Քրիստոսի պատիւ և փառք կը



բերէր : Անանկ հաւատք մըն էր՝ որ փրկութիւն գտնելու համար Քրիստոսի կամքին նայելու կարօտ ըլլալը խոստովանիլ կուտար : Ամէն մեղաւոր ասանկ թող գայ : Մենք ան բորոտին պէս Քրիստոսի փրկելու կարող ըլլալը՝ սրտանց զգալու ենք : Մենք ան բորոտին պէս Քրիստոսէ բան մը պահանջելու իրաւունք չունինք , այլ ամէն բան անոր կամքէն կախուած ըլլալը սրտանց զգալու ենք : Ան բորոտին պէս Յիսուսի ոտքը իյնալով՝ ինքզինքնիս անոր կամքին և ողորմութեանը յանձնելու ենք :

Ան բորոտը իր մարմնոյն առողջութիւնը կը փնտոէր , բայց Քրիստոս աշխարհք չեկաւ՝ որ մարմինը փրկէ . անոր համար շատ յարմար էր ըսել՝ “Թէ որ ուզես” : Բայց գիտենք որ՝ Տէրը հոգինիս փրկելու համար եկաւ . աս անոր յատուկ գործն է : Ուրեմն եթէ մենք ըսենք՝ “Թէ որ ուզես” , մեր հաւատքին տկարութիւնը և պակասութիւնը կը

ցուցնէ . քանզի թէ որ մենք ուզենք , անոր ուղելուն բնաւ կասկած չկայ : Ուղելուն պակասութիւնը իրենքն է , այլ մերն է :

Եղբայրներս , հաւատք ունի՞ք : Ձեր ուզած փրկութիւնը գտնելու փափաք ունի՞ք : Ձեր վիճակը Քրիստոսի յայտնեցի՞ք : Ժողովատեղին նստած ատեննիդ , անոր բան մը ըսի՞ք : Ենկէ բան մը խնդրեցի՞ք : Են մեծ մաքրողը ձեր մէջն է , ձեզմէ մաքրուիլ ուղող մը չկա՞յ : Գիտեմ որ շատերդ մաքրուելու կարօտ էք , բայց մէկ ուղող մը չկա՞յ : Ո՛վ պիղծ սրտեր՝ ո՛վ անմաքուրներ՝ ո՛վ Քրիստոսի չգացող և անոր չաղաղակողներ՝ անկէ օգնութիւն չառնող և անոր փրկութիւնը չգործածողներ՝ թէ որ աս վիճակին մէջ մեռնիք , անշուշտ յաւիտենական խեղճութեան մէջ պիտի գտնուիք , յաւիտեանս անմաքուր պիտի ըլլաք , և մաքուրներէն ու սուրբերէն հեռու պիտի մնաք յաւիտեանս :

## ԳՆՆՆԵՍԱՐՆԹՅՈՑ ԻՆԼԱՑԻ ՎՆՐՄՈՒՆԻՐ :

“ Ու մէկաւ կողմը անցնելով, Գննեսարէթի երկիրը հասան , և նաւը տեղաւորեցին : Ու երբոր նաւէն ելան՝ ան տեղի մարդիկը իսկոյն ճանչցան զանիկայ . և ասդին անդին վազելով բոլոր շրջակայ տեղուանքը , սկսան մահիճներով հիւանդները բերել՝ ուր որ կը լսէին թէ հոն է : Եւ ուր որ կը մտնէր՝ գեղերը կամ քաղաքները կամ ագարակները՝ հրապարակներուն մէջ կը դնէին հիւանդները ու կ'աղաչէին իրեն՝ որ գոնէ իր հանդերձին քղանցքին դաչէն . և որոնք որ դպան , բժշկուեցան ” : Սարկ . Գ . 53-56 :

**Հոս քանի մը բան ունինք քննելիք :**

**1 . Տէրն մեր միշտ բարիք ընելով կը պտրտէր :**

Քրիստոս չէր սպասեր որ մարդիկ իրեն երթան , այլ ինքը անոնց կ'երթար : Աորսուածները փնտռելու և գտնելու համար եկաւ , և քաղաքէ քաղաք երթալով՝ երկնից թագաւորութեան աւետիսը կը քարոզէր : Յովսեպոսէն կը սորվինք թէ՛ Գալի-

լեայի մէջ երկու հարիւրէն աւելի քաղաքներ և գիւղեր կար . և Աւետարանէն կը սորվենք թէ՛ « Յիսուս բոլոր քաղաքները պտըտեցաւ » : Չէ թէ միայն մեծ քաղաքները , այլ ամենափոքր գիւղերը և ամենախեղճ տունները այցելութիւն ըրաւ : Աւ ամէն ուր որ գնաց , իր ոտքին օրհնեալ նշանները թողուց : Ոչ թէ պատերազմող թագաւորի մը պէս իր անցած տեղերէն աւերակ գիւղեր և վառած քաղաքներ կը ձգէր , այլ բոլոր լեռնային և դաշտային տեղերէն որ Քրիստոս կ'անցնէր լոյս՝ կեանք՝ ուրախութիւն և երջանկութիւն լեցուած ըլլալով , գետակի մը բոլորտիքն եղած մարգագետինի մը կը նմանէր՝ կամ ուռի ծառերու որք հեռուէն կը տեսնուին :

2. Քրիստոս ճանչնալը՝ մեծ շնորհք և ողորմութիւն է :

Գեննեսարեթցիք՝ ի՞նչ կերպով ճանչցան մեր Տէրը չենք գիտեր :

Եսկէց առաջ հոն երթալը յիշուած  
 չէ : Բայց թէ՛ Ասփառնայումի մէջ  
 և թէ Բեթսայիդայի մէջ շատ քա-  
 ըրողեր և հրաշքներ ըրեր էր . և Վեն-  
 նեսարէթ ա՛ն երկու քաղաքին մէջ-  
 տեղն ըլլալով՝ կարելի է ժողովուրդէն  
 ոմանք զանիկայ տեսնելով ճանչցան ,  
 կամ համբաւը լսելով գիտցան : Աս-  
 րելի է իրենց ազգականաց առողջու-  
 թեան լուրը առած էին :

Բայց ինչպէս որ է , կը կարդանք  
 թէ՛ զանիկայ ճանչցան . և ճանչ-  
 նալնին անոնց մեծ ողորմութիւն և  
 շնորհք եղաւ : Արանի՛ անոնց որ՝  
 զանիկայ՝ անոր սուրբ անունը՝ անոր  
 բնութիւնը՝ սէրը՝ և մեղ փրկելու կա-  
 ըրող և պատրաստ ըլլալը գիտցողնե-  
 րուն : Մէկը ինտո՞ր կրնայ հաւատալ  
 զանիկայ չը ճանչնալով . և չը հա-  
 լատացողը՝ ի՞նչպէս կրնայ աղաչանք  
 ընել կամ աչքերը վերցնել : Արանի  
 անոնց որ զանիկայ գիտնալով՝ անոր  
 կ'երթան և կ'ապաւինին ու կը փա-  
 ռաւորեն :

3. Վրիստոսի ճանչցողները՝ զանկայ ուրիշներուն ճանչցնելու աշխատելու են :

Ար կարդանք թէ՛ Վեննեսարէթցիք իրենց գործերը ձգեցին որ իրենց հայրենակիցները և ազգականները ու գրացիները Վրիստոսի բերեն : Հեռու և մօտ թաղերը լուր խրկեցին որ առողջութեան կարօտ եղողները Վրիստոսի եղած տեղը հրամեն : Ար կարդանք թէ՛ « վազեցին », այսինքն կարելի եղածին չափ արտորացին : Ոմանք քաղցր խօսքերով քաջալերեցին որ Վրիստոսի գան . ոմանց իրենց ձեռքերովը օգնեցին որ դան . ուրիշները իրենց ուսերուն վրայ առնելով բերին . և մահուան մօտ եղողները անկողինով՝ մահիճով կամ կառքով վերցնելով բերին : Եմէն կողմերէն՝ ամէն ճամբայէ՛ փողոցէ և արտերէ ահա՛ կուգան : Եւ կոյրերուն՝ համրերուն՝ կաղերուն՝ խուկերուն՝ թոքախտներուն՝ ջրղողներուն և ամէն տեսակ

ախտեր ունեցողներուն ամէն կողմերէ անոր բերուելնին տեսնելը ի՞նչ զարմանալի տեսարան մը եղած ըլլալու է :

Բոլոր Քրիստոս ճանչցողները ասանկ ըլլալու են , և բոլոր սրտով ջանալու են զանհիկայ չը գիտցողներուն գիտցնելու : Աւր որ սուրբ Աւետարանը կը քարոզուի՝ պարտաւոր ենք մարդիկ հոն հրաւիրելու : Գործունեայ քրիստոնեայ մը աս կերպով , այսինքն մարդիկ Քրիստոսի հրաւիրելով՝ ամբողջ թաղի մը մեծ օրհնութեան պատճառ կրնայ ըլլալ :

Ամերիկայի մէջ՝ քաղաքի մը եկեղեցւոյն հովիւը հիւանդ ըլլալով՝ իրեն բարեկամ քարոզիչէ մը խնդրեց որ հոն իրեք չորս օր մնալով՝ օրը երկու՝ իրեք անգամ քարոզէ , քանզի հոգևոր արթնութիւն կար . ան ալ հոն մնալով քարոզեց : Օր մը ճիշտ աս խօսքերը բնաբան դնելով՝ ժողովուրդին ըսաւ թէ՛ Ան օրը կարելի է Գեննեսարէթ տղաքներ կային որ քանի մը մղոն վաղեցին որ մարդոց լուր

տան : Ա երջը հարցուց թէ՛ Քրիստոս մեր մէջն է թէ՛ չէ : Աթէ մեր մէջը չէ , ինչո՞ւ օրը երկու իրեք անգամ հոս կը ժողովուինք . հոս գալէն ի՞նչ օգուտ կըլլայ . բնաւ օգուտ մը չըներ : Սակայն եթէ Քրիստոս հոս է , ինչո՞ւ Վեննեսարէթցւոց պէս չընենք , ինչո՞ւ մեր դրացիներուն լուր չետանք : Շատ դրացիներ ունիք որ Քրիստոսի օգնութեանը կարօտ են . համբեր կան , կոյրեր՝ կաղեր՝ խուլեր՝ յանցանքի մէջ մեռածներ կան . և ինչո՞ւ չաշխատիք որ Վեննեսարէթցւոց պէս փրկուին :

Ժողովուրդին մէջ տասուերկու կամ տասուիրեք տարեկան տղայ մը կար , որ տարի մը առաջ եկեղեցի ընդունուած էր : Աս տղան ուշադրութեամբ մտիկ կընէր , և խորունկ մտածելով՝ գնաց իբ հօրը կառքը առաւ , և քանի մը կաղեր ու հաշմանդամներ նաև երկու իրեք խիստ անառակ տղաքներ բերաւ ժողովքի : Բարոզեչը հոն չը մնալով՝ միւս օրը գնաց անկէ : Բայց ետքը



լրագիրները գրեցին թէ՛ հոն շատ մարդիկ դարձի եկան . և մէկ օրուան մէջ 65 մարդ եկեղեցին ընդունուեցան : Արդեօք աս յիշեալ տղուն բերածները դարձի եկա՞ն եթէ ո՛չ չենք գիտեր : Բայց աս տղան խելացութեամբ չըվարուեցա՞ւ . վայելուչ եղածը չըրա՞ւ :

Ուրեմն եղբայրներս , դուք ալ գացէք ասանկ ըրէք : Եթէ սրտերնիդ կակուղնալով՝ աչքերնիդ բացուեցաւ , եթէ Սուրբ Հոգին առիք , և Քրիստոս գտաք , ուրիշներուն ալ իմացուցէք . զանոնք քաղցր խօսքերով հրաւիրեցէք՝ որ գան . զանազան կերպերով օղնեցէք անոնց՝ որ ժողովքի գան .

4. Քրիստոս տեղ մը երթալուն պէս՝ զինքը ճանչցողները զանիկայ աշխատցընելու են :

Գեննեսարեթցիք զՔրիստոս շատ աշխատցուցին . անոր ձեռքը շատ գործ յանցնեցին : Տէրը մէկ տեղ մը շատ չիկենար . և կարելի է ան երկիրը

ալ չիպիտի դառնայ : Արդ ան հռչակաւոր անձը՝ ան աչքեր բացողը՝ դւեր հանողը՝ ամեն կերպ ախտեր բժշկող անձը իրենց մէջն էր . և հունձքի ժամանակին կրնամանէր որ պարապ անցընելու չէին : Ուստի խելացութեամբ բոլոր զբաղմունքնին ձգելով՝ բոլոր ժամանակնին և զօրութիւննին աս մեծ գործին համար վատնեցին :

Դուք ալ եղբայրներ , դուք ալ Քրիստոսի ձեռքը շատ դործ դնելու էք : Ձեր ծանօթներուն մէջ հիւանդ մը՝ բժշկութեան կարօտ մէկը չկա՞յ : Կաղ մը չկա՞յ որ ճշմարտութեան ճամբան չքալեր . խուլ մը չկա՞յ որ Աստուծոյ ձայնը չիլսեր . կոյրեր չկա՞ն որք Քրիստոսի արժէքը բնաւ չեն տեսներ : Դրացիներ՝ ազգականներ՝ հայրենակիցներ չունի՞ք որ Քրիստոսի օգնութեանը կարօտ են : Եթէ ձեր մէջը կարօտ չկայ , ինչո՞ւ Քրիստոս ձեր մէջը մնայ և քարոզուի : Սակայն եթէ կայ , զանոնք ամէնը Քրիստոսի տանելով՝ զանոնք մէկիկ մէկիկ Քրիստոսի ոտքը ձգե-

ցէք , անոնց համար աղօթք ըրէք ,  
Վրիստոսի աղաչեցէք : Չանիկայ  
աշխատցուցէք , անոր ձեռքը շատ  
գործ դրէք որ ձեր մէջը մընայ , և  
ձեզմէ զատուելով չերթայ :

Ծ . Վրիստոս Տէրն մեր ուր որ ըն-  
դունուի , հոն մեծ ուրախութիւն  
և ցնծութիւն կըլլայ :

Գեննեսարէթ քաղաքը ո՛րչափ  
ուրախութիւն և խնդութիւն եղած  
ըլլալու էր : Վրիստոսի գացողները  
բոլորն ալ՝ բժշկութիւն գտան : Հա-  
ւանական է յիսուն՝ հարիւր կամ  
հարիւր յիսուն անձինք նոյն օրը  
բժշկութիւն գտան . և աս բժշկու-  
թիւնը ամբողջ և կատարեալ էր :  
Առանց ոտքի տարուողը՝ երկու ոտ-  
քով ետ եկաւ , առանց աչքի դացողը՝  
երկու աչքով ետ եկաւ . հոգեվարք  
տարուողները , կատարեալ՝ առողջ և  
ղօրաւոր ետ դարձան . առանց ձեռ-  
քի դացողը՝ նոր ձեռքով դարձաւ .  
համր գացողները՝ Աստուծոյ փառքը  
բարձր ձայնով երգելով ետ դարձան :

Են երկիրը ասկէց առաջ այսչափ ուրախութիւն եղած չէր : Աուրութիւն՝ տենդ՝ ջրգողութիւն՝ թոքախտութիւն՝ դիւահարութիւն՝ լուսնոտութիւն՝ անդամալոյծ՝ կաղ և ասանկ ուրիշ հիւանդութիւններ չը մնաց . մէկ օրուան մէջ վերջացաւ : Ի՛նչ ամենողորմ հրաշքներ . ի՛նչ հիանալի բժշկութիւններ : Հիւանդներուն բոլորը՝ հիւանդութիւննին որչափ որ սաստիկ՝ հինցած և մարդոց անբժշկելի և անյոյս սեպածն ալ էր նէ , բոլորը բժշկուեցան : Հիւանդ մը պարապ չը դարձաւ : Աւաս հունձքի ժամանակը՝ եթէ Գեննեսարեթ հիւանդ մը բժշկուելու համար Քրիստոսի չերթար , միւս օրը պիտի ողբար և ըսէր , Եւա՛ղ , « Հունձքի ատենը անցաւ , ամառը վերջացաւ , իսկ ես չը բժշկուեցայ » : Երեմ . Բ . 20 :

Սակայն Քրիստոս մարմիննիս բժշկելու համար չեկաւ . իր մեծ գործը ան չէր . անիկայ յատուկ մեր հոգիներուն համար եկաւ . իր մեծ

գործը՝ աս էր : Հոգին փրկելը՝ մեծ  
 շնորհք մընէ , և յաւիտենական ու-  
 րախութեան պատճառ կ'ըլլայ : Ար-  
 կարդանք թէ՛ Սամարիայի մէկ քա-  
 ղաքը՝ Բրիստոս քարոզուելով , թէ՛  
 էրիկ մարդիկ և թէ կնիկները մկր-  
 տուելով՝ « ան քաղաքին մէջ մեծ ու-  
 րախութիւն եղաւ » : Գործ . Բ . 7 :  
 Եւ թէ որ ամէն քաղաքի բնակիչնե-  
 րը՝ Բրիստոսը և անոր փրկութիւնը  
 ընդունին , բոլոր քաղաքին մէջ և  
 ամէն տունն ա՛յնչափ ուրախութիւն  
 կ'ըլլայ որ՝ ան քաղաքը հաստատու-  
 ելէն՝ ՚ի վեր անանկ եղած չէ : Ծու-  
 յութիւն՝ աշխարհասիրութիւն՝ գի-  
 նովութիւն՝ հպարտութիւն՝ անիրա-  
 ւութիւն՝ նախանձութիւն՝ վրէժ-  
 խնդրութիւն՝ խարդախութիւն՝ զր-  
 կանք՝ կռիւ և ամէն սատանայական  
 գործ կը վերջանայ , և անոնց տեղը  
 ամէն աղէկ բան՝ ուրախութիւն՝ խա-  
 ղաղութիւն՝ սէր՝ վստահութիւն՝  
 ցնծութիւն և երջանկութիւն կ'ըլ-  
 լայ : Ան քաղաքներուն բնակիչները  
 չը պատմուելիք ուրախութեամբ

պիտի ուրախանան . և երկնից հրեշ-  
տակներուն մէջն ալ մեծ ուրախու-  
թիւն կ'ըլլայ :

6 . Գեներեսարեթցիք Քրիստոսի  
մարմնաւոր և ժամանակաւոր  
օրհնութիւնները առին , բայց  
արդեօք հոգւոր պարզւելներ ա-  
ռի՞ն եթէ ոչ յիշուած չէ :

Նոր ձեռք կամ ոտք առնողները՝  
նոր սիրտ ալ կրնային առնել : Անոնց  
մարմնաւոր աչքերը բացուեցան , և  
մտքին աչքերն ալ կրնային բացուիլ :  
Բոլորը նոր մարդ կրնային ըլլալ .  
բոլորը յաւիտենական կեանք կրնա-  
յին ժառանգել : Բայց Քրիստոսի  
աս մարմինին վերաբերեալ օրհնու-  
թիւններն ընդունողները՝ կարելի է  
անոր հոգւոր օրհնութիւնները ա-  
նարդեցին : Իրենց անձերուն բժշ-  
կութեանը համար՝ ամէն կողմերէն  
գալերնին կը կարդանք . բայց իրենց  
հոգիներուն փրկութեանը համար  
փափաք ունենալնին յիշուած չէ :  
Ամէնը կրնային փրկուիլ . յաւիտե-

Նական կուրութենէ՝ յաւիտենական  
խեղճութենէ կրնային ազատիլ, և կը  
յուսանք թէ ոմանք ազատեցան :  
Բայց կարելի է որ մեղքի մէջ մեռան  
շատերը . և նոր ձեռքով՝ նոր ոտքով  
կամ նոր աչքով դժոխքը զացին .  
աւա՛ղ, երանի՛ թէ խելացութեամբ  
վարուէին :

Սիրելիներս , մենք ալ կրնանք  
փրկուիլ : Ըն մեծ փրկիչը ձեր ժո-  
ղովքներուն մէջը չէ՞ . ձեր մէջը չէ  
նէ , ինչո՞ւ մէկտեղ կը ժողվուիք :  
Բայց իրաւ է որ ան պատրաստ է :  
Սրտին աչքերը քացողը՝ մեռած հո-  
գին ազատողը՝ ամէն պղծութենէ  
մաքրողը՝ Սատանային ձեռքէն ազա-  
տողը , մեղքերդ քեզի ներուած ըլ-  
լան ըսողը՝ ձեր մէջը չեկա՞ւ . ձեր  
մէջը չէ՞ : Ուրեմն ինչո՞ւ զանիկայ չը  
գործածենք . ինչո՞ւ իր ձեռքը շատ  
գործ չը դնենք , ինչո՞ւ իրեն մօտե-  
նալով՝ հանդերձին քղանցքին չը  
դպչինք . մեր հոգիներուն յաւիտե-  
նական փրկութիւն ինչո՞ւ չստա-  
նանք : ()րէ օր անոր ձեռքէն մարմ-

նաւոր բարիքներ կ'առնենք : Ես լոյս տուող արևը՝ անորն է . աս մեր շնչած օդը անորն է . կերած հացերնիս՝ և խմած ջրերնիս՝ կարդացածնիս Սուրբ Գիրքը՝ և մեր ունեցած բոլոր զօրութիւնը՝ առողջութիւնը՝ մխիթարութիւնը և շնորհքը՝ իր ամենաբարի ձեռքէն կուգայ : Տէրը կ'ուզէ ասոնցմէ անհունապէս աւելի ազէկ բաներ տալ մեզի : Աւրեմն անոր ամենալաւ օրհնութիւնները ընդունելով ինչո՞ւ յաւիտեանս չապրինք :

Եստուած մեզի խելք տայ որ խելացութեամբ վարուինք : Եստուած մեզի իր Հօգին տայ՝ որ հոգևոր մարդիկներ ըլլանք : Եստուած մեզի օգնէ որ Բրիստոսը ընդունելով՝ իր փրկութիւնը գործածենք . որպէս զի չըլլայ թէ վերջապէս ըսենք՝ “Հունձքի ատենը անցաւ , ամառը վերջացաւ , իսկ մենք չը փրկուեցանք” : Երեմ . Բ . 20 :



## ԱՆԲՍՏԻՆ ԾՆՈՒՆԴ :

“ Կաւն մի՛ զարմանար որ քեզի ըսի, Պէտք է ձեզի նորէն ծընանիլ ” :  
Յօդ. 4 . 7 :

Նիկողեմոս ինչու՞ զարմացաւ աս խօսքին : Սաղմոսին մէջ կարդացած չէ՞ր ( Ծա . 10 ) “ Ո՛վ Աստուած իմ մէջս մաքուր սիրտ ստեղծէ , և ուղիղ հոգի մը իմ ներսիդիս նորոգէ ” : Աւ մարգարէութեանց մէջ կարդացած չէ՞ր , “ Աւ ձեզի նոր սիրտ պիտի տամ , ու ձեր ներսիդին նոր հոգի պիտի դնեմ , և ձեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ , ու ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ ” :  
Եղեկ . Լ . Օ . 26 :

Անշուշտ Նիկողեմոս աս կամ ասոր նման բաներ ամէն օր կրկարդար , բայց մտադրութիւն չէր ըներ : Ան՝ փարիսեցի էր , և փարիսեցիք սրտին չընայելով՝ միայն դուրսէն երևցած արարողութեան՝ ու ծէսերու և երկրպագութեան սովորութիւն-

ներու ճշդութիւն կրպահէին : Անկ  
 հաւատք մը՝ կրօնք մը՝ որ սրտին չը  
 նայելով մեզ հպարտ՝ աշխարհային՝  
 չար՝ և Աստուծոյ թագաւորութենէն  
 հեռու կրպահէ , ան հաւատքը՝ ան  
 կրօնքը ինչի՞ կուգայ . թէ և մարդոց  
 ընդունելի ալ ըլլայ , բայց բանի մը  
 օգտակար չէ : Տէրոջը օրովը Հրէից  
 եկեղեցին աս վիճակին մէջն էր . և  
 հիմա ալ նոյն վիճակին մէջն է : Աւ-  
 քրիստոնեայ ըսուած շատ եկեղեցի-  
 ներ կան (Հայ՝ Յոյն՝ Հռովմէական՝  
 և Բրօթեստանդ) որ ճիշտ աս վիճա-  
 կին մէջ կը գտնուին , այսինքն կեանք  
 չկայ . Սուրբ Հոգի չկայ . վերստին  
 ծնունդ չկայ . և սիրտը սրբացնող  
 կրթութիւն բնաւ չկայ : Աւ ամէն  
 եկեղեցի՝ որուն մէջը Սուրբ Հոգին  
 չը ճանչցուիր , մահուան վիճակի  
 մէջ է :

Ա՛րեւնայ թէ Նիկողեմոս գիշերը  
 եկաւ որ՝ գալը մէկը չը տեսնէ : Սա-  
 կայն մութը որչափ ալ որ շատ էր նէ ,  
 տակաւին հազարաւոր և միլիօնաւոր  
 մարդիկ դիտեն անոր երթալը . և

երկինքին տակը գտնուած ամէն հե-  
 թանոս՝ ամէն ժողովուրդ՝ ամէն ազգ՝  
 Անգղիացի՝ Գաղղիացի՝ Գերմանիա-  
 ցի՝ Ռուսաստանցի՝ Յոյն՝ Հայ՝ Քաղ-  
 դէացի՝ Հնդկաստանի և Չինաստանի  
 մէջ եղողներուն բոլորը աս գիշերու-  
 ան պատահած դէպքը՝ աս գիշերու-  
 ան խօսակցութիւնը լսեցին կամ պի-  
 տի լսեն, կարդացին կամ պիտի կար-  
 դան . և անոր վրայով միլիօնաւոր  
 քարոզներ ամէն լեզուով խօսուած  
 են կամ պիտի խօսուին : Չրմոռնանք  
 մեր Տէրոջը ըսածը թէ՛ “ չկայ ծա-  
 ծուկ բան մը որ պիտի չը յայտնուի ,  
 և գաղտուկ որ պիտի չը գիտցուի ” :  
 Մատ. Ժ. 26 : Բայց Տէրն մեր Քրիս-  
 տոս հոս ի՞նչ կը սորվեցնէ մեզի :  
 Նորէն ծնանիլ՝ հոգիէն ծնանիլն ի՞նչ  
 է : Տէրը աս խօսքովը ի՞նչ ըսել կ'ու-  
 ղէ : Անշուշտ ըսել կ'ուզէր թէ՛ բնու-  
 թիւննիս աւրած ըլլալով՝ Աստուծոյ  
 սուրբ թագաւորութեանը յարմար  
 չէ . և անոր համար ամէն մարդու  
 բնութիւն փոխուելու է , եթէ ո՛չ չի  
 կրնար Աստուծոյ ներկայութեանը

ելել, Աստուծոյ երեսը չի կրնար տեսնել, և Աստուծոյ թագաւորութեանը մէջ երջանիկ չի կրնար ըլլալ:

Արդ աս մեծ փոփոխութիւնը՝ սրտին փոխուելուն ինչ ըլլալը քննենք:

1. Միայն արտաքին և մարմնաւոր բարեկարգութիւն մը չէ:

Այսինքն՝ մարդու մը դուրսէն երեցած մէկ քանի բաներու մէջ աղէկ ըլլալը չէ: Հատերը՝ մինչև անգամ կռապաշտներուն մէջ, գինովութիւնը՝ կամ ուրիշ գէշ բնութիւնները կը ձգեն: Բայց աս տեսակ փոփոխութեան՝ Նիկողեմոս չի պիտի զարմանար, և չի պիտի հարցուներ թէ՝ «Աս բաները ինտո՞ր կրնայ ըլլալ» (համար 9) . քանզի ամէն օր պատահած բան է:

2. Միայն եկեղեցւոյ անդամ ըլլալ չէ:

Բոլոր շրէաները կը խոստովանէին թէ՝ Աստուծոյ ժողովուրդն

են. բոլորն ալ Աստուծոյ հաստատած եկեղեցւոյն անդամներն էին : Իսկարիովտացի Յուդան՝ Քրիստոսի եկեղեցիէն էր , անոր ընտանիքէն՝ անոր ընտրեալներէն էր : Բայց ինքը նորէն ծնած էր : Այլ Սուրբ Հոգիէն ծնած մէկը չէր : Ալ Հրէաները՝ թէ և Աստուծոյ եկեղեցւոյն մէջ կը գտնուէին , բայց Քրիստոս անոնց համար ըսաւ թէ՛ մաքսաւորները և մեղաւորները անոնց չափ հեռու չեն Աստուծոյ թագաւորութենէն : Ալ Երստին ծննդեան ինչ ըլլալը չէին գիտեր . արտաքին մարմնաւոր թլփատութիւնը գիտէին , բայց ներքին սրտէն եղած՝ Սուրբ Հոգիէն եղած թլփատութիւնը բնաւ չէին գիտեր : Հռովմէական՝ Յունադաւան՝ Հայ՝ Հրէայ՝ Անգղիական՝ Բրթթէսթանդ եկեղեցիներուն մէջ եղողներէն մէկը՝ անդամ ըլլալնուն համար չեն կրնար փրկուիլ : Ալ Երստին ծնունդը աստեսակ բաներէն անհունապէս տարբեր է :

### 3. Միայն մկրտուիլ չէ :

Ո՞վ կրնայ ըսել թէ չը մկրտուողը չի կրնար երկնից թագաւորութիւնը մտնել : Եղիա մարգարէն մկրտուած չէր , բայց երկնից թագաւորութեանը արժանացաւ : Ենովք՝ Մովսէս՝ Դաւիթ՝ Դանիէլ՝ Աբրահամ՝ Իսահակ և Յակոբ հիմա երկնից թագաւորութեանը մէջը չե՞ն . բայց անոնցմէ բնաւ մէկը մկրտուած չէ : Քրիստոսի հետ խաչուած ապաշխարող աւազակը՝ մկրտուած չէր , սակայն ան նոյն օրը դրախտին մէջ գտնուեցաւ : Մկրտուիլը ուրիշ բան է՝ և նորէն ծնանիլը ուրիշ բան է : Ջրով մկրտուիլը ուրիշ բան է՝ և Սուրբ Հոգիով մկրտուիլը՝ այսինքն Հոգիէն ծնանիլը ուրիշ բան : Առաքեալները մէկը չը մկրտեցին նորէն ծնանելու համար . հապա մկրտուելէն առաջ անոր փոխուած ըլլալուն վկայութիւն կ'ուզէին : Պետրոս Առաքեալ՝ քրիստոնեայ եղող Կոռնելիոսին և անոր բարեկամներուն համար ըսաւ թէ՝

“Կրնա՞յ մէկը ջուրը արգիլել որ ասոնք չըմկրտուին, որոնք Հոգին Սուրբն ալ ընդունեցին մեղի պէս” : Գործ . Ժ . 47 : Այսինքն աս նորէն ծնած մարդիկները՝ Սուրբ Հոգին առած մարդիկները՝ արժան է որ մկրտուին : Երդ անոնք չը մկրտուեցան որ Սուրբ Հոգին առնեն, այլ արդէն Սուրբ Հոգին առած ըլլալուն համար մկրտուեցան :

Ան անհաւատ Ալթէրը՝ և իրեն պէս բոլոր անհաւատները մկրտուած էին . բայց նորէն ծնա՞ծ էին . Քրիստոսի թագաւորութիւնը մտած կամ մտնող մարդիկներ էին : Ո՛չ . երդում ըրին անձերնուն վրայ որ՝ Քրիստոս իրենց վրայ չը թագաւորէ : Ամէն քրիստոնեայ ըսուած երկիրները գրէթէ ամենը մկրտուած են, գող՝ մարդասպան՝ շնացող՝ ազահ՝ խարդախ՝ կողոպտիչ՝ հայհոյող՝ գինով՝ ամենը մկրտուած են . բայց Պօղոս առաքեալ կըսէ “Բոլոր ասոնք երկնից թագաւորութիւնը չեն կրնար մտնել” : Ակորն . Զ . 9, 10 :

Ուրեմն վերստին ծնունդն ի՞նչ է : Նորէն ծնանիլը՝ մարմնոյն լուացուիլը է , այլ հոգւոյն լուացուիլն է . մարդուն արտաքին փոփոխութիւնը է , այլ ներքին սրտին փոփոխութիւնն է : Միայն երեցածը է՝ այլ աներեւոյթ հոգւոյն փոխուիլն է : Մարմնոյն կարողութիւնները չեն փոխուիր , բայց հոգւոյն կարողութիւնները՝ ախորժակը՝ սրտին փափաքները կը փոխուին . և թէև մարդոց աչքին չերևան , սակայն Աստուծոյ աչքերուն առջևը բաց ու յայտնի է :

Մէկուն սիրտը փոխուելով , անոր բոլոր բնութիւնները կը փոխուին , քանզի անոր բոլոր բնութիւնները շարժողը փոխուեցաւ : Սիրոյ և փափաքանաց զօրաւոր հոսանքները նոր շիտակ ճամբան դառնալով՝ ան մարդը բոլորովին նոր կ'ըլլայ : Անոր ելլելն ու նստիլը՝ անոր միտքն ու զգացումները՝ անոր փափաքն ու զօսանքները՝ անոր վախն ու յոյսը և նպատակները բոլորը կը փոխուին : Եւ աս փոփոխութիւնը ժամանակա-



ւոր չէ՝ այլ յաւիտենական բան մըն է : Գէշ բնութիւնները կը ձգէ , մեղքին սիրոյն կը յաղթէ , բոլոր անօրէնութիւններէն զղջալով Աստուծոյ կը դառնայ , և վերի բաները կը մտածէ :

Արդ վերստին ծնունդը՝ սրտին մէջ սրբութեան սկզբնաւորութիւնն է . դէպ ՚ի Աստուած սիրոյ սկզբնաւորութիւնն է . Քրիստոսի վրայ եղած հաւատքին սկզբնաւորութիւնն է . Աստուծոյ թաղաւորութեանը և Քրիստոսի քաւութեանն ու փրկութեանը՝ և անոր ժողովուրդին և գործերուն վրայ ուղիղ խորհելնուս սկզբնաւորութիւնն է :

Մօրմէ ծնանիլը մեզ աս աշխարհքիս լոյսին բերելով՝ մեր աս կենացը սկզբնաւորութիւնն է : Եւ Սուրբ Հոգիէն ծնանիլը՝ մեղնոր և հոգևոր կեանքի մը արթնցնելով՝ յաւիտենական կենաց սկզբնաւորութիւնն է : Տէրն մեր ըսաւ , “Մարմինէն ծնածը՝ մարմին է” . այսինքն՝ մարմնաւոր է , և հոգևոր չէ . մարմնաւոր բաներ

խորհելով՝ հոգևոր բաներ չի խորհիր : Բայց “ Հոգիէն ծնածը՝ հոգի է ” ըսաւ Տէրը . այսինքն հոգևոր՝ մաքուր՝ սուրբ՝ աներևոյթ և յաւիտենական բաներու կը նայի , և հոգևոր բաներ կը խորհի :

Ուրեմն աս փոփոխութիւնը շատ մեծ է . Աստուծոյ առջևը այնքան մեծ է որ՝ Աստուած ինքը՝ նորէն ծնանիլ՝ Աստուծմէ ծնանիլ՝ Աստուծոյ Հոգիէն ծնանիլ կը կոչէ : Աստուած՝ նոր մարդը՝ Յիսուս Քրիստոսով ծնած՝ և անոր պէս ուրիշ խօսքերով կը կոչէ որ անոր մեկնութիւնը մեզի յայտնէ ” : Հիները անցան , և ահա՛ ամէն բան նոր եղաւ ” :

Աս փոփոխութիւնը՝ աշխարհքին առջևն ալ շատ մեծ է . քանզի աշխարհային մարդիկ ծաղրելով կ'ըսեն թէ՛ Աս նոր ծնած անձը յիմար՝ անխելք՝ խենդ եղաւ . խելքը փախուցեր է կ'ըսեն . քանզի առաջուան պէս չէ՛ և աշխարհքին պէս ալ չէ : Անոնք՝ անոր խելքը կորսուած է կ'ը-

սեն . և Աստուած կը վկայէ թէ՛ ա-  
նոր սիրտը փոխուած է :

Եղբայրներս , աս մեծ փոփոխու-  
թիւնը փորձով գիտէ՞ք : Նորէն՝  
վերստին՝ Աստուծմէ ծնանելուն ինչ  
ըլլալը գիտէ՞ք . նոր մարդ եղա՞ք .  
Աստուծոյ որդիք եղա՞ծ էք . խաւա-  
րին իշխանութենէն Վրիստոսի փա-  
ռաւոր թագաւորութեանը փոխուե-  
ցա՞ք :

Տէրը ըսաւ , “ Թէ որ մէկ մարդ  
մը նորէն չը ծնանի , չը կրնար Աստ-  
ուծոյ թագաւորութիւնը տեսնել ” :  
Տէրը չըսաւ թէ՛ Պէտք չէ որ՝ արժան  
չէ , յարմար չէ որ՝ Աստուծոյ թա-  
գաւորութիւնը տեսնէ , այլ՝ Աարող  
չէ , կարելի չէ որ տեսնէ ըսաւ : Գառ  
մը՝ թէ որ բոլորովին իր բնութիւնը  
չը փոխուի նէ , ծովը կրնա՞յ սիրել :  
Թէ որ ձուկի մը բնութիւնը բոլորո-  
վին չը փոխուի նէ՛ խոտը կրնա՞յ սի-  
րել : Ո՛չ . չի կրնար սիրել : Եւ ա-  
սանկ ալ մեղաւոր մը՝ թէ որ սիրտը  
չըփոխուի , Աստուած՝ Վրիստոս՝ եր-  
կինք՝ հրեշտակները՝ սուրբերը բնաւ

չի սիրեր . և չի կրնար սիրել : Արդ  
 “ Պէտք է քեզի նորէն ծնանիլ ” ը-  
 սելուս մի՛ զարմանար , եղբայր : Թէ  
 որ դուն նորէն չը ծնանիս , Աստու-  
 ծոյ թագաւորութիւնը չես կրնար  
 մտնել , եղբայր : Մեր Տէրը ասանկ  
 ըսաւ :

## ԳՆԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԵՂՈՂ ԵՂՋԻԿԸ :

“ Եւ Մտորաց թագաւորին զօրագլուխը ‘Նէեման’ իր տիրոջ առջև մեծ ու յարգելի մարդ մըն էր . քանզի Տէրը անոր ձեռքովը Մտորաց փրկութիւն տուեր էր . ու աս մարդը զօրաւոր կտրիճ մըն էր , բայց բորոտ էր : Եւ Մտորաց գունդերը ելլելով՝ Խարայէլի երկրէն մէկ պզտիկ աղջիկ մը գերի տուեր էին . ու անիկայ ‘Նէեմանին կնկանը քոջն էր : Եւ անիկայ իր տիկնոջը ըսաւ . Երանի՛ թէ իմ աէրս Սամարիա եղող մարգարէին առջևը ըլլար . ան ատենը զանիկայ իր բորոտութենէն կը բժշկէր ” : 7 (Թագ . Ե . 1-3 :

Մտորաց մայրաքաղաքը շո՛ւ, մասկոս էր . ան ժամանակի թագաւորը՝ Բենադադ էր . և անոր զօրագլուխը՝ Նէեման էր : Նէեման Խարայէլի որդւոցը հետ պատերազմ՝ ընելով՝ Մատուծոյ օգնութիւնովը յաղթեց անոնց , և գերիներ տանելով պզտիկ աղջիկ մը իր կնկանը տուաւ որ՝ անոր սպասաւորութիւն ընէ : Աերջապէս՝ աս զօրութեան տէր եղող Նէեման բորոտ ըլլալով՝ աս պզտիկ գերի աղջկան տուած լուրին միջոցովը առողջացաւ :

Սուրբ Գրոց աս կտորէն մէկ քանի բաներ կը սորվինք .

1 . Եստուծոյ ձեռքը ամէն տեղ և ամէն բանի մէջ կ'երևնայ :

2 . Եստուած իր կամքը կատարելու համար՝ չար մարդիկ ալ կը գործածէ :

3 . Եստուծոյ կամքը կատարող չարերը՝ իրենց գործքերուն մէջ շատ յանցաւոր են :

4 . Չարը բարիի դարձունելը Եստուծոյ յատուկ է : Եւ

5 . Մարդ մը ինչ վիճակի մէջ ալ որ ըլլայ , իր եղած վիճակին մէջ բարիք կրնայ ընել :

1 . Եստուծոյ ձեռքը ամէն տեղ և ամէն բանի մէջ կ'երևնայ :

Բոլոր երկրին դատաւորը՝ Եստուած է . դատաւոր բացարձակ՝ ան է . ամէն իշխանութիւն՝ իրեն յատուկ է : Մէկը բարձրացնողը և մէկը ցածցնողը՝ մէկը մեծցնողը և մէկը պզտիկցնողը ան է : Եստուած իր ու-

զածին պէս ամէն բան իրար կը խառնէ , և ամէն բան կը կարգադրէ : Այժմ տեսնես նէ , գիտցի՛ր որ՝ Աստուած հոն է . երկրաշարժ՝ երկպառակութիւն՝ ապստամբութիւն՝ պատերազմ՝ կոտորած և հրդեհ ըլլայ նէ , Աստուած հոն է , և ամէն բան կատարողը՝ անոր ձեռքն է : Մարգարէն (Ամովս . Գ . 6) կ'ըսէ , “ Բաղաքին մէջ չարիք մը կ'ըլլայ , թէ որ Տէրը զանիկայ ըրած չէ ” : Բնաբանէն կը սորվինք թէ՛ Ասորոց փրկութիւն տուողը՝ Աստուած էր : Ան պատերազմներուն մէջ Աստուած գտնուելով՝ Խսբայէլի որդիներուն չօգնեց , այլ անոնց թշնամիներուն օգնեց , և փրկութիւն տուաւ :

2 . Աստուած իր կամքը կատարելու համար՝ չէ թէ միայն բարի մարդիկ՝ այլ չար մարդիկ ալ կը գործածէ :

Ասորիները՝ կռապաշտ էին .  
Ղշմարիտ Աստուածը չէին ճանչնար :

Բայց ճշմարիտ Աստուածը՝ Իսրայէլի որդւոց հպարտութիւնը կոտորելու համար Ասորիները գործածեց : Անոնց զօրագլուխը՝ կռապաշտ Նէեմանն էր . բայց անոր ձեռքովը Աստուած Ասորւոց ազատութիւն տուաւ : Բռնակալները՝ հարստահարները՝ խառնակիչները՝ մարդասպանները բոլոր Աստուծոյ ձեռքն են . և թէև անոր սուրբ հրամանին չեն հնազանդիր , բայց անոր կամքը կը կատարեն : Մեր Տէրը խաչը հանող շրէաները՝ Աստուծոյ կամքը չը կատարեցի՞ն . անոր առաջուց ըսածը տեղը չը բերի՞ն , և ամէնը չը կատարեցի՞ն : Բայց սակայն ասիկայ չար ձեռքերով ըրին . դիտաւորութիւննին չար էր . իրենց դիտաւորութիւնը ուրիշ էր՝ և Աստուծոյ դիտաւորութիւնը ուրիշ էր : Յովսէփ իր եղբայրներուն ըսաւ թէ՛՝ Դուք ինձի չարութիւն ընելու միաբանեցաք , բայց Աստուած բարիի ուղեց դարձնել :



3. Աստուծոյ կամքը կատարող չարերը՝ շատ յանցաւոր են :

Անոնք յանցաւոր են, քանզի Աստուծոյ դրած կանոնները աւրել կ'ուզեն, զանոնք պարապը հանելու կ'աշխատին : Յովսէփին եղբայրները ասանկ ըրին . « զանիկայ հորի մը մէջ ձգենք » ըսին , « և տեսնենք թէ անոր երազները ի՞նչ պիտի ըլլան » : Անոնց չար գործը՝ Յովսէփին երազները տեղը բերաւ . բայց անանկ ընելնուն համար յանցաւոր չէի՞ն : Այո , շատ յանցաւոր էին . և յանցանքնին իրենք ալ գիտէին և խոստովանեցան :

Եսայի մարգարէին դրքին մէջ կը կարդանք թէ՛ (Գ . 6 , 7) Իսրայէլի որդւոցը չարութեանը համար՝ Աստուած անոնց վրայ Ասորեստանի թագաւորը պիտի բերէր : Արսէ թէ՛ « Չանիկայ կեղծաւոր ազգի մը վրայ պիտի խրկեմ , ու իմ սրդողած ժողովուրդիս դէմ հրաման պիտի տամ անոր , որ աւար ժողովէ ու յափշտակու-

Թիւն ընէ , և զանոնք փողոցներուն  
ցեխին պէս կոխկուտէ : Բայց անիկայ  
այնպէս չի մտածեր , ու սրտովը այն-  
պէս չեխորհիր , հապա իր միտքը դրեր  
է որ կորսնցընէ , և շատ ազգեր բնա-  
ջինջ ընէ” : Ուստի անոր դիտաւո-  
րուԹիւնը չար չէ՞ր . շատ չար էր :  
Ուրեմն՝ Եսորեստանի Թագաւորին  
հպարտացած սրտին պտուղը՝ և ա-  
նոր ամբարտաւան աչքերուն փառ-  
քը պիտի քննեմ” : Եսայ . Ժ . 12 :

#### 4 . Չարը բարիի դարձունելը Եստ- ուծոյ կրկերաբերի :

Մարդ աս բանը չըներ , Եստուած  
կընէ : Մարդ չեկրնար ընել , բայց  
Եստուած կրնայ , և միշտ կընէ . միւ-  
թէն լոյս հանողը և չարէն բարիք  
բերողը միայն Եստուած է : Մարդոց  
գործած ամենամեծ մեղքը՝ Բրիս-  
տոսը խաչելն էր , սակայն Բրիստո-  
սի մեռնելովը ո՞րչափ մեծ օրհնու-  
թիւններ յարաջ եկան ու կուգան :  
Ենանկ որ ամենամեծ մեղքէն ամե-  
նամեծ բարիքը ելաւ : . Եւ աս Եստ-

ուժոյ գործն է , աս բանը ընելը անոր կը վերաբերի :

Աս պզտիկ աղջկան գերի տարուած ժամանակը՝ կարելի է անոր մայրը աղաղակելով՝ ըսաւ թէ Աստուած մեզ մոռցեր է . անթլփատ կու պաշտները ինչո՞ւ իմ տունս ասանկ աւերակ պիտի ընէին , ինչո՞ւ սիրելի զաւակս յափշտակելով պիտի տանէին . ո՞վ գիտէ ի՛նչ տանջանքներ պիտի տան անոր . աւա՛ղ . ի՞նչ եկաւ գլխուս :

Աս պզտիկ աղջիկը բռնութեամբ յափշտակուելով տարուեցաւ , բարձր ձայնով աղաղակելով և լացով տարուեցաւ . անշուշտ ճամբան շատ լացաւ՝ գիշեր և ցորեկ , գուցէ հիւանդանալու չափ լացաւ : Առապաշտներուն լեզուն չէր գիտեր . անոնց կրօնքը չէր ընդունիր . անոնց հետ կուտունը չէր երթար : Սենեակ չունէր , բայց երբեմն ծառի մը տակ կամ ժայռի մը խոռոչը մտնելով՝ կուլար . խեղճ աղջիկ , քեզ մխիթարող ո՞վ կար : Բայց . աղջիկը Աբրահամին՝

Խասհակին և Յակոբին Աստուածը  
 չըմոռցաւ . անշուշտ իր սիրտը անոր  
 վերցուց , և ինքզինքը անոր սուրբ  
 կամքին յանձնեց : Արեւի է անոր  
 հոն տեսած խոր կուսպաշտութիւնը  
 և քաշած նեղութիւնները իր հոգիին  
 օգտակար եղաւ : Բայց ինչեւիցէ ,  
 կը կարդանք թէ՛ իր խաթունին  
 սպասաւորութիւն կընէր . և կերև-  
 նայ թէ Աստուծոյ զաւկի մը վայե-  
 լուչ եղածին պէս՝ հաւատարմութե-  
 ամբ աղէկ կը ծառայէր : Եւ կը կար-  
 դանք թէ՛ իր տէրոջը առողջութեա-  
 նը և հոգւոյն փրկութեանը սլատճառ  
 եղաւ :

Ես աղջիկը՝ թէ և պզտիկ էր , ճշ-  
 մարիտ Աստուածը և անոր մարգա-  
 րէները ճանչցաւ : Իր խաթունին  
 ըսաւ , “ Երանի թէ իմ տէրս Սամա-  
 րիա եղող մարգարէին առջևը ըլլար ,  
 ան ատենը զանիկայ իր բորոտութե-  
 նէն կը բժշկէր ” : Աղջկան պատմած  
 մարգարէն՝ ան երևելի Եղիսէ մար-  
 գարէն էր . և ասանկով Նէեման  
 Եղիսէին երթալով առողջացաւ . և

ասկէց 'ի զատ կուսպաշտութիւնը ձգելով Աստուածապաշտեղաւ , այսինքն ճշմարիտ Աստուծոյ երկրագութիւն կրնէր : Իր դառնալէն վերջը չենք գիտեր ինչ ըրաւ . բայց հարկաւ իր ընտանեացը և բարեկամներուն փրկութեանը համար աշխատեցաւ . և անկասկած ենք թէ՛ աս պզտիկ աղջկան կամ ընծաներ տալով արձակեց , կամ զանիկայ իրեն հոգեղաւակ ըրաւ : Անշուշտ աս աղջիկը իր մօրը և շատ ուրիշներուն հետ յաւիտեանս փառք պիտի տան որ 'Դամասկոս գերի տարուեցաւ : Արանի՛ անոր :

Յ . Մարդ մը ինչ վիճակի մէջ որ ըլլայ , նոյն վիճակին մէջ բարիք կրնայ ընել :

Աս աղջիկը պզտիկ էր , սպասաւոր մըն էր , գերի էր . կուսպաշտներու մէջ էր , մինակ էր : Սակայն աս թշուառ՝ տրտում՝ ցաւալից աղջիկը՝ բարիք ըրաւ . իր տիրոջը տանը փրկութեան պատճառ եղաւ , և իր

Աստուծոյն փառք ու պատիւ բերաւ :  
 Նէեման Նղիսէին աս խոստովանու-  
 թիւնը ըրաւ , “ Ահա՛ հիմա գիտցայ՝  
 որ բոլոր երկրի վրայ Աստուած չկայ ,  
 բայց միայն Իսրայէլի մէջ ” : Նաև  
 ըսաւ , “ Բու ծառադ մէյմնալ ուրիշ  
 աստուածներու ողջակէզ կամ զոհ  
 պիտի չընէ , բայց միայն Նահովային ” :  
 Եւ Նէեման իր թագաւորին և բա-  
 րեկամներուն ու դրացիներուն ճշ-  
 մարիտ Աստուծոյ վրայ բոլոր տե-  
 սածը՝ և սորվածները չըպատմեց .  
 անկասկած պատմեց : Արեւի է շա-  
 տերը կռապաշտութիւնը ճգելով՝  
 Աստուծոյ երկրպագութիւն ըրին :  
 Երանի՛ աս աղջկան : Աս աղջկը  
 Դամասկոս տարուած ատենը , եթէ  
 մէկը ճամբան ըսէր անոր , որ վ աղջկ  
 քու շարժուածքդ Աստուածավայել  
 ըլլալով՝ հոն չատ բարիք ընելու ես :  
 ան պիտի պատասխանէր թէ՛ ես տը-  
 գէտ՝ գերի՛ և պզտիկ աղջկ մը ըլլա-  
 լովս՝ ի՞նչ բարիք կրնամ ընել :

Իայց ահա՛ որչափ բարիք ըրաւ ,  
 մէկը չիգիտեր , ամէն մարդ ալ կրնայ

բարիք ընել : Իր վեճակը ինչ ալ որ  
 ըլլայ : Գտնուած վեճակին մէջ կը-  
 նայ բարիք ընել : Ամէն մարդ՝ ամէն  
 կնիկ՝ ամէն տղայ բարիք կրնայ ընել .  
 թէ որ կրթուած՝ հարուստ՝ և պա-  
 տուաւոր մէկն ալ չէ , տակաւին բա-  
 րիք կրնայ ընել և ընելու է : Բրիս-  
 տոսի փառք ու պատիւ կրնայ բերել  
 ու բերելու է :

Արդ սիրելիներս , դուք ի՞նչ կը-  
 նէք . օրէ օր բարիք կընէ՞ք , օրէ օր  
 Բրիստոսի փառք ու պատիւ կըբե-  
 րէ՞ք , ձեր գրացիներուն փրկութեան  
 պատճառ կուզէ՞ք ըլլալ , և ըլլալու  
 համար կաշխատի՞ք : Բրիստոսի՞  
 համար կապրիք օրէ օր՝ թէ աշխարհ-  
 քին համար : Աթէ աս գերի աղջիկը  
 բարիք կրցաւ ընել՝ դուք որ ազատ  
 էք՝ բարիք չէ՞ք կրնար ընել : Աթէ  
 աս պղտիկ գերին իր տիրոջը բարիք  
 ըրաւ , դուք ձեր բարեկամներուն չէ՞ք  
 կրնար ընել : Աստուած կարողու-  
 թիւն տայ մեզի որ մեր բոլոր պարտ-  
 քերը կատարենք :

## ՓՐԿՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀՎՅՆԵՐԸ ԵՌԵՏ ԵՆ :

“ Մ՛՛՛՛ ըրոր ծարւածներն ջուրերուն եկէ՛ք . և ստակ չունեցողներ՝  
եկէ՛ք , ծախու առէ՛ք ու կերէ՛ք , եկէ՛ք առանց ստակի և առանց գնոյ  
գինի ու կաթ ծախու առէ՛ք ” : • Լյս . 56 . 1 :

Եսայի մարգարէն՝ Քրիստոսէն  
700 տարի առաջ մարգարէութիւն  
ըրաւ , բայց իր մարգարէութիւննե-  
րը Քրիստոսով լեցուն էր , և այնչափ  
լեցուած էր որ՝ մարգարէութեան չի  
նմանիր , այլ Աւետարանի կը նմանի :  
Եսայի մարգարէն առաջ նայելով՝  
Քրիստոսի օրը բուն իր աչքովը տե-  
սածի պէս կ'երևայ , անոր երևնալը՝  
մարդ ըլլալը՝ աշխատութիւնը՝ քա-  
ւութիւնը և զարմանալի փրկութիւ-  
նը կը տեսնէ . աս փրկութեան ան-  
հուն առատութիւնը կը տեսնէ . և  
տասուերկու Առաքելոց պէս՝ աս օրհ-  
նեալ Աւետիսը բոլոր աշխարհքին  
գիտցնել կ'ուզէ . և ալ ինքզինքը չկր-  
նալով զսպել՝ մեծ ձայնով կ'աղաղա-



կէ , “ Ո՛վ բոլոր ծարւածներ՝ ջուրերուն եկէ՛ք , և ստակ չունեցողներ եկէ՛ք , ծախու առէ՛ք ու կերէ՛ք , եկէ՛ք առանց ստակի և առանց դնոյ գինի ու կաթ ծախու առէ՛ք ” :

Հոս շատ բաներ յայտնուած են , բայց միայն երկուքին մտադրութիւն ընենք :

1 . Եստուած կ'ուզէ որ՝ իր պատրաստած փրկութեանը բոլոր մարդիկ հրաւիրուին :

2 . Ես պատրաստուած փրկութիւնը՝ ամենուն համար՝ ամէնը փրկելու համար բաւական է :

1 . Եստուած կ'ուզէ որ՝ իր պատրաստած փրկութեանը բոլոր մարդիկ հրաւիրուին :

“ Ո՛վ բոլոր ծարւածներ՝ ջուրերուն եկէ՛ք ” : Եմէն մէկը՝ ամէն ծարուած՝ հրաւիրուած է : Չէ թէ միայն ամէն արդարութեան համար ծարուածները , այլ ամէն հանգստութեան և խաղաղութեան համար

ծարուածները հրաւիրուած են. այսինքն՝ ամէն անմահ հոգիի տէր եղող՝ որ բոլոր մարդկային ազգը ըսել է. քանզի ամէնքը հանգստութիւն և խաղաղութիւն կը փնտռեն, բայց չը գտնուած տեղը կը փնտռեն: Արկրորդ համարին մէջ մարգարէն կը հարցնէ՝ «Ինչո՞ւ ձեր ստակը կը վատնէք՝ չէ թէ հացի համար, և ձեր վաստակը անանկ բանի համար՝ որ չը կշտացընէր», որ հրաւիրեալներուն ո՛վ ըլլալը կը ցուցնէ. և յայտնուածները՝ բոլոր մարդկային ցեղն է:

Սուրբ Աւետարանին հրաւերն ալ՝ ասոր չափ առատ է: Տէրն մեր՝ Բրիստոս կ'ըսէ, «Գացէ՛ք ճամբու գլուխները, և ո՛վ որ գտնէք հրաւիրեցէք»: Մատ. ԻԲ. 9: Այսինքն դուրս ելելու է, և հրապարակները՝ փողոցները՝ արտերը երթալու է. և չէ թէ միայն հարուստները և պատուաւորները, այլ աղքատները՝ հաշմանդամները՝ կաղերը և կոյրերը անգամ, բոլոր գտածնին հրաւիրելու են, թէ՛ գերի և թէ՛ ազատ՝ թէ՛ ծեր

և թէ երիտասարդ՝ թէ՛ Հրէայ և թէ՛ հեթանոս, բոլոր հրաւիրելու են. նաև զանոնք ստիպելու է, այսինքն զօրաւոր պատճառ ցուցնելու է որ՝ աս հրաւերը ընդունին :

Քրիստոս իր աշակերտներուն վերջին պատուէրը տուաւ ըսելով՝ “Գացէք բոլոր աշխարհ և Աւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն” : Այսինքն՝ բոլոր հեթանոսները աշակերտեցէք. աս ուրախարար աւետիսը ամէն հոգիի տուէք. աս հրաւերը ամէն տեղ թող հռչակուի, և ամենուն ականջը թո՛ղ հասնի :

Սակայն թէև աս երկու հրաւերներն ալ առատ և հարուստ է, ասոնցմէ աւելի առատ՝ աւելի մասնաւոր՝ և յատուկ ու լեցուն հրաւեր մը ունինք որ՝ Սուրբ Աւետարանին վերջին Գրքին՝ վերջին Գլուխին՝ գրէթէ վերջին համարին մէջ կը գտնուի. երկինքէն մեզի եկած վերջին հրաւերն է. մեր Տէրոջը Քրիստոսին երկինքը դառնալէն 40 տարի ետքը եկած է աս հրաւերը : Անոր մտիկ ըրէք .

“Եւ Հոգին ու հարսը կ'ըսեն, Եկո՛ւր . և ան որ կը լսէ՝ թող ըսէ՛, Եկո՛ւր, ու ան որ ծարաւ է՝ թող գա՛յ, և ան որ կ'ուզէ՝ կենաց ջուրը ձրի առնէ” : Յայտ . ԻԲ . 17 : Հոս կրտեսնենք թէ՛ չէ թէ միայն Սուրբ Հոգին, այլ բոլոր եկեղեցիին կ'իյնայ որ՝ մեղաւորները Քրիստոսի գալու հրաւիրեն . չէ թէ միայն եպիսկոպոսները՝ Աւետարանին պաշտօնեաները հրաւիրող ըլլալու են, այլ ամէն մարդ՝ ամէն կնիկ՝ ամէն տղայ՝ և աս հրաւերը ամէն ընդունող կամ լսող անձը՝ ինքն ալ ուրիշները պէտք է որ հրաւիրէ : Են որ կը լսէ՝ Եկո՛ւր ըսելու է . թէ որ ինքը աս հրաւերը մէկ անգամ մը միայն լսէ, պարտաւոր է որ՝ բոլոր գիտցածները՝ տեսածները և գտածները հրաւիրէ : Ենոնց անունները՝ ազգը՝ բնութիւննին՝ բարքերնին և վարքերնին ինչ որ կ'ըլլայ՝ թո՛ղ ըլլայ, հարցունել հարկ չէ, այլ ամէնը աս կենաց ջուրերուն գալու թող հրաւիրէ :

Ես զարմանալի խօսքերը՝ Յայտ-

նութքան ԻՅ . 17երորդ համարին մէջ կը գտնուի , և աս հիանալի խօսքերը Բրիտոսի մեր ցեղին ըրած վերջին հրաւերն է . գրէթէ վերջին խօսքերն է : Եւ ինքը ըսաւ թէ՛ “Ես կը վկայեմ որ՝ եթէ մէկը աս խօսքերէն բան մը պակսեցունէ , ես ալ անոր բաժինը կենաց ծառէն պիտի պակսեցնեմ” :

Ուրեմն կը տեսնենք թէ՛ բոլոր մարդիկ հրաւիրուելու են : Եստուած կ'ուզէ որ ասանկ ըլլայ : Երտօնութիւն կայ , Եստուածային հրամանն է որ ամէն լսող լսել տայ , ամէն եկող հետը բերէ , ամէն հրաւիրեալը՝ հրաւիրող ըլլայ , և ամէն ուզող՝ ճրի առնէ :

2 . Եստուծոյ պատրաստած փրկութիւնը՝ ամենուն համար՝ և ամէնը փրկելու համար բաւական է :

“Ջուրերուն եկէ՛ք” աղաղակեց մարգարէն . ո՛չ թէ ջուրին՝ այլ “Ջուրերուն” որ առատութիւն կը ցուցնէ : Մէկ մեծ և շարունակ վազող առուի

մը կը նմանի որ՝ անկէ մէկ մարդ մը խմէ կամ միլիօնաւորներ խմեն , մէկ բան է , տարբերութիւն չըներ . և լմննալու ճար չկայ : Սուրբ Գրքին մէջ ջուրեր՝ վազող առուններ՝ շատ անգամ Քրիստոսի առատ օրհնութիւնները կը ցուցնեն : Աւ Տէրն մեր Քրիստոս մեր բոլորին փրկիչը չէ՞ . այո՛ , աշխարհքին համար մեռաւ : Յովհաննէս Առաքեալ ասանկ կը գրէ թէ՛ Քրիստոս “ մեր մեղքին քառութիւնն է , և չէ թէ մինակ մերիններուն՝ հապա բոլոր աշխարհքին ալ ” : Ա Յովհ . Բ . 2 : Մենք տեսանք որ՝ ամէնքը Քրիստոսի ընթրիքին հրաւիրուելիք անձինքներեն , և ասկէ կը հասկնանք թէ՛ աս ընթրիքը ամենուն համար հարկաւ բաւական է : Թէ որ դուք ամէն մէկերնիդ՝ աս հրաւերը ընդունիք , անշուշտ ամենուդ՝ Բարեաւ եկիր պիտի ըսուի :

Թէ որ մէկը գոցուած և մութ սենեակ մը մտնէ , հոն խորին մթութեան մէջ նստողներուն կ'ըսէ թէ՛ Պատուհաններուն փեղկերը բացէ՛ք ,

և թողուցէ՛ք որ ցորեկուան լոյսը մտնէ . արևը ձեզի համար եղած չէ՞ : Այո՛ . յատկապէս ձեզի համար ստեղծուած է , իբրև թէ ձեզմէ՛ ՚ի զատ ուրիշ մը չկար որ անոր լոյսին արժանանայ . և ինչո՞ւ ասանկ մութը կը նստիք :

Մէկը օդը աւրած՝ ապականեալ՝ խոնաւ և անմաքուր գործարան մը երթայ , արտօնութիւն չունի՞ որ հոն նեղութիւն քաշողներուն ըսէ թէ՛ Ղո՛ւրս ելէք , և շունչ առէք , մաքուր օդ շնչեցէք : Աս անուշ օդը ինչո՞ւ եղաւ . ձեր օգուտին համար չէ՞ . ուրեմն ինչո՞ւ ինքզինքնիդ անկէ կը զրկէք :

Աեռներուն մէջտեղէն Աստուծոյ վազցուցած առուններուն և գետերուն քովը կայնած ատենը , և աջ ու ձախ կողմը ծարաւէն մարող հազարաւոր և միլիօնաւոր անձինքներ տեսած ատենը , ձայնը վերցունելով՝ կ'աղաղակէ , “ Ա՛վ բոլոր ծարւածներ՝ ջուրերուն եկէք ” : Աս ջուրերը ինչո՞ւ առատ են , թէ որ իրաւունք չունիք

գործածելու . և ո՞վ իրաւունք ունի գործածելու , թէ որ ձերը չէ , որ չը գործածելով՝ մեռնելու վրայ էք :

Բայց թէ և քարոզիչ մը խրկուած չէ որ դրացիներուն և մարդոց լոյսի՝ օղի կամ ջուրի համար խօսի : Այսուամենայնիւ թէ որ անոր մտիկ չընեն՝ Աստուծմէ ապստամբ ըլլալնին ցուցընելով՝ կը հաստատեն . քանզի իրաւունք չունին որ մութի մէջ կամ ապականեալ օղի մէջ կամ ծարաւ մնալով մեռնին : Աոյս կայ , օղ կայ , ջուր կայ . և ինչո՞ւ չի պիտի գործածուին . և ինչո՞ւ չը գրգռենք որ գործածեն :

Սիրելիներս , փրկութեան օրհնութիւնները՝ լոյսէն՝ օղէն և ջուրէն աւելի առատ՝ ազատ և հարուստ են . և աս յաւիտենական օրհնութիւնները՝ աս ժամանակաւոր բարիքներուն պէս ձեզի հետ մէկտեղ կենդանեաց համար չէ . ոչ ալ հրեշտակներուն համար է . այլ յատկապէս մարդկային ազգին համար են : Աւաս բաները ինքնիրեննուս չենք ըսեր



ձեզի . հապա զանոնք ձեզի գիտցնելու իշխանութիւն՝ հրաման ունինք . հրովարտակ ունինք՝ որ աս յաւիտենական օրհնութիւններուն բոլորնիդ ալ հրաւիրենք որ զանոնք ընդունիք : Չեռքերնիս եղած հրովարտակը ասանկ գրուած է՝ « Ա՛յ որ գտնէք , հրաւիրեցէք » : Եւ ձեզ կը գտնեմ . ձեզ բոլորդ այսօր՝ հոս՝ աս քաղաքը՝ աս տանը մէջ կը գտնեմ . և աս հրովարտակին համեմատ ձեզ ամէնքդ հիմա կը հրաւիրեմ : Ես հրովարտակը կը բանամ , և մէջը բուն ձեր անունները կը կարդամ : Ի՞նչ են ձեր անունները . մեղաւոր չէ՞ :

Աւրեմն ով մեղաւորներ ձեզ կը հրաւիրեմ որ Բրիստոսի գաք : Ա՛յ ծարւածներ՝ ձեզ կը հրաւիրեմ որ կենաց ջուրէն խմէք : Ա՛յ թշուառութեան մէջ եղողներ՝ կամ յաւիտենական թշուառութենէ վախցողներ՝ ձեզ կը հրաւիրեմ որ յաւիտենական երանութեան և խաղաղութեան արժանի ըլլաք : Գուրը շատ է , փրկութեան պատրաստութիւնները ա-

ուստ՝ անհուն և անհատնում են :  
 Բայց որչափ որ շատ ըլլայ , և որչափ  
 որ երկայն ժամանակ հրաւիրուիք ,  
 և ձեզե ալ որչափ որ ստիպում ըլլայ  
 որ ընդունիք . գիտեմ որ տան մը մէջ՝  
 քաղաքի մը մէջ՝ և բոլոր աշխարհիս  
 մէջ մէկը պիտի չըզտնուի որ ընգու-  
 նի , թէ որ Սուրբ Հոգին անոր աչ-  
 քերը չբանայ , և անոր սիրտը չըկա-  
 կուզցընէ , անոր կամքը նուաճելով՝  
 չը հպատակեցնէ , և անոր ոտքերը՝  
 կորստեան ճամբայէն՝ ապահով ճամ-  
 բան չըդարձունէ՝ աս հրաւերը բնաւ  
 չընդունիր : Ես բանը գիտեմ՝ իմ  
 սրտիս փորձառութեամբը՝ բոլոր տե-  
 սածներէս՝ և Բրիստոսի բոլոր եկե-  
 ղեցիներուն պատմութիւնները կար-  
 դալովս : Ուրեմն Եստուած իր Հոգին  
 խրկէ , Եստուած իր Հոգին ձեր վրայ  
 թափէ , որպէսզի , գուք աս օրհնեալ  
 հրաւերը ընդունելով՝ յաւիտեանս  
 երանելի ըլլաք : Սուրբ Հոգին մի՛  
 տրտմեցնէք , և զանիկայ ձեզմէ մի՛  
 փախցընէք՝ ո՛վ վտանգի մէջ եղող  
 եղբայրներս :

## ՈՐՈ՞ՆՎ ԵՆ ՀՐԱԽԻՐԵԱՆՆԵՐԸ :

“Ուստի գացէ՛ք ճամբու գլուխները , և ով որ գտնելու ըլլաք՝  
հարսնիքի հրաւիրեցէ՛ք” : Մատ . Իբ . 9 :

Եստուած իր մեծ ողորմութեամբը մեծ ընթրիք մը ըրաւ . այսինքն՝ բոլոր աշխարհքին փրկութեանը պատրաստութիւն ըրաւ : Ես ընթրիքին առաջին հրաւիրեալները՝ շրէաներն էին . և շատ վայելուչ էր որ շրէաները ըլլային . քանզի անոնք ամէնէն աւելի մօտ էին . խոստմունքներն ու մարգարէութիւնները անոնց ձեռքն էր , և Քրիստոս ինքը մարմնոյ կողմանէ անոնցմէ էր :

Պէտք էր որ շրէաները՝ աս հրաւերը մեծ ուրախութեամբ ընդունէին , և ուրիշները՝ բոլոր հեթանոսները հրաւիրող իրենք ըլլալու էին : Սակայն անոնցմէ շատերը աս ընթրիքին գալ չուզեցին . և փոխանակ ուրիշները հրաւիրելու՝ հրաւիրեալներն ալ գալէն արգիլեցին : Գի-

տէք որ Աւետարանը՝ իր բոլոր օրհնութիւններովը և շնորհքներովը առաջ շրէից ազգին մատուցուեցաւ . բայց անոնք հպարտութեան և անօրէնութեան պատճառաւ զանիկայ մերժեցին : Ուստի բոլոր աս օրհնութիւնները հեթանոսներուն մատուցուեցաւ : Արքունի հրովարտակը հրաման ըրաւ թէ՛ « Գացէք ճամբու գլուխները , և ով որ գտնելու ըլլաք՝ հարսնիքի հրաւիրեցէք » : Նաև « Գացէք բոլոր հեթանոսները աշակերտեցէք » : Մատ . Ի՛՛ . 19 : Տէրը ըսաւ « Գացէք բոլոր աշխարհ և աւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն » : Մարկ . Ժ . Օ . 15 : Այսինքն աս օրհնեալ աւետիսը ամէն տեղ հռչակեցէք . ամէնուն գիտցուցէք , խաչին դրօշակը ամէն երկիր՝ ամէն քաղաք՝ և ամէն մարդու դռան առջև կանգնեցէք . բոլոր ազգերը աշակերտեցէք , բոլորը Աւետարանը ընգունելու ճամբուն մէջ բերէք , թէ շրէաները և թէ հեթանոսները՝ բոլորը բերէք որ իմ

մասը՝ այլ բոլոր աշխարհքը . և այն-  
 չափ սիրեց՝ որ զանիկայ փրկելու  
 համար իր միածին Արզին տուաւ :  
 Ամենողորմ Աստուածը բնաւ մէկ  
 ազգ մը՝ մէկ ժողովուրդ մը որչափ  
 որ պղտիկ՝ յետնեալ՝ յիմար՝ կոպիտ  
 պիղծ՝ և ապստամբ ալ ըլլայ , իր ո-  
 ղորմութենէն չըզրկեց : Սեմին որ-  
 դիները՝ Քամին ցեղը՝ Յաբեթին  
 սերունդը՝ Ասիոյ մէջ՝ Ափրիկէի՝  
 Եւրոպայի՝ Ամերիկայի և ուր որ  
 գտնուին բոլորը Աստուած ստեղծած  
 չէ՞, և չի՞պահպաներ . ուրեմն ամէ-  
 նը անոր դառնալով՝ զանիկայ թո՛ղ  
 դաւանին և իր հրաւերը ընդունին .  
 Անգղիացիք՝ Քաղղիացիք՝ Ռուսաս-  
 տանցիք՝ Վերմանացիք՝ Հայ՝ Տաճիկ՝  
 Յոյն՝ Քաղղէացիք՝ Հրէայ՝ Հնտ-  
 կաստանցիք Չինաստանցիք՝ հեռու  
 Ազգիները բնակողները և խաւարի  
 ու մահուան շուքի մէջ նստողները՝  
 բոլորը թո՛ղ հրաւիրուին : Բնաւ  
 մէկը Աստուծոյ ողորմութենէն զը-  
 կուած չէ . \* Աստուած մարդուն պա-  
 տիւին չընայիր հապա իր հրաւերը

ո՛վ որ ընդունի , աս ընթրիքին ո՛վ որ դայ , աշխարհքին որ կողմէն՝ ո՛ր ծայրէն կ'ըլայ նէ թող ըլլայ , ընդունելի է , ու պիտի ընդունուի :

2 . Փրկութեան համար ամէն բան պատրաստ է :

Ամենամեծն Աստուած պատրաստ է : Հայր Աստուած մեզ յաւիտենական սիրով սիրեց՝ և փրկութեան ճամբան բացաւ : Այլ հիմա չուզեր որ մարդկային ազգէն մէկը կորսուի . այլ Հայր Աստուած ամէնս ընդունելու պատրաստ է : Որդին Աստուած՝ Տէրն մեր Բրիստոս ալ պատրաստ է : Աշխարհքին մեզքին համար զոհ ըլլալու հաճեցաւ : Մեզ լուալու ու մաքրելու համար իր արիւնը թափեց : Ո՛վ կրնայ ըսել թէ հիմա բոլոր իրեն ապաւինողները փրկելու պատրաստ չէ : Նաև Հոգին Սուրբ Աստուած ալ պատրաստ է : Մտքերնիս լուսաւորելու՝ սրտերնիս կակուղցունելով մաքրելու՝ և մեզ Բրիստոսի առաջնորդելով՝ անոր յարգն ու

պատիւը մեզի ցուցունելու պատ-  
րաստ է : Արկնից հրեշտակները՝  
սուրբերը՝ Գաբրիէլ և Միքայէլ՝ մար-  
գարէնները՝ առաքեալները և մարտի-  
րոսները պատրաստ են : Թէ՛ երկին-  
քին մէջի և թէ՛ երկրի վրայի եկեղե-  
ցիներն ալ պատրաստ ըլլալով մեզի  
կ'սպասեն : Աերում՝ թողութիւն՝  
խաղաղութիւն՝ փրկութիւն՝ բոլորը  
մեզի համար պատրաստուած են :  
Դրախտին բոլոր բնակիչները մեզ  
ընդունելու պատրաստ են : Ուրեմն  
մենք ինչո՞ւ պատրաստ չըլլանք :

3. Աստուծոյ պատրաստած փրկու-  
թիւնը՝ բոլոր աշխարհին բաւա-  
կան է :

Աստուծոյ սիրոյն գանձը անհուն  
ըլլալով՝ փրկութիւնը առատութե-  
ամբ պատրաստուած է : Աթէ աշ-  
խարհին սկիզբէն մինչև վերջը բոլոր  
մարդիկ Աւետարանին ընթրիքին ե-  
կած ըլլային, բոլորը իբրև որդի  
կ'ընդունուէին, բոլորն ալ յաւիտե-  
նական օրհնութիւններ կ'առնէին .

Արևը բոլոր աշխարհին համար չէ՞ .  
 և անոր միջոցովը բոլոր մարդիկ չե՞ն  
 լուսաւորուիր : Ի՞նչ տարբերութիւն  
 կայ թէ որ մէկ մարդ կամ հարիւր  
 հազար մարդ՝ անոր լոյսին մէջ պտը-  
 տին . բնաւ տարբերութիւն չընեն :  
 Բայց թէ որ ոմանք խաւարը լոյսէն  
 աւելի սիրելով՝ խաւարի մէջ պտը-  
 տին , յանցանքը արեւինը չէ՛ այլ ի-  
 րենցն է : Ղիշտ ասանկ է յաւիտե-  
 նական փրկութիւնը : Թէ որ անի-  
 կայ գործածէք , պիտի դտնէք թէ  
 ձեզի բաւական է . բայց թէ որ չը  
 գործածէք , բնաւ անկէ օգուտ մը  
 պիտի չը քաղէք , և յանցանքը չէ  
 թէ փրկութեանն է՝ այլ ձերն է :  
 Քրիստոսի թափած արիւնը՝ ինչպէս  
 որ միլիօնաւոր հողիներ մեղքէն  
 մաքրեց , ձեզ ալ մաքրելու պատ-  
 րաստ է . անոր զօրութիւնը չը պակ-  
 սիր : Արեւին զօրութիւնը պակասօ՞ծ  
 է . ո՛չ , չի կրնար ըլլալ : Անոր լոյսն  
 ու ջերմութիւնը հինգ հազար տարի  
 առաջ ինչ էր նէ , հիմա ալ ան է :  
 Աբրահամին արևը՝ մեր արևն է . և



ինտոր որ անոր լոյս կուտար, անանկ ալ մեզի կուտայ : Արմանապէս Աբրահամին Փրկիչը՝ մեր Փրկիչն ալ է : Ուրեմն թէ որ չը փրկուիք, պատճառը ան չէ թէ փրկութիւն չկայ, կամ ձեզի բաւական չէ, այլ պատճառը ան է որ դուք չէք ընդունիր : Թէ որ բոլոր աշխարհքիս մէջ հոգի մը անօթութենէ մեռնի, պատճառը ան չէ որ կենաց հաց չկայ, կամ քիչ կը գտնուի, այլ պատճառը ան է՝ որ չուզեր, չառներ և չի գործածեր . կենաց հացը խիստ շատ կ'աւելնայ . բայց թէ որ մէկը զանիկայ չընդունի, ի՞նչ օգուտ : Արևը թէև շատ լոյս կուտայ, բայց թէ որ աչքերնիդ գոցէք, կամ խորունկ այրի մը մէջ պահուիք ի՞նչ օգուտ : Արևը ձեզ ստիպմամբ չը լուսաւորեր, և Աստուած ձեզ ստիպմամբ չը փրկեր :

4. Ամէն մեղաւոր՝ ուր որ գտնուի, հրաւիրուելու է :

Տէրն մեր ըսաւ “Բոլոր գտածնիդ հրաւիրեցէք” : Ուրեմն ո՛վ որ մեզի

Հանդիպի հրաւիրելու ենք : Որ կրօն-  
քէն և ազգէն որ ըլլան , զանոնք  
հրաւիրելու՝ չէ թէ միայն թոյլտուու-  
թիւն ունինք՝ այլ հրամայուած ալ է :  
Մեզի հրաման եղաւ որ՝ բոլորը հրա-  
ւիրենք . մեզի հանդիպողները թէ  
որ ըլլան մաքսաւորներ կամ մեղա-  
ւորներ՝ գող՝ գինով՝ մարդասպան և  
կռապաշտութեան պղծութիւննե-  
րուն մէջ ընկղմողները անգամ , զա-  
նոնք բոլորը հրաւիրելու հրաման և  
կատարեալ իշխանութիւն ունինք :  
Բոլորն ալ յատուկ հրաւիրելու ենք ,  
որ գալով՝ Աստուծոյ որդի ըլլալու բո-  
լոր իրաւունքները և շնորհքները առ-  
նեն , և յաւիտեանս երջանիկ ըլլան :

Տէրը իր աշակերտներուն հրա-  
մայեց թէ՛ “Ո՛վ որ գտնէք հրաւի-  
րեցէք” : Դիցուք թէ՛ աշակերտնե-  
րը Քրիստոսի հարցունէին որ՝ եթէ  
քահանայապետները՝ դպիրները կամ  
փարիսեցիները գտնենք , անոնք քու  
օրհնութիւններուդ հրաւիրե՞նք :  
Տէրը անշուշտ պիտի ըսէր՝ Այո՛ ,  
զանոնք հրաւիրեցէք : Բայց թէ որ

անքու երեսիդ թքնողները գտնենք ,  
 կամքու գլուխդ փուշերէ պսակ դնո-  
 ղը քեզ խաչին վրայ գամողը՝ կամ-  
 քու չարչարանքներդ ծաղրողներէն  
 ոմանք գտնենք , զանոնք հրաւի-  
 րե՞նք : Գթած Յիսուս՝ Այո՛ , պիտի  
 ըսէր , անշուշտ զանոնք հրաւիրե-  
 ցէք . առաջ զանոնք հրաւիրեցէք :  
 Տէրը ըսաւ , “ Երուսաղեմէն սկսե-  
 ցէք ” : Գուկ . ԻԴ . 47 : “ Երուսա-  
 ղեմէն սկսեցէք ” . անօրէն Երուսա-  
 ղեմէն , բուն իմ խաչուած քաղաքէս  
 “ սկսեցէք ” : Եռաջին հրաւիրեալ-  
 ները՝ յանցաւոր Երուսաղեմին բնա-  
 կիչները թող ըլլան . անօրէն “ Ե-  
 րուսաղեմէն սկսեցէք ” :

Մեր բնաբանին մէջ Տէրը հրա-  
 մայեց “ ով որ գտնելու ըլլաք հրաւի-  
 րեցէք ” : Միրելիներս ես ձեզ գտայ .  
 Տէրը աս խօսքերը ըսած ատենը՝ գի-  
 տէր որ ես ձեզ պիտի գտնեմ : Երդ  
 հրովարտակ ունիմ՝ կատարեալ իշ-  
 խանութիւն ունիմ՝ որ ձեզ հրաւի-  
 րեմ : Ձեզ բոլորդ չեմ ճանչնար . ա-  
 նունիդ ալ չեմ գիտեր , սակայն ձեռքս

հրովարտակ ունիմ որ ձեզ՝ բոլորդ՝  
ճանչցածներս և չը ճանչցածներս  
այր և կին՝ ծեր և տղայ՝ բոլորդ ալ  
հրաւիրեմ : Աւրեմն աս հրաւերը  
կընդունի՞ք , աս ընթրիքին պիտի  
գա՞ք : Ձեր կողմէն ի՞նչ պատասխան  
տանիմ անոր՝ որ զիս խրկեց . ձեզ  
հրաւիրելու համար զիս խրկող Յի-  
սուսին ի՞նչ պատասխան տանիմ :  
Աստուած իր հոգին ձեր սրտերուն  
մէջ խրկէ որ ձեզ պատրաստէ , որ-  
պէս զի դուք առանց ուշացընելու  
սրտանց ընդունիք աս հրաւերը :

Եղբայրներս , դուք ալ ուրիշները  
հրաւիրելու էք . օրէ օր շատերը կը-  
գտնէք . և ով որ գտնէք և որու որ  
պատահիք հրաւիրելու էք : Աս ան-  
ցեալ շաբթուան մէջ քանի՞ հոգի  
հրաւիրեցիք . բոլոր գտածնիդ հրա-  
ւիրեցի՞ք . հարի՞ւր հոգի , քսան՝  
հինգ՝ իրե՞ք հոգի հրաւիրեցիք : Ձե-  
զի հրամայուեցաւ , և պարտաւոր էք՝  
բոլոր գտածնիդ հրաւիրէք : Տէրը  
կարողացնէ ձեզ՝ որ աս պարտքերնիդ  
կատարէք .

## ԵՆԴՐԻՆՍԻՆ ԽԻՍՏ ԱՆՅՆ- ԼՈՒՉ ԱՆԲՄՈՒՆԻՐԸ :

“ Ու տարաւ զանիկայ Յիսուսին քովը ” : Յովհ . ւ . 42 :

Տէրն մեր Քրիստոս սորվեցուցած ատենը ըսաւ , “ Ղրազը չեն վառեր ու դներ դրուանին տակը , հապա՛ աշտանակին վրայ որ լոյս կուտայ բոլոր տանը մէջ եղողներուն ” : Մատ . Ե . 15 : Քրիստոսի նպատակը ան էր՝ որ իր աշակերտները տեսնուին և ճանչցուին : Տէրն մեր Քրիստոս զանոնք լուսաւորելէն ետքը՝ ինչո՞ւ քանի մը տարի աս աշխարհիս վրայ թողուց . չէ՞ որ թողուց որպէս զի ուրիշներուն լոյս տալով՝ օրհնութեան միջոց ըլլան : Ուրեմն Քրիստոսի ո՛չ մէկ աշակերտը՝ իր լայսը՝ իր նորոգուիլը ուրիշներէն պահելու է : Բնաւ մէկը անապատը՝ կամ լեռը՝ կամ վանքը թող չերթայ . թող մէկը չըկարծէ որ դադտնի քրիստոնեայ

ըլլալով՝ կրնայ իր կեանքը միայն իր անձին համար անցընել : Մէկը ասանկ ընելու փորձութեան մէջ իյնայ նէ , թող ինքն իրեն աս խիստ դիւրին հարցումը ընէ թէ՛ մարդիկ ինչո՞ւ ճրագ կը վառեն . Աստուած ինչո՞ւ զիս լուսաւորեց . չէ՞ որ աս մութ աշխարհիս մէջ լոյս ըլլալու համար : Ամէն քրիստոնեայ հոգ տանելու է որ իր լոյսը չընսեմանայ . չէ թէ միայն գաղտնի չըմնայ , այլ սխալմունքէ՛ մարդկային աւանդութիւններէ ու վարդապետութիւններէ՛ կամ աշխարհային կեանք անցունելէ ևս՝ որեւիցէ կերպով չընսեմանայ :

“ Ու տարաւ զանիկայ Յիսուսին քովը ” :

Աս բերողը ո՞վ էր . անիկայ ձկնորս մըն էր , իմաստուն մէկը չէր . հարուստ կամ պատուաւոր մէկը , եպիսկոպոս կամ պաշտօնակալ մը չէր . այլ խեղճ ձկնորս մըն էր . անոր անունը Անդրէաս էր : Անդրէաս

Քրիստոսը ճանչնալուն պէս ուրիշները Քրիստոսի բերելու համար սկսաւ աշխատիլ . անմիջապէս դործունեայ՝ աշխատաւոր քրիստոնեայ մը եղաւ , լուսատու կանթեղ մը եղաւ . աշտանակի վրայ դրուած ճրագի պէս եղաւ :

Եռաջ իր եղբայրը Սիմօնը դտաւ , և կարելի է շատ փնտռեց որ զանիկայ գտնէ : Ենոր սիրտը ուրախութեամբ ու փափաքով լեցուն էր . և հոս հոն վազելով՝ վերջապէս զանիկայ դտաւ . և անոր իմաց տալով ըսաւ թէ՛ Մեսիան այսինքն Քրիստոսը դտանք : Փառք յաւիտեանս որ ան գալիք՝ ան մեծ թաղաւորը ան Սատանայէն՝ դժոխքէն և մեղքէն փրկող Յիսուսը եկեր է . և մենք զանիկայ տեսանք :

Ենդրէաս վերջը առաքեալ մը եղաւ , և իր բոլոր կենացը մէջ Քրիստոսի ծառայեց : Բայց հաւանական է որ՝ անոր Քրիստոսի համար բոլոր ըրածներէն ամէնէն օգտակար և հարկաւոր ծառայութիւնը՝ իր եղ-

բայրը Վրիստոսի բերելն էր : Վան-  
 զի անոր եղբայրը Սիմօն Պետրոս  
 գործունեայ՝ խոհուն՝ ճարտասան՝  
 շատ ճարպիկ՝ և առաքելոց ու եկե-  
 ղեցիներուն մէջը շատ պատուաւոր  
 մէկ մըն էր . Վրիստոսի տաճարին  
 մէջ շատ զօրաւոր սիւն մըն էր , վէմի  
 մը պէս՝ հիման քարի մը պէս էր :  
 Ենչուշտ Ենգրէաս խիստ շատերը՝  
 կարելի է հազարաւորներ Վրիստոսի  
 բերաւ . բայց առաջինը իր եղբայրն  
 էր . և անոր բոլոր բերածներէն ա-  
 մէնէն հռչակաւոր և օգտակար ան-  
 ձը՝ իր եղբայրը Պետրոսն էր : Պեն-  
 տէկոստէին օրը քարոզողը ո՞վ էր ,  
 Պետրոս չէ՞ր . ան օրը իրեք հազար  
 հողի քրիստոնեայ եղան : Ո՞վ էր որ  
 կռապաշտներուն ու հեթանոսնե-  
 րուն մէջ մտնելու դուռը բացաւ .  
 Պետրոս չէ՞ր . և անոր բացած դուռը  
 մինչև ցարդ գոցուած չէ , և յաւի-  
 տեանս պիտի չըզոցուի : Պոնտոսի՝  
 Բիւթանիոյ՝ և Եսիոյ մէջ ցրուած  
 օտարականներուն՝ այսինքն քրիստո-  
 նեաներուն երկու նամականեր գրողը՝



Պետրոս էր . և ան՝ աս երկու նամակները դրած ատենը՝ Սուրբ Հոգին գրագիրն էր, Աստուծոյ դպիրն էր . և անոր աս երկու նամակները՝ 160—180—200 լեզուներու թարգմանուած է : Այլ աշխարհիս ամէն կողմերը ամէն օր կը կարդացուի . ո՛չ իբրև Պետրոսին գրածը՝ հապա իբրև Աստուծոյ խօսքը , քանզի աս երկու նամակները Սուրբ Գրքին մէկ մասն է :

Արանի՛ Անդրէասին որ իր եղբայրը գտնելով՝ Յիսուսին բերաւ : Ինքը Քրիստոս ճանչնալէն ետքը՝ ուզեց որ եղբայրն ալ զանիկայ ճանչնայ , անոր պատուականութիւնը տեսնէ , անոր սէրը գիտնայ , անոր խօսքերը լսէ , անոր վարքն ու հրաշքները զննէ , անոր հետ խօսի , և զանիկայ ընդունի իբրև քահանայ՝ վարդապետ՝ թագաւոր և փրկիչ :

Արանի՛ Անդրէասին որ իր եղբայրը յիշեց : Արդ սիրելիներս՝ ձեզի եղբայր չկա՞յ . զանոնք մի՛ մոռնաք .

զանոնք Քրիստոսի բերելու աշխատեցէք : Արեւի է անոնք ձեզմէ աւելի օղտակար պիտի ըլլան Յիսուս Քրիստոսի գործին : Չանոնք յաւիտենական կենաց աղբիւրին բերէք . քանզի ջուրը առատ է . երկնային օրհնութիւնները անհուն ըլլալով՝ թէ՛ ձեզի և թէ՛ անոնց բաւական է : Աւ անոնք որչափ որ շատ ալ առնեն Քրիստոսէն , դուք զուրկ չէք մնար . մի՛ վախնաք :

Ար կարդանք թէ՛ Անդրէասին բրածին պէս Փիլիպպոս ալ բրաւ : Հետեեալ օրը Քրիստոս զանիկայ գտնելով կանչեց . և Փիլիպպոս անոր աշակերտ եղածին պէս՝ իր բարեկամը Նաթանայէլը գտաւ , և զանիկայ Յիսուսին բերաւ , և ան ալ աշակերտ եղաւ : Ամէն Քրիստոնեայ ասանկ ընելու է . ամէն Քրիստոսը գիտցողը՝ զանիկայ չը գիտցողներուն գիտցունելու է , և գիտցունել աշխատելու է :

Ար կարդանք թէ՛ Քրիստոս Գեննեսարէթ գնաց . և ան երկրին բնա-

կիշները զանիկայ ճանչնալնուն պէս շատ աշխատեցան որ ուրիշները աւոր բերեն : Մարկ . Չ . 53-56 : Ենոնք՝ իրենց դործերը ձգեցին որ հայրենակիցնին՝ բարեկամնին՝ դրացինին Քրիստոսի բերեն . հեռու և մօտ տեղերը լուր խրկելով՝ բժշկուելու կարօտ եղողներուն բոլորը հրաւիրեցին : Ար կարդանք թէ « վազեցին » . այսինքն՝ կարելի եղածին չափ արտորացին : Մէկը քաղցր խօսքերով համոզեցին որ Քրիստոսի գայ , մէկուն իրենց ձեռքերովը օգնեցին որ գայ . ուրիշները կարելի է ուսերնուն վրայ առնելով՝ շալկելով բերին . և մահուան մօտ եղողները անկողիններով՝ պատգարակով կամ կառքերով բերին : Արելի է տղաքներէն ոմանք ան օրը քանի մը մղոն վազելով պտըտեցան որ լուր տան . և ամէն կողմէ՝ ամէն ճամբայէ՝ փողոցէ՝ արտէ կուգային : Աւ համբերուն՝ կոյրերուն՝ կաղ՝ խուլ՝ հաշմանդամ՝ անդամալոյծ՝ թոքախտ՝ ջրգող և ամէն կերպ ախտ ունեցողներուն ամէն

կողմէ անոր գալերնին և տարուելնին դիտելը ի՞նչ զարմանալի տեսարան մը եղած պիտի ըլլայ :

Ամէն Քրիստոսը դիտցողներ՝ ասանկ ընելու են , այսինքն բոլոր սրտով աշխատելու են որ՝ զանիկայ չը դիտցողներուն գիտցունեն : Անոր Աւետարանը ուր որ քարոզուի , մեղաւորները հրաւիրելու ենք որ հոն երթան . աս ընելու՝ ամէն Քրիստոնեայ պարտաւոր է : Մէկ աշխատող և գործունեայ քրիստոնեայ մը աս կերպով՝ այսինքն մարդիկ հրաւիրելով որ Քրիստոսի դան , և անոնց օգնելով կրնայ ամբողջ թաղի մը օրհնութիւն ըլլալ :

Ասկէ 26 տարի առաջ՝ Գերմանիոյ Համպուրկ քաղաքը և ան կողմերը Քրիստոնէութեան հոգին պակասածէր , աղը անհամցաւ . բոլոր եկեղեցիները աշխարհային էին . մէջերնին հոգի չկար , կեանք բնաւ չկար : Աշխարհը եկեղեցի եղաւ , և եկեղեցին աշխարհ եղաւ , բնաւ տարբերութիւն չկար . բայց Համպուրկ քա-

ղաքը եօթը եղբայր գտնուեցան որ հոգևոր ըլլալով՝ իրենց եկեղեցւոյն վեճակին համար լացին: Անոնք վերջապէս մէկզմէկ ճանհնալով՝ մէկտեղ եկան, կօշկարի մը խանութը ժողովուեցան, աղօթեցին, ինքզինքնին դարձեալ Քրիստոսի նուիրեցին, և ուխտ ու որոշում ըրին որ Քրիստոսի գործը յառաջացնելու համար զօրութիւննին վատնեն: Ուրեմն իրենց եկեղեցիները ձգելով՝ իրենք իրենց զատ եկեղեցի մը եղան, և իրենցմէ մէկը ընտրեցին իբրև քարոզիչ:

Ա՛ 26 տարի առաջ էր. և աս եօթը անձանց ջանքերէն ի՞նչ եղաւ: Ան պզտիկ եկեղեցին՝ ան եօթը անդամէ բաղկացեալ եկեղեցիէն՝ հիմա աս թուականիս 50 հատ եկեղեցի եղաւ, և անդամներն եղան 10,000 հոգի: Հիմա 70 քարոզիչ կայ. 50,000 հոգի Աւետարանին քարոզութիւնը լսեցին. 400,000 հին և նոր կտակարան ցրուեցին, և 800,000 երես ալ տետրակ: Ամէն մարդ և ամէն կին գործունեայ քրիստոնեայ

է . ամէն մէկը Քրիստոսի գործակիցը՝ ծառան՝ սպասաւորն է . ամէն մէկը տնէ տուն կ'երթան որ՝ Սուրբ Գրքեր ու տետրակներ տան , և հայրենակիցներնին Քրիստոսի բերեն : Համպուրկի մէջ 150,000 բնակիչ կայ , և բնաւ տուն մը չկայ որ այցելուութիւն եղած չէ : Ես մարդիկը՝ իրենց պարտքէն աւելի բան մը ըրի՞ն : Ենոնք աս ճամբան բռնելով չը հարստացան . բայց ի՞նչ վնասունի :

Եւամանակ մը Եմերիգա դպրոց մը 150 ի չափ աշակերտ կար . բայց մէջերնին միայն 11 քրիստոնեայ կար , այսինքն՝ միայն 11 հոգի կային որ բարեպաշտ կը սեպուէին : Միւսները աշխարհային՝ անհոգ էին , և ոմանք ալ անհաւատ՝ ծաղրաբան էին :

Եւմէն շաբաթ իրիկուն ան 11 անձինքը կը ժողվուէին որ աղօթեն , և մէկզմէկ խրատեն : Բայց միշտ դուռը գոցելով կը կղպէին , քանզի միւսներէն կը վախնային , գուցէ

ոմանք զալով պիտի ծաղրէին, և արգիլէին երկրպագութիւննին :

Տարիի մը չափ ասանկ տւեց : Աւերջը խորհելով ըսին թէ՛ Աղէկ չենք ըներ . ան դպրոցին մէջի մեր ընկերներուն պարտքերնիս չենք կատարեր : Մենք անոնց հետ հոգիներնուն վրայ չը խօսեցանք . զանոնք արթնցունելու չաշխատեցանք . զանոնք չը հրաւիրեցինք որ Քրիստոսի գան : Աւ զարմանալի բան չէ որ՝ Աստուած զանոնք թողուց որ մեզ վախցունեն :

Աւտի որոշեցին, և մէկգմէկու խօսք տուին որ՝ ամէն մէկը իրեք հոգիի հետ խօսի, և անոնց համար յատուկ աղօթք ընէ : Օրինակի համար՝ մէկ եղբայր իրեք հոգի ո՛վ որ կ'ուզէ որոշէ, և զանոնք Քրիստոսի բերելու աշխատի, և անոնց համար յատուկ աղօթք ընէ : Աւ մէկ ուրիշ եղբայր մըն ալ՝ իրեք հոգի որոշէ՝ ուզածին պէս, այսինքն՝ ո՛վ որ կ'ուզէ ընտրէ . և բոլոր եղբայրութիւնն ալ ասանկ : Ամէն մէկը իր

մտքովը իրեք հոգի ընտրեց , և ընտրածներուն ո՛վ ըլլալը չըսաւ : Եւ մէկը միւսին ո՛վ ընտրելը չը գիտցաւ , քանզի անունները մէկզմէկու չըսին :

Ասանկ սկսեցին . և երկու շաբաթ շանցած՝ ամէն մէկը չէ թէ միայն իրեք հոգիի հետ խօսեցաւ , այլ 30—50—100 հոգիի հետ խօսեցաւ : Արելի է ամենուն հետ խօսեցան . քանզի ամէնը արթնցան . ամէնն ալ անոնց երթալով հարցուցին թէ՛ ի՞նչ ընեմ որ փրկուիմ , և հոգիս ապահով ըլլայ : Անոնք դասերնին ձգելով Քրիստոսի ոտքերուն քովը նստան և սորվեցան : Ան 11 հոգիներուն սենեակները առտուրնէ մինչև իրիկուն լեցուն էր : Անոնց հետ և անոնց համար աղօթք ըրին , երգեցին , և խրատ տուին : Աս հոգևոր գործը՝ ելեքտրականութեան պէս սենեակէ սենեակ և սրտէ սիրտ անցաւ . կրակի պէս ամէն կողմ տարածուեցաւ : Աստուած երկինքը ճեղքելով իջաւ . և մեծ լեռները դողալով փախան , և անոր թշնամինե-



րուն հպարտութիւնը և ամբարտաւանութիւնը ինկաւ : Անհաւատութիւնը փախաւ . անհոգութիւն չը մնաց . և ան դպրոցը եղողներէն շատը քրիստոնեայ ըլլալով քարոզիչ եղան . ոմանք միսիօնար եղան , և Հնդկաստան գացին՝ որ կուսպաշտները Քրիստոսի բերեն :

Սիրելիներս , եղբայրնիդ Քրիստոսի բերի՞ք . եթէ չը բերիք , հիմա չէ՞ք աշխատիր : Դրացի՝ ազգական ունիք . զանոնք արթնցունելու աշխատելու չէ՞ք . անոնց երթալով ըսէք թէ՛ արև ծագեց . ինչո՞ւ մութ տեղը կը մնաք : Յիսուս փրկիչը եկաւ , ինչո՞ւ մեղքի մէջ կը մեռնիք :

Բսենք թէ՛ մէկ եկեղեցւոյ մը մէջ հարիւր անդամ կայ . եթէ աս հարիւր քրիստոնեաները աշխատելով՝ ամէն մէկը իրեք հոգի Քրիստոսի բերէ , ան եկեղեցւոյն մէջ 300 նոր եղբայր կ'ըլլայ , և բոլոր անդամները 400 կ'ըլլան : Եւ եթէ աս 400 քրիստոնեաները աշխատելով՝ ամէն մէկը իրեք հոգի Քրիստոսի բերէ , ան

եկեղեցւոյն մէջ 1200 նոր եղբայր կ'ըլլայ, և ան եկեղեցւոյն անդամները 1600 կ'ըլլայ : Եւ ան ատենը նոր տուն մը՝ ժողովատեղի մը հարկաւոր կ'ըլլայ, արդէն եղածէն ութը անգամ աւելի մեծ ժողովատեղի մը պէտք կ'ըլլայ :

Ուրեմն չե՞ս արթննար՝ եղբայր . և Քրիստոսի համար չե՞ս աշխատիր : Դուն անոր ծառան չե՞ս . և անոր գործին մէջը գտնուելու չե՞ս : Են ինչո՞ւ քեզ կանչեց, և քեզ լուսաւորելէն ետքը՝ ինչո՞ւ աս աշխարհիս մէջ թողուց : Պատճառը ան է որ՝ դուն հարուստ ըլլաս, կամ պատուաւոր՝ պաշտօնակալ ըլլաս : Ո՛չ . այլ որ դուն լոյս տաս . և շատերուն օրհնութեան միջոց ըլլաս :

## ԵՌԵՆՁԻՆ ԵՂՕԹԻՐ :

“Իսկ դուն երբոր աղօթք կ'ընես՝ մտիր քու սննեակդ , և դուռը գոցելով աղօթք ըրե քու Հօրդ որ գաղտուկ տեղ կը գտնուի , և քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ , քեզի յայտնապէս հատուցում պիտի ընէ” : Մատթ . Է . 6 :

Մէկ ծեր մարդ մը ըսաւ թէ՝ “Ես եօթանասուն տարի աղօթեցի՝ բայց ընաւ աղօթած չեմ” : Ես ի՞նչպէս կրնայ ըլլալ . ասանկ բան կ'ըլլայ . այո , կրլայ , եղաւ : Ես խեղճ ծերը իրէք տարեկան եղած ատենը , իր մօրմէն կարճ աղօթք մը սորվեցաւ , և ան աղօթքը իրէք տարեկանէն մինչև եօթանասուն իրէք տարեկան եղած ատենը՝ ամէն իրիկուն կըսէր . և եօթանասուն տարի աս աղօթքը ընելուն համար՝ ան Փարիսեցիին պէս իր սրտին մէջ՝ “Ով Տէր շնորհակալ եմ որ ուրիշ մարդոց պէս չեմ” ըսելով խիստ հպարտացաւ :

Բայց եօթանասուն իրէք տարեկան եղած ատենը՝ Եստուծոյ Հո-

գիովը արթնցաւ . իր ինկած և պիղծ վեճակը տեսաւ , և կոտորած սրտով Մաքսաւորին պէս՝ “ Ով Աստուած ողորմէ ինձի մեղաւորիս ” ըսելով՝ աղօթեց : Ան օրէն ետքը՝ հոգիով և ճշմարտութիւնով աղօթեց և երկրպագութիւն ըրաւ Աստուծոյ . Աստուծոյ հետ քալեց ; խօսեցաւ , Աստուծմէ շատ խնդրելիք բաներ ունէր , շատ շնորհակալութիւններ ունէր անոր մատուցանելիք : Այլ միայն աղօթքի խօսքեր չըսաւ , հապա՝ ճշմարտապէս աղօթեց : Ո՛չ թէ միայն շրթունքով՝ այլ սրտով աղօթեց , միայն սովորութեան համեմատ չըրաւ՝ հապա բոլոր սրտով և սիրով աղօթեց , ո՛չ թէ միայն մօրմէն սորվածին պէս՝ այլ Աստուծմէ սորվածին պէս աղօթք ըրաւ : Յիշեալ անձր քանի մը տարի աւելի ապրեցաւ , և շատ անգամ կըսէր՝ Աս ան ծերնեմ որ եօթանասուն տարի աղօթելով՝ բնաւ աղօթք ըրած չէի :

“ Իսկ դուն երբոր աղօթք կընես՝ մտիր քու սենեակդ ” : Աս խօսքե-

րուն վրայ խորհրդածելու քանի մը բաներ կան :

1. Հոս յիշուած աղօթքը առանձին աղօթքն է :

Հրապարակաւ եղած աղօթքը՝ ժողովատեղին ըլլալու է, ուրիշ տեղ չըլլար : Նմանապէս ընտանեկան աղօթքը՝ տունը՝ ընտանեաց մէջ ըլլալու է : Սակայն հոս յիշուած աղօթքը՝ ո՛չ հրապարակական և ո՛չ ընտանեկան՝ այլ առանձին աղօթք է, այսինքն անձի մը յատուկ իրեն համար ըրած աղօթքն է : Այլ աս առանձին աղօթքը գաղտուկ թող ըլլայ, աս յատուկ անձնական աղօթքը՝ առանձին սենեակ մը ըլլալու է : “Իսկ դուն երբոր աղօթք կրնես՝ մտիր քու սենեակդ” :

2. Աս խօսքին նշանակութիւնը շատ ընդարձակ է :

“Իսկ դուն” այսինքն ով որ ես, թէ՛ հրէայ և թէ՛ հեթանոս՝ արու

կամ էգ՝ ծեր կամ տղայ՝ Առևաւոր-  
չական կամ Բողոքական՝ եկեղեցւոյ  
անդամ ըլլաս կամ չըլլաս՝ ով որ ես ,  
առանձին աղօթք ընելու համար  
հրապարակը մի՛ ելեր , ժողովատե-  
ղին մի՛ մտներ , ուրիշներուն հաւա-  
քուած տեղը մ՛երթար , քանզի ատ  
տեղերը յարմար չեն . “Մտիր քու  
սենեակդ” :

3 . Ես խօսքին նշանակութիւնը շատ  
զօրաւոր է :

“Մտիր քու սենեակդ և դուռը  
զոցէ” : Բնկերներէդ զատուէ , սե-  
նեակդ առանձին քաշուէ . հոն մի-  
նակ կեցիր . երկնաւոր Հայրդ հոն  
կայնած քեզի կ'սպասէ . քու հետդ  
տեսնուիլ և քեզ օրհնել կուզէ . ու  
հոն իրմէ ՚ի զատ մէկը չկայ : Ես  
պատճառաւ բնաւ մէկըներս մ՛առ-  
ներ , ամենամեծ բարեկամդ անգամ  
թող չի գայ . աշխարհը պիղծ է .  
դուռդ զոցէ անոր վրայ . և որչափ  
որ կարելի է , աշխարհային զբաղ-  
մունքներդ գուրս ձգէ : Մեծ գործ

մը ունիս . յաւիտենականութեան վերաբերեալ գործ ունիս . խելքդ չը ցրուելու համար չէ թէ միայն դուռդ՝ այլ աչքերդ ալ գոցէ :

Եթէ դիտաւորութիւննիս է միայն խօսիլ , և սովորութիւն մը կատարել , աս տեսակ ազօթքը՝ ուր որ կըլլայ թող ըլլայ , սենեակի մը մէջ կամ շուկան՝ աչքը բաց կամ գոց՝ բնաւ տարբերութիւն չընէր : Սակայն եթէ քանի որ բերաննիս կըշարժի , դիտաւորութիւննիս է ճշմարտապէս մեր երկնաւոր Զօրը հետ խօսիլ՝ շիտակ անոր նայիլ՝ անոր վրայով մտածել՝ անոր հետ հաղորդակցիլ՝ և անոր ձեռքէն օրհնութիւն ընդունիլ , պէտք է որ առանձին տեղ մը փնտռենք : Շատ անգամ այդի մը՝ պարտէղ մը՝ լեռ մը՝ կամ անապատ մը սենեակի մը չափ առանձին կրնան ըլլալ : Տէրն մեր Քրիստոս սղքատ ըլլալով՝ սենեակ բնաւ չունէր որ առանձնանալով ազօթէր : Եւ կրկարդանք թէ՛ անգամ մը արևը ծագելէն շատ առաջ դուրս ելլելով՝ և առան-

ձին տեղ մը երթալով՝ հոն աղօթք  
 րուա : Արբեմն աղօթելու համար  
 լեռը ելաւ , և իրիկուն ըլլալով՝ հոն  
 մինակ մնաց : Անգամ մը պարտե-  
 զին անկիւնը քաշուելով՝ ծնկան վրայ  
 գալով աղօթեց : Ար կարդանք թէ՛  
 Պետրոս առաքեալ մինակ ըլլալով՝  
 աղօթելու համար տանիքը ելաւ :  
 Իսահակ՝ դաշտը ելաւ : Նաթանա-  
 յէլ՝ թղենիի մը տակը դնաց : Նզե-  
 կիա թագաւորը՝ իր երեսը դէպի  
 պատը դարձուց : Յակոբ՝ գետի մը  
 եզերքը մինակ ըլլալով՝ բոլոր գիշերը  
 աղօթքով անցուց : Դաւիթ չորրորդ  
 Սաղմոսին մէջ կրսէ թէ՛ “ Խօսեցէք  
 սրտերնուդ հետ անկողիններնուդ  
 վրայ ” , այսինքն խորհրդածութեամբ  
 աղօթեցէք :

4 . Մեր երկնաւոր Հօրը հետ ա-  
 ռանձին խորհրդակցիլ՝ մեզի մեծ  
 շնորհք և ոգորմութիւն է :

Մարդոց մէջ ամենամեծ փառքն  
 ու պատիւը՝ թագաւորին մտերմու-



Թեանը արժանանալն է : Շատ անգամ մէկը՝ Թագաւորին հետ առանձին տեսնուելու համար շատ չ'աջխատիր : Ահ ինչե՞ր չեմ տար , անոր հետ տասնուհինգ րոպէ տեսնուելու համար , կըսէ : Սակայն Թագաւորաց Թագաւորին կողմանէ աս մեծ շնորհքը քեզի եղած է՝ ո՛վ մտիկ ընող կամ ընթերցող եղբայր : Աւ աս չէ թէ տարին մէկ անգամ , այլ ամէն օր , այո՛ օրը եօթը անգամ՝ օրը եօթանասուն անգամ եօթը աս շնորհքը քեզի կըլլայ : Աթէ աշխարհիս բոլոր Թագաւորներն ալ մերժեն քու հետդ տեսնուիլ , երկնաւոր Թագաւորը չիմերժեր , այլ իր ականջը քեզի խոնարհեցընելով՝ քու խնդրուածքներդ կընդունի : Անոր քեզի շնորհած աս մեծ պատիւը չե՞ս ընդունիր : Աս մեծ շնորհքը չե՞ս գործածեր : Աստուած քեզ կը հրաւիրէ որ իր հետը առանձին տեսնուիս . և դուն չե՞ս ուզեր քու Հօրդ հետ առանձին տեսնուիլ՝ ե՛ղբայր :

5 . Եստուծոյ բարեկամները՝ անոր հետ առանձին տեսնուած ատեննին , անոր ողորմութեան և շնորհքին մեծամեծ օրհնութիւնները առին :

Ենոնք խիստ մօտենալով Եստուծոյ , անոր հետ մինակ եղած ատեննին , անոր դէպի ղերենք ունեցած սիրոյն ամենամեծ վկայութիւնը առին : Յակոբ բոլոր գիշերը մինչև արշալոյս Եստուծոյ աղօթելով յաղթող գտնուած՝ և շատ օրհնութիւններ առած ատենը , անոր հետ մինակ էր : Դաւիթ թագաւոր Եստուծոյ իրեն ցուցուցած զարմանալի շնորհքները յիշելով՝ “ Ով Տէր Եստուած՝ ես ով եմ , և իմ հօրս տունը ի՞նչ է , որ զիս մինչև հոս բերիր ” ըսած ժամանակը , անոր հետ մինակ էր : Մովսէս Եստուծոյ հետ մինակ էր երբոր ըսաւ “ Թէ որ քու ներկայութիւնդ մեզի հետ չերթայ , մեզ ասկէց մի՛ հաներ ” : Եբրահամ Եստուծոյ հետ մինակ էր երբոր ըսաւ , “ Թող Իս-

մայէլը ապրի քու առջևդ” : Յոր  
 Աստուծոյ հետ մինակ էր երբոր խոս-  
 տովանեցաւ թէ՛ “Նս քու վրայովդ  
 ականջի լուրով լսեր էի , բայց հիմա  
 իմ աչքս քեզ կրտեսնէ” : Աղեսէ  
 մարգարէն ան որբեարի կնկան մե-  
 ռած տղան ողջնցընելու համար իր  
 Աստուծոյն աղօթք ըրած՝ և իր ա-  
 ղօթքը ընդունուած ատենը , Աստ-  
 ուծոյ հետ մինակ էր : Դանիէլ մար-  
 գարէն՝ երբ լուր առաւ Աստուծմէ  
 թէ ինքը խիստ ընդունելի և սիրելի  
 մարդ մըն է , Աստուծոյ հետ մինակ  
 էր : Նւ դուք սիրելիներս , անոր հետ  
 մինակ ըլլալ չէ՞ք ուղեր :

6. Աստուծոյ հետ առանձին չըտես-  
 նուողը՝ անոր զաւակը չէ :

Աստուծոյ որդիները զանիկայ չե՞ն  
 սիրեր . անոր հետ խօսիլ չե՞ն ուզեր .  
 անոր հետ առանձնանալ չե՞ն ուզեր :  
 Ն[թէ մէկը չուզեր , յայտնի է որ  
 անիկայ Աստուծոյ որդին չէ՛ Աստ-  
 ուծմէ ծընած չէ՛ և զԱստուած չի  
 սիրեր : Մովսէս լեռը ելաւ , և 40

որ ու 40 գիշեր Աստուծոյ հետ մինակ մնաց . և հոն մնաց մինչև Աստուած իրեն ըսաւ լեռնէն իջի՛ր, և անոր երեսը աւրած չէր, այլ պայծառ և լուսափայլ էր : Եւ թէ որ Աստուած չըսէր անոր, Վեռնէն իջիր, Մովսէս հոն 40 տարի՝ 40 հազար տարի՝ յաւիտեանս յաւիտենից մեծ ուրախութեամբ պիտի մնար, և իր ուրախութենէն երեսը արևի պէս պիտի փայլէր : Եւ դուք հինգ կամ տասը ըոպէ անոր հետ առանձին չէք խօսիր՝ եղբայրներս : Ուրեմն Մովսէսին պէս չէք . անոր պէս Աստուծոյ բարեկամը՝ ծառան՝ որդին չէք : Եւ գիտցէք որ ձեր մէջը Աստուծոյ սէրը չկայ :

7. Առանձին աղօթք չընողը՝ բնաւ աղօթք չըներ :

Անանկը՝ թէ որ ամէն տօնի և կիրակի օրեր եկեղեցի երթալով՝ աղօթքները ըսէ, տակաւին ան մարդուն պէս է որ եօթանասուն տարի աղօթած բայց բնաւ աղօթք ըրած

չէր : Աղօթք չընող մէկն է . երկրպագութիւն չընող՝ առանց ողորմութեան և շնորհքի այսինքն Աստուծոյ շնորհքէն զրկուած մէկն է : Անոր աղօթքը՝ աղօթք չը սեպուիր . սրտէն չիգար . ընդունելի չէ : Միայն հրապարակական կամ ընտանեկան աղօթքը՝ շրթունքով երկրպագութիւն ըլլալով՝ կեղծաւորութիւն է , զզուելի է , անշունչ մարդու պէս է որ միայն երեոյթ ունի , բայց կեանք՝ հոգի բնաւ չունի . որուն աչքերնուս առջևէն վերցուելով թաղուիլը կուզենք :

Սիրելի եղբայր , սենեակդ մտնելով դուռը գոցել՝ քեզի բանտը երթալու պէս չըլլայ . քու սենեակդ՝ քեզի խոր խաւար բանտի մը պէս չըլլայ . այլ քու Հօրդ պալատին՝ Քրիստոսի իր սիրելիներուն համար պատրաստած բերկրալի սենեակին պէս թող ըլլայ : Հօն գնա՛ . Աստուծոյ հետ խօսելու համար՝ հօն գնա՛ . քու փափաքներդ անոր յայտնելու համար հօն գնա . անկէ օրհնու-

Թիւններ առնելու համար հոն գնա՛ ,  
 Քրիստոսի միջնորդութեանը և ար-  
 դարութեանը . յուսալով՝ ամէն օր  
 հոն գնա՛ : Օգնութիւն և ողորմու-  
 թիւն պիտի գտնես հոն . և ուրախ  
 սրտով՝ ու զուարթ դէմքով անկէ  
 պիտի դառնաս :

## ՉՈՐ ՈՍԿՈՐՆԵՐՈՒՆ ԴԵՇՏՐ :

“Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ , և Տէրը զիս Հոգիով Հանեց , ու զիս դաշտին մէջը դրաւ . և անիկայ ոսկորներով լեցուն էր : Ու զիս անոնց քովերէն պտտացուց շուրջանակի . և ահա անոնք դաշտին երեսին վրայ խիստ շատ էին , և ահա անոնք խիստ չորցած էին :

Ու ինծի ըսաւ . Որդի՛ մարդոյ՝ աս ոսկորները կրնա՞ն կենդանա- նալ . ու ըսի . Ո՛վ Տէր Նահովայ՝ դուն գիտես : Ու ինծի ըսաւ . Ես ոսկորներուն վրայ մարգարէութիւն ըրէ , ու անոնց ըսէ՛ . Ո՛վ չորցած ոսկորներ՝ Տէրոջը խօսքը մտիկ ըրէք . այսպէս կ'ըսէ Տէր Նահովան աս ոսկորներուն . Ե՛հա ես ձեր մէջը Հոգի պիտի դնեմ , ու պիտի կենդանանայք . Եւ ձեր վրայ ջիղեր պիտի դնեմ , ու ձեզ միտով պիտի պատեմ , ու ձեզ մորթով պիտի ծածկեմ , և ձեր մէջը շունչ պիտի դնեմ , ու պիտի կենդանանայք . և պիտի գիտնայք թէ ես եմ Տէրը :

Ու ես մարգարէութիւն ըրի՛ ինչպէս որ ինծի հրամայուեցաւ . ու մարգարէութիւն ըրածիս պէս՝ ձայն մը եղաւ . և ահա շարժում մը եղաւ . ու ոսկորները իրարու մօտեցան՝ ոսկորը իր ոսկորին : Եւ տեսայ որ՝ ահա անոնք ջիղերով ու միտով պատեցան , ու վրայէն մորթով ծածկուեցան . բայց անոնց մէջը շունչ չկար : Ե՛ս աստեղ ինծի ըսաւ . Շ շունչին մարգարէութիւն ըրէ , մարգարէութիւն ըրէ՛ որդի՛ մարդոյ՝ ու շունչին ըսէ՛ . Տէր Նահովան այսպէս կ'ըսէ . Ո՛վ շունչ՝ չորս Հովերէն եկիւր , ու աս սպաննուածներուն վրայ փչէ՛ որ կենդանանան : Եւ ես մարգարէութիւն ըրի , ինչպէս որ ինծի հրամայեց . ու շունչը անոնց մէջը մտաւ , ու կենդանացան , և իրենց ոտքերուն վրայ կայեցան . ու խիստ մեծ զօրք մը եղաւ” : Եղեկ . Էէ . 1-10 :

### Հոս քանի մը բան կը տեսնենք :

#### 1. Մէկ տխուր տեսարան մը կը տեսնենք :

“Տէրոջը ձեռքը իմ վրաս եղաւ , և Տէրը զիս Հոգիով Հանեց , ու զիս դաշտին մէջը դրաւ . և անիկայ ոսկորներով լեցուն էր : Ու

զիս անոնց քովերէն պտըտցուց շուրջանակի . և ահա անոնք դաշտին երեսին վրայ խիստ շատ էին , և ահա անոնք խիստ չորցած էին :

Ու ինծի ըսաւ . Որդի՛ մարդոյ՝ աս ոսկորները կրնամն կենդանա- նաւ . ու ըսի . Ո՛վ Տէր Եհովայ՝ դուն գիտես" : 1-3 :

Ես մեծ ձորը ոսկորներով լեցուն էր . մէկ անձ մը չկար . ձեռք՝ ոտք՝ մարմին՝ միս՝ ջիղ՝ մորթ բնաւ չկար . միայն ոսկորներ կային որոնք խիստ շատ և չորցած էին : Եւ այնչափ ցրուած էին աս ոսկորները՝ որ ամէն մէկ անդամը միւսէն հեռացած էր . մէկ ոտքին ոսկորը միւսինին մօտ չէր . ամէնը մէկգմէկէ զատուելով ցրուած էին . աս ոսկորները կրնա- յի՞ն ապրիլ :

Ես լալագին տեսարանը Եղեկիէլ մարգարէն տեսաւ : Եսիկայ Եստուած ցուցուց անոր , և ասոր միջոցովը Եստուած անոր սորվեցուց թէ՛ բոլոր Խորայէլի տունը ճիշտ նոյն անյոյս վիճակին մէջն էր : Անդանի մէկը չկար . աղօթող մէկը չկար՝ զԵստուած փնտռող չկար՝ հոգևոր բաներ ուզող չկար . բոլորը մեղքե- րու և յանցանքներու մէջ մեռած



անձինքներ էին : Աշխարհասիրութեան՝ հպարտութեան՝ գինովութեան և կռապաշտութեան մէջ էին : Սատանային ձեռքը կրննջէին , անոր իշխանութեանը տակն էին . և Աստուծոյ՝ երկնից՝ ու յաւիտենականութեան համար մեռածի պէս էին : Մտի՛կ ըրէք , ակա՛նջ դրէք , ձայն մը կը լսուի՞ . ապաշխարութեան՝ սիրոյ՝ երկրպագութեան ձայն մը կը լսուի՞ : Ա՛չ , չի լսուիր : Մտադրութիւն ըրէք , աղէկ նայեցէք . մէկ շարժող անդամ մը կա՞յ , կենաց ճամբան գացող մը կա՞յ . Աստուծոյ դառնալ ուզող մը կը տեսնուի՞ : Ա՛չ , բնաւ չի տեսնուիր . չունչ առնող ալ չկայ . բոլորը մեռած են :

Աս տեսարանը միայն չըէի՞ց մէջ կը տեսնուի . ուրիշ ազգերուն մէջ չի՞ տեսնուիր : Աս երկրին բնակիչները ճիշտ աս վիճակին մէջ չե՞ն : Այո՛ . աս տեղին մարդիկը ճիշտ աս վիճակին մէջն են : Ըիմա կարգաւ տնէ տուն գացէ՛ք . մտադրութեամբ քննեցէ՛ք . ամենուն վարքը տեսէ՛ք ,

գիտաւորութիւնը՝ փափաքը՝ յոյսը սորվեցէք . հոգեո՞ր են , թէ բոլովին աշխարհային : զԱստուած փնտռող՝ անոր կամքը և ճամբաները գիտնայ ուզող կա՞յ . Քրիստոսի թաղաւորութիւնը և ճշմարտութիւնը ընդունող մը կա՞յ . Քրիստոսի նախատինքը բոլոր աշխարհիս գանձերէն աւելի մեծ հարստութիւն սեպող կը գտնուի՞ : Ա՛չ . առաջին քննած տուներնիս ասանկ մէկը չի գտնուիր . ուրեմն միւս տունը երթանք : Հոն ութը խելքերնին գլուխնին եկած մարդիկ կան . բայց կ'երևնայ թէ՛ բոլորը կամ աշխարհիս պատիւը կը փնտռեն , կամ հանգստութիւնը՝ կամ փառքը . և կամ հարստութիւնը կ'ուզեն , և աս բաները Աստուծոմէ առաջ և Աստուծոմէ աւելի կ'ուզեն : Հոգեոր բաներ խորհող չկայ . կենդանի եղող չկայ . բոլորը աշխարհային են . բոլորը մեռածի պէս են :

Աւրեմն անոր գիմացի տունը երթանք , որ խիստ մեծ է : Աս տունը

25—30 անձինքներ կը գտնուին . և հաւանական է որ անոնցմէ մէկն ալ Վրիստոսի աշակերտը չի սեպուիր , բոլորը աշխարհքին աշակերտներն են , աշխարհքին հպատակ են , աշխարհքէն կը սորվին , աշխարհային բաներ կը խորհին . բոլոր սիրածնին՝ փափաքածնին և յուսացածնին աշխարհային բաներ են :

Եւ ինչպէս որ աս քննած տուներնիս են , նմանապէս չէ՞ն 100,000 տուններ ալ : Երբեմն մէկ երկու մարդիկ կը գտնուին որ աս չար աշխարհքէն քաշուելով Վրիստոսի փառքին համար կ'ապրին , և անոր համար ամէն բան կորսնցնելու պատրաստ են . սակայն զրեթէ ամէնը չէ թէ Վրիստոս՝ այլ ինքզինքնին կը սիրեն . սրտերնին ոչ թէ Վրիստոսի՝ այլ աշխարհքին կուտան . իրենց փառքը կըփնտուեն՝ և Վրիստոսի ճշմարտութեանը չեն փափաքիր : Եստուած զիրենք ինչո՞ւ ստեղծեց և Վրիստոս իրենցմէ ի՞նչ կըպահանջէ , չեն խորհիր : Իրենց եկեղե-

ցիներուն արարողութիւնները զգուշութեամբ կը կատարեն , բայց տակաւին իրենց խորհուրդները բոլորովն աշխարհային են : Եւ իրենց մեղքերէն դարձող չկայ :

Ահա՛ հոն ստութեամբ՝ անիրաւութեամբ՝ կաշառակերութեամբ շնութեամբ և ամէն տեսակ չարութեամբ լեցուած չէ՞ : Այո՛ . մարգարէին տեսիլքին պէս խիստ շատ և չորցած ոսկորներով լեցուած է : Եւ աս չոր ոսկորները կրնա՞ն ապրիլ . գանք աս հարցմանը պատասխանին :

2. Ես չոր ոսկորներուն քարոզուելուն ազդեցութիւնը կը տեսնենք :

Չոր ոսկորներուն քարոզելէն ի՞նչ օգուտ կ'ըլլայ : Մեռածներուն քարոզելէն ինչ շա՞հ յառաջ կուգայ : Սակայն Աստուած անանկ հրամայեց . և մարգարէն անմիջապէս հնազանդեցաւ : Եւ թէ որ Աստուած ղինքը գերեզմաննոցը խրկէր թաղուածներուն քարոզել , անտարա-

կոյս ուրախութեամբ կ'երթար . յուսալով թէ Աստուած ոմանք պիտի յարուցանէ՝ ուրախութեամբ կ'երթար կը քարոզէր :

“ Եւ ինձի ըսաւ . Աս սկորներուն վրայ մարգարէութիւն ըրէ , ու անոնց ըսէ՝ . Մ՛վ չորցած սկորներ՝ Տէրոջը խօսքը մտիկ ըրէք . այսպէս կ'ըսէ Տէր Ահոյանն աս սկորներուն . Ահա ես ձեր մէջը հոգի պիտի դնեմ , ու պիտի կենդանանաք . Եւ ձեր վրայ ջեղէր պիտի դնեմ , ու ձեզ միտով պիտի պատեմ , ու ձեզ մորթով պիտի ծածկեմ , և ձեր մէջը շունչ պիտի դնեմ , ու պիտի կենդանանաք . և պիտի գիտնաք թէ ես եմ Տէրը ։

Ու ես մարգարէութիւն ըրի՝ ինչպէս որ ինձի հրամայուեցաւ . ու մարգարէութիւն ըրածիս պէս՝ ձայն մը եղաւ . և ահա շարժում մը եղաւ . ու սկորները իրարու մօտեցան՝ սկորը իր սկորին : Եւ տեսայ որ՝ ահա անոնք ջեղէրով ու միտով պատեցան , ու վրայէն մորթով ծածկուեցան . բայց անոնց մէջը շունչ չկար ” : Եղեկ . Ըէ . 4-8 :

Ամերիկացի Միսիօնարները Տաճկաստան եկած ատեննին՝ Ամերիկացի բարեկամներէն ոմանք զանոնք ծաղրեցին , և ի՞նչ օգուտ , ըսին . մեռածները կրնա՞ք ապրեցնել . Աթովպացիին մորթը կամ վագրին բիծերը կրնա՞ք փոխել : Աթէ կը խորհէք որ Օսմանեան տէրութեան մէջ գտնուած ազգերը ձեզի մտիկ ընելով՝ իրենց փուճ յոյսերը ձգեն , և մեղքերնին ձգելով Աստուծոյ դառնան , յիմար

էք . անանկ բան չի կրնար ըլլալ ,  
անկարելի է :

Բայց անոնք ըսին թէ՛ Ասանկ  
բան շատ անգամ եղած է . և ինչո՞ւ  
նորէն չի պիտի ըլլայ : Մեր նախա-  
հայրերը առաջ կռապաշտ չէի՞ն .  
բայց Աւետարանին պաշտօնեաները  
Անգղիա երթալով՝ քարողեցին , և  
մեր նախնիքը կռապաշտութիւնը  
ձգելով՝ Քրիստոսի օրէնքը ընդու-  
նեցին . և ինչո՞ւ Տաճկաստան ա-  
նանկ պիտի չըլլայ : Անոնք ըսին թէ՛  
Ան ատենը հրաշքի ատեն էր , և դուք  
հրաշք չէք կրնար ընել : Միսիօնար-  
ները պատասխանեցին թէ՛ Հաւատ-  
քը հրաշքէն չէ , այլ լսելէն . և լսելը  
Աստուծոյ խօսքէն : Հրաշքը սիրտը  
չի փոխեր : Թէ որ մարդս Աստուծոյ  
խօսքին այսինքն չին և Նոր կտա-  
կարանին մտիկ չընէ , որչափ ալ մեծ  
հրաշք ըլլայ , մինչև անգամ մեռել-  
ներէն մէկը ելլէ՛ պիտի չը հաւատայ  
ըսին :

Ուստի Տաճկաստան եկան , ու  
Սիւրիայի մէջ քարողել սկսելով՝

ըսին , “ Ո՛վ շրջած սուրբեր՝ Տէրուք Խօսք  
 Գրեկ քեզ ” : Եւ անմիջապէս շարժում  
 ու ձայն եղաւ . և ոսկոր ոսկորի մօ-  
 տենալով՝ ժողովուրդ եղաւ . և վեր-  
 ջապէս ձայնը այնչափ շատ եղաւ որ՝  
 հեռուէն լսուեցաւ . և Տէրութեան  
 մեծ պաշտօնեաները լսելով ոտք ե-  
 լան . և Պօլսոյ Պատրիարքները լը-  
 սելով շատ վախցան , և աս շարժու-  
 մը ու ձայնը արգիլելու համար հրո-  
 վարտակ հրովարտակի ետեէ հանե-  
 ցին : Բայց շարժումն ու ձայնը շատ-  
 ցաւ . ու ոսկորները աւելի արագ շար-  
 ժելով՝ ոսկորը ոսկորին մօտեցաւ , և  
 վերջապէս ժողովուրդներ եղան . և  
 ժողովատեղիները փսիաթ (խասըր)  
 կամ աթոռ գտնուեցաւ . և նստող-  
 ները ալ չոր ոսկորներու չէին նմա-  
 նիր , այլ անոնց վրայ ջիղեր և միս  
 պատելով՝ մորթով ծածկուեցան , և  
 մարդու ձև եղան : Այ հողին մէջ չեն  
 պառկիր , փսիաթի վրայ կամ աթոռի  
 վրայ կը նստին , այսինքն քրիստոնեայ  
 ժողովուրդի սկսեցին նմանիլ :

Աւետարանը ուր որ քարոզուի ,

հոն շարժում կ'ըլլայ , ձայն կ'ըլլայ , մեծ փոփոխութիւն կ'ըլլայ , խաւարը կ'անցնի , աղէկ բաներ կ'երևան , չոր ոսկորները ջիղերով և միսով կը ծածկուին և մարդու ձև կ'առնեն : Բայց բան մըն ալ պէտք է : Ար կարդանք թէ (համար 8)՝ « Բայց անոնց Բջջ շո-շո Վար » : Մարգարէն անոնց քարոզելէն ետքը , անոնց մէջ կենդանութիւն չկար . քարոզը զանոնք չապրեցուց , և չէր կրնար ապրեցնել . զանոնք միացուց , անոնց ձև տուաւ , բայց անոնց կեանք չէր կրնար տալ . քարոզը կարող չէ կենդանացնել . բան մըն ալ պէտք է :

Գանք հիմա անոր :

### 3. Սուրբ Հոգւոյն գալստեանը համար աղօթքին զօրութիւնը կը տեսնենք :

« Ան ատենը քննի բաւ . Հունչին մարգարէութիւն ըրէ , մարգարէութիւն ըրէ՝ որդի մարդոյ՝ ու շունչին ըսէ . Տէր Ահովան այսպէս կ'ըսէ . Ո՛վ շունչ՝ չորս հովերէն եկուր , ու աս սպաննուածներուն վրայ փչէ՝ որ կենդանանան : Աւ ես մարգարէութիւն ըրի , ինչպէս որ քննի հրամայեց . ու շունչը անոնց մէջը մտաւ , ու կենդանացան , և իրենց ոտքերուն վրայ կայնեցան . ու խիստ մեծ զօրք մը եղաւ » . Ագեկ . լէ . 9-10 :



Մարգարէն Աստուծոյ աղօթքը ըրաւ որ մեռեալները իր Հոգիովը ապրեցնէ : Սուրբ Հոգիէն խնդրեց որ՝ գալով անոնց վրայ փչէ , որպէս զի ապրին : Մարգարէն քարողեց և աղօթեց . և թէ որ քարողել անոր պարտքն էր , աղօթել ալ պարտքն էր : Աթէ առանց քարողելու աղօթէր , մէկ ոսկոր մը չէր շարժեր , ոսկորը ոսկորին քով չէր գար . և անոնց վրայ ջիղեր ու միս չէր պատեր . հապա ամէնքն ալ առաջուան պէս անձև՝ չորցած ու ցրուած պիտի մնային . ժողովուրդ չէին ըլլար : Աւթէ որ միայն քարողէր ու աղօթք՝ չընէր , բոլորը անշունչ՝ անկենդան մեռեալներու պէս պիտի մնային :

Աղբայրներս , հիմա Աւետարանը աս քաղաքին և աս երկրին չորս կողմը կը քարողուի . և շատ տեղեր ժողովուրդ կայ : Ուրեմըն աղօթք ընելու ենք որ կենդանութեան Հոգին գայ , կենաց աղբիւրը եղող Սուրբ Հոգին գայ . եթէ ոչ կեանք չկայ : Կեանք Սուրբ Հոգիէն կուգայ . կե-

անք տուողը ան է . կեանքը անկէ է , մեզմէ չէ , մարդոցմէ չէ՝ մարգարէէն չէ՝ առաքեալներէն չէ՝ հրեշտակներէն չէ՝ այլ Սուրբ Հոգիէն է : Ուրեմն մարդոց չը յուսալով՝ Աստուծոյ Հոգիին ապաւինինք : Առանց ձանձրանալու աղօթելու ենք որ Սուրբ Հոգին բոլոր աս ժողովուրդներուն վրայ առատութեամբ թափի , որ անոնք ապրող հոգի ըլլան , և ոտքի վրայ կայնելով՝ մեծ զօրք մը ըլլան : Աղօթելու ենք որ Սուրբ Հոգին աս երկրին բնակիչներուն վրայ գայ որ՝ դուք ալ կենդանանալով կեանք գտնէք ու յաւիտեանս ապրիք . քանզի աս գործը զօրութեամբ չէ՝ ստիպմամբ չէ՝ հրաշքով չէ՝ հրովարտակով չէ՝ այլ “Ի՞նչ Հոգիէն է” կ'ըսէ զօրաց Տէրը : “Արթնցի՛ր ո՛վ հիւսիս , եկո՛ւր ո՛վ հարաւ , և աս տեղի պարտէզին վրայ փչէ՛ , որ անոր խունկերը բուրեն” , և ամէն ճիւղ շատ և շատ քաղցր պտուղ բերէ :

## ՀՈԳԻՒՒՆ ԱՐԺԷՒՅԸ :

“Քանզի ինչօգուտ է մարդուն՝ որ բոլոր աշխարհը վաստըրի , և իր անձը կորսնցընէ” : Մարկ . ք . 36 :

Ամէն Աստուծմէ զատուած Հոգի՛ կրնանք ըսել թէ կորսըուեցաւ : Ամէն աղէկ բանէ զատուող և գէշ բաներ ընդունող Հոգին՝ կրնանք ըսել թէ կորսըուեցաւ : Ամէն ուրախութենէ խոր տրտմութեան և թշուառութեան՝ լոյսէն յաւիտենական խաւարի գացող Հոգին՝ կորսըուեցաւ : Աննաց աղբիւրը եղող Աստուծմէ զատուող՝ և տանջուող ու տանջող Սատանային գացող Հոգին՝ կրնանք ըսել թէ կորսըուեցաւ : Աւերջապէս . երկինքէն վնտուող և դժոխքը քշուող Հոգին՝ կրնանք ըսել թէ կորսըուեցաւ : Աւ

“Ինչօգուտ է մարդուն՝ որ բոլոր աշխարհը վաստըրի , և իր անձը կորսընցընէ” :

Աս խօսքերը՝ մեր Տէրոջը խօսքերն են . և մեզի կը սորվեցընէ թէ՛

Հոգին ամէն աշխարհային բաներէն  
 պատուական է . աշխարհիս բոլոր  
 ոսկիէն արծաթէն և բոլոր դոհար-  
 ներէն ու ստացուածքներէն պատու-  
 ական է : Ուրեմն Հոգիին գործը՝ մեր  
 գլխաւոր մտադրութեանը արժան է :  
 Չանհկայ կորսընցընելէն աւելի ա-  
 ղէկ է՝ որ ծնած չըլլայինք . քանզի  
 Հոգին անգամ մը կորսընուելէն ետքը,  
 ալ աղատելու ճար չկայ : Անոր փո-  
 խարէն բան մը չի տրուիր : Հոս մեր  
 քաւութեանը համար՝ Քրիստոսի  
 արիւնը բաւական է . բայց դժոխքին  
 մէջ Քրիստոսի արիւնը չկայ . Սուրբ  
 Հոգի չկայ . փրկութեան օր չկայ :  
 Դաւիթ թագաւորը կ'ըսէ. «Քանզի  
 սուղ է անոնց անձին փրկութեան  
 գինը, ու յաւիտեան պիտի դադա-  
 րի» : Սաղմ. Խթ. 8 : Ուրեմն Քրիս-  
 տոսի համար աշխարհքը ձգել չու-  
 ղողները՝ բոլորը խենթ են . և Հոգի-  
 նին յաւիտեանս պիտի կորսընցընեն :  
 Ուրեմն Հոգւոյն գործը՝ առաջին  
 և գլխաւոր մտադրութեան արժան  
 է : Քանզի

1. Հոգին անմահ է . յաւիտեանս  
յաւիտենից պիտի ապրի :

2. Հոգին՝ կամ յաւիտենական  
երջանկութեան և կամ յաւիտենա-  
կան թշուառութեան մէջ պիտի ա-  
պրի :

1. Հոգին՝ յաւիտեանս յաւիտենից  
պիտի ապրի :

Հոգին անմահ է . անոր բնաւ  
վախճան չկայ : Բոլոր երեցած բա-  
ները՝ անորոշ և անցաւոր են : Հով-  
հաննէս Առաքեալ կ'ըսէ . «Աշխարհս  
ալ կ'անցնի և անոր ցանկութիւնն  
ալ» : Ա Յովհ . Բ . 17 : Բոլոր աշ-  
խարհային բաներուն վրայ Աստուած  
իր գրիչովը Ունայնութիւն ունայ-  
նութեանց գրած է : Ժամանակ կու-  
գայ որ՝ ամէն աչք կապող գեղեցկու-  
թիւն կը թառամի . սիրտը ուրա-  
խացնող ամէն աշխարհային ուրա-  
խութիւն կը վերջանայ . և ամէն  
մարդկային մեծութիւն՝ աշխարհա-  
յին ստացուածք՝ ամէն հանճար ու  
արուեստական հնարագիտութիւն և

ամէն տեսած՝ լսած ու շօշափած բաներնիս անտես ըլլալով՝ պիտի վերջանան : Այո՛, ժամանակ կուգայ որ՝ երկնից բոլոր աստղերը պիտի խաւարին . ոտքերնուս տակի գետինը պիտի փախչի . վերջին կրակը՝ վարի երկիրը պիտի հալեցընէ՛ . և բոլոր երկիրը՝ ան վերջին սոսկալի հրոգեհէն քակուելով՝ պիտի ոչնչանայ : Պետրոս Առաքեալ կ'ըսէ (Բ Պետ . Գ . 10), « Երկինքը շառաչիւնով պիտի անցնի , ու տարերքները բռնկած պիտի լուծուին , երկիրս ալ՝ ու ինչ գործքեր որ անոր մէջը կը գտնուին , պիտի այրին » :

Բայց աշխարհներուն անցնելովը՝ հոգին չանցնիր , այլ յաւիտեանս մնալով՝ պիտի ապրի : Աւաս յաւիտեան խօսքը ի՞նչ է : Անոր լեցուն նշանակութիւնը մէկը չի հասկնար . մէկը չի կրնար հասկընալ և չի կրնար հասկցնել , քանզի սահման չունի , անթուելի մշտնջենաւորութիւն մըն է : Օրեր՝ ամիսներ՝ տարիներ և դարեր անոր մէջը թաղուելով կը կոր-

սուին . գիծ մըն է՝ որ ծայր չունի ,  
 ծով մըն է՝ որ անյատակ՝ անեզր և  
 անհուն է . մարդուս միտքովը չըմբռ-  
 նուած՝ և լեզուովը չը նկարագրուած՝  
 չըզիտցուած մշտատևութիւն մըն է :

Եթէ ովկիանոսին ջուրերուն մէկ  
 կաթիլը չորնալու համար հազար  
 տարի պէտք ըլլայ , ո՞րչափ ժամա-  
 նակ պէտք է մինչև որ բոլորը չոր-  
 նալով՝ կաթիլ մը չը մնայ : Ասիկայ՝  
 ամէն հաշիւէ ու մարդուս խելքէն  
 վեր է . բայց յաւիտենականութիւն  
 չէ : Եթէ բոլոր աշխարհքը աւազէ  
 մեծ դնտակ մը ըլլայ , և աւազին ա-  
 մէն մէկ հատը վեց հազար տարուան  
 մէջ ոչնչանայ՝ (աշխարհիս ստեղծու-  
 ելէն մինչև հիմա անցած ժամանա-  
 կին չափ) , աս մեծ դունտը լմնալու  
 համար ո՞րչափ ժամանակ պէտք է :  
 Աս ալ յաւիտենականութիւն չէ :  
 Հիմա աս երկուքը մէկտեղ գումարէ ,  
 երկուքն ալ մէկտեղ յաւիտենակա-  
 նութեան ինչ ըլլալը չեն յայտներ .  
 Իայց կը ցուցնեն թէ՛ յաւիտենա-  
 կանութիւնը հաշիւով չի գտնուիր :

Երկուքն ալ յաւիտենականութեան նայելով՝ վայրկեան մը՝ կէտ մը (շտակը կ'ուզես նէ՝) բնաւ բան մը չէ, ոչինչէն պակաս է : Աւրեմն

“Մարդուս գանձը՝ հոգին է . մարդս՝ եթէ բոլոր աշխարհքը շահի, գանձը չաւելնար . և բոլոր աշխարհքը եթէ փլչե, մէկ բանը չե պակսիր” :

Ես ճշմարիտ է : Աւրեմն՝ Ո՛վ անմահ հոգի . քու արժէքդ ո՛վ գիտէ, կամ դիտցընելու կարող է :

“Աշխարհիս վրայ անմահ հոգի թէ որ մէկ հատ մը ըլլար միայն, միւսները որ'չափ պիտի նախանձէին . թագաւորները առջևը պիտի խոնարհէին” :

2. Հոգին՝ կա՛մ յաւիտենական երջանկութեան և կամ յաւիտենական թշուառութեան մէջ պիտի ապրի :

Մահը վերջ չէ . անկէ վերջն ալ կայ . դրախտ կայ . դժոխք ալ կայ . անվերջանալի կեանք կայ, երկրորդ



մահ ալ կայ : Աոյս կայ ուր որ խա-  
 ւար չի տեսնուիր . և խաւար կայ՝ ուր  
 որ լոյս չի ծագիր : Օրհնեալ առտու  
 մը կայ՝ որ բնաւ իրիկուն պիտի չըլ-  
 լայ : Օրհնեալ օր մը կայ՝ որ զանի-  
 կայ խաւարեցնող ամպ չկայ , և վեր-  
 ջացնելու համար գիշեր չկայ : Մէկ  
 խոր խաւար գիշեր մը կայ՝ որ բնաւ  
 աստղ չերևար , և յաւիտեանս առ-  
 տու չըլար : Աչք չը տեսած և ա-  
 կանջ չը լսած ու մարդուս սրտին մէջ  
 չինկած երանութիւն մը՝ բաղդ մը՝  
 երջանկութիւն մը կայ . և կայ յաւի-  
 տենական թշուառութիւն մը , ան-  
 մահ որդեր , և յաւիտեանս անմա-  
 րելի կրակ . ուր պիտի ըլլայ մեր  
 բաժինը : Դողովատեղին ամէն  
 գտնուող՝ քիչ մը ետքը ուր պիտի  
 գտնուի : Ամէն մէկը կա՛մ Աստու-  
 ծոյ՝ Քրիստոսի՝ Սուրբ Հոգիին՝  
 հրեշտակներուն և բոլոր սուրբերուն  
 հետ պիտի գտնուի , կամ ստախօս-  
 ներու՝ անիրաւներու՝ լիբբերու և ա-  
 մենաչար ու վատթար անզգամներու  
 մէջ պիտի գտնուի : Ամէնմէկը կա՛մ

Քրիստոսի հետը աթոռը պիտի նստի, կամ Սատանային ու անոր հրեշտակներուն համար պատրաստուած կրակին մէջ պիտի ձգուի : Հոս գտնուած ամէն տղայ՝ կամ երկինքը և կամ դժոխքը պիտի գտնուի : Եւմէն իր մեղքերուն վրայ արթնցող՝ կամ յաւիտենական երջանկութեան և կամ յաւիտենական տանջանաց պիտի երթայ : Սակայն ո՞վ կը հաւատայ : Ո՞վ քնացող հոգի՝ արթնցի՛ր, փրկութեան ժամանակը տակաւին չանցած՝ արթնցի՛ր :

Ուրեմն՝ սիրելիներս, հոգիի վրայ չը խորհելով անհոգութիւն ընելը՝ յետին աստիճանի յիմարութիւն է : Զքաւորութիւն քաշել՝ նեղուիլ ու տանջուիլ՝ այո՛ աջ ձեռք կամ աջ աչք կամ ամէն բան կորսնցընել՝ հոգին կորսնցընելէն աւելի աղէկ է : Եթէ հոգին կորսուի, ամէն բան կը կորսուի. և յաւիտեանս կը կորսուի : “Ի՞նչ օգուտ է մարդուն՝ որ բոլոր աշխարհը վաստըկի, և իր անձը կորսընցնէ” :

Աւետարանին մէջ կը կարգանք թէ՛ մէկ երիտասարդ մը Վրիստոսի գալով՝ հարցուց թէ “Ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ” : Աս մարդը շատ հարուստ էր . շատ ստացուածք ունէր . ու յաւիտենական կեանք ժառանգելու համար ամէն բան ձգել չուզելով՝ զՎրիստոս ձգեց . և տրտմութեամբ գնաց : Ուր է հիմա ան երիտասարդը : Աս իր սիրելի աշխարհքին մէջը չէ : Իր սիրելի աշխարհքէն 1800 տարիէ՛ ի վեր բաժնուած է . և հաւանական է որ չի պիտի տեսնէ մինչև որ վերջին կրակը այրէ զանիկայ : Եղո՛ւկ իրեն : Եթէ աս աշխարհքը սիրելուն պէս Վրիստոս սիրած ըլլար , հիմա երկինքը կ’ըլլար . հիմա անթառամ ժառանգութեան մը արժանացած պիտի ըլլար . ճերմակ հանդերձներ հագած պիտի պտրտէր . գլուխը արդարութեան պսակ և ձեռքը քնար առած Վրիստոսի հետ իր աթոռը պիտի նստէր : Բայց եղո՛ւկ ան յիմար երիտասար-

դին. Ճշմարիտ հարստութիւնը մեր-  
 ժեց . անոր բոլոր գանձը հոս էր և  
 սիրտն ալ հոս էր : Սակայն ինքը  
 չէր կրնար հոս կենալ . քանի մը օ-  
 րէն վերջը ասկէց երթալու ստիպ-  
 ուած էր . և երկինքը դանձ չունե-  
 նալով՝ յաւիտենական չքաւորութիւն  
 շըքաշեր : Աստուծոյ թագաւորու-  
 թեանը մէջ բաժին չունենալով՝ ա-  
 նոր բաժինը կրակի լիճին մէջ չէ՞ :  
 Աւ այնչափ խեղճ կ'ըլլայ որ չի պիտի  
 կրնայ կաթիլ մը ջուր ծախու առնել  
 իր լեզուն զովացընելու համար :

1800 տարի ետքը՝ դուք ու՞ր պի-  
 տի գտնուիք : 1800 միլիօն տարի  
 ետքը ու՞ր պիտի գտնուիք : Աթէ եր-  
 կինքը չըլլաք, անշուշտ դժոխքը պի-  
 տի ըլլաք : Աթէ երկինքը բարեկամ  
 չունենաք, առանց բարեկամի պիտի  
 մնաք : Աթէ երկինքը գանձ չունե-  
 նաք, ամէն միսիթարութենէ և հան-  
 գիստէ զուրկ պիտի մնաք : Աթէ ա-  
 նուննիդ երկինքը գրուած չէ, աւելի  
 աղէկ կ'ըլլար որ բնաւ ծնած չըլլա-  
 յիք :

Սիրելիներս , աս աշխարհքը ունեցած գանձերնէդ 'ի զատ՝ գանձ ունի՞ք : Գանձերնիդ անա՞նկ տեղ է ուր որ վերջին կրակը չի հասնիր : Ես խօսքերը ձեզի խի՞ստ կ'երևան . խիստ չեն . շատ խելացի խօսքեր են : Ա՛յաղը կամ մէկալ օրը յաւիտենականութեան կ'երթաք , և հոն ձեզի խիստ պիտի չը թուին աս խօսքերը : Ուրեմն աս խրատը ընդունեցէք . և յաւիտենական կեանքը բռնեցէք : Դուք որդ չէք . յաւիտենականութիւն ունեցողներ էք . դուք անմահ հոգի ունիք : Եւ "Ի՞նչ օգուտ է մարդուն՝ որ բոլոր աշխարհը վաստրկի , և իր անձը կորսնցընէ . կամ իր անձին համար ի՞նչ ազատչէք պիտի տայ մարդ" :

## ՊԵՏՐՈՍԻՆ ՄՆԴԱՐԸ :

“ Իսկ Պետրոս դուքսը գաւիթը նստեր էր . և մէկ աղախին մը եկաւ անոր՝ ու ըսաւ . Դուն ալ Վալիլեացի Յիսուսին հետն էիր : Բայց անիկայ ամենուն առջևը ուրացաւ՝ ու ըսաւ . Չեմ գիտեր դուն ինչ կը խօսիս : Ու երբոր դուռը ելաւ , ուրիշ աղախին մը զանիկայ տեսաւ , և հոն եղողներուն ըսաւ . Նսիկայ ալ Յիսուս Նազազըցիին հետն էր . Եւ Պետրոս նորէն երդում ընելով՝ ուրացաւ թէ , Ես ան մարդը չեմ ճաննար : Ու քիչ մը ատենէն ետև հոն եղողները եկան՝ և ըսին Պետրոսին . Յիրաւի դուն ալ անոնցմէ ես . ինչու որ քու զրուցուածքդ ալ քեզ յայտնի կ'ընէ : Են ատենը սկսաւ անիծել ու երդում ընել՝ ըսելով թէ , Ես ան մարդը չեմ ճաննար . և իսկոյն հաւը խօսեցաւ : Եւ Պետրոս մտքը բերաւ Յիսուսին խօսքը՝ որ իրեն ըսեր էր թէ , Դժռ հաւը չիօսած՝ իրեք անգամ պիտի ուրանաս զիս . ու դուրս ելլելով՝ դառնապէս լացաւ ” : Մատ . իզ . 69-75 :

Մեր Տէրոջը Վեթսեմանի պարտէզը բռնուած ատենը՝ խիստ ուշ ըլլալու էր . հաւանական է կէս գիշերը անցած էր : Աթէ ան ժամանակը գող մը՝ աւազակ մը կամ մարդասպան մը բռնըուէր , հարկաւ մինչև առտու բանտը պիտի պահուէր : Բայց Քրիստոս շիտակ քահանայապետին պալատը տարուեցաւ : Ու թէև ժամանակը շատ ուշ էր , բայց ծերերը ու դպիրները՝ այսինքն խոր-

հրդական անդամները պատրաստ  
 դառնուեցան : Եւ անոնք Տէր Յի-  
 սուսին մահուանը համար անիրաւ և  
 սուտ վկաներ փնտռած ատեննին ,  
 ծառաներ ու աղախիններ բակը կրակ  
 վառեցին , քանզի ցուրտ էր . և կա-  
 րելի է Գեթսեմանի պարտէզը տե-  
 սածնին և լըսածնին մէկզմէկու  
 պատմելով ծաղրածութիւն կ'ընէին .  
 օրինակի համար , Յուդան իր վար-  
 դապետը ին'չ նշանով մատնեց . ի'նչ  
 վախի պատճառաւ էր որ ետ ետ եր-  
 թալով դետինը ինկան . ո՞վ բռնեց  
 Յիսուսը . առաջին բռնողը ո՞վ էր .  
 թևերը չուաններով ամուր կապողը  
 ո՞վ էր . աշակերտներէն ո՞րն էր որ  
 խենթութեամբ Մաղքոսին ականջը  
 կտրեց . և յետոյ ամէն մէկը ոչխար-  
 ներու պէս ասդին անդին ցրուեցան :  
 Արելի է կը պարծենային թէ՛ ի'նչ-  
 պէս Յիսուսը անգթութեամբ կը  
 քաշկուտէին փողոցները . և թէ որ  
 աշխատէր ձեռքերնէն փախչիլ , ա-  
 նոր ի'նչ պիտի ընէին . և թէ որ  
 Մաղքոսին զարնող ան խենթ աշա-

կերտը ձեռքերնին անցնէր , անոր ի՛նչ պիտի ընէին :

Եւ Պետրոս անոնց հետն էր . աս հպարտ ծաղրարաններուն հետ նստած՝ կրակին քով կը տաքնար : Եւ անոնց ըրած կատակներն ու հայհոյութիւնները՝ անոր տկար սիրտը զօրացընելնուն տեղը , աւելի տկարացուցին : Եթէ Պետրոս հոն չը գտնուէր , աւելի աղէկ կ'ըլլար : Եթէ կարելի է՝ քրիստոնեաները ծաղրածուներու և հայհոյիչներու քով չը գտնուին աղէկ կ'ըլլայ : Պետրոս իր չը գտնուելիք տեղը գտնուեցաւ . փորձութեան և վտանգի մէջ էր . և հոն ըլլալուն աղէկ պատճառ չունէր : Աւելի աղէկ կ'ըլլար անոր , թէ որ մէկդի քաշուելով՝ Տէրոջը անոր պատուիրածին պէս աղօթք ընէր որ փորձութեան մէջ չէյնար : Սակայն (Մատ . Ի,Չ . 58) կըսորվինք թէ՝ «Ներս մտաւ , սպասաւորներուն հետ նստաւ , որ լէրջ «ե՛նէ» : Չէ թէ իր վարդապետին օղնելու համար՝ այլ դործին վախճանը տեսնելու հա-



մար . դատաստանին վերջը տեսնելու համար գնաց : Արեւի է քանի մը ժամ առաջ (Մատ . Ի.Օ . 35) Արդապետին ըսածը՝ թէ « Թէև քեզի հետ մեռնելու ալ ըլլամ՝ բնաւ քեզ պիտի չուրանամ », միտքը բերաւ , և հիմա համարձակ չըլլալ իրեն անվայել է : Գուցէ կը խորհէր թէ՛ վարդապետը հրաշքով մը պիտի ազատի : Գուցէ կը խորհէր թէ՛ Քրիստոս զինքը բռնել եկողները դետինը զարկածին պէս՝ հիմա ալ զինքը գատելու նստողները պիտի լռեցնէ յաւիտեանս . և առտու չեղած՝ ո՞վ զիտէ , կարելի է Դաւիթին աթոռը պիտի նստի , և թաղաւորէ , ու Պետրոս ինքը ըլլայ անոր հրամանատարը :

Սակայն ինչ որ ըլլայ անոր միտքը կամ յոյսը , բնաբանէն կը տեսնենք անոր անհաւատութիւնը : Քահանայապետին բակը մտնալէն ՚ի վեր անոր ամէն տեսածը և լսածը՝ զինքը վախցընող բաներ էին . քանզի շատակ դատաստան բնաւ չկար . այլ

ամէն բան ստիպմամբ՝ ստույթեամբ՝  
անիրաւութեամբ կ'ըլլար . և Տէրն  
մեր Քրիստոս ինքզինքը ազատելու  
չաշխատիր , հրաշք շնորհ , հապա՛  
ամէն բանի ամէն նախատինքի համ-  
բերելով՝ խայտառակ կ'ըլլայ , խիստ  
տկար կ'երևնայ :

Քանի որ Պետրոս աս վիճակին  
մէջն էր՝ դռնապան աղախին մը ա-  
նոր նայեցաւ : Գուցէ զանիկայ ա-  
ռաջ Քրիստոսի հետ տաճարը տե-  
սած էր , և հիմա ճանչցաւ . գուցէ  
չը ճանչցաւ , բայց գիտնալով որ ա-  
նիկայ քահանայապետին ծառանե-  
րէն չէ՝ անոր լուութենէն կամ երևոյ-  
թէն , և կամ Յովհաննէսին զինքը  
ներս բերելէն մակաբերեց թէ անի-  
կայ աշակերտներէն մէկը ըլլալու է :

Ինչևիցէ , աս աղախինը աչքը  
անոր վրայ տնկեց և ըսաւ . “ Գուն  
ալ Գալիլեացի Յիսուսին հետն էիր ” :  
Քանի մը ժամ առաջ Պետրոս իր  
վարդապետին համար պատերազմե-  
լու պատրաստ էր . բայց հիմա մէկ  
աղախինէ մըն ալ կանչուելու պատ-

րաստ չէր : Ինչո՞ւ իր սիրտը երկինքը չը վերցուց որ Աստուած զինքը զօրացրնէ : Ինչո՞ւ չըսաւ “Իրեք տարի Յիսուս հետ ըլլալս ինծի շնորհք մըն է , զանիկայ աղէկ կը ճանչնամ . և անոր պէս մարդ տեսած չեմ” : Սակայն ասանկ պատասխան մը չը տուաւ , հապա հոն գտնուողներուն առջևը Տէրը ուրացաւ , և աղախինին ըսաւ . “ Չեմ գիտեր դուն ի՞նչ կը խօսիս” : Այսինքն՝ Բնաւ հիմ չունի , անկարելի է որ ան մարդուն հետ գործ ունենամ . ինչ որ անոր ըլլայ , իմ հոգս չէ ըսել ուզեց :

Պետրոս շփոթեր մնացեր էր . ու կ'երևնայ թէ իր առջի տեղը ձգելով՝ դուռը ելաւ , և դուցէ կը յուսար թէ՛ հոն զինքը նկատող չկայ : Էիմայ քահանայապետը Յիսուսին հարցումներ կ'ընէ իր աշակերտներուն և իր վարդապետութեանը վրայով , և մէկը Յիսուսին տուած պատասխանին համար ապտակ մը կը զարնէ : Աս՝ Պետրոսին վախը չի փարատէր , այլ կ'աւելցրնէ : Այլ ճիշտ ան բո-

պէին զանիկայ ուրիշ աղջիկ մը տեսնելով կըճանչնայ . և հոն եղողներուն կը ցուցնէ ըսելով, «Նսիկայ ալ Յիսուս Նազովրեցիին հետն էր»: Պետրոս երկրորդ անգամ ուրացաւ, և աս անգամ երդումով ուրացաւ. «Նսան մարդը չեմճանչնար» ըսելով երդում ըրաւ:

Յետոյ հոն կայնողները՝ Պետրոսին ըբրին ականջը կտրուած Մաղքոսին մէկ ազգականը, և Պետրոսին երեսին ըսին թէ՛ Վուն անշուշտ անոնցմէ ես . քանզի քու լեզուդ անգամ կը յայտնէ Վալիլեացի ըլլալդ, և աս Մաղքոսին ազգականը՝ կրնայ վկայել զատաւորին առջևը թէ իր ազգականը մեռցրնելու գիտաւորութեամբ զարնողը՝ դուն ինքդ ես: Նսքեղ անոր հետ պարտէզը չը տեսայ, կրնաս ուրանալ նէ՛ ուրացի՛ր տեսնենք: Պետրոս մեծ վախով լեցուեցաւ, և կը խորհէր թէ՛ եթէ անոնց սխալած ըլլալը չը կրնայ հաստատել, գինքը նոյն բոպէին պիտի մեռցունեն: Ուստի բարկութեամբ լեցուած՝

խենթի պէս խօսեցաւ , անիծեց և երդում ըրաւ , ու կենդանի Աստուածը վկայ կոչեց իր ըսածներուն ճշմարտութիւնը հաստատելու համար . ու թէ որ ան մարդը միայն գիտեմ նէ՝ ես ինքս նզովեալ ըլլամ , Աստուած անիծէ զիս , ըսաւ :

“Եւ իսկոյն հաւը խօսեցաւ” : Ասիկայ ամէն օրուան պատահած դէպքն էր , և ուրիշներուն աննշան դէպք մըն էր . բայց Պետրոսին Աստուծոյ ձայնն էր . որ զանիկայ խորունկ քունէ մը արթնցունէ :

Եւ Ղուկասէն (ԻԲ . 6) կը սորվինք թէ՛ “Յիսուս դառնալով Պետրոսին նայեցաւ” : Յիսուս իր նեղութիւններուն մէջ անոր նայեցաւ : Եւ ո՛հ , ան ազդու նայուածքը . Տէրն մեր Յիսուս ան մէկ նայուածքովը ո՛րչափ շատ բան կը յայտնէր : Են նայուածքը ձայն ունէր որ Պետրոսին կ'ըսէր . Մարդը չե՞ս ճանչնար , Պետրոս , երեսո նայէ՛ . զիս բնաւ չե՞ս ճանչնար . ես քեզ կը ճանչնամ , քեզ՝ քու գիտցածէդ շատ աւելի աղէկ գիտեմ . քու

բոլոր ուխտերդ և տկարութիւններդ  
և քու անվայել վարմունքդ ու խոս-  
տովանութիւններդ գիտեմ. և քեզի  
համար աղօթք ըրի որ՝ հաւատքըդ  
չը պակսի :

Ես՝ Պետրոսին հողւոյն նետի պէս  
դպաւ . անոր բոլոր յանցանքները՝  
խելքին ու մտքին վրայ յարձակե-  
ցան : Դալու տեղ կը փնտռէր . և  
սիրտը ամօթով ու զղջմամբ լեցու-  
ելով՝ քահանայապետին պալատէն  
փախաւ . և “Դուրս ելելով դառնա-  
պէս լացաւ” :

Հոս Պետրոսին մեղքն ալ ու զղ-  
ջումն ալ կը յիշուի . բայց հիմա մի-  
այն անոր մեղքին վրայ խորհինք :

1 . Պետրոսին մեղքը չար դիտաւո-  
րութեամբ գործուած չէր՝ այս-  
ինքն առաջուց տնօրինուած չէր :

Ինչաւ վկայութիւն չկայ թէ Պե-  
տրոս քահանայապետին պալատը  
գնաց իր Տէրը ուրանալու համար ,  
ինչպէս որ Յուդա՝ զանիկայ մատնե-  
լու համար պարտէզը գնաց : Յուդա՝

մատնիչ Յուդա՝ Գեթսեմանի պարտեզը յատուկ գնաց որ իր Տէրը մատնէ : Յուդա չար դիտաւորութեամբ գնաց . չար միտք ունէր : Բայց Պետրոս՝ չար միտք չունէր : Յուդա իր ընելու մեղքը առաջ միտքը դրաւ , որոշեց . և իր ուղածը՝ տնօրինածը կատարեց : Բայց Պետրոս իր միտքը չը դրածը՝ չուղածը՝ չը տնօրինածը ՚ի գործ դրաւ : Յուդային սիրտը՝ իր ընելու մեղքին առաջուց յարմարած էր , բայց Պետրոսին սիրտը՝ անոր ըրած մեղքէն շատ հեռու էր առաջ : Ենոր բերնէն սոսկալի խօսքեր ելաւ , բայց անոնք՝ յանկարծ եկած փորձութեանց արդիւնքներն էին , և անոր սովորական բնութեանը և իր ճշմարիտ դիտաւորութեանը և նպատակին հակառակ բաներ էին : Սակայն

Չ. Պետրոսին մեղքը՝ Տէրոջը առաջուց յատուկ անոր տուած զգուշութիւններուն՝ և իր Քրիստոսի ըրած զօրաւոր ուխտերուն հակառակ գործուած էր :

Քանի մը ժամ առաջ՝ Տէրը իր աշակերտներուն իմացուց թէ՛ ան գիշեր փորձութեան մէջ պիտի իյնան . պիտի ամէնան զանիկայ իրենց Արդապետն ըլլալը խոստովանելու , և պիտի վախնան խոստովանելու թէ անոր աշակերտներն են . և անոր ճշմարիտ Մեսիա ըլլալուն կասկած ընելով զինքը պիտի թողուն :

Պետրոս խոստացաւ թէ՛ ինչ ալ որ ըլլայ , Տէրը բնաւ պիտի չուրանայ . թէև փորձութիւնը շատ զօրաւոր ըլլայ , թէև բոլոր միւս աշակերտները Քրիստոսէն դայթակղին , սակայն (Մատ . Ի.Օ . 33) “Աս բնաւ պիտի չը գայթակղիմ” ըսաւ . այսինքն Չէ թէ միայն աս գիշեր , այլ բնաւ՝ երբէք՝ յաւիտեան քեզ պիտի չուրանամ : Աւ կասկած չկայ որ՝ իր սրտինը ըսաւ :

Տէրը իր խրատը յատուկ Պետրոսին տուաւ . և ծանր կերպով մը անոր գիտցուց թէ՛ ամէնէն աղէկ ընելուն տեղը՝ ամէնէն գէշ պիտի ընէ , և բոլորէն աւելի գէշ վարմունք պի-



տի ունենայ : Չէ թէ միայն պիտի  
 թողու իր Ալարդապետը , այլ նաև  
 պիտի ուրանայ զանիկայ . չէ թէ  
 միայն ետևէն պիտի չերթայ , այլ  
 ետևէն գացած ըլլալը խոստովանելու  
 պիտի ամհնայ . և անոր հետ ինչևիցէ  
 կերպով գործ մը ունենալը և մինչև  
 անգամ զանիկայ ճանչնալը պիտի  
 ուրանայ : Պետրոս կը խորհէր թէ՛  
 բնաւ ասանկ բան պիտի չընէ , բոլոր  
 կենացը մէջ մէկ անգամ ալ պիտի  
 չընէ . բայց Տէրը մասնաւոր կերպով  
 մը անոր իմացուց թէ՛ իրեք անգամ  
 ան նոյն գիշերը զինքը պիտի ուրա-  
 նայ հաւը խօսելէն առնջ : Մատ .  
 Ի.Օ . 34 , “ Յիսուս ըսաւ անոր .  
 Ղշմարիտ կ'ըսեմ քեզի , աս գիշեր  
 հաւը չը խօսած իրեք անգամ պիտի  
 ուրանաս զիս ” : Բայց Պետրոս ըսաւ  
 (համար 35) , “ Թէև քեզի հետ մեռ-  
 նելու ալ ըլլամ , քեզ պիտի չուրա-  
 նամ ” : Նաև իր կեանքը վտանգի  
 մէջ դնելով “ Բեզի համար իմ կե-  
 անքս պիտի դնեմ ” ըսաւ : Յովհ .  
 Ժ.Գ . 37 : Սակայն ինքնիրեն ապա-

ւինելով՝ արթուն չը մնալով՝ նոյն  
յանցանքին մէջ բռնուեցաւ : Ես  
բոլոր բաները՝ իր յանցանքները մեծ-  
ցուց :

3. Պետրոսին մեղքը՝ Տէրոջը իրեն  
ցուցուցած սիրոյն և վստահու-  
թեանը հակառակ գործուած էր :

Եռաքելոց մէջ՝ Պետրոս՝ Յակո-  
բոս և Յովհաննէս խիստ երևելի էին :  
Տէրը անոնց՝ միւսներէն աւելի մտեր-  
մութիւն շնորհած էր :

Ար կարդանք թէ՛ Յիսուս բարձր  
լեռ մը ելլելով՝ այլակերպած , և երե-  
սը արևի պէս , ու հանդերձները  
ձիւնի պէս ճերմակ եղած ատենը՝ և  
Մովսէսին ու Եղիային հետ խօսած  
ատենը , Պետրոսը՝ Յակոբոսը և  
Յովհաննէսը իր հետը առաւ աս մեծ  
տեսարանը տեսնելու . և Պետրոս  
ուրախութենէն ուզեց իրէք խրճիթ  
շինել՝ և միշտ հոն մնալ :

Ար կարդանք թէ՛ Յիսուս հազա-  
րապետի մը տունը գնաց որ անոր  
սիրելի աղջիկը յարուցանէ , և աս ի-

ընք սրտակից աշակերտներէն ՚ի զատ մէկը թող չը տուաւ որ ներս մտնէ :

Ար կարգանք թէ՛ Յիսուս իր աշակերտներուն հետ Գեթսեմանի պարտէզը գալով, անոնցմէ աս իրեքը զատեց՝ որ իր հոգւոյն տրամու թիւնը տեսնելով իրեն օգնելու համար արթուն կենան : Պետրոսը՝ Յակոբոսը և Յովհաննէսը հետը առնելով՝ պարտէզին մէկ կողմը քաշուեցաւ, և հոն դանիկայ մեռնելու չտփ տրտում տեսան : Պետրոս՝ անոր երեսի վրայ դետինը իյնալը՝ հեռուէն լսուելու զօրաւոր ձայնով և արցունքով աղօթելը տեսաւ : Պետրոս անոր տրամու թիւնը և քրտինքը արեան խոշոր կաթիլներու պէս գետին թափելը տեսաւ : Բայց առտու չեղած ամենուն առջևը ըսաւ թէ՛ Ան մարդը չեմ ճանչնար, զանիկայ մէկ անգամ մըն ալ տեսած չեմ :

Տէրը որո՞ւն հետ տունը գնաց, և անոր զոքանչը ջերմէն առողջացուց : Ան մարդը Պետրոսը չէ՞ր : Բայց

Պետրոս զօրաւոր կերպով մը ըսաւ .  
 Ես մարդը չեմ ճանչնար , իմ գիտ-  
 ցած մարդս չէ՛ ըսաւ :

Ո՞վ էր ծովուն ալիքներուն մէջ  
 ընկղմողը և Յիսուսին կանչողը թէ՛  
 Տէր ազատէ զիս , և Յիսուս անմի-  
 ջանպէս իր ձեռքը երկնցընելով զա-  
 նիկայ բռնեց : Սակայն աս վախցող՝  
 ընկղմող՝ կանչող Պետրոսը՝ զինքը  
 ազատող Յիսուսին համար ըսաւ թէ՛  
 զանիկայ չեմ ճանչնար , ասկէց ա-  
 ուջ բնաւ տեսած չեմ զանիկայ ը-  
 սաւ :

Ե՛հա Պետրոսին մեղքը խիստ մեծ-  
 ցընողը՝ ասանկ բաներ էին : Ենոր  
 մեղքը լուսոյ դէմ և զօրաւոր սիրոյ  
 դէմ գործուած էր : Տէրոջը անոր  
 ցուցուցած շատ բարեկամական  
 նշաններուն դէմ գործուած էր . Տէ-  
 րոջը իր վրայ ունեցած վստահու-  
 թեանը դէմ գործուած էր : Եսկէց  
 ՚ի զատ՝ անոր մեղքը մեծցաւ բարկու-  
 թեամբ՝ ստութեամբ՝ երդում ու ա-  
 նէճքներ ընելով : Ստութեամբ ուրա-  
 ցողութիւն , երդումով ուրացողու-

Թիւն . և անէծքով ուրացողութիւն :  
 Աւա՛ղ , աւա՛ղ , Պետրոս , ի՞նչ եղաւ  
 քեզի . ան դիշերը քեզի ի՞նչ խաւար  
 գիշեր մըն էր , երկինքը լացաւ , և  
 դժոխքը ուրախացաւ . և դուն տա-  
 կաւին կ'ապրէի՞ր : Բայց Պետրոս  
 դարձաւ , ղղձացաւ , ապաշխարեց ,  
 ապրեցաւ , և յաւիտեանս յաւիտե-  
 նից պիտի ապրի : Անոր դարձն ալ  
 քննենք :

## ՊԵՏՐՈՍԻՆ ԵՊԵՇԻՆԵՐԵՆԻՐԸ :

“ Եւ դուրս ելլելով դառնապէս լացաւ . ” Մատ . Իգ . 75 :

Եսկէց առաջ Պետրոսին իյնալուն  
և մեղքին վրայ խօսեցանք . հիմա  
անոր դարձը քննենք :

1 . Ընոր ապաշխարութիւնը անմի-  
ջապէս՝ այսինքն խիստ շուտ էր :

Պետրոս իր մեղքին մէջ չը շա-  
րունակէց . տարի մը՝ ամիս մը՝ շա-  
բաթ մը՝ օր մը անգամ չը մնաց :  
Խիստ ծանր կերպով մը ինկաւ ; բայց  
բոլորովին չը փլաւ . և առտու ըլա-  
լէն առաջ՝ ելաւ , դարձաւ , զօրա-  
ցաւ : Պետրոս չսպասեց որ ժողո-  
վուրդը ցրուին . չսպասեց որ ալ ի-  
րեն վտանգ մը չը մնայ . չսպասեց որ  
տեսնէ թէ՛ արդեօք Տէրը թշնամի-  
ներէն պիտի ազատի՞ , թէ չէ : Եյլ  
գտնուած տեղը անմիջապէս ձգեց .  
անոնցմէ զատուեցաւ . և ուտելէն՝  
խմելէն՝ քնանալէն՝ խօսելէն՝ խնգա-

լէն առաջ՝ արտորնօք ապաշխարեց : Պետրոս ինքնիրեն բնաւ հանգիստ չը տուաւ , մինչև որ առանձին տեղ գտնելով՝ իր սիրտը գաղտնի տեղ տեսնող Նստուծոյ առջևը բանայ . և իր վախկոտութեանը՝ անէծքին՝ երգումներուն և անգթութեանը վրայով մինչև որ աղի արցունք չը թափեց , հանգիստ չունեցաւ : Հաւուն խօսիլը զանիկայ արթնցուց , և անոր Քրիստոսի վրայ ունեցած առջի վստահութիւնը նորոգեց . և Քրիստոսի դէպ 'ի իրեն ան մէկ նայուածքը՝ Պետրոսն իրեն բերաւ , սիրտը կակուզցուց , հաւատքը նորոգեց , և Նստուծոյ ուզածին պէս ապաշխարութեան բերաւ : Ու թէև ժամանակը շատ ուշ էր , բայց մինչև որ Պետրոս՝ գաղտնիքը տեսնող Նստուծոյ առջևը իր ապաշխարութիւնը՝ տրտմութիւնը չը յայտնեց նէ , աչքերուն քուն՝ արտեանունքներուն նիրհում՝ մարմնոյն հանգստութիւն և հոգւոյն մխիթարութիւն բնաւ չը տուաւ :

2 . Պետրոսին ապաշխարութիւնը շատ խորունկ և մաքուր սրտով էր :

Ար կարդանք թէ “ դուրս ելլելով դառնապէս լացաւ ” : Ուրիշներուն երևնալու տրտմութիւն չէր . մարդոց երևնալու համար չը լացաւ , կեղծաւոր չէր : Առանձին գնաց . մինակ տեղ մը քաշուեցաւ . և դէպ 'ի իր հէրը ցուցուցած ապերախտութիւնը և անգթութիւնը իր սրտին վրայ յարձակեցաւ : Անպ 'ի իր օրհնեալ հէրը ցուցուցած վարմունքը՝ սիրտը տրտմութեամբ լեցուց , և տրտմութիւնը՝ մէկ հատիկ զաւկի համար եղած տրտմութեանը պէս մեծ էր . և տրտմութենէն սիրտը կտոր կտոր եղաւ : Ինկած խորունկ տեղերէն աչքերը վեր վերցուց , առաջ Քրիստոսի հետնստած և խօսած ան երկնային բնակութիւններուն դարձուց , ու լացաւ : Տէրօջը բոլոր սէրը՝ ողորմութիւնը՝ բարեկամութիւնը միտքը բերելով՝ արցունքով թրջած աչքերը



վերցուց , ու “ դառնապէս լացաւ ” :  
 Եւ Քրիստոսի անոր նայիլը՝ թէև  
 ներող նայուածք մըն էր , բայց ինք-  
 նիրեն չէր ներեր , չէր կրնար ներել :

3 . Պետրոսին ապաշխարութիւնը՝  
 ապաշխարութեան արժանաւոր  
 պտուղ բերաւ :

Ճշմարիտ ապաշխարութեան մի-  
 ակ վկայութիւնը՝ սուրբ կեանքն է .  
 և մինչև որ աս վկայութիւնը չըլլայ ,  
 դուրսէն եղած խոստովանութիւնը  
 պարապ բան է : Պետրոսին ապաշ-  
 խարութիւնը բոլոր սրտով էր . և իր  
 մեղքէն զզուելով՝ ալ բնաւ չը գոր-  
 ծեց : Յիսուս օրէն ետքը՝ Պետրոս  
 տաճարին մէջ հազարաւորներու  
 առջև կայնելով՝ “ Են մարդը չեմ  
 ճանչնար ” ըսելուն տեղը՝ ամենայն  
 համարձակութեամբ ձայնը վերցուց  
 ու ըսաւ , “ Ուստի բոլոր Խորայէլը  
 ճշմարտապէս թող գիտնայ , որ  
 Եստուած անիկայ Տէր ալ ըրաւ ,  
 օծեալ ալ . ան Յիսուսը՝ որ դուք  
 խաչեցիք ” : Գործ . Բ . 36 : Քրիս-

տոսը ուրացած ժամանակը , առջի սէրը մոռնալով՝ ճգածի պէս կ'երեւար . բայց ապաշխարելով՝ առջի գործերը գործեց , ու առջինէն ալ աւելի . ու քանի որ կեանք ունէր՝ մէյ մըն ալ իր Տէրը չուրացաւ : Ու հաւանական է՝ ամէն անգամ հաւը խօսելուն , իր սոսկալի մեղքը միտքը բերելով կուլար : Պետրոս ասկէց ետև երեսուն տարուան չափ ապրեցաւ , և Քրիստոսի համար վկայելէն ետքը՝ անոր համար իր կեանքը դրաւ , անոր համար մեռաւ : Հաղար ութը հարիւր տարիէ 'ի վեր՝ Քրիստոսի հետ իր աթոռը կը նստի : Երանի՛ դառնապէս լացող Պետրոսին : Պետրոսին օրինակէն քանի մը օգտակար բաներ կը սորվինք :

1. Մենք որչափ ալ որ սիրենք դ՛Քրիստոս , ինքզինքնիս ուրիշներուն հետ բազդատելու չենք , և ուրիշներէն աւելի աղէկ վարք և գործ ունենալ ուխտելու չենք : Գիտէք որ Պետրոս ասանկ ըրաւ , բայց բնաւ իրեն վայելուչ բան չէր : Ես պարա-

գային տակ շատ անգամ առաջինները յետին՝ և յետինները առաջին կ'ըլլան . “Ան որ կը կարծէ թէ հաստատուն կեցած է՝ թող զգուշանայ որ չըլլայ թէ իյնայ” : Ա կորնթ . Ժ . 12 : Տէրը կ'ըսէ . “Ան որ ինքզինքը կը բարձրացընէ՝ պիտի ցածնայ” : Առկ . ԺԲ . 14 :

2 . Քրիստոսի ըրած ուխտերնիս խոնարհութեամբ ընելու ենք . և անոր ոգորմութեանն ու զօրութեանը ապաւինելու ենք որ մեզի օգնէ : Մենք շատ տկար ենք . մենք մեզմէ զօրութիւն չունինք . մեզի զօրութիւն տուող Քրիստոսով ամէն բանի կարող կ'ըլլանք . բայց առանց անոր բան մը չենք կրնար ընել :

3 . Մինչև որ նեղութեան և փորձութեան մէջ չեյնանք՝ մեր տկարութիւնը չենք գիտնար : Քրիստոնեաները երբեմն թոյլ կը տրուին մեծ մեղքերու մէջ իյնալու՝ որ իրենց տկարութիւնը հասկնան : Աւաւթ թագաւորը ասանկ թող տրուեցաւ . նաև Նզեկիա թագաւորը նոյնպէս

Թող տրուեցաւ : Պետրոսին իյնալը՝  
 իրեն անմոռանալի դաս մը սորվե-  
 ցուց : Բնութեամբ ինքնիրեն ապա-  
 ւինելու հակամիտութիւնը՝ աս իյ-  
 նալովը կտրեցաւ : Մտիկայ աւելի  
 հեզ ու խոնարհ ըրաւ զինքը . և ու-  
 րիշներուն աւելի գթած ըլլալու  
 պատճառ եղաւ անոր : Ասկեց ետև  
 իր բոլոր կենացը գործերը՝ վկայու-  
 թիւն են թէ աս դառն դասէն մեծ  
 արդիւնք յառաջ եկաւ :

4. Քրիստոնեաներուն յանցանք-  
 ները՝ ուրիշներէն աւելի մեծ ու գէշ  
 են : Հաւատոյ դաւանութիւննիս  
 որչափ որ մեծ ըլլայ, այնչափ մեծ  
 կ'ըլլայ մեղքերնիս, թէ որ մեր դա-  
 վանութեանցը համեմատ չը քա-  
 լենք : Պետրոսին խօսածները և ը-  
 րածները քահանայապետին սպա-  
 սաւորներուն ըրածներէն շատ աւելի  
 գէշ էր . քանզի անոնցինէն աւելի  
 վշտացուց զՔրիստոս, և զանիկայ  
 անպատուեց : Որչափ որ Պետրոս  
 անոնցմէ աւելի գիտէր, այնչափ ալ  
 անոնցմէ աւելի յանցաւոր էր : Ու-

րեմն Պետրոս ինչո՞ւ փրկուեցաւ , և անոնք կարելի է չը փրկուեցան . ինչո՞ւ Պետրոս յաւիտենական երջանկութեան արժանացաւ , և անոնք չարժանացան : Պատճառը աս էր որ՝ Պետրոս ապաշխարեց . ու անոնք թէ որ չապաշխարէին , չէին կրնար փրկուիլ : Ամենամեծ մեղաւորները՝ ապաշխարելով կրնան փրկուիլ . ամենափոքր մեղաւորները՝ առանց ապաշխարելու չեն կրնար փրկուիլ : Մեղք գործելը՝ սոսկալի բան մըն է . սակայն չապաշխարել՝ մեղքը չը ձգել՝ անկէ աւելի ահարկու բան մըն է :

Սիրելիներս , մեղքերնիս պզտիկ և երևոյթով թեթև ըլլալուն համար չէ՛ որ դրախտը կ'երթանք , այլ ապաշխարած՝ և Բրիստոսի ապաւինած ըլլալնուս համար կ'երթանք : Հոն տանող ճամբան աս է . և աս կէց 'ի զատ ճամբայ չկայ : Եթէ մեզմէ մէկը երկինքը չերթալով՝ դժոխքը երթայ , չէ թէ անոր համար է որ իր մեղքը մեծ ու ծանր է՝ այլ մեղքին չը զղջալուն ու չը ձգե-

լուն համար է : Աթէ մեղքերնիս  
 հազարապատիկ մեծ ու ծանր ըլլայ ,  
 ապաշխարելը՝ մեղ անոնց յաւիտե-  
 նական պատիժէն պիտի ազատէ . ու  
 թէ որ մեղքերնիս հազար անգամ  
 պղտիկ ու թեթեւ երևնայ՝ եթէ ա-  
 պաշխարելով զանոնք չը ձգենք , և  
 Յիսուս Քրիստոսի չապաւինինք , ա-  
 նոնց յաւիտենական պատիժէն չենք  
 կրնար ազատիլ : Ասեցէ՛ք ասիկայ՝  
 ո՛վ բոլոր մեղաւորներ , ո՛վ մեղքէ  
 ազատիլ ուղղոյներ , երկինքին դուռը  
 ձեզի հիմա գոցողը՝ մեղքերնիդ չէ ,  
 այլ չապաշխարելնիդ և չը զղջալնիդ  
 է : Աթէ ապաշխարէք , երկնից  
 դռները կը բացուին ձեզի :

Տ. Մեղքէն ապաշխարելը՝ մեղքը  
 ձգել ըսել է : Մեղքի մէջ շարունա-  
 կողը՝ մեղքէն ապաշխարած մէկը չէ .  
 քանզի իր հպարտութենէն ապաշ-  
 խարողը՝ խոնարհ կ'ըլլայ , աշխար-  
 հասիրութենէ ապաշխարողը՝ հո-  
 գևոր կ'ըլլայ . գինովութենէ ապաշ-  
 խարողը՝ ժուժկալ կ'ըլլայ . հայհո-  
 յիչները՝ Աստուածապաշտ կ'ըլլան .

ամբարտաւանները՝ բարի ու սուրբ կ'ըլլան . ապերախտները՝ ապերախտութիւնը ձգելով, կը զզուին անկէ . ուրիշներուն լեզուէն վախցողները՝ Աստուծմէ վախցող կ'ըլլան : Ապաշխարութիւն բառը՝ Աստուծոյ և հոգևոր բաներու վերաբերեալ գէշ գործի մը համար խելք՝ դիտաւորութիւն՝ գործք ու վարք փոխուիլ կը ցուցնէ . և հարկաւ ասոնց հետ առջի յիմարութեանց ու մեղքերու համար մեծ տրտմութիւն և զանոնք ձգել ալ հասկցուելու է : Աւրեմն ապաշխարողը՝ իր ճամբան ու միտքը փոխող մէկն է : Աւ եթէ չը դառնայ՝ չը փոխուի՝ չը նորոգուի՝ բռնած ճամբան ու գործած մեղքերը չը ձգէ, յայտնի է որ ան մարդը ապաշխարած չէ, այլ անդեղջ մէկն է, ու տակաւին մեղքերուն մէջն է : Աւ թէ որ իր մեղքերուն համար երբեմն տրտմի ալ նէ, անոր տրտմութիւնը միայն աշխարհային տրտմութիւն է որ մահ կը պատճառէ :

6 . Պետրոսին օրինակին նման

չիյնանք : Չըսենք թէ՛ Պետրոս ին-  
 կաւ ալ ելաւ ալ, մեղանչեց ու ապաշ-  
 խարեց . մենք ալ մեղք գործենք՝  
 փնաս չունի , քանզի մենք ալ անոր  
 պէս վերջը կը զղջանք : Պետրոս ա-  
 սանկ չարութիւն մը չըրաւ , այսչափ  
 խորունկ փոսի մը մէջ չինկաւ : Պե-  
 տրոս չըսաւ թէ՛ ահա Ղաւիթ թա-  
 գաւորը մեղք գործեց , ու ապաշխա-  
 րեց . ես ալ անոր օրինակին պէս ը-  
 նեմ : Եթէ Պետրոս աս կերպովը  
 մեղանչէր , եթէ աս խիստ խորունկ  
 փոսին մէջն իյնար , կարելի է՝ չէր  
 ելլեր շէր կրնար ելլել . կարելի է իր  
 նորէն ապաշխարելը՝ անկարելի բան  
 կ'ըլար : Եբր . Չ . 4-6 : Ինչպէս  
 որ Ղաւիթին ինկած փոսը խորունկ  
 էր՝ անանկ ալ Պետրոսինը խորունկ  
 էր . բայց աս ըսած հորս երկուքէն  
 ալ խորունկ է . և որչափ որ դէպ ՚ի  
 անոր խորունկը երթաք , յատակը  
 չէք հասնիր : Աւրեմն աս երևակա-  
 յութեանը հետևելէն՝ այսինքն մեղք  
 գործելով Պետրոսին պէս կապաշ-  
 խարենք ալ ըսելէն զգուշացէք , որ



աս խուրունկ յորձանքին մէջ չընկղմիք :

7. Պետրոսէն օրինակ առնելով՝ ապաշխարենք : Ապաշխարելու մեղք չունի՞նք . իյնալ՝ վախկոտութիւն՝ պակսութիւն՝ յանցանք և մեղքեր չունի՞նք որ վրանին լանք : Աթէ մէկ անգամ Քրիստոսէն չը հեռացանք՝ չը զատուեցանք ալ նէ . շատ անգամ հեռուէն չը գացի՞նք իր ետևէն . շատ անգամ անոր խաչէն չը քաշուեցա՞նք :

Տէրը դառնալով՝ մեզի ալ նայի , ու քար սրտերնիս հալեցընէ . որպէս զի մենք ալ Պետրոսին պէս զղջանք , և հաւատքնիս՝ հնազանդութիւննիս՝ ջանքերնիս՝ ու յոյսերնիս նորոգուի , նոր զօրութիւն առնէ . և որպէս զի մենք ալ Պետրոսին պէս մեր դառն դասերէն հոգևոր շինութիւն ստանանք :

## ԱՍՏՈՒՆԾ՝ ԿՐԵԱԿՆ ՈՒ ԵՐԿՐԵ- ՇԱՐԺԻՆ ՄԷՋԸ ՁԷ :

“ Ու անոր ըսաւ . Եղիւ , ու լեռը Տէրոջը առջևը կայնէ : Եւ ահա Տէրը կ'անցնէր , ու Տէրոջը առջևէն լեռները քակող ու ապա-  
աաճները կոտորող մեծ ու սաստիկ հով եղաւ . բայց Տէրը ան հովն  
մէջը չէր . և հովին ետևէն գետնաշարժ եղաւ . բայց Տէրը գետնա-  
շարժին մէջը չէր . ու գետնաշարժին ետևէն կրակ եղաւ . բայց Տէրը  
կրակին մէջը չէր . և կրակին ետևէն մեղմ ու բարակ ձայն մը կը  
լսուէր : Ու Եղիւ զանիկայ լսածին պէս՝ իր վերարկուովը երեսը  
ծածկեց , ու ելաւ քարայրին բերանը կայնեցաւ . և ահա անոր մէկ  
ձայն մը եկաւ , ու ըսաւ . Ո՛վ Եղիւ՝ հոս ինչ՞ բան ունիս ” : 4  
Թագ . 37 . 11-13 :

Եղիւ մարգարէն՝ խիստ երևելի  
մարգարէ մըն էր . բայց մեզի պէս  
մարդկային տկարութիւններու են-  
թակայ էր : Բանի որ Աստուած իր  
հետն էր , ամէն բանի կարող էր .  
բայց Աստուծոյ անոր չօղնած բո-  
պէին , ուրիշ մարդոց պէս տկար էր :  
Աս մարգարէն՝ իր կեանքը փնտռող  
Աքաաբ թագաւորին առջևը ելաւ ,  
և անկէ ու բոլոր ժողովուրդէն չը  
վախնալով՝ զանոնք յանդիմանեց ի-  
րենց կռապաշտութեանը համար :

Յետոյ հրամայեց որ՝ թագաւորին 430 սուտ մարգարէները՝ Բահաղին մարգարէները ըսպաննուին . երկինքէն կրակ իջեցուց . անձրև բերաւ . հրեշտակի պէս երեցաւ . մարդու պէս չէր երևնար՝ մարդոցմէ բարձր կերևնար : Սակայն հետևեալ օրը Աստուած զանիկայ թողուց՝ որ իր տկարութիւնը հասկնալով , խոնարհ ըլլայ : Հետևեալ օրը անհաւատութեան մէջ ինկաւ , և անոր վախկոտութիւնը՝ յանդիմանութեան արժանի էր : Աղիա ելաւ իր երկրէն՝ իր ազգէն՝ գործէն՝ ծառայութենէն՝ պարտաւորութենէն փախաւ . դէպ ՚ի անապատը գնաց . և հոն յուսահատ և անհամբեր ըլլալով՝ մեռնիլ ուզեց :

Յեղաբէլ՝ Աքաաբ թագաւորին կինը , երդում ըրաւ որ՝ Աղիան մեռցրնէ , ինչպէս որ ան 430 մարգարէները մեռցուց : Աղիա մարգարէն կը յուսար թէ՛ բոլոր Իսրայէլը՝ տեսածնուն մեծ հրաշքին պատճառաւ , հարկաւ կռապաշտութիւնը ձգելով

Ճշմարիտ Աստուծոյ պիտի դառնան .  
բայց չը դարձան . Յեզարելէն վախ-  
ցան : Աստուծոյ մարգարէն յայտնի  
ընդունող մը չերևար . բոլոր մէկէն  
անոր կողմը բռնելնուն տեղը՝ ամէն  
մէկը անորմէ կը քաշուէին : Աւ  
Ազիա անսիրտ՝ անյոյս և անհնա-  
զանդ ըլլալով՝ փախաւ : Չուզեց որ  
Յեզարել զինքը մեռցընելով՝ բոլոր  
կռապաշտներուն ուրախութիւն ու  
համարձակութիւն պատճառէ . և  
Աստուծմէ վախցողներուն տրտմու-  
թիւն և յուսահատութիւն բերէ .  
անոր համար փախաւ , և անապատը  
մեռնիլ ուզեց : Մէկ գիհի մը տակ  
պառկելով՝ քնացաւ , և ան քունէն  
արթննալ չէր ուզեր : Ազիա խիստ  
յանցաւոր էր . սակայն թէև անոր  
յանցանքը խիստ մեծ էր , Աստուած  
իր մեծ ողորմութեամբ երկու ան-  
գամ հրեշտակ մը խրկեց՝ որ զանի-  
կայ հացով ու ջուրով զօրացընէ , և  
յետոյ զանիկայ քառասուն օր ա-  
ռանց հացի ապրեցընէ : Աւերջապէս  
Աստուած զանիկայ յանգիմանեց իր

յանցանքին համար , և բնաբանին մէջ ինչպէս յանդիմանելը կը տեսնենք :

“Նւ հովին ետևէն գետնաշարժ եղաւ . բայց Տէրը գետնաշարժին մէջը չէր” :

Ես խօսքերուն վրայ քանի մը խորհրդածութիւն ունինք :

1. Եղիա մարգարէն գետնաշարժէն բան չը սորվեցաւ :

Ար կարդանք թէ Եստուած հովին՝ գետնաշարժին և կրակին մէջը չէր : Ես ի՞նչ ըսել է . Եստուած ամէն տեղ և ամէն բանի մէջ չէ՞ . ամէն բան ընողը ան չէ՞ : Եռանց անոր հրամանին , առանց անոր ձեռքին՝ թոյլտուութեանը բան մը կ'ըլլայ : Ես զարմանալի հովը՝ գետնաշարժը կրակը՝ անոր մեծ զօրութիւնը չը ցուցուցի՞ն . և իր ներկայութեանը ապացոյց չէի՞ն : Ասակած չկայ որ՝ Եստուած հոն էր , և զարմանալի կերպով մը հոն էր : Ուրեմն Եստու-

ած հոն չէր խօսքէն՝ ինչ կը հասկնանք . միտքը ի՞նչ է : Անոր նշանակութիւնը աս է որ՝ Եղիա անկէ բան մը չը սորվեցաւ . աս դէպքերովը Աստուած անոր՝ անոր վիճակին՝ յանցանքին և պարտաւորութեանցը վրայով բան մը չը սորվեցուց : Աս զարմանալի դէպքերէն ետև՝ Եղիա անուսում՝ չը խոնարհած՝ չը յանդիմանուած և յանցանքը չը տեսած մնաց : Անոնց ոչ մէկին մէջ և ամենուն մէջ ալ Եղիա զԱստուած չը տեսաւ, զԱստուած չը գտաւ, Աստուծոյ ձայնին մտիկ չըրաւ, Աստուծոյ առջևը չըխոնարհեցաւ : Անոր սիրտը դողաց, բայց երեսի վրայ չինկած՝ չը զղջացած՝ առջի վիճակին և յամառութեանը մէջ մնաց :

2. Աստուած ինքզինքը մեղմ ձայնով մը յայտնեց Եղիային :

Եղիային աղէկ դաս սորվեցնող և իր յանցանքը իրեն ճանչցրնող կրակը կամ դետնաշարժը չէր, այլ մեղմ ձայն մըն էր : Եղիա աս ձայնը

լսելուն պէս՝ իր վերարկուովը ծածկեց, և խոնարհութեամբ կայնելով՝ Աստուծոյ իրեն ըսածին մտադրութիւն ըրաւ : “Ո՛վ Աղիա՝ հոս ի՞նչ գործ ունիս”. ինչո՞ւ ծառայութիւնդ ձգելով փախար՝ հարցումը լսելուն պէս՝ յանդիմանուեցաւ, և իր յանցանքը հասկըցաւ : Արակէն՝ հովէն՝ գետնաշարժէն չը սորվածները՝ մեղմ ու բարակ ձայնէն սորվեցաւ. հիմա իր պարտաւորութիւնը շուտ մը սորվեցաւ. հիմա Աստուծմէ սորված եղաւ, և անոր հրամանին հնազանդեցաւ :

Աւ Աղիա ի՞նչ սորվեցաւ. աս սորվեցաւ որ՝ Աարմեղոս լեռը կատարուած հրաշքները՝ Խարայէլի որդւոց սիրտը Աստուծոյ չեն կրնար դարձրնել : Ար կարդանք թէ՛ բոլոր ժողովուրդը՝ իրենց բոլոր տեսածին համար, Ահովան ան է, Ահովան ան է կանչելով՝ երեսի վրայ ինկան (Գթազ . ԺԲ . 39) . բայց Ահովային չը դարձան : Աղիա յուսալու չէ որ՝ աս հրաշքները անոնց սիրտերը պիտի

փոխէ , և զանոնք կռապաշտութենէ պիտի դարձնէ : Ո՛չ՝ սրտին փոխուիլը հրաշքէն չէ , Սուրբ Հոգիէն է : Եղիա՝ երկինքէն կրակ իջեցուց , բայց Եղիային աս զօրաւոր դործը՝ մէկ սիրտ մը չը կրցաւ փոխել : Բայց անոր օրէ օր և տունէ տուն մեղմ խրատները ու համբերութեամբ տուած դասերը՝ և անոր կրթութեան մեղմ ու քաղցր ձայնը՝ շատ հոգիներու օրհնութեան պատճառ եղաւ : Ինչպէս որ անոր երեսը ծածկողը՝ հովը ու կրակը և դետնաշարժը չէր , այլ մեղմ ու բարակ ձայն մըն էր , անանկ ալ Աարմեղոս լեռը կատարուած հրաշքները՝ և 450 սուտ մարգարէները կորսնցընող զարմանալի դէպքերը՝ բնաւ մէկ սիրտ մը չը կոտրեց , հոգի մը չապրեցուց , մարդիկ ապաշխարութեան չը բերաւ , և զանոնք կուռքերէն Մատուծոյ չը դարձուց : Եղիա մարգարէն աս զարմանալի դէպքերուն՝ 450 մարգարէից սպաննուելուն՝ բոլոր ժողովուրդին դաւանութեանը և մինչև անգամ



արքունական հրովարտակին վստահելու չէ . այլ դառնալով ժողովուրդին քարոզելու է , քաղցրութեամբ խրատելու է , համբերութեամբ սորվեցրնելու է , աղօթքով և հանդարտութեամբ՝ մեղմ ու բարակ ձայնով խօսելով՝ օրէ օր հոգևոր դասեր տալու է : Աւ անոնք « Թէ որ Մովսէսին ու մարգարէներուն՝ (աս բարակ ձայնին) մտիկ շեն ըներ , մեռելներէն մէկն այ ելէ , պիտի չը հաւատան » :

Աղբայրներս , գիտէք որ աս երկրին մէջը գետնաշարժ և հրդեհ եղաւ . շատ անգամ եղաւ . շատ զարմանալի կերպով եղաւ . սակայն ի՞նչ օգուտ . ո՞վ ապաշխարեց : Ամէն տարի քանի մը տեղ քիչ կամ շատ կրակ կ'ըլլայ . ոմանց ստացուածքը չորս հինգ անգամ այրեցաւ . ու տակաւին աշխարհային չե՞ն : Դուք ետ նայեցէք , 20 , 30 , 50 տարի առաջ եղողներուն նայեցէք . կրակէն անոնց օգուտ մը եղա՞ւ . ստացուածքնին կորսուեցաւ , բայց աշխարհասիրութիւննին չը կորսուեցաւ . կա-

րելի է աւելցաւ : Մեղքերնին չը  
 ձգեցին . սրտերնին Մատուծոյ չը  
 տուին . գանձերնին երկինքը չը դի-  
 ղեցին . փուճ յոյսերնին չը թողու-  
 ցին . Բրիստոսի թաղաւորութիւնը  
 և ճշմարտութիւնը չընդունեցին :  
 Մատուած աս սոսկալի կրակներուն  
 մէջ չըլլալով , ժողովուրդը մինչև  
 հիմա անուսում՝ Մատուծմէ չը սոր-  
 ված՝ Մատուծոյ չը դարձած , հոգե-  
 ւոր՝ սուրբ չեղած և անապաշխար կը  
 մնան :

Մա թուականէն քառասուն տա-  
 րի առաջ Բերիոյ մէջ խիստ մեծ ու  
 սոսկալի դետնաշարժ մը եղաւ . բո-  
 լոր քաղաքը հիմէն շարժեցաւ , և  
 շատ ստացուածք՝ շատ անասուն՝  
 շատ հոգի կորսուեցաւ : Սակայն  
 մնացածները ապաշխարեցի՞ն . մեղ-  
 քերնին ձգեցի՞ն . Մատուծոյ դար-  
 ձա՞ն : 50,000 հոգի՝ 10,000 հոգի՝  
 500 հոգի՝ 50՝ 10 հոգի ինքզինքնին  
 Բրիստոսի տուի՞ն : Ա՛չ , ասանկ լուր  
 մը չը լսեցինք . հատ մըն ալ չը լսե-  
 ցինք թէ Մատուծոյ դարձաւ . գուցէ

կար , բայց չը լսեցինք : Են ահարկու գետնաշարժը՝ Եստուծոյ փողին պէս քաղաքին բնակիչները արթնցուց . Եստուծոյ առջևէն երթալով՝ ամէնն ալ արթնցուց : Բայց ամէնն ալ արթննալէն ետքը՝ կ'երևնայ թէ ան մեղմ ու բարակ ձայնը չը լսեցին , ուստի իր չար ճամբայէն մէկ դարձող մը չերևար : Են ատենը Եւետարանին պաշտօնեաները հոն չէին գտնուեր որ Եստուծոյ խօսքը քարողեն ու խրատեն , և Քրիստոսի աւետիսը խօսին , և աս մեղմ ու բարակ ձայնը լսել տան . սակայն հաղար անգամ փառք Եստուծոյ որ հիմա կը գտնուի հոն Եւետարան , քրիստոնեաներ կը գտնուին , և ան մեղմ ու բարակ ձայնը կը լսուի կամ լսուելու է :

Եւ դետնաշարժ՝ կրակ՝ ժանտախտ՝ մահ , ասանկ բաներ ուր որ պատահին , ան տեղի քրիստոնեաները թող աշխատին որ՝ աս մեղմ ձայնը այսինքն աս մխիթարական և յորդորական ձայնը լսուի . քանզի եթէ

չը լսուի , աս դէպքերը որչափ շատ  
 ու սոսկալի ալ ըլլայ , բնաւ օգուտ մը  
 չըլլար , բնաւ մէկուն հոգիին օգուտ  
 մը չըլլար , այլ ամէնն ալ Եղեային  
 պէս անուսում՝ չը խոնարհած՝ մեղ-  
 քերնին չը ձգած՝ Աստուծոյ չը դար-  
 ձած կը մնան :

Երդ՝ Եղբայրներս , ջանք ըրէք որ  
 աս մեղմ ձայնը ամէն տեղ լսուի . ա-  
 ղօթք ու ջանք ըրէք որ լսուի : Քան-  
 զի եթէ մարդիկ աս ձայնը մտիկ չեն  
 ընէր , գետնաշարժ ու հրդեհ որչափ  
 ալ որ շատնայ , մեռելներէն մէկն ալ  
 ելէ , պիտի չըհաւատան : Ասանկ  
 ստիպմամբ ու զօրութեամբ չէ , հըր-  
 դեհով կամ գետնաշարժով և կամ  
 արքունի հրովարտակով չէ , “Այլ իմ  
 Հոգիովս” է կ’ըսէ Տէր Աստուած :

## ՄԵՆՕ ՓՈՐՉՈՒԹԻՒՒՆ :

“ Եւ Սատանան մէկ բարձր լեռ մը հանելով զանիկայ , աշխարհի բոլոր թագաւորութիւնները ցուցուց անոր մէկ վայրկեանի մը մէջ . Եւ Սատանան ըսաւ անոր . Ես ամէն իշխանութիւնը ու անոնց փառքը քեզի պիտի տամ , ինչու որ ինծի յանձնուած է . և որու որ ուզեմ՝ կուտամ անիկայ . Ուստի թէ որ դուն իմ առջևս իյնաս երկրպագութիւն ընես , ամէնը քեզի ըլլայ ” : Դու . Դ . 5-7 :

Միշտ ու ամէն վիճակի մէջ փորձութեան ենթակայ ենք : Դուրսի վիճակնիս ինչպէս որ ըլլայ , Սատանան զայն իբրև միջոց դործածելով՝ մեր առջևը մեզքի ճամբաներ կը բանայ , և մեզ Եստուծոյ հեռացընել կ'աշխատի : Սակայն Բրիստոս Սատանային յաղթեց : Եւ ամէն բանի մէջ եղբայրներուն նման ըլլալով՝ Սատանային ամէն տեսակ փորձութիւնները կրեց , և ասանկով փորձութեան մէջ եղողներուն վիճակը հասկնալով՝ գիտէ անոնց օգնութեան հասնիլ :

Բրիստոսի կրած փորձութեանց մէկ տեսակը բնաբանին մէջ կը գտ-

նուի . և քանի որ անոր վրայ խորհրդածութիւն կ'ընենք՝ աս չորս հարցումները ընենք :

1 . Քրիստոս ու՞ր էր :

2 . Սատանան ի՞նչ ցուցուց անոր .

3 . Սատանան անոր ի՞նչ խոստացաւ . և

4 . Սատանան ի՞նչ պայմանաւ խոստմունք ըրաւ :

1 . Տէրն մեր Քրիստոս փորձութեան ատենը ու՞ր էր :

Մեկնիչներէն ոմանք կը կարծեն թէ՛ Քրիստոս աս գլխուն մէջ յիշուած իրեք փորձութեանց ատենը անապատն էր . և Սատանան բոլոր աշխարհը իր երևակայութեանն առջև բերաւ , և անանկ զօրաւոր կերպով բերաւ որ՝ անոր անանկ կ'երևար թէ լեռան մը վրայ կայնած բոլորը մէկէն աչքովը կը տեսնէ ինչպէս որ Մեծն Աղէքսանդր և Նափոլէոն Պոնափարթէ երևակայեցին :

Սակայն ոմանք կը կարծեն թէ՛ Քրիստոս իրօք լեռ մը ելած էր :

Հաւանական է աս լեռը Նաբաւ լեռն էր որ՝ Մովսէս անոր գագաթէն խոստացեալ գեղեցիկ երկիրը դիտեց: Բ՝ Օրին . ԼՂ . 1-4 : Եւ աս մեկնութեանը համեմատ , “Աշխարհ” բառը՝ Մեծն Հերովդէսին թաղաւորութեան բաժնուած ան չորս մեծ գաւառները կրնայ հասկցուիլ : “Աշխարհ” բառը՝ երբեմն աս նշանակութեամբը կը գործածուի . և Քրիստոս եթէ աս չորս գաւառներուն տիրէր , ան ատենը իրաւցընէ Դաւիթին աթոռին վրայ նստած կ'ըլլար , և բոլոր աշխարհն ալ շատ դիւրութեամբ գրաւած կ'ըլլար :

2 . Սատանան Քրիստոսի ի՞նչ ցուցուց :

Գրուած է թէ՛ “Սատանան աշխարհիս բոլոր թագաւորութիւնները ցուցուց անոր” : Ենոր՝ աշխարհասէր մարդու մը խելքին ընդունելի և փափաքելի բանը ցուցուց . աշխարհքին բոլոր տէրութիւնները՝ քաղաքները՝ գիւղաքաղաքներն ու

գիւղերը՝ բոլոր արտերը՝ պարտէզները ու այգիները ցուցուց . բոլոր հօտերը՝ ստացուածքները և բոլոր հանգստութիւնները՝ փառքերը ու թագաւորութիւնները ցուցուց . անոր՝ թագաւորութեանց պալատները՝ կառքերը՝ թագերը՝ երջանկութիւնները և բոլոր զօրքերն ու ծառաները ցուցուց . անոր՝ ոսկի ամաններ՝ կարմիր՝ կապոյտ՝ ճերմակ և սև մարմարիոնէ յատակուածներու վրայ ոսկիէ և արծաթէ նստարաններ , նաև ճերմակ՝ կանանչ և կապոյտ վարագոյրներ՝ որ բարակ ծիրանի քթանէ կապերով՝ արծաթէ օղակներով մարմարիոն սիւներէ կախուած էր , առոնց բոլորը՝ այսինքն աշխարհասէր մարդոց բոլոր փափաքած բաները՝ Սատանան Յիսուսի աչքերուն առջևէն անցուց :

3. Սատանան անոր ի՞նչ խոստացաւ :

Ըսաւ թէ՛ . « Բոլոր աս իշխանութիւնները ու անոնց փառքը քեզի պիտի տամ » : Ըս փառքերուն՝ ստա-



ցուածքներուն և մեծութիւններուն բոլորը՝ փառաւոր հանդերձներու՝ թագերու և աթոռներու հետ աս մեծ պալատները՝ աս ձիերը՝ կառքերը՝ զօրքերը քեզի կուտամ, բոլոր աս զարդարուած ներքինիները՝ աս մեծ շէնքերը և դեղեցիկ պարտէզները՝ աս բոլոր շքեղութիւնները և մեծութիւնները՝ բոլոր տէրութիւնները և հանգստութիւնները քեզի կուտամ. և իմ ձեռքովս՝ դուն թագաւորաց թագաւոր կ'ըլլաս, և ես բոլոր թշնամիներդ քու ոտքերուդ պատուանդան կ'ընեմ, ըսաւ Սատանան :  
Սակայն

4. Սատանան աս բաները ի՞նչ պայմանաւ խոստացաւ :

“Թէ որ իյնալով ինծի երկրպագութիւն ընես, աս բոլոր բաները քուկդ պիտի լլլան” ըսաւ : Այսինքն թէ որ ինծի ուխտ ընելով՝ իմ ծառաս ըլլալդ խոստովանիս. կամ ինծի հնազանդելով՝ քեզի ցուցուած ճամբաս բռնես, բոլորը քուկդ պիտի

ըլլան : Դուն չեկա՞ր որ աս բոլոր  
 թագաւորութիւնները ժառանգես :  
 Սակայն աղքատ՝ առանց բարեկամի  
 և անգէն ես . հպատակ չունիս , զօրք  
 չունիս , ազգեցութիւն բնաւ չունիս .  
 ուրեմն ի՞նչ կրնաս ընել : Մեծ մէկին  
 օգնութեանը կարօտ ես . բայց որո՞ւն  
 կ'ապաւինիս . քու Աստուծո՞յդ : Սա-  
 կայն Աստուած քեզ բոլորովին երեսէ  
 ձգած է . ահա՛ քառասուն օր և քա-  
 ռասուն զիշեր ծոմապահութիւն և  
 ազօթք ըրիր , սակայն ի՞նչ օգուտ .  
 շահ մը տեսա՞ր . Ո՛չ . օգուտ մը չը  
 տեսար . և աս ճամբայով բան մը  
 ձեռք չես բերած : Աթէ Աստուծոյ  
 նայիս , գուցէ Իսրայէլացւոց պէս  
 քառասուն տարի անապատը պիտի  
 թափառիս : Ուստի անոր մի՛ նայիր .  
 ինձի մտիկ ըրէ . քեզի ըսածիս պէս  
 ըրէ . և քիչ ժամանակի մէջ բոլոր  
 աս թագաւորութիւնները և անոնց  
 փառքը քուկդ պիտի ըլլայ : Գիտես  
 որ Դաւիթ իր թագաւորութիւնը  
 առնելու համար քեզի պէս Աստուծոյ  
 ապաւինեցաւ , և որչափ շատ նեղու-

Թիւն քաշելը աղէկ գիտես : Աթէ  
 Դաւիթ ինծի մտիկ ընէր և Սաւուղ  
 Թագաւորը մեռցրնէր , գործը շուտ  
 պիտի լմրնար : Աս երկու անգամ  
 Սաւուղ Դաւիթին ձեռքը մատնեցի  
 որ զանիկայ մեռցրնէ , բայց Դաւիթ  
 շատ յիմար ըլլալով՝ անոր չը դպաւ :  
 Աս պատճառաւ շատ սպասեց և նե-  
 ղուԹիւն քաշեց մինչև Թագաւորու-  
 Թիւնը առաւ :

Դուն շին կտակարանը կարդա-  
 ցեր ես , և աղէկ գիտես որ՝ ծառաս  
 Աղայէլ (Դ Թագ . Բ . 7-15) ասանկ  
 յիմարուԹիւն չըրաւ . հապա երբ  
 մարգարէէն իմացաւ Թէ՝ Դամաս-  
 կոսի Թագաւոր պիտի ըլլայ , մէկ շա-  
 բաթ մը անգամ չըհամբերեց . այլ  
 ինծի մտիկ ընելով՝ միւս օրը Բենա-  
 դադ Թագաւորը մեռցուց , և արևը  
 մարը մտնելէն առաջ՝ անոր աթոռը  
 նստաւ : Ուրեմն եթէ կ'ուզես որ քու  
 գործդ յաջողի , ձգէ՛ զԱստուած ,  
 ալ անոր մ'ապաւինիր , ինծի մտիկ  
 ըրէ :

Ահա՛ Սատանան Տէրն մեր Բրիս-

տոս ասանկ փորձեց , և ամէնս ալ աս կերպովը փորձութիւններու մէջ չե՞ ձգեր . այո՛ , Սատանան ամէն մարդ փորձութեան մէջ կը ձգէ : Ա՛յ ընթերցող և մտիկ ընող եղբայր՝ Սատանան բնաւ ըսած չէ՞ քեզի թէ՛ եթէ ասանկ Աստուծոյ հրամանները մտադրութեամբ կատարես , բնաւ չի պիտի հարստանաս : Աթէ կ'ուզես գործըդ յաջողի , երբեմն երբեմն սուտ խօսելու ես . երբեմն խարդախութիւն ընելու ես , քանզի ասանկ չընես նէ՛ աս երկրին մէջ չես կրնար ապրիլ : Ամէն մարդ ասանկ կ'ընէ . սովորութիւն եղաւ . և գուն մինակ ի՞նչ կրնաս ընել : Հարկաւ շիտակ ճամբայէն քիչ մը խոտորելու ես , և աշխարհին սովորութիւններուն յարմարելու ես :

Սատանան մէկին կ'ըսէ թէ՛ 'Ղրացիդ խաբէ՛ , և պէտք ըլլայ նէ՛ սուտ երդում ալ ըրէ : Միւսին կ'ըսէ՛ Մաքսատունէն ստացուածք փախցուր , կամ նենգութիւն ըրէ , կամ աժան աժան նենգ դրամ ժողվելով՝

լեցուն գնով անցուր : Եւ ասանկով բոլոր փափաքած բաներդ քուկդ կ'ըլլայ . քիչ ժամանակէն փնտռած պատուոյդ կ'արժանանաս . աս խիստ գեղեցիկ տունը՝ իր գեղեցիկ պարտէզովը ծախու կրնաս առնել . շուտ մը կը հարստանաս : Եւ ան ժամանակը՝ որչափ օգնութիւն կրնաս ընել աղքատներուն և եկեղեցիին :

Եղբայրներս , ես գիտեմ որ՝ Սատանային փորձութիւններուն մէջ ինկած էք . ամէնդ ալ ասանկ փորձութիւններ տեսած էք : Սակայն փորձութիւնը կրել մեզք չէ : Բրիստոս չը մեղանչեց : Փորձութեան մէջ իյնալ՝ մեզք չէ , բայց Սատանային փորձութիւններուն տեղի տալ՝ մեզք է : Ուրեմն թոյլտուութիւն մի՛ ընէք , տեղի մի՛ տաք , մի՛ հաճիք . Սատանային դէմ կեցիր , և ան պիտի փախչի քեզմէ : Եստուած ձեզի զօրութիւն և օգնութիւն հասցնէ , և ողորմի ձեզի :

## ԻՌԻ ԹՆԳԱՆՈՐՈՒԹԻՒՆԴ ԳՆՅ :

“Ինչ թագաւորութիւնդ գայ” : Մատ . Է . 10 :

Տէրն մեր իր աշակերտներուն պատուիրեց որ՝ կեղծաւորներուն պէս աղօթք չընեն : Կեղծաւորներուն աղօթքը ընդունելի չէ՝ այլ խիստ զզուելի է . և անոնց աղօթքին կերպը . անարժան՝ անընդունակ և խիստ գէշ էր : Տէրն մեր իր աշակերտներուն աւելի աղէկ կերպ մը ցուցունելով ըսաւ՝ Դուք ասանկ աղօթք ըրէք :

“Մ՛իւ Հայր մեր՝ որ երկինքն են , քու անունդ սուրբ ըլլայ . Ինչ թագաւորութիւնդ գայ , քու կամքդ ըլլայ , ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ . Մեր ամէն աւուր հացը՝ այսօր մեզի տո՛ւր . Եւ մեզի ներք՝ մեր պարտքերը , ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն . Ու մեզ փորձութեան մի՛ տանիր . հապա չարէն մեզ ազատէ . ինչու որ քուկդ է թագաւորութիւնը և զօրութիւնը ու փառքը յաւիտեանս . ամէն” : Մատթ . Է . 9-13 :

Ես աղօթքին խօսքերը խիստ քիչ են , բայց մտքերը՝ շատ մեծ են : Եւելորդ խօսք բնաւ չունի : Ահա՛ նայեցէք , “Ենունդ սուրբ ըլլայ” .

Հոս միայն իրեք բառ կայ : “Թագաւորութիւնդ գայ” , երկու բառ . “Ամբողջ ըլլայ” , երկու բառ : Ասանկ ալ բոլորը՝ ամէն խնդրուածք՝ կարելի եղածին չափ կարճ է : “Թագաւորութիւնդ գայ” : Աս՝ երկրորդ խնդրուածքն է : Աւ քանի որ անոր վրայ խորհրդածութիւն կ'ընենք , առաջին հարցումնիս աս է թէ՛

1 . Թագաւորութիւնը որո՞ւնն է :

Հոս յիշուած Թագաւորութիւնը՝ որո՞ւնն է . ո՞վ է աս Թագաւորը : Չը գիտցածնիս չէ . Թշնամի՝ անգութ՝ խիստ և տմարգի գատաւոր մը՝ իր շահը փնտռող կայսր մը՝ վրէժխնդրութիւն ընող և ողորմութիւն չը գիտցող մէկը չէ : Այլ աս Թագաւորը՝ ինքն է մեր հայրը , ինքն է մեր անուցիչն ու բարեկամը . մեզ ստեղծողը և պահպանողը ու սիրողը , և մեզի կեանք՝ առողջութիւն՝ զօրութիւն՝ հանգստութիւն և մեր օրական պիտոյքը հոգացողն է . ինքն է Թագաւորը : Աւրեմն հայրերնիս՝

Թագաւոր է . մեծ Թագաւոր մըն է . այո՛ , բոլոր երկրին Թագաւորն է . Թագաւորաց Թագաւորը և տէրերուն Տէրն է : Բոլոր ուզածը կը կատարէ . Թէ երկինքը՝ հրեշտակներուն մէջ , և Թէ երկրի վրայ՝ մարդոց մէջ ուզածը կը կատարէ . և զանիկայ արգիլող կամ անոր ի՞նչ կ'ընես ըսող՝ չը կայ :

Սակայն հոս յիշուած Թագաւորութիւնը՝ աս մտքովը հասկընալու չէ . այսինքն աս հասարակ իշխանութիւնը չէ . քանզի աս պարագային տակ Աստուծոյ Թագաւորութիւնը ամենուն վրայ կը տիրէ , և անոր աս տեսակ իշխանութիւնը հիմա և միշտ ու ամէն տեղ պակաս չէ , կատարեալ է : Աւրեմն

2 . Աս Թագաւորութիւնը՝ ի՞նչ տեսակ Թագաւորութիւն է :

Հոս յիշուած Թագաւորութիւնը բնաւ ուրիշ Թագաւորութեան մը չի նմանիր . քանզի աշխարհագրական գիծեր չի գիտեր , աս աշխարհիս



երկիրներուն սահմանները բնաւ չի գիտեր, երկրի բաժանում կամ եզերք չունի : Աս թագաւորութիւնը աշխարհիս թագաւորութիւններուն մէջ մէկ հատ մըն է, և ասոր բոլոր հպատակները աս աշխարհիս բոլոր թագաւորութիւններէն ընտրուած անձինքներ են :

Աւետարանին մէջ աս թագաւորութիւնը երբեմն Աստուծոյ թագաւորութիւնը և երբեմն Արկնից թագաւորութիւնը կրկոչուի, և միշտ Քրիստոսի հոգևոր թագաւորութիւնը ըսել կ'ուզէ՝ որ աս աշխարհիս եկեղեցիէն սկսելով՝ երկինքը կատարեալ կ'ըլլայ : Ակեղեցւոյն ղլուխը՝ Քրիստոս է. ամէն զօրութիւն և իշխանութիւն անոր տրուած է՝ թէ՛ երկնից մէջ և թէ՛ երկրիս վրայ. և պիտի թագաւորէ մինչև որ իր թշնամիները իր ոտքերուն պատուանդան ըլլան, ինչպէս որ Պօղոս Առաքեալ կը գրէ : Ակոր. ԺԵ. 25 :

Աս թագաւորութիւնը՝ Աստուծոյ թագաւորութիւնն է. և անոր համար թէ

որ մէկը նորէն չը ծնանի՝ զանիկայ  
 չ'կրնար տեսնել ըսաւ Տէրն մեր : Աս  
 թագաւորութիւնը՝ երկնից Աստուծոյն  
 ինչ է . և զանիկայ բոլոր ընդունող-  
 ներուն գանձը՝ երկինքն է . բոլորը  
 երկինքը պիտի երթան . և բոլորը  
 հոգևոր միտք ունեցողներն են : Աս  
 թագաւորութիւնը հոգևոր Աստուծոյն  
 ինչ է . քանզի մարդոց հոգիներուն  
 վրայ ազդեցութիւն կ'ընէ , և ամէն  
 ո՛վ որ Հոգիէն ծնած չէ , ա՛ն թա-  
 դաւորութեան հպատակ չէ . սակայն  
 ամէն Հոգիէ ծնած՝ հոգևոր ըլլալով,  
 աս օրհնեալ թագաւորութեան մէջ  
 է : Աստուծոյ Աստուծոյն ինչ մըն է . և  
 ո՛վ որ ամէն տմարդութիւնները չի  
 ձգեր , անոր երջանիկ եզերքներուն  
 չի կրնար մօտենալ : Աստուծոյ Աստուծոյն  
 ինչ մըն է . և ո՛վ որ խաւարը կը-  
 սիրէ , խաւարին թագաւորութենէն  
 է , և լոյսէն հեռու կը մնայ : Աստուծոյ  
 Աստուծոյն ինչ մըն է , և հոն  
 սխալի և սուտի տեղ բնաւ չկայ . ա-  
 մէն ստութիւն խօսողն ու դործողը՝  
 յաւիտեանս դուրս պիտի մնայ : Աս-

դարս-նեան Ռագասորս-նի-ն մըն է . և զըկանք՝ մնաս և անիրաւութիւն հոն գիտցուած բաներ շեն : Արբ-նեան Ռագասորս-նի-ն մըն է . և հոն բնաւ անմաքուր բան պիտի չը մտնէ : Խաղս-նեան և Բարեգործս-նեան թագաւորութիւն մըն է . և ամէն նախանձ ու վէճ , պատերազմ ու կռիւ և ուրիշին չար կամեցող բարկութիւններ՝ անկէ հեռու աքսորուած բաներ են :

Ուրեմն ամէն մարմնաւոր՝ հպարտ՝ աշխարհասէր և ինքզինքնին սուրբ սեպողները՝ Սատանային թագաւորութեան և օրէնքներուն տակը կ'ապրին : Աւ աս խնդրուածքին մէջ կաղօթենք՝ որ Սատանային թագաւորութիւնը կորսուի , այսինքն չարութեան՝ անիրաւութեան՝ խաւարին՝ յիմարութեան՝ բարկութեան և բոլոր պղծութեան իշխանութիւնը յաւիտեան ոչնչանայ . և լուսոյ՝ մաքրութեան՝ ճշմարտութեան՝ բարեգործութեան՝ ողորմութեան՝ երջանկութեան՝ խաղաղութեան և փրկութեան թագաւորութեան իշ-

խանութիւնը բոլոր աշխարհին մէջ սկսի :

3. Աս թագաւորութիւնը ինտոր կուգայ . ի՞նչ ճամբայով :

Աս թագաւորութեան գալը և աւելնալը ու շատնալը և մեծնալը՝ թուրով և ձիաւոր զօրքերով չէ . նաև շքեղութեամբ և ցոյցերով չէ : Թագաւորն ինքը Պիղատոսին ըսաւ թէ՝ “Խմ թագաւորութիւնս աս աշխարհէս չէ”, այսինքն ըսել ուղեց՝ բոլորովին հոգևոր է, և ճշմարտութենէն եղող ամէն մէկը, իմ թագաւորութենէս է՝ հասկցընել ուղեց :

Տէրն մեր ըսաւ թէ՝ Աստուծոյ թագաւորութիւնը . դրսուանց երևցած բաներով չգար . ինչու որ “Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսի դին է” : Անոր գալուստը՝ մրրիկի և փոթորիկի պէս չէ, այլ մատաղ տունկի վրայ իջած ցօղի պէս է : Անոր դալուստը՝ լեռներու վրայ բազէի պէս և խաւարը վռնտող լոյսի պէս է . յիմարութիւն՝ տգիտութիւն և

խենդութիւն վերցնող ուսման պէս է . յանցանք՝ գինովութիւն՝ կռիւ և ամէն տեսակ չարութիւն հատցնող բարիքի պէս է : Թագաւորին ձայնը՝ վախ և սոսկում բերող՝ անողորմ և անիրաւ դատաւորի մը աղաղակին պէս չէ՝ այլ վախցող մանուկները քաջալերող և սրտերնին զօրացնող մօր մը մեղմ ու քաղցր ձայնին պէս է : Բրիստոսի գալուստը՝ ասանկ է :  
Ուրեմն կը տեսնենք թէ՛

4. Ես թագաւորութեան գալուստը՝  
խիստ փափաքելի բան է :

Ես խնդրուածքին մէջ փափաք կը ցուցունենք որ՝ մեր Հայրը ամէն տեղ , այսինքն ամէն սրտի մէջ թագաւորէ , և անոր օրէնքներուն բոլոր տիեզերքին մէջ ուշադրութիւն ըլլայ : Ու եթէ մեր Հօրը թագաւորութեանը գալուն չը փափաքինք , որո՞նն փափաքելու ենք : Բռնաւորի մը՝ անգութի մը՝ օտարի մը թագաւորութիւնը չէ , այլ մեր Հօրը թագաւորութիւնն է : Ու թէ որ մեր

Հօրը իշխանութեանը չէ՛ հապա ուրո՞ւն իշխանութեանը ինքզինքնիս անհուն հնազանդութեամբ հպատակ ընենք : Թէ որ մեր Հօրը չէ՛ որո՞ւն օրէնքները իմաստուն ու բարի՛ և բոլոր տիեզերքին խաղաղութիւնն ու երջանկութիւնը հաստատելու յարմար է :

Վաղաքի մը քանի մը կողմերը գնա՛ , և հոն գտնուած աղքատութիւնը՝ տրտմութիւնը՝ աղտոտութիւնը՝ խոնաւութիւնը՝ անօդնականութիւնը՝ կծծիութիւնը՝ բորոտութիւնը՝ քոսոտութիւնը՝ անգթութիւնը՝ լրբութիւնը՝ յոռութիւնը և ամէն տեսակ չարութիւն ու ամէն մխիթարութենէ զրկողութիւն տեսնելէդ ետքը , աչքերդ դէպ ՚ի երկինքը վերցրնելով աղօթէ՛ որ՝ Աստուծոյ թագաւորութիւնը գայ , և ամէն բան նորոգէ : Աս՛ խիստ բաղձալի բան չէ՞ . Տէրը մեզի կը սորվեցրնէ որ՝

5 . Աղօթք ըրած առեննիս , աս  
 խնդրուածքը՝ խնդրուածքներուն  
 սկիզբները գտնուելու է :

Տէրունական աղօթքին մէջ , վեց  
 խնդրուածք կայ . և բնաբանին մէջ  
 յիշուած խնդրուածքը՝ երկրորդն է :  
 Առաջին խնդրուածքը աս է . “ Բու  
 անունդ սուրբ ըլլայ ” : Աղօթքի մէջ  
 առաջին խնդրուածքնիս՝ այսինքն  
 ամէն բանէ աւելի փափաքածնիս աս  
 ըլլալու է որ՝ մեր Հայրը ամէն տեղ  
 անդիի ծայրը մեծ՝ շքեղաշուք և պա-  
 տուաւոր ըլլայ : Աւ երկրորդը աս է .  
 “ Բու թագաւորութիւնդ գայ ” :  
 Ուրեմն կը տեսնենք թէ՛ մեր Հօրմէն  
 օրական հացերնիս ուղելէն առաջ՝  
 անոր թագաւորութեան գալուստը  
 խնդրելու ենք : Այո՛՝ մեզքերնուս  
 թողութիւնը խնդրելնէս առաջ՝ ա-  
 նոր թագաւորութիւնը խնդրելու  
 ենք . աս՝ միշտ առաջին խնդրուածք-  
 նուս մէջ գտնուելու է : Մեր ա-  
 ղօթքներուն մէջ աս բնաւ չը մոռ-  
 նանք . առաջին փնտռուելիք բանե-

րէն է . ետքը ձգելու չէ . անիկայ  
 ետքը չը ձգենք : Տէրը մեզի հրա-  
 մայեց որ՝ “Պինտ առաջ Աստուծոյ  
 թագաւորութիւնը և անոր արդա-  
 րութիւնը խնդրեցէք” : Աւտելէն և  
 խմելէն առաջ , ամէն բանէ առաջ և  
 ամէն բանէ աւելի աս փնտուելու ենք  
 որ՝ մեր Հօրը օրհնեալ թագաւորու-  
 թիւնը գայ . քանզի անոր գալստե-  
 ամբը ամէն շնորհք՝ ամէն օրհնու-  
 թիւն՝ ամէն մխիթարութիւն և ա-  
 մէն երջանկութիւն կուգայ :

6 . Անոր թագաւորութեան գալս-  
 տեանը օգնելու ենք , արգելք ըլ-  
 լալու չենք :

Աս թագաւորութիւնը սրտեր-  
 նուս մէջ ընդունելու ենք . և եթէ  
 անիկայ սրտերնուս մէջ չընդունինք,  
 անոր դուրսը գալով իշխելուն համար  
 ինտո՞ր կրնանք աղօթել : Յայտնի է  
 որ՝ սրտանց չենք կրնար աղօթել . ու  
 թէ որ աս թագաւորութեան գալս-  
 տեանը օգնելու համար մատ մը՝ ոտք  
 մը չը շարժենք , կամ ստակ մը չը



տանք , ինտո՞ր կրնանք աղօթել թէ՛  
 “ Թագաւորութիւնդ դայ ” : Չենք  
 կրնար աղօթել . ու եթէ խօսքերը  
 ըսենք ալ նէ , միայն շրթունքով ը-  
 սած կ'ըլլանք , և չէ թէ սրտով . և  
 ասանկ աղօթք ընդունելի չըլլար .  
 կեղծաւորութիւն է . զգուելի է : Թէ  
 որ մեր կեանքովը և ապրելովը աս  
 թագաւորութեան դալուն արգելք  
 ըլլանք , և մանաւանդ անոր արգելք  
 ըլլալու համար ձեռքերնէս եկածը  
 ընենք , յայնի է որ չէ թէ մեր Հօրը  
 փառքը՝ այլ Սատանային փառքը  
 կ'ուղենք : Եւ մենք աս աղօթքը ը-  
 րած ատեննիս՝ Եստուծոյ մեծ սուտ  
 մը խօսած կ'ըլլանք . քանզի անոր  
 թագաւորութիւնը սրտանց կ'անար-  
 գենք և գործքով անոր գէմ կը կե-  
 նանք : Եւ “ Ա՛յլ Հայր մեր որ եր-  
 կինքն ես , քու թագաւորութիւնդ  
 դայ ” խօսքերը՝ բուն մեր փափաք-  
 ներուն բնաւ համաձայն չեն . այլ՝  
 “ Ա՛յլ մեր հայրը որ դժոխքն ես քու  
 թագաւորութիւնդ դայ ” խօսքերը՝  
 մեր փափաքներուն բոլորովին հա-

մաճայն են : Այսինքն մենք Սատանային թագաւորութեանը մէջն ենք , և անոր իշխանութեանը տակն ենք . և իր մէջն եղած խաւարը՝ յիմարութիւնը՝ տգիտութիւնը՝ կեղծաւորութիւնը՝ աշխարհասիրութիւնը՝ ծուլութիւնը՝ անիրաւութիւնը կը սիրենք . մարդոց պատուէրները կը բռնենք . Բրիստոսէն սորված անձինքներ չենք . ինքզինքնիս անոր տուած չենք . անոր լուծը մեր վրայ չառնելով՝ և անոր իշխանութեան տակը չը մտնելով՝ չէ թէ Բրիստոսինը՝ այլ Սատանայինն ենք : Տէրն մեր ըսաւ թէ՛ « Ինչո՞ւ ինձի Տէ՛ր Տէ՛ր կը կանչէք , ու ըսած բաներս չէք կատարեր » : Առկ . Ձ . 46 : Սիրելիներս՝ թէ որ մենք նոր արարածներ չենք , թէ որ նորէն չը ծնանինք , Բրիստոսի թագաւորութիւնը չենք կրնար տեսնել , անոր մէջ չենք կրնար մտնել : Աւրեմն սրտիդ գուռը բաց որ Փառաւորեալ Արքայն մտնելով՝ ամէն բան գրաւէ և նորոգէ : Իր աթոռը սրտիդ մէջ կանգ-

նելով՝ բոլոր միտքդ ու փափաքներդ  
իր իշխանութեանը հպատակեցրնէ :

Ես թագաւորութիւնը չաւրիր ,  
չե շարժիր , յաւիտեան կը կենայ , ու  
յաւիտեանս կը շատնայ և կ'աւելնայ :  
Երանի՛ր գանիկայ ընդունողներուն :  
Երանի Սատանային իշխանութե-  
անէն Քրիստոսի թագաւորութեանը  
փոխուողներուն : Ես երանութիւնը  
ձերը ըլլայ , իմս ալ ըլլայ . Եմէն :

## ՂԵՍՏՈՒՆԾ՝ ԿՈՂՈՊՏՈՂՆԵՐ :

“Միթէ մարդ զՆստուած կը կողոպտե՞, որ դուք զիս կը կողոպտէք . բայց դուք կ'ըսէք . Վեզմէ ի՞նչ կողոպտեցինք . Տասանորդներ ու ընծաներ : 'Իսկ անէծքով անիծուած էք . քանզի դուք բոլոր ազգդ զիս կողոպտեցիք” : Մաղ . Գ . 8 , 9 :

Կարելի՞ է որ մարդ զՆստուած կողոպտէ : Այո՛ կարելի է : Նստուած ինքքը գանգատեցաւ թէ՛ բոլոր Հրէից ազքը զինքը կողոպտեցին :

Սակայն զՆստուած կողոպտել՝ ի՞նչ ըսել է . անոր ստացուածքը գողնալ ըսել չէ՞ : Ուրեմն Հրէաները Նստուծմէ ի՞նչ գողցան . զանիկայ ի՞նչ բանէ կողոպտեցին : Մարգարէն ըսաւ թէ՛ անոնք անկէ տասանորդներ ու ընծաներ կողոպտեցին : Աստասանորդները ու ընծաները չէ թէ իրենցը՝ այլ Նստուծոյն էր . բայց անոնք բոլորը գողնալով՝ իրենց համար գործածեցին . ուզածնուն պէս գործածեցին : Նստուծոյ գանձատունը չը բերելով՝ անոր սուրբ տանը

ծառայութեանը՝ կրօնքի վերաբե-  
րեալ բաներու՝ ազգին հոգևոր գոր-  
ծերուն չը գործածեցին . այլ իրենց  
ստացուածքին վրայ դնելով՝ անձեր-  
նուն համար գործածեցին : Արդ  
անոնք գող էին . կը խորհէին թէ՛  
ամէն բան իրենց օգուտին համար  
գործածելով՝ հարկաւ կը հարստա-  
նան . բայց աղքատացան . երջանիկ  
չեղան . գործերնին յառաջ չը գնաց ,  
չը յաջողեցաւ . Աստուած անոնց ոչ  
թէ օրհնութիւն՝ այլ անէծք տուաւ :  
Աստուած յրսաւ անոնց՝ “Դուք ա-  
նէծքով անիծուած էք” . նաև՝ “Չեր  
օրհնութիւնը անէծքի պիտի դարձ-  
նեմ , նաև զանիկայ անիծած եմ”  
ըսաւ :

Սակայն աս յանցանքովը յանցա-  
ւոր գողեր՝ հիմա կը գտնուի՞ն : Աւր  
կը գտնուին . մե՞ր մէջն են , մեր  
քաղաքի՞ն մէջ , ազգի՞ն մէջ , մեր  
տա՞նը մէջ կը գտնուին : Այո՛ . մեր  
մէջը կը գտնուին : Սակայն մենք  
Աստուծմէ ի՞նչ գողցանք . Աստուծոյ  
ստացուածքը ի՞նչ է :

Սուրբ Գրքէն կը սորվինք թէ՛ երկինքը անորն է , ու աշխարհքը և անոր լիութիւնն ալ . արևը անորն է . ծովն ալ անորն է . ցորեկը և գիշերը անորն է : Աւ ասոնց բոլորը անոր հրամանովը՝ անոր ուղածին պէս՝ իր հրովարտակին համեմատ՝ անոր փառքին համար գործածելու ենք . մերինը չեն որ ուղածնուս պէս գործածենք : Աթէ հրեշտակ մը՝ ամենասուրբ հրեշտակ մը , մէկ շեղ մը՝ խիստ մանր ու թեթև բան մը՝ աւագի հատ մը առնելով՝ « Ան իմս է , և ուղածիս պէս գործածեմ » ըսէ նէ , ան ատենը աս սուրբ հրեշտակը Սատանայի պէս պիղծ կ'ըլլայ , և գլերուն հետ մէկտեղ դժոխքին տանջանքները պիտի քաշէ : Սակայն չէ թէ երկնից հրեշտակներուն կը քարողենք , այլ ձեզի երկրիս վրայի մեղաւորներուն կը քարողենք : Աւ դուք Աստուծմէ ի՞նչ գողցաք . ի՞նչ է անոր ստացուածքը :

# 1. Սուրբ օրը՝ Աստուծոյ ստացու- ածքն է :

Ան օրը՝ յատուկ իրն է . անոր ուրոշած՝ ընտրած և օրհնած օրն է . և աս պատճառաւ Տէրոջը օրը ըսուեցաւ : Ուստի աս օրը Աստուծոյ երկրպագութեանը՝ անոր ծառայութեանը և անոր թագաւորութեանը վերաբերեալ բաներու գործածելու ենք : Ան օրը չէ թէ մեր աշխարհային գործերուն՝ այլ մեր հոգևոր գործերուն գործածելու ենք . չէ թէ մեր ժամանակաւոր շահերուն համար՝ այլ յաւիտենական շահերնու համար գործածելու ենք :

Աստուած հրամայեց (Ասայ. ԾԲ. 13) որ՝ « իր սուրբ օրը մեր բաղձանքը չը կատարենք , և մեր ճամբաներուն չը հետեինք . մեր հաճոյքը չը փնտռենք ու պարապ խօսք անգամ չը խօսինք » : Այսինքն հոգ տանելու ենք որ՝ ան օրը ձեռքերնիս՝ լեզունիս՝ աչքերնիս ու ականջնիս՝ խելքերնիս և մտքերնիս՝ բոլորը

Մատուցոյ տրուին . չէ թէ աս աշխարհին՝ այլ միւս աշխարհին տրուին : Ուրեմն Մատուցոյ ստացուածքն եղած ժամանակը՝ այսինքն իր օրը Մատուծմէ չը գողցա՞նք : Աս իր սուրբ օրը չաւրեցի՞նք . աս օրը չը պղծեցի՞նք : Աւա՛ղ . մեր մէջը ո՞վ կայ որ՝ աս օրը Մատուծմէ գողցած չէ :

## 2. Երիտասարդութիւնը Մատուցոյ ստացուածքն է :

Մանկութիւն՝ երիտասարդութիւն՝ մեր կենացը առաջին եղանակն է , և Մատուծ անիկայ յատուկ իր ստացուածքը կը սեպէ : Ուրեմն մանուկ մը որ իր երիտասարդութիւնը առանց Մատուցոյ՝ առանց Քրիստոսի՝ անհաւատութեամբ՝ անապաշխարութեամբ՝ թէ՛ տունը և թէ՛ դպրոցը անհնազանդութեամբ՝ անհոգութեամբ՝ աշխարհային հաճոյքներով անցունէ , ան տղան գող չէ՞ . Մատուծմէ չի՞ գողնար : Այո՛ , աս յանցանքովը յանցաւոր է , Մատ-



ուծմէ խիստ պատուական բան գող-  
ցող է : Արդ տղաքներէն ո՞վ կայ որ  
Աստուծմէ գողցած չէ :

3 . Մեր բոլոր կեանքը Աստուծոյ  
ստացուածքն է :

Մեր բոլոր ժամանակը Աստուած  
կուտայ , և կուտայ՝ որ իր փառքին  
համար գործածենք . ո՛չ օր մը՝ ո՛չ  
ժամ մը և ոչ մէկ րոպէ մը մերն է .  
ստակով ծախու առած չենք և չենք  
ալ կրնար առնել : Բոլոր աշխարհը  
եթէ մերն ըլլայ , ու բոլորը տանք  
մէկ րոպէ մը շահելու համար ,  
մինչև անգամ րոպէ մը չենք կրնար  
շահիլ : Եւ Աստուած երկու րոպէ  
մէկէն չիտար մեղի . այլ միայն մէկ  
րոպէ կուտայ . և ան տուած րո-  
պէն կ'անցնի կ'երթայ . և ետ դառ-  
նալէք բնաւ չունի . և մինչև ան  
չանցնի՝ Աստուած ուրիշ մը չի տար .  
և արդեօք րոպէ մըն ալ պիտի տա՞յ  
թէ չէ՝ մէկը չը գիտեր : Մեր կե-  
նացը բոլոր տարիները՝ և տարիներ-  
րուն ամիսները՝ և ամիսներուն շա-

բաթները՝ ու շաբաթներուն օրերը և օրերուն ժամերը և ժամերուն ամէն մէկ րոպէները Աստուծոյ ստացուածքն է : Եւ ով որ անիկայ չէ թէ Աստուծոյ համար՝ այլ ուրիշ բաներու համար կը գործածէ, այսինքն չէ թէ Աստուծոյ հրամանին համեմատ՝ այլ զԱստուած չը յիշելով միայն իր հաճոյքին համար վատնէ, ան մարդը գող չէ՞ . Աստուծոյ ստացուածքը գողցած չըլլար : Բոլոր մեր կեանքը Աստուծոյ յանձնելու ենք . բոլորը անոր ծառայելու համար վատնելու ենք . իրեն համար զոհ ընելու ենք մեր կեանքը և իր հրամանովը մեռնելու ալ պատրաստ ըլլալու ենք : Ուրեմն մեղմէ մէկը կա՞յ որ Աստուծմէ գողցած չէ :

4. Մեր սիրտը՝ Աստուծոյ ստացուածքն է :

Մեր սիրտը Աստուծոյ համար շինուած է, և Աստուած անիկայ մեղմէ կը պահանջէ : Ամէն մէկիս կ'ըսէ, և իրաւունք ունի ըսելու, Որդեակ

իմ՝ քու սիրտդ ինձի տուր : Եւ ո՛վ որ իր սիրտը՝ իր սէրն ու բաղձանքները աշխարհին տայ , գողութիւն կ'ընէ . Աստուծոյ ստացուածքը գողնալու յանցանքին մէջն է . իրը չեղածը աշխարհին կուտայ . Աստուծմէ գողնալով՝ աշխարհին կուտայ : Անկան մը սիրտը էրիկէն գողցողը՝ խիստ յանցաւոր չէ՞ . անոր ըրածը ամենամեծ գողութիւն չէ՞նք սեպեր :

Տէրն մեր բաւ . “ Բու Տէր Աստուածդ պիտի սիրես քու բոլոր սրտովդ՝ քու բոլոր անձովդ՝ քու բոլոր զօրութիւնովդ և քու բոլոր միտքովդ ” : Ասոր նշանակութիւնը աս է որ՝ զԱստուած ամէն բանէ աւելի և կարելի եղածին չափ ջերմեռանգութեամբ սիրելու ենք : Աստուած՝ սէրերնիս ու բաղձանքնիս և բոլոր վստահութիւննիս առնելու է . այսինքն սրտերնիս անոր տալու ենք . և ամէն բանէ աւելի մեր սէրը անոր վրայ ըլլալու է : Ուրեմն ժողովուրդին մէջէն ո՛վ կայ որ գող չէ , ո՛վ կայ որ Աստուծմէ գողցած չէ :

5. Մեր գիտութիւնը՝ զօրութիւնը և ամէն ունեցածը Աստուծոյ ստացուածքն է :

Ամէն զօրութիւն ու կարողութիւն՝ Աստուծմէ է . ամէն իմաստութիւն անոր անհուն գանձէն է . բոլոր ունեցածնիս անոր բարերար ձեռքէն կուգայ . ուրեմն բոլորը անոր ուխտելու ենք : Խելքերնիս և իմացողութիւննիս անոր կրթութեանը յանձնելու ենք , և անոր փառքին ուխտելու ենք : Մեր միտքն ու սորվածները՝ մեր մարմնոյն ու հոգւոյն և մտքին բոլոր կարողութիւնները Աստուծոյ յանձնելու ենք , և իր ծառայութեանը համար վատնելու ենք , քանզի ամէն բան անորն է : Մենք բոլորովին հոգիով ու մարմնով անորն ըլլալու ենք : Չանիկայ մեր հօրմէն՝ մօրմէն՝ եղբօրմէն՝ քրոջմէն՝ կնիկէն և տղաքներէն՝ ու մինչև անգամ մեր կեանքէն աւելի սիրելու ենք . քանզի աս բոլորին Աստուած՝ ու միայն Աստուած արժանի է : Բո-

լոր բաները անկէ՝ անով և անոր համար են . իրեն փառք ըլլայ : Ուրեմն մեզմէ ո՞վ կայ որ Աստուծմէ գողցած չէ . ո՞վ կայ որ գող չէ :

Ո՞վ գողեր՝ ո՞վ զԱստուած կողոպտողներ՝ չէ՞ք ամէնար . յանցանքնիդ չէ՞ք խոստովանիր , և զղջալով՝ չէ՞ք ապաշխարեր . և բոլոր գողցածնիդ ետ չէ՞ք դարձներ : Աթէ մէկը ձեր տունը գալով , և հոն գտնուած բոլոր բաներուն ուրկէ ըլլալը գիտնալով՝ յայտնի կերպով ըսէ՝ Աս այսինչէն գողցաք , և աս այնինչէն գողցաք , աս աթոռը՝ աս կաթսան՝ աս կրակարանը՝ աս մուշտակը՝ այսինչ անձինքներէն գողնալնիդ գիտեմ ըսէ նէ , չէ՞ք ամէնար . և ամէնալով երեսնիդ չէ՞ք ծածկեր :

Արդ սիրելի ընթերցողներ և մտիկ ընտղներ , ձեզ բոլորդ գող կը ճանչնամ : Ոչ թէ ձեր դրացիներէն՝ այլ Աստուծմէ գողցաք . կառավարիչէ մը կամ գատաւորէ մը չէ՝ այլ թագաւորաց թագաւորէն գողցաք : Անոր արևն ու աստղերը գողցաք . ա-

նոր հողն ու պտուղները , և բոլոր ունեցածնիդ անկէ գողցաք : Տուներնիդ անորն է , հանդերձնիդ անորը՝ կարողութիւննիդ անորը՝ խելքերնիդ անորը՝ և ինչ որ ձեր քովը կը գտնուի անորն է . բոլորը ուրէն առնելնիդ գիտեմ . բոլորը Աստուծմէ գողցաք : Աթէ հրեշտակ մը ձեզի պէս ամէն բան իր անձին համար գործածէ , Աստուած անոր գող ըսելով՝ զանիկայ երկինքէն մինչև դժոխքը պիտի վարէ . Աստուած ամենուզ ալ գող չը՞սեր : Ուրեմն թէ որ չապաշխարէք , գալու բարկութենէն ի՞նչպէս պիտի փախչէք . հարկաւ չէք կրնար փախչել , կարելի բան չէ :

Աստուած աչքերնիս բանայ՝ որ յանցանքնիս տեսնենք : Աստուած մեղքերնիս առջևնիս դնէ՝ որ ամչնալով ձգենք : Աստուած օգնէ մեզի որ յանցանքնիս իրեն խոստովանինք , և ինքզինքնիս անոր ողորմութեանը ձգենք : Աստուած ամենուս ողորմի որ Քրիստոսի ապաւի-

նինք և փրկութեան համար աչքեր-  
 նիս անոր վերցընենք : Մեզի հա-  
 մար ա՛ն թող պատասխանէ . մենք  
 ոչ մէկ պատասխան մը՝ հազարէն  
 մէկին անգամ չենք կրնար տալ . մե-  
 զի համար թո՛ղ Քրիստոս պատաս-  
 խանէ : Ամէն :

## ԲԵՐԵՒԻՆՆ ԵՐՁԵԿՈՒՆՑՆԻ— ՎՐԻՍՏՈՍ ՄԵՐԺՈՒՆՑՆԻ :

“Մի արձակեր ատիկայ, հապա Բարաբբան . ու Բարաբբան  
աւաղակ մըն էր” : Յովհ . ԺԷ . 40 .

Տէրն մեր Յիսուո՛ իր յանցանքին  
համար չըսպաննուեցաւ : Այսօրին  
դատաւորը Պիղատոս ըսաւ, “Ես  
ատ արդար մարդուն արիւնէն աղատ  
եմ, ու ջուր առնելով՝ ձեռքերը լը-  
ուաց” : Ես ընելով՝ Պիղատոս Հրէից  
հասկցնել ուղեց թէ՛ ինքը Վրիս-  
տոսի անմեղ ըլլալուն համոզուած է :  
Ենոնց ըսել ուղեց թէ՛ Ես անձը  
սպաննելը մեղք է, յետին աստիճա-  
նի անիրաւութիւն է : Արկիւնքն ու  
երկիրը վկայ կը բռնեմ ձեզի՛ որ եր-  
բէք իր մէկ յանցանքին համար չէ,  
որ ծեծելով ձեզի կը յանձնեմ որ  
խաչէք . այլ մի միայն պատճառը  
ձեր նախանձն է, ձեր անզգամու-  
թիւնը՝ հպարտութիւնը՝ ձեր չարու-  
թիւնն է :



Իրաւ որ՝ Տէրն մեր Յիսուս՝ Պետրոս Եռաքեալին ըսածին պէս (Ե. Պետ. Գ. 18) «Երդարը անարդարներուն վրայ չարչարուեցաւ» : Եւ Եսայի մարգարէին ըսածին պէս՝ (Օգ. 5 :) «Ընկայ մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ, և մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ» : Յիսուսը բռնողներուն առաջնորդը Յուդա՝ խոստովանեցաւ թէ՛ «Ընմեղ արիւն մատնեցի» : Մատ. ԻԷ. 4 : Յիսուսի առ անիրաւ սպանմանը վճիռ տուողը Պիղատոս ըսաւ, «Ես մէկ յանցանք մը չեմ գտներ անոր վրայ» : Յովհ. ԺԲ. 38 : Եւ առ անիրաւ վճիռը ՚ի գործ դնող՝ Յիսուսին մեռնիլը տեսնող հարիւրապետը ըսաւ, «Իրաւցրնէ առ մարդը արդար էր» : Գուկ. ԻԳ. 47 :

Տէրն մեր Քրիստոս՝ դատաւորին առջևը հռչակաւոր յանցաւորի մը պէս քանի որ կապուած էր, և քահանայապետները քանի որ զինքը գանգատ կրնէն, Յիսուս բնաւ մէկ պատասխան մը չըտուաւ : Ընոնք

Ճշմարիտ վկաներ չէին՝ այլ գանգատողներ էին, Յիսուսի դէմ բնաւ վկայութիւն մը չը բերին, միայն զանիկայ կ'ամբաստանէին, ու ան ալ շատ աղաղակներով ու հայհոյութիւններով: Ուրեմն Յիսուսի պատասխան չիտալը՝ իր յանցաւոր ըլլալէն չէր. անոր բոլոր վարմունքն ու շարժմունքները՝ իր յանցաւոր չըլլալը յայտնի ըրին: Անիկայ իշխանութիւն ունեցող բարեկամներ չունէր. ինքը ազգատ՝ մինակ՝ և անզէն էր. անոր անցուցած կեանքն ու սորվեցուցած վարդապետութիւնները ամենուն յայտնի էին: Ուրեմն թշնամիներուն գանգատները՝ այն աստիճան խելքի և իմացողութեան դէմ էին՝ որ արդար դատաւորի մը առջևը՝ անոր պատասխան տալ բնաւ հարկ չէր ըլլար:

Բայց կը կարդանք թէ՛ «Դատաւորը կը զարմանար»: Ար զարմանար որ Տէրն մեր՝ ամէն բան խոնարհութեամբ կրելով՝ անէծքի փոխարէն չէր անիծեր: Պիղատոս աս-

կէց առաջ ասանկ բան տեսած չէր . ուրեմն կը կարդանք [Թէ՛ (Մատ . ԻԼ . 14) : “ Շատ զարմացաւ ” : Քահանայապետներուն զանիկայ նախանձի համար մատնած ըլլալը յայտնի էր . և անոնց բարկութեամբ կատղելէն՝ ոչ [Թէ Յիսուսի յանցաւոր ըլլալը՝ այլ անոր անմեղ ըլլալը արեւի պէս կը յայտնուէր :

Ուստի Պիղատոս Յիսուսը արձակելու աշխատեցաւ . և անոր ժողովուրդին մէջ ըրած զարմանալի բժշկութիւններուն ու հրաշքներուն համար շատ պատիւ ունենալը հասկնալով, խորհեցաւ որ գործը քահանայապետներուն ձեռքէն առնելով՝ ժողովուրդին խորհուրդին յանձնէ : Եւ ասիկայ ազգային ժողովքին պատիւին առանց դպչելու կրնար ընել . քանզի (Մատ . ԻԼ . 15) : “ Առաջապէս սովորութիւն ունէր, որ տօնին ատենը կապուած մը արձակէր ժողովուրդին, ո՛վ որ ուզէին ” : Ես սովորութիւնը հրէաներուն սիրտը հաճեցրնելու համար էր : Եւ Պիղատոս

իր առջևը կապուած կայնող անմեղ Յիսուսին ազատութիւնը անպատճառ ձեռք բերելու մտքով՝ իբրև անոր հաւասար հռչակաւոր անզգամ մը ընտրեց . և ըսաւ, (Մատ . ԻԷ . 17:) “Ո՞րը կ’ուզէք՝ որ ձեզի արձակեմ, Բարաբբա՞ն, թէ Յիսուսը՝ որ Քրիստոս կ’ըսուի” :

Ես միջոցին Պիղատոս իր կնիկէն զարմանալի լուր մը առաւ, և քանի որ իր ուշադրութիւնը քանի մը բոպէ անոր տուած էր, քահանայապետները ժողովուրդը համոզեցին՝ որ չարագործ Բարաբբան խնդրեն, և Յիսուսը մեռցընեն :

Ենանկ որ կուսակալը ժողովուրդին դառնալով՝ և երկու բանտարկեալներուն մէկը ընտրել առաջարկելով՝ (Մատ . ԻԷ . 21:) “Ես երկուքէս ո՞րը կ’ուզէք՝ որ ձեզի արձակեմ” հարցուցած ատենը, “Ենոնք ըսին, Բարաբբան” : Կերևնայ թէ Պիղատոս բնաւ կասկած չէր ըներ թէ Յիսուսը պիտի խնդրեն . բայց անոնք քահանայապետներուն ազգեցու-

Թեանը տակն ըլլալով՝ բոլորը մէկէն Բարաբբան խնդրեցին : Այնչափ ժողովուրդին բազմութեանը մէջէն՝ Յիսուսին կողմանէ ձայն մը չի լսուիր : Աչ. կերևնայ թէ բնաւ ձայն մը չի լսուիր . խորհուրդ ընելու համար ժամանակ չեն ուզեր. անմիաբանութիւն չեն ցուցուներ, այլ՝ (Պուկ. ԻԳ. 18 : « Բոլոր բազմութիւնը մէկտեղ աղաղակեցին ըսելով. Աւերցու՛ր ատիկայ՝ ու Բարաբբան արձակէ մեզի » :

Կերևնայ թէ՛ Պեղատոս անոնց խնդիրքին զարմացաւ մնաց . և ինչ ըսելը չէր գիտեր : Աւերջապէս ըսաւ անոնց (Հմր. 22) « Հապա ի՞նչ ընեմ Յիսուսը՝ որ Բրիստոս կըսուի » : Օւանիկայ իմ կամքի՞ս կը ձգէք . զանիկայ արձակելով ձեր տօնին կրկի՞ն պատիւ ընեմ, ըսելու պէս էր : Բայց ասանկ փափաք մը չըյայտնուեցաւ, այլ ընդհակառակն՝ « Ամէնքն ալ ըսին անոր . Թող խաչուի » : Չէ թէ անոնցմէ մէկը՝ այլ « ամէնքը » չէ թէ մէկ քանին՝ այլ

“ամէնքը” անոր խաչուիլը խնդրեցին :

Ղուկասէն կըսորվինք թէ (ԻԳ . 22 :) Պիղատոս “Նըրորդ անգամ ըսաւ անոնց . Բայց ի՞նչ չար գործ ըրած է ատիկայ” . և ատիկայ շատ աղէկ հարցում մըն էր : Մահուան վճիռը տալէն առաջ՝ հարցընելու շատ յարմար հարցում մըն է՝ թէ “ի՞նչ չար գործ ըրած է” : Առսակալը ըսել ուզեց՝ Շնորհք ըրէք , զանիկայ ինչո՞ւ խաչը հանեմ . անոր յանցանքը ի՞նչ է . ես զանիկայ քննեցի, բոլոր դէմ խօսածնիդ լսեցի, և անոր վրայ մեռնելու արժանի բան մը չը գտայ : Սակայն (Մատ . ԻԻ . 23 :) “Մնոնք ևս առաւել կ’աղաղակէին ու կ’ըսէին . թող խաչուի” : Պիղատոս որչափ որ անոր կողմէն կը խօսէր , անոնք ալ աւելի կ’աղաղակէին թէ՛ զանիկայ “Խաչը հանէ” : Մնոր գործը թէ՛ աղէկ ըլլայ և թէ գէշ՝ տարբերութիւն չունի , զանիկայ չենք ուզեր , թո՛ղ խաչուի : Նև անոնց բարկութիւնը՝ կարգ ու կա-

նոն մոռցընել տուաւ անոնց : Ղուկասէն (ԻԳ. 23) կը սորվենք թէ՛  
 «Մնոնք մեծաձայն աղաղակներով  
 ոտք կը կոխէին, ու կ'ուզէին որ ա-  
 նիկայ խաչուի» . չէ թէ միայն կ'ու-  
 ղէին՝ այլ ոտք կը կոխէին որ խա-  
 չուի :

Պիղատոս իրէք անգամ շրէից  
 հետ խորհուրդ ընելէն ետքը, վեր-  
 ջապէս հրամայեց՝ որ հրապարակը  
 տարուելով ծեծուի : Ես կերպով Պի-  
 ղատոս կը յուսար որ՝ քահանայա-  
 պետներուն սիրտը շինէ, և անիրաւ  
 տեղը տանջուող Յիսուսին վրայ ժո-  
 դովուրդին գուլթը շարժէ : Սակայն  
 աւա՛ղ . աս կերպով կրօնքը հալա-  
 ծողներուն սիրտը շինելու աշխատի-  
 լը՝ միայն անոնց բարկութիւնը և  
 հպարտութիւնը աւելցընելու միջոց  
 մը կ'ըլլայ : Երդ՝ Տէրն մեր գերիի մը  
 պէս ծեծուելէն ետքը՝ գերիի մը պէս  
 խաչուելու տարուեցաւ :

Սակայն սիրելի եղբայրներս . թէ  
 որ մէկ պատուաւոր և անմեղ մէկը  
 անիրաւութեամբ տանջուի, զանի-

կայ բոլոր ճանչցողները և շատ չը ճանչցողներն ալ կը ցաւին իրեն վրայ : Սաւուղ թագաւորը՝ երբ իր որդին Յովնաթանը մեռցրնելու վրայ էր , բոլոր ժողովուրդը ոտք ելլելով ըսաւ .  
 “ Բաւ լիցի , Տէրը կենդանի է որ անշուշտ անոր գլխէն մազ մը գետինը պիտի չեյնայ ” , (Ն . Թագ . ԺԳ . 45) , և զանիկայ ազատեցին : Յակոբին պզտիկ տղան Բենիամին՝ Եգիպտոս գերի բռնուած ատենը , անոր եղբայրը Յուդա շատ ցաւելով՝ Եգիպտոսի կուսակալին Յովսէփին ըսաւ թէ՛ “ Աաղաչեմ քեզի , տղուն տեղը՝ ծառադ իմ տիրոջս ծառայ մնայ , և տղան իր եղբայրներուն հետ ( իր հօրը ) ելէ ” : Օհն . ԽԳ . 33 : Հռովմայեցի ազնուականի մը հոգին՝ երբ իր թշնամիներէն կը փնտռուէր , անոր բարի ու հաւատարիմ ծառան իր շահուն ու կեանքին չը նայելով՝ իր տիրոջը հետ հանգերձը փոխեց և անոր տեղը սպաննուեցաւ : Եւ անօրէն մէկը սպաննուած ատենը , զանիկայ տեսնողնե-



ըր կը ցաւին , և ո՛հ ո՛հ ըսելով սիրտերնին կը դողան :

Եւ աս սուրբ՝ անմեղ՝ բարերար և օրհնեալ Յիսուսը այսչափ տանջանքներ քաշած ատենը , մէկը չը կա՞յ որ իր կողմէն բան մը ըսէ : Ո՛ւր են անոր բացած բոլոր աչքերն ու աւկանջները . ո՛ւր են անոր քակած լեզուները և բժշկած ոտքերն ու ձեռքերը . բոլորը ո՛ւր են . նորէն գոցուա՞ծ են . բոլորը նորէն չորցած և վնասուա՞ծ են : Ենոր ողորմած ու շնորհք ըրած բիւրաւոր անձինքներուն մէջէն մէկը չկա՞յ՝ որ բազմութեանը մէջէն ելլելով Պիղատոսին ըսէ , Ենոր կենացը տեղը՝ իմ կեանքս կուտամ . անոր արեանը փոխարէն՝ արեանս ամէնմէկ կաթիլը թո՛ղ թափուի : Մէկը չկա՞յ որ Քրիստոսի և իր թշնամիներուն մէջտեղը ինքզինքը նետելով աղաղակէ թէ՛ ան օրհնեալ մարդը չի պիտի ծեծուի . աս սուրբ բարեկամը չի պիտի մեռցուի . անոր փափուկ մարմինին ես՝ ես կը փաթտուիմ , և ո՛վ որ կ'ուզէ

զանիկայ ծեծել՝ առաջին հարուածը իմ վրաս թող գայ, և երկրորդը՝ ու քանի հարուած որ ըլլայ, բոլորը վրաս թող գայ. և զանիկայ մեռցընելէն առաջ՝ զիս մեռցընելու է: Աւա՛ղ, ասանկ մէկը չերևար. ասանկ ձայն մը չե լսուիր:

Յիրաւի Քրիստոս բարեկամներ ունէր. բայց անոնք ցիրուցան ըլլալով՝ շատերը ան գիշերուան պատահածները՝ այսինքն՝ Քրիստոսի մատնուիլը չէին գիտեր: Այլ հոն ներկայ եղողներուն ձայնն ալ՝ եթէ վերցուցին նէ, ան կանչուըռտող բազմութեան աղաղակէն խեղդուեցաւ: Ո՛չ մարգարէին ըսածին պէս (Ասայ. ԿԳ. 3) « Հնձանին մէջ մինակ ան կոխեց, և ժողովուրդներէն անոր հետ մարդ մը չըկար»: Ա՛րեւնայ թէ՛ Պիղատոսին ականջը՝ ան աղաղակէն ՚ի զատ ուրիշ ձայն չէր լսեր թէ՛ « Ա՛րցո՛ւր ատիկայ, և Բարաբբան արձակէ մեզի»:

Հոս երկու հարցում կայ. որ հիմա ժամանակ չըլլալուն հետեւեալին կը

թողունք : Բայց բան մը սորվեցանք ,  
 այսինքն կուսակալին պարտաւորու-  
 թիւնը : Պիղատոս կուսակալ էր . և  
 իրաւախոհ կուսակալ մը՝ ակնածու-  
 թիւն չըներ : Հարուստ և դորա-  
 ւոր մարդոց անիրաւութիւններուն  
 թոյլտուութիւն չըներ . այլ անիրա-  
 ւութեանց առջևն առնելով՝ անի-  
 րաւներուն պատիժը կուտայ , և  
 տկարները ու տառապեալները ա-  
 նոնց ձեռքէն կ'ազատէ . աս է դա-  
 տաւորին պարտաւորութիւնը : Եւ  
 եթէ Պիղատոս արդար դատաւոր մը  
 ըլլար , անմիջապէս պիտի ազատէր  
 Յիսուսը իբրև անմեղ . քանզի անոր  
 վրայ չ'ըէից նետած բոլոր յանցանք-  
 ները չը հաստատուելէն՝ ի զատ՝ բո-  
 լորին սուտ ըլլալը շատ յայտնի էր .  
 և Յիսուսին վրայ յանցանքներուն  
 մէկին հետքը անգամ չկար : Պի-  
 դատոս՝ չէ թէ միայն Յիսուսը ար-  
 ձակելով ազատ ընելու էր , այլ զա-  
 նիկայ քահանայապետներուն և ժո-  
 ղովուրդին բարկութենէն ազատելու  
 համար՝ թէ որ հարկ ըլլար , անոր

Հետ խումբ մը զօրք ալ խրկելու էր :  
 Սակայն անիկայ արդարութեան բա-  
 ւական սէր չունէր որ ասանկ ընէր ,  
 և շատ վախնալով՝ որ ժողովուրդին  
 առջևը իր պատիւը չը կոտորի՝ ուզեց  
 որ եթէ կարելի է՝ գործը իր վրայէն  
 ձգէ , և իր խիստ սիրելի պատիւը  
 պաշտպանէ , քանզի աս պարագա-  
 յին տակ իր գիտութիւնը և աշխար-  
 հային շահը մէկգմէկու հակառակ  
 եկան : Եւ չուովմայեցի կուսակալ-  
 ները խիստ անիրաւ և ազահ ըլլա-  
 լով՝ չրէաները՝ Ա՛հ հափառ Այսորին  
 գանգատ ընելէն արգիլելու համար՝  
 շատ անգամ արդարութեան հակա-  
 ռակ գործելով՝ անոնց սիրտը հաճե-  
 ցընելու կ'աշխատէին :

Պիղատոս՝ Ես անպարտ եմ ըսե-  
 լով՝ իր ձեռքերը լուաց . սակայն աս  
 գործողութիւնը և աս խոստովանու-  
 թիւնը՝ զինքը իր յանցանքէն ազա-  
 տեց . ոչ . չէր կրնար ազատել . Պի-  
 ղատոս դատաւոր մը ըլլալով՝ զրկանք  
 կրող Յիսուսը աղատելու էր . և ա-  
 ղաղակ հանող խառնիճաղանճին աղ-

մուկը որչափ շատ՝ ու կատղած քահանայապետներուն բարկութիւնը որչափ մեծ ալ էր նէ, Պիղատոս՝ սուրբ Յիսուսը մէկէն չ'ազատելուն՝ և զանիկայ հալածողներուն բարկութիւնը չը կոտորելուն համար՝ Նստուծոյ առջևը յանցաւոր էր. արդար չէր : Ամէն մարդ՝ թէ կուսակալ՝ թէ վաճառական՝ և թէ արհեստաւոր, ամէն մէկը՝ որչափ որ երևնայ, արդարութիւնը սիրելու է և իրաւունքով գործելու է, եթէ ոչ՝ Պիղատոսին պէս յանցաւոր կ'ըլլայ :

Խօսք մըն ալ ունինք : Տէրն մեր Քրիստոս՝ Պիղատոսին առջևը կապուած կայնեցաւ, և անիրաւութեամբ դատապարտուեցաւ. բայց Պիղատոս Քրիստոսի դատաստանին աթոռին առջևը պիտի երևայ, անոր առջևը կապուած՝ յանցաւոր՝ և անպատասխանի պիտի կենայ, և արդարութեամբ պիտի դատապարտուի : Յիսուս՝ Հրէաստանի դատաւորին առջևը կայնեցաւ. բայց Պիղատոս երկու աշխարհներուն

դատաւորին առջևը պիտի կայնի :  
 Աւմենք ամէնքս ալ հոն պիտի գտ-  
 նուինք . և անոր աչքերուն առջևէն  
 երկինք և երկիր պիտի փախչին , և  
 տեղ պիտի չը գտնուի անոնց : Աստ-  
 ուած շնորհք տայ՝ որ ան մեծ ու ա-  
 հարկու օրը ողորմութիւն գտնանք .  
 և Պիղատոսին առջևը կապուած՝ և  
 անիրաւութեամբ տանջուած՝ աս  
 օրհնեալ Յիսուսը ան մեծ օրը մեր  
 բարեկամը ըլլայ : Ամէն :

## ԲԵՐԵՒԲԵՆ ԵՐՁԱԿՈՒՆՑԱՆԻ— ՎՐԻՍՏՈՍ ՄԵՐԺՈՒՆՑԱՆԻ :

“Մի արձակեր ատիկայ, հապա Բարաբրան . ու Բարաբրան  
աւաղակ մըն էր” : Յովհ . 7Է . 40 .

Միւս քարոզին մէջ սորվեցանք  
թէ՛ Տէրն մեր Քրիստոս մերժուե-  
ցաւ, և Բարաբրան արձակուեցաւ :

Հիմա երկու հարցում ունինք :  
Մէկը Բարաբրային վերաբերեալ, և  
միւսը Յիսուսին վերաբերեալ :

1. Բարաբրան ո՞վ էր . անոր վարքը  
ի՞նչպէս էր . և ժողովուրդին ա-  
նոր այնչափ հաւնելուն պատճառն  
ի՞նչ էր :

Հրէից հաւնած ու արձակած Բա-  
րաբրան՝ իր կամքին հետևող մէկ մըն  
էր . բնութեամբ չար՝ և խիստ յան-  
ցաւոր էր : Վաղաքին մէջ պատա-  
հած խռովութեան ու մարդասպա-

Նութեան մը համար բանտարկուած ըլլալով՝ իր եղեռնադործ ընկերներուն հետ կապուած էր . հասարակութիւնը խռովութեան և երկպառակութեան գրոգռող բռնաւոր մըն էր : Աստունմէ չըվախցող և մարդոցմէ չամըչցող մէկ մըն էր . օրէնքը աւրող էր , դող էր , խռովարար մըն էր՝ որ երկրին խաղաղութիւնը և ապահովութիւնը վտանգի բերաւ : Գող մը՝ աւազակ մըն էր , և ոչ մէկը իր ստացուածքը ապահով կրսեպեր : Արիւնարբու մարդասպան մըն էր՝ որ մարդոց արիւնը թափելու պատրաստ էր : Աս իրեք մեծ յանցանքները ունէր , այսինքն խռովարարութիւն՝ աւազակութիւն՝ և անիրաւ սպաննութիւն . ասոնց ամէն մէկին համար մահուան արժանի էր :

Յիսուսի համար իբրև խռովարար գանդատ եղաւ . սակայն բոլորովին արդար՝ և տէրութեան հպատակ էր , և ամէնը գիտէին անոր հպատակ՝ և ամէն կերպով անմեղ ըլլալը : Իսկ Բարաբրան յայտնի բռնաւոր մըն էր ,



սակայն ամէնն ալ անոր արձակուիլը խնդրեցին : Երդ՝ աս անզգամը ազատեցաւ . արդեօք անօրէններուն տեղը մեռնող Յիսուսին հաւատա՞ց , թէ անօրէնութեանը մէջ յառաջացաւ . չենք գիտեր : Երդեօք գլուխնին շարժող քահանաներուն հետ խաչին վրայ մեռնող անմեղ Յիսուսին հայհոյե՞ց՝ թէ Պետրոսին պէս դուրս ելլելով դառնապէս լացաւ : Մեռնելու արժանի էր . սակայն աս խիստ յանցաւոր մարդը ազատեցաւ , և անոր տեղը անմեղ Յիսուսը մեռաւ : Երդ՝ Բրիստոսի մահուան միջոցովը՝ աս մեղաւորներուն գլուխը ներում դտնալով ազատեցաւ : Եւ Պետրոս Եռաքեալ չըսա՞ւ՝ “Երդարը անարդարներուն վրայ մեռաւ՝ որ մենք յաւիտենական մահուանէ ազատինք” :

Սակայն երկրորդ հարցումին գանք , որ Յիսուսի վերաբերեալ հարցում մըն է :

2. Յիսուս ո՞վ էր . անոր վարքը ի՞նչ էր . և զինքը ժողովուրդին հաւնիլ տալու ի՞նչ առաքինութիւններ ունէր :

Տէրն մեր ամէն կատարելութեան տէրն էր : Անիկներէն ծնածներուն մէջ ամենամեծ մարգարէն Յովհաննէս՝ ինքզինք արժանի չըսեպեց որ Քրիստոսի կօշիկներուն կապերը արձակէ : Արկնից հրեշտակները՝ անոր ծառայելէն աւելի մեծ պատիւ չեն ուզեր : Յիսուս՝ Հրէաներուն ի վաղուց հետէ սպասած անձն էր , աղգին յոյսն ու պատիւն էր , ան Քրիստոսը որ դալու էր՝ թագաւոր էր : Աւ ասկէց ՚ի զատ՝ մարդոց մէջ անոր չափ խոնարհ՝ մարդասէր՝ բարերար՝ և բարի գործքերով լեցուած մէկը չկար : Բոլոր զօրութիւնը և կեանքը՝ բարիք ընելով վատնեց :

Հիմա անոնք ժողովնք Պիղատոսին առջևը՝ որոնց աչքերը և ականջները Քրիստոս բացեր էր . բոլոր բժշկած կազերը՝ հաշմանգամները՝

դիւահարները՝ և նեղեալները, բոլոր անոնք որոնց ախտերը բժշկեց և ջերմը կտրեց, բոլոր մեռելներէն յարուցածները՝ և անոնց բարեկամները ժողովինք. այսինքն՝ Պիղատոսին առջևը հազարաւոր անձինքներ բերենք, որոնց՝ Տէրն մեր հաց տուաւ. արտասուքները սրբեց, տրտմութիւննին փարատեց, վախերնին վռնտեց, սրտերնին մխիթարեց. բոլոր ասանկները Պիղատոսին առջևը բերելով՝ առաջին կարգին մէջ դնենք Ղազարոսն ու իր երկու քոյրերը. Յայրոսն ու անոր տասուերկու տարեկան ազջեկը, հարիւրապետն ու անոր սիրելի ծառան, Նային քաղաքին որբւարի կնիկն, անոր մէկհատիկ որդին, ու թէ որ կուզէք՝ քահանայապետին ծառան Սազքոսն ալ անոնց հետ դնենք : Եւ հիմա Պիղատոս բոլորտիքը եղողներուն նայելով՝ դարձեալ թող հարցընէ՝ « Ի՞նչ չար գործ ըրած է, որ զանիկայ խաչը հանեմ » : Ընբազմութենէն մէկը ոտք ելլելով՝ կ'ըսէ, Տէր իմ, Նային ըսուած քաղա-

քէն կուգամ, և կը վկայեմ թէ մեռնելէս վերջը քանի որ դերեզման կը տարուէի՝ աս քու առջևդ եղող կայեալ Յիսուսը՝ ծեր և սգաւոր մօրս ոգորմելով՝ զիս յարուց :

Ես մարդը իր վկայութիւնը լմընցուցածին պէս՝ Տիւրոսի և Սիդոնի կողմերէն եկած կնիկ մը ելլելով՝ կ'ըսէ, Եղջիկս չար ոգիէն բռնուելով շատ կը տանջուէր, և աս քու առջևդ եղող օրհնեալ Յիսուսը՝ զանիկայ Սատանային ձեռքէն ազատեց :

Ուրիշ մը շիտկուելով կ'ըսէ, Տէր իմ՝ տասուերկու տարի անդամալոյծ ըլլալով՝ բնաւ չէի կրնար շիտկուիլ, և աս սուրբ՝ օրհնեալ Յիսուսը՝ զիս ան հիւանդութենէն ազատեց :

Մէկ ուրիշ մը ելլելով կրվկայէ թէ՛ Երեսունութը տարի անկողինէն ելլել չըկրցայ, և աս ծեծուած Յիսուսը՝ զիս ան վիճակին մէջ տեսնալով՝ առողջացուց :

Ուրիշ մը ոտք ելլելով՝ կ'ըսէ, Տէր իմ, շատ բժիշկներ գործածելով և բոլոր ունեցածս վատնելով օգուտ մը

չըտեսայ , այլ աւելի գէշ կ'ըլլայի . սակայն աս քու առջևդ կայնող կապուած Յիսուսը ղիս բժշկեց :

Հիմա Յորդանանու անդիի կողմէն եկած մարդ մը աչքերը վերցնելով՝ Նս աչքերս ան տուաւ կ'ըսէ :

Ուրիշ մը իր բաղուկները Պիղատոսին երկնցնելով կը վկայէ թէ՛ Տէր իմ , աս ձեռքս չորցած էր , և անոր կեանք ու զօրութիւն տուողը՝ աս քու առջևդ կայնող յաւիտեանս օրհնեալ Յիսուսն էր :

Ուրիշ մը բազմութեանը մէջէն կանչելով՝ Նս լեզուս ատ քակեց կ'ըսէ : Ա՛րջապէս , տասնումէկ հազար հոգի մէկէն ելլելով՝ կը խոստովանին թէ՛ Մենք շատ անօթի էինք , և աս սուրբ ու բարերար Յիսուսը մեզի ուտելիք տուաւ :

Սակայն « Մի՛ արձակեր ատիկայ , հապա Բարաբբան » ըսին : Պետրոսին ըսածին պէս՝ Խնդրեցին որ մարդասպան մարդ մը իրենց շնորհուի , և կենաց առաջնորդը սպաննեցին : Աեանք տուող Յիսուսէն՝

կորսնցընող Ռարաբբան աւելի պատուական սեպեցին : Աւ զանիկայ Յիսուսէն աւելի յարգի սեպելնուն պատճառը աս էր որ՝ Ռարաբբան թէև դող էր , բայց խրատատու չէր . թէև իրենց երկիրը անհանգիստ ըրաւ , բայց խղճմտանքին անհանգիստ չըրաւ . թէև իրենց ստացուածոցը ձեռք զարկաւ , բայց անհիմն գաղափարներու ու սխալ արարողութիւններու չը դպաւ . թէև զանոնք շոտվմայ տէրութեան անընդունակ և զղուելի ըրաւ , բայց իրենց աչքին զգուելի չըրաւ . թէև իրենց արիւնը թափեց , բայց կեղծաւորութիւնները՝ ազահուութիւնները՝ և անիրաւութիւնները չը յայտնեց : Անոր սուկալի յանցանքները՝ անոնց չարութեանցը ծածկոցի պէս եղաւ : Սակայն Յիսուսի սուրբ վարքն ու վարդապետութիւնները՝ անոնց գէշութիւնները արեւի պէս երեւան հանեց : Անոնք խաւարը լոյսէն աւելի սիրեցին . սխալմունքը և ստութիւնը՝ ճշմարտութենէն աւելի սիրեցին .

ամենամեծ և ամենադէշ մեղքը՝ բարութենէն և արդարութենէն աւելի սիրեցին : Աստուծոյ սիրելի Որդին թո՛ղ վերցուի, մեր մէջէն թո՛ղ վերցուի, թո՛ղ խաչուի, զանիկայ չենք ուզեր, և մեզի Սատանային որդին թո՛ղ տրուի, զանիկայ կ'ուզենք : Ահա՛ աս էր անոնց բռնած ընթացքին խօսքերը : Սակայն՝ ե՛զբայրներս, Բարաբբան Բրիստոսէն յարգի սեպողները՝ միայն նրէաները չեն. ամէն ազգի մէջ շատերը կան որ՝ աս չար գործը ամէն օր կ'ընեն : Իրենց սիրած մեղքերուն մէջ շարունակելու համար՝ Բրիստոսի փրկութիւնն ու թագաւորութիւնը չընդունելով՝ աս չար գործ կը գործեն : Ակեղեցւոյն կանոններն ու սովորութիւնները պահելու համար՝ Աստուծոյ խօսքը մէկդի ձգելովսին՝ աս մեղքովը յանցաւոր կ'ըլլան : Աշխարհային մարդոց հետ խօսելու և խաղալու համար՝ ժողովատեղին չերթալովսին՝ նրէից բրած աս մեղքին մասնակից կ'ըլլան : Աս աշխարհիս բարեկա-

մութիւնը՝ դուարճութիւնը՝ պատիւն ու սէրը՝ Տէր Յիսուսի ծառայութենէն ու պատիւէն աւելի բռնածատեննին, Բարաբբան Յիսուսէն աւելի ուղած կ'ըլլան :

Ամէն մեղք՝ մէյմէկ գող է . ամէն դէշ ցանկութիւններ մէյմէկ դողեր են : Աստուծոյ պատիւ կը դողնան . մեզմէ խաղաղութիւն՝ երջանկութիւն՝ երկինք կը գողնան : Սակայն տակաւին մեր ընտրածը աս է . և մեզ հարստացնող՝ երջանիկ ընող ու յաւիտենական կեանք բաշխող Յիսուսը կը մերժենք : Մեղքը՝ հողին կը կորսնցընէ, բայց անիկայ կ'ընդունինք . Տէրն մեր Յիսուս՝ հողին կը փրկէ, սակայն ա՛ն է՝ որ կը մերժենք : Ուրեմն չէ թէ միայն շրէաները՝ այլ մենք ալ շատ յանցաւոր չե՞նք :

Խօսք մըն ալ ունինք : շրէաները՝ քանի որ կը պնդէին թէ իրենք Աստուծոյ բարեկամներն են, անոր թշնամիներն էին : ՂԱստուած կը սիրենք կ'ըսէին, բայց զանիկայ բնաւ



չէին սիրեր : Բոլոր աշխարհիս մէջ  
 մէկը չկար որ անկէ այնչափ կը զգուէ-  
 ին՝ որչափ որ Մատուծմէ : Մատու-  
 ած ինքը երկինքէն իջաւ , և իրենց  
 մէջը բնակեցաւ , իր սէրը՝ ողորմու-  
 թիւնը՝ սրբութիւնը և Մատուծա-  
 յին բնաւորութիւնը ցուցուց . սա-  
 կայն բոլորը մէկէն կանչեցին՝ Մնի-  
 կայ վերցո՛ւր , և մեզի արձակէ՛՝ ո՛վ  
 կ'ըլլայ թո՛ղ ըլլայ , Հերովդէս՝ Պի-  
 դատոս՝ Փարաւոն՝ Բարաբբա՝ գող մը՝  
 բռնաւոր մը՝ մարդասպան մը՝ ո՛վ  
 կ'ըլլայ թո՛ղ ըլլայ , սակայն աս վեր-  
 ցո՛ւր , մեր մէջը չենք ուզեր զանի-  
 կայ : Հապա ինչո՞ւ . ի՞նչ չար գործ  
 րած է : Չար գործ թէ ընէ և թէ  
 չընէ՝ բնաւ տարբերութիւն չունի .  
 զանիկայ վերցո՛ւր , թո՛ղ խաչուի՛  
 րսին : Աւ Հրէաները կը կարծէին  
 թէ իրենցմէ ՚ի զատ ուրիշ ազգ մը  
 չկայ որ զՄատուած կը սիրէ : Անոնք  
 ինքզինքնին կը խաբէին . սրտերնին  
 չէին գիտեր . Տէրը անոնց ըսաւ՝ Գի-  
 տեմ՝ ձեզ որ Մատուծոյ սէրը մէջեր-  
 նիդ չունիք : Յովհ . Ե . 42 :

Եւ ամէն ազգի ու եկեղեցւոյ մէջ  
 շատերը ճիշտ աս վիճակին մէջն են :  
 ՂՆստուած կը սիրենք կ'ըսեն , բայց  
 ընդհակառակն զանիկայ բնաւ չեն  
 սիրեր : Ենկէ աւելի ինքզինքնին կը-  
 սիրեն . անկէ աւելի իրենց պատիւը  
 և զուարճութիւնները կը սիրեն .  
 անկէ աւելի լիբայ մը՝ դահեկան մը  
 կը սիրեն : Եւա՛ղ , սրտերնիս ո՛ր-  
 քան չար , և բնութիւննիս ո՛րքան  
 ապականած է :

Բոլոր մեր սեռին վիճակը աս է :  
 Եմէն ազգ՝ ամէն կրօնք՝ ամէն ժո-  
 ղովուրդ՝ ամէն ընտանիք և ամէն  
 մարդ աս ինկած վիճակին մէջն է .  
 այսինքն բնութեամբ Եստուծոմէ  
 զատուելով և անոր ճամբաները չու-  
 զելով՝ Սատանային զաւակները ե-  
 ղան : Եւ անոր գործքերը՝ կամքը՝  
 թագաւորութիւնը կը սիրեն . և ա-  
 մէն օր զԲրիստոս մերժելով՝ Բա-  
 րաբբան կ'ուզեն :

Ուրեմն Հրէից ըրածը՝ մեր ըրածն  
 է , մեր սեռին գործն է . Հրէաները  
 միայն մեր փոխանորդներն էին : Ե-

նոնք միջոց ունեցան Յիսուսը մեռ-  
ցունելու . բայց եթէ անոնց եղած  
միջոցը՝ մերը ըլլար, մենք ալ անոնց  
բռածին պէս պիտի ընէինք :

Սիրելիներս, ձեր վիճակը ի՞նչ է :  
Գիտեմ որ ծնած վիճակնիդ անկեալ  
վիճակ մըն է . բայց իմ հարցումս է  
թէ՝ հիմակուան վիճակնիդ ի՞նչ վի-  
ճակ է : Սուրբ Հոգիէն ծնա՞ք, նոր  
արարած եղա՞ք : Հիմա Քրիստո՞ս  
կը սիրէք՝ թէ աշխարհը : Քրիս-  
տո՞ս կ'ընտրէք՝ թէ Բարաբբան :

## ԵՍԻԿԵՅ ԸՐԷՒԹ ԶԻՍ ՅԻՇԼԵՒՈՒ ՀԵՄԵՐ :

“Եսիկայ ըրէք զես յիշելու համար” : ւ՛ . Կոր . քա . 24 :

Սկիզբէն էր Բանը , և Բանը Եստուած էր . ու Բանը մարմին եղաւ , և մեր մէջը բնակեցաւ : Ես մեծ Լապը՝ հրեշտակներուն Տէրը՝ բարձրերէն բարձր՝ իմաստուններէն իմաստուն՝ սուրբերէն սուրբ եղող Լապը՝ երկինքը ձգեց , աս աշխարհը եկաւ . մինչև մեղի իջաւ . մինչև մեր ցած բնութեանը խոնարհեցաւ . աղքատներէն աղքատ՝ և վշտացեալներէն վշտացեալն եղաւ : Մեղի համար եկաւ . պարտքերնիս վճարելու համար եկաւ . մեղքերնիս իր վրայ առնելով՝ վերցնելու համար եկաւ . մեղ Սատանայէն ու դժոխքէն ծախու առնելու համար եկաւ . և մեղ ծախու առնելու համար իր կեանքը տուաւ :

Եւ մեզմէ ի՞նչ կ'ուզէ : Կ'ուզէ որ

զինքը յիշենք : Անոր մեզի ցուցուցած  
 ողորմութիւնը՝ անհուն էր . անոր  
 մեզի ցուցուցած սէրը՝ անպատմելի՝  
 ստորադրութենէ դուրս էր : Եւ  
 մեզմէ ի՞նչ կ'ուզէ : Ա՛ռ զէ որ մենք  
 զինքը յիշենք : Մեզի համար Վրիս-  
 տոս շատ չարչարանքներ քաշեց .  
 խիստ անգութ և ամօթալի մահ  
 կրեց . մեզի համար խաչուելով հոն  
 մեռաւ . և հիմա կ'ուզէ որ զինքը յի-  
 շենք : Չանիկայ երկինքէն աս աշ-  
 խարհքը բերողը և մինչև գերեզման  
 խոնարհեցընողը՝ զանիկայ նեղու-  
 թեան մէջ ձողողը և հոգին մահուան  
 աստիճան տրտմեցընողը՝ անոր  
 թևերը տարածողը և ոտքերը քա-  
 շողը՝ և անոր մարմինը խաչին վրայ  
 հանելով գամողը՝ մեր մեղքերն էին :  
 Եւ հիմա կ'ուզէ որ մենք զինքը յի-  
 շենք : Եւ զանիկայ չը յիշե՞նք : «Մ-  
 սիկայ ըտէք զիս յիշելու համար» ը-  
 սաւ Տէրն մեր : Եւ զանիկայ յիշե-  
 լու համար ի՞նչ կ'ուզէ որ ընենք : Ե.  
 Աորն . Ժ.Ե . 23-26 : Տէրն մեր կ'ուզէ  
 որ զինքը յիշելու համար քիչ մը հաց

ուտենք և գաւաթէն խմենք : Աս  
նիւթին վրայ քանի մը խօսք ունինք :

1. Տէրն մեր իր եկեղեցիէն շատ բան  
չի պահանջեր :

Քրիստոս Տէրն մեր չուզեր որ  
զինքը յիշելու համար մեծ կոթող  
մը կանգնինք . կամ աշտարակ մը  
շինենք , և կամ տաճար մը : Մեղ-  
մէ ասանկ բաներ չի պահանջեր , և  
եթէ պահանջէ ալ նէ , մարդկային  
սեռին շատերը չեն կրնար ընել .  
քանզի աս՝ շատ դժուար բան է . և  
խիստ քիչերը կրնան ընել : Նաև •  
Տէրն մեր չուզեր՝ որ զինքը յիշելու  
համար հեռու տեղեր երթալով՝ ու  
խտիր ընենք , Նրուսաղէմ երթանք .  
քանզի շատերը անոր ծախքը չեն  
կրնար ընել . կամ տկար մարմին ու-  
նենալով երկայն ճամբորդութեան  
չեն դիմանար . աս միայն հարուստ-  
ները և զօրաւորները կրնան ընել :  
Սակայն գոհութիւն ըլլայ որ Քրիս-  
տոս Տէրն մեր ասանկ բաներ չի պա-  
հանջեր մեզմէ :

## 2. Տէրն մեր Բրիստոս խելքերնուս դէմ բան մը չուզեր մեզմէ :

Սուրբ Գրոց մէջ շատ բան կը գտնուի՝ որ մեր խելքէն վեր է . բայց մեր խելքին դէմ բան չի գտնուիր : Սուրբ Գիրքը մեզի կը սորվեցընէ՝ թէ Աստուած յաւիտենական է , ստեղծուած չէ , սկիզբ չունի : Բայց ասիկայ մենք կը հասկնա՞նք . այնչափ մեծ խնդիր մըն է՝ որ մեր խելքին չի պառկիր , մեր խելքը անոր չի հասնիր , մեր խելքէն վեր է : Բայց մեր խելքին դէմ չէ , քանզի գիտենք որ Աստուած ասանկ ըլլալու է , այսինքն ուրիշ Ասակ մը անշուշտ ըլլալու է . և խելքերնիս պառկելով՝ կը հպատակի : Մեր խելքէն վեր է՝ բայց խելքերնուս դէմ չէ :

Իրեք անգամ իրեք՝ իննը չը՞ներ : Բսենք թէ՛ երևելի ուսուցիչ մը սորվեցնէ թէ՛ իրեք անգամ իրեք՝ տասնուեօթը կընէ , աս՝ խելքերնուս դէմ է , և չենք ընդունիր : Աս բանը՝ մեր խելքէն վեր բան չէ . քանզի շատ

աղէկ կը հասկնանք թէ իրեք անգամ իրեք քանի կընէ . բայց իրեք անգամ իրեք տասնուեօթը ըլլալը՝ մեր խելքին դէմ է , չենք կրնար ընդունիլ , գիտենք որ շիտակ ըլլալու չէ : Աւ աս բանը սորվեցնող ուսուցիչը՝ որչափ մեծ՝ երևելի՝ և պատուաւոր ըլլայ , այսուամենայնիւ անոր սորվեցուցածը չենք կրնար ընդունիլ . քանզի մեր խելքին դէմ է . գիտենք որ անկարելի է , սուտ է :

Գիտէք որ Տէրն մեր հարսնիք մը գնաց . և հոն քանի մը կարաս ջուրը գինիի փոխեց : Աս՝ հրաշք մըն էր . ի՞նչսոր եղաւ՝ չենք գիտեր . մեր խելքէն վեր է . բայց խելքերնուս դէմ չէ . քանզի գիտենք որ եղաւ . անոր գոյնը՝ գինիի գոյն եղաւ . անոր համը՝ դինիի համ եղաւ . անոր հոտը՝ գինիի հոտ եղաւ . և եթէ մէկը անկէ շատ խմէր , անոր ազդեցութիւնը և հետևութիւնը՝ դինիին հետևութիւնը պիտի ըլլար : Ուրեմն անայլ ևս ջուր չէր՝ այլ հարկաւ դինի եղաւ , թէև խելքերնուս վեր է , բայց



խելքերնուս դէմ չէ : Սակայն գի-  
ցուք թէ՛ անոր գոյնը՝ դինիի գոյն  
չեղաւ , անոր համը՝ դինիի համ չե-  
ղաւ , անոր հոտը՝ գինիի հոտ չեղաւ ,  
և անոր ազդեցութիւնը՝ գինիին ազ-  
դեցութիւնը չունէր , այլ բոլորովին  
ջուրի պէս մնալով՝ փոփոխութեան  
նշան մը չերևցաւ : Աթէ ուսուցիչ  
մը սորվեցընէ՛ թէ ասիկայ հրաշքով  
գինի եղաւ , և ալ չուր չէ , աս ու-  
սումը կ'ընդունուի<sup>օ</sup> : Քաւ լիցի .  
մարդկային մտքին հակառակ է , և  
չի կրնար ընդունուիլ . ու եթէ մէկը  
ըսէ՛ Աս կ'ընդունիմ , ան մարդը յի-  
մար է , և դատաստանին օրը Աստ-  
ուծոյ պատասխան պիտի տայ թէ՛  
ինչո՞ւ ընդունեց : Ի՞նչ վկայութիւն  
ունէր որ խելքի տէր մէկը ատանկ  
բան կ'ընդունի : Աթէ խելք ունինք՝  
գործածելու ենք . և եթէ չըգործա-  
ծենք , մեզի խելք տուող Աստուածը՝  
մեզմէ հաշիւ պիտի ուզէ :

Տէրն մեր կտրած հացին համար  
չըսա՞ւ Աս իմ մարմինս է : Այո .  
ըսաւ : Նաև ըսաւ՝ Աս եմ դուռը .

բայց դուռը կամ երկաթէ կ'ըլայ և կամ փայտէ . Տէրն մեր ո՛չ երկաթ եղաւ և ոչ փայտ . այսինքն՝ նիւթապէս գռան չըփոխուեցաւ : Տէրն մեր իր աշակերտներուն ըսաւ՝ Ասեմ հովիւը ու գուք ոչխարներ էք . ես որթ եմ՝ ու դուք ճիւղերն էք . սակայն աշակերտները ո՛չ ոչխար եղան՝ և ոչ ճիւղ : Աս խօսքերը՝ այլաբանութեամբ կը գործածուէր , այսինքն բառ առ բառ և գիր առ գիր չէր հասկցուեր : Մենք ամէն օր և ամէն րոպէ աս կերպ խօսքեր կը գործածենք : Հիմա Ղուկասէն քանի մը համար կարդանք , այսինքն՝ Ղուկ . ԻԲ . 7 : Գիտէ՞ք զատիկ ինչ ըսել է : Չատիկ բառը՝ Նբրայեցերէն է , և անցնիլ կը նշանակէ , քանզի Աստուած Նգիպտացոց անդրանիկները կորսնցընելու համար տունները մտածատենը , Իսրայէլի որդւոց տունները անցաւ : Աւ աս յիշեցընելու համար՝ Չատիկի այսինքն անցնելու տօնը եղաւ : Աս տօնին մորթուած և կերուած գառնուկներուն Չատիկ կ'ը-

սէին . քանզի աս մեծ դէպքը՝ միտքերնին կը բերէին : Չատիկը՝ այսինքն անցնիլը (Ղուկ . ԻԲ . 7) պէտք է մորթել . միթէ անցնիլը կը մորթուի՞ : Ոչ . սակայն նշանակութիւնը աս է՝ որ ան մեծ դէպքը յիշեցընող գառնուկը մորթել հարկ էր : Ղուկ . ԻԲ . 8-13 :

Անոնք բուն անցնիլը չը մորթեցին , չը պատրաստեցին և չը կերան . այլ Եզիպտոսի մէջ պատահած անցնելու դէպքը յիշեցընող գառնուկը մորթեցին , պատրաստեցին և կերան : Միայն աս էր ըրածնին՝ և ոչ ուրիշ բան մը : Ղուկ . ԻԲ . 15-17 :

Ահա՛ Տէրն մեր իր եկեղեցիին համար Տէրունական ընթրիքը սահմանած ատենը , սովորական բառեր գործածեց : Եւ ըսածի պէս եղաւ թէ՛ «Մինչև հիմա Հրէից եկեղեցիին մէջ Չատիկը՝ այսինքն աս մեծ դէպքը յիշեցընող քառնուկը կերաք . սակայն ասկէց ետքը Քրիստոնէայ եկեղեցւոյն մէջ իմ մարմինս՝ այսինքն մարմինս նշանակող հացը

պիտի ուտէք : Ես կտրուած հացը՝  
 ձեր մեղքերուն համար կտրուած և  
 ճզմուած մարմինս յիշեցընելու հա-  
 մար է , և ձեզի համար քաշած մա-  
 հուան չարչարանքներս յիշեցընելու  
 միջոց մը պիտի ըլլայ :

Տէրօջը հոս գործածած խօսքերը  
 սովորութենէ դուրս նշանակութիւն  
 չունին՝ այլ Մովսէսէն ՚ի վեր ժողո-  
 վուրդին հասկցած նշանակութիւնը  
 ունին : Աւ շրէաները այնչափ յիմար  
 չէին որ՝ գառնուկին միսը փոխուելով  
 անցնիլ կ'ըլլայ հասկնային . քանզի  
 ասանկ բան մը բնաւ չը հասկցան :  
 Բնաւ շրէայ մը չըսաւ թէ՛ իր կերա-  
 ծը՝ գառնուկին միսը չէ , այլ անցնիլ  
 է . հրաշքով անցնիլ եղաւ : Աւ դուք  
 եղբայրներս , դուք շրէաներէն աւե-  
 լի՞ յիմար էք . անոնցմէ աւելի՞ ան-  
 միտ էք . թէ որ անոնց հասկցածը  
 շիտակ էր , ինչո՞ւ մեր հասկցածը  
 շիտակ պիտի չըլլայ :

### 3. Բրիստոսը յիշելու համար ասիկայ չընողը՝ յանցաւոր է :

“Մտիկայ ըրէք զիս յիշելու համար” ըսաւ Տէրն մեր : Աչ թէ ուրիշ մտքով՝ այլ բուն աս միտքով ընելու ենք : Սակայն մէկը ասիկայ կ'ընէ՝ չէ թէ Բրիստոս յիշելու համար՝ այլ իր պատիւին կամ իր բարեկամներուն սիրոյն կամ իր կրօնքին արարողութիւնները ՚ի գործ դնելու համար : Շատ մարդիկ փրկութիւն դտնալու համար ասիկայ կ'ընեն ու Բրիստոսի չեն ապաւինիր : Ամանք ալ բնաւ չեն ըներ, ո՛չ Բրիստոս յիշելու համար, և ոչ իրենց անձին համար . անհոգութեամբ բնաւ չեն խորհիր ասոր վրայ, անփոյթ մարդիկ են . Բրիստոսի յարքը չը տեսնալով՝ անոր չեն փափաքիր, զանիկայ յիշել չեն ուզեր : Ամանք կ'ըսեն թէ՝ Մտիկայ ընելով ի՞նչ օգուտ կը շահինք . Մաչընելով ալ կրնանք Բրիստոս յիշել : Ուրեմն դուք ձեզ Բրիստոսէն իմաստուն կը սեպէք, և անոր սուրբ պա-

տուէրը և հրամանը կը մերժէք : Ոմանք կ'ըսեն՝ Ես արժանի չեմ, աշխարհասէր եմ, Սատանային ծառան եմ, եկեղեցւոյ անդամ չեմ. անանկ է նէ, ձեր վտանքը ու յանցանքը աւելի մեծ չէ՞ : Եթէ Քրիստոսի աս տեղի սեղանը դալու պատրաստ չէք, անոր երկնաւոր պալատը և սեղանը ի՞նչոր պիտի երթաք : Ուրեմն ապաշխարեցէք, մեղքը ձգեցէք. սրտերնիդ՝ սէրերնիդ Քրիստոսի տուէք. առաջին ընելիքնիդ աս է. տուներնիդ դառնալնէդ՝ ուտելնէդ՝ խմելնէդ առաջ աս բանը ընելու էք, Քրիստոսի յանձնուած մարդիկ ըլլալու էք, անորը ըլլալու էք : Ոմանք Քրիստոսի սեղանին չեն մօտենար՝ որովհետեւ հոն իրենց չը հաւնած մարդիկը կը գտնուին : Սակայն սեղանը՝ Քրիստոսինն է, և քեզ հրաւիրողը՝ Քրիստոս է, ու գուն չե՞ս երթար : Եթէ Յուզան՝ մատնիչ Յուզան հոն գտնուի, քեզի ի՞նչ. եթէ Քրիստոս ինքը հոն է, և քեզ հրաւիրեց, դուն չե՞ս երթար : Եթէ

Վրիստոսի չը հրաւիրածները հոն գտնուին, քեզի ի՞նչ. յանցանքը անոնցն է և ոչ թէ քուկդ, եթէ Վրիստոս ինքը հոն գտնուի, դուն չէ՞ս երթար. անոր հետ առնչութիւն չէ՞ս ըներ. գուն անկէ սու՞րբ ես. և զանիկայ՝ իր ուզած կերպովը չէ՞ս յիշեր: Ես ի՞նչ յիմարութիւն է, ի՞նչ յանցանք է:

Սիրելիներս, Վրիստոսի ձեզմէ ուզածը՝ պզտիկ բան մըն է. չուզեր որ՝ զինքը յիշելու համար Եստուծոյ բարկութեան գաւաթը խումէք, ինչպէս որ ինքը խմեց. այլ կ'ուզէ որ՝ փրկութեան և ուրախութեան դաւաթը առնելով՝ գոհութեամբ խմէք. և աս չէ՞ք ըներ: Ենչուզեր որ զինքը յիշելու համար խաչին վրայ գամուիք և ժամու մը չափ չարչարուիք. այլ կ'ուզէ որ զինքը յիշելու համար քիչ մը հաց ուտէք և գաւաթէն խմէք. ամէն օր հաց կ'ուտէք. և իր սիրոյն համար պատառ մը չէ՞ք ուտեր:

Եսկէց հեռու երկրի մը մէջ գե-

րեզմաննոց մը կայ . և հոն գերեզմանի քար մը կայ՝ որուն վրայ գրուած է՝ «Օհս պիտի մոռնա՞ս» : Ընուն չկայ՝ թուական չկայ , ասանկ բան մը բնաւ գրուած չէ . միայն աս իրեք բառը դրուած է՝ Օհս պիտի մոռնա՞ս : ()տարական մը եթէ աս կարդայ , կարելի է պիտի զարմանայ , բայց բան մը չի հասկնար , բան մը չի յիշեր , չի կրնար յիշել : Սակայն բարեկամ մը՝ ազդական մը՝ հայր՝ մայր՝ եղբայր՝ քոյր՝ որդի մը եթէ կարդայ , անմիջապէս մեռնողը կը յիշեն . անոր անունը՝ տարիքը՝ բարքն ու վարքը կը յիշեն . անոր ըրածը և խօսածը՝ անոր սէրն ու յարգը՝ և անոր բոլոր շահեցող ձևերը և խօսքերը միտքերնին կը բերեն . և նստեցելով կը խորհին ու կուլան անոր վրայ , անոր կարօտութիւնը կը քաշեն . և կ'ըսեն՝ Քեզ պիտի մոռնա՞նք . ո՛չ սիրելիս , քեզ չենք կրնար մոռնալ՝ յաւիտեան չենք կրնար մոռնալ :

Ընանկ ալ աս հացին՝ աս գաւաթին վրայ գրուած է՝ Օհս կը մոռ-



Նա՛ս : Մէկ օտարական մը անցնի , կը զարմանայ , բայց բամբ մը չի հասկընար , բան մը չի յիշեր : Սակայն հաւատացեալ Քրիստոնեայ մը անիկայ տեսածին պէս , ամէն բան կը հասկընայ . անուն չկայ՝ թուական չկայ՝ խօսք չկայ , բայց անոր անունը՝ անոր վարքը՝ անոր սէրը՝ մահը՝ մեզի համար բոլոր քաշածը՝ ամէն բան կը յիշէ :

Տէրն մեր Քրիստոս իր եկեղեցւոյն աս կանոնը տուաւ՝ ո՛չ թէ իր օգուտին համար , այլ անոր օգուտին համար : Հրեշտակները Քրիստոս չեն մոռնար . երկնից սուրբերն ալ զանիկայ չեն մոռնար . անոնց համար ասանկ բան մը բնաւ պէտք չէ . սակայն աշխարհիս վրայի Քրիստոնեաները՝ միշտ զանիկայ մոռնալու հակամիտեալ են . և զանիկայ մոռնալ՝ մեզի մահ է , և զանիկայ յիշելը՝ հոգինուս կեանք է : Ուրեմն Տէրն մեր Քրիստոս մեր օգուտին համար դրաւ աս կանոնը :

Ո՛վ Քրիստոսը մոռցո՞ւներ՝ ո՛վ

Քրիստոսը չյիշողներ , ո՛վ Քրիստոսի սեղանին մաքուր սրտով չըմտեցողներ , ձեր վիճակը ի՛նչ ահարկու է : Եթէ Քրիստոս ձեզ մոռնայ , եթէ Քրիստոս ձեզ չյիշէ , վա՛յ ձեզի : Ենոր սեղանէն կամաւ հեռու կենալ՝ անկէ հեռու մնալ է . և անկէ հեռու մնացողները՝ բոլորը պիտի կորսուին : Սիրելիներս , հիմա հրաւէր ունիք , վերջը չըլար . հիմա հրաման ունիք , վերջը արդիլուած է : Երանի՛ անոր հրաւէրը ընդունելով՝ զանիկայ յիշողներուն , անոր ուղածին պէս ղենքը յիշողներուն : Ո՛վ գուք՝ որ անձերնուդ համար ամէն օր հաց կ'ուտէք , երբեմն Քրիստոսի համար ինչո՞ւ չէք ուտեր , եթէ ասանկ առանց Քրիստոսի ապրիք , առանց Քրիստոսի պիտի մեռնիք . յաւիտեանս յաւիտենից առանց Քրիստոսի պիտի մնաք , ձեր բաժինը Քրիստոսը մոռցողներուն հետ պիտի ըլլայ :

## ԹՈՎՄԱՆՍԻՆ ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆԸ :

“ Խայց թողման տասուերկուքէն մէկը՝ Երկուորեակ ըսուածը անոնց հետը չէր՝ երբոր Յիսուս եկաւ ” : Յովհ . Ի . 24 .

Յիսուս՝ մեղաւորաց ձեռքը մատնուելով՝ անոնք զինքը խաչը հանեցին : Տէրն մեր սպանուեցաւ , և մարմինը խաչէն վար առնուելով թաղուեցաւ . անոր աշակերտները վախցան , փախան , ցիրուցան եղան : Անոնք կը յուսային թէ Յիսուս՝ ան գալու թագաւորը՝ ան Խարայէլը ազատող Լաւին էր , սակայն հիմա կասկածի մէջ իյնալով՝ բոլոր յոյսերնին կտրեցին . բոլոր յոյսերնին Քրիստոսի գերեզմանին մէջ թաղեցին . և ինչ ընելնին ու ինչ խորհելնին չէին գիտեր . բայց երբորդ օրը արշալոյսին զարմանալի բաներ լսեցին : Ոմանք՝ Քրիստոսի մարմինը գերեզմանը չէ ըսին : Ո-

մանք՝ թէ մենք գերեզմանը գացինք ,  
 և կտանները աեսանք , բայց անոր  
 մարմինը . չը գտանք : Ոմանք ըսին  
 թէ հրեշտակներ տեսանք , որ ըսին  
 թէ անիկայ յարութիւն առաւ : Եւ  
 ոմանք ըսին՝ անոր երեսը տեսանք ,  
 անոր բարևը առինք , անոր մեզի  
 խօսած խօսքերը լսեցինք , և անոր  
 ոտքերուն փաթտուեցանք . բոլորը  
 ապշեցան մնացին . յուսոյ՝ վախի՝ և  
 կասկածներու մէջ կը տարուբերէին .  
 սակայն անոնց ուշադրութիւնը ար-  
 թնցրնելով՝ բոլորովին գրաւեց , սրը-  
 տերնին դող ելաւ , ու խելքերնին  
 մտքերնին տակնուվրայ եղաւ . արդ՝  
 ան իրիկուն բոլորը մէկտեղ եկան՝  
 որ աս զարմանալի բաները քննեն ,  
 մէկզմէկու հետ խօսին , մէկզմէկ  
 յորդորեն ու մխիթարեն , միաբա-  
 նութեամբ աղօթեն , աչքերնին Ես-  
 տուծոյ վերցրնեն , և Խոնարհ վի-  
 ճակնուս մէջ մեզ յիշէ , քանզի քու  
 ողորմութիւնդ յաւիտենական է ը-  
 սելով վիճակնին անոր իմացրնեն :  
 Հրէից վախէն՝ ժողովուած տեղեր-

նին դռները գոցուած էին . և քանի որ անոնք ան օրուան դէպքը՝ այսինքն տեսածնին և լսածնին կը խօսէին , և իրարու հետ կը բաղդատէին , յանկարծ անոնց մէջտեղը Քրիստոս ինքը կայնեցաւ , և անոնց ըսաւ՝ « Ողջոյն ձեզի » : Բայց Թովմաս անոնց հետը չէր . ինչո՞ւ հոն չդտնուեցաւ . պատճառը ի՞նչ էր :

Սակայն ասկէց առաջ ուրիշ հարցում մը կայ թէ՛ Ինչո՞ւ առաքեալները ասանկ անյոյս վեճակի մէջ էին : Եռաջին հարցումնիս աս թող ըլլայ . այսինքն՝

1 . Եռաքեալները Քրիստոսի յարութիւն առնելը ինչո՞ւ չէին գիտեր :

Տէրն մեր իր աշակերտներուն շատ յայտնի և կատարելապէս իմացուց թէ՛ ինքը անգթութեամբ պիտի մեռնի , և երրորդ օրը յարութիւն պիտի առնէ : Արկին և կրկին ըսաւ անոնց թէ՛ ինքը Նրուսաղէմ պիտի երթայ , և ծերերէն ու քահանայա-

պետներէն և դպիրներէն շատ բաներ քաշելով՝ պիտի մեռնի, և երրորդ օրը յարութիւն պիտի առնէ. և երրորդ վերջին անգամ Նրուսաղէմ կերթար՝ կը կարդանք թէ՛ ճամբան կրկին տասուերկուքը քովը կանչեց, և իրեն պատահելիք բաները՝ մէկիկ մէկիկ խօսեցաւ անոնց : “Ե՛հա՛ Նրուսաղէմ կելլենք” ըսաւ “և Որդին մարդոյ պիտի մատնուի քահանայապետներուն ու դպիրներուն, և զանիկայ մահուան պիտի դատապարտեն, ու զանիկայ հեթանոսներուն՝ պիտի մատնեն. Եւ զանիկայ ծաղը պիտի ընեն ու ծեծեն, և անոր վրայ պիտի թքնեն, ու զանիկայ մեռցընեն. ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ” : Մարկ. Ժ. 33, 34 :

Ես ստորագրութիւնը խիստ բաց ու յայտնի էր : Տէրն մեր իր ինչպէս մեռնիլը ճշդութեամբ պատմեց : Յուցուց թէ աս անգութ մահը ոչ թէ բիրտ Գալիլիացուց մէկը՝ այլ սուրբ Նրուսաղէմ քաղաքին մէջ

պիտի կրէ : Եւ աս բաները տգէտ մարդոց ձեռքէն չպիտի քաշէ՝ այլ խիստ իմաստուն սեպուածներուն ձեռքէն . չարերէն անօրէններէն և կռապաշտներէն չէ՝ այլ ազգին ամենայլաւ սեպուած մարդիկներէն՝ օրէնքը մեկնողներէն՝ տաճարին ծառայութեանը մէջ Նստուածային անուամբ առաջնորդ ընտրուողներէն՝ և ժողովարաններու մէջ քարոզ և խրատ տուողներուն ձեռքէն պիտի քաշէր : Բոլոր աս բաները ինչ օր պիտի կրէր՝ ան ժամանակը չըսաւ . բայց շաբաթ մը վերջը Երուսաղէմ հասնելնուն՝ օրն ալ անոնց ըսաւ : “Ըսաւ իր աշակերտներուն . գիտէք որ երկու օրէն ետև զատիկ կ'ըլլայ , և Արդին մարդոյ կը մատնուի խաչը ելելու” : Մատ . Ի.Օ . 2 :

Աւրեմն աշակերտները ինչո՞ւ չըզիտցան թէ Բրիստոս պիտի մեռնէր և յարութիւն պիտի առնէր : Պատճառն աս է որ՝ անոնք Բրիստոսի աշակերտ ըլլալնէն առաջ շատ բաներ փարիսեցիներէն սորված էին՝

որոնք հիմա ձգելու և բոլորովին մոռնալու էին . աս շատ դժուար բան էր : Իրենց տղայութեան օրերը Աստուծոյ խօսքը՝ և ծերերուն աւանդութիւնները մէկտեղ ընդունած էին . և հիմա որոշել՝ ու մէկը մէկալէն զատել՝ շատ դժուար գործ մըն էր : Դպիրներէն ու փարիսեցիներէն սորված էին թէ՛ Մեսիան աշխարհակալ թագաւոր մը պիտի ըլլայ , և անոր կարողութիւնը՝ տէրութիւնը ու փառքը անհուն ու յաւիտենական պիտի ըլլայ : Բայց անոր քաւութիւն ընող քահանայ մը ըլլալը՝ և մեր մեղքերուն համար ծեծուիլը սորված չէին : Ուստի Քրիստոսի վրայով անոնց գաղափարը բոլորովին ուղիղ չէր : Անոր համար Քրիստոսի ստորադրածը՝ անոնց գաղափարներուն այնչափ դէմ էր՝ որ անկարելի բան սեպեցին : Եւ Քրիստոսի ըսածը բնաւ չըհասկցան . հաւանական է որ կարծեցին թէ առականերով կը խօսեր :

Սիրելիներս՝ կրօնքի վրայով ան-



շուշտ գաղափարներ ունինք որ Սուրբ  
 գրքէն առած չենք . հոն բնաւ չգտ-  
 նուիր . ուրիշներէն սորվեցանք . բայց  
 բոլորը մերժելու ենք , քանզի մեզի  
 որոգայթ կ'ըլան , մեզի արգելք կ'ըլ-  
 լան , մեզ ճամբայէն դուրս կը հա-  
 նեն . մեղ խաւարի մէջ կը ձգեն :  
 Աստուծոյ խօսքը աղէկ մը գիտնա-  
 լու ենք , որպէսզի փորձութեան և  
 նեղութեան ժամանակ անոր ճշմար-  
 տութիւնները մտքերնիս բերելով՝  
 մխիթարուինք : Ահա՛ տեսանք որ  
 Քրիստոսի աշակերտները ասանկ  
 չընեն ինչո՞ւն համար՝ յուսահատութեան  
 մէջ ինկան : Ալ դուք եղբայրներս ,  
 եթէ աս վիճակին մէջ դռնուիք ,  
 գիտցած ըլլաք՝ որ Աստուծոյ խօսքը  
 մոռցած էք , կամ բնաւ սորված չէք :  
 Հալածանքի՝ նեղութեան՝ կամ վիշ-  
 տերու ժամանակ , ինչո՞ւ Քրիստոսի  
 խօսքերը չյիշենք : Ան մեզի առա-  
 ջուց ըսաւ թէ՛ մեծ նեղութիւններ  
 պիտի դան , և հալածանք պիտի ըլ-  
 լայ . սակայն մեզի իմացուց նաև՝ թէ  
 ինքը յաղթող պիտի ըլլայ , և թա-

գաւորութիւնը պիտի հաստատէ :  
 Ուրեմն ինչո՞ւ երբեմն յուսահատե-  
 լով կրսենք , Թշնամիներ շատ են , և  
 Վրիստոս հոս չէ . ան մեռաւ , Թա-  
 ղուեցաւ , և իր գործը յառաջ չեր-  
 թար : Վրիստոսի խօսքերը աս կեր-  
 պով մոռնալը՝ մեծ մեղք է : Սուրբ  
 գրքին մէջ կը կարդանք թէ՛ Մատու-  
 ած կը ծեծէ ամէն որդին՝ որ կրն-  
 դունի : Սակայն ծեծուած ժամա-  
 նակնիս , շատ անգամ կը մարինք ,  
 խաւարի՛ և յուսահատութեան մէջ  
 կը մնանք : Եթէ Թովմաս ու իր ա-  
 շակերտակիցները յանցաւոր էին ,  
 ո՞րչափ աւելի մենք յանցաւոր ենք ,  
 քանզի անոնց օրինակը մեր առջևը  
 ունինք :

Սակայն դառնանք Թովմասին :  
 Երբոր Տէրն մեր Վրիստոս իր աշա-  
 կերտներուն երևցաւ , կը կարդանք  
 թէ Թովմաս անոնց հետը չէր . ի՞ն-  
 չու համար . պատճառը ի՞նչ էր :  
 Աս երկրորդ հարցումնիս է :

## 2. Թոովմաս ու՞ր էր :

Միւս աշակերտները մէկտեղ եկան որ՝ միաբանութեամբ աղօթք ընեն և մէկդմէկ յորդորեն ու խրատեն : Ինչո՞ւ Թոովմաս չգնաց . արդեօք պա՞ղ առած էր . դը՞ռվար կըրցաւէր . արդեօք փողոցները ցեխօտ էին . շատ գո՞րծ ունէր՝ որն որ չէր կրնար ձգել . կամ թէ շատ յոգնա՞ծ էր որ յարմար երևցաւ իրեն տունը մնալ . կարելի է կը վախնար որ՝ դուրս ելլայ նէ , սրիկաները զինքը կը քարկոծեն . կարելի է կը վախնար որ՝ ժողովքը պաղ ու անօգուտ կ'ըլլայ . նաև եղբայրներէն ոմանց աղօթքները երկայն ըլլալով զինքը կը ձանձրացընէին . կարելի է կը վախնար թէ եղբայրները իրեն ըսեն՝ Թոովմաս եղբայր՝ դուն աղօթէ , և իր սիրտը պաղ ու սառած ըլլալով՝ երթալ չուզեց : Արելի է ինքնիրեն ըսաւ թէ՛ Ինչո՞ւ երթամ . ի՞նչ օգուտ կ'ըլլայ . Քրիստոս հոն չէ . անմխիթար կերթանք , և անմխիթար կը գառնանք .

եղբայրներուն մէջ բնաւ միաբանութիւն չկայ . ամէն մէկը կ'ուղէ առաջին ըլլալ . ամէն մէկը ուրիշ միտք ունի : Պետրոս Քրիստոսը ուրացաւ , ու անիծեց . Յուդան զանիկայ ստակով ծախեց ու ինքզինքը խեղդեց . աս Քրիստոնէութիւնը ի՞նչ խայտառակ բան է . ես ա՛լ չեմ երթար . տունը կենալով Սուրբ Գիրք կարգամ՝ ինծի համար աւելի աղէկ է : Բայց Քրիստոս թովմասին չերեցաւ , անոր աշակերտակիցներուն երեցաւ . անոր տունը չերթալով՝ անոնց ժողովքին գնաց . ինքզինքը անոնց յայտնեց , անոնց վրայ փչեց ու ըսաւ անոնց . Եռէ՛ք Սուրբ Հոգին . Սակայն խեղճ թովմասը հոն չէր , և շաբաթ մըն ալ խաւարի և յուսահատութեան մէջ մնաց . միւս աշակերտները ուրախութեամբ լեցուած էին , փառք ու գոհութիւն տուին ու երգեցին : Բայց թովմաս մեծ տրտմութեան՝ խորին անհաւատութեան և խաւարի մէջ մնաց : Ըն՝ ո՛հ ըսելով կուլար , ազօթք ընելու ալ

աշխատեցաւ . բայց աղօթքի ժողովքի չերթալով՝ Քրիստոս իրեն չեկաւ : Թոլմաս ան իրիկուն եկեղեցի չերթալուն համար՝ շատ բան կորսնցուց . այնչափ շատ բան կորսնցուց՝ որ բոլոր աշխարհքն ալ չէր կրնար փոխարէնը տալ : Եւ չերթալուն պատճառը ի՛նչ ալ որ ըլլայ , ան խիստ շատ վնաս քաշեց :

Սիրելիներս , եկեղեցիի մը հովիւը՝ ամէն կիրակի օր ժողովքի դացած ժամանակը , բոլորտիքը կրնայի որ գիտնայ թէ՛ արդեօք ամէնը եկած են . և միշտ կը տեսնայ որ՝ աս կամ ան եղբայրը կամ քոյրը հոն չէ : Ար տեսնայ որ Թոլմաս եկած չէ : Չի գիտեր թէ՛ ինչո՞ւ չեկաւ . կարելի է հիւանդ է . կարելի է աղէկ պատճառ ունի . սակայն եթէ միւսներուն սիրտը հոն մխիթարութիւն գտնայ , Թոլմաս հոն չէ՛ որ բաժանորդ ըլլայ : Եթէ Քրիստոս իր Հոգին առատապէս թափէ միւսներուն վրայ՝ Թոլմաս հոն չէ որ բաժանորդ ըլլայ : Եթէ միւսներուն հոգին զօ-

րութեամբ՝ հաւատքով և ուրախու-  
թեամբ լեցուի, անոր հոգին տկար՝  
խեղճ և մարած պիտի մնայ. եթէ  
Վրիստոս միւսներուն գալով՝ Աղջոյն  
ձեզի՝ ըսէ, և անոնց իր վեհափառու-  
թիւնը յայտնէ, թովմաս հոն չէ,  
որ տեսնալով ուրախանայ :

Խեղճ թովմաս ու՞ր է : Աղբայր-  
ներս՝ թովմաս ուր որ պահուեցաւ  
նէ, զանիկայ փնտռեցէք. անոր՝ շատ  
բարև ըրէք, և իմացուցէք անոր  
թէ՝ Վրիստոս յարեաւ. անոր ըսէք՝  
“Արգապետը եկաւ և քեզ կրկան-  
չէ”. զանիկայ ժողովատեղին բերէք՝  
որ ան ալ մխիթարուի. և իր ուրա-  
խութիւնն ալ լեցուն ըլլայ :

Արյուսանք թէ ամէն կիրակի օր  
թովմաս ժողովատեղին պիտի գրտ-  
նուի. և Վրիստոս ինքն ալ պիտի  
գտնուի. որ ամենուդ խաղաղութիւն  
և օրհնութիւններ տայ :

## ՄԱՍՈՒՆԾԻ ՀՈԳԻ Է :

“Մատուած հոգի է” : Յովհ . 7 . 24 :

Արպատմուի թէ՛ կուսպաշտ թագաւոր մը՝ խիստ հռչակաւոր փիլիսոփայի մը հարցուցեր է , Մատուած ի՞նչ է : Փիլիսոփան ուղեց որ՝ թագաւորը օր մը ժամանակ տայ որպէս զի խորհելով՝ կարողանայ աղէկ պատասխան մը տալ : Արբ իրեն տրուած մէկ օրը անցաւ՝ թագաւորէն երկու օր ուղեց , և երկու օրը անցնելուն՝ եկաւ թագաւորէն չորս օր ալ ուղեց : Թագաւորը զարմանալով՝ պատճառը հարցուց : Փիլիսոփան պատասխանեց թէ՛ Մ,ս խիստ զարմանալի նիւթ մըն է , մեծ գաղտնիք մըն է . որչափ որ քննեմ զՄ,ստուած , այնչափ աւելի անիմանալի՝ անճառելի և խելքէ վեր լակ մը կ'երևնայ :

Սուրբ Գիւրքը կ'ըսէ՝ “Մէկը երբէք զՄ,ստուած տեսած չէ , բայց միածին

Որդին՝ որ Հօրը ծոցն է, անիկայ պատմեց՝ : Յովհ : Ա . 18 : Խիստ իմաստուն փիլիսոփաներուն չըգիտցած Աստուածը՝ Բեթլէհէմի մէջ ծնած տղան պատմեց . այսինքն թէ՛ Աստուած հօգի է, Աստուած «էք է, և Աստուած լոյս է : Ամէն մէկ խօսքը՝ իրեք բառէ բաղկացեալ է :

Բնաբանին մէջ Տէրն մեր կ'ըսէ՛ Աստուած հօգի է : Աս ի՞նչ ըսել է :

### 1 . Հոգին աննիւթ է :

Աստուած մարմին չունի : Մարմինը՝ ամէն անգամ միայն մէկ տեղ մը կը գտնուի . սակայն Աստուած ամէն ատեն և ամէն տեղ ներկայ է : Ամէն մարմին ունեցող էակները՝ զանազան մասունքներէ բաղկացեալ են որ մէկգմէկէ կրնան զատուիլ, կրնան աւելնալ կամ պակսիլ, կրնան մեծնալ կամ պզտիկնալ : Եւ մէկ անգամը միւս անգամին եղած տեղը չկրնար ըլլալ : Ուրեմն մարմինը՝ անհուն չկրնար ըլլալ . ձև ունենալով՝ սահման ալ ունենալու է անշուշտ .



և ասանկով ամէն ատեն և ամէն տեղ  
չկրնար ըլլալ :

Սակայն ամենամեծն Աստուած՝  
ամէն ասանկ պակասութիւններէ և  
անկատարութենէ ազատ է, հեռու  
է, մաքուր է: Աստուած անփոփոխ՝  
անհուն՝ ժամանակէ չըմաշող՝ յա-  
ւիտենական Ապկ մըն է: Անիկայ  
մարմին՝ նիւթ չունի. մարմնոյ ան-  
դամներ՝ ձեռք՝ ոտք՝ աչք՝ բնաւ չու-  
նի: Անմարմին աննիւթ՝ անմաշ-  
խեղդուելէ հեռու եղող՝ աւրուելէ ա-  
զատ Ապկ մըն է: Տէրն մեր իր աշա-  
կերտներուն ըսաւ թէ՛ Յնժի նայե-  
ցէք, շօշափեցէք զիս ուտեսէք քան-  
զի հոգին մարմին ու ոսկորներ չու-  
նենար, ինչպէս որ կըտեսնաք թէ  
ես ունիմ:

Սակայն Սուրբ Գրոց մէջ գրուած  
է՞, “Տէրոջը աչքերը ամէն տեղ են”:  
Եռակ . Ժ . Ե . 3 : Գրուած է՞ թէ՛  
“Տէրը իր սուրբ բազուկը մերկացուց  
բոլոր ազգաց աչքերուն առջևը”:  
Ես . ԾԻ . 10 : Գրուած է՞ թէ՛ Աս-  
տուած իր ժողովուրդը Եգիպտոսի

երկրէն “ զօրաւոր ձեռքով ու բարձր  
բազուկով հանեց ” : Բ. Օրին. Ե. 15 :

Ե. յո՛. ասանկ խօսքեր Սուրբ Գիր-  
քին մէջ ամէն տեղ կը գտնուին . բայց  
մենք զանոնք բուն բառին նշանա-  
կութեամբը հասկնալու չենք . այլ  
բոլորը այլաբանութեամբ հասկնալու  
ենք : Օրինակի աղագաւ . Եստուծոյ  
ձեռքը կամ բազուկը ըսելով՝ անոր  
զօրութիւնը՝ անոր կարողութիւն-  
ները կը հասկցուի : Եստուծոյ աչքը  
ըսելով՝ անոր ամենուրեքութիւնը և  
անհուն գիտութիւնը ու իմաստու-  
թիւնը կը յայտնէ : Եստուծոյ երե-  
սը՝ երբեմն անոր բարկութիւնը կը  
յայտնէ , ինչպէս որ Սաղմոսին մէջ  
կը կարդանք ( ԼԴ . 16 ) “ Տէրոջը երե-  
սը չարագործներուն դէմ է ” : Եւ  
երբեմն անոր անհուն սէրը կը ցու-  
ցնէ , ինտոր որ Դաւիթ կ'ըսէ ( Սաղ .  
ԼԵ . 16 ) “ Բու ծառայիդ վրայ երեսդ  
փայլեցուր ” : Տէրոջը ականջը՝ անոր  
մեր աղօթքը լսելու միշտ պատրաստ  
ըլլալը կը յայտնէ : Դաւիթ ըսաւ ,  
“ Ո՛վ Եստուած ականջ դի՛ր իմ ա-

ղօթփիս” : Սաղ. ԾԵ. 1 : Նաև Բսաւ , “ Իմ աղաղակս անոր ականջը հասաւ” : Սաղ. ԺԲ. 6 : Նաև . “ Տէրոջը աչքերը արդարներուն վրայ են , ու անոր ականջները անոնց ազագակին” : Սաղ. ԼԴ. 15 :

Եստուած իր մեծ ողորմութեամբ ասանկ խօսքեր գործածեց՝ որ ինքզինքը մեզի յայտնէ : Եսանկ խօսքեր միայն մեր տկարութեանը համար գործածեց : Եստուած խոնարհեցաւ մինչև մեր տգիտութիւններուն , և խեղճ լեզունիս գործածեց՝ որ գոնէ քիչ մը հասկնանք և բոլորովին անուսում ու տգէտ չըմնանք :

Սակայն մենք Եստուծոյ աս զարմանալի խոնարհութիւնը գէշի չըգործածենք . այսինքն չըխորհինք թէ՛ ամենամեծն Եստուած մարդու պէս է . քանզի աս գաղափարը՝ զԵստուած նուաստացընող՝ պակսեցընող՝ պզտիկցնող և խիստ խոնարհեցնող գաղափար մըն է : Հազար անգամ փառք՝ որ Եստուած ինքզինքը մեզի յայտնելու համար՝ մինչև

մեզի խոնարհեցաւ , և խեղճ լեզու-  
նիս գործածեց : Բայց բնաւ կարծե-  
լու չենք որ Աստուծոյ բուն բնու-  
թիւնը ասանկ պզտիկ ու անկարող  
է : Ասայի մարգարէն կ'ըսէ “ Դուք  
Աստուածը որո՞ւ կը նմանցընէք , ու  
զանիկայ ի՞նչ նմանութեան հետ կը-  
հաւասարցընէք ” : Ասայ . Խ . 18 :  
“ Կարծեցիր թէ՛ ես բոլորովին քեզի  
կը նմանիմ . բայց քեզ պիտի յան-  
դիմանեմ ” կ'ըսէ Աստուած : Սաղ .  
Ծ . 21 : Եւ Պօղոս Առաքեալ Աթե-  
նացւոց ըսաւ թէ՛ “ Պէտք չէ որ ա-  
նանկ սեպենք թէ Աստուածութիւ-  
նը նման ըլլայ ոսկիի կամ արծաթի  
կամ քարի , որ մարդուս վարպետու-  
թիւնովը ու խելքովը քանդակուած  
է ” : Գործ . Ժ . 12 . 29 :

## 2 . Հոգին աներևոյթ է :

Աստուած հոգի ըլլալով՝ մարմի-  
նին աչքը զանիկայ չտեսնար : Գոյն  
չունի որ աչքը տեսնայ : Հասակ՝ ձև՝  
երկայնութիւն՝ լայնութիւն՝ մեծու-  
թիւն՝ խորութիւն չունի որ մէկը

աչքով տեսնայ, կամ ձեռքով շօշափէ: Արևը՝ աստղերը՝ ամպերը՝ ծառերը՝ հողը՝ ծովը՝ կենդանիները՝ բոլոր ասանկ բաները կը տեսնուին: Ամէն նիւթ՝ ձև՝ գոյն ունեցող բաները կը տեսնուին. բայց նիւթ՝ ձև՝ գոյն չունեցող բաներէն մէկը չենք կրնար տեսնել:

Օդը և հովը չենք կրնար տեսնել: Արնանք կշռել, զանազան կերպերով կրնանք գործածել. անոր ազդեցութիւնը տեսած ենք, և ամէն օր կը տեսնենք. զանիկայ ձեռքով կզգանք. ան միշտ մեր բոլորտիքն է, և առանց անոր շունչ չենք կրնար առնել, բայց զանիկայ տեսած չենք և չենք կրնար տեսնել: Այսուամենայնիւ օդը հոգի չէ:

Սակայն Աստուած հոգի է. և հոգի ըլլալով՝ աներևոյթ էակ մըն է: Անոր գործերը տեսած ենք, և ամէն օր կը տեսնենք: Աստուած միշտ օգին պէս մեր բոլորտիքն է. և անով կապրինք և կը շարժինք ու կանք: Անոր ներկայութենէն ուր փախչինք.

փախչելը կարելի բան չէ : Չանիկայ տեսած չենք , և չենք կրնար տեսնել : Եւետարանը կ'ըսէ՝ « Մէկը երբէք զՆստուած տեսած չէ » : Յովհ. Ե. 18 :

Սուրբ Գրքին մէջ գրուած չէ՞ թէ Ենովք՝ նաև Նոյ Նստուծոյ հետ քալեցին . և Նստուած Եբրահիմին երևցաւ . և Նստուած Մովսէսին հետ երես առ երես խօսեցաւ . արդ՝ աս խօսքերը ի՞նչ կրնշանակեն : Յայտնի է որ՝ աս զգուցվածքները բառ առ բառ հասկնալու չենք : Եստուած զանազան կերպերով երևցաւ մարդոց . սակայն աս գործածուած միջոցները Նստուած ինքը չէր , այլ միայն նշան մըն էր՝ թէ Նստուած հոն է . որպէսզի ան նշանը տեսնողը՝ իր աչքերը բանայ , միտքն ու հոգին արթնցնէ , և զգուշութեամբ մտադրութիւն ընէ : Նստուած երբեմն ամպերով եկաւ , երբեմն սոսկալի փոթորիկով , կամ ահարկու որոտմունքով . բայց ան ամպը կամ փոթորիկը Նստուած չէր՝ այլ անոր ներկայու-

Թեանը նշանակն էր : Աստուած Մովսէսին երեցաւ մորենիին կրակովը . բայց աս կրակը՝ աս բոցը՝ Աստուած չէր , այլ նշան մըն էր որ Աստուած Մովսէսին մտադրութիւնը կ'ուզէ :

Աստուած Աբրահամին մարդու կերպարանքով երեցաւ , և Աբրահամ զանիկայ չճանչնալով՝ անոր կոչունք ըրաւ . բայց աս մարդու կերպարանքը՝ Աստուած չէր : Ինչպէս որ ան ամպը՝ կրակը՝ փոթորիկը՝ որոտմունքը Աստուած չէր՝ անանկ ալ աս մարդու կերպարանքը Աստուած չէր : Սակայն Աստուած աս միջոցը գործածեց՝ որ Աբրահամ չըվախնայ , այլ իր հետը հիւրի մը՝ կամ բարեկամի մը պէս խօսի , և համարձակ տեսնուի :

Մովսէս Աստուծոյ հետ երես առ երես՝ այսինքն շատ համարձակ խօսեցաւ : Աստուած անոր ամպի սիւնով և կրակի սիւնով երեցաւ . և շատ հաւանական է որ՝ երբեմն Մովսէս ընաւ բան մը չտեսաւ . կարելի է

անոր աչքերը գոց էին : Բայց անոր սիրտը՝ անոր միտքը արթուն ըլլալով՝ Աստուծոյ հետ էր : Աստուած միշտ անոր աջ կողմն էր . և Մովսէս դացած ատենը՝ նստած ատենը՝ ելած ատենը Աստուծոյ հետ էր . անոր ներկայ ըլլալը կ'զգար . անոր հետ ներկայ եղող բարեկամի մը պէս խօսեցաւ . և անոր խօսքերը և պատուէրները լսելով՝ հնազանդելու միշտ պատրաստ էր :

Մովսէս Իսրայէլի որդիներուն ըսաւ՝ (Բ . Օրին . Ե . 4) “Տէրը լեռանը վրայ կրակի<sup>օ</sup>ն մէջէն ձեզի հետ դէմ խօսեցաւ” : Նաև ըսաւ՝ (Բ . Օրին . Դ . 12, 15) “Դուք անոր խօսքերուն ձայնը լսեցիք , ու նմանութիւն մը չտեսաք , բայց միայն ձայն լսեցիք” : “Ուրեմն ձեր հոգիներուն աղէկ զգուշութիւն ըրէք . որովհետև ան օրը որ Տէրը Քորեբ լեռը կրակին մէջէն ձեզի խօսեցաւ , բնաւ նմանութիւն մը չտեսաք” :

Ուրեմն չմոռնանք՝ թէ Աստուած ինքնին հոգի է , անհուն՝ աներևոյթ՝



և անմերձենալի հոգի է . և զանիկայ  
 “Մէկը երբէք տեսած չէ” : Մարդս  
 միսէ՛ արիւնէ՛ և ոսկորներէ նիւթեր  
 ունի . բայց Աստուած մեզի պէս չէ :  
 Աստուած հոգի է . ու թէև ամէն  
 տեղ ներկայ է , բայց մենք զանիկայ  
 չենք տեսներ :

Երդ՝ մեր սորվածներէն քանի մը  
 հետևութիւն հանենք :

1 . Աստուած հոգի ըլլալով բոլոր  
 մարմնոց հոգիներուն Աստու-  
 ած է :

Պօղոս Առաքեալ զանիկայ հոգի-  
 ներուն հայրը կրկնչէ : Աստուած  
 չէ թէ միայն մեր մարմիններուն  
 ստեղծողն է՝ այլ մեր հոգիներուն  
 հայրն ալ է : Հոգին՝ մարմինէն չե-  
 գոյանար , բայց մարմինը՝ հոգիին  
 միջոցովը կը գոյանայ : Աստուած  
 հոգի է , և մեր հոգիները անկէ են :  
 Մեր հոգիները գիտցող՝ և անոնց  
 վրայ իշխողը Աստուած է : Սակայն  
 եթէ Աստուած հոգի չըլլայ , մեր  
 հոգիներուն չխառնուիր , հրաման

չկրնար ընել, չկրնար քննել, և մեզմէ մեր սիրտը չկրնար պահանջել : Դատաւորը կրնայ մեր մարմինները զսպել բայց հոգինիս կրնա՞յ զսպել, ոչ, չկրնար : Միայն Աստուած կրնայ իշխել մեր հոգիներուն վրայ :

Քու հոգւոյդ մարդ թող չը խառնուի, եղբայր. իրաւունք չունի խառնուելու . քու հոգիդ իրենը չէ . և իրենը չկրնար ըլլալ . և չկրնար գիտնալ : Բայց Աստուած իրաւունք ունի խառնուելու . քու հոգիդ անորն է եղբայր, անոր ձեռքն է, և ան կատարելապէս գիտէ զանիկայ :

2. Աստուած հոգի ըլլալուն համար՝ մենք հոգիին վերաբերեալ բաները խորհելու ենք :

Սերելի զաւակներու պէս Աստուծոյ նմանելու ենք, այսինքն հոգւոր մարդիկ ըլլալու ենք, մարմնաւոր մնալու չենք : Մարմինին հնազանդելու չենք . կամքերնուս յարելու չենք . հոգինիս՝ մարմինուս հպատակելու չէ : Տեսնուած և ժամա-

Նակաւոր բաներու նայելու չենք, այլ միշտ աներևոյթ՝ հոգևոր՝ և յաւիտենական բաներու նայելու ենք : Հոգևոր միտք ունեցողներ ըլլալու ենք՝ և ոչ թէ մարմնաւոր միտք . քանզի «Մարմնաւոր խորհուրդը մահ է, և հոգևոր խորհուրդը կեանք ու խաղաղութիւն» կըսէ Պօղոս Առաքեալ : Հռով. Բ. 6 : Նաև կըսէ՝ (Գաղ. Ե. 22) «Հոգիին պտուղը աս է . Սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնամտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, և ժուժկալութիւն» :

3. Աստուած հոգի ըլլալուն համար՝ անոր մատուցուած երկրպագութիւնը հոգևոր լլլալու է :

Տէրն մեր ըսաւ, Աստուծոյ երկրպագութիւն ընելու է հոգիով և ճշմարտութիւնով : Հոգիով՝ որ խելքով՝ մտքով ու սիրով ըսել է : Չէ թէ միայն աչքով՝ լեզուով ու բերնով, չէ թէ միայն սովորութեան և

ձևի համեմատ , այսինքն երկրպագութեան յոկ կանոններովը չէ , այլ հոգիով՝ սրտով և մտքով՝ հնազանդութեան հոգիով , հաւատքով և յուսով երկրպագութիւն ընելու ենք : Նաև ճշմարտութեամբ երկրպագութիւն ընելու ենք , որ անկեղծութեամբ և սուրբ սրտով ըսել է :

Թագաւոր մը միայն երեցած բաներուն կը նայի , բերնին՝ աչքին կը նայի , սովորութեան ու ձևերու կը նայի , քանզի անկէ անդին չկրնար նայիլ . սակայն Մատուած դուրսի բաներուն չի նայիր՝ անկէ անդին կը նայի , ներքին բաներուն կը նայի , սրտին՝ դիտաւորութեանը և փափաքին կը նայի . խղճմտանքին և հոգիին կը նայի : Մտք քարով կամ ոսկիով կամ պատկերով , շքեղութիւնով կամ փառքով ընդունելի երկրպագութիւն չենք կրնար ընել : Մենամեծն Մատուած խելք ու միտք ունեցող Նազ մըն է , և անոր երկրպագութիւն ընելու ենք՝ խելքի ու մտքի պատշաճ կերպով մը : Տէրն

մեր ըսաւ “Նստուած հոգի է . և ա-  
նոր երկրպագութիւն ընողները՝ հո-  
գիով և ճշմարտութիւնով երկրպա-  
գութիւն ընելու են , քանզի Հայրը  
ասանկ երկրպագողներ կ'ուղէ” : Ու-  
րեմն Նստուած այսօր՝ ձեր ժողովքին  
մէջ ասանկ երկրպագողներ կը փն-  
տուէ : Եւ կը գտնա՞յ արդեօք . Նս-  
տուած ասանկ երկրպագողներ կը-  
գտնա՞յ ձեր մէջը արդեօք , եթէ ոչ՝  
պարապ տեղը թո՛ղ չփնտուէ :

Սակայն եթէ միայն մարմիննիս  
Նստուծոյ ներկայութեանը գտնուի՝  
և սրտերնիս հոն չըլլայ , երկրպա-  
գութիւննիս ընդունելի չըլլար , այլ  
զղուելի կ'ըլլայ : Երկրպագութեան  
դուրսի ձեւերն ու կանոններն ալ  
հարկաւոր են , և զանոնք ալ՝ ի գործ  
դնելու ենք : Բայց երկրպագութեան  
կանոնները՝ բուն երկրպագութիւն  
չէ , միայն անհոգի մարմինի կընմա-  
նի : Եթէ մէկը իր սրտին չնայելով՝  
միայն երկրպագութեան կանոննե-  
րուն ուշադրութիւն ընէ , ան անձը  
Նստուծոյ երկրպագութիւն չըներ ,

այլ երկրպագութեան կանոններուն  
 երկրպագութիւն կ'ընէ . քանզի ա-  
 նոր սիրտը՝ անոր ուշադրութիւնը  
 հոն է :

Մահ՛ղ . մեր երկրպագութեանց  
 մեղքերը խիստ շատ են : Մտտուած  
 մեզի ողորմի : Ամէն :

## ԵՊԵՇԻԵՐՈՂ, ԵՒԵ.ՉԵԿԻՐ :

“ Եւ ան կախուած շարագործներուն մէկը հայհոյութիւն կ'ընէր անոր՝ ու կ'ըսէր . թէ որ դուն Քրիստոսն ես , ազատէ քու անձը ու մեզ ալ : Իսկ միւսը պատասխան տուաւ , և զանիկայ յանդիմանելով ըսաւ . Դուն Եստուծոյ չե՞ս վախնար , որովհետեւ նոյն դատապարտութեան մէջն ես : Ու մեկը իրաւունքով , քանզի ասն մեր ըրածներուն արժանաւոր հատուցումը կ'տոնենք . բայց ասիկայ մէկ գէշ բան մը չըրաւ : Եւ ըսաւ Յիսուսին . Տէր՝ յիշէ զես , երբոր քու թագաւորութիւնովք գաս : Յիսուս ալ ըսաւ անոր . Ղ'ըմարիտ կ'ըսեմ քեզի . Դուն այսօր իմ հետս դրոստիս մէջը պիտի ըլլաս ” : Դուկ . իգ . 39-43 :

Տէրն մեր Քրիստոս երկու աւազակներու հետ խաչուեցաւ , մէկը իր աջ կողմէն՝ միւսը ձախ կողմէն : Յիսուս մէջտեղը ըլլալով՝ անանկ ցուցուած էր՝ իբր թէ անզգամներուն պուխն է . և անոր թշնամիները իր Մեսիան ըլլալուն ասկէց առաջ ցուցուած բոլոր վկայութիւններուն անարգանքով կընայէին : Ենոր Եստուծոյ ըրած հպատակութիւնը երեսին զարկին : Չանիկայ հրաւիրեցին որ խաչէն իջնայ . այսինքն զինքը խաչին գամող գամերը հանէ , և

զինքը պահող զօրքերէն ողջ առողջ  
 փախչի եթէ կարելի է : Ոտքի կայ-  
 նողները զանիկայ կը ծաղրէին , և  
 կը հայհոյէին : Ընկէ անցնողները՝  
 գլուխնին կը շարժէին , քահանայա-  
 պետները՝ ծերերը՝ և դպիրները՝ այս-  
 ինքն ազգին մեծ ժողովքը՝ նաև ազ-  
 քին ու եկեղեցւոյն գլխաւորները՝  
 թոյններնին օրհնեալ Յիսուսին երե-  
 սը թքնելու առաջին եղան : Եւ ա-  
 նոր հետ խաչուած աւազակներն ալ՝  
 զանիկայ իրենցմէ աւելի ցած՝ աւելի  
 գէշ սեպելով՝ զանիկայ կը հայհո-  
 յէին :

Սակայն աս մարգարէութիւնը  
 կատարուեցաւ թէ՛ “Յանցաւորնե-  
 րու հետ սեպուեցաւ” : Եսայ . Ծ . Գ .  
 12 : Եստուծոյ ողորմութեան ճո-  
 խութիւններն ալ մեծ եղան . քանզի  
 աս աւազակներէն մէկուն վրայ մեծ  
 փոփոխութիւն մը եղաւ . մեռնելու  
 վրայ եղող աւազակ մը՝ Եստուծոյ  
 որդին եղաւ . խեղճ՝ յանցաւոր՝ ա-  
 նոգնական՝ անողգամ մը դարձի եկաւ ,  
 փոխուեցաւ , ապաշխարեց , թողու-



Թիւն գտաւ և յաւիտենական կենաց արժանացաւ :

Հիմա իրեք բան խորհինք :

1. Ենոր ապաշխարելուն պատճառը :

2. Ղշմարտապէս ապաշխարած ըլլալուն ապացոյցը :

3. Ենոր ապաշխարելէն յառաջ եկած երջանկութիւնը :

1. Ենոր ապաշխարելուն պատճառն ի՞նչ էր :

Ես աւազակը ինչո՞ւ դարձի եկաւ . ինչո՞ւ ապաշխարեց . պատճառը ի՞նչ էր : Եստուած մեղաւորի մը սիրտը դարցընելու համար՝ սովորական միջոցներ կը գործածէ : Երդ՝ ի՞նչ միջոց գործածեց՝ որ աս աւազակին անմիջապէս դարձի գալուն և ապաշխարելուն պատճառ եղաւ . մենք չենք գիտեր . Եւետարանը մեզի չեմացուններ : Սակայն հաւանական է խաչեալ Յիսուսին սուրբ վարմունքը պատճառ եղաւ : « Յիսուս կրնա-

խատուէր ու փոխարէնը չէր նախատեր” : Ե. Պետ. Բ. 23 : Ես աւագակը անշուշտ գիտէր՝ իր ազգին Քրիստոսի գալստեանը ամէն օր սպասելը : Եւ կասկած չկայ որ՝ անշատ անգամ աս մարգարէութիւնը կարդաց կամ կարդալ տուաւ. “Մորթուելու գառնուկի պէս՝ իր բերանը չբացաւ” : Եսայ. Ծ. Գ. 7 : Ես մարգարէութիւնը հիմա իր աչքերուն առջևը կատարուեցաւ : Ենոնք խաչերնուն վրայ դամուած ժամանակնին, քանի որ մէկը բողոկնները կը քաշէր, մէկը ոտքերը կը քաշէր, քանի որ խաչերուն վրայ կը տարածէին, ոմանք գամ կը բերէին, ոմանք կը գամէին, ոմանք ծուռումուր գամերը կը քաշէին, ուրիշները դարձեալ կը գամէին, քանի որ անոնք աս բաները կ'ընէին՝ կասկած չկայ որ աւագակները լացընող աղաղակներ փրցուցին . և անտանելի տանջանքներու և նեղութեան մէջ ըլլալով, փայտը՝ գամերը՝ մուրճը՝ դահիճը՝ գամողները և կարելի է մին-

չև անգամ զՄատուած անիծեցին , ու հայհոյեցին : Սակայն տանջուող Յիսուսը անոնց ըրածին պէս չըրաւ , այլ աչքերը դէպ 'ի երկինքը վերցընելով՝ զինքը տանջողներուն համար անանկ սուրբ խնդրուածք մը ըրաւ՝ որ խեղճ աւազակը ասանկ բան երբէք լսած չէր առաջ : Ասեց որ Յիսուս՝ երկնից դէմ հայհոյելուն տեղը , ամենամեծն Մատուած բուն իր Հայրը կը կոչէ : Ասեց որ Յիսուս իր թշնամիները անիծելուն տեղը՝ անոնց ներուելու համար քաղցրութեամբ աղօթք կ'ընէ : Գիտցաւ որ Յիսուս՝ իր խօստացեալ Մեսիան ըլլալը խոստովանեցաւ , և անոր մահուան դատապարտուելուն պատճառը ան է . և Սուրբ Հոգիին օգնութեամբը հաւատաց թէ՛ ան գալու թագաւորը՝ անշուշտ աս է , որ Դանիէլ մարգարէին ըսածին պէս՝ « պիտի կտրուի , բայց չէ թէ իր մեղքին համար » : Դան . Թ . 26 :

## 2. Ենոր ճշմարտապէս ապաշխարած ըլալուն ի՞նչ ապացոյց կայ :

Յայտնի է որ՝ աս աւագակը ապաշխարեց . քանզի ինքզինքը յանցաւոր սեպելով դատապարտեց , և Եստուծոյ արդար դատաստանին հնազանդեցաւ : Ինքզինքը արդար չցուցընելով՝ յանցաւոր ըլալը խոստովանեցաւ : Դատաստանը անիրաւութեամբ է ըսելով չպարսաւեց , այլ միայն ինքզինքը պարսաւեց : Միւս աւագակը խիստ յանցաւոր է , բայց ինքը անոր չափ յանցաւոր չէ ըսելով չը ջատագովեց , այլ խոստովանեցաւ որ ինքն ալ իր ընկերին չափ քաշածներուն արժանի է : “Նւ մենք իրաւունքով” կը քաշենք ըսաւ ընկերին : Չըսաւ թէ Դուն իրաւունքով , այլ ես և դուն , երկուքս ալ ըսաւ . “Ու մենք իրաւունքով , քանզի ահա՛ մեր ըրածներուն արժանաւոր հատուցումը կ’առնենք” : Նւ ասկէց ՚ի զատ՝ աս աւագակը իր ընկերին հոգիին մեծ

սէր յայտնեց : Շատ ցաւ զգաց իր ընկերին այն աստիճան անհոգ մնալուն , և իր վերջին բոպէները սուրբ Յիսուսին անէծք տալով վատնելուն : Ենոր ըսաւ , “ Դուն Եստուծմէ չե՞ս վախնար ” . անմահ հոգիիդ համար բնաւ հոգ մը չունի՞ս . ահարկու վիճակիդ բոլորովին անտեղե՞ակ ես . սա մեր մէջտեղը կախուած՝ մեզի հետ չարչարուող Յիսուսը՝ մեզի պէս յանցաւոր և դատապարտութեան արժանի չէ , քանզի բնաւ գէշ բան մը բրած չէ , պէտք է որ մենք զինքը խղճանք , և անոր սուրբ համբերութենէն օրինակ առնենք : Ուրեմն գուն Եստուծմէ չե՞ս վախնար՝ որ մինչ դեռ հոգիդ կուտաս՝ Եստուծմէ ողորմութիւն չըխնդրելով՝ յաւիտենականութիւն անպատրաստ՝ Եստուծոյ հետ անհաշտ՝ և Քրիստոս չընդունած՝ անա՞նկ կերթաս յաւիտենականութեան :

Ես ապաշխարողն ալ Քրիստոսի անկեղծ սէր՝ և անոր փառքին ու պատիւին համար շատ աշխատանք

ցուցուց : Քրիստոսի կողմը բռնեց ,  
 և անոր թշնամիներուն դէմ կեցաւ :  
 Չամչցաւ որ իր Քրիստոսի կողմէն  
 ըլլալը՝ ամենուն յայտնի ըլլայ : Իր  
 ընկերը եղող միւս աւագակը յան-  
 դիմանելով՝ բոլոր աշխարհքը՝ թէ  
 շրէաները և թէ հեթանոսները՝  
 Յիսուսի հազար տեսակ խայտառա-  
 կութիւններ ընելնուն համար յան-  
 ցաւոր հանեց , յանդիմանեց , ամչ-  
 ցուց , դատապարտեց : “Մտիկայ  
 մէկ գէշ բան մը չըրաւ” ըսաւ , այս-  
 ինքն մէկ անվայել բան մը չըրաւ :  
 Եւ աս խոստովանութեամբը՝ բոլոր  
 շրէից ժողովքը՝ թէ տէրութեան և  
 թէ եկեղեցւոյն կողմանէ բոլոր դա-  
 տաւորները ամչցուց , յանցաւոր հա-  
 նեց : շերովդէսը՝ Պիղատոսը՝ և  
 մատնիչ Յուդան ամչցուց , Յիսուսի  
 ձեռք նետող և չուանով կապողները  
 և անոր դէմ սուտ վկայութիւն ը-  
 նողները ամչցուց , աչքը կապելով  
 բռունցցով անոր զարնոզները և երեսը  
 թուքնոզները ամչցուց : Անոր կար-  
 միր վերարկու հագցընող՝ գլուխը

փուշերէ պսակ դնող՝ և ծաղրելով  
 անոր առջևը ծնկան վրայ եկողները  
 ամչցուց , զանիկայ ամուր մը կա-  
 պող՝ և անգթութեամբ որը խարա-  
 զանով՝ որը փայտով՝ և որը փուշե-  
 րով անոր փափուկ մարմինը ծեծե-  
 լով ծեծելով մասունքները իրարմէ  
 զատողները , և ան տկարացած՝ ծե-  
 ծուած՝ մարած՝ ծունկերը և բոլոր  
 ջիղերը դողացած ժամանակը՝ տա-  
 նելու համար անոր վրայ ան ծանր  
 խաչը դնողը , և ետքը զանիկայ խա-  
 չին վրայ տարածելով՝ վրան գամող-  
 ները ամչցուց . և հոն գտնուելով՝  
 բոլոր զինքը հայհայողները՝ ծաղրող-  
 ները՝ բերան բացողները՝ գլուխնին  
 շարժողները՝ և բոլոր անիծողները  
 ամչցուց : Բրիստոսէն և անոր խա-  
 չէն չամչցաւ : Բրիստոսի բոլոր  
 թշնամիներուն և սատանայներուն  
 ալ յայտնի ըլլայ՝ որ ինքը Բրիստոսի  
 հողմը բռնեց , անկէ գոհ էր , անոր  
 հետ տանջուելու և մինչև անգամ  
 անոր համար մեռնելու պատրաստ  
 էր : Աս՝ Բրիստոնէութիւն չէ՞ :

Արդ՝ անոր աղօթքին մտադրու-  
 թիւն ընենք . “Տէր՝ յիշէ՛ զիս երբոր  
 քու թագաւորութիւնովդ գաս” :  
 Աս աղօթքը շատ զարմանալի աղօթք  
 մըն էր : Աս աղօթքը՝ մեռնելու վրայ  
 եղող մեղաւորի մը՝ մեռնելու վրայ  
 եղող Փրկչին բրած աղօթքն էր : Աւ  
 աս աղօթքին մէջ խիստ զօրաւոր  
 հաւատք և խոնարհութիւն կ’երև-  
 նայ : Օւրբեդէոսին որդւոցը պէս  
 բարձր աստիճան մը չինդրեր , չը-  
 սեր՝ Ով Տէր ինձի արդարութեան  
 պսակը տո՛ւր . կամ հրաման բրէ՛ որ  
 քու աջ կողմդ նստիմ . այլ միայն  
 յիշուիլ կ’ուզէ , ուրիշ բան չուզեր :  
 Աւ աս խնդիրքն ալ իր մարմինին վե-  
 րաբերեալ չէր . այլ հօգիին խաղա-  
 ղութեանը կը վերաբերէր : “Տէր՝ յի-  
 շէ՛ զիս երբոր քու թագաւորութիւ-  
 նովդ գաս” . հոգիս քու ձեռքդ կը-  
 յանձնեմ , անմահ հոգիս քեզի կը-  
 ձգեմ . յիշէ՛ զիս : Ենիկայ հաւատաց  
 որ՝ խաչեալ Յիսուսը Տէր էր . և աս  
 պատուանունովը անոր աղաչանք ը-  
 րաւ : Հաւատաց թէ՛ թագաւորու-



Թիւն ունի, Թագաւորութիւն մը՝  
որ աս աշխարհէս չէր, որն որ առնե-  
լու համար հիմա կերթայ, և կը խն-  
դրէ որ Տէրը ընդունի զինքը իբրև  
իր հպատակը: Հաւատաց թէ՛ խա-  
չին վրայ կախուած Յիսուսը՝ գերեզ-  
մանէն անդին՝ անդիի աշխարհքը  
յաւիտենական օրհնութիւններ կըր-  
նար տալ: Հաւատաց թէ՛ թէև հի-  
մա Յիսուս անիծուեցաւ, կատա-  
րեալ զօրութիւն ունի՝ անէծքի տակ  
եղողները ազատելու: Եւ խնդրեց  
որ՝ աս մեծ Նազարէ միւս աշխարհքին  
Տէրը՝ յաւիտենական անվերջ Թա-  
գաւորութիւն ունեցողը՝ կենաց և  
մահուան բանալիները բռնող Տէր  
Յիսուսը՝ զինքը յիշէ:

Ես աւագակը իր հաւատքը՝ ան  
նշանները և հրաշքները ըլլալէն ա-  
ռաջ ցուցուց: Բրիստոսի չարչա-  
րանքներուն և մահուանը պատիւ  
բերող հրաշքները՝ ետքը եղան, և  
գիտէք որ աս հրաշքները ան կու-  
պաշտ հարիւրապետին ալ աղաղակել  
տուաւ թէ՛ “Խրաւցընէ աս մարդը

արդար էր” : Բայց խեղճ աւագակը՝ իր հաւատոյ դաւանութիւնը աս հրաշքները ըլլալէն առաջ տուաւ . քանի որ Վրիստոս խայտառակութեանց և տանջանքներու մէջ էր՝ իր աշակերտներուն մէկէն մատնուած՝ միւսէն ուրացուած՝ և միւսներէն մերժուած՝ ինքը իր հաւատքը յայտնեց : Վրանի որ Վրիստոս բոլոր Հրէաներէն մերժուած էր՝ և իբրև խաբերայ մը տանջուելով վերջին շունջը կ’առնէր , և Մատուած զանիկայ ազատելուն տեղը զանիկայ երեսէ ձգելը յարմար սեպած ատենը՝ աս աւագակը իր հաւատքը խոստովանեցաւ :

Եւ աս հաւատքը՝ Վրիստոսի շատ փառք ու պատիւ բերաւ : Վրանի որ բոլոր աշխարհք Վրիստոս յանցաւոր կը ցուցընէր՝ աս աւագակը զանիկայ անմեղ խոստովանեցաւ : Վրանի որ բոլոր աշխարհքը զանիկայ կ’անիծէր ու կը հայհոյէր , ան՝ անոր փառք ու գոհութիւն տուաւ : Մինչև անգամ Մուքեալները այնչափ կաս-

կածի մէջ էին՝ որ միայն կրնային ըսել՝ թէ “Մենք կըյուսայինք՝ թէ անիկայ էր որ Խորայէլը պիտի ազատէր” : Բայց աս աւազակը բնաւ չկասկածեցաւ, այլ Բրիստոսի վրայ ունեցած վստահութիւնը կատարեալ էր : Յիսուս իր Եստուծոյ Որդին ըլլալը յայտնելուն համար՝ խաչին վրայ կախուելով՝ քանի որ վերջին շունջը կ'առնէր, աւազակը զանիկայ աս տիտղոսովը դաւանեցաւ, և մեռնող վկային Ստիփաննոսին պէս՝ իր անմահ հոգին անոր ձեռքը յանձնեց :

Հաւանական է որ ան ատենը աշխարհիս մէջ միմիայն աւազակին աչքն էր՝ փրկութեան համար Բրիստոսի վերցուած : Արելի է աշխարհիս մէջ միայն աւազակին սիրտն էր՝ որ Բրիստոսէն օրհնութիւն խնդրելու համարձակեցաւ : Ուրեմն աս աւազակը Բրիստոսի շատ պատիւ չբերա՞ւ. և աս քիչ ատենի մէջ՝ կէս օրէն ետքը եղաւ : Շատ քրիստոնէաներ կան որ բոլոր իրենց կենացը մէջ այն-

չափ պատիւ չեն բերեր Քրիստոսի :  
 Ուրեմն աս աւազակը շատ՝ և անկաս-  
 կած ապացոյց ցուցուց թէ՛ իր սիր-  
 տը փոխուած էր՝ անոր ապաշխարու-  
 թիւնը Նստուծոյ ընդունելի՝ և չըզը-  
 ջարու ապաշխարութիւն մըն էր : Աւ  
 աս բոլոր ապացոյցները՝ երկու կամ  
 իրեք ժամու մէջ ցուցուեցան : Շատ  
 ապաշխարողներ կան՝ որ բոլոր իրենց  
 կենացը մէջ այնչափ վկայութիւն չեն  
 ցուցուներ : Արանի՛ աս ապաշխա-  
 րած աւազակին :

Իայց անոր երանութիւնը և խա-  
 ղաղութիւնը հետևեալ քարոզին մէջ  
 քննենք :

## ԵՊԵՇԻՆՈՂ ԵՒԵ.ՉԵԿԸ :

“ Եւ ան կախուած շարագործներուն մէկը հայհոյութիւն կ'ընէր անոր՝ ու կ'ըսէր . թէ որ դուն Վրիստոսն ես , ազատէ՛ քու անձը ու մեզ ալ : Իսկ միւսը պատասխան տուաւ , և զանիկայ յանդիմանելով ըսաւ . Դուն Բստուծմէ չի՞ս վախնար , որովհետեւ նոյն դատապարտութեան մէջն ես : Ու մենք իրաւունքով , քանզի ահան մեր ըրածներուն արժանաւոր հատուցումը կ'առնենք . բայց ատիկայ մէկ գէշ բան մը չգրաւ : Եւ ըսաւ Յիսուսին . Տէր՝ յիշէ՛ զիս , երբոր քու թագաւորութիւնովք գաս : Յիսուս ալ ըսաւ անոր . Նշմարիտ կ'ըսեմ՝ քեզի . Դուն այտոր իմ հետո դրախտին մէջը պիտի ըլլաս ” :  
Ղուկ . իգ . 39-43 :

**Միւս քարոզին մէջ՝ աս դարձի եկած աւագակիին վրայ քարոզեցինք . և անոր ապաշխարելուն միջոցն ու ապացոյցը քննեցինք : Տեսանք որ՝ անոր փոխուելը (ինչ միջոցով կըլլայ թող ըլլայ) անշուշտ Եստուծոյ ողորմութենէն էր . և անոր դարձը մաքուր սրտով ըլլալուն համար՝ չըզըջալու դարձ մըն էր : Հիմա անոր ապաշխարութենէն յառաջ եկած երջանկութիւնը քննենք :**

**Ես անզգամին սիրտը փոխուելուն պէս՝ բիւրաւոր հրեշտակաց ժողով-**

քին երթալու՝ և երկնից մէջ արձա-  
նագրուած անդրանիկներուն եկե-  
ղեցոյն անդամ ըլլալու պատրաստ  
էր : Բրիստոսը սիրելով կը փառա-  
ւորէր : Բրիստոսի ապաւինելով՝  
անկէ ուրիշ յոյս մը չունէր : Իր  
փրկութեան փառքն ու պատիւը յա-  
ւիտեանս Բրիստոսի տալու պատ-  
րաստ էր :

Աս ողորմելի մարդը նոր արարած  
եղաւ : Անոր դիտաւորութիւնը՝ վա-  
խը՝ փափաքը՝ ատելութիւնը՝ սէրը՝  
յոյսը նոր եղան : Աստուծոյ սիրելի  
Բրիստոսը՝ սիրեց . Աստուծոյ հաւ-  
նած Բրիստոսին՝ ինքն ալ հաւնե-  
ցաւ . Աստուծոյ զգուած չարութե-  
նէն զզուեցաւ . անոր սիրտը Աս-  
տուծոյ առջևը ուղիղ էր . և զանի-  
կայ Աստուծոյ սէրէն զատող մը  
չկար , մինչև անգամ մահը չէր կրը-  
նար զատել :

Արդ՝ Տէրն մեր անոր խնդրուած-  
քը ընդունելով՝ խաղաղութեան  
պատասխան տուաւ : “Ա- Յիսուս-  
ըստ- անոր . ճշմարիտ է՛րսեմ՝ Կեղի . Կո-ն ալ ոտք

Է՛մ հետո՞ զբախտին ձեզ «Կի՛րի ըլլաս» : Ես կ'ըսեմ՝ քեզի, ես որ գիտեմ, ես որ դրախտին Տէրն եմ. ես որ դրախտին ի՛նչ ըլլալը և հոն ո՛վ մտնելը գիտեմ. ես որ ոչ կրխաբուլիմ և ոչ կրխաբեմ, ե՛ս քեզի կըսեմ՝ «Ե, յսօր իմ հետս դրախտին մէջը պիտի ըլլաս» :

Աշտի և նեղութեան մէջ եղողը՝ իրեն հետ նեղութեան մէջ եղողներուն տուած խօստմունքները շատ անգամ կը մոռնայ, ինքը ստացուածքի տէր եզածին պէս զանոնք կը մոռնայ : Յովսէփ իր բանտի ընկերին մատակարարապետին ըսաւ՝ «Քեզի բարիք եղած ատենը՝ իս մի՛տքդ բեր» : Սակայն կը կարդանք թէ աշխարհիս սովորութեանը համէմատ՝ «Մատակարարապետը միտքը չբերաւ Յովսէփը, հապա մոռցաւ զանիկայ» : Բայց փառք Եստուծոյ որ աս ապաշխարողին խնդիրքը չմոռցուեցաւ : Բրիստոսէն յիշուիլ ուզեց. և կասկած չկայ որ Բրիստոսէն յիշուեցաւ. ու խաչեալ փրկչին

ամէն հաւատացող մեղաւոր՝ անկասկած յաւիտենական ողորմութեամբ յիշուելով բնաւ պիտի չմոռցուի :

“Այսօր իմ հետս դրախտին մէջ պիտի ըլլաս” ըսաւ : Չէ թէ իմ հետս գերեզմանը կամ մահուան մէջ պիտի ըլլաս . չէ թէ կայանին՝ քաւարանին՝ կամ լիմպոսին մէջ պիտի ըլլաս , այլ “դրախտին մէջ պիտի ըլլաս” , սուրբ հրեշտակներուն եղած տեղը՝ Աբրահամին՝ Իսահակին՝ Յակոբին՝ Անովքին՝ և Ազիային բնակած տեղը պիտի ըլլաս :

Քրիստոսի տուած խօսքը՝ ո՞րչափ յարգի ըլլալու էր աս տանջանաց մէջ եզող խեղճ աւազակին հոգւոյն . ինչ մեծ մխիթարութիւն տալու էր : Յիրաւի անա՞նկ է՝ կրնար ըսել . Ճշմարիտ է որ՝ աստղերը երևնալէն առաջ գիշերուան ցուրտ ցօղը իջնալէն՝ և արևը մարելէն առաջ՝ աչքերս յաւիտենական օրուան մը մէջ պիտի բանամ : Ճշմարիտ է որ՝ իրեք չորս ժամ վերջը՝ երկինքը պիտի ըլլամ :



Հիմակուան քաշած տանջանքներս  
այնչափ շուտ կը վերջանա՞ն . և յա-  
ւիտենական հանգստութիւն և ու-  
րախութիւն այնչափ շուտ կը սկսի՞ :  
Աս խորհրդածութիւնը անշուշտ ա-  
նոր սիրտը ուրախութեամբ լեցուց ,  
և անոր վախերն ու ցաւերը թեթե-  
ցուց , և գուցէ բոլորովին փարա-  
տեց :

“Այսօր իմ հետս դրախտին մէջը  
պիտի ըլլաս” ըսաւ Տէրն մեր : “Այ-  
սօր” . բայց ան օրը անցնելու վրայ էր .  
ու կէսէն աւելի անցած էր : Խաչուող-  
ները՝ ընդհանրապէս առաջին օրը  
չէին մեռներ , այլ մինչև երրորդ  
կամ չորրորդ օրը կը դիմանային :  
Արդ՝ Տէրն մեր՝ թէ իր և թէ աս ա-  
ւազակին տանջանքներուն շուտ վեր-  
ջանալը առաջուց իմացուց : Աւ ժամը  
իննին ատենները՝ Յիսուս իր գլուխը  
ծռեց , և հոգին աւանդեց : Անոր  
այնչափ շուտ մեռնելուն՝ Պիղատոս  
ինքը զարմացաւ : Յետոյ զինուորնե-  
րը ան երկու աւազակներուն անգամ-  
ները՝ սրունքներէն սկսելով՝ կոտր-

տեցին՝ որ Հրէից ուզածին պէս իրիկուն ըլլալէն առաջ մեռնին և թաղուին : Բւ ասանկով Քրիստոսի մարգարէութիւնը կատարուեցաւ :

“Այսօր իմ հետս դրախտին մէջը պիտի ըլլաս” . վաղուան օրը գալէն առաջ՝ “դրախտին մէջը պիտի ըլլաս” : Անոր մարմինը խաչէն վար չ’առնուած՝ իր հոգին երկինքը գնաց : Արդարներուն հոգիները անմիջապէս փառքի կ’անցնին . իսկ մարմինները մինչև յարութեան օրը գերեզմանին մէջ կը հանգչին :

Աս բնութանէն քսանի մը օգտակար բաներ կը սորվինք :

1. Աստուծոյ ողորմութեան առատութիւնը և զօրութիւնը կը տեսնենք :

Աս ապաշխարած անձը իր ընկերէն տարբերողը՝ Աստուծոյ ողորմութիւնն էր : Գործք . . . . ի՞նչ գործ ըրաւ : Անոր բոլոր գործերը՝ խաւարին գործերն էին . անոր բոլոր փափաքները՝ աշխարհային ցանկու-

Թիւններ էին : Իր ընկերին պէս՝  
 անօրէն՝ գող՝ ու աւազակ մըն էր :  
 Գրէթէ չարութենէ՝ ի գատ գործ մը  
 ըրած չէր . թէ Աստուծոյ դատաս-  
 տանը և թէ տէրութեան օրէնքները  
 ոտքի տակ առած էր . և իր յանցան-  
 քին պատճառաւ իրաւունքով դա-  
 տապարտուեցաւ : Աերկնայ թէ  
 ինքը և իր ընկերը ճիշտ նոյն յան-  
 ցանքը գործած էին : Սակայն հիմա  
 մէկը առնուեցաւ և միւսը ձգուեցաւ .  
 մէկը ապաշխարած՝ հաւատացեալ  
 կ'ըլլայ , միւսը անապաշխար՝ անհա-  
 ւատ և ծաղրաբան կը մնայ : Յի-  
 րաւի Քրիստոս (Պողոս Առաքեալին  
 ըսածին պէս՝ Բ . Կորն . ԺԳ . 4)  
 “տկարութիւնով խաչուեցաւ” : Սա-  
 կայն հոս անոր ողորմութեան զո-  
 րութիւնը կայ . անոր ամենակարող  
 ողորմութեան երևելի օրինակը կայ :  
 Իրիկուն ըլլալէն առաջ՝ աս աւազակը  
 դժոխքը պիտի ըլլար . բայց ողոր-  
 մութիւնը մէջտեղը մտնալով՝ աւա-  
 զակը իրեկուն ըլլալէն առաջ դրախ-  
 տը գտնուեցաւ : Աւ բոլոր հրեշտակ-

ները զարմանալով կրնային ըսել  
 թէ՛ «Միթէ ասիկայ կրակէ հա-  
 նուած խանձող չէ՞» : Չաք . Գ . 2 :  
 Սակայն աս գործը՝ Գողգոթայի մէջ  
 պատահած զարմանալի դէպքին  
 խիստ յարմար գործ մըն էր : Տէր  
 Յիսուս՝ քանի որ չարչարանքներու  
 մէջ էր , յաւիտենական կեանք կու-  
 տայ : Քանի որ իր գլուխը փուշերէ  
 պսակին արեամբը տակաւին թաց  
 էր՝ ինքը անթառամ փառաց պսակը  
 կուտայ : Օրհնեալ Հայրը քանի որ  
 իր երեսը կը պահէ , ինքը խեղճ յան-  
 ցաւոր մեղաւորի մը մխիթարու-  
 թիւն կուտայ : Մինչդեռ ինքը ա-  
 նիրաւ ծառայի պէս խաչէն կախուած  
 է , և իր յանցանքը վրան գրուած է  
 Յունարէն՝ Ղատիններէն և Նբրայե-  
 ցերէն գրերով , ինքը Ամենակալին  
 աջ կողմը նստածի պէս՝ թողու-  
 թիւններ՝ թագաւորութիւններ և  
 յաւիտենական օրհնութիւններ կը  
 պարգևէ : Եւ աս Աւետարանը աշ-  
 խարհիս մէջ ամէն ուր որ քարոզուի ,  
 աս հոգեվարք Յիսուսին զօրու-

Թեանը՝ ողորմութեանը և սիրոյն յիշատակին համար պիտի խօսուի :

2. Աս աւագակէն 'ի զատ ուրիշ մէկուն մահուան ժամանակ դարձի գալը Սուրբ Գիւրքը չեյիշեր :

Շատ աշխարհային մարդիկ կը յուսան որ՝ հիւանդ կամ մեռնելու ժամանակնին ապաշխարելով՝ ողորմութիւն պիտի գտնան : Սակայն ամէն ասանկ ակնկալութիւն ունեցողը՝ թող միտքը բերէ որ՝ Աստուծոյ Գրքին մէջ միայն մէկը կը յիշուի , որ վերջին շունչին ապաշխարած է : Չորս հազար տարուայ մէջ մէկ մեղաւոր մը փրկութիւն գտաւ ան վեճակին մէջ՝ որ յայտերնիս բոլորովին չկտրի , սակայն միայն հատ մը՝ որ վախնանք և փրկութեան գործը չուշացընենք : Մարդիկ ընդհանրապէս՝ ապրածնուն պէս կը մեռնին : Աւ ասկէց 'ի զատ ո՞վ գիտէ որ մահը՝ ապաշխարելու ժամանակ պիտի տայ : Արբեմն մահը յանկարծակի կուգայ մարդոց . իրենք բնաւ լուր մը չու-

նենայով՝ յանկարծ կ'իյնան կը մեռ-  
 նին : Ո՞վ գիտէ որ ան ժամանակը  
 իր վիճակին տեղեակ պիտի ըլլայ :  
 Շատերը կը կարծեն թէ՛ օրէ օր  
 կ'աղէկնան, և թէ բժիշկները ու թէ  
 բարեկամները կ'ըսեն Ալախ չկայ :  
 Ո՞վ գիտէ որ ան ատենը խելքը  
 գլուխը պիտի ըլլայ : Շատերը հի-  
 ւանդութեան սաստկութենէն խել-  
 քերնին կորսնցընելով կը մեռնին .  
 կամ այնչափ ցաւ ու տկարութիւն  
 կ'ունենան՝ որ հոգևոր բաներ չեն  
 կրնար խորհիլ : Եւ ասկէց 'ի զտտ  
 ո՞վ գիտէ թէ՛ ապաշխարելու սիրտ  
 պիտի ունենայ ան ժամանակը : Ե-  
 մէնքս ալ օրհնեալ Աստուծոյ Հոգ-  
 ւոյն կարօտ չե՞նք՝ որ սրտերնիս կա-  
 կուղցընէ, և մեզ կարողացընէ ամէն  
 մեղքէ ապաշխարելու : Եթէ Աս-  
 տուած իր Հոգին չտայ, բնաւ մէկը  
 չապաշխարեր : Եւ Սուրբ Հոգին  
 առնելու յարմար ժամանակը ա՞ն է  
 որ՝ զանիկայ բոլոր կեանքերնուս մէջ  
 տրտմեցընելով՝ մեզմէ հեռացու-  
 ցինք : Չանիկայ հազար անգամ

մեզմէ հեռացընելնէս ետքը , յուսալի՞ է որ զանիկայ մեզի մօտ ու պատրաստ օգնական գտնանք : Ո՛չ , կենաց լոյսին ժամանակը երկնից ճամբան չգտնողները՝ թող չհարծեն որ մահուան շուքին մէջ աւելի դիւրին պիտի գտնան : Գիտէք որ միւս աւազակը անապաշխար ու անհաւատ մեռաւ , և ամենուս վախնալու օրինակ մը չէ՞ անիկայ :

3. Մեղքի համար չարչարուիլը՝ մեղքին քառութիւն չըներ , և չարչարուողը երկնից արժանի չըներ :

Աւազակ մը՝ կամ մարդասպան մը քննուելով , յանցանքին պատիժը քաշելը՝ վկայութիւն մը չէ թէ ան անձը երկինքը գնաց : Աթէ մահուան գատապարտուած մէկը աս աւազակին պէս խորհելով՝ իր յանցանքէն զղջայ , և աշխարհին մեղքը վերցունող Յիսուսին ապաւինի , փրկութիւն կը գտնայ : Բայց շատերը կան որ ո՛չ կը խորհին և ոչ կը զղջան . այլ (Յայտ . Ժ.Օ . 10 , 11) գրուածին

պէս՝ «ցաւէն լեզուներնին կը ծա-  
 մէին, բայց իրենց գործքերէն չա-  
 պաշխարեցին»: Ահա՛ նայէ՛ միւս  
 աւազակին: Իր մարմինը շատ տան-  
 ջուեցաւ, բայց հոգին չխոնարհե-  
 ցաւ: Մահուան շուքը կ'իջնար,  
 բայց առ Աստուած ապաշխարու-  
 թիւն և Յիսուս Քրիստոսի վրայ  
 հաւատք բնաւ չունէր: Աստուծոյ  
 սիրելի Արդւոյն մեռած բուն տեղը  
 ու ժամանակը կը մեռնէր, բայց զա-  
 նիկայ անիծելով մեռաւ: Յանցան-  
 քին պատիժը կատարելապէս քա-  
 շեց, այսինքն ան պատիժը՝ որ տէ-  
 րութեան օրէնքներովը սահմա-  
 նուած էր. բայց յաւիտենականու-  
 թեան գնաց առանց Քրիստոսի.  
 անդիի կեանքը գնաց Քրիստոսի  
 թշնամի. բոլոր չապաշխարած մեղ-  
 քերովը գնաց. երկնից բոլոր բանե-  
 րուն և բոլոր անձերուն չհաւնած  
 սրտով գնաց. չսանձուած և զզու-  
 էլի ցանկութիւններովը դատապար-  
 տուած՝ Աստուծոյ արդար դատաս-  
 տանին աթոռին առջևը գնաց: Ա-



նոր սրունքները կոտրեցան , բայց սիրտը չկոտրեցաւ : Բոլոր երկրին վրայ խաւար կար , բայց անոր խելքն ու միտքը՝ և հոգին կրկին խաւարի մէջ էր : Բանի որ ամէն բանի կը մեռնէր , մեղքին չմեռաւ . այլ մեղքը իր մէջը կենդանի ըլլալով՝ անոր վրայ կ'իշխէր : Խաչին վրայ տարածուած՝ գամուած՝ կախուած՝ և անտանելի տանջանքներ քաշած ժամանակը , հայհոյիչներու հետ միանալով՝ Յիսուսի կը հայհոյէ . և կ'երևնայ թէ՛ Բրիստոսը անիծելով քիչ մը հանգստացաւ : Ընոր աւրած երեսին վրայ երևցած վերջին խնդումը՝ զԲրիստոս ծաղրելն էր : Ընոր վերջին խնդումը՝ իր կեանքը շատերուն համար տուող Բրիստոսին հայհոյելէն էր : Տէրն մեր աղաղակեց . և աս աղաղակը աշխարհիս հիմերը շարժեց , ժայռերը պայթեց , մեռելները գերեզմաններէն արթնցուց , սակայն աս աւազակին սիրտը՝ ապառաժէն աւելի կարծր էր . և մեռեալներէն աւելի մեռած էր ու չէր լսեր : Եւ

Թէ որ աս պատահած դէպքերը անոր սիրտը չկրցան հալեցունել, դժ ոխքին կրակներն ալ չեն կրնար հալեցունել . դժ ոխքը՝ որ հոն սիրտը կակուղցրնելու, հոգին կենդանացրնելու և Քրիստոսի տանելու Սուրբ Հոգի չկայ :

Ուրեմն ինքզինքնիս չխաբենք : Եթէ ըրած գործերնիս և քաշած տանջանքնիս մեզ երկինքին յարմարցընէին, Քրիստոս երկինքէն չէր իջնար, չէր խաչուէր . արիւն չէր թափեր : Սատանաները շատ չը չարչարուեցա՞ն, և չե՞ն չարչարուիր . սակայն բոլոր քաշածնին և յաւիտենանս քաշելքնին մէկ մեղք մը չեկրնար քաւել : Ուրեմն չմոռնանք որ՝ մեղքին քաւութիւնը Քրիստոս է միայն : Եւմէն անոր հաւատացողը՝ մեղքէ և յաւիտենական տանջանքէ կ'ազատի . բայց Քրիստոսի չհաւատացողը՝ որչափ շատ տանջուի, և անապաշխար աւազակին պէս Քրիստոսի խաչին որչափ մօտ ալ որ մեռնի, չազատիր, չկրնար ազատիլ, յաւիտենական կեանք պիտի չտեսնէ :

## ՎՐԻՍՏՈՍԻՒՒ ԻՐ ԻՆՉՐ ԿՐԵՂՈՒՄ ՏԿԵՐ ԲԼԼԵԼ :

“ Եւ Սիմոն Աիւրեանացին՝ Աղէքսանդրոսին և Ռուփոսին հայրը , որ անկէ կ'անցնէր արտէն եկած , պահակ բռնեցին որ խաւք վերցընէ ” : Մարկ . ԺԵ . 21 :

Վրիստոս Տէրն մեր՝ մարդ եղաւ : Եւ մարդկային բնութիւն առնելէն ետեւ , կերակուրի՝ քունի և հանքստութեան կարօտ եղաւ ուրիշ մարդոց պէս և ուրիշ մարդոց հաւասար : Պօղոս Եռաքեալ կ'ըսէ թէ՛ Յիսուս Եստուած ըլլալով՝ ինքզինքը ցած վիճակի մը մէջ բանտարկելու զիջում ըրաւ : Եւ աս՝ ոմանց կարծածին պէս , միայն երեոյթով չէր . այլ ճշմարտապէս մեր տկար՝ և կարօտ բնութիւնը ստացաւ : Յիսուս մարդ եղաւ . մարդկային բնութեանը տկար և կարօտ եղածին պէս , անոր բնութիւնն ալ տկար եղաւ : Յիսուս մեզի պէս շունչ առնելու համար օդի՝ ուտելու համար հացի՝ խմելու համար ջուրի՝ հանգստանալու համար քունի

և հանգստութեան կարօտութիւն ունէր : Ու եթէ կարօտութիւն չունենար՝ մարդկային բնութիւն առած էակ մը չէր ըլլար . եթէ Վրիստոս առանց հացի կրնար ապրիլ , միայն հրաշքով ապրելու կարող կ'ըլլար : Եւ մենք ալ աս կերպովը՝ առանց բան մը ուտելու՝ Մովսէսին և Նդիային պէս կրնանք ապրիլ : Սակայն գիտէք որ՝ աս բնութեամբ չէ , այլ բնութեան կանոններուն դեմ՝ բնութենէ վեր բան մըն է , այսինքն հրաշք մըն է : Տէրը մարդկային բնութիւն առնելէն ետև , ինքզինքը ազատելու համար՝ մարդկային բնութենէն վեր հրաշք մը չորաւ : Ընոր գործած հրաշքները իր անձնական օգուտին համար չէր՝ այլ ուրիշներուն օգուտին և մխիթարութեանը համար էր :

“Եւ Սիմոն Աիւրենացին՝ Եղէքսանդրոսին և Ռուփոսին հայրը , որ անկէ կ'անցնէր արտէն եկած , պահակ բռնեցին որ խաչը վերցընէ” : Էոս իրեք հարցում ունինք :

# 1. Յիսուս ինչո՞ւ չկրցաւ իր խաչը տանիլ :

Սովորութեան համէմատ՝ խաչուելու դատապարտուած անձը՝ իր խաչը կրելով չարչարանաց տեղը տանելու էր : Ես՝ սովորութիւն ու հարկ էր : Ես պատճառու Քրիստոս ալ խաչը վերցընելով կը տանէր, յոգնութենէն զօրութիւն չմնալով՝ ալ չէր կրնար վերցընել . և զօրքերը անոր տեղը ուրիշ մը պահակ բռնեցին որ իր խաչը տանի : Սակայն քանի որ ան երկու աւազակները իրենց խաչերը կը տանէին՝ Տէրն մեր ինչո՞ւ այնչափ տկար գտնուեցաւ :

Տէրն մեր գիշերով Նրուսաղէմի մէջ ընթրիքը ուտելով՝ վերնատունը ձգեց և Աետրոն ձորէն անցաւ , և Գեթսեմանի պարտէզը գնաց : Ընն անոր նեղութիւնը և հոգւոյն դառնութիւնը այնչափ ահարկու էր՝ որ մահուան դուռը գնաց . անկէ կէս գիշերին զինւորներէն և բազմութենէն քշուելով՝ Նրուսաղէմի մէջ Են-

նային տարուեցաւ . անկէ Վայիա-  
 փային խրկուեցաւ . յետոյ առտու  
 ըլլալով՝ Պիղատոսին , և Պիղատոսէն  
 Հերովդէսին , և Հերովդէսէն դար-  
 ձեալ Պիղատոսին ետ խրկուեցաւ :  
 Ես բոլոր գիշերը ի՛նչ ահարկու գի-  
 շեր մը ըլլալու էր անոր : Ես գիշեր  
 մինչև առտու ողջ մնալը՝ զարմանալի  
 բան է . քանզի բնաւ հանգստութիւն  
 չտեսաւ , հանգիստ չառաւ , չքնա-  
 ցաւ , չնստաւ , ոչ բան մը կերաւ և  
 ոչ խմեց , բնաւ մէկ կողմանէ մխի-  
 թարութիւն չունեցաւ , պարտէզը  
 քաշած վիշտերէն ու նեղութիւննե-  
 ընէն ետքը բռնուելով՝ և ամուր մը  
 կապուելով՝ ան հոգնած վիճակին  
 մէջ , քաղաքը և քաղաքին փողոց-  
 ները ասդին անդին կը քաշքուտուէր .  
 յետոյ բոլոր գիշերը մինչև լոյս  
 բռունցով՝ ապտակներով՝ և զանա-  
 զան կերպերով ծեծուելով չարչա-  
 րուեցաւ . անանկ որ անոր հոգին  
 դիմանալով՝ մինչև ան օրուան առ-  
 տուն ողջ մնալը՝ զարմանալի բան է :

Երդ՝ առտու եղաւ , սակայն ի՛նչ

ահարկու առտու մը ըլլալու էր : Պի-  
 ղատոսին կապուած տարուեցաւ ,  
 վերջը Հերովդէսին խրկուեցաւ , և  
 ծաղրուելէն ետև՝ Պիղատոսին ետ  
 խրկուեցաւ : Նտքը՝ քանի որ գերիի  
 մը պէս մեռնելու վրայ էր , իբրև  
 գերի ծեծուեցաւ . և անոր արդէն  
 տկար և զօրութենէ կտրած վիճա-  
 կին նայելով՝ աս սոսկալի ծեծէն չը-  
 մեռնիլը զարմանալի բան է : Քանզի  
 Հռովմայեցւոց ծեծէն՝ միշտ մար-  
 մինը կտոր կտոր կըլլար , և ամէն  
 մէկ ջեղը կը դողար , արեան խոշոր  
 խոշոր կաթիլները՝ դլխէն սկսելով՝  
 մինչև ոտքը կիջնար ու գետինը կը-  
 վազէր : Նտքը Յիսուսը յանձնեցին  
 զինւորներուն ձեռքը որ խաչեն : Նւ  
 աս անգութ՝ կոպիտ՝ և վայրենի  
 մարդիկը՝ վայրենի խաղ մը խաղալու  
 միջոց մը ունենալնուն վրայ ուրա-  
 խանալով՝ անոր գլուխը փուշերէ  
 պսակ դրին , առջևը ծնկան վրայ  
 եկան , երեսը թքնեցին , և այնչափ  
 ծաղրեցին զանիկայ՝ ու այնչափ չա-  
 րութիւններ ըրին անոր՝ որ իրենք

ալ ձանձրացան . կամ անոր զօրութենէ իյնալով մարիլը՝ ու իրենց ձեռքովը մեռնիլը տեսնելով վախացած . և ալ չյապաղելով՝ անմիջապէս ելան որ պատիժին որոշուած տեղը տանին զանիկայ :

Արդ՝ խաչը Յիսուսին վրայ գրուեցաւ՝ որ սովորութեան համէմատ տանի : Աւ կերևնայ թէ մինչև քաղաքին դուռը տարաւ : Սակայն խիստ յոգնած՝ և զօրութենէ բոլորովին կտրած ըլլալով՝ քաղաքէն դուրս Գողգոթայ ըսուած զառ ՚ի վերը չէր կրնար հանել : Հաւանական է՝ ան ծանր բեռանը տակը գետինը ինկաւ , և կասկած չկայ որ զինւորները բարկացան , աղաղակեցին , հայհոյեցին , անիծեցին , ծեծեցին , խարազանեցին , ոտքով մտրակեցին . սակայն մարելու վրայ եղող Յիսուսը աս բեռանը տակ չէր կրնար կայնիլ :



2. Յիսուսի օգնելու համար յառաջ  
վազող մը չերևնար :

Տանջանքներէ ինկած Յիսուսին  
իր կամաւը օգնող մը չկար : Քանի  
մը ժամ առաջ՝ Տէր քու հետդ բան-  
տը երթալու և մեռնելու ալ պատ-  
րաստ եմ ըսող Պետրոսը՝ հիմա ո՞ր  
փախաւ : Քանի մը ժամ առաջ Յի-  
սուսի քով նստած՝ անոր սիրելի եղող  
աշակերտը Յովհաննէս՝ հիմա ո՞ր  
պահուած է : Ղազարոս՝ որնոր քա-  
նի մը օր առաջ մեռելներէն յարուց ,  
հիմա ո՞ր է : Տանջուող Յիսուսին  
իր կամուր օգնող մը չկա՞ր : Գե-  
տինը ինկած մարելու վրայ եղող  
Փրկչին իր կամքովը ձեռք տուող՝  
ջուր բերող՝ մխիթարող՝ օգնութեան  
հասնող մէկը չկա՞ր : Ա՛յ, չկար .  
հատ մըն ալ չկար : Մարգարէին  
ըսածին պէս՝ « Հնձանին մէջ մինակ  
ես կոխեցի , և ժողովուրդներէն՝  
ինծի հետ մարդ մը չկար » : Ասայ .  
կԳ . 3 :

3. Յիսուսի օգնելու համար բռնութեամբ բռնուած Սիմոնը ո՞վ էր :

Աիւրենացի էր : Աիւրենէ՝ Ափրիկէի մէջ քաղաք մըն էր՝ Նրուսաղէմէն 1000 մղոնի չափ հեռու : Հոն հրէաներ կը գտնուէին . բայց չենք գիտեր աս մարդը շրէա՞յ էր թէ Ափրիկէցի սև մըն էր : Արդեօք մեր Տէրը կը ճանչնա՞ր թէ չէ , անոր վրայով բան մը լսա՞ծ էր թէ չէ , անոր աշակերտը եղա՞ւ թէ չէ , ասկէց առաջ Նրուսաղէմ եկա՞ծ էր թէ չէ՝ չենք գիտեր : Իայց կ'երևնայ թէ՛ անոր գերդաստանը կը ճանչցուէր . քանզի երկու որդիքը՝ Ազէքսանդրոս և Ռուփոս՝ իբրև երևելի մարդիկ կը յիշուին : Արնայ ըլլալ աս Ռուփոսը ան ըլլալ , որ Պօղոս Առաքեալ զանիկայ և իր մայրը պատիւով կը յիշէ ըսելով՝ « Իարև ըրէ՛ք Ռուփոսին՝ Տէրոջմով բնտրուածին , ու անոր մօրը և իմեն » : Հռովմ. Ժ.Օ. 13 : Պօղոս իր հայրը չիշեր :

Գուցէ մեռած էր . գուցէ թշնամի էր և գուցէ աս գերդաստանը ուրիշ էր՝ ու անորը չէր :

Սակայն Յիսուս աս ծանր բեռան տակը ինկած ժամանակը , զինուորները աս հանդիպած Սիմոնը բռնելով՝ ստիպեցին որ խաչը տանի : Առկասէն կ'երևնայ թէ՛ Սիմոն բոլոր խաչը չտանելով՝ այլ Յիսուսի ետևէն մէկ ծայրը վերցընելով տարաւ : Ես Սիմոնը եթէ Եփրիկեցի սև մըն էր , Քրիստոսի օգնականը սև էր , և աս սևէն՝ի զատ օգնական չունէր : Եթէ աշխարհային մարդ մը կամ թշնամի մըն էր , բարկանալով՝ մռմռուալով՝ հայհոյելով կ'օգնէր ու կ'երթար : Ետքը եթէ Քրիստոսի աշակերտ չեղաւ , մինչև ՚ի մահ բարկացաւ , և յաւիտեանս բարկանալով պիտի հայհոյէ : Աւ պիտի չխորհի՞ թէ՛ Քրիստոսի խաչին միջոցաւը միլիօնաւոր մարդիկ փրկու թիւն գտան , և ես անոր խաչին մէկ ծայրը կրելէս ետև՝ փրկու թիւն չը գտնալով , աս չարչարանաց

տեղը եկայ : Ափսո՛ս Սիմոնին : Սա-  
կայն եթէ Սիմոն Վրիստոսի բարե-  
կամ եղաւ , թէ որ բռնութեամբ և  
ակամայ ստիպուեր ալ նէ , ետքը  
ուրախ եղաւ . և աս բռնութեանը  
համար յաւիտեանս փառք պիտի  
տայ : Անիկայ բոլոր կենացը մէջ չը  
մոռցաւ , և յաւիտեանս պիտի չը  
մոռնայ : Անշուշտ շատ անգամ կ'ը-  
սէր , Ո՛վ Յիսուս քու խաչիդ մէկ  
ծայրն ալ կրելու արժանի չէի՝ և  
կասկած չկայ արժանի չէի , արժանի  
չէի պիտի ըսէ յաւիտեանս յաւիտե-  
նից : Երանի՛ր Սիմոնին :

Եղբայրներս , Տէրն մեր ըսաւ ,  
“ Ո՛վ որ իր խաչը չվերցըներ ու իմ  
ետեէս գար՝ չկրնար իմ աշակերտս  
ըլլալ ” : Ուրեմն Վրիստոսի ետեէն  
կ'երթա՞ք . խաչը վերցընելով իր  
ետեէն կ'երթա՞ք : Աթէ չէք եր-  
թար , անոր աշակերտները չէք :  
Ամէն օր ինքզինքնիս ուրանալով՝  
Վրիստոսի հպատակելու ենք : Պօ-  
ղոս Առաքեալ կ'ըսէ՝ “ Ուրեմն եկէ՛ք  
իրեն ելլենք բանակէն դուրս , վրա-

Նիս առնելով անոր նախատինքը” :  
 Եբր . ԺԳ . 13 : Քրիստոսի սիրոյն  
 համար խայտառակուիլը մեծ պա-  
 տիւ է՝ որուն բնաւ արժանի չենք :

Սիմոն Քրիստոսի խաչը բռնու-  
 թեամբ տարաւ . սակայն զանիկայ  
 ստիպողը միայն զինուորներն էին .  
 Ո՛չ . զինուորները Եստոնծոյ գոր-  
 ծիքն ըլլալով , Եստուած զանոնք  
 գործածեց : Ուրեմն կրնանք ըսել  
 թէ՛ Սիմոնին աս խաչը բեռցընողը  
 Եստուած էր , և ամէն օր Եստուած  
 անօրէն մարդիկ չի՞ գործածեր . սրի-  
 կաներ՝ աւազակներ՝ բռնաւորներ չի՞  
 գործածեր : Եյո՛ . անոնց ձեռքովը  
 ամէն օր Քրիստոսի խաչը մեր վրայ  
 կը բառնայ՝ որ տանինք , կրենք . և  
 եթէ խոնարհութեամբ և ուրախու-  
 թեամբ տանինք իր սիրոյն համար ,  
 յաւիտեանս ուրախ պիտի ըլլանք ու  
 փառք պիտի տանք : Երանի՛ մեզի :

Սակայն եթէ խաչէն փախինք ,  
 եթէ ոչ սրտանց՝ այլ բռնութեամբ  
 բարկանալով՝ հայհոյելով տանինք ,  
 յաւիտեանս պիտի բարկանանք , յա-

ւիտեանս պիտի հայհոյենք , յաւի-  
 տեանս դժոխքին պատիժը պիտի  
 քաշենք , և յաւիտեանս Քրիստոսի  
 խաչին տակը պիտի ճզմուինք : Ափ-  
 սո՛ս մեզի . ամէն օր պատեհուլթիւն  
 ունինք որ Քրիստոսի խաչը վերցը-  
 նելով՝ անոր օգնենք : Ա՛յ ան  
 մարդուն որ քաշուելով կը փախչի .  
 ու երանի՛ ան մարդուն որ վերցընե-  
 լով կը տանի :

## ՎՐԻՍՏՈՍԻ ԳԵՐԵ.ՕՄԵՆԵՐ ԿԵ- ՆՈՒԻ ԵԿՈՂ ԿՆԻԿՆԵՐԸ :

“ Ահա ա մէկշարթի առտուանց յարութիւն առած՝ առաջ Մա-  
րիամ Մազդազնացիին երեցաւ, որ անկէ եօթը դև հաներ էր :  
Անիկայ գնաց անոնց պատմեց՝ որոնք անոր հետն էին, երբոր սուգ  
կ'ընէին ու կուլային : Իսկ անոնք երբոր լսեցին թէ կենդանի է և  
թէ իրեն երեցաւ, չհաւատացին ” : Մարկ . ԺԿ . 9-11 :

Վրիստոսի խաչը՝ ամենէն ետքը  
ձգողները՝ կնիկներն էին . ու Շա-  
բաթը անցնելէն ետքը Վրիստոսի  
ամէնէն առաջ զացողները՝ կնիկներ  
էին . և աս զարմանալի բան չէ,  
քանզի Սուրբ Գրոց մէջ յիշուած չէ  
թէ՛ կնիկ մը Վրիստոսի թշնամու-  
թիւն ցուցուց : Գրուած չէ թէ՛  
կնիկ մը զինքը հալածեց, կամ հայ-  
հոյեց ու անիծեց : Անոր աչքերը  
կապողը՝ անոր ապտակով կամ բռուն-  
ցով զարնողը՝ անոր սուրբ երեսը թք-  
նողը՝ կնիկ չէր : Օճանիկայ քարկո-  
ծողը՝ կամ գլուխը փուշերէ պսակ  
դնողը՝ կնիկ չէր :

Սակայն Վրիստոսի ոտքերուն

քով նստած՝ անոր խօսքերը մտիկ ընողը՝ կնիկ էր : Ընոր գլխուն խիստ պատուական իւղ թափելով՝ անոր շատ պատիւ և սէր յայտնողը՝ կնիկ էր : Ընոր սուրբ ուրբերը իր արտասուքներովը թրջելով՝ մազերովը սրբողը՝ կնիկ էր : Քրիստոսի հետ Գալիլեայէն եկող՝ և իրենց ստացուածքովը ծառայութիւն ընող՝ և անոր նեղութիւններուն ու վիշտերուն մասնակից եղողները՝ կնիկներ էին : Պիղատոս կուսակալին առջևը կապեալ սուրբ Յիսուսին համար միջնորդութիւն ընող՝ և Պիղատոսին աղէկ խօսք ըսելով զանիկայ խրատողը՝ կնիկ էր , և ան ալ կուսակաշտ կնիկ մըն էր : Քրիստոսի իր խաչը Գողգոթայ ըսուած տեղը տարած ատենը , երբ մարելու վրայ էր , անոր համար լացողները և ծեծուողները՝ Երուսաղէմի աղջիկներն էին : Եւ Տէրն մեր Քրիստոս խաչին վրայ Եստուծմէ և իր սուրբ ժողովուրդէն մերժեալ երևցած ատենը , անոր խաչին մօտեցողը՝ հոն կայնելու հա-



մարձակողը՝ և ինքզինքը անոր հետ  
մէկ ցուցընողը՝ կնիկ էր :

Ուրեմն զարմանալի բան չէ որ՝  
երրորդ օրը արշալոյսին Քրիստոսի  
գերեզմանը առաջին զացողները՝ աս  
սուրբ կնիկներն էին : Անոնք շաբաթ  
օրը պատուէրին համեմատ հանգս-  
տացան . բայց շաբաթը անցածին  
պէս արշալոյսին ելան՝ որ խաչեալ  
Յիսուսը փնտռեն : Շիտակ անոր  
գերեզմանը վազեցին . բայց իրենց  
հասնելէն առաջ՝ Աստուծոյ հրեշտա-  
կը հասած էր , և գերեզմանին պա-  
հապան զօրքերը՝ մեռելի պէս եղած  
էին . ան մեծ քարը գերեզմանին  
դռնէն զլտորցուած էր . և մեռած  
Յիսուսը՝ մահը խափանելով և ինքը  
մահուան ու դժոխքին բանալիները  
բռնելով՝ յաւիտեանս յաւիտենից  
կ'ապրի :

Ուրեմն Քրիստոսի պատուակա-  
նութիւնը առաջին գիտցողները՝ աս  
սուրբ կնիկներն էին : Հրեշտակը  
անոնց աս բարի աւետիսը տուաւ  
թէ՛ Յիսուս հոս չէ , յարութիւն ա-

ուած է : Եւ ինքը Յիսուս՝ յարու-  
թիւն առնելէն ետքը՝ զանիկայ առա-  
ջին տեսնողները՝ անոնք էին : Օւ-  
նիկայ ամէնէն առաջ տեսնող՝ անոր  
երեսը նայող՝ և անոր ոտքը առաջին  
իյնողները անոնք էին , անոր առա-  
ջին օրհնեալ բարեկները անոնք ըն-  
դունեցին :

Ինարանին մէջ ասանկ զրուած է  
թէ՝ “ Յիսուս Տէլաբէի առաջնայ յարու-  
թիւն առած՝ առաջ Մարիամ Մագդաղէնացիին  
երեցաւ ” :

Պողոս Առաքեալ Քրիստոսի յարու-  
թեանը վրայ Աորնթացւոց գրած  
ատենը՝ ասանկ կ'ըսէ , “ Եւ ամէնէն  
ետքը ինծի ալ երեցաւ ” : Սակայն  
աս Մարիամը ասանկ կրնար ըսել ,  
“ Եւ ամէնէն առաջ ինծի երեցաւ :  
Իր առաջին խօսքը՝ ինծի խօսեցաւ .  
առաջին կանչած անունը՝ իմ անար-  
ժան անունս էր . անոր առաջին սր-  
բած արտասուքը՝ և առաջին ուրա-  
խացուցած սիրտը իմս էր : Աշխար-  
քին մեղքը վերցրնելէն ետքը՝ անոր  
առաջին մխիթարած մեղաւորը՝ ես

ինքս խեղճ ողորմելի Մարիամ Մագդաղենացիս էի :

Սակայն Մարիամէն՝ ի զատ ուրիշ կնիկներ ալ կային որ՝ գերեզմանը կանուխ գացին , և հոն Ըստուծոյ հրեշտակը տեսան , և անոր բերնէն լսեցին թէ՛ Յիսուս մեռելներէն յարութիւն առած է : Սողովմէն , Յովհաննան և Յակոբոսին մայրը Մարիամ և անոնց հետ ուրիշ կնիկներ՝ նոյն առտուն հրեշտակ մը տեսան , ունաւ Տէրոջը պատահեցան : Հրեշտակը անոնց ըսաւ , “ Յիսուսը հոս չէ , ինչու որ յարութիւն առաւ , ինչպէս որ ըսաւ . եկէ՛ք տեսէ՛ք ան տեղը՝ ուր որ Տէրը պառկած էր : Եւ շուտ մը գացէ՛ք անոր աշակերտներուն ըսէ՛ք , թէ անիկայ մեռելներէն յարութիւն առաւ : Եւ անոնք շուտ մը գերեզմանէն ելան՝ և կր վազէին աշակերտներուն պատմելու ” : Եւ քանի որ անոնք ճամբան էին՝ իրենց աչքովը կենդանի Տէրը տեսան : Յիսուս ինքը՝ անոնց փնտռած սիրելի Յիսուսը՝ անոնց սրտին միակ փա-

ժաքը Յիսուս՝ անոնց պատահեցաւ .  
 և անոր քաղցրիկ սովորութեանը  
 համէմատ “ողջոյն ձիզի” ըսաւ : Ե-  
 նոնք անոր ոտքը ինկան , և իրեն  
 երկրպագութիւն ըրին , հաւանական  
 է չէ թէ խօսքով՝ այլ շատ արտա-  
 սուքներով և դառնապէս լալով երկր-  
 պագութիւն ըրին անոր : “ Յիսուս  
 ըսաւ անոնց մի՛ վախնաք , գացէ՛ք  
 իմ եղբայներուս ըսէ՛ք ” :

Երդ՝ աս կնիկները Եռաքելոց ա-  
 ուաքեալ եղան : Ես կնիկները Յի-  
 սուսի յարութիւնը իմացուցին Ե-  
 ուաքեալներուն որոնք՝ բոլոր աշխար-  
 քին պիտի իմացընէին : Ես աւե-  
 տիսը ան մարդոցը տուին , որոնք  
 բոլոր աշխարհքին մէջ տարածելու  
 համար որոշուած էին : Ես աւետիսը  
 առաջին տարածողը՝ հրեշտակն էր .  
 և հրեշտակէն ետքը՝ կնիկներն էին .  
 Բրիստոս մեռելներէն յարութիւն  
 առած է՝ ըսին . Ճշմարտապէս յա-  
 րութիւն առած է . մենք գիտենք որ  
 յարութիւն առած է , անոր երեսը՝  
 մեր աչքերովը տեսանք . անոր խօս-

քերը՝ մեր ականջներովը լսեցինք .  
մեր ձեռքերովը շօշափեցինք զանի-  
կայ . և մեր սրտերը շատ մխիթա-  
րութիւն գտան անկէ :

Իայց Առաքեալները ու՞ր էին .  
ի՞նչ վիճակի մէջ էին , ի՞նչ կրնէին :

Արկարգանք թէ՛ Մարիամ՝ զնաց  
անոնց պատմեց՝ որոնք անոր հետն  
էին , երբոր սուգ կրնէին ու կուլա-  
յին : Իսկ անոնք երբոր լսեցին թէ  
կենդանի է՝ և թէ իրեն երեցաւ ,  
չհաւատացին” :

Հոս Առաքեալներուն վրայով եր-  
կու բան կը սորվենք . այսինքն՝ Ա-  
նոնք չհաւատացին , և սուգ ընելով  
կուլային :

### 1 . Անոնք չհաւատացին :

Աստուծոյ ընտրած ճամբան ա-  
նոնց մտքին համաձայն չըլլալով՝ չը-  
հաւատացին : Քրիստոս իր մեռ-  
նիլը և երբորդ օրը յարութիւն առ-  
նելը անոնց կրկին և կրկին խօսած  
էր , բայց աս լուրը անոնց առաջուան  
գաղափարներուն՝ և փարիսեցոց

սորվեցուցածներուն բոլորովին դէմ էր , ու չհաւատացին : Մարիամին ստորագրութիւնը շատ յայտնի՝ բաց և ընդունելի երևնալու էր . երկու հրեշտակ տեսաւ . Տէրն ալ տեսաւ . Տէրը զանիկայ իր անունովը կանչեց . իրեն հետ խօսեցաւ . և անոր ձեռքովը իր եղբայրներուն յատուկ պատուէրներ ու կտակներ խրկեց . բայց “ չհաւատացին ” :

Միւս կնիկներուն վկայութիւններն ալ ուղիղ երևնալու էր : Ընոնք ալ հրեշտակ մը տեսան , աս հրեշտակը անոնց իմացուց թէ Յիսուս յարութիւն առած է , անոնց հրամայեց որ գերեզմանը նային , և Քրիստոսի մարմնոյն հոն չըլլալը տեսնան . և յետոյ անոնց հրամայեց՝ որ արտօրնոք աշակերտներուն և մանաւանդ Պետրոսին երթան աս օրհնեալ աւետիսը տանին : Ընոնք քանի որ ճամբան էին Յիսուսը տեսան , իրենց աչքերովը անոր նայեցան , ազանջովսին անոր ձայնը լսեցին , ձեռքով զանիկայ շօշափեցին ,

անոր ոտքը իյնալով՝ երկրպագութիւն ըրին . և ան՝ անոնց վախերը փարատեց , անոնց մարած սրտերը զօրացուց , և իր եղբայրներուն սիրոյ խօսքեր խրկեց : Սակայն “չհաւատացին” : Ար կարդանք թէ աս լուրը՝ անոնց ոչինչ բան մը երեցաւ . պառաններուն առասպելներուն պէս երեցաւ :

Եւ ասանկով բոլոր ան օրհնեալ օրը խաւարի մէջ անցաւ . և իրիկուն ըլլալով՝ երկու բարեկամ արտօրնոք կուգան . Էմմաուս ըստած եօթը կամ ութը մղոն հեռու գիւղէ մը կը վազեն՝ որ Նռաքեալներուն լուր տան թէ՛ իրենք ալ Տէրը տեսած են : Յիսուս անոնց հետ քանի մը մղոն քալած է . անոնց Մովսէսէն սկսելով՝ Քրիստոսի վրայ եղած բոլոր մարգարէութիւնները սորվեցուցած է . անոնց տունը մտնելով՝ անոնց հետ սեղան նստած է , և իր սովորութեանը պէս հացը առնելով՝ օրհնեց , և կտրելով տուաւ անոնց : Անոնք զանիկայ ճանչցան , բնաւ կաս-

կած մը չմնաց . անոր՝ իրենց կենդանի Տէրն ըլլալը գիծցան : Բայց կը կարգանք թէ՛ Մուսաբեալները “անոնց ալ չհաւատացին” :

Եւ ինչո՞ւ . պատճառն ի՞նչ էր : Կարելի է սրտերնին կ'ըսէին թէ՛ Երդէն տասնուչորս տասնուհինգ ժամ անցած է , ու մենք զանիկայ տեսած չենք . եթէ կենդանի է , ինչո՞ւ մեզի չերևնար . մենք անոր ընտրած Մուսաբեալները չե՞նք . ուրեմն հարկաւ ամէնէն առաջ ինքզինքը մեզի յայտնելու է : Այսինքն՝ եթէ Մեսիան մեռելներէն յարութիւն առնէ , անոնց կարգադրոնթեանը համիմատ յարութիւն առնելու է , անոնց գաղափարներուն համեմատ կենդանանալու է . եթէ ո՛չ՝ մէկ ապացոյց մը չեն ընդունիր : Աս ի՞նչ յիմարութիւն է :

Արկարգանք թէ՛ Տէրն մեր “վերջը տասնումէկին երևցաւ՝ երբոր սեղան նստած էին , ու երեսնին գարկաւ իրենց անհաւատութիւնը և սրտերնուն կարծրութիւնը , վասն



զի որոնց որ ինքը ըրեցաւ մեռելներէն  
 յարութիւն առած , իրենք չհաւա-  
 տացին” : Եւ յիրաւի յանդիմանու-  
 թեան ու ամէնալու արժանի էին , և  
 Տէրն մեր զանոնք յանդիմանեց :  
 Ենոնց անհաւատութիւնը անմեղ  
 չէր , և մեր անհաւատութիւնը ան-  
 մեղ չէ՝ մեղք է . ամէն ապացուցուած  
 բանի համար անհաւատութիւն ընե-  
 լը՝ միշտ մեղք է :

Սակայն ,

2. Եռաքեալները՝ սուգ ընելով կու-  
 լային :

Ենոնք՝ աշխարհին պէս անհոգ և  
 անհաւատ չէին : Քրիստոսը չու-  
 զող կեղծաւորներուն ու Փարիսե-  
 ցիներուն պէս չէին : Աշխարհքը  
 Քրիստոսի յարութիւն առնելը չէր  
 ուզեր . բայց Եռաքեալները այնչափ  
 շատ կ'ուզէին՝ որ քիչ ապացոյց բա-  
 ւական չէր : Եւ կը կարդանք թէ՛  
 վերջապէս Յիսուս անոնց երևնա-  
 լուն , անոնք “ իրենց ուրախութե-  
 նէն չէին հաւատար ” : Գլուկ .

ԻԳ. 41 : Այսինքն՝ ասանկ աղէկ  
աւետիսի մը ինտոր կը հաւտա-  
ցուի : Բայց աս կերպ անհաւա-  
տութիւն՝ որչափ որ մթութիւն և  
վիշտ կը բերէ ալ նէ, վերջապէս մեզ  
յաւիտենական ուրախութեան կը  
աանի :

Եղբայրներս՝ կ'երևնայ թէ ամե-  
նամեծն Աստուած թոյլ տուաւ որ  
Առաքեալները կասկածի մէջ էին ,  
որպէս զի մենք կասկածի մէջ չէյ-  
նանք : Անոնք դժուարութեամբ  
հաւատացին՝ որ մենք դիւրութեամբ  
հաւատանք : Անոնք մթութեան  
մէջ ձգուեցան՝ որ մենք լոյս ունե-  
նանք : Ուրեմն մենք աս բանին մէջ  
կասկած չընենք . հիմա բնաւ հարկ  
չկայ կասկածելու . հիմա կասկածելը  
մեծ մեղք է . մեր տեղը և մեզի հա-  
մար Առաքեալները կասկած ըրին :  
Եւ իրենց կասկածին պատճառաւ  
շատ քննեցին և փորձեցին , որպէս  
զի հաւատքնիս վէմի վրայ հաստա-  
տուած ըլլալը հասկնանք : Հիմա  
ամէն Բրիստոնէայ կրնայ ըսել թէ՝

Քրիստոս մեռելներէն յարութիւն առած է . սուտ չէ . ես դիտեմ որ յարութիւն առած է . և աս ճշմարտութիւնը ընդունելու չեմ ամչնար . եթէ անիկայ չընդունիմ, շատ կ'ամչնամ :

Երանի՛ զանիկայ չտեսնելով հաւատացողներուն : Ես երանութիւնը ձերը ըլլայ . իմն ալ ըլլայ : Յարեալ Յիսուսին հաւատացէ՛ք , և վերջին օրը դուք ալ յարութիւն պիտի առնէք : Յարութիւն և կեանք եղող Յիսուսին հաւատացէ՛ք , և յաւիտենական կեանքը ձերը պիտի ըլլայ :

“ Յեսուսն ինչպէ՛նք առաջին յարութիւն առած՝ առաջ Մարիամ Մագդաղենացիին երկուցա՛ն ” : Համար . 9 : Երանի՛ Մարիամին : Երանի՛ ան կնիկներուն որ Քրիստոս կանուխ փնտուելով՝ աշակերտներուն ան օրհնեալ աւետիսը բերին : Եւ երանի՛ բոլոր կնիկներուն՝ որոնց Տէրն մեր Քրիստոս ինքզինքը շուտ կը յայտնէ , և որոնք միշտ պատրաստ են անոր համար

լեցուն և պատուական վկայութիւն  
տալու : Աս երանութիւնը ձերը  
ըլլայ աղջիկներս և քոյրերս , աս ե-  
րանութիւնը ձերը ըլլայ , հիմա և  
միշտ ու յաւիտեանս : Ամէն :

## ԲԱՆՆԸ ՄԱՐՄԻՆ ԵՂԱՆ :

“Եւ Բանը մարմին եղաւ, ու մեր մէջը բնակեցաւ” : Յովհ .  
 Կ . 14 :

Ես խօսքը՝ շատ զարմանալի է . և անոր վրայ խորհրդածութիւն ընենք : Բան՝ ի՞նչ ըսել է : Եռաջին խորհրդածութիւննիս աս է :

1 . Բան ի՞նչ ըսել է :

Բան՝ խօսք ըսել է : Յովհաննէս աս անունը Քրիստոսի տուաւ . ինչու աս անունը անոր տուաւ՝ չենք գիտեր : Միւս աշակերտները աս անունը չտուին Քրիստոսի : Բայց անշուշտ Յովհաննէս աս անունը ոչ թէ իր խելքովը հնարեց՝ այլ Սուրբ Հոգւոյն հրամանովը ըրաւ :

Հին Ատակարանին մէջ գրուած է թէ՛ Եստուծոյ խօսքը Եբրահամին՝ Սամուէլին՝ Եղիային և ուրիշ մարգարէներու եկաւ . Եստուծոյ խօսքը անոնց եկաւ : Ու Եւետարանին մէջ

գրուած է՝ « Բանը Աստուծոյ քովն էր, և Բանը Աստուած էր ». և « Բանը մարմին եղաւ ու մեր մէջը բնակեցաւ » : Նաև գրուած է՝ « Բնաւ մէկը զԱստուած տեսած չէ, բայց միածին Արդին՝ որ Հորը ծոցն է, անիկայ պատմեց » : Յովհ. Ա. 18 : Աստուծոյ կամքը թէ մարգարէներուն և թէ Առաքեալներուն գիտցընողը՝ Քրիստոս է . և հաւանական է աս պատճառաւ Յովհաննէս աս մեծ Լաւկին վրայ խօսած ատենը՝ Բան բառը գործածեց : Սակայն ինչևիցէ, գիտենք որ Բան՝ ան մեծ և զարմանալի Լաւկը ըսել է :

## 2 . Աս մեծ Լաւկը սկիզբէն էր :

Հրեշտակներն՝ ստեղծուելնէն առաջ՝ չկային, գոյութիւն չունէին . բայց Քրիստոս մարմին առնելէն առաջ՝ գոյութիւն ունէր, կենդանի էր : Մենք չճնած՝ մարմին չառած՝ չկայինք՝ չէինք ապրեր . բայց Քրիստոս Բեթլեհէմի մէջ ծնելէն առաջ՝ մարդկային բնութիւն առնելէն առաջ՝

գոյութիւն ունէր . այսինքն մարդկային կերպարանք մտնելէն առաջ կենդանութիւն ունէր : Ընոր մարդկային կեանքէն նախամեծար՝ կենդանութիւն կար : Ար կարդանք թէ՛ «Սկիզբէն էր» : Թէ՛ աս աշխարհը և թէ՛ միւսը դիտցաւ , թէ՛ ժամանակը և թէ՛ յաւիտենականութիւնը գիտցաւ , թէ՛ մարդ և թէ՛ Մտուած ճանչցաւ :

3. Ընոր առաջին կեանքը՝ Մտուածային կեանք էր :

Քրիստոս հրեշտակ մը չէր : Հրեշտակները սկիզբէն չկային . և գոյութիւն առնելնէն ետքն ալ , անոնց գոյութիւնը Մտուածային չէր , ինքնագլուխ չէին : Սակայն Բանը՝ սկիզբէն էր . « և Բանը Մտուած էր » կ'ըսէ Յովհաննէս : Կաւ կ'ըսէ , « Ըմէն բան անով եղաւ , և անոնց անոր բան մը չեղաւ՝ ի՛նչ որ եղաւ : Աեանքը անով էր , ու կեանքը մարդոց լսյան էր » : Եւ Պօղոս Եռաքեալ Քրիստոսի համար ասանկ

կը գրէ (Վող. Ե. 16, 17) : « Ինչու որ անով ամէն բան ստեղծուեցաւ, ի՛նչ որ երկինքը ու ի՛նչ որ իրկրի վրայ, անոնք որ կ'երևնան՝ և անոնք որ չեն երևնար, թէ՛ աթոռները՝ թէ տէրութիւնները՝ թէ պետութիւնները՝ թէ իշխանութիւնները. բոլոր բաները անով՝ ու անոր համար ստեղծուեցաւ. ու անիկայ ամէն բանէն առաջ է, ու ամէն բան անով հաստատ կը կենայ” : Ես խօսքերը իմ խօսքերս չեն. Եստուծոյ խօսքերն են. Եստուծոյ բարձր հրամանովը ասանկ գրուած է : Ե՛հա՛ աս էր Բանը : Ե՛շխարհք գալէն առաջ՝ աշխարհքն ու հրեշտակներն ստեղծուելնէն առաջ, աս էր Բանը : Ե՛ն էր ամէն բան ստեղծողը. ամէն բանի՛ ոչինչէն Եղիւր ըսողը՝ ան էր : Եստուծոյ բոլոր անունները և ստորագելիքները անոր կը վերաբերեն. և Եստուծոյ բոլոր ըրածները ընելու կարող՝ ան էր :



#### 4. Բանը մարմին եղաւ :

Հոս մարմին՝ մարդ ըսել է . Ես խօսքը Սուրբ Գրքին մէջ շատ անգամ նոյն նշանակութեամբ կը գործածուի : Տէրն մեր Արուսաղեմի կործանմանը վրայ խօսած ատենը ըսաւ . « Թէ որ Տէրը ան օրերը չկարճեցրնէր , բնաւ մէկ մարմին մը (այսինքն բնաւ մէկ մարդ մը) պիտի չապրեր » : Մարկ . ԺԳ . 20 : Բանը մարմին եղաւ . ոչ թէ միայն միս՝ ոսկոր և արիւն , այլ մարդ եղաւ : Ես մեծ Լակը՝ մարդկային բնութիւն առաւ : Ալ մարդկային բնութիւնը՝ թէ՛ մարմին ու թէ՛ խելք կ'ունենայ : Միայն մարմին՝ անասուն կ'ըլլայ , մարդ չըլլար : Քրիստոս հրեշտակաց բնութիւնը չառաւ , անասուններուն բնութիւնը չառաւ , այլ մարդկային բնութիւն առաւ . թէ՛ մարմին և թէ՛ հոգի ունեցաւ : Ալ աս առած բնութենէն ՚ի զատ՝ ուրիշ բնութիւն ալ ունէր . անոր առջի բնութիւնը՝ որ ունէր , անասունի

չէր՝ մարդկային չէր՝ հրեշտակային չէր՝ այլ Աստուածային էր :

Մենք կ'ըսենք թէ՛ մարդս մահկանացու էակ մըն է . նաև կ'ըսենք թէ՛ մարդս անմահ էակ մըն է . երկուքն ալ ճշմարիտ չե՞ն : Արովհետև մէկը մարմինի համար կ'ըսենք՝ և միւսը հոգիին համար : Եւ ասանկ ալ մարդս կը խորհի և կ'ըսիրէ . բայց անոր մարմինը չէ՛ այլ անոր խելքն է որ կը խորհի : Մարդս կ'ուտէ և կը խմէ . սակայն անոր միտքը չուտեր և չխմեր՝ այլ անոր մարմինը կ'ուտէ :

Ասանկ ալ Սուրբ Գիլբըր Քրիստոսի վրայ իրարու հակառակ երևցած բաներ կը խօսի : Ար կարդանք թէ՛ “Քրիստոս կը զարգանար իմաստութիւնով և հասակով, և Աստուծմէ ու մարդոցմէ շնորհք դանելով” : Գլուկ . Բ . 52 : “Ար զարգանար իմաստութիւնով”, այսինքն՝ ամէն բան չէր դիտեր, այլ կը սորվէր : Եւ եթէ Յիսուս մարդ եղաւ, մարդկային խելք ալ ունէր, և մարդկային խելքը ամէն բան չգիտեր,

այլ օրէ օր կը սորվի : Ար կարդանք թէ Յիսուս տկարացաւ , անօթեցաւ , ծարաւեցաւ , յոգնեցաւ , քնացաւ , ցաւ քաշեց , և խաչին վրայ մեռաւ : Աւ եթէ Յիսուս ճշմարտապէս մարդ եղաւ , անշուշտ աս բաները իր բնութեանը մէջ ըլլալու էր , և չբռայ՝ անկարելի էր :

Սակայն կը կարդանք թէ անօր անունը՝ ամենակարող Աստուած՝ ուղորմութեան հայր՝ Տէր Ահովայ էր : Նաև կը կարդանք թէ՝ մեռելները յարուցանող և դատող՝ ծովուն ալիքներուն վրայ նստող՝ և անոր ալիքներուն աղաղակը հանդարտեցրնողը՝ ամէն բան գիտցող՝ և ամէն տեղ ներկայ՝ ու ամէն բան բռնողը՝ ան էր : Աւ գիտենք թէ աս բաները՝ անօր առած մարդկային բնութենէն վեր՝ անսահման կերպով վեր բնութիւն մը կը ցուցնէ , անօր առաջին՝ Աստուածային բնութիւնը կը ցուցնէ : Սուրբ Գրքին մէջ կը տեսնենք թէ՝ անիկայ մարգու վերաբերեալ գործեր ունի , և Աստուծոյ վերա-

բերեալ գործեր ունի : Ոմանք անոր  
 Եստուծոյ հետ ունեցած առնչու-  
 թիւնը և միութիւնը կը ցուցնեն .  
 և ոմանք՝ իր մարդկային սեռին հետ  
 ունեցած կապակցութիւնը կը ցու-  
 ցնեն : Յիսուս որչափ որ մարդոց  
 մօտ էր , Եստուծոյ ալ այնչափ մօտ  
 էր : Եւ որչափ որ Եստուծոյ մօտ  
 էր , այնչափ ալ մարդկութեան մօտ  
 էր : Ենոր մարդկութեանը որչափ  
 որ վկայութիւն ունինք , անոր Ես-  
 տուածութեանը նոյնչափ վկայու-  
 թիւններ անպատճառ ունինք : Ու-  
 բեմն ան մեր դատաւորն ըլլալու յար-  
 մար չէ՞ : Ե, յո , թէ՛ Եստուծոյ կող-  
 մանէ և թէ՛ մարդոց կողմանէ շատ  
 յարմար և վայելուչ է : Սակայն աս  
 շատ զարմանալի բան մըն է . անի-  
 կայ բնաւ չենք հասկընար : Միայն  
 այսչափ կը հասկընանք թէ՛ աս մեր  
 չհասկըցած գաղտնիքը՝ Սուրբ Գրքին  
 գրեթէ ամէն երեսին վրայ կը գտ-  
 նուի , և խելքերնիս կը համոզուի :

### 5. Եւ մեր մէջը բնակեցաւ :

“ Բանը մարմին եղաւ , և մեր մէջը բնակեցաւ ” : Բանը մարմին ըլլալէն առաջ , մեր մէջը չբնակեցաւ : Ընկէ առաջ մեր սեռէն ոմանց երեցաւ : Եբրահիմին՝ Յակոբին և Մովսէսին քանի մը անգամ երեցաւ , բայց անոնց հետ չբնակեցաւ , և “ Ղշմարտապէս Եստուած երկրիս վրայ մարդոց հետ կը բնակի ” , ըսաւ Սողոմոն թագաւոր : Ե. յո՛ , կ’ըլլայ , եղաւ . բնակեցաւ : Օ. իջանելով՝ երկնից ավթոռը ձգեց , և մեզի հետ խօսակցելու իջաւ : Ես Լազար կրնար մարմին ըլլալ , և շուտ մը երկինքը դառնալով՝ հրեշտակներուն հետ կրնար բնակիլ . սակայն “ մեր մէջը բնակեցաւ ” : Ամ կրնար մարմին ըլլալ . և տաճարին մէջ ամենասուրբ տեղը բնակիլ . որպէս զի քահանայապետը տարին անգամ մը անոր առջևը երթալով՝ անոր օրհնութիւնը առնէր . սակայն “ մեր մէջը բնակեցաւ ” :

Նաև կրնար մարմին ըլլալ , և ամէն նեղութենէ ու աղքատութենէ հեռու ըլլալով՝ փառաւոր պալատի մէջ կրնար նստիլ . և թագաւորավայել ամէն հանգստութեան ու մխիթարութեան՝ ամէն շքեղութեան և իշխանութեան տէր կրնար ըլլալ , և բոլոր ժողովուրդը հեռուն թողելով՝ երեսի վրայ գետինը կրնար ձգել : Սակայն հազար անգամ հազար փառք ըլլայ որ՝ « մեր մէջը բնակեցաւ » : Մեր խիստ ցած վիճակին զիջում ընելով խոնարհեցաւ : Մեզի հետ հաց կերաւ , ջուր խմեց և խօսեցաւ . մեր տուները եկաւ , վիճակնիս հարցուց , մեր տղաքները գրկեց , և մեզի հետ նստաւ ու ելաւ , պտրտեցաւ , խօսեցաւ , նեղուեցաւ . մեզի հետ ծնաւ , ապրեցաւ , մեռաւ , թաղուեցաւ . մեր ախոռը՝ կենդանիները՝ նաւը և գերեզմանը գործածեց :

« Սկիզբէն էր Բանը , և Բանը Աստուծոյ քովն էր , և Բանը Աստուած էր » . « և Բանը մարմին եղաւ ,

ու մեր մէջը բնակեցաւ” : Չարմա-  
նալիքներուն զարմանալին էր աս . և  
ինչո՞ւ ասանկ եղաւ : Չեր օգուտին  
համար եղաւ՝ Սիրելիներս . ձեր փր-  
կութեանը համար եղաւ . աղքատ  
եղաւ՝ որ հարստանաք . երկինքէն  
իջաւ՝ որ երկինք ելլաք . հոս եկաւ՝  
որ հոն երթաք . ձեր խիստ ցած վի-  
ճակը իր փորձառութեամբը գիտ-  
ցաւ՝ որ դուք անոր առջի փառքն ու  
պատիւը տեսնելով՝ իրեն հետ մաս-  
նակցիք :

Ես աղէկ խորհեցէք՝ Եղբայր-  
ներս . Բրիստոս մարդ եղաւ որ մենք  
Եստուծոմէ չպահուինք՝ չփախչինք՝  
չվախնանք , այլ համարձակութեամբ  
մօտենալով երկրպագութիւն ընենք ,  
մեղքերնիս խոստովանինք , և թո-  
ղութիւն խնդրենք : Մարդ եղաւ՝  
որ յարմար Բարեխօս և Փրկիչ ըլ-  
այ . որպէս զի աչքերնիս սուրբերուն  
յվերցրնենք՝ այլ միայն իրեն վերցը-  
նենք : Ոմանք անոր Եստուծու-  
թիւնը կ'ուրանան , և աս տեղի  
քրիստոնէաները գործքով անոր

մարդկութիւնը կ'ուրանան . այսինքն անոր մարդկութիւնը բնաւ չեն գործածեր . այլ զանիկայ իրենցմէ հեռացընելով՝ սուրբերը կը մօտեցընեն և զանոնք կը գործածեն . անոնց միջնորդութիւնը կը խնդրեն ու Քրիստոսինը չեն խնդրեր : Սակայն Քրիստոս անոր համար մարդ եղաւ որ զինքը դործածենք :

Երդ Սիրելիներս՝ Քրիստոսի մարդկութենէն ձեզի օգուտ մը եղա՞ւ : Չանիկայ գործածեցի՞ք իբրև ձեր Բարեխօսը և Փրկիչը . անոր մարդկութիւնը և Մտուածութիւնը գործածեցի՞ք . և անոր միջոցովը մեղքէն՝ մեղքին զօրութենէն՝ իշխանութենէն՝ սէրէն ազատեցա՞ք : Եթէ մեղքին սէրէն ազատեցա՞ք , անշուշտ անոր պատիժէն ( դժոխքէն ) պիտի ազատիք : Չեզ մէկէն ազատող Յիսուսը՝ անշուշտ միւսէն ալ պիտի ազատէ . ամենակարող Յիսուսը ձեզ կրնայ ազատել : Մարդկային բնութիւն առնող եղբայրնիդ Յիսուս ձեզի խիստ մօտ գալով՝ ձեզ



կը հրաւիրէ . անկէ մի՛ վախնաք . ան-  
 կէ մի՛ փախիք . զանիկայ գործածե-  
 ցէք . անոր թէ՛ Աստուածութիւնը  
 և թէ՛ մարդկութիւնը ձեզի պէտք  
 է . և երկուքն ալ գործածեցէք՝ Նշ-  
 բայրներս :

## ԱՄԷՆ ԱՆՈՒՆԷ ԲԱՐՁՐ ԵՒ ՊԱՏՈՒՆԿԱՆ ԱՆՈՒՆՐ :

“ Եւ անոր անունը Յիսուս զնես ” : Մատ . ւ . 21

Յիսուս՝ Եբրայեցերէն կամ շե-  
տակը կուզէք Յունարէն բառ մըն է .  
և անոր նշանակութիւնը թէ Յու-  
նարէն և թէ Եբրայեցերէն փրկիչ՝  
ազատիչ է : Ես անունը խիստ քաղցր  
և խիստ պատուական չէ՞ : Ե, յո, կոր-  
սուած մեղաւորներու խիստ քաղցր  
անուն մըն է . խիստ պատուական  
նշանակութիւններով լեցուն անուն  
մըն է : Փրկիչ . ազատիչ : Յաւի-  
տենական դոհութիւններ ըլլայ՝ որ  
բոլորովին խաւար չէ . այլ փրկիչ  
ազատիչ ունինք . և յաւիտենական  
երջանկութեան արժանանալու յոյս  
կրնանք ունենալ : Սակայն ,

1 . Ես փրկիչը ո՞վ է :

Յիսուս ո՞վ է : Մա՞րդ է . հրեշ-  
տա՞կ է . Աստուա՞ծ է : Աւետարա-

նէն կը սորվինք թէ ան շատ զարմանալի էակ մըն է : Ար կարդանք թէ՛ Յիսուս կնիկէ ծնանելով մեզի պէս օրէնքին տակը մտաւ : Ար կարդանք թէ՛ ինչպէս որ մեզի վայելուչ էր աղօթք ընել՝ ինքն ալ անանկ Մատուծոյ աղօթեց , և անոր սուրբ կամքին հնազանդեցաւ : Ար կարդանք թէ՛ մեզի պէս փորձուեցաւ , անօթեցաւ , ծարաւեցաւ , յոգնեցաւ , քնացաւ , և կերաւ ու խմեց : Ար կարդանք թէ՛ ինքը մեզի հետ՝ և մեզի պէս ապրեցաւ , պտըտեցաւ , պառկեցաւ , ելաւ . և մեզի պէս իր ձեռքերը՝ ոտքերը՝ աչքերը՝ ականջները և լեզուն գործածեց . և մեզի պէս աղգականներ՝ դրացիներ՝ թըշնամիներ՝ և բարեկամներ ունէր : Ար սորվինք թէ՛ ծեծուած ատենը մեզի պէս ցաւ քաշեց , և խաչուած ատենը մեզի պէս մեռաւ , հոգին աւանդեց , շունչը կտրաւ , մարմինը պաղեցաւ , արիւնը կայնեցաւ , և մարմինը խաչէն իջեցընելով՝ թաղուեցաւ : Աս էակը մարդ չէ՞ր .

մարդկային բնութիւն չունէ՞ր : Այո .  
անտարակոյս մարդ ըլլալու էր :  
Հրեշտակ չէ . Հրեշտակը չմեռնիր ,  
չյոգնիր , չծարաւնար : Ենշուշտ աս՝  
մարդ ըլլալու էր : Աթէ Աբրահամ՝  
Յովսէփ՝ Մովսէս՝ Դաւիթ՝ կամ Պե-  
տրոս մարդ էին , հարկաւ Յիսուս  
ալ մարդ ըլլալու էր : Աթէ վկայու-  
թիւն ունինք՝ թէ այսինչը մարդ է ,  
նոյնչափ ալ վկայութիւն ունինք թէ  
Յիսուս Քրիստոս մարդ էր :

Սակայն որչափ որ Յիսուս մարդ  
էր , Եստուած ալ էր : Աթէ մարդ-  
կային բնութիւն ունէր , աւելի  
բարձր , անսահման կերպով բարձր  
բնութիւն մըն ալ ունէր : Հիմա  
ժամանակ չունինք որ անոր Ես-  
տուածային գործերը՝ և հրաշքները  
քննենք , կամ անոր համար մարգա-  
րէներուն և առաքեալներուն գրու-  
թիւններուն մտադրութիւն ընենք .  
այլ բուն իր խօսքերը մտիկ ըրէք :  
“Մէկը չճանչնար Որդին՝ բայց Հայ-  
րը . և մէկը չճանչնար Հայրը՝ բայց  
Որդին” : Մատ . ԺԵ . 27 : “Ինչ-

պէս որ Հայրը զիս կը ճանչնայ , ես  
 ալ Հայրը կը ճանչնամ” : Յովհ . Ժ .  
 15 : “ Են որ զիս տեսաւ՝ Հայրը տե-  
 սաւ ” : Յովհ . Ժ . Գ . 9 : “ Հաւա-  
 տացէ՛ք ինձի , թէ ես Հօրը մէջն եմ  
 ու Հայրը իմ մէջս է ” : Յովհ . Ժ . Գ .  
 11 : “ Են ամէն բաները որ Հայրը  
 ունի իմս է ” : Յովհ . Ժ . Չ . 15 :  
 “ Ես ու Հայրը մէկ ենք ” : Յովհ .  
 Ժ . 30 : “ Թէ որ իմ անունովս բան  
 մը խնդրէ՛ք , անիկայ պիտի կատա-  
 րեմ ” : Յովհ . Ժ . Գ . 14 : “ Եմէն  
 իշխանութիւն ինձի տրուեցաւ եր-  
 կինքի ու երկրի մէջ ” : Մատ . ԻՄ .  
 18 : “ Քու մեղքերդ քեզի ներուած  
 են ” : Մատ . Թ . 2 . “ Մէկը եր-  
 կինքը չելաւ , բայց անիկայ միայն՝  
 որ երկինքէն իջաւ՝ Որդին մարդոյ ,  
 որ երկինքն է ” : Յովհ . Գ . 13 :  
 “ Մէկը չհասնէր անիկայ ինձմէ հապա  
 ես կը դնեմ անիկայ ինքիրմէս . իշ-  
 խանութիւն ունիմ անիկայ դնելու ,  
 և իշխանութիւն ունիմ անիկայ նո-  
 րէն առնելու ” : Յովհ . Ժ . 18 :

Եթէ խօսքերը նշանակութիւն

ունին , աս խօսքերը մարդու խօսքեր  
չեն : Մարդ մը որչափ որ սուրբ ըլ-  
լայ՝ ասանկ խօսքեր չկրնար խօսիլ . և  
եթէ խօսի , հայհոյութիւն կ'ընէ :  
Հրեշտակ մը՝ մինչև անգամ հրեշ-  
տակապետ մը՝ ասանկ խօսքեր չկր-  
նար խօսիլ : Ես խօսքերը Եստուծոյ  
կը վայելեն , և ուրիշ էակի մը բնաւ  
չեն վայելեր :

Ե՛հա՛ ձեր Փրկիչը՝ ձեր աղատիչը  
աս խիստ զարմանալի էակն է : Երդ՝  
մի՛ մոռնաք թէ՛

## 2 . Դուք մեղաւոր էք :

Մեղաւոր ըլլալնիդ գիտէք : Գի-  
տէք որ Եստուծոյ օրէնքը կոտորած  
էք . և թէ բնութիւննիդ աւրած է :  
Գիտէք թէ՛ բոլոր սրտով ոչ թէ  
Եստուած՝ այլ աշխարհքը սիրեցիք :  
Մահէն ու դժոխքէն ինչո՞ւ կը վախ-  
նաք . ձեր աս վախը վկայութիւն  
մըն է թէ՛ դուք մեղաւոր էք : Դուք  
բնութեամբ՝ չէ թէ աշխարհքէն Ես-  
տուծոյ՝ այլ Եստուծմէ աշխարհքին  
կը փախիք . և աս ձեր փախչիլը վկա-

յուլթիւն մըն է թէ՛ դուք մեղաւոր էք . և բնուլթիւննիդ ապականած է : Ձեր խղճմտանքը՝ ձեզ կը յանդիմանէ : Չկատարած օրէնքնիդ ձեզ դատապարտելով՝ իր ահարկու անէծքները ձեր վրայ կը հաստատէ : Ընդ անմեղ մարդ չկայ . մեղաւոր չեղող մը բնաւ չկայ : Ես և դուն՝ ամէնքս ալ մեղաւոր ենք : Երդ՝

3. Եմէնքս փրկութեան կարօտ ենք :

Եմէն մեղաւոր՝ եթէ չփրկուի , պիտի կորսուի : Ուրեմն դուք ամէնքդ փրկութեան կարօտ էք . և առանց անոր՝ անշուշտ պիտի կորսուիք : Մեզքէն՝ անոր աղտեղութենէն և անոր իշխանութենէն ազատելու էք , եթէ ոչ յաւիտեանս պիտի կորսուիք : Եւ հիմա Սի՛րելիներ , հիմա կորսուելու վրայ էք : Ըիմա աս փրկութեանը կարօտ էք : Ժամանակը կարճ է . վտանգնիդ խիստ սոսկալի է . ուրեմն մ՛ուշանաք . մի՛ կայնիք . փրկութիւն գտնելու աշխատեցէ՛ք . գործը վաղուան մի՛ թո-

դուք . փրկութիւն՝ յաւիտենական  
փրկութիւն հիմա ընդունեցէ՛ք . Ա-  
հա՛ հիմա է ընդունելի ժամանակը՝  
կ'ըսէ Պօղոս Առաքեալ : Բ. Կորն .  
Չ . 2 :

4. Յիսուսէն 'ի զատ մէկը չկրնար  
ձեզ փրկել :

Ինքզինքնիդ փրկելու կարող չէք :  
Բոլոր մարդիկ՝ բոլոր սուրբերը և  
բոլոր հրեշտակներն ալ ձեզ փրկելու  
կարող չեն . կարելի բան չէ : Ար-  
կինքին տակը միայն մէկ անուն մը  
տրուած է , որ անոր միջոցովը կր-  
նանք փրկուիլ . և աս օրհնեալ ա-  
նունը՝ Յիսուսի անունն է : Յիսուս՝  
ան խիստ զարմանալի Լակը՝ թէ՛  
Աստուած և թէ՛ մարդ եղող Լամա-  
նուէլը՝ մեզ փրկելու կարող չէ՞ , և  
մեզ փրկելու պատրաստ ալ չէ՞ : Այո՛ .  
կարող ու պատրաստ է . և յատկա-  
պէս երկինքէն եկաւ՝ որ մեզ մեղքէն  
ու դժոխքէն ազատէ : Այլ անկէ 'ի  
զատ փրկիչ չունինք : Աշխարհիս  
մեղքը վերցընող Աստուծոյ պատ-



րաստած գառը՝ ան է : Եւ Քրիստոս ձեզ չի՞ կրնար փրկել . անոր կարողութիւն չի՞ հասնիր՝ որ ձեզ մեղքէն ու յաւիտենական թշուառութենէ ազատէ : Ե,յո՛ . սակայն

5. Ես փրկութիւնը ստանալու համար՝ Քրիստոսի գալու էք .

Անոր վրայով լսել կամ կարգալ կամ շատ բան սորվիլ՝ բաւական չէ ձեզի , այլ անպատճառ բուն իրեն գալու էք : Եւ Քրիստոսի գալ՝ անոր հաւատալ է . անոր ապաւինիլ ըսել է : Աւետարանը կ'ըսէ թէ՛՝ անոր հաւատացողները պիտի փրկուին , և անոր չհաւատացողները պիտի դատապարտուին : Երկինքը տանող ճամբան՝ Քրիստոսի խաչէն կ'անցնի , և երկնային քաղաքը տանող ուրիշ ճամբայ բնաւ չկայ :

Ուրեմն՝ սիրելի եղբայրներս , անպատճառ Քրիստոսի գալու էք : Ան ձեզ փրկելու որչափ որ կարող և որչափ որ պատրաստ է , կամ անոր ձեզի համար պատրաստած փրկու-

Թիւնը որչափ առատ և ճրի ալ է նէ ,  
 ձեզի բնաւ օգուտ մը չընէր . եթէ  
 անոր չգաք , և զանհկայ չընդունիք ,  
 ձեզի բնաւ օգուտ մը չընէր :

6 . Հիմա գալու էք Քրիստոսի :

Ես փրկուեցի ձեզի շատ հարկաւոր է , և հի՛մա շատ հարկաւոր է : Յիսուս ձեզ հի՛մա կը հրաւիրէ : Ենոր աչքը՝ անոր սիրտը հիմա վրանիդ է . և ինքզինքը հիմա կ'ուզէ ձեզի տալ : Եւ եթէ սրտերնիդ իրեն բանաք հիմա , Քրիստոս հիմա մտնալով՝ պիտի բնակի հոն , և բոլոր կուռքերը պիտի կործանէ : Եթէ հիմա իրեն գաք , ձեզ հի՛մա կընդունի , ձեզ հի՛մա կը փրկէ , սրտերնիդ հի՛մա կը մաքրէ , և ձեզ կ'ուրախացնէ : Յիսուս ձերն է . աս մեծ փրկիչը բոլորովին ձերն է . ինկած հրեշտակներունը չէ՛ այլ յատուկ ձերն է , եթէ դուք զինքը ուզէք , ան յատուկ ձեզի համար է : Ուստի եկէ՛ք իրեն , հի՛մա եկէ՛ք . մ'ուշանաք , ժամ մըն ալ մ'ուշանաք . ուշանալը

խիստ ահարկու բան է . ուշանալով՝ մեծ վտանգներ կ'ունենաք : Ժամանակը կարճ է . վախճանը՝ մահը կը մօտենայ , և որչափ մօտ ըլլալը ո՞վ գիտէ : Սուրբ Հոգին տրտմելով՝ քեզմէ՛ որ ժամուն փախչելը ո՞վ գիտէ : Ուրեմն շուտով Բրիստոսի եկո՛ւր , և քեզ մեղքէն պիտի փրկէ : Յիսուսի եկո՛ւր , և յաւիտենական կեանք պիտի ունենաս :

“Ընոր անունը Յիսուս դնես , քանզի իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ” ըսաւ հրեշտակը :

Ես թուականէն տասնուեօթը կամ տասնուութը տարի առաջ՝ Աոստանդնուպօլիս Սողոմոն ա՛նուամբ Հրէայ մը կար , որ տակաւին կենդանի ըլլալով՝ Աալաթայ կամ Բերայ կը գտնուի : Ես Հրէան շատ անօրէն մարդ մըն էր , Մովսէսին չէր հաւատար , անհաւատ՝ անՆստուած՝ հայհոյիչ՝ գինով՝ ամենավատթար բնութիւն ունէր : Ա՛երջը ինքը խոստովանեցաւ թէ՛ “Ես ան

ժամանակը Մատուծոյ բոլոր պատուէրները կը կոտորէի . հինգնոց մը իմ կուռքս էր , քսաննոց մը մեծ կուռք մըն էր , իսկ հինգնոց մը Մատուծոյ պէս մեծ կ'երևար . և անկէ մեծ Մատուած չէի ճանչնար ու չէի ուզեր ” :

Օր մը Ալալթայի ժողովատեղին գնաց , և ան օրը մեր եղբայրը Տօգթըրը Հաֆլէր քարոզելով՝ Քրիստոնէայ եղած շրէայ մը մկրտեց : Սողոմոն բոլոր տեսածներուն և լսածներուն վրայ զարմացաւ և սկսեց խորհիլ թէ՛ գուցէ Յիսուս ան գալու Մեսիան է : Իր տունը դառնալով՝ դուռը գոցեց և իր ինկած՝ թշուառ՝ կորսուած և մեղքին գերի եղած ըլլալուն վրայ խորհեցաւ ու լացաւ : “Նշ ուզեցի” (ետքը ըսաւ եղբայրներուն) “Յիսուս Քրիստոսի աղօթք ընել , ուզեցի որ եթէ ճշմարտապէս մեղքէ փրկելու կարողութիւն մը ունի , զիս ալ փրկէ . զիս յատուկ մէկ մեղքէ մը փրկէ : Սակայն տեսայ որ՝ աղօթքները բոլոր Նբրա-

յեցերէն լեզուով ըլլալով, Յիսուսին անունը հոն չյիշուիր, և անոնց մէջ հիմակուան վիճակիս յարմար խօսք մը չգտնուիր” : Ատքը ինքնիրեն ըսաւ թէ՛ “Տէր Յիսուս միայն շրէի՞ց լեզուն գիտէ . Գերմաներէն ալ չի՞գ գիտեր, նայիմ, փորձով գիտնամ” : Ընմիջապէս ծնկան վրայ գալով բոլոր փափաքները Յիսուսի ականջը լեցուց, և անոր խնդրուածքը Յիսուս ընդունելով՝ ան մեղքէն՝ և ան ըսած մեղքին սէրէն ալ զանիկայ ազատեց : Սողոմոն համարձակելով ինքնիրեն ըսաւ “Մէյ մըն ալ փորձեմ” . և աղօթք ընելով ըսաւ, “Ո՛վ Տէր Յիսուս՝ դուն միայն մէ՞կ մեղքէ մը կրնաս ազատել . զիս գինովութենէ ալ չե՞ս կրնար ազատել . եթէ դուն ճշմարտապէս աշխարհի Փրկիչն ես, զիս աս մեղքէն ալ ազատէ, և ան մեղքէն՝ ան մեղքին դերութենէն ալ ազատեցայ : Աւ ես զանազան մեղքերու գերի ըլլալով՝ անոնց ծառայութենէն ազատուելով՝ հիմա գիտեմ որ աշխարհքիս մեղքը վեր-

ցընող Աստուծոյ Գառը՝ հարկաւ  
Յիսուս Քրիստոս է : Փորձառու-  
թեամբ գիտեմ" ըսաւ : Սողոմոն  
ետքը մկրտուեցաւ :

Սի՛րելի ունկընդիրներս , դուք  
Սողոմոնին պէս Քրիստոսի փրկելու  
կարող ըլլալը փորձեցի՞ք : Աս յա-  
ւիտենական օրհնեալ փրկութեան  
յարգը՝ զօրութիւնը՝ կարողութիւնը  
փորձելով սորվեցա՞ք : Արանի՛ փոր-  
ձով սորվողներուն : Ամէն :

## ԱՆԴԱՄԱՐՈՅԻՆ ԿՐԻՍՏՈՍԻ ՏԵՐՈՒԻԼԸ :

« Եւ կուգային իրեն՝ շորս մարդով վերցուած անդամալոյծ մը կը բերէին : Ու երբոր բազմութենէն չէին կրնար անոր մտննալ, քակեցին տանը յարկը՝ ուր որ Յիսուս էր, ու ծակ մը բանալով՝ վար իջեցուցին մահիճը՝ որուն վրայ պառկած էր անդամալոյծը : Եւ Յիսուս անոնց հաւատքը տեսնելով՝ ըսաւ անդամալոյծին : Որդեակ՝ քու մեղքերդ քեզի ներուած են : Ու դպիրներէն մէկ քանիները կային՝ որ հոն նստեր էին, և իրենց սրտերուն մէջ կը խորհէին՝ ըսելով, Ինչո՞ւ համար տսիկայ ասանկ հայհոյութիւններ կը խօսի . Ո՞վ կրնայ մեղաց թողութիւն տալ, բայց միայն Մտտուած : Եւ Յիսուս իսկոյն իմանալով իր հոգիին մէջ՝ որ անոնք այնպէս կը խորհին մէջերնին, ըսաւ անոնց . Ետ ինչ՞ կը խորհիք սրտերնուդ մէջ : Ո՞րք աւելի դիւրին է, անդամալոյծին ըսել՝ Կու մեղքերդ ներուած են, եթէ ըսել . Ելի՛ր, մահիճդ ան՝ ու քալէ՛ : Իայց որպէս զի գիտնաք՝ թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու, (ըսաւ անդամալոյծին) Կեզէ կ'ըսեմ, Ելի՛ր մահիճդ ան՝ ու տանդ դնա : Են ալ շուտ մը ելաւ, և իր մահիճը առնելով՝ ամենուն առջևը դուրս ելաւ, անանկ որ ամէնքը ապշած մնացին, և փառք տուին Մտտածոյ՝ ու ըսին թէ, Մտանկ բան մը ամենեկին տեսած չէնք : » Սարկ . ք . 3-12 :

**Ես խեղճը անդամալոյծ էր :**

**1. Անդամալոյծ ախար ի՞նչ է :**

**Անդամալոյծ ըսելով՝ կաթուածին զանազան տեսակները կը հասկցուի : Կաթուածը երբեմն բոլոր մարմինը կը զարնէ . երբեմն միայն մէկ կողմը,**

երբեմն կոկորդէն վար , և երբեմն միայն մէկ անդամը : Սակայն միշտ սոսկալի ախտ է : Մէկին անդամները աս ախտէն բռնուի՝ ալ բոլորովին անշարժ կ'ըլլայ կը մնայ , և անոր վիճակը շատ անգամ տանջարանով տանջուողներուն պէս է :

Աերևնայ թէ հոս յիշուած մարդուն բոլոր մարմինը զարնուած էր , այսինքն կաթուածը զանիկայ բոլորովին անդամալոյծ ըրաւ . անանկ որ գուցէ մէկ ոտքը կամ ձեռքը չէր կրնար շարժել :

Նղբայրներս՝ մեղքը՝ կաթուածէն աւելի գէշ է : Մեղքը՝ բոլոր մարմիննիս՝ խելքերնիս՝ սրտերնիս զարկաւ , բնութիւննիս բոլորովին ապականեցաւ . մեր մէջը առողջութիւն չկայ . ինքզինքնիս չենք կրնար առողջացընել , և մեզ առողջացընելու կարող մէկը չկայ , այսինքն՝ մարդոց մէջ կամ հրեշտակաց մէջ առողջացընելու կարող մէկը չկայ : Բրիստոսէն ՚ի զատ մէկը չկայ :



2. Ես խեղճ անդամալոյծը առանց օգնութեան չէր կրնար Քրիստոսի գալ :

Ինքնիրեն չէր կրնար դալ . չէր կրնար քալել . մէկ ոտք մը չէր կրնար շարժել : Իր բարեկամները զինքը Քրիստոսի տարին . և աս բանը շատ նեղութեամբ ըրին : Գրուած է թէ՛  
 “ Առաջային իրեն չորս մարդով վերցուած անդամալոյծ մը կը բերէին : Աւ երբոր բաղմութենէն չէին կրնար անոր մօտենալ , քակեցին տանը յարկը՝ ուր որ Յիսուս էր , ու ծակ մը բանալով՝ վար իջեցուցին մահիճը՝ որուն վրայ պառկած էր անդամալոյծը” : Մարկ . Ի . 3, 4 : Չանիկայ չորս մարդով տարին . ու Քրիստոսի առջևը դնելու համար՝ շատ աշխատեցան : Երկու հոգիով չէին կրնար զանիկայ վերցընել : Ընոր ազատութեանը համար չորս հոգի ինքզինքնին նուիրեցին . թէ իրենց զօրութիւնը և թէ ժամանակը վատնեցին . շատ աշխատեցան :

Սիրելիներս՝ ձեր շուրջը շատ անդամալոյծներ չկա՞ն որ ինքնիրեննին Քրիստոսի չեն գար : Ես տուներուն մէջ ձեր օգնութեանը կարօտ կոյրեր կան՝ որոնք ճամբան չեն տեսներ . խուլեր կան՝ որոնք Քրիստոսի հրաւերը չեն լսեր . խելքերնին կորսնցուցած մարդիկ կան որոնք իրենց վիճակը չեն գիտեր : Եւ անոնք ձեռքերնին Քրիստոսի չեն երկնցըներ : Ուստի զանոնք Եստուծոյ տունը՝ ժողովատեղին՝ Քրիստոսի քարոզուած և գտնուած տեղերը՝ ուրիշները տանելու են : Դուք զանոնք Յիսուսի՝ հաւատոյ և աղօթքի գիրկը տանելու էք : Կեանք ունեցողները՝ կեանք չունեցողներուն թող օգնեն . բժշկութիւն գտնողները՝ բժշկութեան կարօտ եղողներուն թող օգնեն :

3. Ես անդամալոյծը՝ հաւատքով տարուեցաւ Քրիստոսի :

Ար կարդանք թէ՛ (համար 5) Յիսուս անոնց հաւատքը տեսաւ : Չէ թէ

միայն անդամալոյծին հաւատքը՝ այլ զանիկայ տանողներուն հաւատքն ալ տեսաւ, թէ ան՝ և թէ անոնք հաւատք ունէին : Աթէ անոնք հաւատք չունենային, այնչափ շատ չէին աշխատեր, ան հիւանդը Քրիստոսի բերելու համար ջանք չէին ըներ : Չանիկայ տանելու համար խելքերնին գործածեցին, բոլոր զօրութիւննին վատնեցին, շատ յոգնեցան :

Կաւ եթէ ան հիւանդը հաւատք չունենար, չպիտի ուզեր որ բարեկամները զինքը տանին . քանզի չէ թէ միայն անոնց բռն և ծանրութիւն եղաւ, այլ հարկաւ իրեն շատ ցաւ ու նեղութիւն պատճառելու էր : Աւրեմն զանիկայ վերցընելով տանողը՝ հաւատքն էր . զանիկայ տանը յարկը հանողը հաւատքն էր . զանիկայ իր մահիճովը վար իջեցընողը՝ և բոլոր դժուարութիւններուն յաղթելով Քրիստոսի առջևը դնողը՝ հաւատքն էր :

Միրելիներս՝ մեր բոլորտիքը գտնուած հազարաւոր և բիւրաւոր

ախտերը՝ Քրիստոսի և անոր քարոզուած տեղը բերելու ինչո՞ւ չաշխատինք : Են չորս մարդոց ըրածին պէս ինչո՞ւ զօրութիւննիս և ժամանակնիս չվատնենք : Պատճառը մեր հաւատք չունենալը չէ՞ . կամ հաւատքնիս այնչափ տկար է որ մեզ չաշխատցըններ : Մենք հաւատքով Քրիստոսի գալով փրկութիւն կը գտնանք . և հաւատքով ուրիշները Քրիստոսի կը բերենք : Պողոս Առաքեալ կ'ըսէ՝ Եբր . Ժ. Ա . 6 : “Առանց հաւատքի անկարելի է Աստուծոյ հաճոյ ըլլալ” :

4. Տէրն մեր միշտ կը պատուէ հաւատքը :

Մարկոսի մէջ (Թ . 22) գրուած է՝ Յիսուս տղու մը հօրը ըսաւ . “Թէ որ կարող ես հաւատալու , ամէն բան կարելի է անոր՝ որ կը հաւատայ” : Այսինքն՝ եթէ տղադ չբժշկեմ , իմ կարողութեանս պակասութենէն չէ՛ այլ քու հաւատքիդ պակասութենէն է . եթէ աս բժշկութիւնը որ կու-

զես՝ քու հաւատքէդ վեր չէ, իմ ալ կարողութենէս վեր չէ: Տէրն մեր Փիւնիկ Եսորի Քանանացի կնկանը ըսաւ՝ «Ո՛վ կին քու հաւատքդ մեծ է, ուզածիդ պէս թող բլայ քեզի»: Մատ. Ժ. 28: Ե, յսինքն դուն աղնուականի մը պէս Եստուծոյ հետ մարանչեցար, և յազժող ելար, քեզմէ բան մը չեմ կրնար խնայել. ինչ որ կուզես խնդրէ՛, և քեզի պիտի տրուի ըսել կուզէ: Երանի՛ բոլոր հաւատացեալներուն:

Բնարանէն կը տեսնենք թէ Տէրն մեր աս մարդոց հաւատքը տեսնելով՝ ուզածնին և աւելի ալ տուաւ: Ընոնք միայն մարմնաւոր բաներու համար եկան, և Յիսուս անոնց թէ մարմնաւոր և թէ հոգեւոր բաներ տուաւ. միայն ժամանակաւոր օրհնութիւն ուզեցին, և Յիսուս անոնց ժամանակաւորին հետ՝ յաւիտենական օրհնութիւններ ալ շնորհեց: Հաւատքնին տեսածին պէս՝ անոնք խօսք մը չքսած՝ Յիսուս անդամալոյծին ըսաւ, «Արդեակ քու մեղքե-

րըդ քեզի ներուած են” : Անոր հոգին՝ մարմինէն աւելի յարգի սեպելով՝ առաջ անոր ամենամեծ պարգևը շնորհեց . և անոր հոգին բժշկելէն ետքը՝ մարմինն ալ բժշկեց : Հաւանական է որ աս ողորմելին՝ հոչակաւոր չարագործ մը եղած ըլլայ . և աս ախտը՝ բարկութենէ կամ մարմնաւոր մեղքէ մը պատճառաւ ըլլայ : Եւ հիւանդը՝ ասիկայ գիտնալով՝ հաւանական է որ՝ աչքերը Յիսուսի նայելուն պէս՝ սկսեց դողալ և վախնալ , և մեզաւոր ու անարժան ըլլալը՝ աւելի նեղեց զինքը քանթէ հիւանդութիւնը : Ուրեմն՝ “Որդեակքու մեղքերդ քեզի ներուած են” խօսքը՝ անոր հոգւոյն ի՛նչ մեծ ուրախութիւն և մխիթարութիւն տալը՝ ո՞վ կրնայ հասկնալ : Գուցէ ուրախութենէն մարմինը բոլորովին մոռցաւ , և առողջանալը մեծ բան չէր երևնար իր աչքին : Բանդի աս յաւիտեանական շնորհքը առնելէն ետքը , ամէն բան իրենք եղաւ , առողջութիւն և հիւանդութիւն՝ կեանք

և մահ՝ աս աշխարհքը և գալու աշխարհքը՝ Առաքեալին ըսածին պէս (Ա . Կորն . Գ . 22) բոլորը իրենք եղաւ :

Աս անդամալոյծը աշխարհային մարդոց ըսածին պէս չըրաւ , այսինքն՝ չբարկացաւ . չըսաւ թէ՛ Աս հոգևոր շնորհքները առնելու համար չեկայ , զանոնք ուզողներուն տուր , բայց ես մարմնոյս առողջութիւնը կուզեմ : Ատ հիւանդներ կան որ նախ և առաջ բժիշկ՝ դեղ՝ և առողջութիւն կ'ուզեն : Խորհելու համար աւելի մեծ բաներ կան , բայց չեն խորհիր . հոգիին խաղաղութիւնը խորհիլ չեն ուզեր : Բայց գոհութիւն ըլլայ որ աս հիւանդը ասանկ չէր . առաջ Աստուծոյ թագաւորութիւնը և անոր արդարութիւնը ընդունելով , փորձառութեամբ գիտցաւ որ մարմնաւոր բաներն ալ կը տրուին : Ալ իր հիւանդութենէն աս կերպով բժշկուիլը՝ անոր հազար անգամ աւելի ընդունելի և պատուական էր . քանզի՝

Յ . Ընոր բժշկուիլը՝ ապացոյց մըն էր թէ իր մեղքերը ներուեցան :

Ուր որ գնաց , բժշկուած մարմնովը կատարեալ ապացոյց մը տարաւ իր հետը՝ թէ բոլոր մեղքերը ներուեցան : Ըմէն անգամ մարմինին վրայ նայելուն՝ կատարեալ ապացոյց տեսաւ թէ Յիսուս մեղքեր ներելու իշխանութիւն ունի . քանզի Տէրն մեր Յիսուս ան՝ աս հրաշքին հետ կապեց . այսինքն աս հրաշքը գործելու կարողութիւնը՝ իր մեղքեր ներելու ունեցած կարողութեանը հետ կապեց : Ընանկ որ մարմինը առողջանալով՝ կասկած չմնաց թէ մեղքերն ալ ներուեցան : Սահիճը վերցընելով տանելու կարող ըլլալը՝ կատարեալ ապացոյց մըն էր թէ՛ Յիսուս իր մարմինը բժշկելուն պէս իր հոգին ալ բժշկեց : Ըս անդամադոյժը իր տունը չէ թէ տրտմութեամբ՝ այլ ուրախութեամբ դառնալու էր : “ Բու մեղքերդ քեզի



ներուած են" խօսքը ի՛նչ բերկրու-  
թիւն բերող խօսք մը ըլլալու էր :

Ընիկայ բնաւ չէր կրնար մոռնալ :  
Ըմէն անգամ Քրիստոսը միտքը բե-  
րելուն կամ անոր անունը լսելուն ,  
միտքը գալու էր թէ բժշկութիւն  
գտայ , հազար անգամ փառք ըլլայ  
որ յաւիտենական փրկութիւն գտայ :  
Եւ Յիսուսի իրեն ըրած ողորմութիւ-  
նը դրացիներուն չպատմե՞ց . ան-  
շուշտ պատմեց , քարոզեց : Եւ կա-  
րելի է շատերուն օրհնութեան պատ-  
ճառ եղաւ . այսինքն պատճառ եղաւ  
որ՝ շատերը մտքերնին Քրիստոսի  
դարձրնեն , և զանիկայ տեսնել՝ զա-  
նիկայ գիտնալ՝ անոր մօտենալ՝ անկէ  
սորվիլ՝ և անոր հետ խօսիլ ուզեն :

Եղբայրներս՝ մեղքերնիդ ներուե-  
ցա՞ն : Այսօր ձեզի քարոզուած  
Յիսուսը՝ մեղքեր ներող էակ մըն է .  
ինչո՞ւ չներուած պիտի երթաք : Յի-  
սուս բոլոր մեղքերնիդ ներելու կա-  
րող և պատրաստ է . աս մեծ շնորհ-  
քը ինչո՞ւ չէք ընդունիր : Բնաբա-  
նին մէջ յիշուած անդամալոյծը՝ ան

Ժողովքէն օրհնութիւն առած գնաց,  
 և դուք օրհնութիւն չառած պիտի  
 երթաք : Դնչո՞ւ համար . փրկող՝  
 փժշկող՝ ան բարերար Յիսուս հոս  
 չէ՞ : Օւնիկայ գտնալ կուզեմ՝ բայց  
 չեմ կրնար գտնալ կրնա՞ք ըսել : Ոչ,  
 չէք կրնար ըսել : Ընոր հաւատա-  
 ցէ՞ք, և մեղքերնիդ կրներուին . այո .  
 գիտեմ որ կրներուին : Եթէ անոր  
 հաւատանիդ գիտէք, գիտցէք նաև  
 թէ մեղքերնիդ անշուշտ ներուած  
 են :

Սակայն Տէրն մեր աս խեղճ ան-  
 դամալոյծին “Ելիբ” ըսած ատենը,  
 անդամալոյծը “Չեմ կրնար ելլել”  
 չըսաւ : Չըսաւ թէ “Աարելի չէ Տէր  
 իմ՝ առաջ գիս առողջացո՛ւր, ետքը  
 ուրախութեամբ պիտի ելլեմ” : Տէրն  
 մեր ըսաւ իրեն, “Բեզի կ’ըսեմ, Ե-  
 լիբ՝ մահիճդ ա՛ռ՝ ու տո՛ւնդ գնա” :  
 Տէրն մեր անկարելի բան մը հրա-  
 մայեց իրեն, և ան առանց խօսք մը  
 ըսելու կամ պատճառանք մը գտնա-  
 լու հնազանդեցաւ : Եւ փորձով  
 գիտցաւ թէ՛ իրեն հրամայողը՝ օգ-

նական ալ է . և իրեն առողջութիւն  
 ու բժշկութիւն տուողն էր : Բայց  
 եթէ չհնազանդիր , անօգնական  
 տկար՝ անբժշկելի՝ և աններելի պիտի  
 մնար : Եւ եթէ դուք սիրելիներս՝  
 եթէ դուք Բրիստոսի հրամանին  
 չհնազանդիք , եթէ՝ Մեկարելի է՝  
 չեմ կրնար ընել՝ ըսէք , օգնութիւն  
 չէք գտնար , զօրութիւն չէք առներ ,  
 բժշկութիւն չէք տեսներ , ներում  
 չէք առներ , մեղքերնուդ մէջ պիտի  
 մեռնիք :

## ՎՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՒԷՐԸ :

“ Այէք ինձի բոլոր յոգնած ու բեռնաւորոսներ , և ես մեզ պիտի հանգչեցընեմ ” : Մատ . ԺԿ . 28 :

Հոս հրաւիրող կայ , և հրաւիրեալներ կան : Հրաւիրողը՝ Տէրն մեր Վրիստոս է , և հրաւիրեալները մեղաւորներն են , ամէն մեղաւոր՝ այսինքն ամէն մարդ : Վանգի ամէն հողի՝ հանգիստ կուզէ , և աս հանգիստը աշխարհիս մէջ չգտնուիր : Ուստի աս հանգիստը ունենալու համար որուն երթալիս կը սորվինք :

1. Արկնից հրեշտակներուն երթալու չենք :

Անոնց ո՛չ մէկը և ոչ բոլորը մէզ Սատանային ձեռքէն կրնան ազատել : Անոնք մեր մեղքերուն համար քաւութիւն չեն կրնար ընել : Մեզի համար բարեխօսելու Աստուծոյ առջևը ելող՝ և մեզի համար աղէկ և

ընդունելի խօսք խօսողները հրեշտակները չեն : Ընոնք խղճմտանքնուս ահարկու ձայնը՝ և մեր կոտորած օրէնքին աղաղակները չեն կրնար հանդարտեցնել : Ընոնք ամենուրեք չեն . և կրնայ ըլլալ որ անոնց կանչած ատեննիս՝ շատ հեռու ըլլան մեզմէ , և աղօթքնիս չեն լսեր , և մեզի օգնութիւն չեն կրնար հասցընել : Եւ եթէ հրեշտակները մեր քովն ալ ըլլային՝ և աչքերնուս երևնային , և մենք անոնց ոտքը իյնալով աղաղէինք՝ որ մեզ մեզքէ ու դժոխքէն ազատեն , անոնք պիտի ըսեն , Չէ թէ մեզի՝ չէ թէ մեզի՝ մեր Տէրօջը գացէ՛ք : Հրեշտակները մեր երկրպագութիւնը չեն ընդունիր , այլ մեր խնդրուածքը մերժելով՝ պիտի ըսեն , Խաչեալ Քրիստոսը քարոզողները կանչեցէ՛ք , անոնց քարոզած Յիսուսին հաւատացէ՛ք՝ վստահեցէ՛ք՝ ապաւինեցէ՛ք : Մեզի համար մեռնող և բարեխօսողը՝ Քրիստոս է , հրեշտակները չեն : Ընոնց պաշտօնը չէ որ մեզի հանգս-

տուլթիւն տան . աս պաշտօնը յատուկ Վրիստոսինն է : Ան յատուկ աս պաշտօնը կատարելու դիտաւորուլթեամբ եկաւ . աս դիտաւորուլթեամբ մարմին առաւ , մարդկային բնութիւն առաւ , և իր կեանքը տուաւ : Ուրեմն ինչո՞ւ զանիկայ չգործածենք . ինչո՞ւ զանիկայ թողելով՝ աչքերնիս անոնց դարցընենք : Ասանկ ընելով թէ՛ անոնց և թէ՛ Վրիստոսի տրտմութիւն կը պատճառենք : Ուրեմն հրեշտակներուն երթալու չենք : Անոնք մեր փնտուած հանգստութիւնը չեն կրնար տալ մեզի :

## 2. Օրէնքին երթալու չենք :

Օրէնքը մեզի ի՞նչ կրնայ ընել : Օրէնքը ողորմութիւն չգիտեր , այլ իր իշխանութիւնը ՚ի գործ դնելով՝ միայն դատապարտել գիտէ , և մենք ողորմութեան կարօտ ենք : Օրէնքը մեզ անմեղ չկրնար հանել , այլ մեզ յանցաւոր կը հանէ . քանզի անիկայ կոտորած ենք . և օրէնքը՝ զինքը կո-

տրողները , իբրև չկոտրողներ չկոտար ճանչնալ : Պօղոս Առաքեալ կ'ըսէ , “Մահին խայթոցը մեղքն է , ու մեղքին ոյժը՝ օրէնքը” : Ա . կորն . ԺԵ . 56 : Ուրեմն հանգստութեան համար օրէնքին չնայինք : Օրէնքը մեզի խաղաղութիւն չտար , վախ կու տայ : Խղճմտանքնիս անհանգիստ ընողը և յոյսերնիս կտրողը՝ օրէնքն է . ուրեմն օրէնքը ինտո՞ր կրնայ խղճմտանքնիս հանդարտեցընել : Գող մը՝ աւազակ մը՝ մարդասպան մը՝ օրէնքը կոտորող մը խաղաղութեան համար օրէնքին կ'երթայ : Ո՛չ . օրէնքէն կը փախչի . քանզի օրէնքը զինքը կը դատապարտէ . անոր սրտին բնաւ խաղաղութիւն չի տար . և զանիկայ հալածելով՝ անոր կեանքը կը փնտռէ : Անմեղ մը՝ օրէնքը չկոտորող մը՝ մաքուր՝ բարի՝ սուրբ մէկը՝ հանգիստ չփնտռեր , քանզի հանգստութենէ զուրկ չէ : Սահայն ամէն մեղաւոր՝ այսինքն օրէնքը կոտորողը՝ անհանգիստ՝ անխաղաղ է : Աւ Պօղոս Ա-

ուանքեալ կ'ըսէ թէ՛ Մէկ մարմին մը պիտի չարդարանայ օրէնքին գործքերովը (Հռովմ. Գ. 20) քանզի օրէնքը բարկութիւն կը գործէ (Հռովմ. Գ. 18). և մեղաւորներուն վրայ բարկութենէն 'ի զատ բան մը չբերեր : 'Իարձեալ կ'ըսէ , " Օրէնքը մէջտեղը ինկաւ որ յանցանքը շատնայ" , (Հռովմ. Ն. 20 ,) չէ թէ մեզքը մէջտեղէն վերցընելու համար՝ այլ " շատցընելու" համար . այսինքն որ մեղքին մեծութիւնը և պղծութիւնը երևնայ : Եւ Յակոբոս Առաքեալ կ'ըսէ , " Ով որ բոլոր օրէնքը պահէ , ու մէկ բանի մէջ յանցաւոր ըլլայ , անիկայ պարտական կ'ըլլայ" : Այսինքն օրէնքը կոտրած եղաւ , և յաւիտեանս օրէնքը կոտորող մէկը պիտի ճանչցուի . և այլ ևս իբրև օրէնքը չկոտորող պիտի չգիտցուի :

Եղբայրներս , դուք Աստուծոյ օրէնքը կոտորողներ էք , ամէն մէկդ ան վիճակին մէջն էք . և ձեր խղճմրտանքին հանգիստ՝ և հոգինուդ խաղաղութիւն կ'ուզէք : Ու եթէ օրէն-



քին երթաք, օրէնքը ձեզ աւելի ան-  
 հանդիստ կ'ընէ, և վախերնիդ կ'ա-  
 ւելցընէ: Ուստի անոր երթալու չէք:  
 Օրէնքը ձեզ դատապարտելով՝ ո՞վ  
 ձեզ օրէնքին դատապարտութենէն  
 պիտի ազատէ: Եթէ օրէնքին եր-  
 թաք, ան ձեզ փրկելուն տեղը՝ ձեզ  
 բարկութեան կը դատապարտէ: Ե-  
 թէ հրեշտակներուն երթաք, անոնք  
 ձեզ կը մերժեն կամ՝ ձեզմէ կը փախ-  
 չին: Եթէ աշխարհին նայիք, ան  
 ձեզ կը խաբէ: Եթէ երկինքը շահե-  
 լու համար ձեր դործքերուն՝ ձեր ար-  
 դարութեանը ապաւինիք, ձեր յոյսը  
 աւազի վրայ հիմնէք, բոլորը աւազի  
 վրայ շինուած տան պէս կը փլչի:  
 Ուրեմն խաղաղութեան համար ու-  
 ըր՞ն երթալու ենք, աչքերնիս ու-  
 ըր՞ն վերցընելու ենք:

### 3. Բրիստոսի երթալու ենք:

Ո՛չ թէ հրեշտակներուն՝ այլ հրեշ-  
 տակաց Տէրօջը երթալու ենք: Ո՛չ  
 թէ օրէնքին՝ այլ օրէնքը ամբողջ կա-  
 տարող և մեզ օրէնքին անէծքէն ա-

զատող Քրիստոսի երթալու ենք :  
 Ո՛չ թէ աշխարհին՝ այլ մեզ աս աշ-  
 խարհիս պղծութիւններէն և չարու-  
 թիւններէն ազատող Քրիստոսի եր-  
 թալու ենք : Ո՛չ թէ մեր արդարու-  
 թեանը՝ այլ մեր արդարութիւնն ե-  
 ղող Քրիստոսի ապաւինելու ենք .  
 անոր երթալու ենք : Մեզ հրաւի-  
 րողը՝ ան է . ան մեզ իրեն հրաւիրե-  
 լով՝ “Ինծի եկէք” կ'ըսէ : Մեր  
 բնութիւնը առնող՝ մեղքերնիս վեր-  
 ցնող և մինչև մեր ցած վիճակին  
 զիջանող Քրիստոսին երթալու ենք :  
 Ըն կրնայ մեզի հանգիստ տալ , և  
 կ'ուզէ տալ . և անկէ՛ի զատ ուրիշ  
 մը չկայ : Ո՛վ խղճմտանքի հանքիստ  
 փնտռող եղբայրներ . ո՛վ հոգիի խա-  
 ղաղութիւն ուզող սիրելիներ՝ Քրիս-  
 տոսի գացէ՛ք . անոր նայեցէ՛ք . անոր  
 վստահացէ՛ք . անոր ապաւինեցէ՛ք .  
 և խաղաղութիւննիդ կատարեալ պի-  
 տի ըլլայ , ու հանգիստնիդ յաւիտե-  
 նական պիտի ըլլայ :

Սակայն Քրիստոսի ի՞նչպէս պի-  
 տի երթանք :

(1.) Հաւատքով երթալու ենք :

Անհաւատութիւնը Քրիստոսը չտեսներ և չհասկնար . անոր փրկութիւնը չբռներ և չգործածեր . զանիկայ մեզմէ զատելով՝ յաւիտեանս կը հեռացրնէ : Բայց հաւատքը Քրիստոսի կը տեսնէ և մեզ իրեն կը մօտեցրնէ , անոր փրկութիւնը կը բռնէ , և հոգիսուս յաւիտենական օգուտին համար կը գործածէ :

(2.) Խոնարհ սրտով երթալու ենք :

Հպարտութեամբ մէկը Քրիստոսի չկրնար երթալ . անկարելի է : Հպարտութիւնը՝ մեզ Քրիստոսի երթալէն կ'արգիլէ . քանզի Տէրն մեր ինքը հեզ ու խոնարհ ըլլալով՝ հպարտներու հետ չխօսիր : «Ամբարտաւաններուն հակառակ կը կենայ , բայց խոնարհներուն շնորհք կու տայ» կ'ըսէ Աւետարանը : Ա . Կեա . Ե . 5 :

(3.) Ապաշխարութեամբ երթալու ենք :

Անապաշխար մէկը՝ Քրիստոսի չերթար և չկրնար երթալ : Իր մեղքը սիրողը իր մեղքը կրնա՞յ ատել, իր մեղքէն կրնա՞յ ղղջալ, և անկէ ազատելու համար Քրիստոսի կրնա՞յ երթալ : Ա՛չ. չկրնար երթալ : Անապաշխար հոգին մեզ Քրիստոսէն հեռաւ կը բռնէ՝ որ իրեն չմօտենանք . և ան մաքսաւորին պէս՝ սրտանց “Ա՛յ Աստուած՝ ողորմէ ինձի մեղաւորիս” չըսենք :

(4.) Աշխարհը ձգելով երթալու ենք :

Եթէ սիրտը՝ աշխարհին սիրովը լեցուած ըլլայ, տեղ չմնար որ Քրիստոսի վրայ եղած վստահութիւնը գտնուի : Աշխարհին սէրը՝ Քրիստոսի և մեր մէջտեղը շատ բարձր և անանցանելի լեռան մը պէս՝ մեզ Քրիստոսէ զատելով կը հեռացընէ . և մենք անոր մօտենալու կարող չենք ըլլար :

(5.) Ողորմութեան համար աղօթք  
ընելով երթալու ենք :

Քրիստոսի հաւատալ՝ մեղքէն ապաշխարել՝ և ողորմութեան համար աղօթել՝ բոլորը մէկգմէկու կապուած են : Հաւատքը՝ Քրիստոսը կը տեսնէ, և մեզ անոր կը մօտեցընէ. ապաշխարութիւնը՝ լալով Փրկչին կը փափաքի. և աղօթքը՝ անոր աղաչելով ողորմէ՛ ինձի մեղաւորիս կ'աղաղակէ : Աղօթք չընողը՝ Քրիստոսի չկրնար գալ, անոր չկրնար աղաչել : Ենապաշխար՝ հպարտ և աշխարհասէր մէկը Քրիստոսի չկրնար գալ, զանիկայ չտեսներ, անոր հրաւերը չսեր :

Ուրեմն Քրիստոսի երթալու ենք հաւատքով՝ խոնարհութեամբ՝ ապաշխարելով՝ աշխարհը ձգելով և ողորմութիւն խնդրելով : Սակայն—

(6.) Մեր զօրութեամբը երթալու  
չենք :

Ինաւ մէկը իր զօրութեամբը Քրիստոսի չգնաց : Մեռած մէկուն

իր զօրութեամբը առողջանալը լսած էք : Սառած ջուրը՝ արևէն կրակէն՝ տաքութենէն հալելու է , բայց ինքնիրեն չկրնար հալել : Բար սիրամը Սուրբ Հոգւոյն միջոցովը կը կակուղնայ , բայց ինքնիրեն չկակուղնար : Ասանկ ալ բնաւ մէկը ինքնիրեն Բրիստոսի չկրնար երթալ : Յիսուս ինքը ըսաւ , “ Մէկը չկրնար ինծի գալ , թէ որ զիս խրկող Հայրը անիկայ չքաշէ ” : Յովհ . Ջ . 44 : Ամենակարող Աստուածը՝ իր բազուկովը մեզ տանելու է , մեզ քաշելու է , մեզի առաջնորդելու է . եթէ ոչ՝ չենք կրնար երթալ : Ուրեմն Աստուծոյ ձեռքէն փախելու չենք . անկէ զատուելու չենք . անոր Հոգին տրտմեցընելու չենք . քանզի առանց անոր բան մը չենք կրնար ընել : Առանց Աստուծոյ Բրիստոսի չէք կրնար երթալ եղբայրներս , և առանց Բրիստոսի Աստուծոյ չէք կրնար երթալ : Երկուքին ալ կարօտ ենք . և երկուքն ալ մեզի օգնել կ'ուզեն . երկուքն ալ մեզ կը հրաւիր-

րեն : Երանի՛ աս հրաւերը ընդու-  
նողներուն :

“Եկէ՛ք ինձի , բոլոր յողնած ու  
բեռնաւորածներ , և ես ձեզ պիտի  
հանգչեցրնեմ” :

Քարոզիչ ըլլալէս ետքը՝ շատ  
տարիներ տևեց , և ես աս օրհ-  
նեալ խօսքերը իբրև բնաբան ըն-  
տրելով՝ քարոզելու չէի համարձա-  
կեր . կը վախնայի որ աս խօսքին  
լեցուն նշանակութիւնը չհասկընա-  
լով , և անոր պատուականութիւնը՝  
քաղցրութիւնը՝ և զօրութիւնը փոր-  
ձով չզիտնալով՝ անոր լոյս տալուն  
տեղը՝ միայն մթութիւն բերեմ : Եւ  
միշտ աղօթք ընելու ենք որ Ես-  
տուած թէ՛ խօսողին և թէ ունկն-  
դիրներուն օգնէ :

Ես օրհնեալ խօսքերուն մէջ թէ՛  
հրաւիրող և թէ՛ հրաւիրեալներ կան :  
Հրաւիրեալները դուք էք սիրելի-  
ներս : Հրաւիրողին վրայով թէ և  
քանի մը խօսք ըսի , բայց քանի մը  
բան աւելի կ'ուզեմ ըսել :

Հին Պատմութեանց մէջ կար-

դացի որ՝ երկրի մը մէջ խիստ աղքատ մէկը գտնուելով՝ անոր բոլոր ազգականներն ալ խիստ աղքատ ըլլալով՝ ինքը շատ անգամ անօթութեան՝ ծարաւութեան՝ յոգնութեան նեղութիւնները քաշեց . վշտալից՝ տրտմալից և լացող մէկ մըն էր . ու թէ՛ դրացիներէն ու թէ՛ եկեղեցիէն ու ազգէն անարգուած ու մերժուած մէկ մըն էր : Ասկայն ան աղքատ ու թշուառ մարդը , անհանգիստ և խաղաղութիւն չգիտցող աշխարհին նայելով՝ ձայնը վերցընելով ըսաւ ,  
 « Այե՛ք ինձի բոլոր յոգնած ու բեռնաւորածներ , ու ես ձեզ պիտի հանգչեցընեմ » : Աս ի՛նչ խայտառակութիւն է :

Քանզի աս հրաւիրողը՝ արտի մը կամ պալատի մը տէրը չէր , կառքի մէջ բնաւ նստած չէր . այլ գիւղէ գիւղ հետի կ'երթար . աղքատները՝ հիւանդները՝ տղաքները օրհնելու համար քաղաքները հետի կը պտըտէր . պալատի մը մէջ չբնակելով՝ առանց յարկի նաւի մը մէջ կամ



ծառերու տակ կը քնանար . յոգնած  
 ատենը՝ հորի մը քով կը նստէր . իր  
 Հօրը աղօթելու համար առանձնա-  
 նալ ուզած ատենը՝ լեռը ելլելու կամ  
 անապատը երթալու ստիպուած էր .  
 քանզի բնաւ սենեակ մը չուներ որ  
 ներս մտնալով դուռը գոցէ : Աս  
 անձը մարդոց շատերէն աւելի ցած  
 վիճակի մէջ էր . մեր ամենացած վի-  
 ճակին մէջ գտնուեցաւ , անոր փոր-  
 ձութիւնները շատ սաստիկ՝ և հոգին  
 փնտռող թշնամիները շատ և ան-  
 գութ էին : Սակայն աս վշտաց տէր  
 և ցաւոց տեղեակ՝ աս ցած և անար-  
 գուած մարդը՝ ահա՛ աշխարհիս մէջ-  
 տեղը կայնելով՝ “Նկէք ինձի , բոլոր  
 յոգնած և բեռնաւորածներ , ու ես  
 ձեզ կը հանգչեցընեմ” ըսաւ :

Ո՛չ մէկ թագաւոր մը՝ որչափ որ  
 մեծ կամ հարուստ ըլլայ , բոլորն աշ-  
 խարհքն ալ վաստըղի , հոս յիշուած  
 հանգիստը չկրնար տալ , մինչև ան-  
 գամ մէկ հոգիի մը չկրնար տալ . ո՞ր  
 մնաց որ բոլոր մարդկային ազգին  
 տայ : Սակայն աս Արդին Մարդոյ

Յիսուսա՛ որմէ կոյրերը չվախնալով՝  
 գալով անոր ձեռքին կրնար դպչել ,  
 որուն գիրկը տղաքներ կրնային ա-  
 պաստանիլ , որուն հետ որբեւարիներ  
 և որբեր համարձակ կրնային խօսիլ ,  
 և մարդոց ամենաազքաւոր՝ ամենա-  
 տկարը՝ ամենավատը՝ ամէնէն յիմարը  
 անոր հետ նստելով՝ անկէ երկնային  
 գասեր կրնային առնել , ահա՛ աս  
 աղքատը՝ աս Արդին Մարդոյ՝ Արդին  
 Մստուած ալ է . և առանկով երկրի  
 ծայրերը կրնար հրաւիրել՝ որ իրեն  
 գալով յաւիտենական խաղաղութիւն  
 գանան : Բոլոր խաղաղութեան՝  
 հանգստութեան՝ օրհնութեան՝ յա-  
 վիտենական կենաց և երջանկու-  
 թեան անհուն աղբիւր եզոզը՝ Յի-  
 սուս է : Աս աշխարհը եկած ատենը՝  
 դրախտին բոլոր օրհնութիւնները  
 հետը բերաւ . երկնից բոլոր բարե-  
 րարութիւնները սրտին մէջ գտնուե-  
 լով՝ և օրհնութիւնները ձեռքին մէջ  
 ըլլալով՝ աս աշխարհը եկաւ . և ինքք  
 երկինքը դարձած ատենը , աս օրհ-  
 նութիւնները մեզմէ առնելուն տե-

ղը՝ աւելի տուաւ , անոնց վրայ գումարեց , աւելցուց :

Երդ Եղբայրներս՝ ինչո՞ւ հոս անմիաթար կը նստիք : Ինչո՞ւ հանգիստէ զուրկ կը մնաք , ինչո՞ւ կուրութեան՝ յիմարութեան և մեղքերնուդ մէջ կը մեռնիք : Ինչո՞ւ գերեզմանը ու յաւիտենականութեան յուսահատութեամբ կ'երթաք : Քրիստոս « Եկէք ինձի » ըսելով՝ ձեզ կրկանչէ . ձեզ՝ ամէն մէկդ , ո՛չ թէ միայն դրացիներնիդ՝ այլ ձեզ ալ կը հրաւիրէ : Եւ անոր օրհնեալ հրաւերը ինչո՞ւ չես ընդունիր՝ ո՞վ մեռնելու վրայ եղող , կեանք և հանգիստ փնտռող և աշխարհիս մէջ չգտնող Եղբայր :

Սիրելի ունկնդիրներս՝ եթէ կարելի է , ամէնքդ առնելով Քրիստոսի տանիմ , բայց կարելի չէ . բնաւ մէկդ չեմ կրնար տանիլ : Ղամբան կրնամ ցուցունել , բայց ուրիշ բան չեմ կրնար ընել : Եւ աս ալ դիտեմ որ դուք ձեզմէ Քրիստոսի չէք կրնար գալ : Տէրն ինքը ըսաւ , « Մէկը չկր-

նար ինծի գալ , թէ որ գիտ խրկող  
 Հայրը անիկայ չքաշէ” : Աւ Հայրն  
 Աստուած ձեզ ո՛չ թէ բռնութեամբ՝  
 այլ խիստ բարակ թելով մը՝ այսինքն  
 ձեր խղճմտանքովը և Սուրբ Հոգւոյն  
 քաղցր ազդեցութեամբ կը քաշէ :  
 Աւրեմն աս խիստ բարակ թելը մի՛  
 կտրէք , մի՛ կոտրէք . քանզի եթէ  
 անիկայ կտրէք , ձեզ Քրիստոսի  
 քաշելու բան մը չմնալով՝ Քրիստոս  
 սէն յաւիտեանս զատուելով՝ յաւի-  
 տենական յուսահատութեան մէջ  
 պիտի երթաք :

## ԵՆ ՍԻՐԵԼԻ ԵՆՁԻՆ ԿԵՐԿՈՒՆԻՒԼԸ :

“Շատ բարի գործքեր ցուցուցի ձեզի իմ Հորմէս, անոնցմէ թր գործին համար զիս կը քարկոծէք” : (Յովհ. Ժ. : 32 :

Արկարդանք թէ ասկէց առաջ շրէաները քարեր վերցուցին որ մեր Տէրոջը նետեն : Բայց անիկայ պահուելով՝ մէջերնուն անցաւ, և ազատեցաւ : Հոս նորէն “շրէաները քարեր առին որ զանիկայ քարկոծեն” : Տէրն մեր չաղաղակէց թէ երկինքէն կրակ թող իջնէ, և զանոնք կորսընցընէ . այլ անոնց խիստ ազդու հարցում մը ըրաւ, “Շատ բարի գործքեր ցուցուի ձեզի իմ Հորմէս, անոնցմէ ո՞ր գործին համար զիս կը քարկոծէք” :

Ես հարցմանը մէջ՝ մտածութեան արժան շատ բաներ կայ . և անոնցմէ ոմանք հիմա ձեզի յայտնեմ :

## 1. Տէրն մեր Բրիստոս գործ դործեց :

Աստուծոյ որդին աշխարհին վրայ եղած ատենը պարապ չպըտըտեցաւ անգործ չմնաց . իր հանգիստը չփնտուեց . այլ աշխատեցաւ , շատ դործ տեսաւ : Տակաւին 12 տարեկան հազիւ կար՝ կը տեսնենք որ վարդապետներուն մէջ նստած անոնց մտիկ կ'ընենք և բան կը հարցունէր : Բրիստոս աս աշխարհը չեկաւ որ ծոյլ ըլլայ՝ անգործ մնայ : Ան միշտ գործի մէջ էր : Աւ մեզի օրինակ թողուց՝ որ իր շաւիղներուն հետեւինք :

Մեր Փրկիչը՝ Թագաւորը՝ ան թագաւորաց թագաւորը՝ Բրիստոս ըսուած Մեսիան ծոյլ չէր՝ և ամօթ է որ մէկը կամաւ անգործ մնայ : Որչափ որ հարուստ ալ ըլլայ , ազնուական ալ ըլլայ , ամօթ է որ անգործ մնայ :

## 2. Քրիստոսի դործած դործերը աղէկ գործեր էին :

Պետրոս Առաքեալ Քրիստոսի վրայ խօսած ատենը ըսաւ, Պտրտելով՝ բարիք կրնէր : Աւ Մատթէոս (Թ. 35) կը գրէ՝ «Յիսուս կը պտրտէր բոլոր քաղաքները ու դիւղերը, և անոնց ժողովարաններուն մէջ կը սորվեցընէր, ու կը քարոզէր արքայութեան աւետարանը, ու կը բժշկէր բոլոր ախտերը ու բոլոր հիւանդութիւնները ժողովուրդին մէջ» : Ախտերը որչափ գէշ՝ և հնացեալ ըլլային, և որչափ անդարմանելի սեպուէին՝ Տէրն մեր բոլորը փարատեց : Աոյրերուն աչքերը բացաւ, խուլերուն լսել տուաւ, համբերուն խօսիլ տուաւ, կաղերուն քալել տուաւ, անդամալոյծները բժշկեց . դէերը հանեց . հիւանդները առողջացուց . մեռելները յարուց . և բոլոր կոտրած սրտերը մխիթարեց : Տէրն մեր Քրիստոս տունը նստելով իր հանքաստուծեանը չէր նայէր . այլ

քաղաքէ քաղաք՝ աղքատ գիւղերը՝  
 աղքատ տուները՝ աղքատ մարդոց  
 կ'երթար . միշտ բարիք կ'ընէր : Ուր  
 որ գնաց իր ոտքերուն շաւիղները  
 թողուց : Ամէն չքաւորին և կարօ-  
 տին նայիլ և օգնել ուղեց . ամէն  
 աղքատի և տարապեալի պաշտպան  
 եղաւ , որբեարիներուն արտասուք-  
 ները սրբել՝ և յիմարներուն սորվե-  
 ցընել ուղեց . ամէն մեղաւոր փրկե-  
 լու աշխատեցաւ . և ամէն յոգնած  
 հոգի իրեն հրաւիրեց հանգիստ գտ-  
 նելու համար : Մարդոց փրկու-  
 թեանը համար գիշեր ցորեկ աշխա-  
 տեցաւ :

Արդ անոր գործերը աղէկ դործեր  
 չէին : Այո . անոր հրաշքները բա-  
 րերարութեան հրաշքներ էին , մար-  
 դասիրութեան՝ սիրոյ հրաշքներ էին :  
 Բարկութիւն ցուցունող հրաշքներ  
 չէին , այլ սէր ցուցունող հրաշքներ :  
 Մարդկային սեռին համար՝ բոլոր  
 կեանքը վատնեց , ազօթեց , լացաւ ,  
 և իր հոգին տուաւ : Անոր կեանքը՝  
 և անոր մահը՝ երկուքն ալ՝ բոլորո-



վին՝ միօրինակ աղէկ գործ մըն էր .  
 Եւ աղէկ գործերէ ՚ի զատ դործ մը  
 չէր ըներ : Ինքը ըսաւ թէ՛ մարդոց  
 հոգիները կորսնցընելու համար չե-  
 կայ , այլ փրկելու համար եկայ : Ար-  
 կարդանք թէ (Մարկ . Լ . 37 :) Ժո-  
 դովուրդը “Չափէ դուրս կը զարմա-  
 նային և կ'ըսէին . Եմէն բաները  
 աղէկ ըրաւ ասիկայ , որ խուլերուն  
 լսել կու տայ՝ և համբերուն խօսիլ” :  
 Եւ մեր բնաբանին մէջ Տէրն ըսաւ  
 թէ՛ “Շատ բարի գործեր ցուցուցի  
 ձեզի իմ Հօրմէս” — “շատ” , որ՞չափ  
 “շատ” . անթիւ էին : Անոր բոլոր  
 կեանքը՝ բարի գործերէ կը բաղկա-  
 նար՝ “Շատ բարի գործեր ցուցուցի .  
 անոնցմէ որ գործի համար զես կը-  
 քարկոծէք” :

3 . Չանիկայ քարկոծողը ո՞վ էր :

Առապաշտոնե՞րն էին . ո՛չ : Սա-  
 մարացիները . Գալիլեայի կոպիտ՝  
 ազնուականութիւն չգիտցող՝ սրի-  
 կայ՝ լիբբ մարդի՞կն էին . ո՛չ : Գի-  
 նոսներ՝ շնացողներ՝ հայհոյիչներ՝

գողեր՝ աւազակներ՝ մարդասպաններ էին . ո՛չ . ասանկ մարդիկ չէին : Այլ Տէրն մեր Քրիստոս քարկոծողները՝ շատ պատուաւոր մարդիկ էին . շատ կրօնասէր՝ բարեպաշտ՝ ծումապահ՝ երկայն աղօթքներ ըսողներ էին : Ակեղեցի չգացողներ չէին , հին կտակարան չկարդացող՝ Մովսէսը չնդունող՝ մարգարէից չհաւատացող անհաւատներ չէին . այլ ընդհակառակն՝ անոնք բերնով զԱստուած կը խոստովանէին , միշտ եկեղեցի կ'երթային , անոր բոլոր արարողութիւնները ճշդութեամբ կրկատարէին , և անոնց կատարմանը համար շատ փափաք կը ցուցնէին : Հրեշտակաց Տէրը քարկոծողները՝ ասոնք էին : Աշխարհիս մեղքը վերցընող Աստուծոյ Վառը քարկոծողները՝ փարիսեցիներն էին , քահանաները՝ դպիրները՝ կարդացողները՝ վարդապետները՝ շատ պատիւ ունեցողներն էին : Աւ Յովհաննէս Առաքեալ կ'ըսէ թէ՛ վերջին օրը « ահա ամպերով կուգայ , և ամէն աչք պի-

տի տեսնէ անիկայ և անոնք որ զանիկայ խոցեցին” . զանիկայ քարկոծողներն ալ պիտի տեսնեն : “Այո՛ . ամէն” : Ասանկ թող ըլլայ : Սակայն—

#### 4. Չանիկայ ինչո՞ւ քարկոծեցին :

Յիսուս անոնցմէ բան մը գողցա՞ւ . զանոնք բամբասե՞ց կամ զրպարտե՞ց : Չանոնք խաբե՞ց : Մէջերնին երկպառակուլիւն ձգե՞ց : Անոնց որդիներուն գէշ օրինակ մը ցուցո՞ւց : Մովսէսին կամ Հին Ատակարանին հակառակ բան մը ըրա՞ւ , կամ խօսք մը խօսեցա՞ւ : Այ, բնաւ ասանկ բան մը չեղաւ : Տէրն մեր Մովսէսին օրէնքը կատարելապէս՝ ի դործ դրաւ : Թշնամիները կանչելով անոնց ըսաւ , “Չեղմէ ո՞վ կրնայ զիս յանդիմանել մեղքի համար” : Բանը՝ Աստուած էր , և Բանը մարմին եղաւ , և մարմնաւորները զանիկայ քարկոծեցին : Բանն Աստուած՝ մարդ եղաւ , և մարդիկ զանիկայ քարկոծեցին : Արկիւքէն իջաւ որ մարդկային ազգը

օրհնէ , և մարդկային ազգը զանիկայ քարկոծեցին : Ակաւ որ մեր սեռը Սատանային իշխանութենէն ազատէ , և մեր սեռը զանիկայ քարկոծեց : Աթէ Քրիստոս ուրիշ մարդոց պէս հպարտ՝ աշխարհային՝ իր օգուտը փնտռող՝ գինով՝ մեղաւոր մը ըլլար , զանիկայ մէկը չէր քարկոծեր : Սակայն Քրիստոս՝ կատարեալ էր , ինչպէս որ Մատուած կատարեալ է . և անոր համար քարկոծեցին : Անոնք՝ Մատուծոյ թշնամիներն էին . և ան մարդու կերպարանք մտածին պէս՝ զանիկայ հալածեցին , զանիկայ քարկոծեցին : զՄատուած կը սիրենք ըսին , սակայն Մատուծոյ բնութիւնը՝ Մատուծոյ սէրը՝ Մատուծոյ անհուն ողորմութիւնը ցուցունող Քրիստոսը տեսածնուն պէս՝ զանիկայ քարկոծեցին : Բոլոր երկնային սէրը և բարիքը՝ Քրիստոսի սրտին մէջն էր . և անոր կենացը մէջ մարդոց կը յայանուէր , և անոնք բուն դրախտին սէրը քարկոծեցին : Անոր ձեռքերը երկնային

բարիքներով լեցուն եկաւ , և մենք  
զանիկայ այսինքն երկնից օրհնու-  
թիւնը քարկոծեցինք : “Ո՛վ երկինք՝  
ասոր վրայ զարմացէ՛ք , ապշեցէ՛ք ու  
խիստ սոսկացէ՛ք” : Երեմ . Բ . 12 :

Արեւի է պիտի ըսէք ինձի՝ Ասի-  
կայ մենք չըրինք , շրէաները ըրին :  
Սակայն անանկ չէ՛ բարեկամ : շրէ-  
աները զանիկայ չքարկոծեցին , այս-  
ինքն անոնք շրէայ ըլլալնուն համար  
չէր՝ որ զանիկայ քարկոծեցին , այլ  
աշխարհային ըլլալնուն համար էր :  
Աշխարհային մարդիկ՝ աշխարհը սի-  
րողները՝ իրենց մեղքերը չձգողնե-  
րը՝ Քրիստոսի իշխանութեան տակ  
չմտնողները և անոր ճշմարտու-  
թիւնները սրտանց չընդունողները՝  
զանիկայ քարկոծողները՝ ասոնք են ,  
և ձեզմէ ոմանք ասոնցմէ չէ՞ք :  
Եթէ դուք ան ժամանակը հոն ըլլա-  
լիք , Քրիստոսի աշակերտները կ'ըլ-  
լայի՞ք : Ո՛չ . չէիք ըլլար : Եթէ ան  
ատենը անոր աշակերտները կ'ըլլա-  
լիք , ինչո՞ւ հիմա չէք ըլլար . քան-  
զի հիմա Նազովթեցի Յիսուսին ճշ-

մարտապէս ան գալու թագաւորն է ,  
 Ճշմարտապէս աշխարհին Փրկիչն է :  
 Ապացոյցները խիստ շատցան : Ո՛վ  
 Քրիստոսի աշակերտները քարկոծող  
 մարդ՝ Քրիստոսը քարկոծողը դուն  
 ես : Ո՛վ Քրիստոսի Աւետարանը .  
 կարգացողները քարկոծող՝ Քրիս-  
 տոսը քարկոծողը դուն ես : Բոլոր  
 Քրիստոնէից նեղութիւն տուողնե-  
 րը՝ Քրիստոսի նեղութիւն կու տան :  
 Ջաննկք մերժողը՝ Քրիստոս կը-  
 մերժէ : “Սաւո՛ւղ՝ Սաւորդ , ինչո՞ւ  
 զիս կը հալածես” աղաղակեց Տէրն  
 մեր երկինքէն , և հիմա ալ կ'աղա-  
 դակէ :

Ուրեմն մեր երկիրը՝ Քրիստոսի  
 արիւնովը և արտասուքներովը թր-  
 ջած չէ՞ : Տէրը ամէն օր ամէն մէկիս  
 կ'ըսէ , Քեզի շատ բարի գործքեր  
 ցուցուցի իմ Հօրմէս , անոնցմէ ո՞ր  
 գործին համար զիս կը վշտացընես .  
 անոնցմէ ո՞ր գործին համար զիս  
 քեզմէ կը հեռացընես . զիս կը մեր-  
 ժես . զիս կը հալածես . զիս կը քար-  
 կոծես . զիս խաչը կը հանես : Ա-

մէնքս ալ յանցաւոր ենք , և ամէն օր յանցաւոր ենք : Ամէն իր մեղքը սիրողը՝ չձգողը և չապաշխարողը՝ Տէր Յիսուար նորէն խաչը կը հանէ : “Ո՛վ որ իմ հետս չէ , ինձի հակառակ է” ըսաւ Տէրն մեր : Ուրեմն ինքզինքնին աշխարհին յանձնող՝ իրենց սէրն ու փափաքները աշխարհին տուողները՝ Քրիստոսի բարեկամները չեն՝ այլ անոր թշնամիներն են , և անոր հակառակ կեցողներուն հետ մէկ են . զանիկայ քարկոծողներուն՝ զանիկայ խանողներուն հետ մէկ կը սեպուին : Տէրը զանոնք իրենց խօսքին մէջ կը բռնէ :

Աւ ասանկ մարդիկ՝ չէ թէ միայն մեր դրացիներուն մէջ կը գտնուին՝ այլ մեր տուններուն մէջն ալ կը գտնուին . ժողովքներնուս մէջ անշուշտ կը գտնուին : Ո՛վ Քրիստոս և անոր վարդապետութիւնը մեր ժողներ՝ եթէ չընդունիք , եթէ մօտ գալով անոր ոտքերը չիյնաք , ո՞ր պիտի փախչիք . անոր բարկութենէն ո՞ր պիտի պահուիք :

Էստուած մեզի ողորմի , և մեծ  
 մեղքիրնիս մեզի գիտցընէ . որպէս  
 զի ապաշխարենք , և խոնարհինք ,  
 և Վրիստոսը ընդունելով՝ իրենը  
 ըլանք , և գալու նեզութենէն փախ-  
 չինք :



## ԲՈՒՈՐ ՕԳՆՈՒԹԻՆՆԻՍ ԵՍ- ՏՈՒԾՄԷ Է :

“ Դան քեզ կորսընցընդի՛ր՝ հվ Խորայէւ . բայց քու օգնութիւնդ  
խնամէ է ” : Ովս . ԺԳ . 9 :

Հոս երկու բան կը սորուինք , այս-  
ինքն կորսընցընդ՝ մէզմէ է , և ինչ-Նի-նչ  
Մատուծմէ է : Շատերը կը խորհին  
թէ՛ կորուստը Մատուծմէ է , և փր-  
կութիւնը մեզմէ : Սակայն բանը  
ասանկ չէ : Ո՛վ մեզաւոր մարգ ,  
քեզ կորսընցընողը՝ բուն իսկ դուն  
ես , և քեզի օգնութիւն ընողը՝ միայն  
Մատուած է : Իեզ մահուան և  
դժոխքին մէջ ձգողը Մատուած չէ՝  
այլ քու մեղքերդ են : Եւ քեզ մեղ-  
քէ և դժոխքէն ազատողը՝ քու կա-  
րողութիւնդ չէ , արդարութիւնդ՝  
աղօթքդ՝ ծումդ՝ ողորմութիւնդ աշ-  
խատանքդ չէ , այլ Մատուած է :

Ուրեմն ով փրկութիւն գտնալ ու-  
ղողներ , սխալ տեղ կերթաք :

Օգնութիւննիդ Մատուծմէ է ,

ձեզմէ չէ : Բնաւ մէկը ինքնիրեն  
չկրնար օգնել . ամէն մարդ Աստուծոյ  
նայելու է : Բանգի մինչև Աստուծոյ  
օգնութիւնը իրեն չհասնի՝ տիղմէն  
չկրնար ելլել , պղծութենէն չմաք-  
րուիր , երեսը դէպի երկինք չկրնար  
ուղղել , սիրտը Աստուծոյ չկրնար  
գարձրնել , մահէն կեանքի չկրնար  
փոխուիլ : Ողորմելի մեղաւորները  
ի՞նչ կրնան ընել : Բնութիւննին  
բոլորովին ապականած է : Բաղ-  
ցանքնին սուրբ չէ՝ այլ պիղծ է , և  
անոնց վիճակը՝ ճշմարտապէս անյոյս  
վիճակ մըն է :

Սակայն դուք սիրելիներս՝ բոլորո-  
վին անյոյս չէք . քանզի Աստուծոյ  
օգնութենէն հեռու չէք : Աստուած  
օգնութիւն կրնայ հասցընել ձեզի ,  
և անկէ՝ ՚ի զատ օգնութիւն չունիք :  
Ուրեմն աչքերնիդ անոր դարձու-  
ցէք , անոր խնդրուածք՝ աղաչանք՝  
և աղօթք ըրէք՝ որ իր Հոգին խրկե-  
լով՝ ձեզ ապրեցընէ , հոգինիդ բժշ-  
կէ , ապականեալ բնութիւննիդ նո-  
րոզէ , և Սատանային կապերը կտրե-

լով՝ ձեզ ազատէ : Ձեր դրացիները  
 և բարեկամները ձեր փրկութեանը  
 համար չաշխատեցա՞ն . Քրիստոսի  
 պաշտօնեաները ձեզ կրկին և կրկին  
 Քրիստոսի գալու չհրաւիրեցի՞ն ,  
 ձեզի ազդու խրատներ չտուի՞ն . և  
 ձեզ Քրիստոսի տանելու համար շատ  
 ջանք չըրի՞ն : Սակայն անոնք որ-  
 չափ որ շատ աշխատին , եթէ անոնց  
 ապաւինիք՝ վստահիք , բոլորը պա-  
 րապը կերթայ :

Այսոր չեմ քարոզեր ձեզի , այլ  
 խիստ մօտ գալով՝ ձեր հետը իբրև  
 բարեկամ խօսակցիլ կուզեմ :

Շատերը կը խորհին թէ՛ եթէ  
 մեծ երկրաշարժ մը ըլլայ , կամ մեռ-  
 ելներէն մէկը յարութիւն առնելով  
 քարոզէ , հարկաւ մեղքերնիս ձգե-  
 լով Աստուծոյ կը դառնանք : Աւ  
 գրուած է թէ մէկ հարուստ մարդ  
 մը աս գաղափարը իր հետը գերեզ-  
 մանը տարաւ , և ինքը դժոխքին մէջ  
 կը խորհէր թէ՛ եթէ մեռելներէն  
 մէկը իր եղբայներուն քարոզէ , հար-  
 կաւ անոնք կ'ապաշխարեն : Բայց

իրեն ըսուեցաւ թէ՛ Եթէ Մովսէսին և մարգարէներուն՝ մտիկ չեն ըներ, մեռելներէն մէկն ալ յարութիւն առնէ պիտի չհաւատան :

Ուրեմն ասանկ բաներու մի՛ վստահիք՝ մ'ապաւինիք, եղբայրներս : Ձեր օգնութիւնը ասանկ բաներէ չէ՛ այլ Աստուծմէ է : Եթէ հազար հրաշք տեսնէք, մինչև անգամ հրեշտակ մը տեսնէք, ի՞նչ օգուտ կ'ըլլայ : Հրէաները աս բաները կրկին և կրկին չտեսա՞ն՝ : Ուրեմն ասանկ բաներու մի՛ նայիք . Աստուծոյ նայեցէ՛ք : Անոնց մ'ապաւինիք, Աստուծոյ ապաւինեցէ՛ք : Անոնց մի՛ սպասէք, քանզի եթէ պատահին ալ նէ, բնաւ զօրութիւն չունին որ սրտերնիդ Աստուծոյ դարձնեն :

Գուցէ պիտի ըսէք՝ երբոր ուզենք ամէն մեղքէ կրնանք դառնալ, և սրտերնիս Աստուծոյ կրնանք տալ : Այո՛, ազգէկ . սակայն աս ուզելը՝ ձեր ըսած բաղանքը ո՞ր է . ո՞րկէ կը ծնանի . որմէ՞ կուգայ : Ձեզմէ չգար . գանգի չէք ուզեր, և ան

ուզելնուդ տեղը՝ ընդ հակառակն կուզէք : Եթէ երէկ՝ միւս օրը՝ անցեալ տարի աս բաղցանքը ձեր մէջը չգտնուեցաւ, վաղը կամ անկէ ետե պիտի գտնուի . ի՞նչ գիտէք որ պիտի գտնուի : Փորձառութեամբ չէք գիտեր, քանզի փորձած չէք : Սակայն եթէ ասանկ զօրութիւն ունիք, անիկայ՝ ի գործ գրէք . հիմա փորձեցէ՛ք տեսնենք : Եյսօր՝ աս բուսակն պէտք եղածին պէս ամէն մեղքէ զզուեցէ՛ք . առանց Սուրբ Հոգւոյն օգնութեանը՝ հիմա Եստուծոյ սէրը սրտերնիդ թո՛ղ լեցնէ . բուն ձեր զօրութեամբը՝ բոլոր կուռքերը սրտերնէդ հանեցէ՛ք, կորսնցուցէ՛ք, և դուք սուրբ՝ մաքուր եղի՛ք : Եթէ չէք կրնար ընել, ո՞վ իմացուց ձեզի՝ թէ ետքը կարող պիտի ըլլաք : Ոչ՝ տէր իմ, դուն քեզ մի՛ խաբեր . Եստուծոյ օգնութեանը կարօտ ես, և առանց անոր եղբայրս՝ բան մը չես կրնար ընել :

Ուրեմն յոյսերնիս մեր վրայ թող չըլլայ՝ այլ Եստուծոյ վրայ թող ըլ-

լայ : Ըստ տկար ենք . սակայն աս  
տկարութիւնը մեզ անմեղ չըներ ,  
այլ մեր յանցաւոր ըլլալը կը ցուցը-  
նէ , տկարութիւնը մեր յանցանքն  
է : Տկարութիւննիս որչափ շատ  
ըլլայ , մեղքերնիս ալ այնչափ շատ  
է : Որչափ որ մեղաւոր ենք՝ այնչափ  
տկար ենք . և ոչ թէ անկէ աւելի :  
Տկարութիւննիս մեղք է , և ոչ ուրիշ  
բան : Քանզի մեղք գործելու հա-  
մար տկար չենք , այլ շատ զօրաւոր  
ենք : Ուրեմն եթէ սրտերնուս մէջ  
եղած աս չար բաղանքը՝ աս մեղքի  
հակամիտութիւնը՝ մէկ կերպով մը  
փոխուի՝ , Աստուծմէ ըլլալու է , Աս-  
տուծոյ զօրութեամբը ըլլալու է :  
Ուստի աչքերնիս անոր վերցընելու  
ենք՝ որ մեզ նորոգէ , և հոգինուս  
կեանք՝ առողջութիւն՝ և զօրութիւն  
տայ :

Կարելի է հարցընէք ինձի՝ Ամէն  
բան Աստուծոյ ձեռքը ըլլալուն հա-  
մար , մենք ծո՞յլ ըլլանք : Ոչ , ծոյլ  
չըլլանք , չուշանանք , չյապաղինք ,  
այլ աւելի աշխատինք : Պօղոս Ա-

աաքեալ կ'ըսէ՝ (Փիլյ . Բ . 12, 13 :)  
 “Ահով ու դողով անձերնուդ փրկու-  
 թիւնը գործեցէ՛ք . ինչու որ Աս-  
 տուած է՝ որ ձեր մէջը կը ներգործէ  
 կամենալը ու ընելը իր հաճութեանը  
 համար” : Այսինքն . ձեր մէջը թէ՛  
 կամենալը և թէ՛ գործելը Աստուծմէ  
 ըլլալուն համար , մենք սիրտ առնե-  
 լով՝ աշխատինք , քանզի կատարեալ  
 յոյս ունինք որ մեր աշխատանքը  
 ունայն պիտի չըլլայ : Աստուած ին-  
 քը մեր մէջը գործելով՝ մեզի օգնե-  
 լուն համար աղէկ գիտենք որ՝ ջան-  
 քերնիս պարապը պիտի չելլայ :

Ուրեմն Եղբայրներ՝ երբեմն ար-  
 թնցող և հոգիներնուն փրկութիւնը  
 փնտռողներուն՝ երկայն ժամանակ  
 խաւարի մէջ մնալնուն պատճառը  
 կը տեսնենք : Ինչո՞ւ բազմացած  
 փրկութիւննին չեն գտներ : Պատ-  
 ճառը աս է որ՝ աս գործը Աստուծոյ  
 ձեռքէն առնել և ինքզինքնին փրկել  
 կ'ուզեն . իրենց դորութեանը ապա-  
 ւինիլ վստահիլ կ'ուզեն . կ'ուզեն որ  
 օգնութիւննին իրենցմէ՝ իրենց հաս-

տատուն որոշումներէն՝ բազմանքներէն ըլլայ, և Մատուծմէ չըլլայ : Եւ ինքզինքնին Մատուծոյ ողորմութեանը չձգելով՝ իրենց գործքերուն կ'ապաւինին : Չեն ուզեր որ Մատուած ղիրենք՝ չէ թէ միայն Սատանայէն՝ այլ իրենցմէ ալ ազատէ : Չար սրտերնին Մատուծոյ չեն տար՝ որ ան սրբէ ու նորոգէ, այլ զանոնք փոխելու ղօրութեան համար որչափ որ շատ աշխատին ալ նէ, բնաւ չպիտի գտնեն : “Եկէ՛ք ինձի, բոլոր յօգնած ու բեռնաւորածներ, ու ես ձեզ պիտի հանգչեցընեմ” ըսաւ Տէրն մեր :

Սակայն շատերը կան որ՝ առաջ հանգստութիւն գտնել կ'ուզեն, և ետքը Քրիստոսի երթալ. առաջ ինքզինքնին բժշկել կ'ուզեն, և ետքը աս մեծ բժշկին երթալու գիտաւորութիւն կ'ունենան : Ես յիմարութիւն չէ՞ :

Ո՛վ բոլոր փրկութիւն ուզողներ՝ օգնութիւննիդ Մատուծմէ է, և եթէ անոր օգնութիւնը չընդունիք, մեղ-



քերնուդ մէջ պիտի մեռնիք . ճար  
չկայ : Եստուած ձեզ ազատէ . Ես-  
տուած ձեզ ինքզինքնէդ ազատէ :  
Եստուած ձեզ աս մեծ անէծք եղող  
ինքզինքնէդ ազատէ :

Գիտէք որ՝ Եստուած Իսրայէլի  
որդիքը Փարաւոնին ձեռքէն հանեց .  
զանհկայ կորսընցուց , և զանոնք  
փրկեց , և աս գործը շատ գիւրին  
էր . Եստուած իր բազուկը երկն-  
ցուց , ու գործը լմնցաւ : Սակայն  
Իսրայէլի որդիքը ինքնիրենցմէ՝ այս-  
ինքն իրենց հպարտութենէն՝ անհա-  
ւատութենէն՝ աշխարհասիրութե-  
նէն ազատել դիւրին չէր . ամենա-  
մեծ և ամենադժուար գործն էր :  
Եւ ասանկ ալ ձեզ Սատանային ձեռ-  
քէն ազատել դիւրին է . բայց ձեզ  
ինքզինքնէդ ազատել՝ դիւրին չէ ,  
այլ խիստ դժուար բան է : Եւ եթէ  
աս դիւրին բանը չէք կրնար ընել ,  
այսինքն ինքզինքնիդ Սատանային  
ձեռքէն չէք կրնար ազատել , հապա  
ի՞նչպէս ինքզինքնիդ ձեր ձեռքէն  
կրնաք ազատել : Անշուշտ չէք կր-

նար ազատել . կարելի բան չէ : Աստուծմէ՛ ի զատ ազատող չկայ : Օգնութիւննիդ Աստուծմէ է , ձեզմէ չէ : Ուրեմն աչքերնիս Աստուծոյ վերցընենք : Մտր ապաւինելով՝ իրեն վատահինք , իրեն ապաստանինք : Մտր . օգնութիւնը՝ անոր Հոգին ընդունինք :

## ՍՈՒՐԻ ՀՈԳԻՒՒՆ ԿԵՐՕՏ ԸԼ- ԼԸԼՆԻՍ ԵՒ ԵՍՏՈՒԾՈՅ .ՉԸ- ՆԻԿԵՅ ՄԵ.ՉԻ ՇՆՈՐ ՀԵԼՈՒ ՊԵՏՐԵՍ ԸԼԸԸԸ :

“ Ուստի եթէ դուք՝ որ չար էք, ձեր զաւակներուն աղէկ ընծա-  
ներ տալ գիտէք, որչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգին  
պիտի տայ անոնց, որ իրմէ կը խնդրեն ” : Դ. ուկ. Ժ. 13 :

Եմէն Աիրակի օր դուք ժողովա-  
տեղին կը գտնուիք . և միշտ քարո-  
զելը գալով՝ ձեզի կը քարոզէ . սա-  
կայն ամէնքդ կատարեալ Քրիստո-  
նէյ եղա՞ք : Եմէնքդ Քրիստոսի  
եկեղեցիին մէջ չմտաք, անոր եկե-  
ղեցւոյն անդամ չեղաք : Ուրեմն  
կ'երևնայ թէ՛ ձեզմէ ոմանք ինք-  
զինքնիդ Քրիստոսի չտուիք : Հո-  
գևոր մարդիկ չէք, այլ մարմնաւոր՝  
աշխարհային մարդիկ էք : Ո՛չ թէ  
Քրիստոսի ծառաները՝ այլ աշխար-  
հին ծառաներն էք . արթուն չէք՝  
այլ քնացած էք . Քրիստոսի մէջ  
չէք՝ այլ անկէ հեռու էք . անոր

աշակերտները չէք՝ այլ մարմինին ցանկութիւններուն հպատակ էք . կեանք չունիք՝ այլ մահուան վիճակի մէջ էք . պատճառն ի՞նչ է : Պատճառը ան չէ՞ որ՝ Սուրբ Հոգին չառիք : Եթէ Սուրբ Հոգին չառիք , յայտնի է որ հոգևոր մարդիկ՝ այսինքն ճշմարիտ քրիստոնէայ չէք , և առանց անոր՝ քրիստոնէայ չէք կրնար ըլլալ , այլ մեղքերնուդ մէջ պիտի մեռնիք : Երդ՝ կը խնդրեմ որ աս քարոզիս մտադրութիւն ընէք : Եւ Եստուած օգնէ , թէ՛ ունկնդիրին և թէ՛ ընթերցողին շատ օգնութիւն ընէ :

“ Ուստի եթէ դուք՝ որ չար էք , ձեր զաւակներուն ազէկ ընծաւ ձեր սաւ գիտէք , որչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգին պիտի սոյ անոնց , որ իրմէ կը խնդրեն ” :

**Ես խօսքերէն իրեք խորհուրդ կուզեմ ձեզի ներկայացընել :**

**1 . Եմէն մարդ Սուրբ Հոգիին կարօտ է :**

**2 . Եմէն մարդ Սուրբ Հոգին կրնայ առնել :**

### 3. Մեր Հայրը Աստուած Սուրբ Հոգին տալու պատրաստ է :

Առաջին քննելու խորհուրդս աս  
է թէ՛

#### 1. Ամէն մարդ Սուրբ Հոգիին կա- րօտ է :

Սուրբ Հոգիին օգնութեանը՝ ա-  
մէն մարդ կարօտութիւն ունի . սա-  
կայն անոր կարօտութեան որչափ  
շատ ըլլալը՝ Աստուծմէ՛ ՚ի զատ մէկը  
չհասկնար : Սարելի է դուն պիտի  
ըսես՝ Ես Սուրբ Հոգիէն ծնայ, Քրիս-  
տոնէայ եղայ : Շատ ազէկ . բայց  
դուն միշտ կարօտ չե՞ս Սուրբ Հո-  
գիին , որովհետեւ Սուրբ Հոգին քու  
մէջդ չմնայ , դուն Քրիստոսի մէջ  
ժամ մըն ալ չես կրնար մնալ , իբրև  
քրիստոնէայ չես կրնար ապրիլ , Աս-  
տուծոյ հետ չես կրնար քալել , աշ-  
խարհը՝ մարմինը՝ Սատանան չես  
կրնար յաղթել , մեղքէն չես կրնար  
հրաժարիլ , Աստուծոյ ընդունելի եր-  
կրպագութիւն չես կրնար մատու-

ցանել , և դէպի երկինք մէկ քայլ մըն ալ չես կրնար առնել :

Երդ՝ Քրիստոնէայ եղբայր , մի՛ մոռնար որ՝ եթէ Սուրբ Հոգին քեզմէ երթայ , բան մը չես կրնար ընել : Եթէ զանիկայ տրտմեցընելու քեզմէ փախցընես , անհաւատ կ'ըլլաս , աշխարհասէր՝ անհոգ՝ առանց սիրոյ՝ առանց աշխատանքի՝ առանց Աստուծոյ կը մնաս : Եմէն օր՝ և ամէն ժամ՝ Սուրբ Հոգիին կարօտ ես : Ուրեմն զանիկայ քեզմէ մի՛ փախցընէր՝ եղբայր . զանիկայ մի՛ տրտմեցընէր , անոր բոցը մի՛ մարիը՝ եղբայր :

Եւ դուն՝ որ Քրիստոնէայ չըլլալով Քրիստոսէն հեռու և մեղքերու մէջ մեռած ես , դուն Սուրբ Հոգիին ո՞րչափ կարօտ ըլլալու ես : Եթէ կենաց Հոգին քու մէջդ չգայ , մահուան վիճակիդ մէջ յաւիտեան պիտի չմնա՞ս : Արեւի՞ք բան է որ դուն քու զօրութեամբդ մահէն կեանքի փոխուիս : Ոչ . կարելի չէ : Գերեզմաննոցը գնա՛ , մեռելներուն հար-

ցո՛ւր թէ՛ ասանկ բան կ'ըլլայ : Աւրեմն ի՞նչպէս կը յուսաս որ աս մահուան քունը կերպով մը կտրի . եթէ Սուրբ Հոգին յատուկ անիկայ կտրելու համար չգայ՝ աս մահուան քունը բնաւ չկտրիր : Մի՛ խաբուիր եղբայր . բնաւ յոյս չկայ : Այլ ընդհակառակն՝ քու խորունկ քունդ՝ աւելի ծանր կ'ըլլայ , քու կարծր սիրտդ աւելի կը կարծրանայ , քարի պէս կ'ըլլայ , անդեղձութիւնդ պիտի աւելնայ , չտեսնող աչքերդ պիտի կուրնայ . պիղծ հոգիդ՝ աւելի պիղծ պիտի ըլլայ , և քու վիճակդ օրէ օր գէշի պիտի երթայ :

Տէրն մեր ըսաւ , “Մէկը չկրնար ինծի գալ , թէ որ զիս խրկող Հայրը անիկայ չքաշէ” : Յովհ . Չ . 44 : Այսինքն մէկը չկրնար ինծի գալ եթէ Սուրբ Հոգիին միջոցովը զանիկայ չքաշէ : Սակայն ինչո՞ւ չկրնար ինքիրմէն գալ : Արովհետեւ բնաւ գալու փափաք չունի . զօրութիւն կայ , բաղցանք չկայ : Եւ աս փափաքը ո՞ւրկէ կու գայ : Մեր ակա-

մայութիւնը ո՞վ պիտի վերցընէ ,  
 ո՞վ պիտի յաղթէ : Սուրբ Հոգիէն  
 'ի զատ մէկը անեկայ չկրնար յաղ-  
 թել :

Սակայն՝ եթէ դուն ըսես , Նս  
 Սուրբ Հոգւոյն այնչափ կարօտ չեմ՝  
 այլ ինքնիրմէս ամէն բանի կարող  
 եմ , ահա՛ փորձէ՛ աշխատէ՛ նայինք :  
 Սուրբ Հոգիին առանց ապաւինելու՝  
 անոր օգնութիւնը չուզելով՝ չընդու-  
 նելով՝ կատարեալ եղի՛ր , սուրբ ե-  
 դի՛ր , Աստուծոյ ուզածին չափ խո-  
 նարհ եղի՛ր . բոլորովին նոր արարած  
 եղի՛ր այսօր՝ աս բոպէին : Նթէ քու  
 զօրութեամբդ չես կրնար աս բաները  
 ընել աս բոպէին , գալ բոպէին ալ չես  
 կրնար ընել : Ու եթէ այսօր չես կր-  
 նար ընել , աս շաբաթ՝ աս ամիս՝ աս  
 տարի հարիւր տարի՝ հազար տարի  
 ետքն ալ չես կրնար ընել : Մարդ-  
 կային սեռէն բնաւ մէկը՝ առանց  
 Սուրբ Հոգիին օգնութեանը ասանկ  
 բան ըրած չէ , և չպիտի ընէ : Յի-  
 սուս Քրիստոս ձեր վրայ փչելով՝  
 Սուրբ Հոգին առէ՛ք ըսելու է , եթէ



ոչ՝ հոգևոր անձինքներ չէք կրնար  
ըլլալ եղբայրներս :

Ուրեմն խիստ կարևոր հարցում  
մըն է թէ՛ Արդեօք աս մեծ շնորհքը  
կրնա՞նք առնել :

2. Եմէն մարդ Սուրբ Հոգին կրնայ  
առնել :

Գուցէ պիտի հարցընէք՝ Ի՞նչ  
պէս կրնանք առնել : Ղամբան կու  
զէք սորվել . հիմա ցուցընեմ . ամէն  
մարդ զանիկայ խնդրելով՝ միայն խն  
դրելով կրնայ առնել : Եւ աս ճամ  
բան՝ խիստ դիւրին ճամբայ մը չէ՞ .  
անկէ դիւրին ճամբայ կա՞յ : Աթէ  
բան մը խնդրելու արժան չէ , բնաւ  
արժէք չունի , քանզի խնդրելու հա  
մար ստակ պէտք չէ , և փոխարէն  
մըն ալ պէտք չէ : Եսկէ դիւրին՝ և  
ասկէ արժան բան մը չենք կրնար  
առնել : Սակայն ճշմարիտ է արդ  
եօք որ աս մեծ՝ յարգը անգին՝ շնորհ  
քը միայն խնդրելով կրնանք առնել :  
Ես խիստ բերկրալի աւետիսին կր

նա՞նք հաւատալ : Այո , կրնանք  
 հաւատալ : Աս խօսքը ճշմարիտ է .  
 և անոր չհաւատալ՝ մեծ մեղք է .  
 քանզի յաւիտենական ճշմարտու-  
 թիւնը ինքը՝ այսինքն Արդին Աս-  
 տուած ասիկայ ըսաւ . և ան ալ աս  
 խիստ զարմանալի խօսքերը ըսաւ ,  
 “Եթէ դուք՝ որ չար էք , ձեր զա-  
 ւակներուն աղէկ ընծաներ տալ գի-  
 տէք , ո՛րչափ աւելի ձեր չայրը եր-  
 կինքէն Սուրբ Հոգին պիտի տայ ա-  
 նոնց , որ իրմէ կը խնդրեն” : Տէրն  
 մեր “իրմէ խնդրողներուն” ըսաւ :  
 Իր որդիներուն չըսեր , որպէսզի  
 խեղճ մեղաւոր մը չըսէ՝ Աս Աս-  
 տուծոյ որդին չեմ , անոր համար աս  
 օրհնեալ խոստմունքը իմս չէ :

Այլ՝ “Իրի ինքնաշնորհ” ըսաւ , որ  
 աղէկ գիտնանք թէ՛ խնդրելով՝ ան-  
 շուշտ պիտի առնենք աս օրհնու-  
 թիւնը : Արդ բնաւ մէկը ինքզինքը  
 աս խոստմունքէն դուրս թող չկար-  
 ծէ , քանզի եթէ խնդրէ , բուն իր  
 խնդրելը՝ իր անկասկած լսուելուն  
 մէկ նշան է , աս շնորհքը առնելուն

ալ նշան մըն է : Բայց չմոռցուի որ՝  
անպատճառ խնդրել պէտք է :

Գուցէ պիտի ըսես՝ Խնդրեցի, փն-  
տուեցի, Սուրբ Հոգիին համար շատ  
անգամ աղօթք ըրի . բայց չառի,  
չգտայ : Ես զարմանալի բան մըն է,  
բայց քեզի հարցընեմ թէ՛ արդեօք  
դուն ճշմարտապէ՞ս աղօթք ըրիր,  
թէ միայն խօսքեր ըսիր, միայն սո-  
փորութիւն եղած խօսքեր ըսիր :  
Արեւի է բնաւ հոգի չէր՝ թէ ար-  
դեօք խնդիրքդ ընդունելի՞ պիտի ըլ-  
լայ՝ թէ չէ : Արդեօք Եստուած պի-  
տի լսէ՞ թէ չէ, պատասխան պիտի  
տայ՝ թէ չէ՝ գուցէ բնաւ չխորհե-  
ցար : Արեւի է բնաւ պատասխա-  
նի մը չէիր սպասեր, յոյս չունէիր,  
փափաք չունէիր : Արեւի է ծնկան  
վրայ գալով աղօթելէդ ետքը՝ բոլո-  
րովին մոռցար, և ետքը բնաւ չյի-  
շեցիր :

Ես ալ խորհէ՛ որ՝ կարելի է դուն  
խօսքով Սուրբ Հոգւոյն շնորհքը  
խնդրելէդ ետքը՝ անիկայ ընդունիլ  
չուզեցիր : Եւ Սուրբ Հոգին սիրտդ

մաքրելու համար քեզի մօտեցած ա-  
տենը , գուցէ իրեն հակառակեցար ,  
զանիկայ մերժեցիր , և թող չտուիր  
որ սիրադ մտնելով գրաւէ : Աւ-  
քանի որ խնդրածդ ընդունիլ չես ու-  
զեր , Աստուած ի՞նչ ճամբով կրնայ  
տալ քեզի . բռնութեամբ . բռնու-  
թիւն չըլար . դուն քար չես , ծառ՝  
փայտ չես որ բռնութիւն գործածէ :  
Այլ՝ դուն խելքի տէր ես : Աւ բա-  
րերար Աստուածը աս շնորհքը քեզի  
կու տայ , և կը հրամայէ որ ընդու-  
նիս . բայց եթէ չընդունիս , ի՞նչ  
օգուտ , յանցանքը որո՞ն է : Աթէ  
հարիւր անգամ աղօթք ընես որ  
Աստուած իր Հոգին քեզի տայ ,  
դարձեալ՝ եթէ անիկայ ընդունելուդ  
տեղը՝ մերժես , տրտմեցընես , և  
քեզմէ փախցընելով հեռացընես ,  
քեզի ի՞նչ օգուտ կ'ըլլայ : Աթէ  
մուրացկան մը՝ ամէն առտու թա-  
գաւորին առջևը աս կերպովը ելլայ ,  
թագաւորը անոր խնդիրքը տալուն  
տեղը՝ անոր գլուխը չի՞ կտրեր . կամ  
գոնէ յիմարանոցը չի՞ խրկեր :

Ուրեմն եղբայրներս . յանցանքը մերն է : Աստուած տալու պատրաստ է , բայց մենք ընդունելու պատրաստ չենք : Աս. յայտնի է . և ընաբանին մէջ շատ յայտնի կ'երևնայ , քանզի կը սորվինք թէ՛

3. Աստուած Սուրբ Հոգին տալու պատրաստ է :

Տէրն մեր մեղի օրինակ ըլլալու համար բաղդատութիւն մը կ'ընէ . բայց աս բաղդատութեանը մէջ շատ նմանութիւն չկայ , այլ ընդդիմութիւն կայ : Ահա մտադրութիւն ըրէ՛ք , “ Ուստի եթէ դուք՝ որ չար էք , ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ գիտէք , ո՛րչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց , որ իրմէ կը խնդրեն ” :

Աշխարհային հայր մը կուտայ՝ չար ալ ըլլայ կուտայ , և ձեր բարի Հայրը՝ երկնաւոր Հայրը՝ չե՞տար . այո . “ ո՛րչափ աւելի պիտի տայ ” :

Աշխարհային հայր մը կուտայ՝ իր անձնական շահն ալ փնտռող ըլ-

լայ կու տայ , և յաւիտեանս բարերար եղող Հայրերնիդ՝ ձեր երկնաւոր Հայրը՝ չե՞ տար . այո . “ ո՛րչափ աւելի պիտի տայ ” :

Աշխարհային հայր մը կու տայ՝ թէ և բարկացող և խիստ մէկ մըն ալ ըլլայ կու տայ , և ասանկ բաներէ բոլորովին մաքուր եղող Հայրերնիդ՝ ձեր երկնաւոր Հայրը չե՞ տար . այո . “ ո՛րչափ աւելի պիտի տայ ” :

Աշխարհային հայր մը կու տայ՝ թէ և տալը միշտ իր քսակին կը դպչի , և շատ անգամ զինքը նեղութեան մէջ կը ձգէ , թէ զինքը՝ և թէ միւս զաւակները քիչ կամ շատ նեղութեան մէջ կը ձգէ , բայց կու տայ , և անհունապէս շատ ունեցող Հայրերնիդ՝ ձեր երկնաւոր Հայրը՝ անհունապէս հարուստ եղող Հայրերնիդ՝ որ տուած ընծաները իր ստացուածքին բնաւ չդպչիր , և աս ընծաները անհուն դիւրութեամբ կրնայ տալ , և որչափ որ մեզի տայ , ուրիշներուն ալ տալու կարողութիւնը և կամեցողութիւնը բնաւ չպակսիր , ահա

աս երկնաւոր Հայրերնիդ չի՞ արձայն . “ ո՛րչափ աւելի պիտի տայ ” :

Սիրելիներս՝ այսօր իբրև Քրիստոսի դեսպանը կու դամ ձեզի և ձեր առջևը կը կայնիմ . և քանի որ աւանջնիդ կը լսէ՝ ձեզի կ'իմացընեմ՝ թէ երկնաւոր Հայրերնիդ՝ ամենամեծն Մատուած՝ ամենալաւ հօրմէն աղէկ է, ամենասիրելի՝ ամէնագլխած մօրմէն՝ աւելի սերելի և դժած է : Ուրեմն ինչո՞ւ անոր մօտենալով՝ ձեզի նուիրած յաւիտենական օրհնութիւնները չէք առներ : Ինչո՞ւ համար . դուք՝ որ հայր ու մայր էք, ձեր մէջը հայր մը կամ մայր մը չկայ որ Մատուծոյ չափ դուրս ունենայ, ձեր մէջը մայր մը չկայ որ՝ Մատուած ձեզի օրհնութիւններ տալ պատրաստ ըլլալուն չափ՝ իր որդիին տալու պատրաստ ըլլայ :

Գուցէ պիտի հարցունէք թէ՛ Երդեօք աս բանին ես ինքս կը հաւատամ : Եյո, կը հաւատամ՝ պիտի ըսէի . բայց շիտակը աս է՝ եւ չեմ նամ ըն զե՛ս հասարակ : Ես խօսքերուն

Նշանակութիւնը՝ անկասկած մեկ-  
նաժիս պէս է : Սակայն սրտերնիս  
այնչափ աշխարհասէր է՝ այնչափ  
պաղ է՝ և այնչափ անհաւատութեան  
իշխանութեանը տակն է՝ որ ասանկ  
օրհնեալ խոստման մը կատարելա-  
պէս հաւատալ՝ վստահիլ՝ փակչելի՝ ՚ի  
գործ դնել՝ մեզի շատ դժուար բան  
է : Սուրբ Հոգիին կարօտ ենք՝ որ  
մեզ կարողացընէ : Եռանց անոր՝  
բան մը չենք կրնար ընել :

Սիրելիներս՝ ձեր ժողովքին մէջ՝  
քաղաքին մէջ՝ երկրին մէջ՝ բոլոր  
աշխարհին մէջ՝ մէկը չկայ որ Սուրբ  
Հոգիին կարօտ չէ : Բիւրաւոր ան-  
մահ հոգիներ կայ ձեր քաղաքին մէջ,  
և միլիօնաւոր անմահ հոգիներ կայ  
բոլոր աշխարհին մէջ, և անոնցմէ ո՛չ  
մէկը՝ եթէ Սուրբ Հոգին իրեն օգ-  
նութեան չհասնի, ոչ մէկը երկինքը  
պիտի երթայ :

Երդ՝ սիրելի ընթերցող և ունկն-  
դիրներս՝ Տէրօջ աս խօսքերուն  
մտադրութիւն ըրէ՛ք . “ Խնդրեցէ՛ք՝  
և պիտի տրուի ձեզի . փնտռեոէ՛ք՝



ու պիտի գտնէք . դուռը զարկէ՛ք՝ և պիտի բացուի ձեզի : Ասան զի ամէն ո՛վ որ կը խնդրէ՝ կառնէ, և ո՛վ որ կը փնտռէ՝ կը գտնէ, և ո՛վ որ դռնը կը զարնէ՝ պիտի բացուի անոր : Ձեզմէ ո՛վ է ան հայրը՝ որմէն իր որդին հաց որ ուզէ, միթէ՛ք ա՞ր պիտի տայ անոր . կամ թէ որ ձուկ ուզէ, միթէ՛ ձուկին տեղը օ՞ճ պիտի տայ անոր . և կամ թէ որ հաւկիթ ուզէ, միթէ՛ կարի՞ճ պիտի տայ անոր : Աստի եթէ դուք՝ որ չար էք, ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ դիտէք, ո՛րչափ աւելի ձեր հայրը երկինքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց, որ իրմէ կը խնդրեն” : Ղուկ . ԺԵ . 9-13 :











